A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը յուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԵՐԵՐԱԿՈՒՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՆՐԱՄԱՍՆԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՅԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ

www.freebooks.db.am

ԵԼՈՒՅԹԱՎԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԶԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

ԵՐՈՒՆՅ ԳԱՆԵԿՈՒ

ՊԵՅԱԿԸ

www.a-pdf.com

ԴՂՅԱԿԸ

ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱ

«ԱՊՈԼՈՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1992

www.a-pdf.com

ԳՄԴ 84.4 Ա1—4
Կ—386

Գերմաներենից թարգմանեց
ՍԱՄՎԵԼ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԸ

Խմբագիր՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Կաֆկա, Ֆ.

Կ—386 Դատավարություն / Ֆրանց Կաֆկա.— Եր.: Ապոլոն, 1992.— 376 էջ.

Ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Կաֆկայի «Դղյակը» համարվում է քսաներորդ դարի գրականության մեծագույն նվաճումներից մեկը։
Հայերեն հրատարակվում է առաջին անգամ։

4703010100
Կ ————————
749 (01)—92

ԳՄԴ 84.4 Ավ—4

ISBN 5—8079—0475—3

© «Ապոլոն» հրատարակչություն, 1992
թարգմանության և ձևավորման համար

www.a-pdf.com

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ուշ երեկո էր, երբ Կ-ն տեղ հասավ։ Գյուղը ծածկված էր Ձյան հաստ շերտով։ Դղյակի բարձունքը չէր երևում, մութն ու մշուշն այնպես էին պարուրել շրջակայքը, որ դղյակից լույսի աղոտ նշույլ անգամ չէր թափանցում։ Կ-ն երկար կանգնեց փողոցը գյուղի հետ կապող փայտե կամրջին ու հայացքը հառեց թվացյալ ամայությանը։ Հետո գնաց գիշերելու համար օթևան փնտրելու։

Իջևանատանը մարդիկ դեռ արթուն էին, ու թեև իջևանատերը վարձով տալու ոչ մի սենյակ չուներ, բայցևայնպես, ուշադրած հյուրի այցելությունից չափազանց անակնկալի եկած ու շփոթված, ցանկացավ նրան քնելու տեղ հատկացնել ընդհանուր դահլիճում՝ ծղոտի պարկի վրա։ Կ-ն համաձայն էր նրա առաջարկին։ Գյուղացիներից մի քանիսը դեռ նստած էին գարեջրի գավաթների մոտ, բայց Կ-ն չուզեց որևէ մեկի հետ զրույցի բռնվել. անձամբ ձեղնահարկից իջեցրեց Ծղոտի պարկն ու տեղավորվեց վառարանի մոտ։ Տեղը տաք էր, գյուղացիները չէին աղմկում։ Կ-ն հոգնած աչքերով մի փոքր էլ զննեց նրանց ու քուն մտավ։

Սակայն շատ չանցած նրան արթնացրին։ Նեղ աչքերով, հաստ հոնքերով, դերասանին վայել դեմքով, քաղաքացիական կոստյում հագած մի երիտասարդ իջևանատիրոջ ընկերակցությամբ կանգնել էր նրա կողքին։ Գյուղացիները դեռ նստած էին, այդ տեսարանին ավելի լավ հետևելու համար մի քանիսը շրջել էին իրենց բազկաթոռները։ Երիտասարդը բաղաքավարի ներողություն խնդրեց, որ ստիպված է եղել

www.a-pdf.com

արթնացնել Կ-ին, ներկայացավ որպես դղյակի տեսուչի որդի և ասաց.

— Այս գյուղը դղյակի կալվածքն է։ Ով ապրում կամ գիշերում է այստեղ, ինչ-որ չափով ապրում կամ գիշերում է դղյակում։ Առանց կոմսի թույլտվության ոչ ոք իրավունք չունի այդ բանն անել, մինչդեռ Դուք նման թույլտվություն չունեք կամ գոնե առայժմ ցույց չեք տվել այն։

Տեղում կիսանստած Կ-ն, որ կարգի էր բերել մազերը, մոտ կանգնածներին ներքևից վերև նայելով ասաց.

— Ես այս ո՞ր գյուղն եմ ընկել։ Մի՞թե սա դղյակն է։

— Իհարկե,— դանդաղ պատասխանեց երիտասարդը, մինչ այսուայնտեղ մի քանիսը Կ-ի պատասխանից օրորեցին գլուխները։— Այստեղ պարոն կոմս Վեստվեստի դղյակն է։

— Եվ գիշերելու համար թույլտվությո՞ւն է պետք,— հարցրեց Կ-ն, կարծես ուզում էր համոզվել, որ քիչ առաջ լսածը երազ չի եղել։

— Թույլտվություն պետք է,— եղավ պատասխանը, և երիտասարդի խոսքերում կծու ծաղր կար Կ-ի հասցեին, երբ նա ձեռքը պարզելով հարցրեց իջևանատիրոջն ու հյուրերին։— Թե՞ հարկ չկա թույլտվություն ունենալ։

— Այդ դեպքում ես ստիպված եմ գնալ, թույլտվություն բերել,— հորանջելով ասաց Կ-ն ու իբր վեր կենալ էր ուզում, վրայից մի կողմ հրեց ծածկոցը։

— Այո, բայց ումի՞ց,— հարցրեց երիտասարդը։

— Պարոն կոմսից,— ասաց Կ-ն։— Ուրիշ կերպ հնարավոր չէ։

— Այս կեսգիշերին պարոն կոմսից թույլտվությո՞ւն խնդրել,— բացականչեց երիտասարդն ու մի քայլ ընկրկեց։

— Հնարավոր չէ՞,— անտարբեր հարցրեց Կ-ն։— Այդ դեպքում ինչո՞ւ արթնացրիք ինձ։

— Թափառաշրջիկի ձևեր են,— ափերից դուրս գալով բացականչեց երիտասարդը։— Ես կոմսի պաշտոնյաների հանդեպ հարգանք եմ պահանջում Ձեզանից։ Իսկ Ձեզ արթնացրել եմ, որ հայտնեմ, թե Դուք պետք է անմիջապես լքեք կոմսի տիրույթները։

— Հերիք ինչքան ծիծաղեցինք,— ընդգծված մեղմ ձայ-

www.a-pdf.com

նով ասաց Կ-ն, պառկեց ու վրան քաշեց ծածկոցը։— Երիտասարդ, Դուք չափը մի փոքր անցնում եք, և ես վաղը դեռ կանդրադառնամ Ձեր վարվելակերպին։ Իջևանատերն ու այս պարոնները վկա կլինեն, եթե, իհարկե, վկայի կարիք ունենամ։ Իսկ ընդհանրապես, բարեհաճեք իմանալ, որ ես այն հողաչափն եմ, ում կոմսն է կարդադրել գալ։ Իմ օգնականները, սարքավորումների հետ, կառքով տեղ կհասնեն վաղը։ Ես չուզեցի ձյունների միջով քայլելու հնարավորությունը ձեռքիցս բաց թողնել, սակայն, ցավոք, մի քանի անգամ շեղվեցի ճանապարհից և այդ պատճառով միայն այսքան ուշ տեղ հասա։ Իսկ որ դղյակ ներկայանալու համար արդեն շատ ուշ էր, նախքան Ձեր սովորեցնելը՝ ինքս գիտեի։ Այդ է պատճառը, որ բավարարվեցի այստեղ գիշերելով, ինչը որ Դուք, մեզմ ասած, խանգարելու անքաղաքավարություն հանդես բերիք։ Իմ բացատրություններն այսքանով ավարտվում են։ Բարի գիշեր, պարոնայք։— Կ-ն շուռ եկավ վառարանի կողմը։

— Հողաչա՞փ։— Նրա թիկունքում լսվեց վարանոտ հարցը, հետո համատարած լռություն տիրեց։ Սակայն երիտասարդը արագ տիրապետեց իրեն և այնպիսի ձայնով, որ զսպված էր բավական, որպեսզի Կ-ի հանդեպ ուշադրության դրսևորում համարվեր, և բավական բարձր, որպեսզի Կ-ն լսեր, դիմեց իջևանատիրոջը։

— Ես հիմա հեռախոսով կտեղեկանամ։

Ինչպե՞ս։ Այս գյուղական իջևանատունը հեռախո՞ս էլ ուներ։ Ուրեմն կահավորանքը գերազանց է։ Թեև դա անակնկալ էր Կ-ի համար, բայց նա երևի նման բան սպասում էր։ Պարզվեց, որ հեռախոսը համարյա նրա գլխավերևում էր, և նա՝ քնաթաթախ, չէր նկատել այն։ Եթե երիտասարդը հիմա հեռաձայներ, ամենաբարի ցանկության դեպքում անգամ չէր կարողանա խնայել Կ-ի քունը. հարցն այն էր միայն, թե Կ-ն թույլ կտա՞ր զանգել։ Նա որոշեց թույլ տալ։ Հավանաբար անիմաստ էր քնած ձևանալը, այդ պատճառով նա իր նախկին դիրքով նստեց ծղոտի ալարկին։ Կ-ն տեսավ, թե ինչպես գյուղացիները վախով կուչ եկան ու իրար մեջ քընարկեցին լսած նորությունը. հողաչափի ժամանումը փոքր

www.a-pdf.com

բան չէր։ Խոհանոցի դուռը բացվել էր, ու, բացվածքի մեջ՝ այն անմնացորդ լցնելով, կանգնել էր իշևանատան հսկայակերպ տիրուհին։ Լուրը հայտնելու համար իշևանատերը ոտնաթաթերի վրա մոտեցավ նրան։

Այդ պահին սկսվեց հեռախոսազրույցը։ Դղյակի տեսուչը քնած էր, բայց նրա տեղակալը (տեղակալներից մեկը), ոմն պարոն Ֆրից, տեղում էր։ Երիտասարդը, որ Շվարցեր ազգանունով ներկայացավ, պատմեց, թե ինչպես է ինքը գտել Կ-ին՝ մոտ երեսնամյա տարիքի, բավական քրջոտ հագնված, ծղոտի պարկի վրա մեկնված, բարձի տեղ գլխի տակ ուսապայուսակն ու կողքին ոստոտ ձեռնափայտը դրած մարդուն։ Այդ մարդն, ինչ խոսք, կասկած է հարուցել, և, որովհետև իշևանատերը բացահայտորեն թերացել է իր պարտականությունների մեջ, իր՝ Շվարցերի պարտքն է եղել խորանալ հարցի էության մեջ։ Արթնացնելը, հարցաքննությունը, կոմսության տարածքից վտարվելու՝ պարտականությամբ թելադրված սպառնալիքը Կ-ն դժկամությամբ է ընդունել և, ինչպես վերջում է պարզվել, թերևս իրավացիորեն, քանի որ պնդում է, թե ինքը հողաչափ է ու պարոն կոմսն է իրեն պատվիրել գալ։ Ինքն, իհարկե, ի պաշտոնե պարտավոր է ստուգել Կ-ի պնդման ճշմարտացիությունը, այդ իսկ պատճառով Շվարցերը խնդրում է պարոն Ֆրիցին հարցում անել գլխավոր գրասենյակ՝ արդյոք այդպիսի հողաչափի գալուստի սպասո՞ւմ են, և հեռախոսով պատասխանել իսկույն։

Լռություն տիրեց. հակառակ ծայրում Ֆրիցը հարցում էր անում, իսկ այստեղ պատասխանի էին սպասում։ Կ-ն մնացել էր նախկին դիրքին, նույնիսկ շուռ չեկավ, կարծես կատարվածը իրեն չէր հետաքրքրում. դիմացն էր նայում։ Շվարցերի պատմածով, շարության ու զգուշավորության իր խառնուրդով, Կ-ն պատկերացրեց դիվանագիտական որոշակի պատրաստվածության մասին, որին նույնիսկ Շվարցերի նման փոքր մարդիկ ապատ տիրապետում էին դղյակում։ Դղյակի մարդիկ ջանասիրության հարցում նույնպես անթերի էին. կենտրոնական գրասենյակում դիշերային հերթապահություն էր սահմանված, և պատասխանը շատ արագ ստացվեց, քանզի այժմ արդեն Ֆրիցն էր դեռաձայնում։ Նրա տեղեկու-

www.a-pdf.com

թյունը երևի շատ կարճ էր, որովհետև զայրացած Շվարցերն իսկույն տեղը դրեց լսափողը։

— Ախր ասո՞ւմ էի, չէ՞,— բացականչեց նա։— Ոչ մի հողաչափ էլ չկա։ Սա մի ստոր, խաբեբա թափառաշրջիկ է, հավանաբար շատ ավելի վատը։

Կ-ին մի պահ թվաց, թե բոլորը՝ Շվարցերը, գյուղացիները, իշխանատերն ու տիրուհին իր վրա կնետվեն, և զոնե առաջին հարձակումից խուսափելու համար նա ողջ մարմնով կուչ եկավ ծածկոցի տակ։ Այդ պահին հեռախոսը մի անգամ էլ զնգաց, և, ինչպես Կ-ին թվաց՝ ավելի շեշտված։ Նա գլուխը դանդաղ դուրս հանեց։ Թեև այնքան էլ հավանական չէր, թե զանգը նորից Կ-ին կառնչվեր, բոլորը լռեցին, իսկ Շվարցերը վերադարձավ հեռախոսի մոտ։ Նա լսեց համեմատաբար երկար բացատրությունը, ապա մեղմաձայն ավելացրեց.

— Ուրեմն սխալմո՞ւնք է եղել։ Դա ինձ համար, իրոք, տհաճ է։ Անձամբ զրասենյակի պե՞տն է զանգել։ Տարօրինակ է, տարօրինակ։ Իսկ ես ինչպե՞ս բացատրեմ դա պարոն հողաչափին։

Կ-ն լարեց լսողությունը։ Ուրեմն դղյակում հաստատեցին իր հողաչափ լինելը։ Մի կողմից դա ձեռնտու չէր, որովհետև պարզվեց, որ դղյակում ամեն ինչ գիտեն նրա մասին, ուժերի հարաբերակցությունը որոշել են ու ժպիտով ընդունել մարտահրավերը։ Սակայն մյուս կողմից էլ ձեռնտու էր, քանզի, ըստ իր կարծիքի, ապացուցեց, որ իրեն թերագնահատում են, որ ինքն ավելի շատ աղատություն կունենա, քան կարող էր նախապես հուսալ։ Իսկ եթե կարծում էին, թե ընդունելով իր հողաչափ լինելը, կընդունեն նաև իր ունեցած զուտ հոգեբանական առավելությունը և դրանով կկարողանան իրեն պահել տեսական ահուսարսափի մեջ, ապա սխալվում էին. նա պարզապես մի թեթև փշաքաղվեց, և վերջ։

Ձեռքը թափ տալով, Կ-ն հեռացրեց երկչոտ քայլերով մոտեցող Շվարցերին, թեև համոզում էին իշխանատիրոջ սենյակը տեղափոխվել, մերժեց նրան, իշխանատիրոջից միայն քնաբեր վերցրեց, տիրուհուց՝ լվացվելու թաս, օճառ ու սրբիչ, և բնավ կարիք չեղավ պահանջել, որ աղատեն

www.a-pdf.com

դահլիճը. դեմքերը թաքցնելով, որ չլինի հանկարծ հողաչափը վաղը ճանաչի իրենց, հավաքվածները դուրս մղվեցին սրահից։ Լամպը մարեցին, ու նա վերջապես կարողացավ հանգըստանալ։ Այսուայնկողմ վազվզող առնետները թեև մի երկու անգամ արթնացրին նրան, բայց նա մինչև առավոտ հանգիստ քնեց։ Նախաճաշից հետո (ինչպես նախաճաշի, այնպես էլ Կ-ի սնվելու վարձն ընդհանրապես, իջևանատիրոջ ասելով, դղյակն էր վճարելու) Կ-ն ուզեց անմիջապես գյուղ գնալ։ Բայց քանի որ իջևանատերը, որին Կ-ն՝ նրա երեկվա վերաբերմունքը հիշելով, մինչև այժմ միայն հարկ եղած դեպքերում էր դիմել, համր խնդրանքով շարունակ իր շուրջն էր պտտվում, խղճաց նրան ու թույլ տվեց մի փոքր նստել իր մոտ։

— Ես կոմսին դեռ չեմ ճանաչում,— ասաց Կ-ն։— Նա պետք է որ լավ աշխատանքի դիմաց լավ վարձ տա, այնպես չէ՞։ Երբ մարդ ինձ նման տուն ու տեղից կտրվելով այս հեռուներն է հասնում, ուզում է նաև ինչ-որ բան հետը տարած լինել։

— Այդ տեսակետից պարոնը չպետք է որևէ հոգս ունենա։ Վարձատրության հետ կապված ոչ մի տրտունջ չի լինի։

— Դե, ես երկչոտների թվին չեմ պատկանում,— ասաց Կ-ն։— Կոմսին էլ կկարողանամ ասել իմ կարծիքը, սակայն պարոնների հետ գործը հանգիստ վերջացնելը, ինչ խոսք, շատ ավելի ձեռնտու է։

Իջևանատերը նստել էր Կ-ի դիմաց՝ լուսամտագոգի եզրին, չէր համարձակվում ավելի հարմար տեղավորվել և իր մուգ գույնի, խոշոր, երկյուղած աչքերով շարունակ նրան էր նայում։ Սկզբում նա ձգտում էր մոտ-մոտ անել Կ-ին, իսկ հիմա կարծես ուզում էր թողնել-հեռանալ։ Վախենում էր, թե Կ-ն կոմսի մասին հարցուփո՞րձ կանի, Կ-ին վստահություն չներշնչող «պարո՞ն» էր համարում և գուցե վախենո՞ւմ էր նրանից։ Կ-ն պետք է շեղեր նրա ուշադրությունը. նայեց ժամացույցին և ասաց.

— Իմ օգնականները շուտով տեղ կհասնեն։ Կկարողանա՞ն նրանց այստեղ տեղավորել։

www.a-pdf.com

— Իհարկե, պարոն։ Իսկ նրանք, ինչ է, քեզ հետ դղյակում չե՞ն ապրելու։

Մի՞թե նա հրաժարվում էր հյուրերից և հատկապես՝ Կ-ից, երբ դղյակն էր մատնացույց անում։

— Դեռ պարզ չէ,— պատասխանեց Կ-ն։— Ես նախ պետք է իմանամ, թե ինչ աշխատանք են նախատեսել ինձ համար։ Եթե, օրինակ, հարկ լինի այստեղ՝ գյուղում աշխատել, ապա ավելի խելամիտ կլինի նաև գյուղում ապրել։ Եվ հետո, վախենում եմ, թե դղյակում ապրելն ինձ դուր չգա։ Ես ուզում եմ միշտ ազատ լինել։

— Դու դղյակը չես ճանաչում,— կամաց ասաց իջևանատերը։

— Թերևս,— չառարկեց Կ-ն։— Կարծիք հայտնելիս չպետք է շտապել։ Առայժմ, սակայն, դղյակի մասին ես ավելին չգիտեմ, քան այն, որ վերևում կարողանում են իսկական հողաշափ ընտրել։ Դղյակում գուցե ուրիշ առավելություններ էլ կան։— Նա ոտքի կանգնեց, որ շուրթերն անհանգիստ կծոտող իջևանատիրոջը թույլ տար գնալ։ Այդ մարդու վստահությունը հնարավոր չէր հեշտությամբ շահել։

Հեռանալիս Կ-ի աչքին ընկավ պատից կախված մութ շրջանակով մոայլ դիմանկարը։ Նա այն նկատել էր դեռ իր նստած տեղում, բայց հեռվից մանրամասնելը չէր զսպազանել ու մտածել էր, թե իսկական նկարը հանել են շրջանակից և միայն շրջանակի սև հետնապատն է երևում։ Սակայն դա նկար էր ու, ինչպես հիմա պարզվեց, դիմանկարը մոտ հիսնամյա մի տղամարդու։ Նա գլուխն այնպես ցածր էր հակել կրծքին, որ աչքերը հազիվ էին երևում, իսկ որ գլուխը խոնարհված էր, պարզ երևում էր կնճռոտված ճակատից ու ներքև կախված խոշոր քթից։ Գլխի դիրքի պատճառով ծնոտը ծածկող մորուքը քիչ ներքև լայն փռվել էր կրծքին, ձախ ձեռքի մատները խրվել էին գլխի առատ մազերի մեջ, բայց այլևս չէին կարող բարձրացնել գլուխը։

— Ո՞վ է սա,— հարցրեց Կ-ն։— Կո՞մսն է։— Նա կանգնել էր նկարի դիմաց ու բնավ չէր նայում իջևանատիրոջ կողմը։

— Ոչ,— ասաց իջևանատերը,— տեսուչն է։

www.a-pdf.com

— Դղյակի տեսուչը գեղեցիկ տղամարդ է, դա ճիշտ է։ Ափսոս միայն, որ այդքան անհաջող որդի ունի։

— Ինչ եք ասում,— առարկեց իջևանատերը, Կ-ին փոքրինչ ներքև՝ իր կողմը ձգեց ու փսփսաց ականջին.— Շվարցերն երեկ չափազանցրեց։ Նրա հայրը պարզապես տեսուչի տեղակալն է, նույնիսկ վերջիններից մեկը։— Այդ պահին իջևանատերը Կ-ի համար կարծես երեխա լիներ։

— Թշվառ,— ծիծաղելով ասաց Կ-ն, սակայն իջևանատերը չմիացավ նրան, այլ ասաց.

— Շվարցերի հայրը ևս ազդեցիկ մարդ է։

— Դու ում ասես ազդեցիկ ես համարում։ Գուցե ի՞նձ էլ։

— Քեզ ազդեցիկ չեմ համարում,— վախվխելով, բայց լուրջ ասաց նա։

— Նշանակում է, բավական լավ ես կարողանում տարբերել մարդկանց։ Մեր մեջ ասած, ես իսկապես հզոր չեմ և այդ իսկ պատճառով ազդեցիկների հանդեպ ոչ պակաս հարգանք եմ տածում, քան դու, միայն թե քեզ պես անկեղծ չեմ և ոչ միշտ եմ ուզում իմ հարգանքը խոստովանել,— ասաց Կ-ն և, որպեսզի մխիթարեր իջևանատիրոջն ու ավելի լավ տրամադրեր իր հանդեպ, թեթևակի թփթփացրեց նրա այտին։

Իջևանատիրոջ դեմքին թույլ ժպիտ երևաց։ Նա, իրոք, պատանի էր, նուրբ, համարյա չմազակալած դեմք ուներ։ Այդ ինչպե՞ս էր եղել, որ նրան գեր ու ավելի տարիքով կին էր բաժին ընկել. խոհանոցի պատուհանից երևում էր, թե ինչպես էր աշխատում նա՝ արմունկները մարմնից բավական հեռու պահած։ Սակայն Կ-ն այլևս չուզեց խորանալ իջևանատիրոջ անձնական կյանքի մեջ, ու նրա դեմքից վանել վերջապես ձեռք բերված ժպիտը։ Նա իջևանատիրոջը միայն նշան արեց, որ դուռը բացի, և ելավ ձմեռվա գեղեցիկ առավոտով ողողված փողոցը։

Կ-ն տեսավ սառն օդի մեջ հստակ գծագրվող դղյակն ու կառույցի գծագրերը կրկնող, բարակ շերտով ամենուր նստած ձյունը։ Ի դեպ, նրան թվաց, թե այնտեղ՝ սարի վրա, ավելի քիչ ձյուն է եկել, քան գյուղում, ուր ինքը ոչ պակաս շարշարանքով էր առաջ շարժվում, քան երեկ՝ հողաճանապարհով։ Գյուղամիջում ձյունը հասնում էր մինչև խրճիթ-

www.a-pdf.com

ների պատուհաններն ու անմիջապես ծանրանում ցածրիկ տանիքներին, մինչդեռ սարի վրա՝ վերևում, ամեն ինչ վեր էր խոյանում ազատ ու թեթև. գոնե այստեղից այդպես էր թվում։ Իսկ ընդհանրապես, ինչպես այս հեռավորությունից պարզվեց, գղյակը համապատասխանում էր Կ-ի սպասելիքներին։ Դա ո՛չ ասպետական հին գղյակ էր, ո՛չ էլ նորօրյա շքեղ շինություն, այլ ձգված մի կառույց՝ բաղկացած հատուկենտ երկհարկանի, իրար կիպ գրկած ցածրիկ տներից։ Եթե մարդ չիմանար, թե սա գղյակ է, կարող էր կարծել, թե բնակավայր է դիմացը։ Կ-ն միայն տեսավ թեթևակի վեր խոյացող մի աշտարակ, բայց հնարավոր չէր զանազանել՝ բնակելի շենքերից մեկնումեկի աշտարա՞կն էր, թե՞ եկեղեցունը։ Սերմնագռավների երամներն այն առել էին իրենց օղակի մեջ։

Աչքերը գղյակին հառած, Կ-ն առաջ էր շարժվում և ուրիշ ոչ մի բանի մասին չէր մտածում։ Ավելի մոտենալով, Կ-ն հիասթափություն զգաց։ Ախր դա միայն գյուղական տներից բաղկացած, ողորմելի փոքր քաղաք էր ու թերևս տարբերվում էր սոսկ նրանով, որ այնտեղ ամեն ինչ կառուցված էր քարից, որոնց ծեփը թափվել էր վաղուց, ու թվում էր, թե քարերը նույնպես փշրվում էին։ Կ-ն թռուցիկ կերպով հիշեց իր հայրենի փոքր քաղաքը, որը նախկին թե պիշեր այս ենթադրյալ գղյակին։ Եթե Կ-ի նպատակը պարզապես շրջապատելը լիներ, ապա ավելորդ էր այդքան երկար թափառել, և շատ ավելի խելացի կլինեիր, եթե մի անգամ նորից այցելեր իր հայրենի վայրերը, ուր արդեն չէր եղել վաղուց։ Նա իր ծննդավայրի աշտարակը մտովի համեմատեց վերևի աշտարակի հետ։ Անվարան, ուղիղ, վեր ձգվելու հետ մեկտեղ նեղ գծագրեր ընդունող, կարմիր աղյուսով ծածկված լայնակտուր այն աշտարակն իրոք երկրային կառույց էր (մենք ուրիշ էլ ի՞նչ ենք կարող շինել), բայց ծառայում էր ավելի վեհ նպատակի, քան իրեն օղակող ցածրիկ տների կույտը, և ուներ ավելի շքեղ տեսք, քան կարող էր ունենալ մռայլ առօրյան։ Այստեղի աշտարակը՝ վերևում (միակ տեսանելի բանը սա էր) բնակելի տան աշտարակ էր և, ինչպես հիմա էր երևում, գուցե գղյակի կենտրոնական մասին էր պատկանում.

www.a-pdf.com

տեղ-տեղ պատատուկով խիտ ծածկված, միապաղաղ, շրջանաձև կառույց էր, ուներ փոքր պատուհաններ, որոնց վրա այժմ արտացոլվում էր արևը (դրանում ինչ-որ անիմաստ բան կար), և վերջանում էր տափակ կտուրով, որի անկանոն ու փշրված, կարծես երեխայի երկչոտ կամ փնթի ձեռքով գծագրված անհաստատ ատամնաշարերը խրվում էին կապույտ երկնքի մեջ, և դա թողնում էր այն տպավորությունը, թե շենքի մելամաղձոտ կենվորներից մեկը, ում արդարացիորեն փակել էին տան ամենահեռավոր սենյակում, հիմա քանդել էր կտուրը և վեր բարձրացրել, որպեսզի երևար համայն աշխարհին։

Կ-ն առաջվա պես կանգնած էր, կարծես լուռ կանգնելով կկարողանար ավելի լավ զննել։ Սակայն նրան խանգարեցին։ Գյուղի եկեղեցու հետևում, որի մոտ կանգնել էր ինքը (ճիշտն ասած, դա մատուռ էր, որ ամբողջ համայնքը տեղավորելու համար կառուցել էին հարդանոցի պես լայն), դպրոցն էր։ Դա մի ցածրիկ, ձգված շինություն էր, որ զարմանալի կերպով միավորում էր ժամանակակից ու շատ հին կառույցի հատկանիշները և ընկած էր ցանկապատով շրջափակված այգու հետևում. այգին հիմա ձյան համատարած դաշտ էր։ Այդ պահին դպրոցի շենքից դուրս ելան ուսուցիչն ու երեխաները։ Երեխաները ստվար խմբով օղակել էին ուսուցչին, աչքերը հառել նրան ու շաղակրատում էին անդադար։ Կ-ն ոչինչ չէր հասկանում նրանց արագ խոսակցությունից։ Ուսուցիչը՝ երիտասարդ, փոքրամարմին, նեղ ուսերով, անսովոր ուղիղ պահվածքով, բայց ոչ ծիծաղաշարժ մի մարդ էր և Կ-ին դեռ հեռվից էր նկատել։ Ի դեպ, աշակերտների խմբից բացի, Կ-ն միակ մարդն էր ողջ տարածքում։

Որպես օտարական, Կ-ն առաջինը բարևեց այդ իշխանատենչ, փոքր մարդուն։

— Բարի օր, պարոն ուսուցիչ,— ասաց նա։

Երեխաները միանգամից կտրեցին ձայները, և ուսուցչի խոսելուն նախորդած այդ հանկարծահաս լռությունը պետք է որ շատ դուր գար վերջինիս։

— Դղյակի՞ն եք նայում։— Շատ ավելի հեզահամբույր, քան Կ-ն էր սպասում, սակայն այնպիսի մի տոնով, կար-

www.a-pdf.com

ծեն հավանություն չի տալիս նրա արածին, հարցրեց ուսուցիչը։

— Այո,— ասաց Կ-ն։ Ես օտար մարդ եմ այստեղ ու իսկապես երեկ երեկոյան եմ եկել։

— Դղյակը Ձեզ դուր չի՞ գալիս,— արագ հարցրեց ուսուցիչը։

— Ինչպե՞ս։— Հարցին հարցով պատասխանեց փոքր-ինչ շփոթված Կ-ն ու ավելի մեղմ ձայնով կրկնեց։ Արդյոք ինձ դո՞ւր է գալիս դղյակը։ Իսկ ինչո՞ւ եք կարծում, թե դուր չի գալիս։

— Ոչ մի նորեկի այն դուր չի գալիս,— ասաց ուսուցիչը։

— Դուք, հավանաբար, ճանաչո՞ւմ եք կոմսին,— խոսակցության թեման փոխելով հարցրեց Կ-ն, որ չլինի հանկարծ որևէ տհաճ բան ասի։

— Ոչ,— ասաց ուսուցիչը և ուզեց շրջվել, սակայն Կ-ն տեղի չտվեց ու նորից հարցրեց.

— Ինչպե՞ս, Դուք չե՞ք ճանաչում կոմսին։

— Իսկ ինչպե՞ս պետք է ճանաչեի կոմսին,— ցածրաձայն ասաց նա ու ֆրանսերենով ավելացրեց բարձրաձայն։— Հաշվի առեք անմեղ աշակերտների ներկայությունը։

Այդ զգուշացումից հետո Կ-ն իրեն իրավունք վերապահեց հարցնել.

— Պարոն ուսուցիչ, ես կարո՞ղ եմ մի անգամ այցելել Ձեզ։ Ես երկար եմ մնալու այստեղ, բայց արդեն հիմա լքված եմ զգում. գյուղացիների դասին չեմ պատկանում, բայց դղյակն էլ իմ տեղը չէ։

— Գյուղացիների ու դղյակի միջև այնքան էլ մեծ տարբերություն չկա,— ասաց ուսուցիչը։

— Թեկուզ։ Բայց դա ոչնչով չի փոխում իմ վիճակը։ Կկարողանայի՞ մի անգամ այցելել Ձեզ։

— Ես ապրում եմ Շվանենգասսեի վրա, մսագործի մոտ։

— Լավ, կգամ,— ասաց Կ-ն, թեև դա ավելի շատ նման էր հասցեն հայտնելուն, քան հրավերի։

Ուսուցիչը գլխով արեց ու վերստին աղմկող աշակերտների խմբի հետ առաջ անցավ։ Նրանք շուտով անհետացան մի

www.a-pdf.com

զառիթափ նրբանցքում։ Կ-ն շփոթված էր, զրույցը զայրացրեց նրան։ Այստեղ գալուց ի վեր նա առաջին անգամ իսկական հոգնածություն զգաց։ Գյուղ բերող երկար ճանապարհը չէր ազդել, և նա հանգիստ քայլելով անցել էր այդքան տարածությունը. գուցեև անպատեհ, բայց այժմ իրենց զգացնել տվեցին անասելի հոգնության հետևանքները։ Անդիմադրելի մի ուժ նրան նոր ծանոթությունների էր մղում, սակայն յուրաքանչյուր նոր ծանոթություն ավելի անտանելի էր դարձնում հոգնածությունը։ Եթե այսօրվա վիճակով ինքնիրեն ստիպեր զբոսանքը ձգել-հասցնել գոնե մինչև դղյակի մատույցները, ապա չափազանց մեծ բան արած կլիներ։

Նա շարունակեց քայլել, սակայն ճանապարհը շատ երկար էր։ Ճանապարհը՝ գյուղի կենտրոնական փողոցը, դեպի դղյակի բարձունքը չէր տանում, այլ անցնում էր մոտով, և հետո, կարծես դիտավորյալ, թեքվում էր ու, եթե անգամ չէր էլ հեռանում դղյակից, ապա միևնույն է, բոլորովին չէր մոտենում։ Կ-ն շարունակ սպասում էր, թե ճանապարհն իրեն դղյակի կողմը կտանի, և առաջ էր գնում սոսկ այն պատճառով, որ դեռ ակնկալում էր։ Միայն ու միայն հոգնածությունն էր պատճառը, որ Կ-ն վարանում էր փողոցից դուրս գալ, միաժամանակ նրան զարմացնում էր գյուղի երկարությունը, որ անվերջանալի էր թվում. փոքրիկ տնակներն ու սառցակալած պատուհանները, ձյունն ու ամայությունը։ Վերջապես նա պոկ եկավ այն փողոցից, ուր կանգնել-մնացել էր, և նրան կլանեց մի նեղ նրբանցք. այստեղ ձյունն ավելի խորն էր, խրվող ոտքերը դուրս քաշելը շատ ավելի դժվար։ Քրտինքը պատեց մարմինը. նա այլևս չէր կարող շարժվել ու լուռ կանգնեց։

Սակայն Կ-ն միայնակ չէր. աջ ու ձախ կողմերում գյուղացիների խրճիթներն էին։ Նա մի ձնագունդ սարքեց ու նետեց պատուհաններից մեկին։ Դուռն անմիջապես բացվեց (առաջին բացվող դուռը ողջ ճանապարհին), և մորթե մուգ բաճկոն հագած մի ծեր գյուղացի՝ գլուխը կողքի ծռած, բարեհամբույր ու թույլ, կանգնեց այնտեղ։

— Ես շատ եմ հոգնել, կարելի՞ է կարճ ժամանակով Ձեզ մոտ գամ։

www.a-pdf.com

Նա լսեց, թե ծերունին ինչ պատասխանեց, երախտագիտությամբ ընդունեց իր կողմը պարզված, ձյունների միջից հազատող տախտակն ու, մի քանի քայլ անելով, մտավ սենյակ։

Մեծ սենյակ՝ երեկոյան աղջամուղջում։ Դրսից եկողը սկզբում ոչինչ չէր տեսնում։ Կ-ն օրորվելով քայլեց լվացքի լոնքի կողմը. կանացի մի ձեռք ետ պահեց նրան։ Անկյունից **երեխաների աղմուկ լսվեց,** մյուս անկյունում ծուխն էր ոլորվում վեր և կիսախավարը վերածում մթության։ Կ-ն կարծես ամպերի մեջ կանգնած լիներ։

— Ախր նա հարբած է,— լսվեց ինչ-որ մեկի ձայնը։

— Ո՞վ եք Դուք,— լսվեց մի ուրիշ՝ տիրական ձայն, որն ապա դիմեց ծերունուն։— Ինչո՞ւ ներս թողեցիր նրան։ Մի՞թե կարելի է փողոցներում թափառող ամեն բան ներս բերել։

— Ես կոմսի հողաչափն եմ,— ասաց Կ-ն ու փորձեց այդպես արդարանալ անտեսանելի մարդկանց մոտ։

— Ախ, սա հողաչափն է,— ասաց կանացի մի ձայն, ու լռություն հաջորդեց։

— Դուք ճանաչո՞ւմ եք ինձ,— հարցրեց Կ-ն։

— Իհարկե։— Շատ ավելի կարճ՝ կրկնեց նույն ձայնը։ Այն, որ իրեն ճանաչում էին այստեղ, Կ-ին թվաց, թե իր օգտին չէ։

Ծուխը վերջապես փոքր-ինչ ցրվեց, ու Կ-ն արդեն կարող էր դանդաղ կողմնորոշվել։ Նրան թվաց, թե մեծ լվացքի օր է. դռների մոտ լվացք էին անում, ծուխը, սակայն, գալիս էր մյուս անկյունից, ուր փայտե այնպիսի մեծ գոռում, որպիսին Կ-ն դեռ երբեք չէր տեսել (երկու մահճակալի չափ տեղ էր զբաղեցնում), գոլորշի արձակող ջրի մեջ երկու տղամարդ էին լողանում։ Սակայն ավելի անսպասելին՝ առանց իմանալու, թե որն էր անսպասելիությունը, աջ անկյունն էր։ Սենյակի հետնապատի մեջ բացված միակ մեծ անցքի միջով՝ երևի բակի կողմից, ձյան գունատ լույս էր ներթափանցում, որ՝ անկյունի խորքում, բարձր թիկնակով բազկաթոռի մեջ, հոգնած, համարյա պառկած կնոջ շորին ընկնելով, մետաքսանման փայլ էր հաղորդում կտորին։ Կնոջ կրծքին ծծկեր երեխա կար, նրա շուրջը մի քանի երեխաներ էին խա-

www.a-pdf.com

զում, ինչպես երևում էր՝ գյուղացի երեխաներ, մինչդեռ չէր թվում, թե կինը գյուղական ծագում ունի. երևի հոգնածությունն ու հիվանդությունը գյուղացիներին էլ են դարձնում նրբակազմ։

— Նստեք,— առաջարկեց տղամարդկանցից մեկը։ Նա մորուք ուներ և թավ բեղ, բերանը՝ փնչացնելով, շարունակ բաց էր պահում, և ծիծաղելի էր նայելը, թե նա ինչպես գոհ վրայով ցույց տվեց սնդուկն ու միաժամանակ տաք ջուր ցայտեցրեց Կ-ի դեմքին։ Մտորումների մեջ խորասուզված, սնդուկի վրա արդեն նստել էր Կ-ին ներս թողնող ծերունին։ Կ-ն շնորհակալ էր, որ վերջապես իրեն թույլ տվեցին նստել։ Այդ պահից սկսած այլևս ոչ ոք նրա մասին հոգ չէր տանում։ Լվացքատաշտի մոտ կանգնած, լիքը կազմվածքով, երիտասարդ, շիկահեր կինը մեղմաձայն երգում էր աշխատելիս, լողացող տղամարդիկ չփչփացնելով շուռումուռ էին գալիս գուռի մեջ, երեխաներն ուզում էին մոտենալ նրանց, բայց ուժեղ ցայտերը, որ Կ-ին էլ չէին խնայում, շարունակ ետ էին քշում նրանց։ Բազկաթոռի մեջ պառկած կինը կարծես անկենդան լիներ. նա նույնիսկ կրծքին դրված երեխային չէր նայում, այլ հայացքն անորոշ հառել էր վեր։

Կ-ն հավանաբար երկար էր նայել այս անփոփոխ, գեղեցիկ ու տխուր տեսարանին, հետո, սակայն, նա պետք է որ քնած լիներ, որովհետև երբ բարձր ձայն լսելով արթնացավ, գլուխը հենված էր կողքին նստած ծերունու ուսին։ Տղամարդիկ վերջացրել էին իրենց լոգանքը և հագած-կապած կանգնել էին Կ-ի դիմաց, մինչդեռ տաշտի մեջ՝ շիկահեր կնոջ հսկողության տակ, այժմ չփչփացնում էին երեխաները։ Պարզվեց, որ մորուքավոր, աղմկարար տղամարդը պակաս ազդեցիկ էր, քան երկրորդը, որ թեև առաջինից ավելի խոշոր չէր ու նեղ մորուք ուներ, բնավորությամբ լռակյաց, դանդաղ մտածող, լայն ուսերով մի մարդ էր. նրա դեմքը ևս լայն էր։

— Պարոն հողաչափ, ներեցեք անքաղաքավարության համար, բայց Դուք չեք կարող մնալ այստեղ,— ասաց նա։

— Ես չէի էլ ուզում մնալ,— ասաց Կ-ն։— Ինձ միայն մի փոքր հանգստանալ էր պետք։ Հանգստացա ու հիմա կգնամ։

— Մեր անհյուրընկալությունը հավանաբար զարմացնում է Ձեզ, սակայն մեզ մոտ նման բան ընդունված չէ։ Մենք հյուրեր չենք ուզում։

Ինչից փոքր-ինչ թարմացած, այժմ ավելի պարզ լսող Կ-ին ուրախացրին անկեղծ խոսքերը։ Նա սկսեց ավելի անկաշկանդ շարժվել, ձեռքի փայտը մեկ այստեղ, մեկ այնտեղ հենելով՝ մոտեցավ թիկնաթոռին նստած կնոջը. իմիջիայլոց, սենյակում ամենախոշորը նա էր։

— Ինչ խոսք,— համաձայնեց Կ-ն։— Ձեր ինչին են պետքհյուրերը։ Սակայն երբեմն-երբեմն որևէ մեկի անհրաժեշտությունը զգացվում է. օրինակ, իմ՝ հողաչափի։

— Չգիտեմ,— լսվեց դանդաղ պատասխանը։— Եթե Ձեզ կանչել են, նշանակում է, իրոք, ունեցել են Ձեր կարիքը։ Գուցե դա բացառություն է, մենք, սակայն, փոքր մարդիկ ենք ու հետևում ենք ավանդույթին։ Այդ հարցում Դուք չեք կարող մեղադրել մեզ։

— Ո՛չ, ո՛չ։ Ես միայն շնորհակալ եմ ձեզնից։ Ձեզնից ու այստեղ բոլորից։— Ասաց Կ-ն և բոլորի համար անսպասելի շուռ եկավ ու մի ցատկով հայտնվեց թիկնաթոռին պառկած կնոջ դիմաց։ Նրա հոգնած, կապույտ աչքերը նայեցին Կ-ին, մետաքսյա թափանցիկ գլխաշորը ծածկել էր ճակատի կեսը, ծծկեր երեխան քնած էր կրծքին։

— Ո՞վ ես դու,— հարցրեց Կ-ն։

Բառերն անհոգ նետելով՝ պարզ չէր, արհամարհանքը Կ-ի՞ն էր վերաբերում, թե՞ իր իսկ պատասխանին, կինն ասաց.

— Դղյակի ծնունդ աղջիկ եմ։

Դա մի ակնթարթ տևեց։ Արդեն հաջորդ պահին Կ-ի աջ ու ձախ կողմերում մեկական տղամարդ էր կանգնած և, կարծես համաձայնության գալու ուրիշ միջոց չգտնելով, անխոս, բայց ամբողջ ուժով նրանք դեպի դուռը տարան Կ-ին։ Այդ պահին ինչ-որ բանից ուրախացած ծերունին ծափ զարկեց, խելահեղ աղմուկ բարձրացրած երեխաների մոտ կանգնած լվացք անող կինը ևս սկսեց ծիծաղել։

Իսկ Կ-ն իսկույն հայտնվեց փողոցում, շեմի մոտ կանգնած տղամարդիկ հսկում էին նրա շարժումները։ Նորից

www.a-pdf.com

ձյուն էր գալիս, սակայն թվում էր, թե շուրջը փոքր-ինչ ավելի լուսավոր է։ Մորուքավորն անհամբեր հարցրեց.

— Ո՞ւր եք ուզում գնալ։ Այս ճանապարհը դղյակ է տանում, սա՝ գյուղ։

Կ-ն չպատասխանեց նրան, մինչդեռ մյուսին, որ, չնայած իր մտախոհ տեսքին, ավելի անմիջական էր թվում, հարցրեց.

— Ո՞վ եք Դուք։ Ո՞ւմ եմ պարտական հանգստի համար։

— Ես կաշեգործ Լազեմանն եմ, սակայն ոչ ոքի պետք չէ շնորհակալ լինել,— եղավ պատասխանը։

— Լավ։ Գուցե մենք հանդիպենք դեռ։

— Չեմ կարծում։

— Բարի օր, Արթուր, բարև, Երեմիաս։— Նույն պահին ձեռքը բարձրացնելով ողջունեց մորուքավորը։

Կ-ն շուտ եկավ։ Ուրեմն այս գյուղի փողոցներում մարդկ է՞լ են հայտնվում։ Մարմինը կիպ գրկող զգեստներ հագած երկու միջահասակ երիտասարդներ էին գալիս դղյակի կողմից, նրանց նույնիսկ դեմքերն էին իրար նման։ Դեմքերի մաշկը մուգ շագանակագույն էր, ու այդ գույնի վրա առանձնահատուկ սևությամբ էին երևում նրանց բարակ բեղերը։ Ձյունածածկ փողոցում նրանք զարմանալիորեն թեթև էին քայլում՝ համաքայլ դնելով իրենց բարեկազմ ոտքերը։

— Ի՞նչ կա։— Ձայն տվեց մորուքավորը. նրանց հետ կարելի էր միայն բացականչելով խոսել, որովհետև նրանք կանգ չառան և հետո էլ՝ շատ արագ էին ընթանում։

— Գործ ունենք,— ծիծաղելով պատասխանեցին նրանք։

— Որտե՞ղ։

— Իջևանատանը։

— Ես էլ եմ այնտեղ գնում,— շատ ավելի բարձր բացականչեց Կ-ն. նա ուզում էր, որ երկու երիտասարդներն իրենց հետ վերցնեին իրեն։ Չնայած նրանց ծանոթությունն առանձնապես ոչ մի լավ բան չէր խոստանում, բայց երևում էր, որ այդ երկուսը աշխույժ ու լավ ուղեկիցներ կլինեին։ Նրանք լսեցին Կ-ին, միայն գլխով արեցին ու քիչ անց հեռու էին արդեն։

www.a-pdf.com

Կ-ն առաջվա պես կանգնել էր ու ցանկություն չուներ ոտքերը հանել ձյան միջից, որովհետև, միևնույն է, քիչ հետո ավելի խորն էր խրվելու։ Կաշեգործն ու նրա ընկերը, գոհ այն բանից, որ Կ-ին վերջնականապես դուրս են հանել տնից, շարունակ Կ-ի կողմը շուռ գալով, դռան նեղ բացվածքի միջով ներս մտան, և Կ-ն մնաց մենակ՝ շրջապատող ձյան մեջ։

«Եթե ես պատահաբար, և ոչ թե որոշակի նպատակով հասած լինեի այստեղ, մի փոքր հիասթափվելու համար հարմար առիթ կունենայի»,— մտածեց նա։

Զախակողմյան խրճիթի պատուհաններից մեկը բացվեց։ Փակ վիճակում, երևի ձյան արտացոլքի պատճառով, այն թունդ կապույտ էր թվում և այնքան փոքր էր, որ դուրս նայողի դեմքն ամբողջությամբ չէր երևում, այլ՝ միայն աչքերը, ծեր, շագանակագույն աչքերը։

— Այստեղ է կանգնած,— լսեց Կ-ն կանացի դողդոջուն ձայնը։

— Հողաչափն է։— Տղամարդ էր խոսողը։ Հետո տղամարդը մոտեցավ պատուհանին ու այնպիսի մի ձայնով, որ թշնամական չէր, ավելի շուտ, կարծես, նրա համար կարևոր էր իր տան դիմաց ամեն ինչի կարգին լինելը, հարցրեց.

— Ո՞ւմ եք սպասում։

— Սպասում եմ, որ մի սահնակ անցնի ու ինձ հետը վերցնի։

— Այստեղով սահնակներ չեն անցնում։ Երթուղալ չկա։

— Բայց չէ՞ որ սա դղյակ տանող փողոցն է,— առարկեց Կ-ն։

— Հետո ինչ։ Թեկուզ։— Որոշակի դաժանություն կար տղամարդու ձայնի մեջ։— Այստեղ երթուղալ չկա։— Հետո երկուսն էլ լռեցին, բայց, ինչպես երևում էր, տղամարդն ինչ-որ բանի մասին էր մտածում, որովհետև պատուհանը, որտեղից ծուխ էր դուրս գալիս, դեռ բաց էր։

— Ճանապարհը վատն է։— Նրան օգնած լինելու համար ասաց Կ-ն։

— Գուցե,— լսվեց ի պատասխան։

— Եթե ուզում եք, իմ սահնակով կտանեմ Ձեզ,— քիչ անց նորից խոսեց տղամարդը։

www.a-pdf.com

— Այո, խնդրում եմ,— ուրախացավ Կ-ն։— Ինձնից ինչ-քա՞ն եք վերցնելու։

— Ոչինչ։— Կ-ն շատ զարմացավ։— Դուք, ախր, հոգաչափն եք։ Դղյակի մարդկանցից եք,— բացատրեց տղամարդը։— Իսկ ո՞ւր եք ուզում գնալ։

— Դղյակ,— արագ վրա բերեց Կ-ն։

— Այդ դեպքում չեմ տանի,— անմիջապես մերժեց տղամարդը։

— Ես, ախր, դղյակի մարդկանցից եմ,— նրա խոսքերը կրկնեց Կ-ն։

— Ի՞նչ անեմ։

— Դե, գոնե իջևանատուն տարեք։

— Լավ։ Հիմա սահնակը բերեմ։— Նրա պատրաստակամության մեջ բարեհաճության նշույլ անգամ չկար. դա ավելի շուտ համառ, երկչոտ, համարյա պեղանտության հասնող մի ցանկություն էր. միայն թե Կ-ն հեռանար իր տան մոտից։

Բակի դարպասը բացվեց, ու նիհար ձի լծված, թեթև բեռներ կրող տափակ, նստելատեղեր չունեցող մի սահնակ դուրս եկավ, որի հետևից կռացած քայլում էր թույլ, կաղ, մբրսածի նիհար ու կարմիր դեմքով մի մարդ. նրա դեմքն առանձնապես փոքր էր թվում գլուխն ամուր պարուրած բրդյա շալի պատճառով։ Այդ մարդն, անկասկած, հիվանդ էր ու տնից դուրս էր եկել միայն Կ-ին իջևանատուն տանելու։ Կ-ն նման մի բան ասաց նրան, բայց տղամարդը թափ տվեց ձեռքը։ Կ-ն տեղեկացավ, որ իրեն տանող կառապանը Գերշտեկերն է, և այս՝ ոչ այնքան հարմարավետ սահնակն այն պատճառով է դուրս հանել, որ միայն սա է պատրաստ եղել, իսկ ուրիշ մեկը դուրս հանելու համար շատ ժամանակ կկորցնեին։

— Նստեք,— ասաց նա ու մտրակով ցույց տվեց սահնակի հետնամասը։

— Ձեր կողքին կնստեմ։

— Ես ոտքով եմ գնալու,— առարկեց Գերշտեկերը։

— Իսկ ինչո՞ւ,— հետաքրքրվեց Կ-ն։

— Ես ոտքով եմ գնալու,— կրկնեց Գերշտեկերն ու սկսեց այնպես հազալ, որ չընկնելու համար ստիպված էր ոտքերն

www.a-pdf.com

ամուր խրել ձյան մեջ ու ձեռքերով բռնել սահնակի եզրից։ Կ-ն այլևս ոչինչ չասաց, նստեց սահնակի հետնամասում, կառապանի հազը հանդարտվեց աստիճանաբար, ու նրանք շարժվեցին։

Արտասովոր մութ երանգ ստացած դղյակը, ուր դեռ այսօր հասնելու հույս ուներ Կ-ն, նորից հեռացավ։ Կարծես ի նշան ժամանակավոր հրաժեշտի, դղյակի կողմից ուրախ թևածող զանգի զողանջ լսվեց, և Կ-ի սիրտը մի ակնթարթ թրթռաց այդ զողանջից, կարծես իր երկչոտ ձգտման իրականացումն էր սպառնում նրան. զանգի զողանջը ցավ էլ էր պատճառում։ Քիչ անց մեծ զանգը լռեց, ու նրա զողանջին հետևեց միալար հնչող զանգի ձայնը, և հնարավոր չէր որոշել՝ դըղյակի՞ց էր լսվում այն, թե՝ գյուղից։ Այս միալար զնգոցը թերևս ավելի շատ էր սազում իրենց դանդաղ երթին ու թըշվառ, բայց անհողդողդ կառապանին։

— Լսի՛ր,— հանկարծ ձայնեց Կ-ն։ Նրանք արդեն եկեղեցու մոտերքում էին, իշևանատունն այստեղից հեռու չէր, և Կ-ն մի փոքր համարձակություն ձեռք բերեց։— Ես զարմանում եմ, որ դու քո սեփական պատասխանատվությամբ համարձակվեցիր ինձ բերել։ Դրա իրավունքն ունե՞ս։

Գերշտեկերն ականջի հետև գցեց հարցն ու ձիուկի կողքի հետ հանգիստ շարունակեց առաջ գնալ։

— Է՛յ,— բացականչեց Կ-ն, սահնակի վրայից մի քիչ ձյուն հավաքելով ձնագնդակ սարքեց և խփեց ուղիղ Գերշտեկերի ականջին։ Վերջինս կանգ առավ ու շրջվեց։ Սահնակը մի փոքր էլ առաջ սահեց ու, երբ Կ-ն այդքան մոտիկից տեսավ նրա հոգնած, կարմիր, սրված դեմքը՝ անհասկանալիորեն տարբերվող այտերով. մեկը տափակ էր, մյուսը՝ ներս ընկած, տեսավ նրան՝ բերանը բաց կանգնած (բերանի մեջ երկուերեք ատամ էր մնացել), կառապանի տեսքը ցավ պատճառեց, ու ինչ նա քիչ առաջ հարցրել էր չարախնդալով, այժմ հարկ եղավ կրկնել կարեկցանքով. արդյոք Գերշտեկերն իրեն տեղափոխելու համար չի՞ տուժի։

— Ի՞նչ ես ուզում,— չհասկանալով հարցրեց Գերշտեկերը, սակայն չսպասեց պատասխանին. ձայն տվեց ձիուկին ու շարունակեց ճամփան։

www.a-pdf.com

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Երբ նրանք արդեն իջևանատան մոտ էին (Կ-ն դա հասկացավ, հիշելով ոլորաններից մեկը), ի զարմանս իր՝ արդեն լավ մթնել էր։ Ուրեմն ինքն այդքան հեռու էր գնացել։ Իր պատկերացմամբ նա միայն մեկ, թե երկու ժամ առաջ էր գնացել. առավոտյան էր դուրս եկել իջևանատնից ու մինչև այժմ ուտելու ոչ մի պահանջ չէր զգացել։ Բացի այդքիչ առաջ լույս-լույս էր, իսկ հիմա մութ էր արդեն։

— Կարճ են օրերը, կարճ,— ինքնիրեն խոսեց նա, սահնակից ներքև սահեց ու քայլեց իջևանատան կողմը։

Հուրախություն նրա, տան դիմացի փոքր աստիճաններին կանգնել էր իջևանատերն ու բարձր պահած լամպով լուսավորում էր։ Մի պահ կառապանին հիշելով, Կ-ն կանգնեցմնաց, ինչ-որ տեղ, մթության մեջ հազի ձայն լսվեց. նա էր։ Ոչինչ, մի ուրիշ անգամ կարող էր տեսնել նրան։

Երբ Կ-ն հնաոլանդ ողջունող իջևանատիրոջը հասավ, նկատեց դռան երկու կողմերում կանգնած մարդկանց։ Նա իջևանատիրոջ ձեռքից վերցրեց լամպն ու լուսավորեց. այդ մարդկանց նա մի անգամ հանդիպել էր արդեն. Երեմիասն ու Արթուրն էին։ Այժմ նրանք ողջունեցին նրան։ Զինվորական ծառայության երջանիկ ժամանակները հիշելով, Կ-ն ծիծաղեց։

— Ովքե՞ր եք դուք,— հարցրեց նա ու հայացքը մեկից մյուսին դարձրեց։

— Ձեր օգնականները,— եղավ պատասխանը։

— Սրանք Ձեր օգնականներն են,— կամաց հաստատեց իջևանատերը։

— Ինչպե՞ս։ Դուք իմ հին օգնականնե՞րն եք։ Ես ձե՞զ էի կարգադրել իմ հետևից գալ, ձե՞զ էի սպասում,— զարմացավ Կ-ն. նրանք հաստատեցին։

— Լավ,— քիչ անց ասաց Կ-ն։— Լավ է, որ եկել եք։ Ի դեպ,— ավելի երկար դադարից հետո ասաց Կ-ն,— դուք շատ եք ուշացել։ Շատ անկարգապահ եք։

— Ճանապարհը երկար էր,— առարկեց նրանցից մեկը։

— Ճանապարհը երկար էր,— կրկնեց Կ-ն։— Բայց երբ դուք դղյակից էիք գալիս, մենք հանդիպեցինք։

www.a-pdf.com

— Այո,— առանց հետագա բացատրությունների ասացին նրանք։

— Իսկ ո՞ւր են սարքերը։

— Մենք ոչ մի սարք չունենք։

— Այն սարքերը, որ ես էի վստահել ձեզ։

— Մենք ոչ մի սարք չունենք,— կրկնեցին նրանք։

— Ի՞նչ մարդ եք դուք։ Գոնե ինչ-որ բան հասկանո՞ւմ եք հողաչափությունից։

— Ոչ։

— Բայց եթե դուք իմ հին օգնականներն եք, ապա պետք է ինչ-որ բան հասկանաք,— ասաց Կ-ն ու, նրանց առաջն արած՝ հրեց ներս։

Քիչ անց նրանք, գարեջրի գավաթները ձեռքներին, լուռ նստած էին փոքր սեղանի մոտ, մեջտեղում Կ-ն էր, աջ ու ձախ կողմերում՝ օգնականները։ Իսկ ընդհանրապես, սեղաններից մեկի մոտ, ինչպես նախորդ երեկոյան, գյուղացիներ կային նստած։

— Ձեզ հետ դժվար կլինի,— ասաց Կ-ն ու, ինչպես շատ անգամ էր արել, նորից համեմատեց նրանց դեմքերը։— Ինչպե՞ս եմ տարբերելու ձեզ։ Միայն ձեր անուններն են տարբեր, իսկ դուք իրար այնպես եք նման, ինչպես...,— նա լռեց ու քիչ անց ակամա շարունակեց։— Նման եք իրար, ոնց որ երկու օձ։

— Սովորաբար մեզ շատ լավ էլ զանազանում են իրարից,— իրենց արդարացնելու համար, ժպտալով ասացին նրանք։

— Հավատում եմ,— համաձայնեց Կ-ն։— Ախր ես ինքս դրա վկան եղա, բայց ես միայն իմ աչքերով եմ տեսնում, իսկ դրանք չեն կարող տարբերել ձեզ։ Այդ պատճառով ձեզ հետ կվարվեմ ինչպես մի մարդու, և երկուսիդ էլ Արթուր կասեմ։ Ձեզանից մեկի անունն այդպես է, չէ՞։ Ք՞ոնը,— հարցրեց Կ-ն։

— Ոչ։ Ես Երեմիասն եմ։

— Ինձ համար միևնույն է։ Երկուսիդ էլ Արթուր կասեմ։ Արթուրին որևէ տեղ ուղարկեմ, երկուսովդ կգնաք, Արթուրին մի գործ տամ, երկուսդ էլ կանեք։ Մի կողմից դա վատ

www.a-pdf.com

է, որ ձեզ առանձին աշխատանքների համար չեմ կարողանա օգտագործել, բայց փոխարենը մի առավելություն կա. ձեզ հանձնարարված ամեն ինչի համար պատասխանատվությունը միասին եք կրում։ Ինձ համար մեկ է, թե ինչպես կկիսեք գործը, միայն թե իրար վրա չգցեք։ Ինձ համար դուք մի անձնավորություն եք։

— Դա շատ տհաճ է մեզ համար,— մի փոքր մտածելուց հետո ասացին նրանք։

— Բա իհարկե։ Ինչ խոսք, դա տհաճ կլինի ձեզ համար, բայց դրանից ոչինչ չի փոխվի։

Որոշ ժամանակից ի վեր, Կ-ն նկատել էր, թե ինչպես գյուղացիներից մեկը փորձում է գաղտագողի մոտ գալ։ Նա, այնուամենայնիվ, համարձակվեց մոտենալ օգնականներից մեկին, ուզեց ինչ-որ բան շշնջալ նրա ականջին։

— Ներեցեք,— ասաց Կ-ն, ձեռքը խփեց սեղանին և վեր կացավ։— Սրանք իմ օգնականներն են, մեզ մոտ այժմ խորհրդակցություն է, և ոչ ոք իրավունք չունի խանգարել մեզ։

— Օ, խնդրեմ, խնդրեմ,— վեհերոտ ասաց գյուղացին ու ետ-ետ գնաց դեպի իր սեղանակիցները։

— Ամենից առաջ սա հաշվի առեք,— նորից նստելով, ասաց Կ-ն։— Առանց իմ թույլտվության իրավունք չունեք որևէ մեկի հետ խոսել։ Այստեղ ես օտար մարդ եմ, և եթե դուք իմ հին օգնականներն եք, դուք ևս օտարներ եք։ Այդ իսկ պատճառով մենք պետք է երեքով իրար պահենք։ Տվեք ինձ ձեր ձեռքերը։

Զափից դուրս մեծ պատրաստակամությամբ նրանք ձեռքերը պարզեցին Կ-ի կողմը։

— Ձեր թաթերը պահեք ձեզ, սակայն իմ հրամանն ուժի մեջ է,— ասաց Կ-ն։— Հիմա ես կգնամ քնելու և ձեզ էլ խորհուրդ կտամ նույնն անել։ Այսօրվա աշխատանքային օրը բաց թողեցինք, վաղն աշխատանքը շատ շուտ կսկսվի։ Դրդյակ մեկնելու համար պետք է մի սահնակ ճարեք և ժամը վեցին պատրաստ կանգնեք այստեղ՝ տան դիմաց։

— Լավ,— համաձայնեց օգնականներից մեկը։

— Դու ասում ես լավ, մինչդեռ շատ լավ գիտես, որ դա անհնար է,— միջամտեց մյուսը։

www.a-pdf.com

— Հանգիստ,— կարգադրեց Կ-ն։— Դուք, հավանաբար արդեն ուզում եք իրար հետ գժտվել։

— Նա իրավացի է,— նորից խոսեց առաջին օգնականը։— Առանց թույլտվության ոչ մի օտար մարդ իրավունք չունի դղյակ գնալ։

— Ումի՞ց է պետք թույլտվություն ձեռք բերել։

— Չգիտեմ։ Երևի տեսուչից։

— Այդ դեպքում հեռախոսով կխնդրենք, որ թույլ տա։ Անմիջապես զանգահարեք տեսուչին։ Երկուսով։

Օգնականները վազեցին դեպի հեռախոսասարքը։ Ինչպես էին իրար հրմշտում հեռախոսի մոտ. նրանք ծիծաղելի լինելու աստիճան հնազանդ էին։ Նրանց հաջողվեց կապվել դղյակի հետ և հարցրեցին, արդյոք Կ-ն վաղն առավոտյան կարո՞ղ է իրենց հետ դղյակ գալ։

— Ոչ։— Այդ մի հատիկ բառը նույնիսկ Կ-ի սեղանի մոտ լսվեց, պատասխանը, սակայն, ավելի մանրամասն էր.

— Ոչ վաղը, ոչ էլ մի ուրիշ օր։

— Ես ինքս կզանգեմ,— ասաց Կ-ն ու ոտքի ելավ։ Գյուղացու հետ տեղի ունեցած միջադեպը չհաշված, մինչ այդ Կ-ն ու նրա օգնականները այնքան էլ մեծ ուշադրության չէին արժանացել, բայց վերջին հայտարարությունը գրավեց բոլորի ուշադրությունը։ Նրանք Կ-ի հետ վեր կացան, ու թեև իջևանատերը փորձում էր ետ մղել նրանց, կիսաշրջան կազմած կանգնեցին Կ-ի շուրջը։ Նրանց մեջ գերակշռում էր այն կարծիքը, թե Կ-ն ոչ մի պատասխան չի ստանա։ Կ-ն ստիպված էր խնդրել, որ հանգիստ մնան. նրանց կարծիքները լսելու կարիք չուներ։

Լսափողի միջից բզզոց լսվեց, զանգահարելիս Կ-ն դեռ երբեք նման ձայն չէր լսել։ Կարծես անհամար երեխաների բզզոց լիներ դա, և ոչ այլ ինչ էր, քան հեռվից, շատ հեռվից լսվող երգեցողության ձայն։ Այդ բզզոցը անհասկանալի բարձր, ուժեղ ձայնի էր վերածվում ու այնպես էր ականջի խփում, կարծես ձգտում էր մարդու խեղճուկրակ լսելիքից էլ ավելի խորը թափանցել։ Առանց զանգահարելու, Կ-ն ականջ էր դնում. ձախ ձեռքը հենել էր հեռախոսի պատվան-

www.a-pdf.com

դանին ու ականջ էր դնում։ Չգիտեր, թե ինչքան ժամանակ կանգնեց այդպես։ Այնքան, մինչև որ իշխանատերը քաշեց պիջակի փեշից. նրա մոտ բանբեր էր եկել։

— Հեռո՛ւ գնա,— ինքնիրեն չտիրապետելով, բղավեց Կ-ն։ Նա երևի լսափողի մեջ էր բղավել, որովհետև նույն պահին ինչ-որ մեկը պատասխանեց, ու հետևյալ զրույցը տեղի ունեցավ։

— Օսվալդը լսում է։ Ո՞վ է զանգում,— լսվեց գոռոզ, խիստ ձայնը։ Կ-ին թվաց, թե խոսողը լեզվական աննշան արատ ունի և ձգտում է այդ արատը աննկատելի դարձնել ավելորդ խստություն դրսևորելով։ Նա վարանեց ներկայանալ։ Հեռախոսով զրուցելիս ինքն անպաշտպան էր, զրուցակիցը կարող էր աղմկել ու լուտանք թափել իր վրա, լսափողը կախել, իսկ Կ-ն այդպես իր համար այնքան կարևոր մի ճանապարհ կվատներ։ Կ-ի վարանելը լսափողը վերցրած մարդուն համբերությունից հանեց։

— Ո՞վ է զանգում,— կրկնեց նա և ավելացրեց։— Ինձ շատ հաճելի կլիներ, եթե այդտեղից շատ չզանգեին։ Քիչ առաջ էր՝ մեկը զանգեց։

Կ-ն շարձագանքեց նկատողությանը և մի հանկարծահաս վհռահանությամբ ներկայացավ.

— Պարոն հողաչափի օգնականն է խոսում։

— Ի՞նչ օգնական, ի՞նչ պարոն, ի՞նչ հողաչափ։

— Ֆրիցին հարցրեք։— Երեկվա հեռախոսազրույցը հիշելով, կարճ ասաց Կ-ն։ Որքան էլ զարմանալի էր, դա օգնեց, բայց նրան ամենից շատ զարմացրեց հակառակ կողմի ծառայությունների միասնականությունը, քան օգնելու հանգամանքը։

— Արդեն գիտեմ։ Հավիտենական հողաչափը։ Այո, այո։ Եվ ի՞նչ։ Ո՞ր օգնականն է։

— Յոզեֆը,— ասաց Կ-ն։ Թիկունքում հավաքված գյուղացիների քրթմնջոցը խանգարում էր. նրանք ակնհայտորեն դժգոհ էին, որ Կ-ն ուրիշի անունով էր ներկայանում։ Սակայն Կ-ն հավաքվածների կարծիքները հաշվի առնելու ժամանակ չուներ, որովհետև խոսակցությունը նրան գրավում էր։

— Յոզե՞ֆը,— հետևեց հարցը։— Օգնականների անուն-

www.a-pdf.com

նները...,— կարճ լռություն տիրեց. զրուցակիցը հաստատ կողքինից էր տեղեկանում։— Նրանց անուններն են Արթուր և Երեմիաս։

— Դրանք նոր օգնականներն են,— առարկեց Կ-ն։

— Ոչ, հներն են։

— Դրանք նոր օգնականներն են, իսկ ես հին օգնականն եմ և այսօր եմ եկել պարոն հողաչափի մոտ։

— Ո՛չ,— լսվեց զրուցակցի ճիչը։

— Այդ դեպքում ո՞վ եմ ես,— առաջվա պես հանգիստ հարցրեց Կ-ն։ Կարճատև ընդմիջումից հետո նույն ձայնը՝ նույն լեզվական արատով, ասաց.

— Դու հին օգնականն ես։— Միաժամանակ Կ-ին թվաց, թե խոսողն այժմ ուրիշ մարդ էր. ձայնը խռպոտ էր ու հարգանք հարուցող։

Կ-ն շարունակ մտածում էր ձայնի մասին և լավ չլսեց հարցը.

— Ի՞նչ ես ուզում։

Շատ ավելի լավ կլիներ, եթե Կ-ն արդեն կախեր լսափողը. հեռախոսազրույցից նա այլևս սպասելիք չուներ, բայց ստիպված էր արագ հարցնել.

— Իմ պարոնը ե՞րբ կարող է դղյակ գալ։

— Երբեք, —եղավ պատասխանը։

— Լավ, —ասաց Կ-ն ու կախեց լսափողը։

Թիկունքում կանգնած գյուղացիները կիպ մոտեցել էին։ Օգնականները՝ աչքի տակով Կ-ի կողմը նայելով, ձգտում էին գյուղացիներին հեռու պահել նրանից, բայց դա միայն խեղկատակության էր նման, որովհետև հեռախոսազրույցի արդյունքից զոհ գյուղացիները իրենց կամքով էին հետ գնում։ Այդ պահին նրանց խումբը թիկունքի կողմից ճեղքվեց, ու մի մարդ արագաքայլ մոտենալով Կ-ին, խոնարհվեց ու նամակ հանձնեց նրան։ Կ-ն վերցրեց նամակն ու նայեց նամակատարին, որ այդ պահին ավելի կարևոր էր թվում։ Նրա ու օգնականների միջև հսկայական նմանություն կար. սա էլ նրանց նման բարեկազմ էր, նույնանման կիպ շորերով, նրանց պես ճկուն ու ճարպիկ, բայց և շատ էր տարբերվում նրանցից։ Ավելի լավ չէ՞ր լինի, եթե այս նորեկը լիներ իր

www.a-pdf.com

օգնականը։ Նա հիշեցնում էր ծծկեր երեխան կրծքին պառկած կնոջը, որին Կ-ն տեսել էր կաշեգործի մոտ։ Նամակաբերը հագել էր համարյա լրիվ սպիտակ, սակայն նրա զգեստները մետաքսից չէին կարված, ձմեռային հագուստներ էին՝ ինչպես բոլորն էին հագել, բայց նրբությունն ու շքեղությունը մետաքսի տեսք էին տալիս զգեստներին։ Նրա դեմքը լայն էր ու պայծառ, շատ խոշոր աչքեր ուներ, ժպիտն անսովոր աշխուժություն էր հաղորդում։ Նա ձեռքը տարավ դեմքի վրայով, կարծես ցանկանում էր փախցնել ժպիտը, բայց դա նրան չհաջողվեց։

— Ո՞վ ես դու,— հարցրեց Կ-ն։

— Բանբեր եմ, Բարնաբաս է անունս։— Պատասխանելիս նրա շուրթերը առնականորեն, բայց և՝ քնքուշ բացվեցին ու փակվեցին։

— Քեզ դո՞ւր է գալիս այստեղ,— հարցրեց Կ-ն ու ցույց տվեց գյուղացիներին, որոնց համար ինքը շարունակում էր հետաքրքիր անձնավորություն մնալ, և որոնք իսկապես տանջված դեմքերով (գանգերն այնպիսի տեսք ունեին, կարծես վերևից խփել-տափակացրել էին, իսկ դիմագծերը ձևավորվել էին հարվածի պատճառած ցավի ազդեցության տակ), ուռեցրած շուրթերով, բերանները բաց նայում էին, որոշ ժամանակ անց դադարելով նայելուց, որովհետև նրանց հայացքները երբեմն շեղվում էին ու, մինչև նախկին կետին դառնալը, գամվում պատահած մի առարկայի։ Հետո Կ-ն ցույց տվեց օգնականներին, որ կանգնել էին իրար գրկած, այտ-այտի հպած ու ժպտում էին ոչ այն է խեղճացած, ոչ այն է ծաղրական ժպիտով։ Կ-ն այնպիսի տեսքով ցույց տվեց իր շրջապատողներին, կարծես արտասովոր պայմաններում իրեն պարտադրված ուղեկցորդներին էր ներկայացնում և սպասում էր, որ Բարնաբասը վերջնականապես զգա իր ու նրանց միջև եղած տարբերությունը. Կ-ի համար այդ քայլը մտերմություն էր նշանակում, և նրա համար դա էր կարևոր։ Բարնաբասը, սակայն, լավ դաստիարակված ծառայի նման անուշադրության մատնեց (իսկական անմեղությամբ, դա պարզ երևում էր) տիրոջ՝ միայն ձևականորեն իրեն ուղղված հարցը, հարցի տպավորության տակ նայեց շուրջը,

www.a-pdf.com

ձեռքի շարժումով ողջունեց գյուղացիների մեջ կանգնած ծանոթներին և մի քանի խոսք փոխանակեց օգնականների հետ. ազատ ու ինքնիշխան, առանց նրանց հետ ընդհանուր բան ունենալու։ Հակահարված ստացած, բայց ոչ ամոթահար՝ Կ-ն անդրադարձավ նամակին ու բացեց ծրարը։ Նամակը հետևյալ բովանդակությունն ուներ.

«Մեծարգո պարոն, ինչպես գիտեք, Դուք տերունական ծառայության եք ընդունված։ Ձեր անմիջական պետը կլինի գյուղական համայնքի ավագը, ում Դուք հաշվետու կլինեք և մանրամասն տեղեկություններ կստանաք Ձեր աշխատանքի ու աշխատավարձի պայմանների մասին։ Միաժամանակ, ես էլ աչքս Ձեզ վրա կպահեմ։ Բարնաբասը՝ այս նամակը հանձնողը, Ձեր ցանկություններն իմանալու և ինձ հայտնելու համար ժամանակ առ ժամանակ հարցուփորձ կանի Ձեզ։ Ես միշտ պատրաստ եմ հնարավորին չափ օգտակար լինել Ձեզ։ Ինձ համար շատ կարևոր է գոհունակ աշխատողներ ունենալը»։

Ստորագրությունն անընթեռնելի էր, սակայն ստորագրության կողքին մեքենագրված էր. իքս գրասենյակի պետ։

— Գնաս։— Խոնարհվող Բարնաբասին դիմեց Կ-ն, ապա ձայն տվեց իջևանատիրոջը, որ մի սենյակ տրամադրեր իրեն. ուզում էր նամակը կարդալու համար որոշ ժամանակով առանձնանալ։ Միաժամանակ նա հիշեց, որ, իր հանդեպ ունեցած ողջ տրամադրվածությամբ հանդերձ՝ Բարնաբասը ոչ այլ ոք էր, քան նամակատար, և կարգադրեց գարեջուր տալ նրան։ Կ-ն հետևեց, թե նա ինչպես կընդունի գարեջուրը. մեծ հաճույքով վերցրեց ու անմիջապես խմեց։

Կ-ն գնաց իջևանատիրոջ հետ։ Իջևանատանը Կ-ին ձեղնասենյակ տրամադրելուց բացի ուրիշ ոչինչ չէին կարողացել անել, և նույնիսկ դա էր մի քանի դժվարություններ հարուցել, որովհետև հարկ էր եղել մինչ այդ ձեղնահարկում քնող աղախիններին ուրիշ տեղ տեղավորել։ Իջևանատերը միայն սենյակն էր ազատել Կ-ի համար, իսկ սենյակում ոչ մի փոփոխություն չէր կատարվել. միակ մահճակալն առանց սպիտակեղենի էր, մի քանի բարձ կար ու ձիու սթար՝ դըր-

www.a-pdf.com

ված այնպես, ինչպես աղախիններն էին թողել վերջին անգամ այստեղ քնելուց հետո։ Պատին մի քանի սրբապատկերներ էին փակցված, կողքներին՝ զինվորների նկարներ։ Սենյակը նույնիսկ չէին օդափոխել, բացահայտ երևում էր, որ հույսները դրել էին նոր հյուրի շտապ մեկնելու վրա և ոչինչ չէին անում նրան ավելի երկար պահելու համար։ Սակայն Կ-ն սրան էլ էր համաձայն. փաթաթվեց ծածկոցի մեջ, նստեց սեղանի մոտ և մոմի լույսի տակ սկսեց վերընթերցել նամակը։

Նամակը նույն ոգով չէր շարադրված. տեղեր կային, որ նրա հետ խոսում էին ինչպես ազատ մարդու, հաշվի նստում նրա սեփական կարծիքի հետ. այդպիսին էր սկիզբը և Կ-ի ցանկություններին վերաբերող հատվածը։ Սակայն տեղեր էլ կային, ուր նրան բացահայտորեն կամ քողարկված ձևով դիմում էին որպես պետի նստած տեղից հազիվ նշմարվող մի աշխատողի. պետը ջանք կգործադրի «աչքը նրա վրա պահելու» համար, իր պետը գյուղի ավագն է, ինքը նույնիսկ հաշվետու է նրան։ Իր միակ կոլեգան, հավանաբար, գյուղի ոստիկանն էր։ Դրանք, անկասկած, հակասություններ էին և այնքան ակներև, որ պետք է որ միտումնավոր կերպով արված լիներ։

Այն խելացնոր կարծիքը, թե զբաստեղյակում կարող է անվճռականություն ցուցաբերած լինեն, նույնիսկ չանցավ Կ-ի մտքով։ Ավելի շուտ, նա այստեղ նկատում էր հստակ ներկայացվող մի ընտրություն։ Իրեն էր թողնված, թե նամակի կարգադրություններից որը կնախընտրեր. ուզում էր դառնալ դղյակի հետ ունեցած թվացյալ կապով մյուսներից առանձնացող գյուղացի՞, թե՞ ձևականորեն համարվեր գյուղում աշխատող, բայց իրականում աշխատանքի բոլոր պայմանները ճշտեր Բարնաբասի միջոցով ստացվող նորություններով։ Կ-ն չվարանեց իր ընտրության մեջ և եթե մինչև այսօր ձեռք բերված փորձն էլ չլիներ, միևնույն է, չէր վարանի։ Առայժմ կասկածանքով իրեն նայող գյուղաբնակները կսկսեին խոսել, եթե ինքը եթե ոչ ընկեր, ապա զոնե համագյուղացի դառնար, ու եթե մի անգամ նմանվեր Գերշտեկերին ու Լազեմանին (իսկ դա պետք է շատ արագ կատարվեր,

www.a-pdf.com

որովհետև դրանից շատ բան էր կախված), ապա մի հարվածով իր դեմ կբացվեին այն բոլոր ճանապարհները, որոնք, եթե վերևում նստած պարոններին ու նրանց խղճմտանքին մնար, կլինեին ոչ միայն մշտապես փակված, այլև կմնային անտեսանելի։ Հավանական մի վտանգ կար, և նամակում բավական շեշտված էր դա, ներկայացված որոշակի ուրախությամբ, կարծես դրանից խուսափելն անհնար էր։ Դա բանվոր լինելու վտանգն էր։ Պետ, ծառայություն, աշխատանք, վարձատրություն, որոշում, հաշվետվություն, բանվոր. նամակը լի էր այս ու նման բաներով և, եթե նույնիսկ ուրիշ՝ մասնավոր բան էր ասվում, ասվում էր հենց այդ տեսակետից։ Եթե Կ-ն ուզեր բանվոր դառնալ, ապա կարող էր, բայց դա սարսափելի լուրջ բան էր, և նրա համար ոչ մի հեռանկար չէր լինի։ Կ-ն գիտեր, որ իրեն ոչ մի իրական ճնշում չէր սպառնում, չէր վախենում դրանից, բոլորովին չէր վախենում, սակայն հիասթափություններին հարմարվելը, յուրաքանչյուր ակնթարթի աննկատ ազդեցության և թևաթափ անող շրջապատի ուժը նրան, այնուամենայնիվ, վախեցնում էր, և նա պետք է հնարամտակվեր պայքարել այդ վտանգի դեմ։ Նամակում, ախր, չէր էլ թաքցվում, որ եթե բանը պայքարելուն հասներ, ապա Կ-ն կարող էր այն սկսելու հնարավորություն ունենալ։ Դա նրբորեն էր ակնարկված և միայն անհանգիստ խղճի տեր մարդը (անհանգիստ, ոչ թե անմաքուր) կկարողանար նկատել, որ դա իր՝ ծառայության ընդունվելու վերաբերյալ գրված բառերում էր արծարծվում. «ինչպես գիտեք»։ Կ-ն ներկայացել էր և, այդ պահից սկսած՝ ինչպես նամակում էր գրված, գիտեր, որ իրեն ընդունել են։

Կ-ն պատից պոկեց նկարներից մեկն ու նամակը կախեց մեխից. ինքն այս սենյակում էր ապրելու, նամակն այստեղ պետք է կախվեր։

Հետո նա իջավ իջևանատան սրահը։ Բարնաբասը օգնականների հետ նստել էր սեղաններից մեկի մոտ։

— Ախ, դու այստե՞ղ ես,— առանց որևէ պատճառի, միայն որովհետև ուրախ էր նրան տեսնել, ասաց Կ-ն։ Բարնաբասն իսկույն ցատկեց տեղից։ Հաղիվ էր Կ-ն ներս մտել, գյուղացիները նրան մոտենալու համար բարձրացան տեղե-

www.a-pdf.com

ից. նրանց համար արդեն սովորություն էր դարձել Կ-ի հետևից գնալը։

— Լավ, ի՞նչ եք ուզում ինձնից,— բղավեց Կ-ն։ Գյուղացիները չնեղացան նրանից, այլ շուռ եկան ու դանդաղ գնացին դեպի իրենց աթոռները։

— Մարդ շարունակ նոր բան է իմանում։— Հազիվ նըշմարվող ժպիտով (մի քանիսն էլ թույլ ժպտացին) հեռանալիս բացատրեց մեկն ու լիզեց շուրթերը, կարծես այդ նոր բանը կերակուր պետք է լիներ։ Կ-ն բարեկամության տրամադրող ոչ մի բան չասաց. լավ էր, որ մի փոքր հարգանք ունեին իր հանդեպ։ Բայց նա հազիվ էր նստել Բարնաբասի կողքին, երբ իսկույն ծոծրակին զգաց գյուղացիներից մեկի շունչը։ Նա, ինչպես ինքն ասաց, աղամանը վերցնելու մտադրությամբ էր մոտեցել, բայց երբ Կ-ն զայրույթից դոփեց, գյուղացին առանց աղամանը վերցնելու ծլկեց։ Իսկապես՝ հեշտ էր Կ-ին համբերությունից հանել. պետք էր միայն նրա դեմ գրգռել գյուղացիներին։ Նրանց համառ միջամտությունները Կ-ի վրա ավելի վատ տպավորություն էին թողնում, քան մյուսների ամփոփվածությունը, իսկ նրանք ամփոփվածություն ունեին ընդհանրապես, որովհետև բավական էր, որ Կ-ն նրանց սեղանի մոտ նստեր, նրանք հաստատ այնտեղ նստած չէին մնա։ Միայն Բարնաբասի ներկայությունը Կ-ին հետ պահեց աղմուկ բարձրացնելու մտադրությունից։ Նա սպառնալից տեսքով շուռ եկավ գյուղացիների կողմը, սակայն նրանք էլ այս կողմն էին շրջված։ Երբ Կ-ն տեսավ նրանց՝ յուրաքանչյուրին իր տեղում նստած (նրանք նստել էին ամեն մեկն իր մտքերով տարված, նրանց միավորող ոչինչ չկար, միակ ընդհանուր բանն այն էր, որ բոլորն այս կողմն էին նայում), նրան թվաց, թե չարությունը չէր դրդում նրանց հետևել իրեն, նրանք երևի ինչ-որ բան էին ուզում իրենից ու չէին կարողանում ձևակերպել իրենց ասելիքը, և եթե անգամ դա էլ չէր պատճառը, ապա գուցե այստեղի համար սովորական համարվող երեխայությունն էր։ Մի՛թե իջևանատերն էլ երեխայավարի չէր պահում իրեն, որ, հյուրերից մեկի պատվիրած գարեջուրը երկու ձեռքով բռնած, լուռ կանգնել, Կ-ի

www.a-pdf.com

կողմն էր նայում ու չէր լսում խոհանոցի փոքր պատուհանից դուրս խոնարհված իշևանատիրուհու կանչը։

Կ-ն հանգիստ շուռ եկավ Բարնաբասի կողմը։ Նա հաճույքով կհեռացներ օգնականներին, բայց հարմար պատճառ չգտավ. իմիջիայլոց, նրանք լուռ նայում էին իրենց գավաթներին։

— Ես կարդացի նամակը,— սկսեց Կ-ն։— Դու բովանդակությանը ծանո՞թ ես։

— Ոչ,— ասաց Բարնաբասը։ Նրա աչքերն ավելի արտահայտիչ էին, քան խոսքերը։ Գուցե Կ-ին հաճելի էր նրա ներկայությունը, և նրա մասին լավ կարծիք կազմելով՝ նա սխալվում էր նույնքան, ինչքան սխալվում էր գյուղացիների մասին վատը մտածելով։

— Նամակում քո մասին էլ խոսք կար։ Ժամանակ առ ժամանակ դու պետք է ինձնից լուր տանես պետին, նրանից լուր բերես ինձ, և այդ է պատճառը, որ ես մտածեցի, թե դու ծանոթ ես նամակի բովանդակությանը։

— Ինձ հանձնարարված էր նամակը հանձնել, սպասել մինչև ընթերցել-վերջացնելը և, եթե անհրաժեշտ ես համարում, բանավոր կամ գրավոր պատասխան տանել,— ասաց Բարնաբասը։

— Լավ,— ասաց Կ-ն։— Գրության կարիք չկա։ Պարոն ղեկավարի, ինչպե՞ս էր նրա անունը, ստորագրությունը ես չկարողացա կարդալ։

— Կլամմ։

— Ուրեմն, պարոն Կլամմին հաղորդիր իմ շնորհակալությունը ինչպես ընդունելության, այնպես էլ նրա առանձնահատուկ բարեհաճության համար։ Ես, որ այստեղ դեռ ցույց չեմ տվել իմ ունակությունները, իրոք գնահատում եմ դա։ Ես միշտ կվարվեմ այնպես, ինչպես ինքը անհրաժեշտ կհամարի, իսկ այսօր դեռ ոչ մի առանձնահատուկ ասելիք չունեմ։— Բարնաբասը ուշադիր լսում էր և հանձնարարությունը կրկնելու թույլտվություն խնդրեց Կ-ից։ Կ-ն թույլատրեց, և Բարնաբասն ամեն ինչ բառ առ բառ կրկնեց, հետո վեր կացավ, որ հրաժեշտ տա։

Այդ ամբողջ ժամանակ Կ-ն կենում էր նրա դեմքը և հրա-

www.a-pdf.com

ժեշտ տալու պահին վերջին անգամ նայեց։ Կազմվածքով Բարնաբասը համարյա նման էր Կ-ին, սակայն թվում էր, թե նա փոքր-ինչ վերևից է նայում, դրանով հանդերձ, նրա հայացքում հնազանդություն կար. անհնար բան էր, որ այդ մարդը ուզենար մեկնումեկին նսեմացնել։ Նա հաստատ բանբեր էր ի պաշտոնե, իրեն հանձնարարված նամակների բովանդակությանը ծանոթ չէր, սակայն, թեկուզ ինչքան էլ անծանոթ լիներ, նրա ժպիտը, հայացքն ու քայլվածքը կարծես ինչ-որ բան էին մատնում։ Կ-ն նրան պարզեց ձեռքը, և դա բացահայտ շփոթության մեջ գցեց Բարնաբասին, որովհետև նա արդեն ուզում էր խոնարհվել։

Նրա հեռանալուց անմիջապես հետո (մինչև դռների բացվելը Բարնաբասը ուսը հենել էր դռանն ու որոշակի մեկին չհասցեագրված հայացքով նայում էր սրահին) Կ-ն դիմեց օգնականներին.

— Հիմա իմ սենյակից կբերեմ դրառումներս, հետո կքննարկենք մեր մոտակա անելիքը։

Օգնականներն ուզեցին Կ-ի հետ վեր բարձրանալ։

— Մնացեք այստեղ,— կարգադրեց Կ-ն, բայց նրանք շարունակ ուզում էին նրա հետ գնալ։ Կ-ն ստիպված էր ավելի խիստ տոնով կրկնել հրամանը։ Բարնաբասն այլևս չէր երևում նախասենյակում։ Ախր, նա հենց նոր գնաց։ Տան մոտակայքում ևս (դրսում նորից ձյուն էր գալիս) Կ-ն չտեսավ նրան։

— Բարնաբա՛ս,— կանչեց նա։ Պատասխան չկար։ Գուցե դեռ իջևանատա՞ն էր։ Կ-ին թվաց, թե այլ կերպ չէր կարող լինել։ Այնուամենայնիվ, նա մի անգամ ևս ամբողջ ուժով ձայն տվեց։ Անունը թնդաց գիշերվա մեջ, հեռվից հնչեց թույլ պատասխանը։ Բարնաբասն, ուրեմն, արդեն այդքան հեռացել էր։ Կ-ն հետ կանչեց նրան ու ինքն էլ ընդառաջ գնաց։ Երբ նրանք իրար հանդիպեցին, հյուրանոցից արդեն հնարավոր չէր տեսնել նրանց։

— Բարնաբաս, ես մի բան էլ էի ուզում ասել քեզ,— չկարողանալով հաղթահարել ձայնի դողը, խոսեց Կ-ն։— Ուզում եմ ասել, որ մեր կապը վատ է մտածված։ Եթե ինձ անհրաժեշտ լինի որևէ բան իմանալ դղյակի մասին, ստիպ-

www.a-pdf.com

ված կլինեմ միայն քո պատահական այցերին սպասել։ Երբե չկարողանայի պատահաբար հասնել քեզ (ես մտածում էի, թե դու դևռ տանը կլինես, կարելի է կարծել, թե թռչում ես), ով գիտե, թե ինչքան պետք է սպասեի մինչև քո հաջորդ ներկայանալը։

— Ախր դու կարող ես խնդրել նախագահին, որ ես միշտ գամ քո նշանակած որոշակի ժամերին,— առաջարկեց Բարնաբասը։

— Դա էլ ճիշտ չի լինի,— առարկեց Կ-ն։— Գուցե ես մի ամբողջ տարի ասելիք չունենամ, բայց քո հեռանալուց կես ժամ անց հայտնելու անհետաձգելի բան լինի։

— Նախագահին զեկուցե՞մ, որ նրա և քո միջև, ինձնից բացի, մի ուրիշ կապավոր էլ է հարկավոր։

— Ոչ, ոչ։ Պետք չէ, —ասաց Կ-ն։— Ես դա միայն հենց այնպես ասացի։ Այս անգամ ինձ հաջողվեց հասնել քեզ։

— Արի իջևանատուն վերադառնանք, որ կարողանաս նոր հանձնարարություն տալ։— Նա մի քայլ արեց իջևանատան կողմը։

— Կարիք չկա։ Բարնաբաս, ես մի փոքր կգամ քեզ հետ։

— Ինչո՞ւ չես ուզում իջևանատուն գնալ,— հարցրեց Բարնաբասը։

— Այնտեղ մարդիկ խանգարում են ինձ։ Դու ինքդ տեսար գյուղացիների պնդերեսությունը։

— Կարող ենք քո սենյակը գնալ։

— Դա աղախինների սենյակն է. կեղտոտ ու խեղդուկ։ Որպեսզի ստիպված չլինեմ մնալ այնտեղ, ես ուզում եմ մի փոքր քայլել քեզ հետ։ Դու պետք է միայն թույլ տաս, որ ես բռնեմ քեզնից. դու ավելի վստահ ես քայլում։— Սեփական երկմտանքը վերջնականապես հաղթահարելու համար ավելացրեց Կ-ն։

Կ-ն բռնեց Բարնաբասի ձեռքից։ Մութ-մութ էր, Բարնաբասի դեմքը չէր երևում, նրա կերպարանքն աղոտ էր գծագրվում, ու, մինչև բռնելը, Կ-ն փորձեց շոշափելով գտնել Բարնաբասի թևը։ Բարնաբասը տեղի տվեց, նրանք հեռացան իջևանատնից։ Կ-ն հավանաբար զգաց, որ չնայած իր գործադրած մեծ ջանքերին, ի վիճակի չի լինի քայլել Բար-

www.a-pdf.com

նաբասին համբերեցաց, խանդարում է նրան ազատ շարժվել։ և սովորական պայմաններում այդ մանրուքը ամեն ինչ կխորտակեր, առավել ևս, եթե հանկարծ խրվեր փողոցի ձյան մեջ, ինչպես մի անգամ խրվել էր այսօր, իսկ այդ դեպքում դուրս գալ կկարողանար միայն, եթե Բարնաբասն օգներ իրեն։ Սակայն այս պահին նա հեռու վանեց այդ մտքերը, և ինքն իրեն մխիթարեց, որ Բարնաբասը ձայն չէր հանում. եթե անխոս էին քայլում, շատ հնարավոր էր, որ Բարնաբասի համար ևս միակ նպատակը միասին առաջ գնալն էր։

Նրանք քայլում էին, բայց Կ-ն չգիտեր, թե՝ ուր, և չէր կարողանում կողմնորոշվել։ Նա չգիտեր նույնիսկ, արդյոք իրենք անցե՞լ են եկեղեցու մոտով։ Շարունակ առաջ քայլելու պատճառած չարչարանքը նրան չէր թողնում իշխել իր մտքերին. նպատակաուղղված լինելու փոխարեն դրանք շարունակ խռնվում էին։ Նրա աչքին անընդհատ երևում էր ծննդավայրը, և նրա մեջ արթնացան ծննդավայրի հետ կապված հուշեր։ Այնտեղ էլ կենտրոնական հրապարակում եկեղեցի կար, եկեղեցու շուրջը հին գերեզմանատունն էր՝ շրջապատված բարձր պարսպով։ Սկզբում հատուկենտ տղաներ էին կարողանում մագլցել այդ պարսպի վրա։ Կ-ին դա երբեք չէր հաջողվել։ Հետաքրքրությունը չէր նրանց այդ քայլին մղում. գերեզմանոցը նրանցից այլևս ոչ մի գաղտնիք չէր թաքցնում։ Գերեզմանատան ճաղապատ դռնով նրանք հաճախ էին ներս մտնում, իսկ հիմա միայն ուզում էին հաղթահարել բարձր պարիսպը։ Մի օր՝ մինչկեսօրին (լուռ ու դատարկ հրապարակը ողողված էր արևի պայծառ լույսով. դրանից առաջ կամ հետո ուրիշ ե՞րբ էր Կ-ն այդպես տեսել հրապարակը), նրան անսովոր հեշտությամբ հաջողվեց մագլցել պարիսպն այն տեղում, ուր արդեն բազմիցս անհաջողություն էր կրել. փոքր դրոշակն ատամների արանքում պահած, նա հենց առաջին փորձից բարձրացավ։ Պարըսպաքարերի խշրտոցը դեռ լսվում էր ոտքերի տակ, իսկ նա արդեն պարսպի վրա էր։ Նա ամրացրեց դրոշակը, քամին ծածանեց կտորը, նայեց ներքև, ապա՝ շուրջը, ուսի վրայով՝ հեռու, հողի մեջ խրված խաչերին. այդ պահին այդտեղ նրանից բարձր ոչ ոք չկար։ Նույն պահին եկեղեցու

մոտով պատահաբար անցավ ուսուցիչը և, զայրացած հայացք նետելով, ստիպեց նրան իջնել։ Յատկելիս Կ-ն վնասեց ծունկը և դժվարությամբ հասավ տուն, բայց, ինչ ուզում է լիներ, ինքը եղել է պարսպի վրա։ Այն ժամանակ նրան թվացել էր, թե հաղթանակի զգացումը կյանքում երկար ժամանակ հենարան կլինի, և այդ ենթադրությունն այնքան էլ անհիմն չէր, քանի որ այժմ, այդքան տարի անց, ձյունապատ դիշերով Բարնաբասի ձեռքը բռնած քայլելիս նեցուկ եղավ իրեն։ Կ-ն ավելի ամուր էր կախ ընկել, Բարնաբասը համարյա քաշում էր նրան։ Լռությունը չէր խզվում։ Ճանապարհի մասին Կ-ն միայն գիտեր, որ փողոցի վիճակից եզրակացնելով, դեռ ոչ մի նրբանցք չէին թեքվել։ Նա հաստատ որոշել է, որ ճանապարհի ոչ մի դժվարություն, նույնիսկ հետ վերադառնալու հետ կապված հոգսերը հետ չէին պահի ճանապարհը շարունակելու մտքից։ Եթե իրեն նույնիսկ քաշելով էլ տանեին, ուժերը դեռ կբավականացնեին, և հետո, ճանապարհն էլ անվերջանալի չէր։ Ցերեկը դղյակը հեշտ մատչելի նպատակակետի նման փռված էր դիմացը, իսկ բանբերը, հաստատ, ավելի կարճ ճանապարհ գիտեր։

Բարնաբասը կանգնեց։ Որտե՞ղ էին։ Այլևս առաջ չէի՞ն գնալու։ Բարնաբասը հրաժե՞շտ էր տալու իրեն։ Դա նրան չէր հաջողվի։ Կ-ն այնպես ամուր սեղմեց Բարնաբասի ձեռքը, որ մատները ցավեցին։ Գուցե անհավատալի բան էր պատահել, ու իրենք արդեն դղյակում էին կամ նրա դարպասների մոտ։ Բայց իրենք, ախր, ինչքան որ Կ-ն նկատեց, բոլորովին վեր չբարձրացան. գուցե Բարնաբասն աննկատ վեր բարձրացող ճանապարհո՞վ տարավ իրեն։

— Որտե՞ղ ենք մենք։— Ավելի շուտ ինքնիրեն, քան Բարնաբասին, ցածրաձայն հարցրեց Կ-ն։

— Տանը,— նույն տոնով պատասխանեց Բարնաբասը։

— Տա՞նը։

— Իսկ այժմ, պարոն, զգույշ եղիր, որ չսայթաքես։ Ճանապարհն այստեղ ներքև է իջնում։

— Ներքև՞։

— Միայն մի քանի քայլ է,— ավելացրեց նա և բախեց դռներից մեկը։

www.a-pdf.com

Մի աղջիկ բացեց դուռը։ Նրանք կիսամութի մեջ էին կանգնել՝ սենյակի շեմին, սենյակի խորքում՝ ձախ կողմում, սեղանի վերևում մի փոքրիկ ճրագ էր վառվում։

— Քո հետինն ո՞վ է, Բարնաբաս,— հարցրեց աղջիկը։

— Հողաչափն է։

— Հողաչափն է։— Սեղանի կողմը շուռ գալով, ավելի բարձր կրկնեց աղջիկը։ Այնտեղից երկու ծերունի վեր կացան՝ այր ու կին, և մի աղջիկ։ Նրանք ողջունեցին Կ-ին։ Բարնաբասը ներկայացրեց նրանց. ծնողներն էին ու քույրերը՝ Օլգան ու Ամալյան։ Կ-ն հազիվ էր տեսնում նրանց։ Նրանք ցանկացան վերցնել Կ-ի խոնավ վերարկուն, որ վառարանի մոտ չորացնեն, և Կ-ն թույլ տվեց։

Նշանակում է, ոչ թե իրենք էին տուն հասել, այլ՝ միայն Բարնաբասը։ Բայց ինչո՞ւ էին եկել այստեղ։ Կ-ն Բարնաբասին կողքի տարավ և հարցրեց.

— Դու ինչո՞ւ տուն եկար։ Թե՞ դուք դղյակի տարածքում եք ապրում։

— Դղյակի տարածքո՞ւմ,— կրկնեց Բարնաբասը, կարծես թե չէր հասկանում Կ-ի հարցը։

— Բարնաբաս, դու, ախր, իջևանատնից ուզում էիր դղյակ գնալ։

— Ոչ, պարոն,— զարմացավ Բարնաբասը։— Ես ուզում էի տուն գնալ։ Ես միայն առավոտյան ժամերին եմ դղյակ գնում և երբեք այնտեղ չեմ մնում։

— Այդպես,— ասաց Կ-ն։— Ուրեմն դու դղյակ գնալ չէիր ուզում, այլ՝ միայն այստեղ։— Նրա ժպիտն ավելի աղոտ թվաց, ինքն՝ ավելի աննշան։— Ինչո՞ւ չասացիր ինձ։

— Դու չհարցրեցիր, պարոն։ Դու չուզեցիր ո՛չ սրահում, ո՛չ էլ քո սենյակում հանձնարարություն տալ ինձ, ես էլ մտածեցի, թե առանց անհանդստանալու քո հանձնարարությունը կարող ես այստեղ՝ իմ ծնողների ներկայությամբ տալ։ Եթե հրամայես, նրանք բոլորն այստեղից դուրս կգնան անմիջապես, իսկ եթե քեզ այստեղ ավելի դուր գա, կարող ես մեզ մոտ գիշերել։ Ես ճիշտ չե՞մ վարվել։

Կ-ն չէր կարող պատասխանել։ Ուրեմն թյուրիմացություն էր եղել, խարդախ, անազնիվ թյուրիմացություն, իսկ Կ-ն

www.a-pdf.com

ամբողջապես ենթարկվել էր դրան։ Գուցե նրան կախարդել էր մետաքսափայլ, նեղ պիջակը, որի կոճակներն էր այժմ քանդում Բարնաբասը. վերնազգեստի տակից երևաց կոպիտ կարված, գորշ ու կեղտոտ, ճարպաբծերով պատված վերնաշապիկը՝ ճորտի անկյունաձև, հզոր կրծքի վրա։ Շուրջն ամեն ինչ ոչ միայն համապատասխանում էր Բարնաբասի տեսքին, այլ ավելի էր ուժեղացնում տպավորությունը. հոդաբաշխով տառապող ծեր հայրը, որ ավելի շուտ խարխափող ձեռքերի օգնությամբ, քան դանդաղ քարշ եկող չորացած ոտքերով էր շարժվում, ձեռքերը կրծքին ծալած մայրը, որ մարմնեղ լինելու պատճառով միայն աննշան քայլեր էր կարողանում գցել։ Երկուսն էլ՝ հայրն ու մայրը, սկսած այն պահից, երբ Կ-ն ներս մտավ, իրենց անկյունից նրա կողմն էին գալիս ու դեռ չէին հասել։ Շիկահեր քույրերը, որ շատ էին նման թե՛ իրար, թե՛ Բարնաբասին (նրանց դիմագծերն ավելի կոպիտ էին, քան Բարնաբասինը, խոշորակազմ, ուժեղ աղախիններ էին), կանգնել էին առաջ շարժվողների մոտ ու սպասում էին, թե Կ-ն ողջույնի որևէ խոսք կասի։ Վերջինս, սակայն, չէր կարողանում ոչինչ ասել։ Նա միշտ այն կարծիքին էր եղել, թե այս գյուղում բոլորն են իր համար կարևոր, և դա, հավանաբար, այդպես էլ էր, միայն թե այս մարդիկ բացարձակ չէին հետաքրքրում նրան։ Եթե նա ի վիճակի լիներ միայնակ հաղթահարել իջևանատուն տանող ճանապարհը, անմիջապես կգնար։ Առավոտ շուտ դղյակ գնալու հնարավորությունը բոլորովին չէր հրապուրում նրան։ Նա ուզում էր այժմ, գիշերով աննկատ թափանցել դղյակ, Բարնաբասի ուղեկցությամբ, բայց այն Բարնաբասի, ինչպիսին նա էր Կ-ին թվացել, այնպիսի մի մարդու, որ մինչև հիմա այստեղ տեսած մյուս բոլորից ավելի մոտ էր իրեն և ում մասին ինքը մտածել էր, թե նա իր իսկական պաշտոնից բացի շատ ավելի սերտ կապերի մեջ է դղյակի հետ։ Սակայն այս ընտանիքի որդու հետ, որին Բարնաբասն էր պատկանում և ում հետ սեղան էր նստել արդեն, մի մարդու հետ, որ ոչ մի անգամ իրավունք չի ունեցել դղյակում քնել, նրա ձեռքը բռնած օրը ցերեկով դղյակ գնալն անհնար էր, ծիծաղելի ու անհույս մի փորձ։

www.a-pdf.com

Կ-ն նստեց լուսամտագոգին, հաստատ մտադրվելով, որ գիշերն էլ այդտեղ կանցկացնի ու ընտանիքի ոչ մի ծառայությունից չի օգտվի այլևս։ Այս գյուղի մյուս մարդիկ, որ վանում էին իրեն կամ վախենում իրենից, ավելի անվնաս էին թվում, քանի որ նրանք ըստ էության ստիպում էին, որ ինքը հույսը դներ միայն իր վրա, օգնում էին, որ ուժերը համախմբված պահեր, սակայն այն թվացյալ օգնականները, որ փոքրիկ դիմակահանդեսների օգնությամբ դրդյակի փոխարեն իրենց տներն էին տանում իրեն, անկախ այն բանից՝ ուզում էր, թե՝ ոչ, աշխատում էին քայքայել իր ուժերը։ Նա անուշադրության մատնեց սեղանի շուրջը նստածների մոտ հրավիրող կանչը և, զլուխը կախ, մնաց լուսամբտագոգին նստած։ Այդ ժամանակ քույրերից ավելի հեզահամբույրը՝ Օլգան, վեր կացավ, մոտեցավ Կ-ին և խնդրեց մոտենալ սեղանին. նրա շարժուձևերում զուտ աղջկական շփոթվածություն էր զգացվում։ Հացն ու խոզապուխտը դրված էին սեղանին, իսկ ինքը հիմա գարեջուր կբերեր։

— Որտեղի՞ց,— հետաքրքրվեց Կ-ն։

— Պանդոկից։

Դա, իրոք, Կ-ի սրտովն էր։ Նա աղջկանից խնդրեց ոչ մի գարեջուր էլ չբերել, այլ իրեն միայն մինչև իջևանատուն ուղեկցել. ինքն այնտեղ դեռ կարևոր գործեր ունի վերջացնելու։ Սակայն պարզվեց, որ Օլգան այդքան հեռու՝ Կ-ի իջևանատունը չէր ուզում գնալ. այստեղ, ավելի մոտ, տերունական իջևանատուն կար։ Այնուամենայնիվ, Կ-ն նրան ուղեկցելու թույլտվություն խնդրեց։ Նա մտածում էր, թե գուցե այնտեղ քնելու մի հարմարություն կգտնվի, և, ինչպիսին էլ լիներ այն, ավելի գերադասելի էր, քան այս տան ամենալավ մահճակալը։

Օլգան անմիջապես չպատասխանեց, այլ հայացքը շրջեց սեղանի կողմը. այնտեղ ոտքի կանգնած Բարնաբասը պատրաստակամ գլխով արեց և ավելացրեց.

— Եթե պարոնն այդպես է կամենում...

Բարնաբասի համաձայնությունը քիչ մնաց դրդեր Կ-ին հետ վերցնել իր խնդրանքը (Բարնաբասը կարող էր միայն

www.a-pdf.com

որևէ անարժեք պնդման համաձայնել), սակայն, երբ քննարկման առարկա դարձավ այն հարցը, թե պե՞տք է արդյոք Կ-ին իջևանատուն թողնել, իսկ ընտանիքի բոլոր անդամները կասկած հայտնեցին, Կ-ն համառորեն պնդեց Օլգայի հետ գնալու իր առաջարկը, առանց, սակայն, մի հասկանալի պատճառ գտնելու համար նեղություն կրելու։ Այս ընտանիքն իրեն պետք է ճանաչեր այնպես, ինչպիսին ինքն էր իրականում. համենայնդեպս, ընտանիքից անհարմար զգալու պատճառ ինքը բնավ չուներ։ Միայն Ամալյան շփոթեցրեց նրան՝ իր ուղիղ, անշարժ, գուցե նաև փոքր-ինչ համառ հայացքով։

Հյուրանոց տանող կարճ ճանապարհին Կ-ն, որ այլ կերպ չէր կարող քայլել, կախ էր ընկել աղջկանից, իսկ վերջինս նրան այնպես էր քաշում, ինչպես քիչ առաջ եղբայրը, ուզենկատալ, որ այս հյուրանոցը իրականում միայն դղյակի պաշտոնների համար է նախատեսված. եթե նրանք գյուղում որևէ տարբերություն ունենում, այստեղ են սնվում, իսկ երբեմն Լուսլիի գիշերում։ Օլգան Կ-ի հետ ցածրաձայն էր խոսում, մանրամասնաբար, Կ-ի համար հաճելի էր նրա հետ քայլելը, այնպես, ինչպես եղբոր հետ։ Կ-ն փորձում էր վանել իրենից հաճելի զգացողությունը, բայց այն կար։

Արտաքին տեսքից հյուրանոցը շատ էր նման այն իջևանատանը, որտեղ Կ-ն էր մնում։ Գյուղի կառույցների միջև հաշվարկող ոչ մի մեծ տարբերություն չկար ընդհանրապես, սակայն փոքր տարբերություններն անմիջապես աչքի էին ընկնում. հյուրանոցի աստիճանները բազրիք ունեին, դռան վերևում գեղեցիկ լապտեր էր ամրացված։ Երբ նրանք ներս էին մտնում, գլխների վերևում մի կատու էր ծածանվում. լոնդոնի դիմանշանը գրող գրոշն էր։

Դեռ նախասենյակում նրանց դեմն ելավ հյուրանոցի տեր, որ հատատ հյուրանոցի աշխատանքները վերահսկելու մտադրությամբ էր շրջում. փոքր աչքերով՝ ոչ այն է զննելով, ոչ այն է քնկոտ, նա կողքանց նայեց անցնող Կ-ին և ասաց.

— Պարոն հողաչափին թույլատրվում է մինչև պանդոկ գնալ։

— Ի՞նչ խոսք,— իսկույն վրա բերեց Կ-ի պաշտպանու-

թյունն ստանձնած Օլգան։— Նա պարզապես ուղեկցում է ինձ։

Սակայն անշնորհակալ Կ-ն պոկ եկավ նրանից ու հյուրանոցի տիրոջը մի կողմ տարավ։ Այդ ընթացքում Օլգան համբերությամբ սպասում էր միջանցքի հակառակ ծայրում։

— Ես մեծ հաճույքով կցանկանայի գիշերել այստեղ,— ասաց Կ-ն։

— Ցավոք, դա անհնար է։ Երևում է, Դուք դեռ չգիտեք, որ հյուրանոցը բացառապես դղյակի պարոնների համար է նախատեսված։

— Ըստ հրահանգի թող այդպես լինի, բայց, ինչ խոսք, հնարավոր կլինի որևէ անկյունում ինձ համար քնելու տեղ գտնել։

— Որպես բացառություն, ես հաճույքով կընդառաջեի Ձեզ, սակայն նույնիսկ անկախ հրահանգների խստությունից, որի մասին Դուք օտարականի նման եք խոսում, Ձեր խնդրանքը նաև այն պատճառով է անիրականալի, որ պարոնայքն այստեղ չափազանց զգայուն են։ Ես համոզված եմ, որ նրանք անկարող են, գոնե առանց նախապատրաստված լինելու, այստեղ որևէ օտար մարդ տեսնել, իսկ եթե ես այստեղ գիշերելու թողնեմ Ձեզ և Դուք պատահաբար, իսկ պատահականությունները միշտ պարոնների օգտին են եղել, բացահայտվեք, ոչ միայն ես կկորչեմ, այլ նաև Դուք ինքներդ։ Ասածս ծիծաղելի է հնչում, բայց այդպես է։

Այս բարձրահասակ, կոճակներն ամուր կոճկած պարոնը, որ մի ձեռքը պատին էր հենել, մյուսը՝ աղդրին, ոտքերը խաչած, փոքր ինչ Կ-ի կողմը թեքված, մտերմաբար խոսում էր հետը, թեև գյուղական մուգ գույնի, հանդիսավորություն հաղորդող զգեստ էր հագել, բայց երևում էր, որ բնավ չի պատկանում գյուղի մարդկանց կարգին։

— Ես լրիվ հավատում եմ Ձեզ,— ասաց Կ-ն,— և բնավ չուզեցի արժեզրկել հրահանգի նշանակությունը, նույնիսկ եթե արտահայտվեցի ոչ այնպես։ Միայն մի բանի վրա եմ ուզում հրավիրել Ձեր ուշադրությունը. դղյակում ես արժեքավոր կապեր ունեմ և դեռ ավելի արժեքավորները ձեռք կբերեմ։ Դրանք կապահովագրեն Ձեզ ամեն տեսակ վտան-

գից, որ կարող է ծագել իմ՝ այստեղ գիշերելու պատճառով, և կերաշխավորեն Ձեզ այն հարցում, որ ես ի վիճակի եմ մի փոքր ծառայության համար լիարժեք շնորհակալություն հայտնել։

— Գիտեմ,— համաձայնեց հյուրանոցի տերն ու մեկ էլ կրկնեց,— գիտեմ։

Այժմ Կ-ն կարող էր ավելի համոզիչ տոնով կրկնել իր խնդրանքը, սակայն հյուրանոցի տիրոջ պատասխանը շփոթեցրեց նրան, և նա միայն հարցրեց.

— Դղյակի պարոններից այսօր շատե՞րն են գիշերում այստեղ։

— Այդ տեսակետից այսօր շատ նպաստավոր է։— Մասամբ-ինչ գայթակղելով ասաց հյուրանոցի տերը։— Միայն մի պարոն է մնացել։

Կ-ն դեռ չէր կարող համոզել, որ իրեն տեղ հատկացնեին, սակայն այժմ արդեն նա հույս էր փայփայում, թե կթողնեն գիշերել այստեղ, այդ պատճառով նա միայն հարցրեց միակ հյուրի անունը։

— Կլամմ,— իմիջիայլոց ասաց հյուրանոցի տերն ու շուռ եկավ արագ ներս մտած կնոջ կողմը։ Կնոջ հագին քաղաքաբնակ կանանց նուրբ, բայց չափազանց մաշված, հնացած, ծալքերով ու փոթածալքերով ծանրաբեռնված շորեր էին։ Նա ամուսնու հետևից էր եկել. պարոն նախագահն ինչ-որ ցանկություն ուներ։ Մինչև դեռալը հյուրանոցի տերը շուռ եկավ Կ-ի կողմը, կարծես այլևս ոչ թե ինքը, այլ Կ-ն էր վճռելու գիշերելու հարցը։ Սակայն Կ-ն չէր կարող ոչինչ ասել, և նրան շփոթեցրեց հատկապես այն հանգամանքը, որ հենց իր պետն էր այստեղ։ Առանց ընդհանրապես ինքնիրեն բացատրել կարողանալու, նա Կլամմի հանդեպ իրեն ավելի կաշկանդված էր զգում, քան սովորաբար դղյակի հանդեպ էր։ Պետի կողմից այստեղ բռնվելը թեև այնքան էլ սարսափելի չէր լինի, ինչպես հյուրանոցի տերն էր պատկերացնում, բայց հիմար բան կստացվեր, ինքը կարծես թեթևամտորեն ցավ պատճառեր այն մարդուն, ում պարտավոր էր շնորհակալ լինել։ Միաժամանակ նրան ճնշում էր այն զգացումը, որ իր երկմտանքի ու վարանման մեջ դրսևորվում էին իր համար

www.a-pdf.com

սարսափելի՝ ենթակա մարդ լինելու, բանվոր լինելու հետևանքները, իսկ ինքը ի վիճակի չէր լինի դրանք հաղթահարել նույնիսկ այստեղ, ուր այդ հետևանքներն ավելի պարզ էին երևում։ Անշարժ կանգնած, նա կծոտում էր շուրթերը և ոչինչ չէր խոսում։ Նախքան դռներից մեկի մեջ անհետանալը, հյուրանոցի տերը մի անգամ ևս հետ նայեց. Կ-ն նայում էր նրա հետևից ու չէր շարժվում տեղից, մինչև որ Օլգան նրան հեռու տարավ։

— Դու ի՞նչ էիր հարցնում իջևանատիրոջը։

— Ուզում էի այստեղ գիշերել։

— Ախր մեզ մոտ ես քնելու,— զարմացավ Օլգան։

— Այո, իհարկե,— ասաց Կ-ն ու նրան թողեց իր խոսքերի մեկնաբանությունը։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Պանդոկն իրենից ներկայացնում էր մի մեծ սենյակ, որի մեջտեղի մասը ազատ էր կահավորանքից, իսկ պատերի տակ դրված տակառների մոտ ու դրանց վրա մի քանի ցուղացիներ էին նստած։ Սակայն նրանց տեսքը բոլորովին այլ էր, քան Կ-ի իջևանատան գյուղացիներինը։ Այստեղ նրանք ավելի մաքուր ու միանման էին հագնված, գեղնագորշ, կոշտ կտորից կարված պիջակները լայն էին, շալվարները՝ կիպ գրկոց։ Նրանք կարհահասակ էին, առաջին հայացքից շատ էին նման իրար, ունեին տափակ, ոսկրոտ, կլոր այտերով դեմքեր, հանգիստ նստել էին իրենց տեղերում, շարժվում էին հազվադեպ, միայն հայացքներով հետևելով ներս մտնողներին. դանդաղ ու անտարբեր հայացքներով։ Նրանք, համենայնդեպս, որոշակի տպավորություն թողեցին Կ-ի վրա, բայց երևի այն պատճառով, որ այդքան շատվոր էին ու այդ աստիճան լուռ։ Կ-ն նորից բռնեց Օլգայի ձեռքը, որպեսզի կարողանար դրանով բացատրել իր այստեղ գտնվելը։ Անկյուններից մեկում մի տղամարդ ոտքի ելավ՝ Օլգայի ծանոթներից, և ցանկացավ մոտենալ, բայց Կ-ն թեանցուկ արած ձեռքով աղջկան տարավ հակառակ ուղղությամբ։

www.a-pdf.com

Օլգայից բացի ոչ ոք չէր կարող նկատել դա, իսկ նա, ի պատասխան, ժպտաց ու աչքի պոչով նայեց Կ-ին։

Գարեջուրը Ֆրիդա անունով մի ջահել աղջիկ էր լցնում։ Փոքրահասակ, շիկահեր, թախծոտ աչքերով ու նիհար այտերով, ուշադրություն չգրավող աղջիկ էր նա, ով, սակայն, անակնկալի էր բերում իր հայացքով, իր առանձնահատուկ գերազանցություն պարունակող հայացքով։ Երբ աղջիկը նայեց Կ-ին, վերջինիս թվաց, թե նրա հայացքը արել-վերջացրել է իր հետ առնչվող այն բոլոր գործերը, որոնց գոյության մասին ինքը տեղյակ չէր բնավ, սակայն հայացքը համոզում էր, թե դրանք կային։ Կ-ն չէր դադարում Ֆրիդային նայել, նույնիսկ երբ Ֆրիդան Օլգայի հետ էր խոսում։ Չէր կարելի ասել, թե նրանք ընկերուհիներ էին. միայն մի քանի խոսք փոխանակեցին սառը։ Կ-ն ուզում էր զրույցին ջերմություն հաղորդել և անսպասելի անմիջականությամբ հարցրեց.

— Դուք պարոն Կլամմին ճանաչո՞ւմ եք։—Օլգան ծիծաղեց։

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— բարկացած հարցրեց Կ-ն։

— Բայց ես չեմ ծիծաղում,— առարկեց Օլգան, սակայն շարունակեց ծիծաղել։

— Նա, իսկապես, մանկամիտ աղջիկ է դեռ,— Օլգայի մասին ասաց Կ-ն ու, վաճառատեղանին հենվելով՝ լավ առաջ թեքվեց, որ նորից իր վրա հրավիրի Ֆրիդայի հայացքը, սակայն Ֆրիդան, աչքերը ներքև հառած, ցածրաձայն պատասխանեց.

— Դուք ուզում եք պարոն Կլամմի՞ն տեսնել։

Կ-ն խնդրեց օգնել իրեն, Ֆրիդան ցույց տվեց անմիջապես իր ձախ կողմում գտնվող դուռը։

— Այնտեղ մի փոքր դիտանցք կա։ Կարող եք նայել։

— Իսկ այստեղի մարդի՞կ,— հարցրեց Կ-ն։ Ֆրիդան արհամարհանքով ձգեց ներքևի շուրթն ու Կ-ին տարավ դռան կողմը. նրա ձեռքն անսովոր փափկություն ուներ։ Փոքրիկ դիտանցքի միջով, որն ակնհայտորեն նայելու նպատակով էր փորված, երևաց համարյա ողջ սենյակը։

Սենյակի մեջտեղում դրված գրասեղանի մոտ, հարմարավետ, բոլորաձև թիկնաթոռին նստել էր պարոն Կլամմը՝ գլխավերևում կախված վառ լուսավորված լապտերով։ Նա

www.a-pdf.com

միջահասակ, գեր ու ծանրաշարժ մի պարոն էր, դեմքը դեռ հարթ էր, սակայն այտերը՝ տարիքի պատճառով, փոքր-ինչ ներքև էին կախված, դեմքի վրա ձգվում էին բարակ, սև բեղերը։ Ծուռ դրված, պսպղացող պենսնեն ծածկում էր նրա աչքերը։ Եթե պարոն Կլամմը սեղանի մոտ նստած լիներ, միայն կիսադեմը կերևար, բայց որովհետև նա լրիվ դեպի դիտանցքը շուռ եկած էր նստել, Կ-ն տեսնում էր նրա դեմքն ամբողջությամբ։ Կլամմը ձախ արմունկը հենել էր սեղանին, աջ ձեռքը, որ վիրջինիական սիգար էր պահել, դրված էր ծնկին։ Նրա դիմաց գարեջրի գավաթ կար, և որովհետև սեղանի քիվը բարձր էր, Կ-ն չէր կարող պարզորոշ տեսնել, թե այնտեղ թղթեր կայի՞ն։ Սակայն նրան թվաց, թե սեղանը դատարկ է։ Հուսալիության համար Կ-ն Ֆրիդային խնդրեց նայել դիտանցքից ու հայտնել իրեն, բայց որովհետև Ֆրիդան քիչ առաջ էր եղել սենյակում, առանց այլևայլության հավաստեց Կ-ին, որ սեղանի վրա ոչինչ չկա։ Կ-ն հարցրեց, թե արդյո՞ք պետք է, որ ինքը հեռանա արդեն, սակայն Ֆրիդան ասաց, թե կարող է նայել, ինչքան ուզում է։ Այժմ Կ-ն մենակ էր Ֆրիդայի հետ։ Օլգան, ինչպես թոուցիկ հայացք նետելով համոզվեց Կ-ն, այնուամենայնիվ, գնացել էր իր ծանոթների մոտ, նստել բարձր տակառին ու ոտքերն էր ճոճում։

— Ֆրիդա, Դուք շա՞տ լավ եք ճանաչում պարոն Կլամմին,— շշնջաց Կ-ն։

— Իհարկե։ Շատ լավ,— ասաց Ֆրիդան, Կ-ին բավական մոտ՝ հենվեց պատին, խաղացկուն շարժումներով ուղղեց միայն այժմ Կ-ի ուշադրությունը գրաված լանջաբացվածքով, թեթև, կրեմի գույնի վերնաշապիկը, որ շատ անճաշակ կախ էր ընկել նրա նիհար ուսերից։— Չե՞ք հիշում, ինչպես ծիծաղեց Օլգան։

— Նա անշնորհք աղջիկ է։

— Դե,— համակերպված տոնով խոսեց Ֆրիդան,— ծիծաղելու համար պատճառ կար։ Դուք հարցրեցիք՝ արդյոք ես ճանաչո՞ւմ եմ Կլամմին, իսկ ես, ախը,— այս պահին նա ակամայից փոքր-ինչ ուղղվեց, և նրա հաղթական, շոշափվող

www.a-pdf.com

թեմայի հետ ոչ մի կապ չունեցող հայացքը նորից սահեց Կ-ի վրայով,— ախր ես նրա սիրուհին եմ։

— Կլամմի սիրուհի՞ն,— կրկնեց Կ-ն, Ֆրիդան գլխով արեց. զրույցին ավելորդ լրջություն չհաղորդելու համար Կ-ն ժպտալով ասաց.— այդ դեպքում Դուք ինձ համար շատ կարևոր անձնավորություն եք։

— Ոչ միայն Ձեզ,— բարեկամաբար ասաց Ֆրիդան ու անպատասխան թողեց Կ-ի ժպիտը։ Աղջկա գոռոզամտությունը կոտրելու համար Կ-ն մի միջոց ուներ, որն էլ կիրառեց։

— Դուք արդեն եղե՞լ եք դղյակում։— Սակայն դա ոչ մի ազդեցություն չթողեց, որովհետև Ֆրիդան պատասխանեց.

— Ոչ։ Բայց արդյոք բավական չէ՞ այն, որ ես այստեղ՝ պանդոկում եմ։—Նրա պատվասիրությունն իսկապես խելահեղության էր հասնում, և ինչպես երևում էր, նա հենց Կ-ի մոտ էր ուզում հագուրդ տալ դրան։

— Այստեղ՝ պանդոկում, Դուք հավանաբար հյուրանոցի տիրոջն էլ եք փոխարինում։

— Այո,— ասաց Ֆրիդան։— Իսկ սկսել եմ «Դեպի կամուրջ» իջևանատնից. ախոռն էի մաքրում։

— Այս նուրբ ձեռքերով,— կես հարց-կես հաստատում ասաց Կ-ն և ինքն էլ չգիտեր՝ քծնում էր, թե Ֆրիդայի թողած տպավորության տակ ասաց։ Նրա ձեռքերը, համենայնդեպս, իրոք նուրբ էին ու փոքր, սակայն դրանք կարելի էր նաև թույլ ու անարտահայտիչ համարել։

— Այն ժամանակ դրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում,— ասաց Ֆրիդան։— Անգամ հիմա էլ։

Կ-ի հայացքում նրան ուղղված հարց կար, բայց Ֆրիդան թափահարեց գլուխը և չուզեց շարունակել։

— Ինչ խոսք, Դուք ձեր գաղտնիքներն ունեք և դրանց մասին, իհարկե, չեք խոսի մի այնպիսի մարդու հետ, ում ընդամենը կես ժամ եք ճանաչում, և ով դեռ ստիպ չի ունեցել պատմել, թե ինչպես է իր գործերի վիճակը։— Սակայն պարզվեց, որ դա տեղին արված նկատողություն չէր և այն տպավորությունը թողեց, թե Ֆրիդային արթնացրեց Կ-ի համար ձեռնտու թմբիրից։ Գոտիկից կախված կաշվե պայուսա-

www.a-pdf.com

կից նա փայտի փոքր կտոր հանեց, փակեց դիտանցքը և ձգտելով բացահայտ չարտահայտել իր տրամադրվածության փոփոխությունը, ասաց.

— Ինչ վերաբերում է Ձեզ, ես արդեն ամեն ինչ գիտեմ։ Դուք հոգաչափ եք։ Ես այժմ պետք է իմ գործին վերադառնամ,— ավելացրեց նա և անցավ վաճառասեղանի հետևը, մինչ պանդոկում նստածներից մեկնումեկը երբեմն-երբեմն մոտենում էր Ֆրիդային ու պարզում դատարկ գավաթը։ Կ-ն նորից ցանկացավ աննկատ ձևով զրույցի բռնվել Ֆրիդայի հետ, մատուցարանի վրայից դատարկ գավաթ վերցրեց ու մոտեցավ նրան.

— Եվս մի հարց, ֆրոյլայն Ֆրիդա։ Դա արտասովոր բան է և անսովոր մեծ ուժ է պետք ունենալ ախոռ մաքրողից պանդոկում աշխատողի աստիճանի հասնելու համար։ Արդյոք դրանով Ձեզ նման մարդն իր վերջնական նպատակին հասե՞լ է։ Անիմաստ հարց եմ տալիս։ Ձեր աչքերից, ինձ մի ծաղրեք, ֆրոյլայն Ֆրիդա, Ձեր աչքերում ոչ այնքան անցածգնացած մաքառումն է երևում, որքան՝ սպասվող։ Սակայն հակասությունները մեծ են կյանքում. ավելի մեծ նպատակ հետապնդելիս դրանք ավելի են մեծանում, և բնավ ամոթ չէ թեկուզև փոքր, ազդեցություն չունեցող, բայց նույնպես պայքարող մարդու օգնությանն ապավինելը։ Գուցե երբևէ կարողանանք առանձին խոսել իրար հետ, ոչ այսքան շատ, զննող հայացքների տակ։

— Ձեմ հասկանում, թե ի՞նչ եք ուզում,— ասաց Ֆրիդան և նրա ձայնի մեջ՝ կամքից անկախ, այս անգամ կարծես հնչեցին ոչ թե կյանքում ձեռք բերած հաղթանակները, այլ անվերջանալի հիասթափությունները։— Գուցե ուզում եք Կլամմի ձեռքից փախցնե՞լ ինձ։ Աստված իմ։— Նա իրար խփեց ձեռքերը։

— Կոահեցիք։— Այդքան շատ կասկածներից կարծես հոգնած, ասաց Կ-ն։— Հենց դա էր իմ վերջնական մտադրությունը. Դուք պետք է լքեք Կլամմին ու իմ սիրուհին դառնաք։ Իսկ ես այժմ կարող եմ գնալ։ Օլգա, գնացինք տուն,— կանչեց նա։ Օլգան հնազանդ ներքև սահեց տակառի վրայից, սակայն շրջապատող ծանոթներից անմիջապես չհեռացավ։

Հանկարծ Ֆրիդան սպառնալից հայացք նետելով Կ-ի կողմը, մեղմ ասաց.

— Ե՞րբ կարող եմ խոսել Ձեզ հետ։

— Ես կարո՞ղ եմ այստեղ դիշերել,— հարցրեց Կ-ն։

— Այո։

— Կարո՞ղ եմ անմիջապես մնալ այստեղ։

— Օլգայի հետ հիմա հեռացեք, որ կարողանամ սրանց պանդոկից դուրս քշել։ Որոշ ժամանակ անց կարող եք գալ։

— Լավ,— համաձայնեց Կ-ն ու անհամբեր սպասեց Օլգային։ Սակայն գյուղացիները նրան բաց չէին թողնում։ Նրանք մի պար էին հնարել, որի հիմնական պարողը Օլգան էր. շուրջպարի էին բռնվել, միահամուռ կանչի տակ ամեն մեկը հերթով մոտենում էր Օլգային, մի ձեռքով ամուր գրկում ազդրերը և մի քանի անգամ պտտեցնում։ Շուրջպարն ավելի արագ էր դառնում, խռպոտ ու սոված կանչերը աստիճանաբար մի ընդհանուր ձայնի էին վերածվում։ Օլգան, որ քիչ առաջ ծիծաղելով ուզում էր դուրս պրծնել շրջանից, այժմ մազերն արձակ՝ մեկից մյուսին էր շրջվում։

— Նման մարդկանց են ուղարկում այստեղ,— ասաց Ֆրիդան ու գայրույթից կծեց գարակ շուրթերը։

— Ովքե՞ր են,— հետաքրքրվեց Կ-ն։

— Կլամմի ծառաները։ Այս ամբոխին նա միշտ բերում է հետը. միայն սրանց ներկայությունը տակնուվրա է անում ինձ։ Հազիվ եմ հիշում, պարոն հողաչափ, թե այսօր ինչ եմ խոսել Ձեզ հետ։ Եթե փոքր-ինչ ջղայնացած եմ եղել, ներողամիտ եղեք։ Այս մարդկանց ներկայությունն է պատճառը։ Սրանք իմ դիտեցած ամենաարհամարհված ու զզվելի մարդիկ են, իսկ ես հենց սրանց պետք է գարեջուր սպասարկեմ։ Ինչքան եմ խնդրել Կլամմին տանը թողնել սրանց։ Ինձ վիճակված է մյուս պարոնների ծառաներին սպասարկել, բայց գոնե նա կարող էր ախր իմ խնդրանքը լսել։ Սակայն ամեն ինչ իզուր է։ Կլամմի գալուց մի ժամ առաջ սրանք՝ ներս են թափվում՝ ինչպես անասունը ախոռը։ Այժմ, սակայն, սրանք իսկապես կզգան, որ իրենց իսկական տեղը ախոռն է։ Եթե այս պահին Դուք այստեղ չլինեիք, ես կբացեի դուռը, և Կլամմն անձամբ ստիպված կլիներ դուրս քշել սրանց։

www.a-pdf.com

— Իսկ ինչ է, նա սրանց ձայները չի՞ լսում։

— Ոչ։ Նա քնած է։

— Ինչպե՞ս թե,— բացականչեց Կ-ն։— Նա քնա՞ծ է։ Երբ ես նայում էի, նա արթուն էր ու նստած էր սեղանի մոտ։

— Նա միշտ էլ այդպես է նստում։ Այն ժամանակ, որ նրան տեսաք, նա արդեն քնած էր։ Թե չէ կթողնե՞ր Ձեզ ներս նայել։ Դա նրա քնելու ձևն է։ Այս պարոնները շատ, շատ են քնում։ Հնարավոր չէ հասկանալ, թե ինչու։ Ի դեպ, եթե նա այդքան շատ չքներ, դժվար թե կարողանար այս մարդկանց հանդուրժել։ Այժմ արդեն հարկ կլինի, որ ես դուրս քշեմ սրանց։— Նա անկյունից մի մտրակ վերցրեց և բարձր, բայց ոչ վստահ ցատկելով, ինչպես երևի գառնուկներն են ցատկում, թռավ պարոնների կողմը։

Նրանք սկզբում Ֆրիդայի կողմը շուռ եկան, կարծելով, թե նոր պարուհի է եկել։ Եվ իրոք, Ֆրիդայի տեսքը մի պահ այնպիսին էր, կարծես ուզում էր գցել մտրակը, սակայն արդեն հաջորդ պահին նա բարձրացրեց այն։

— Կլամմի անունից հրամայում եմ, ախո՛ռ գնացեք,— բացականչեց նա։— Բոլորդ դեպի ախո՛ռ։

Պարոնները հասկացան, որ Ֆրիդան լուրջ է ասում և, Կ-ի համար անհասկանալի մի վախով, սեղմվեցին դեպի սենյակի խորքը։ Առաջինների ճնշման տակ այնտեղ մի դուռ բացվեց, գիշերային օդը ներթափանցեց պանդոկ, բոլորը՝ Ֆրիդայի հետ միասին, անհետացան. նա ծառաներին բակի միջով հաստատ դեպի ախոռ էր քշում։

Տիրած անսպասելի լռության մեջ Կ-ն նախասենյակում ոտնաձայներ լսեց։ Համենայնդեպս իրեն ապահովագրելու համար նա ցատկեց վաճառասեղանի հետևը. թաքնվել կարող էր միայն վաճառասեղանի տակ։ Թեև պանդոկ մտնելն արգելված չէր, բայց քանի որ նա ուզում էր այստեղ գիշերել, պետք է խուսափեր որևէ մեկի աչքին երևալուց։ Այդ պատճառով, երբ դուռը բացվեց, նա մտավ սեղանի տակ։ Այնտեղ, եթե գտնեին նրան, թաքնվելու համար գուցե թե չպատժեին, սակայն իր քայլն արդարացնող պատասխանն այնքան էլ հավաստի չէր հնչի. կատաղության հասած գյուղացիներից էր թաքնվել։

www.a-pdf.com

Իշևանատերն էր։

— Ֆրի՛դա,— բղավեց նա ու մի քանի անգամ ետուառաջ քայլեց սենյակում։

Բարեբախտաբար, Ֆրիդան շուտ վերադարձավ։ Կ-ի մասին նա չհիշատակեց, միայն գյուղացիներից գանգատվեց և Կ-ին փնտրելու մտադրությամբ անցավ վաճառասեղանի ետևը։ Ցանկության դեպքում Կ-ն կարող էր շոշափել նրա ոտքը, և, այդ պահից սկսած, ավելի վստահ զգաց իրեն։ Որովհետև Ֆրիդան Կ-ի մասին ոչինչ չասաց, ստիպված էր իշևանատերը հարցնել։

— Իսկ որտե՞ղ է հողաչափը։— Նա հավանաբար քաղաքավարի, ավելի բարձր դիրք ունեցող մարդկանց հետ տեսակցության և համեմատաբար ազատ շփման շնորհիվ նուրբ դաստիարակություն ստացած մարդ էր, Ֆրիդայի հետ խոսում էր ընդգծված հարգանքով, և դա ավելի պարզ նկատվեց, երբ Ֆրիդայի հետ էր զրուցում. նա չէր դադարում իրեն հյուրանոցի տեր զգալ, տերուտնօրեն՝ առավել ևս, երբ Ֆրիդայի նման հանդուգն աշխատողի հետ էր զրուցում։

— Ես բոլորովին մոռացել էի հողաչափին,— ասաց Ֆրիդան ու փոքրիկ ոտքը դրեց Կ-ի կրծքին։— Նա հավանաբար վաղուց հեռացել է։

— Սակայն ես նրա հեռանալը չեմ տեսել, մինչդեռ ամբողջ ժամանակ նախասենյակում էի կանգնած։

— Բայց նա այստեղ էլ չէ,— սառը պատասխանեց Ֆրիդան։

— Գուցե թաքնվե՞լ է,— ասաց իշևանատերը։— Այն տպավորությունից հետո, որ նա ինձ վրա թողեց, նրանից կարելի է նման բաներ սպասել։

— Դժվար թե այդքան համարձակություն ունենար,— առարկեց Ֆրիդան ու ոտքն ավելի ամուր սեղմեց։ Գոհացնող ու անկաշկանդ ինչ-որ բան կար նրա էության մեջ, որ Կ-ն մինչև հիմա բնավ չէր նկատել, և այդ նոր գիծը անհավատալի պարզությամբ դրսևորվեց, երբ նա ծիծաղելով, անսպասելիորեն ասաց.

— Գուցե այստեղ, սեղանի տակ է թաքնված։— Կռացավ

www.a-pdf.com

Կ-ի վրա, թոուցիկ համբուրեց նրան, ուղղվեց Արկին ու մռայլ ասաց.— Չէ, չկա։

Իջևանատերը զարմանք հարուցեց, ասելով.

— Ինձ համար շատ տհաճ է, երբ հաստատ չգիտեմ՝ նա հեռացել է արդյոք, թե՝ ոչ։ Այստեղ կարևորը ոչ այնքան Կլամմն է, որքան՝ հրահանգը։ Իսկ դա, Ֆրոյլայն Ֆրիդա, առաջնային է ինչպես Ձեզ, այնպես էլ ինձ համար։ Պանդոկի պատասխանատվությունը Ձեր վրա է, հյուրանոցի մյուս սենյակները ես մի անգամ էլ կստուգեմ։ Բարի գիշեր, հաճելի քուն։

Հազիվ էր հյուրանոցի տերը հեռացել պանդոկից, Ֆրիդան շտապ հանգցրեց լույսն ու արդեն Կ-ի մոտ էր՝ վաճառասեղանի տակ։

— Սիրելիս, քաղցրս,— շշնջաց նա, բայց ձեռք չտվեց Կ-ին. կարծես սիրուց ուշաթափված, պառկել էր մնջքի վրա և տարածել ձեռքերը։ Երջանիկ սիրո զգացումով համակված՝ ժամանակը, հավանաբար, անվերջանալի էր թվում նրան, և նա ավելի շուտ հառաչում էր, քան մի անհասկանալի կարճ երգ երգում։ Հետո նա վեր ցատկեց, և, որովհետև Կ-ն պառկել էր լուռ ու մտախոհ, երեխայի նման սկսեց քաշքշել նրան։

— Արի, այստեղ կարելի է խեղդվել։

Նրանք գրկախառնվեցին, Ֆրիդայի փոքր մարմինը այրվում էր Կ-ի ձեռքերում, անդիտակից վիճակի մեջ, որից Կ-ն ապարդյուն ուզում էր ազատվել շարունակ, մի քանի քայլ այն կողմ նրանք խուլ բախվեցին Կլամմի սենյակի դռանն ու հետո պառկեցին ծանծաղ գարեջրափոսերի ու հատակը ծածկող այլ աղտեղությունների մեջ։ Այդպես պառկած, ժամեր անցան։ Միախառնված շնչառության ու սրտերի համատեղ բաբախման ժամեր, որի ընթացքում Կ-ն շարունակ այն զգացումն ուներ, թե մոլորվել է կամ այնպիսի օտար տեղ ընկել, ուր իրենից առաջ դեռ ոչ մի մարդ չի եղել, օտար մի տեղ, ուր նույնիսկ օդը հարավյան վայրերի օդի բաղադրությունը չունի, ուր մարդ կարող է խեղդվել օտարությունից և, որի անիմաստ հրապույրներին տրվելով՝ թերևս ուրիշ ոչինչ չի կարող անել, քան առաջ գնալ, ավելի

www.a-pdf.com

խճճվել։ Եվ երբ Կլամմի սենյակից լսվեց Ֆրիդային ուղղված խոպոտ, հրամայական-անտարբեր ձայնը, սկզբում Կ-ն չսարսափեց դրանից, ձայնը մխիթարող պարզությամբ հասավ նրա գիտակցությանը.

— Ֆրիդա,— կարծես լսածը փոխանցելով, աղջկա ականջին շշնջաց Կ-ն։

Իսկական բնածին հնազանդությամբ Ֆրիդան ցանկացավ վեր ցատկել, սակայն հաջորդ պահին հիշեց, թե որտեղ է գտնվում, ուղղվեց, անձայն ծիծաղեց ու ասաց.

— Բայց ես նրա մոտ չեմ գնա։ Ես երբեք չեմ գնա նրա մոտ։— Կ-ն ցանկացավ առարկել, ուզեց ստիպողաբար ուղարկել նրան Կլամմի մոտ, սկսեց որոնել նրա վերնաշապիկը, բայց չէր կարող ասել ոչինչ, չափից դուրս երջանիկ էր Ֆրիդային իր ձեռքերում պահած լինելու համար, չափազանց վախեցած-երջանիկ էր, որովհետև նրան թվում էր, որ նրա հանկարծ Ֆրիդան չգի իրեն, ինքը կզրկվի ունեցած ամենից։ Եվ կարծես Կ-ի համաձայնությունից խրախուսված, Ֆրիդան սեղմեց բռունցքը, դուռը թակեց ու ասաց.

— Ես Հոդաչափի մոտ եմ։ Հոդաչափի մոտ եմ։— Դրանից հետո մինչև Կլամմը խաղաղվեց, Կ-ն վեր կացավ, ծունկի եկավ Ֆրիդայի կողքին ու այդպես նախորդող աղոտ լույսի մեջ շուրջը նայեց։ Ի՞նչ էր եղել, ո՞ւր էին մնացել իր հույսերը, ի՞նչ կարող էր հուսալ նա Ֆրիդայից, երբ ամենը չ ասված էր արդեն։ Հակառակորդի ու իր նպատակի մեծությանը համապատասխան զգույշ առաջ շարժվելու փոխարեն, ինքն այստեղ մի ամբողջ գիշեր թավալվեց աստիճանաբար անտանելի դարձող գարեջրափոսերի մեջ։

— Այդ ի՞նչ արեցիր,— ինքնիրեն խոսեց նա։— Հիմա երկուսս էլ կորած ենք։

— Ոչ,— առարկեց Ֆրիդան։— Միայն ես եմ կորած, բայց, ախր, ես քեզ ձեռք բերեցի։ Հանգիստ մնա։ Այ, նայիր, թե ինչպես են այն երկուսը ծիծաղում։

— Ո՞ր,— հարցրեց Կ-ն ու շուռ եկավ։ Վաճառասեղանին նստած էին անքուն մնալուց փոքր-ինչ գունատ, բայց ուրախ օգնականները, դա պարտականությունը հավատարիմ կատարած լինելու ուրախությունն էր։

www.a-pdf.com

— Ի՞նչ եք ուզում,— բղավեց Կ-ն, կարծես այն երկուսն էին ամեն ինչում մեղավոր։ Նա շուրջը նայեց, փնտրեց մտրակը, որ երեկոյան Ֆրիդայի ձեռքին էր։

— Մենք, ախր, պետք է փնտրենք քեզ,— ասացին օգնականները։— Որովհետև դու մեզ մոտ՝ սրահ չիջար, քեզ որոնելով մենք Բարնաբասենց տուն գնացինք և վերջապես այստեղ գտանք քեզ. ամբողջ գիշեր նստած էինք այստեղ։ Այնքան էլ հեշտ ծառայություն չէ։

— Դուք ինձ ցերեկն ևս հարկավոր, ոչ գիշերը։ Կորեք այստեղից։

— Հիմա արդեն ցերեկ է,— ասացին նրանք ու չշարժվեցին տեղներից։

Իրոք, ցերեկ էր արդեն։ Բակի դռները բացվեցին, ու գյուղացիները՝ Օլգայի հետ, ում Կ-ն մոռացել էր բոլորովին, լցվեցին ներս։ Թեև ինչքան էլ նրա մաղերն ու շորերը անկանոն էին, Օլգան նախորդ երեկոյի պես աշխույժ էր, ու արդեն դռների մեջ նրա աչքերը փնտրեցին Կ-ին։

— Դու ինչո՞ւ ինձ հետ տուն չեկար,— համարյա լացակումած հարցրեց նա։— Այս կնիկարմա՞ն էր պատճառը։— Ավելացրեց նա ու կրկնեց մի քանի անգամ։ Ֆրիդան մի պահ անհետացավ ու, սպիտակեղենի փոքր կապոցը ձեռքին, կրկին հետ եկավ։ Օլգան տխուր մի կողմ կանգնեց։

— Արդեն կարող ենք գնալ,— ասաց Ֆրիդան. ինքնին հասկանալի էր, որ նա «Կամրջի մոտ» իջևանատունը նկատի ուներ, ուր և պետք է գնային։

Կ-ն Ֆրիդայի հետ էր քայլում, նրանց հետևից դալիս էին օգնականները. սա էր նրանց ողջ քարավանը։ Գյուղացիներն արհամարհանքով նայեցին Ֆրիդային, և դա ինքնին հասկանալի էր, որովհետև Ֆրիդան առայսօր շատ խիստ էր եղել։ Նրանցից մեկը նույնիսկ մի ձող վերցրեց և հասկացրեց, թե չի թողնի շարունակեն ճամփան, մինչև Ֆրիդան ձողի վրայից չցատկի, սակայն նրա մի հայացքը բավական էր, որ գյուղացին հետ քաշվեր։

Դրսում՝ ձյունների մեջ կանգնած, Կ-ն ազատ շունչ քաշեց։ Ազատ լինելու ուրախությունն այնքան մեծ էր, որ այս ան-

www.a-pdf.com

գամ տանելի էր թվում ճանապարհի դժվարությունը։ Եթե Կ-ն մենակ լիներ, ավելի թեթև կքայլեր։

Իջևանատուն հասնելով, նա անմիջապես իր սենյակը գնաց ու պառկեց մահճակալին, Ֆրիդան տեղ պատրաստեց վողջին՝ հատակին։ Օգնականները նրանց հետ ներս սողոսկեցին, Կ-ն նրանց դուրս քշեց, սակայն նրանք պատուհանից նորից ներս եկան։ Նրանց մի անգամ ևս դուրս անելու համար Կ-ն շատ էր հոգնած։

Իջևանատիրուհին անձամբ վեր բարձրացավ, որ ողջունի Ֆրիդային, Ֆրիդան նրան «մայրիկ» անվանեց. նրանք անհասկանալի զորովանքով ողջունեցին իրար՝ համբույրներով ու երկարատև գրկախառնությամբ։ Սենյակում ընդհանրապես այնքան էլ հանգիստ չէր. տղամարդու երկարաճիտք կոշիկներ հագած աղախինները շարունակ ներսուդուրս էին անում աղմուկով, ինչ-որ բան էին բերում կամ տանում։ Եթե նրանց հարկավոր էր լինում մի բան վերցնել վրան տարբեր բաներ դարսդարսված մահճակալից, ապա նրանք առանց նրբանկատության քաշում-հանում էին Կ-ի տակից։ Ֆրիդային նրանք բարևեցին ինչպես հավասարը հավասարին։

Չնայած սենյակում տիրող անկարգությանը, Կ-ն ամբողջ օրն ու գիշերը մնաց անկողնում պառկած, փոքր հարցերում Ֆրիդան հոգ էր տանում։ Երբ նա հաջորդ առավոտյան վեր կացավ վերջապես թարմացած, արդեն գյուղում իջևանելու չորրորդ օրն էր։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կ-ն մեծ հաճույքով անկեղծ, բացեիբաց կխոսեր Ֆրիդայի հետ, բայց օգնականները, որոնց հետ Ֆրիդան երբեմն-երբեմն կատակում ու ծիծաղում էր, խանգարում էին իրենց աներես ներկայությամբ։ Իմիջիայլոց, նրանք շատ պահանջկոտ չէին. տեղավորվել էին անկյուններից մեկում՝ հատակի վրա փռված կանացի երկու հին շրջազգեստների վրա։ Նրանք, ինչպես Ֆրիդային էին ասել, իրենց պատիվ էին համարում պա-

www.a-pdf.com

բոն հողաշափին չխանդարելն ու ձգտում էին դրաղեցնել հնարավորին չափ քիչ տարածություն, շշուկ-քրքջոցի ուղեկցությամբ շարունակ զանազան փորձեր էին անում. ոտք ու ձեռքերն էին խաչում, դունդուկծիկ լինում, այնպես որ երեկոյան աղջամուղջի մեջ նրանք իրենց անկյունում միայն մի մեծ կույտ էին թվում։ Ցերեկվա փորձը ցույց էր տվել, այնուամենայնիվ, որ նրանք շատ ուշադիր աչքեր ունեն. արտաքուստ երեխայական խաղի տպավորություն թողնելով, նրանք՝ ձեռքները հեռադիտակի պես աչքներին դնելով, անընդհատ Կ-ի կողմն էին դցում հայացքները, բազմաթիվ նման հիմարություններ էին անում կամ ծիկրակում, թեև թվում էր, թե գլխավորապես իրենց բեղերով էին զբաղված (կարծես բեղերը շատ կարևոր էին). անհաշիվ անգամ իրենց բեղերի երկարությունն ու հաստությունն էին չափում ու Ֆրիդայի կարծիքը հարցնում։

Կ-ն պառկած տեղից, կատարյալ անտարբերությամբ երբեմն-երբեմն նայում էր երեքի զբաղմունքին։ Երբ նա վերջապես մահճակալից վեր կենալու համար բավական հանգրստացած զդաց իրեն, նրանք մոտ վազեցին, որ հարավոր ծառայությունները մատուցեն։ Կ-ն իրեն դեռ բավական ուժեղ չէր զդում, որ մերժեր, ու թեև նկատեց, որ նրանց օգնությանն ապավինելով նրանցից որոշակի կախման մեջ է ընկնում, չնայած դա դարող էր վատ հետևանքներ ունենալ, բայց ստիպված էր համակերպվել։ Համենայնդեպս, այնքան էլ տհաճ չէր սեղանի մոտ նստած խմել Ֆրիդայի բերած լավորակ սուրճը, տաքանալ Ֆրիդայի վառած վառարանի մոտ, արագ ու անճոռնի շարժումներով վերուվար վազեցնել օդնականներին, որ նրանք լվացվելու ջուր, օճառ, սանր, հայելի ու մի բաժակ ռոմ բերեին, որովհետև Կ-ն ռոմ խմելու անբացատրելի ցանկություն էր հայտնել։ Հրամաններ արձակելու և դրանց իրականանալու միջոցին, ավելի շուտ լավ տրամադրության պատճառով, քան հաջողություն ունենալու հույսով, Կ-ն պահանջեց.

— Իսկ հիմա ընացեք։ Ես առայժմ ոչնչի կարիք չեմ զգում և ուզում եմ Ֆրայլայն Ֆրիդայի հետ առանձին խոսել։

Երբ օդնականների դեմքերից հասկացավ, որ նրանք չեն

հակառակվում, սրտերն առնելու համար ավելացրեց։

— Հետո երեքով կգնանք համայնքի ավագի մոտ։ Ներքևի սրահում սպասեք ինձ։

Ինչքան էլ տարօրինակ էր, նրանք հնազանդվեցին, միայն հեռանալուց առաջ ասացին.

— Մենք այստեղ էլ կարող էինք սպասել։

— Գիտեմ, բայց չեմ ուզում,— պատասխանեց Կ-ն։ Նրան զայրացրեց, բայց ինչ-որ տեղ նաև դուր եկավ այն, որ օգնականների հեռանալուց անմիջապես հետո Ֆրիդան իր գրկում նստելով ասաց.

— Սիրելիս, դու ի՞նչ ունես նրանց դեմ։ Մենք նրանցից ոչ մի գաղտնիք չպետք է ունենանք։ Նրանք հավատարիմ են։

— Ախ, հավատարիմ են։ Նրանք շարունակ հետևում են ինձ. դա անիմաստ է, զզվելի։

— Կարծես թե հասկանում եմ քեզ,— ասաց Ֆրիդան, կարծես ընկավ նրա վզից, ուզեց մի բան էլ ավելացնել, սակայն չկարողացավ խոսքը շարունակել, և, որովհետև բազկաթոռը մահճակալի կողքին էր, նրանք ճոճվեցին ու մահճակալին ընկան։ Նրանք պառկած էին այնտեղ, բայց ոչ նախորդ գիշերվա պես ինքնամոռաց։ Ֆրիդան ինչ-որ բան էր փնտրում, Կ-ն էլ էր փնտրում. կատաղի, աղճատված դիմագծերով, գլխով դիմացինի կուրծքը փորփրելով փնտրում էին նրանք, և նրանց գրկախառնումները, վեր թռչող մարմինները մոռացություն չէին բերում նրանց, այլ հիշեցնում էին փնտրելու պարտականությունը. ինչպես հուսահատ շներն են գետինը ճանկռոտում, այդպես նրանք ճանկռոտում էին իրար, և անօգնական, անհույս, երջանկության վերջին պատառը դեռ վերցնելու մղումով՝ նրանց լեզուները լայն սահում էին միմյանց դեմքերի վրայով։ Միայն հոգնածությունը ստիպեց նրանց խաղաղվել ու պառկել հանգիստ, մեկմեկից շնորհակալ։

Քիչ հետո աղախինները նորից եկան։

— Հապա տես, թե ինչպես են պառկել այստեղ,— ասաց մեկն ու կարեկցելով, մի շոր դցեց վրաները։

Երբ ավելի ուշ Կ-ն վրայից նետեց շորն ու շուրջը նայեց, տեսավ, որ օգնականները նորից իրենց անկյունում են, և դա

www.a-pdf.com

չզարմացրեց նրան։ Մատով Կ-ի կողմը ցույց տալով, նրանք իրար զգուշացրին, որ լուրջ մնան, և ողջունեցին։ Օգնականներից բացի իջևանատիրուհին էլ էր սենյակում. նստել էր կիպ մահճակալի կողքին և գուլպա էր գործում։ Գուլպաները փոքր էին ու չէին համապատասխանում նրա հսկա, սենյակը համարյա մթնեցնող կերպարանքին։

— Ես վաղուց եմ նստած այստեղ,— ասաց նա և բարձրացրեց կնճիռներով ակոսված, բայց մեծամասամբ դեռ հարթ, երբևէ՝ երիտասարդ տարիներին, գեղեցիկ, լայն դեմքը։ Նրա բառերը հնչեցին որպես չհիմնավորված նախատինք, որովհետև Կ-ն չէր պահանջել, որ նա գար։ Գլխով անելով՝ Կ-ն հաստատեց նրա խոսքերն ու ուղիղ նստեց։ Ֆրիդան նստոտքի կանգնեց, սակայն հեռացավ Կ-ի մոտից և հենվեց իջևանատիրուհու բազկաթոռին։

— Տիկին, արդյոք չի՞ կարելի Ձեր ասելիքը հետաձգել մինչև համայնքի ավագի մոտից իմ վերադարձը։ Ես կարևոր գործ ունեմ այնտեղ։

— Գարոն հողաչափ, հավատացեք ինձ, որ սա ավելի կարևոր է,— առարկեց իջևանատիրուհին։— Այնտեղ երևի թե մենակ աշխատանքը լինի քննարկման թեման, մինչդեռ այստեղ խոսքը մարդու մասին է, Ֆրիդայի, իմ սիրելի աղախնի։

— Ահա թե ինչ,— ասաց Կ-ն։— Այդ դեպքում՝ գուցե։ Միայն թե չեմ հասկանում, թե այդ հարցն ինչու մեզ՝ երկուսիս չեք թողնում։

— Որովհետև ես սիրում եմ նրան, անհանդստանում,— ասաց իջևանատիրուհին ու իր կողմը քաշեց Ֆրիդայի գլուխը. նստած իջևանատիրուհու կողքին կանգնած, նրա գլուխը այդ հսկայի ուսին էր հասնում միայն։

— Եթե Ֆրիդան Ձեր հանդեպ այդքան մեծ վստահություն ունի, ես առարկություն չունեմ, և որովհետև նա քիչ առաջ իմ օգնականներին ևս հավատարիմ անվանեց, ուրեմն մենք այստեղ ընկերներ ենք։ Ձեզ, տիկին, կարող եմ ասել, որ ես լավագույն ելք եմ համարում մեր ամուսնությունը, և հնարավորին չափ շուտ ամուսնությունը։ Ցավոք, ես չեմ կարողանա Ֆրիդային փոխհատուցել այն, ինչ նա է կորցնում իմ

www.a-pdf.com

պատճառով. տերունական հյուրանոցում ունեցած դիրքն ու Կլամմի ընկերությունը։

Ֆրիդան բարձրացրեց դեմքը. նրա աչքերը լի էին արցունքներով և նախկին հաղթականությունից հետք անգամ չկար։

— Ինչո՞ւ ես, ինչո՞ւ հենց ինձ պետք է վիճակվեր դա։

— Ինչպե՞ս,— միաժամանակ հարցրեցին Կ-ն ու իջևանատիրուհին։

— Խեղճ երեխա։ Նա շփոթված է,— ասաց իջևանատիրուհին։— Չափից մեծ երջանկությունից ու դժբախտությունից կորցրել է իրեն։— Եվ ի հաստատումն այդ խոսքերի, Ֆրիդան նետվեց Կ-ի կողմը, համբուրեց նրան վայրի մոլուցքով, կարծես իրենցից բացի ոչ ոք չկար սենյակում, ու, լաց լինելով, Կ-ին գրկից բաց չթողնելով, դանդաղ ծնկի իջավ։

— Դուք, կարծես, արդարացնում եք ինձ։— Երկու ձեռքով Ֆրիդայի մազերը շոյելով, իջևանատիրուհուն դիմեց Կ-ն։

— Դուք ազնիվ մարդ եք,— ասաց իջևանատիրուհին. նրա ձայնը ևս լացակումած էր։ Նա փոքր-ինչ դառնացած էր և ծանր էր շնչում, այնուամենայնիվ խոսելու ուժ գտավ իր մեջ։— Սակայն հիմա պետք է մտածել, թե Դուք ինչ երաշխիքներ կարող եք տալ Ֆրիդային։ Ինչքան էլ իմ հարգանքը մեծ լինի Ձեր հանդեպ, այնուամենայնիվ, Դուք այստեղ օտար մարդ եք, չեք կարող որևէ մեկին վկայակոչել, իսկ մեզ ոչինչ հայտնի չէ Ձեր ընտանեկան վիճակի մասին։ Երաշխիքներն, այսպիսով, անհրաժեշտ են, և Դուք հասկանում եք դա։ Սիրելի պարոն հողաչափ, ախր ինքներդ նկատեցիք, թե ամուսնական կապի պատճառով ինչքան բան կկորցնի Ֆրիդան։

— Իհարկե։ Երաշխիքներ, անշուշտ, պետք են,— համաձայնեց Կ-ն։— Սակայն, հավանաբար շատ ավելի լավ կլինի, եթե դրանք նոտարի ներկայությամբ տրվեն, ու երևի կոմսի ուրիշ պաշտոնյաներ էլ միջամտեն։ Ի դեպ, ես էլ հարսանիքից առաջ անպայման կատարելու որոշ բաներ ունեմ։ Ես դեռ պետք է Կլամմի հետ խոսեմ։

— Դա անհնար է,— առարկեց Ֆրիդան, մի փոքր բարձրացավ ու սեղմվեց Կ-ին։— Դա ի՞նչ ցանկություն է։

www.a-pdf.com

— Պետք է,— պնդեց Կ-ն։— Եթե ինձ համար անհնար լինի այդ բանն անելը, ապա դու պետք է անես։

— Ես չեմ կարող, չեմ կարող,— ասաց Ֆրիդան։— Կլամմը երբեք չի խոսի քեզ հետ։ Ինչպե՞ս կարող ես մտածել, թե Կլամմը կխոսի քեզ հետ։

— Իսկ քեզ հետ կխոսի՞,— հարցրեց Կ-ն։

— Նույնպես՝ ոչ։ Ոչ ինձ, ոչ քեզ հետ. դրանք հավասարապես անհնար բաներ են։— Նա՝ ձեռքերը տարածած, շուտ եկավ իջևանատիրուհու կողմը։— Տիկին, լսեք միայն, թե նա ինչ է պահանջում։

— Դուք սարսափելի մարդ եք, պարոն հողաչափ,— ասաց իջևանատիրուհին և սարսափաղդու կեցվածքով՝ ոտքերն իրարից հեռու դրած (բարակ շրջազգեստի տակից երևվում էին դուրս ցցված հզոր ծնկները), նայեց ուղիղ։— Դուք անհնարին բան եք պահանջում։

— Իսկ ինչո՞ւ է անհնար,— հետաքրքրվեց Կ-ն։

— Դա ես կբացատրեմ։— Այնպիսի տոնով պատասխանեց իջևանատիրուհին, կարծես նրա բացատրությունը ոչ թե վերջին պատրաստակամությունն էր, այլ առաջին տուգանքը, որ ինքն էր տալու։— Ես դա հանձնարարությամբ կբացատրեմ Ձեզ, թեև դղյակի մարդկանց դասին չեմ պատկանում, սոսկ կին եմ ու այստեղ՝ վերջին կարգի այս իջևանատան տիրուհին։ Իջևանատունը թեև վերջին կարգի չէ, բայց դրանից լավն էլ չէ։ Կարող է պատահել, որ Դուք իմ բացատրությանը այնքան էլ մեծ նշանակություն չտաք, սակայն կյանքում ես միշտ աչքաբաց՝ եմ եղել, շատ մարդկանց եմ հանդիպել ու տնտեսության ողջ ծանրությունն իմ ուսերին եմ կրել, քանի որ ամուսինս թեև լավ տղա է, բայց տնտեսատեր չէ և երբեք չի հասկանա, թե ինչ է պատասխանատվությունը։ Դուք, օրինակ, միայն նրա անուշադրությանը պետք է երախտապարտ լինեք, որ այստեղ եք, այս գյուղում, որ հարմար ու հանդիստ նստել եք այս մահճակալին։ Այդ երեկո ես հոգնածությունից քիչ էր մնում կտոր-կտոր լինեի։

— Ինչպե՞ս թե։— Ցրված վիճակից արթնանալով, հուզ-

www.a-pdf.com

ված, ավելի շուտ հետաքրքրությունից, քան զայրույթից, հարցրեց Կ-ն։

— Միայն նրա անուշադրությանը շնորհակալ եղեք,— ցուցամատը Կ-ին տնկած, մի անգամ ևս բղավեց իջևանատիրուհին. Ֆրիդան փորձում էր հանգստացնել նրան։

— Ի՞նչ ես ուզում,— ամբողջ մարմնով շուռ գալով, հարցրեց իջևանատիրուհին։— Պարոն հողաչափն ինձ հարց տվեց, ես էլ պատասխանելու եմ նրան։ Այլ կերպ նա ինչպե՞ս կարող է հասկանալ այն, ինչ մեզ համար ինքնին հասկանալի է. այն, որ պարոն Կլամմը երբեք չի խոսի իր հետ։ Ի՞նչ եմ ասում, թե չի խոսի, երբեք չի կարող խոսել նրա հետ։ Լսեք, պարոն հողաչափ, պարոն Կլամմը դղյակի մարդկանց դասին է պատկանում, իսկ դա, անկախ Կլամմի սովորական դիրքից, արդեն մեծ պաշտոն է ինքնըստինքյան։ Եվ ո՞վ է Դուք, որ ամուսնության համաձայնություն ստանալու համար այդ աստիճան խեղճանանք Ձեր դիմաց։ Դուք դղյակից չեք, գյուղից չեք, Դուք ոչինչ եք։ Բայց դուք, ցավոք, ինչ-որ բան ներկայացնում եք Ձեզնից։ Դուք օտարական եք, մեկը նրանցից, որ անթիվ-անհամար քանակությամբ հանդիպում են ճանապարհին, մեկը, ում պատճառով միշտ տհաճություններ են լինում, ում պատճառով մարդ ստիպված է իր աղախիններին սենյակից-սենյակ տեղափոխել, մեկը, ում մտադրություններն անհայտ են, մեկը, որ գայթակղել է մեր շատ սիրելի փոքրիկ Ֆրիդային, և ում, ցավոք, ստիպված ենք կնության տալ նրան։ Այս ամենի պատճառով, ես, ճիշտն ասած, բոլորովին չեմ նախատում Ձեզ։ Դուք ինչ որ կաք, այն եք։ Իմ կյանքում չափից դուրս շատ բան եմ տեսել, որ կարողանամ այս մեկին ևս դիմանալ։ Իսկ հիմա պատկերացրեք, թե իսկապես ինչ եք պահանջում։ Կլամմի նման մարդը պետք է Ձեզ հետ խոսի։ Ես ցավով իմացա, որ Ֆրիդան Ձեզ թողել է դիտանցքից նայել Կլամմին։ Հենց այդ պահին, որ նա թույլ տվեց, նա արդեն գայթակղված էր Ձեզնով։ Ասեք, սակայն, ինչպե՞ս դիմացաք Կլամմի տեսքին ընդհանրապես։ Պետք չէ պատասխանել, ես գիտեմ, որ շատ լավ եք դիմացել։ Դուք, ախր, բնավ ի վիճակի չեք տեսնել Կլամմին։ Ես չեմ չափազանցում,

որովհետև ես ինքս ի վիճակի չեմ։ Կլամմը պետք է Ձեզ հետ խոսի։ Բայց նա, ախր, գյուղի մարդկանցից ոչ մեկի հետ չի խոսել։ Ախր Ֆրիդայի համար մեծ պատիվ էր, և ես մինչև կյանքիս վերջը կհպարտանամ դրանով, որ նա գոնե սովորություն ուներ Ֆրիդայի անունը տալ, որ Ֆրիդան ինչպես ուզեր կարող էր նրա հետ խոսել, որ դիտանցքից նայելու թույլտվություն ուներ, բայց Կլամմը երբեք չի խոսել նրա հետ։ Այն, որ Կլամմը մեկ-մեկ կանչում էր Ֆրիդային, չպետք է նշանակի, թե նա հաճույքով էր խոսում նրա հետ։ Նա միայն Ֆրիդա էր կանչում, բայց ո՞վ գիտեր նրա մտադրությունը։ Կանչից անմիջապես հետո ներս մտնելն արդեն Ֆրիդայի գործն էր, իսկ որ նա առանց արգելքների էր ներս մտնում, միայն Կլամմի բարեհաճության շնորհիվ էր։ Եվ չի կարելի պնդել, թե Կլամմը կանչել է նրան։ Իրոք, այն, ինչ եղել է երբևէ, անցավ ընդմիշտ։ Գուցե Կլամմը շարունակի «Ֆրիդա» անունը տալ, հնարավոր է, բայց Ֆրիդան, որ տրրվել է Ձեզ, այլևս հաստատ ներս չի մտնի նրա սենյակը։ Եվ միայն մի բան, մի բան չի մտնում իմ այս խեղճ գլուխը, թե ինչպե՞ս մի աղջիկ, ում մասին ասում էին, թե Կլամմի սիրուհին է, իմիջիայլոց, ես կարծում եմ, որ դա չափազանցություն է, թույլ է տվել, որ Դուք դիպչեք իրեն։

— Իհարկե, դա տարօրինակ է,— ասաց Կ-ն և գիրկն առավ Ֆրիդային, որ, թեև գլուխը կախ, բայց՝ հնազանդվեց։— Սակայն դա ապացուցում է, որ ոչ ամեն ինչ է այնպես, ինչպես Դուք եք կարծում։ Դուք, անշուշտ, իրավացի եք, երբ ասում եք, թե Կլամմի հետ համեմատած ես ոչնչություն եմ։ Իսկ եթե այնուամենայնիվ պահանջեմ Կլամմի հետ խոսել ու թույլ չտամ, որ Ձեր բացատրությունները շեղեն ինձ, ապա դա դեռ չի նշանակի, թե, եթե մեր միջև ոչ մի դուռ չլինի, ես ի վիճակի կլինեմ դիմանալ նրա հայացքին, կամ սենյակից չեմ փախչի միայն նրա հայտնվելուց։ Սակայն, թեկուզև արդարացված, նման վտանգն ինձ համար պատճառ չէ, որ հետ կանգնեմ իմ մտադրությունից։ Եթե ինձ հաջողվի թեկուզ կանգնեցնել նրան, ապա այնքան էլ կարևոր չէ, որ նա ինձ հետ խոսի։ Ինձ համար բավական է, որ ես նրա դեմքին տեսնեմ իմ խոսքերի թողած տպավորությունը, իսկ եթե ոչ մի

www.a-pdf.com

տպավորություն էլ չլինի և նա չլսի էլ իմ ասածները, այնուամենայնիվ, ես շահած կլինեմ, որովհետև անկաշկանդ խոսած կլինեմ մի հզոր անձի հետ։ Իսկ Դուք, տիկին, կյանքի ու մարդկանց մասին Ձեր գիտելիքներով, և Ֆրիդան, որ դեռ երեկ Կլամմի սիրուհին էր (ես ոչ մի պատճառ չեմ տեսնում այս բառից խուսափելու համար), անշուշտ, կարող եք Կլամմի հետ խոսելու առիթ ստեղծել ինձ համար։ Եթե դա ուրիշ ոչ մի կերպ հնարավոր չլինի, ապա ես հյուրանոց կգնամ։ Նա գուցե թե այսօր էլ այնտեղ լինի։

— Անհնար է,— առարկեց իջևանատիրուհին։— Եվ ես տեսնում եմ, որ Դուք զուրկ եք հասկանալու կարողությունից։ Սակայն ասեք՝ ինչի՞ մասին եք ուզում խոսել Կլամմի հետ։

— Իհարկե, Ֆրիդայի մասին։

— Ֆրիդայի՞,— չհասկանալով հարցրեց իջևանատիրուհին ու շուռ եկավ Ֆրիդայի կողմը։— Լսո՞ւմ ես, քո մասին է ուզում խոսել։ Կլամմի հետ ուզում է քո մասին խոսել։

— Էհ, տիկին, Դուք այդքան խելացի, հարգանք ներշնչող կին եք, բայց ամեն մանրուք ահաբեկում է Ձեզ։ Դեհ, ես ուզում եմ նրա հետ խոսել Ֆրիդայի մասին, սակայն դա ոչ այնքան անհրաժեշտ է, որքան՝ ինքնին հասկանալի, քանի որ Դուք հաստատ սխալվում եք, երբ մտածում եք, թե Ֆրիդան՝ սկսած իմ հայտնվելու պահից, Կլամմի համար կորցրել է իր նշանակությունը։ Դուք թերագնահատում եք Կլամմին։ Ես լավ հասկանում եմ, որ իմ կողմից մեծամտություն կլինի, եթե հանկարծ ուզենամ նման բաներ սովորեցնել Ձեզ, սակայն, այնուամենայնիվ, պետք է այդպես վարվեմ։ Իմ պատճառով Կլամմի ու Ֆրիդայի հարաբերության մեջ ոչինչ չի կարող փոխվել։ Ուրեմն նրանց միջև ոչ մի էական կապ չի եղել (ճիշտն ասած, այն մարդիկ են այդպես խոսում, ովքեր չեն ընդունում Ֆրիդային մեծարող սիրուհի անվանումը), և այդ դեպքում այսօր էլ ոչ մի կապ չկա, իսկ եթե կապ եղել է, ինչպե՞ս կարող է իմ պատճառով, ինչպես ճիշտ նկատեցիք Դուք իմ հարցում, թե Կլամմի աչքում պարզապես ոչնչություն եմ, ինչպե՞ս կարող է իմ պատճառով նրանց կապը խզված լինել։ Այդպիսի բաների միայն վախի առաջին ազդեցության տակ են հա-

www.a-pdf.com

գնատում, բավական է մի փոքր խորանալ հարցի էության մեջ, և ամեն ինչ կպարզվի։ Ի դեպ, եկեք թույլ տանք, որ Ֆրիդան էլ իր կարծիքն արտահայտի։

— Մայրիկն ինչ ասաց, իրոք, ճիշտ էր։— Այտը Կ-ի կրծքին հպած, հեռվում թևածող հայացքով, խոսեց Ֆրիդան։— Կլամմն այլևս չի ցանկանա որևէ բան իմանալ իմ մասին, բայց, հավանաբար, ոչ քո պատճառով, սիրելիս։ Քո ներկայությունը չի կարող նրան ահաբեկել։ Սակայն ես կարծում եմ, որ, հավանաբար, նրա շնորհիվ էր, որ մենք վաճառասեղանի տակ գտանք իրար։ Ես չեմ անիծում, այլ օրհնում եմ այդ պահը։

— Եթե այդպես է,— դանդաղ խոսեց Կ-ն, և որովհետև Ֆրիդայի խոսքերը քաղցր էին հնչում, նա մի քանի վայրկյան փակեց աչքերը, որ ավելի երկար վայելեր դրանց նշանակությունը,— եթե այդպես է, ապա Կլամմի հետ բացատրվելուց վախենալու պատճառն ավելի անհիմն է։

— Իրոք որ,— ասաց իջևանատիրուհին ու վերից վար նայեց Կ-ին։— Դուք ինձ երբեմն-երբեմն հիշեցնում եք իմ ամուսնուն. նրա պես համառ եք ու մանկամիտ։ Դուք ընդամենը մի քանի օր եք այստեղ և կարծում եք, թե ամեն ինչ ավելի լավ զիտեք, քան տեղաբնակները, ավելի լավ, քան ես՝ ծեր կինս, և Ֆրիդան, որ հյուրանոցում այդքան շատ բան է տեսել ու լսել։ Ես չեմ ժխտում, որ մի անգամ հնարավոր է ինչ-որ բանի հասնել հակառակ հրահանգներին ու հնոց ավանդույթներին։ Նման բան ես երբեք չեմ տեսել, բայց կարծում եմ, որ այդպիսի դեպքեր եղել են։ Ընդունում եմ, բայց այդ ամենն ախր բնավ էլ այնպես չի կատարվում, ինչպես Դուք եք անում. շարունակ «ոչ, ոչ» եք ասում ու միայն Ձեր խոսքին եք ապավինում, անտեսում եք լավը կամեցող խորհուրդները։ Մի՞թե կարծում եք, թե ես Ձեզ համար եմ անհանգստանում։ Քանի դեռ Դուք մենակ էիք, ես Ձեր մասին մտածո՞ւմ էի։ Թեև ավելի լավ էր մտածեի, որովհետև հնարավոր կլիներ որոշ բաներից խուսափել։ Միակ բանը, որ այն ժամանակ Ձեր մասին ասացի իմ ամուսնուն, հետևյալն էր. «Նրանից հեռու մնա»։ Այս խոսքերն ինձ համար այսօր էլ ճիշտ կհնչեին, եթե Ֆրիդան չներքաշվեր Ձեր

ճակատագրի մեջ։ Անկախ այն բանից՝ Ձեզ դուր կգա, թե՝ ոչ, Դուք նրան եք երախտապարտ իմ հոգատարության, այո, նույնիսկ իմ հարգանքի համար։ Եվ Դուք իրավունք չունեք հենց այնպես մերժել ինձ, որովհետև Դուք ինձ՝ փոքրիկ Ֆրիդային մայրական հոգատարությամբ հսկող միակ մարդն եք պատասխանատու ամեն ինչի համար։ Հնարավոր է, որ Ֆրիդան իրավացի է, և այն ամենը, ինչ կատարվել է, Կլամմի կամքով է, սակայն Կլամմի մասին ես այժմ ոչինչ չգիտեմ։ Ես նրա հետ երբեք չեմ խոսի, նա ինձ համար անհասանելի է բացարձակ։ Դուք, սակայն, նստել եք այստեղ, գրկել եք իմ Ֆրիդային այն դեպքում, երբ, ինչու չասեմ, ես եմ Ձեզ այստեղ պահում։ Այո, ես եմ, որ պահում եմ, որովհետև, երիտասարդ, եթե Ձեզ դուրս անեմ այս տնից, Դուք կփորձեք ապաստան գտնել դյուղում ինչ-որ տեղ, թեկուզև շան բնում։

— Շնորհակալություն անկեղծ խոսքերի համար,— ասաց Կ-ն։— Ես լրիվ հավատում եմ Ձեզ։ Ուրեմն այդ աստիճան անհաստատ է իմ դրությունը և, ինձ հետ կապված՝ նաև Ֆրիդայինը։

— Ո՛չ,— կատաղած բացականչեց իշխանատիրուհին։— Այդ տեսակետից Ֆրիդան ոչ մի անելիք չունի Ձեզ հետ։ Ֆրիդան իմ տան անդամն է, և ոչ ոք իրավունք չունի այստեղ անհաստատ համարել նրա վիճակը։

— Լավ, լավ,— համաձայնեց Կ-ն։— Թող լինի այնպես, ինչպես Դուք եք ասում, առավել ևս, որ Ֆրիդան ինձ համար անհասկանալի պատճառներով չափից դուրս վախենում է Ձեզանից և չի ուզում միջամտել մեր խոսակցությանը։ Եվ այսպես, խոսենք առայժմ միայն իմ մասին։ Իմ վիճակը չափից դուրս անկայուն է, մի բան, որ Դուք չեք ժխտում, այլ չափազանց շատ եք ջանք թափում դա ապացուցելու համար։ Ձեր մյուս ասածների նման՝ սա էլ է մեծ մասամբ ճիշտ, բայց ոչ ամբողջապես։ Օրինակ, ես մի բավական լավ տեղ գիտեմ, որ ազատ է ինձ համար։

— Այդ որտե՞ղ, այդ որտե՞ղ,— միաժամանակ ու այնպիսի կրքով հարցրին Ֆրիդան ու իշխանատիրուհին, կարծես հարցի համար նույն շարժառիթներն ունեին։

www.a-pdf.com

— Բարնաբասենց տանը։

— Թշվառները,— բացականչեց իջևանատիրուհին։— Սինլքոր թշվառներ։ Բարնաբասի մոտ։ Լսո՞ւմ եք։— Նա շուտ եկավ դեպի անկյունը, սակայն օգնականներն արդեն վազուց առաջ էին եկել և թև-թևի կանգնել իջևանատիրուհու թիկունքում, որն այդ պահին, կարծես հենարան փնտրելով, բռնեց նրանցից մեկի ձեռքը։— Լսո՞ւմ եք, թե ուր է ուզում տեղափոխվել պարոնը։ Բարնաբասի տունը։ Հնարավոր է, որ նա ապաստան գտնի այնտեղ։ Ախ, ավելի լավ չէ՞ր լինի, եթե նա այստեղ գիշերած լիներ և ոչ թե հյուրանոցում։ Իսկ դո՞ւք որտեղ էիք։

— Տիկին,— խոսեց Կ-ն, մինչ օգնականների պատասխանելը։— Սրանք իմ օգնականներն են, մինչդեռ Դուք նրանց հետ այնպես եք խոսում, կարծես Ձեր օգնականները լինեն և իմ պահակները։ Մնացյալ բոլոր հարցերում ես պատրաստ եմ շատ քաղաքավարի կերպով վիճարկել Ձեր կարծիքները, սակայն, իմ օգնականների հարցում՝ ոչ, քանի որ այստեղ ամեն ինչ չափազանց պարզ է։ Ես Ձեզ խնդրում եմ հետագայում իմ օգնականների հետ չխոսել և, եթե իմ խնդրանքը բավական չէ, կարգելեմ նրանց պատասխանել Ձեզ։

— Ուրեմն ես Ձեզ հետ խոսելու իրավունք չունեմ,— ասաց իջևանատիրուհին, և երեքով ծիծաղեցին. իջևանատիրուհին՝ ծաղրանքով, բայց շատ ավելի հեզ, քան Կ-ն էր սպասում, օգնականները՝ շատ բան ու ոչինչ չնշանակող, ամեն մի պատասխանատվություն մերժող ծիծաղով։

— Միայն թե մի գայրացիր,— ասաց Ֆրիդան։— Դու պարտավոր ես ճիշտ հասկանալ մեր հուզմունքը։ Եթե ուզում ես իմանալ, ապա մենք միայն Բարնաբասին ենք պարտական, որ այժմ գտել ենք իրար։ Երբ ես առաջին անգամ տեսա քեզ պանդոկում (դու Օլգային թևանցուկ արած նեռս մտար), թեև քո մասին արդեն որոշ բաներ գիտեի, սակայն, ընդհանրապես, անտարբեր էի քո հանդեպ։ Այսինքն, ոչ թե միայն քո հանդեպ էի անտարբեր, այլև համարյա ամեն ինչ, ամեն ինչ անհետաքրքիր էր ինձ համար։ Ախր, ես այն ժամանակ շատ բանից էի դժգոհ, և որոշ բաներ զայրացնում էին ինձ-

www.a-pdf.com

Բայց ի՞նչ դժգոհություն ու զայրույթ էր դա։ Օրինակ, պանդոկի այցելուներից մեկը վիրավորում էր ինձ։ Նրանք, ախր, շարունակ հետևում էին ինձ. դու տեսել ես այնտեղի մարդկանց։ Ավելի զայրացուցիչ բաներ էին լինում. Կլամմի ծառայությունն այդքան էլ սարսափելի չէր։ Ենթադրենք, թե մեկը վիրավորում էր ինձ. ի՞նչ էր դա ինձ համար։ Ինձ թվում էր, թե դա տարիներ առաջ էր կատարվել կամ էլ ինձ հետ չէր կատարվել բնավ. զանազան մարդկանցից եմ իմացել դրանք ու վազուց արդեն մոռացել։ Բայց հիմա ես ոչինչ չեմ կարող նկարագրել, այլևս ոչինչ չեմ կարող պատկերացնել, այն աստիճան որ փոխվել է ամեն ինչ, Կլամմի՝ ինձ լքելուց ի վեր։

Ֆրիդան ընդհատեց իր պատմությունը, տխուր խոնարհեց գլուխը և ձեռքերը ծալած դրեց գիրկը։

— Տեսնո՞ւմ եք,— այնպես բացականչեց իջևանատիրուհին, կարծես ոչ թե ինքն էր խոսում, այլ Ֆրիդան էր փոխառել նրա ձայնը։ Միաժամանակ նա առաջ շարժվեց ու ավելի մոտ նստեց Ֆրիդային։— Պարոն հողաչափ, այժմ տեսնո՞ւմ եք Ձեր արարքների հետևանքները։ Թող Ձեր օգնականներն էլ (որոնց հետ ես խոսելու իրավունք չունեմ) նայեն, որ Դուք դաս քաղեք այս ամենից։ Ֆրիդան պանդոկում երջանիկ էր, բայց Դուք պոկեցիք նրան այդ միջավայրից, և դա ամենից առաջ այն պատճառով հաջողվեց Ձեզ, որ Ֆրիդան՝ իր մանկական բնավորության պատճառով չափազանցելով Ձեր հանդեպ ունեցած կարեկցանքը, չէր կարողացել հանդուրժել, որ Դուք թև-թևի շրջեիք Օլգայի հետ ու այդպես ընկնեիք Բարնաբասի ընտանիքի ձեռքը։ Նա փրկել է Ձեզ, բայց զոհել է իր անձը։ Եվ այժմ, քանի որ այլևս ոչինչ հնարավոր չէ փոխել, Ֆրիդան ամեն ինչ փոխանակել է Ձեր օնկին նստած լինելու երջանկության հետ, այժմ հանդիսանում եք դալիս Դուք և որպես հաղթաթուղթ մատուցում այն, որ երբևէ Բարնաբասի տանը դիշերելու թույլտվություն եք ունեցել։ Դրանով, հավանաբար, ուզում եք ապացուցել, որ կախում չունեք ինձնից։ Ինչ խոսք, եթե Դուք Բարնաբասի մոտ դիշերած լինեիք, այն աստիճան անկախ կլինեիք ինձնից, որ կկարողանայիք մի ակնթարթում անհասպաղ աղատած լինել այս տունը։

www.a-pdf.com

— Ես Բարնաբասենց տան արատներին անծանոթ եմ,— ասաց Կ-ն, զգուշորեն բարձրացրեց գլխակի ապավորություն թողնող Ֆրիդային, դանդաղ նստեցրեց մահճակալին ու ինքը ևս վեր կացավ։— Գուցե այդ հարցում Դուք իրավացի լինեք, բայց վստահ եմ, որ ես էի իրավացի, երբ խնդրում էի մեր գործերը՝ Ֆրիդայինը և իմը, թողնել միայն մեր երկուսին։ **Խոսքի մեջ Դուք սիրո, հոգատարության մասին ինչ-որ բան** հիշատակեցիք, մի բան, սակայն, որ ես այնքան էլ չնկատեցի։ Ձեր խոսքերում թերևս ավելի շատ ատելություն, ծաղրանք ու արտաքսման սպառնալիք կար։ Եթե Ձեր նպատակը Ֆրիդային ինձնից կամ ինձ Ֆրիդայից հեռացնելն է, ապա այդ քայլը շատ ճարպիկ է մտածված, սակայն կարծում եմ, որ Ձեզ ոչինչ չի հաջողվի, և եթե անգամ հաջողվի էլ, ապա դրա համար (այդ հարցում ինձ մի մշուշոտ սպառնալիք թույլ տվեցիք) շատ կզղջաք։ Իսկ ինչ ինձ տրամադրված բնակարանին է վերաբերում (բնակարան ասելով երևի միայն այս զբաղվելի ծակուռը նկատի ունեք), ապա այնքան էլ վստահ չեմ, որ Դուք Ձեր բարի կամքով եք դա անում։ Ինձ ավելի շուտ թվում է, թե կոմսի դրասենյակից եկած որևէ ցուցում է իշխում այս հարցում։ Ես կղեկուցեմ նրանց, որ ինձ ուզում են այստեղից վտարել, և, եթե ինձ ուրիշ բնակարան հատկացնեն, Դուք, հավանաբար, հանգիստ շունչ կքաշեք, իսկ ես՝ ավելի։ Այժմ, սակայն, այդ և ուրիշ հարցերով ես կգնամ համայնքի ավագի մոտ։ Խնդրում եմ գոնե այդ ընթացքում հոգ տարեք Ֆրիդայի մասին, որին Դուք Ձեր, այսպես ասած, մայրական խրատներով բավական վատ եք տրամադրել իմ հանդեպ։

Ապա շուռ եկավ օգնականների կողմը։

— Գնացինք,— կարգադրեց նա, մեխից վերցրեց Կլամմի նամակն ու ցանկացավ դուրս ելնել։ Իջևանատիրուհին անխոս հետևում էր նրան, և երբ Կ-ն ձեռքը դռան բռնակին դրեց, ասաց.

— Պարոն հոդաչափ, ես մի բան էլ կասեմ Ձեր գնալուց առաջ, որովհետև ինչ էլ որ ասելու լինեք, ինչքան էլ որ ինձ՝ ծեր կնոջս, վիրավորել ցանկանաք, միևնույն է, Դուք, ախր, Ֆրիդայի ապագա ամուսինն եք։ Միայն այդ պատճառով եմ

www.a-pdf.com

Ձեզ ասում, որ Դուք այստեղի կյանքին՝ մարդկանց հարաբերությունների տեսակետից, բոլորովին անտեղյակ եք։ Մարդու գլուխ է պտտվում, երբ լսում է Ձեզ և երբ Ձեր խոսքերն ու կարծիքները մտովի համեմատում է իրականության հետ։ Այդ անտեղյակությունը միանգամից հնարավոր չէ վերափոխել, թերևս, շատ բան ավելի լավ կլինի, եթե ինձ հավատաք ու Ձեր անտեղյակությունը շարունակ աչքի առաջ ունենաք։ Այդ դեպքում Դուք ավելի արդարամիտ կլինեք և կպատկերացնեք, թե ես ինչպիսի սարսափ ապրեցի (իսկ սարսափի հետևանքները դեռ մնում են), երբ իմացա, որ իմ սիրելի փոքրիկը արժվին թողել է, որ օձակերպ մոդեսին միանա։ Իրականում վիճակն ավելի վատ է, և ես ստիպված եմ անընդհատ փորձել մոռանալ կատարվածը, հակառակ դեպքում չէի կարողանա Ձեզ հետ զոնե մի բառ իսկ փոխանակել։ Ահա, Դուք նորից եք զայրանում։ Ոչ, դեռ մի գնացեք, միայն այս մի խնդրանքը լսեք. ուր էլ որ գնալու լինեք, մի բան լավ իմացեք, որ Դուք այստեղ ամենաանտեղյակ մարդն եք, և զգույշ եղեք։ Այստեղ, ուր Ֆրիդայի ներկայությունն է Ձեզ պաշտպանում ամեն վտանգից, կարող եք Ձեր սիրտը բացել, այստեղ Դուք կարող եք մեզ ցույց տալ, թե ինչպես եք մտադիր խոսել Կլամմի հետ, բայց իրականում, իրականում, խնդրում եմ, մի արեք։

Իջևանատիրուհին վեր կացավ, հուզմունքից փոքր-ինչ ճոճվելով մոտեցավ Կ-ին, բռնեց նրա ձեռքը և, խնդրանքը հայացքում՝ նայեց Կ-ին։

— Տիկին, ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք նվաստանում ու խնդրում ինձ։ Եթե ինձ համար, ինչպես Դուք ասացիք, անհնար է Կլամմի հետ խոսելը, ապա ես, երևի, չկարողանամ հասնել դրան, անկախ այն բանից՝ ինձ խնդրում են, թե՝ ոչ։ Սակայն, եթե դա հնարավոր լիներ, ապա ինչո՞ւ չպետք է այդ բանն անեի, առավել ևս, որ Ձեր հիմնական առարկությունը վերանալու դեպքում մյուս ահաբեկումներն ևս հարցականի տակ են ընկնում։ Գուցե ես անտեղյակ մարդ եմ, սակայն ամեն դեպքում ճշմարտությունն այդ է, իսկ դա՝ ինձ համար շատ տխուր է։ Բայց, ախր, դա էլ իր առավելու-

www.a-pdf.com

թյունն ունի. անտեղյակ մարդն ավելի շատ բանի է համարձակվում, այդ պատճառով ես հաճույքով համաձայնում եմ պահպանել իմ անտեղյակությունը և ուզում եմ դրա տխուր հետևանքները կրել այնքան, ինչքան կբավականացնեն ուժերս։ Ախր այդ հետևանքները հիմնականում միայն ինձ են առնչվում, և այդ է պատճառը, որ ես չեմ հասկանում, թե ինչու եք ինձ խնդրում։ Ֆրիդայի մասին Դուք, անշուշտ, միշտ էլ հոգ կտանեք, և եթե ես ընդմիշտ անհետանամ նրա տեսադաշտից, Ձեր կարծիքով դա կարող է միայն բախտավորություն լինել։ Ուրեմն, ինչի՞ց եք վախենում։ Արդյո՞ք Դուք (անտեղյակ մարդուն ամեն ինչ հնարավոր է թվում),— խոսելու ընթացքում նա բացեց դուռը,— արդյո՞ք Դուք Կլամմի համար չեք վախենում։

Իջևանատիրուհին լուռ նայեց, թե Կ-ն ինչպես էր ոստիճաններով ներքև շտապում. օգնականները հետևեցին նրան։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կ-ն զարմացավ, որ նախագահի հետ ունեցած խոսակցությունը նամարյա ոչ մի դժվարություն չհարուցեց։ Նա փորձեց դա բացատրել նրանով, որ ձեռք բերած փորձի շնորհիվ գյուղի իշխանությունների հետ պաշտոնական հաղորդակցությունն իր համար շատ է հեշտացել։ Մի կողմից դրա պատճառն այն էր, որ Կ-ի գործի առնչությամբ վերջնականապես որոշված, նրա համար շափազանց շահավետ սկզբունք էր Ֆեռմարվիլ, մյուս կողմից՝ պատճառը իշխանությունների ծառայությունն գարմանալի միասնականությունն էր, ծառայություն, որ կատարյալ էր թվում հատկապես այնտեղ, ուր երևում էր թե ոչինչ չկար։ Նման բաների մասին երբեմն մտածելիս Կ-ն այնքան էլ հեռու չէր լինում իր վիճակը բարվոք համարելուց, թեև հաճելի զգացում ունենալու պահին նա անմիջապես զգուշացնում էր ինքն իրեն, որ ողջ վտանգը հենց դրանում է։

Իշխանությունների հետ անմիջական հաղորդակցությունն

www.a-pdf.com

այնքան էլ ծանր չէր, քանի որ, ինչքան էլ նրանց աշխատանքը կազմակերպված լիներ, նրանք, միևնույն է, պետք է հեռվում գտնվող անտեսանելի պարոնների անունից հեռավոր, աներևույթ գործեր պաշտպանեին շարունակ։ Մինչդեռ Կ-ն շատ մոտ գտնվող, կենդանի ինչ-որ բանի համար էր պայքարում՝ ինքն իր համար և, բացի այդ, գոնե սկզբնական շրջանում պայքարում էր իր իսկ կամքով, որովհետև ինքը հարձակվող կողմն էր, և միայն ինքը չէր իր համար պայքարում, այլ, ինչպես պարզ երևում էր, ուրիշ ուժեր էլ էին գործում, որոնց ինքը դեռ չէր տեսնում, բայց որոնց առկայությունը՝ իշխանությունների ձեռնարկած միջոցառումներից եզրակացնելով, կարելի էր ենթադրել։ Բայց որ իշխանությունները մանր-մունր հարցերում մինչև այժմ պատրաստակամությամբ էին ընդառաջում նրան (ուրիշ բաների մասին առայժմ չէր խոսվել), դրանով բացատրում էին հեշտ սրվող փոքր հաղթանակների հնարավորությունը, այդ հնարավորության հետ մեկտեղ՝ դրա պատճառելիք բավարարվածության զգացումն ու այս բավարարվածության ծնունդ հետադա, ավելի մեծ պայքարի համար անհրաժեշտ, լավ հիմնավորված վստահությունը։ Փոխարենը նրանք թողնում էին, որ նա՝ թեկուզև գյուղի սահմաններում, իր ուզած ծակուծուկերը մտնի, դրանով շփացնում էին նրան, թուլացնում, ընդհանրապես բացառում ամեն մի պայքար և դրա փոխարեն նրան պարտադրում պաշտոնական հարաբերություններին խորթ, բացարձակ անհայտ, մռայլ ու անծանոթ կյանք։ Եթե նա շարունակ զգույշ չլիներ, ապա, չնայած պաշտոնյաների սիրալիրությանն ու շափազանց հեշտ պարտականությունների անմնացորդ կատարմանը, մի օր կարող էր այնպես ստացվել, որ, իրեն ցույց տրված թվացյալ բարեհաճությունից խաբված, որևէ սխալ թույլ տար կյանքում ու ձախողվեր, իսկ իշխանությունները՝ առաջվա պես հեզաբարո և բարեկամաբար, իհարկե, անկախ իրենց կամքից, հանդես գային նրան անծանոթ հասարակական կարգի անունից, որպեսզի ճամփից հեռացնեին նրան։ Իսկ իրականում այստեղ իրենից ի՞նչ էր ներկայացնում կյանքը։ Դեռ ոչ մի տեղ Կ-ն կյանքն ու ծառայությունը այդ աստիճան միահյուսված չէր տեսել, ինչպես

www.a-pdf.com

այստեղ, այն աստիճան միահյուսված, որ երբեմն կարող էր թվալ, թե դրանք փոխել են իրենց տեղերը։ Օրինակ, ի՞նչ էր Կլամմի՝ Կ-ի ծառայության վրա մինչ այսօր գործադրած ազդեցությունը, համեմատած այն ազդեցության հետ, որն իրականում ուներ Կլամմը Կ-ի ննջասենյակում։ Այնպես էր ստացվում, որ այստեղի իշխանությունների հանդեպ ընդունված էր փոքր-ինչ թեթևամիտ վարքն ու առկա լարվածության որոշակի թուլացումը, այն դեպքում, երբ ընդհանրապես անհրաժեշտ էր մեծ զգուշություն և հարկավոր էր ամեն քայլափոխի՝ նայել շորսբոլորը։

Այստեղի պաշտոնյաների մասին Կ-ի ունեցած պատկերացումները սկզբում նախագահի մոտ հաստատվեցին։ Նախագահը՝ մեղմաբարո, հաստլիկ, մաքուր սափրված մի մարդ, հիվանդ էր, հոդատապի ծանր նոպա էր տանում ու Կ-ին ընդունեց մահճակալում պառկած։

— Ուրեմն Դո՞ւք եք մեր պարոն հողաչափը,— ասաց նա, ողջունելու համար ցանկացավ ուղղվել, սակայն ի վիճակի չեղավ և, ներողություն խնդրող հայացքով ոտքերը ցույց տալով, նորից հետ ընկավ բարձերին։ Փոքր պատուհաններ ունեցող ու դեռ իջեցված վարագույրներով ավելի մթնեցված ննջակի կիսախավարի մեջ լուռ, շարժվող ստվեր հիշեցնող կինը աթոռ բերեց Կ-ի համար և դրեց մահճակալի մոտ։

— Նստեք, նստե՛ք, պարոն հողաչափ,— խոսեց նախագահը։— Նստեք և ինձ ասեք, թե ինչ ցանկություն ունեք։

Կ-ն ընթերցեց Կլամմի նամակն ու հայտնեց իր դիտողությունները։ Նրան նորից համակեց պաշտոնյաների հետ շփվելու արտակարգ հեշտության զգացումը։ Նրանք, իրոք, ստանձնում էին ամեն մի դժվարություն, կարելի էր ամեն ինչ հանձնարարել նրանց, անձամբ ազատ մնալ ու ոչ մի բանի հետ գործ չունենալ։ Ըստ երևույթին, իր հերթին էլ նախագահն զգաց այդ բանը և դժկամությամբ շուռ եկավ անկողնում։

— Պարոն հողաչափ, ինչպես ինքներդ նկատեցիք, ես գիտեի ողջ գործի մասին,— վերջապես խոսեց նա։— Իսկ որ առայժմ ոչինչ չեմ կարգադրել, իր պատճառներն ունի. նախ հիվանդությանս հետ կապված, և հետո, Դուք այդքան ժամա-

www.a-pdf.com

նակ չեիք գալիս, ես էլ մտածում էի, թե Դուք հրաժարվել եք գործից։ Այժմ, քանի որ այդքան բարի եղաք ինքներդ ինձ գտնել, ես, հավանաբար, ողջ տհաճ ճշմարտությունը պետք է ասեմ Ձեզ։ Դուք, ինչպես ինքներդ ասացիք, ընդունվել եք որպես հողաչափ, սակայն, ցավոք, մենք ոչ մի հողաչափի կարիք չունենք։ Ձեզ համար այստեղ նույնիսկ աննշան աշխատանք իսկ չկա։ Մեր փոքր տնտեսությունների սահմանները բաշխված են, ամեն ինչ կանոնավոր կերպով հաշվառված է։ Կալվածքների փոխանակում հազվադեպ է պատահում, իսկ սահմանների վերաբերյալ չնչին վեճերը ինքներս ենք հարթում։ Հետևաբար, մեր ինչի՞ն է պետք հողաչափը։

Կ-ն՝ առանց ավելի վաղ այդ մասին մտածած լինելու, ներքուստ համոզված էր, որ նման մի պատասխան է սպասում իրեն։ Թերևս դա էր պատճառը, որ նա կարողացավ իսկույն պատասխանել։

— Դա ինձ համար շատ մեծ անակնկալ է և իմ բոլոր հաշվարկները հողին է հավասարեցնում։ Ես միայն կարող եմ հուսալ, որ թյուրիմացություն է տեղի ունեցել։

— Ցավոք՝ ոչ,— տարակեց նախագահը,— ամեն ինչ իմ ասածի պես է։

— Բայց ինչպե՞ս կարող է պատահել,— բղավեց Կ-ն։— Ախր, ես այսքան համփան չունի՝ ինձ հետ ուղարկեն։

— Դա արդեն ուրիշ հարց է և իմ իրավասությունից դուրս,— ասաց նախագահը։— Իսկ թե ինչպես է այդ թյուրիմացությունը հնարավոր դարձել, կարող եմ, համենայնդեպս, բացատրել Ձեզ։ Այնպիսի մեծ տիրույթում, ինչպիսին կոմսինն է, երբեմն կարող է այնպես լինել, որ մի բաժանմունքը մի բան կարգադրի, իսկ մյուսը՝ մի ուրիշ բան։ Ոչ մեկը մյուսի գործերից տեղյակ չէ, ու թեև վերադասի հսկողությունը ծայրաստիճան ճշգրիտ է, սակայն իր բնույթին համապատասխան՝ շատ ուշ է վրա հասնում, իսկ այդպես միշտ էլ կարող է մի փոքր շփոթություն առաջանալ։ Դրանք, հավանաբար, այնպիսի չնչին մանրուքներ են, ինչպես, օրինակ, Ձեզ հետ կապված դեպքն է։ Ավելի կարևոր գործերում ինձ դեռ ոչ մի սխալմունք հայտնի չէ, մինչդեռ մանր-մունր գործերը հաճախ

բավական շատ են։ Ինչ վերաբերում է Ձեր գործին, ապա առանց կրաանեյակային գաղտնիքներ ստեղծելու (այդ հարցում ես մինչև ուղնուծուծս պաշտոնյա չեմ, գյուղացի եմ եղել, գյուղացի էլ մնում եմ), ուզում եմ պարզ պատմել դեպքերի ընթացքը։ Այդ պատմությունը վաղուց է սկսվել, ես այն ժամանակ նոր մի քանի ամիս էր, ինչ նախագահ էի աշխատում և մի կարգադրություն ստացա (այժմ չեմ էլ հիշում, թե որ բաժանմունքից), ուր այնտեղ նստող պարոններին բնորոշ խստությամբ հայտնվում էր, թե պետք է հոդաշարի կանչել, և նրա աշխատանքների համար անհրաժեշտ բոլոր նախագծերի ու ծրագրերի պատրաստումը հանձնարարվեց համայնքին։ Այդ կարգադրությունն, իհարկե, Ձեզ հետ ոչինչ ընդհանուր չուներ, քանի որ շատ տարիներ առաջ է եղել, և ես այդ մասին չէի էլ հիշի, եթե այս պահին հիվանդ չլինեի և, անկողնում պառկած՝ զավեշտական տարբեր բաների մասին մտածելու բավական ժամանակ չունենայի։ Մի՞ցի։— Պատմությունը հանկարծ ընդհատելով դիմեց նա անհասկանալի կործով զբաղված, սենյակում շարունակ այս ուսայնկողմ քայլող կնոջը։— Խնդրում եմ, նայիր պահարանում, գուցե գտնես կարգադրությունը։ Ճիշտն ասած, այդ կարգադրությունը առնչվում է իմ աշխատանքների սկզբին, իսկ ես այն ժամանակ ամեն ինչ պահում էի։— Կ-ին բացատրեց նա։

Կինն իսկույն բացեց պահարանը, Կ-ն ու նախագահը նայեցին նրա կողմը։ Պահարանը լիքը խցկված էր թղթերով։ Բացելիս վառելափայտի նման օղակաձև կապված թղթերի երկու կապոց գլորվեց ներքև։ Կինը սարսափահար կողքի ցատկեց։

— Ներքևում պետք է լինի, ներքևում։— Անկողնուց ցույց տվեց նախագահը։ Կինը, երկու ձեռքով բռնելով փաստաթղթերի կապոցները, հնազանդ դուրս թափեց պահարանի պարունակությունը, որ հասնի ներքևի թղթերին։ Թղթերը լցրել էին սենյակի համարյա կեսը։

— Մեծ ծավալի աշխատանք եմ կատարել,— գլխով անելով, ասաց նախագահը։— Մինչդեռ սա թղթերի միայն փոքր մասն է։ Հիմնական մասը դարսել եմ մառանում, իսկ ամե-

www.a-pdf.com

նամեծ մասը կորել է։ Ո՞վ կարող էր այդ ամենը պահպանել։ Մառանում եղածը սրանից ավելի շատ է։ Դու կկարողանա՞ս գտնել,— կրկին դիմեց նա կնոջը։— Այն փաստաթուղթը փնտրիր, որի վրա կապույտ գույնով ընդգծված է «Հողաչափ» բառը։

— Այստեղ շատ մութ է, գնամ մոմ բերեմ,— ասաց կինը և, թղթերի վրայով քայլելով, դուրս եկավ սենյակից։

— Գրասենյակային այս ծանր աշխատանքում, որ պետք էր մյուսների հետ մեկտեղ անել, կինս իմ աջ թևն է,— ասաց նախագահը։— Թեև գրագրության համար մի օգնական էլ ունեմ՝ ուսուցիչը, բայց միևնույն է, այս գործը վերջացնելն անհնար է. դեռ կան կիսատ գործեր։ Դրանք այն սնդուկի մեջ են դասավորված։— Նա մի ուրիշ պահարան ցույց տվեց։— Իսկ այժմ, երբ ես հիվանդ եմ, գործը պարզապես խեղճացնում է,— ասաց նա և հոգնած, բայց՝ հպարտ, հետ ընկավ բարձերին։

— Արդյոք չէի՞ կարող օգնել Ձեր կնոջը,— առաջարկեց Կ-ն, երբ նախագահի կինը մոմը ձեռքին ներս մտավ և, սնդուկի մոտ ծնկի գալով, շարունակեց փնտրտուքը։ Նախագահը ժպտալով օրորեց գլուխը։

— Ինչպես սկզբում ասացի, ես ոչ մի պաշտոնական գաղտնիք չունեմ Ձեզնից,— ասաց նա։— Բայց որ չեմ տամ փաստաթղթերը նայել, նման բան չեմ կարող համարձակվել։

Սենյակում լռություն տիրեց, միայն թղթերի խշխշոցն էր լսվում։ Նախագահը հավանաբար թեթևակի նիրհեց։ Դռան անցքի թակոցը Կ-ին ստիպեց շրջվել. իհարկե, օգնականներն էին։ Նրանք, ինչպես երևում էր, այնուամենայնիվ փոքր-ինչ դաստիարակվել էին, անմիջապես սենյակ չխուժեցին, այլ դուռը մի փոքր բացելով, ճեղքից շշնջացին.

— Դրսում շատ ցուրտ է։ Մրսում ենք։

— Այդ ո՞վ է։— Ցնցվելով արթնացավ նախագահը։

— Իմ օգնականներն են։ Ես չգիտեմ, թե որտեղ թողնեմ նրանց։ Դրսում ցուրտ է, իսկ այստեղ կզգվեցնեն մեզ։

— Նրանք ինձ չեն խանգարի,— բարեհոգությամբ ասաց նախագահը։— Թույլ տվեք, թող ներս գան։ Իմիջիայլոց, ես նրանց ճանաչում եմ. հին ծանոթներ են։

www.a-pdf.com

— Իսկ ինձ նրանք զզվեցնում են,— անկեղծորեն խոստովանեց Կ-ն։ Նրա հայացքը օգնականներից սահեց նախագահի կողմը, հետո՝ նորից օգնականների, և նրան թվաց, թե բոլոր երեքն էլ նույն, իրարից չտարբերվող ժպիտն ունեն։

— Դե, քանի որ ներս եք եկել,— տատանվելով համաձայնեց Կ-ն,— մնացեք ու օգնեք նախագահի կնոջը գտնել այն փաստաթուղթը, որի վրա կապույտով ընդգծված է «հողաշափ» բառը։

Նախագահը չառարկեց. ինչ արգելվում էր Կ-ին, թույլատրվում էր օգնականներին։ Նրանք իսկույն նետվեցին թղթերի կողմը, սակայն ավելի շուտ քշջում էին կույտը, քան փնտրում, և երբ նրանցից մեկը հեգելով որևէ գրություն էր կարդում, մյուսն այն միշտ խլում էր կարդացողի ձեռքից։ Ի տարբերություն նրանց, կինը ծնկի էր եկել դատարկ սընդուկի մոտ ու երևի դադարել թուղթը փնտրելուց, որովհետև մոմը նրանից շատ հեռու էր դրված։

— Օգնականներն, ուրեմն, զզվեցնում են Ձեզ։ Բայց նրանք, ախր, Ձեր սեփական օգնականներն են։—Ինքնագոհ ժպիտով, կարծես այստեղ ամեն ինչ իր կարգադրությամբ էր ընթանում, մինչդեռ ոչ ոք նույնիսկ ի վիճակի չէր դա ենթադրել, խոսեց նախագահը։

— Ոչ,— սառը առարկեց Կ-ն։— Նրանց այստեղ են տրամադրել ինձ։

— Ինչպե՞ս թե։— Զարմացավ նախագահը։— Հավանաբար ուզում էիք ասել, թե նրանց օգնական են նշանակել։

— Ինչպես ասեմ. նշանակել։ Նույն հաջողությամբ նրանք կարող էին լուսնից իջնել։ Սրանց նշանակումն այնքան անմտածված է։

— Այստեղ ոչ մի անմտածված բան չի կատարվում,— ասաց նախագահը. նա նույնիսկ ոտքի ցավը մոռացավ և ուղիղ նստեց անկողնում։

— Ոչի՞նչ։ Իսկ ինձ այստեղ կանչող փաստաթո՞ւղթը,— հարցրեց Կ-ն։

— Ինչ խոսք, Ձեզ էլ են լավ կշռադատելուց հետո կանչել, միայն թե խանգարող հանգամանքների պատճառով

www.a-pdf.com

խառնաշփոթություն է առաջացել։ Ես հիմա փաստաթղթի օգնությամբ կբացատրեմ դա։

— Փաստաթուղթը չի գտնվի։

— Չի՞ գտնվի,— բացականչեց նախագահը։— Միացի, խնդրում եմ, մի փոքր արագ փնտրիր։ Ես այդ պատմությունը կարող եմ առանց փաստաթղթի էլ պատմել։ Մեզ ուղարկված կարգադրության մասին խոսել եմ արդեն։ Մենք, շնորհակալություն հայտնելով, պատասխանեցինք, որ ոչ մի հողաչափի կարիք չունենք։ Սակայն մեր պատասխանը երևի առաջին բաժանմունքին (Ա բաժանմունք անվանենք) չէր հասել, այլ սխալմամբ ընկել էր ուրիշ՝ Բ բաժանմունք։ Այսպիսով, ուրեմն, Ա բաժանմունքը անպատասխան մնաց, իսկ Բ բաժանմունքը, ցավոք, մեր պատասխանն ամբողջությամբ չստացավ։ Այդ թղթապանակի պարունակությունը մեզ մո՞տ էր մնացել, թե ճանապարհին կորել, չգիտեմ (այն, որ բաժանմունքում չէր կորել, դրա համար ես կարող եմ երաշխավորել), հետևաբար Բ բաժանմունք հասել էր միայն թղթապանակի կազմը, ուր գրված էր, թե թղթապանակի պարունակությունը, որ կորել էր ցավոք, առնչվում է հողաչափ հրավիրելու խնդրին։ Այդ ընթացքում Ա բաժանմունքը սպասում էր մեր պատասխանին, ու թեև այնտեղ նշումներ կային գործի վերաբերյալ, բայց, ինչպես հաճախ է տեղի ունենում հատակ տարվող գործավարության ժամանակ, Ա բաժանմունքի պաշտոնյան ապավինում էր մեր պատասխանին, որ հետո կա՛մ հողաչափ կանչեր, կա՛մ էլ ըստ անհրաժեշտության շարունակեր թղթակցել մեզ հետ։ Այդ պատճառով նա անուշադրության մատնեց իր գրառումներն ու ամեն ինչ շուտով մոռացավ։

Բ բաժանմունքում, սակայն, թղթապանակի կազմը ընկնում է իր բարեխիղճ աշխատանքով հայտնի մի պաշտոնյայի ձեռքը։ Նրա ազգանունը Սորդինի է, իտալացի է։ Նույնիսկ ինձ՝ լավատեղյակ մարդուս համար անհասկանալի է, թե ինչու է նրա ունակությունների տեր մարդը մնացել համարյա ենթակա պաշտոնում։ Այս Սորդինին, իհարկե, թղթապանակի պարունակությունը լրացնելու համար մեզ է ուղարկում կազմը։ Այդ ընթացքում Ա բաժանմունքից առաջին գրու-

www.a-pdf.com

թյունն ստանալուց մի քանի ամիս, եթե ոչ տարի էր անցել. Ինքնին հասկանալի է, որ երբ փաստաթուղթը ճիշտ հասցեով է ուղարկվում, ապա, որպես օրենք, ամենաշատը մի օրից հասնում է հասցեատիրոջը և նույն օրն էլ գործին ընթացք է տրվում, իսկ երբ փաստաթուղթը սխալ հասցեով է ուղարկվում (իսկ աշխատանքների անթերի կազմակերպվածությամբ աչքի ընկած գրասենյակում պետք է հատուկ ջանքեր գործադրել, որ գործն ուրիշ հասցեով չգնա. այլ կերպ անհնար է), ապա այդ դեպքում, իսկապես, շատ երկար է տևում։ Երբ հետո ստացանք Սորդինիի գրությունը, արդեն գործի էությունը այնքան էլ հստակ չէինք կարող հիշել։ Այն ժամանակ մենք երկուսով էինք աշխատում՝ ես ու Միցցին, ուսուցիչը դեռ իմ տրամադրության տակ չէր։ Մենք միայն ամենակարևոր գործերի պատճեններն էինք պահում, այնպես որ կարող էինք միայն անորոշ պատասխանել, թե այդպիսի կարգադրության մասին ոչինչ չգիտենք ու մեզ մոտ ոչ մի հողաչափի անհրաժեշտություն չկա։

— Բայց։— Նախագահն ընդհատեց խոսքը, կարծես պատմելով տարված՝ շատ էր առաջ գնացել կամ էլ հնարավոր էր, որ շատ առաջ գնար։— Պատմությունը Ձեզ չի՞ ձանձրացնում։

— Ոչ, հետաքրքիր է,— ասաց Կ-ն։

— Ես Ձեզ զբաղեցնելու համար չեմ պատմում,— ի պատասխան վրա բերեց նախագահը։

— Դա ինձ այնքանով է զբաղեցնում, որ ինձ պատկերացում կազմել է տալիս այդ ծիծաղելի խառնաշփոթի մասին. հանգամանքների բերումով դա մարդու լինել-չլինելն է որոշում,— բացատրեց Կ-ն։

— Դուք դեռ ոչ մի պատկերացում չեք կազմել,— լուրջ ասաց նախագահը։— Եվ ես կարող եմ շարունակել իմ պատմությունը։ Մեր պատասխանից Սորդինին, իհարկե, գոհ չէր։ Այդ մարդն ինձ հիացնում է, թեև նա ինձ համար կատարյալ տանջանք է։ Նա կասկածանքով է վերաբերվում յուրաքանչյուր մարդու նույնիսկ այն դեպքում, երբ խոսքն, օրինակ, ինչ-որ մեկի մասին է, ում անթիվ-անհամար առիթներով ճանաչել է որպես ամենաարժանահավատ մարդ։ Կաս-

www.a-pdf.com

կածում է նրան հաջորդ իսկ առիթով, կարծես բոլորովին չի ճանաչել կամ, ավելի ճիշտ, կարծես որպես սրիկա է ճանաչել նրան։ Ես դա ճիշտ եմ համարում. պաշտոնյան այդպես պետք է վարվի։ Սակայն երևի իմ բնավորությունն է պատճառը, որ չեմ կարողանում հետևել այդ կարևոր սկզբունքին։ Ախր Դուք ինքներդ եք տեսնում, թե ինչպես Ձեզ՝ օտարականիդ, ամեն ինչ ներկայացնում եմ առանց թաքցնելու։ Ի դեպ, ես այլ կերպ չեմ կարող։

Ի տարբերություն ինձ, Սորդինին անմիջապես կասկածեց մեր պատասխանին և դրանից հետո լայն թղթակցություն ծավալվեց։ Սորդինին հարցնում էր, թե այդ ինչո՞ւ հանկարծ մտածեցի, որ հողաչափ չպետք է կանչվի։ Միցցիի հիանալի հիշողությանն ապավինելով՝ ես պատասխանեցի, որ սկզբում այդ հարցը արծարծվել է՝ կապված գրասենյակի հետ, իսկ որ խոսքն արդեն ուրիշ բաժանմունքի մասին էր, մենք, իհարկե, այլևս վազուց էինք մոռացել։ Իր հերթին Սորդինին հարցրեց, թե ինչո՞ւ եմ ես պաշտոնական գրության մասին միայն այժմ խոսում, ես՝ որովհետև միայն այժմ եմ դրա մասին հիշել, Սորդինին՝ դա շատ տարօրինակ է, ես՝ այդքան երկար տևած գործի համար այնքան էլ տարօրինակ չէ, Սորդինին՝ դա, ախր, տարօրինակ է, որովհետև իմ հիշատակած գրությունը գոյություն չունի, ես՝ իհարկե գոյություն չունի, որովհետև թղթապանակն է ամբողջությամբ կորել, Սորդինին՝ առաջին գրության վերաբերյալ որևէ գրառում, նշում, ինչ խոսք, պետք է լինի, որը, սակայն, չկա։

Այդտեղ արդեն ես կապ ընկա, քանի որ ո՛չ համարձակվում էի պնդել, թե սխալը Սորդինիի բաժանմունքում է տեղի ունեցել, ո՛չ էլ կարող էի նման բան մտածել։ Պարոն հողաչափ, Դուք մտովի հավանաբար նախատում եք Սորդինիին, որ հիմք ընդունելով իմ հավաստումը, մյուս բաժանմունքներում չի հետաքրքրվել գործով։ Սակայն հենց այդ քայլն էլ սխալ կլիներ. ես չեմ ուզում, որ Դուք, թեկուզ մտովի, վատ տպավորություն ունենաք այդ մարդու մասին։ Իշխանությունների աշխատանքի սկզբունքն այն է, որ սխալվելու հնարավորությունը ընդհանրապես նկատի չի առնված։ Այդ սկզբունքն արդարացված է ողջ աշխատանքի գերազանց կազ-

մակերպվածության շնորհիվ և անհրաժեշտ է՝ եթե ինչ-որ բանի իրականացման հարցում պետք է հասնել ծայրահեղ արագության։ Սորդինին, ուրեմն, բոլորովին իրավունք չուներ մյուս բաժանմունքներին հարցում անել և, ի դեպ, նույնիսկ հարցում անելու դեպքում այդ բաժանմունքները ոչինչ չէին պատասխանի նրան, որովհետև անմիջապես կնկատեին, որ խոսքն այստեղ վերաբերվում է սխալվելու հնարավորությանը տեղեկանալուն։

— Պարոն նախագահ, թույլ կտա՞ք, որ մի հարցով ընդհատեմ Ձեզ,— խոսեց Կ-ն։— Սրանից առաջ Դուք վերահրաշկող հաստատության մասին հիշատակեցիք։ Ախր, Ձեր ներկայացրածի համաձայն վիճակն այնպիսին է, որ մարդ կարող է վատ զգալ իրեն, եթե պատկերացնի, թե վերահսկողությունը բացառվում է։

— Դուք շատ խիստ եք,— առարկեց նախագահը։— Սակայն եթե Ձեր խստությունը հագարապատկեք էլ, միևնույն է, հաստատության՝ հենց իր հանդեպ բանեցրած խստության հետ համեմատած Ձերը հավասար կլինի ոչնչի։ Կատարյալ օտար մարդը կարող է նման հարց տալ։ Արդյոք կա՞ն վերահսկող կազմակերպություններ։ Կան միայն վերահսկող կազմակերպություններ։ Իհարկե, նրանք նշանակված չեն բառի բուն իմաստով՝ կոպիտ սխալներ բացահայտելու համար, որովհետև սխալներ չեն լինում, և եթե անգամ լինում են, ինչպես Ձեզ հետ է կատարվել, ապա ո՞վ իրավունք ունի անվերապահորեն ասել, թե դա սխալ է։

— Դա արդեն ինչ-որ նոր բան է,— բացականչեց Կ-ն։

— Իսկ ինձ համար արդեն շատ հնացած է,— պատասխանեց նախագահը։— Ես էլ Ձեզանից ոչ պակաս համոզված եմ, որ տեղի է ունեցել սխալմունք։ Այս դեպքի պատճառած հուսահատությունից Սորդինին ծանր հիվանդացավ, և վերահսկողության սկզբնական կազմակերպությունները նույնպես, ում երախտապարտ ենք սխալների աղբյուրի բացահայտման համար, այս հարցում ընդունում են սխալի առկայությունը։ Բայց ո՞վ կարող է պնդել, թե վերահսկող երկրորդ կազմակերպությունն էլ է նույն կերպ մտածում, ինչպես

նաև դրանից հետո հանդես եկող երրորդ և մյուս կազմակերպությունները։

— Թող այդպես լինի,— ասաց Կ-ն։— Ես նախընտրում եմ նման մտորումների չխառնվել, դրանից բացի, առաջին անգամն եմ լսում վերահսկող կազմակերպությունների մասին և, իհարկե, առայժմ չեմ կարող հասկանալ նրանց։ Միայն կարծում եմ, որ այս դեպքում պետք է տարբերել երկու տեսակետ։ Այսինքն, առաջինը՝ այն, ինչ կատարվում է կազմակերպությունների ներսում և ինչ հետո կարող է նրանց կողմից մեկնաբանվել այսպես կամ այնպես, և երկրորդը. կենդանի անձնավորությունը՝ ես, որ գտնվում եմ կազմակերպություններից դուրս, և նույն կազմակերպությունները սպառնում են վնաս հասցնել իմ շահերին, իսկ դա այնքան է անիմաստ, որ ես առաջվա պես չեմ կարողանում հավատալ վտանգի լրջությանը։ Պարոն նախագահ, այն, ինչ Դուք նկարագրեցիք նման զարմանալի լավատեղյակությամբ, դուցե թե հօդուտ առաջին տեսակետի է խոսում, բայց ես կուզեի մի բառ էլ իմ մասին իմանալ։

— Ես էլ այդ եմ անում,— ասաց նախագահը։— Դուք երևի ոչինչ չկարողանայիք հասկանալ, եթե հս ներածական մի քանի բան չպատմեի։ Իսկ վերահսկող կազմակերպությունների վերաբերյալ իմ հիշատակումները, ինչպես պարզվեց, վաղաժամ էին։ Հիմա ես կանդրադառնամ Սորդինիի հետ եղած տարաձայնություններին։ Ինչպես ասացի, ես ատիճանաբար տեղի էի տալիս։ Եթե Սորդինին որևէ մեկի հանդեպ թեկուզև աննշան առավելություն է ձեռք բերում, հաղթանակն արդեն նրա կողմն է, որովհետև նա ավելի արիասիրտ և ուշադիր է դառնում, նրա եռանդը ավելանում է։ Հակառակորդ կողմի համար դա սարսափելի տեսարան է, իսկ հակառակորդի թշնամիների համար՝ հիասքանչ։ Եվ որովհետև տարբեր առիթներով ես այս երկրորդ զգացումն էլ եմ ունեցել, կարող եմ այսպես պատմել նրա մասին, ինչն էլ, ի դեպ, անում եմ։ Ասեմ, որ ինձ դեռ երբեք չի հաջողվել տեսնել նրան՝ Սորդինիին։ Նա չի կարող ներքև իջնել, չափից դուրս ծանրաբեռնված է աշխատանքով։ Նրա աշխատասենյակն այսպես են նկարագրել ինձ. բոլոր պատերը ծածկված

www.a-pdf.com

են իրար վրա դարսված փաստաթղթերի կապոցների սյուներով, դրանք հենց այն փաստաթղթերն են, որոնց հետ է կապված Սորդինիի աշխատանքը, և որովհետև փաստաթղթերը շարունակ վերցվում են կիտուկների միջից ու տեղն են դրվում, և դա արագ-արագ է կատարվում, այդ սյուները շարունակ փուլ են գալիս և հենց իրար հետևող փլուզումներն ու շարունակ իշխող աղմուկը բնորոշ են դարձել նրա աշխատասենյակի համար։ Իհարկե, Սորդինին ջանասեր է և ամենափոքր դեպքին էլ նույն հոգատարությամբ է վերաբերվում, ինչ՝ համեմատաբար մեծին։

— Պարոն նախագահ, ինձ առնչվող դեպքը Դուք շարունակ աննշան եք անվանում, մինչդեռ նրանով շատ պաշտոնյաներ են զբաղվել, և եթե սկզբում այն շատ փոքր է եղել, ապա դոնե պարոն Սորդինիի պես ջանասեր պաշտոնյաների շնորհիվ մեծացել է։ Ցավոք և իմ կամքին լրիվ հակառակ, քանի որ իմ ինքնասիրությունը բնավ չի շոյվի, եթե իմ գործին առնչվող փաստաթղթերի սյուներ դարսվեն ու փուլ գան, ապա ավելի լավ կլինի, եթե հանգիստ աշխատեմ հողաչափի գծագրության փոքր սեղանի մոտ։

— Ոչ,— ասաց նախագահը։— Դա արտառոց դեպք չէ։ Այդ տեսակետից Դուք գանգատվելու ոչ մի հիմք չունեք. Ձեր գործը ամենափոքրերից մեկն է փոքր գործերի շարքում։ Աշխատանքի ծավալը չի որոշում գործի բնույթը, և եթե Դուք այդպես եք մտածում, ապա շատ հեռու եք իշխանություններին հասկանալուց։ Սակայն, նույնիսկ եթե ծավալն էլ կարևոր լիներ, ապա Ձեր գործը աննշաններից մեկը կլիներ։ Սովորական դեպքերը, այսինքն՝ այսպես կոչված անսխալները, ավելի մեծ ջանքեր են պահանջում, և պետք է ավելի արդյունավետ աշխատել։ Դուք, ախր, ընդհանրապես դեռ ոչինչ չգիտեք Ձեր գործի պատճառելիք իսկական աշխատանքի մասին, և ես ուզում եմ խոսել նաև այդ մասին։ Սկզբում Սորդինին ինձ մեկուսացրեց խաղից, սակայն նրա աշխատակիցները գալիս էին, հյուրանոցում ամեն օր հարցաքննում համայնքի հեղինակավոր անդամներին և արձանագրություններ կազմում։ Մեծ մասն ինձ էր պաշտպանում, միայն մի քանիսն էին համառում։ Հողաչափության հարցը դիպչում էր

www.a-pdf.com

ուղածդ գյուղացու բաց նյարդին, նրանք կասկածեցին, թե ինչ-ինչ գաղտնի համաձայնություններ ու անարդար քայլեր կան, մի առաջնորդի առաջ քաշեցին, և, ըստ նրա ներկայացրած տվյալների՝ Սորդինին երևի այն համոզմանն էր հանգել, որ եթե ես այդ հարցն ուզենայի քննարկել համայնքի խորհրդում, ոչ բոլորը դեմ կարտահայտվեն հողաչափ կանչելուն։ Այդպես, ինքնին հասկանալի կարծիքը՝ որ ոչ մի հողաչափի կարիք չկա, ստիճանաբար հարցականի տակ դրվեց։ Այս տեսակետից առանձնապես աչքի ընկավ ոմն Բրունսվիկ (Դուք հաղիվ թե ճանաչեք նրան), որ թեպետ վատ մարդ չէ, բայց հիմար է ու տարօրինակ։ Նա Լազեմանի փեսան է։

— Կաշեգործի՞,— հարցրեց Կ-ն ու նկարագրեց մորուքավոր տղամարդուն, ում տեսել էր Լազեմանի մոտ։

— Այո, այդ մարդը,— հաստատեց նախագահը։

— Ես նրա կնոջն էլ գիտեմ,— խոսքի պատահական հաջողությանն ապավինելով, ասաց Կ-ն։

— Հնարավոր է,— համաձայնեց նախագահն ու լռեց։

— Նա դեղեցիկ, բայց փոքր-ինչ գունատ ու հիվանդոտ կին է։ Նա, հավանաբար, դղյակից է սերվում։— Կես հարցական-կես հաստատական տոնով ասաց Կ-ն։

Նախագահը նայեց ժամացույցին, դեղորայք լցրեց գդալն ու արագ կուլ տվեց։

— Դուք հավանաբար միայն դղյակի գրասենյակների դասավորությա՞նն եք ծանոթ,— կոպիտ հարցրեց Կ-ն։

— Այո։— Հեգնական, միաժամանակ շնորհակալություն հայտնող ժպիտով ասաց նախագահը։— Հենց դրանք են ամենակարևոր բաները։ Իսկ ինչ Բրունսվիկին է վերաբերում, եթե կարողանայինք վտարել նրան համայնքից, կուցե բոլորս էլ երջանիկ լինեինք, իսկ Լազեմանը՝ մեզնից ոչ պակաս։ Այն ժամանակ Բրունսվիկը որոշակի ազդեցություն ձեռք բերեց. թեև նա հռետոր չէ, բայց աղմկարար մարդ է, իսկ դա բավարարում է ոմանց։ Եվ ահա, այնպես ստացվեց, որ ես ստիպված եղա գործը ներկայացնել համայնքի խորհրդին. ի դեպ, դա Բրունսվիկի առաջին ու վերջին հաջողությունն էր, որովհետև համայնքի խորհուրդը ծանրակշիռ մեծամասնու-

www.a-pdf.com

թյամբ ոչինչ չէր ուզում լսել հողաչափի մասին։ Համաչափ խորհրդի նիստն էլ է տեղի ունեցել տարիներ առաջ, սակայն գործը դեռ չի դադարեցվել մասամբ շնորհիվ Սորդինիի բարեխղճության, որ, խնամքով տեղեկություններ հավաքելով, փորձում էր ուսումնասիրել ինչպես մեծամասնության, այնպես էլ ընդդիմադիր խմբի շարժառիթները, մասամբ էլ Բրունսվիկի հիմարության ու ինքնասիրության պատճառով, որ պաշտոնյաների հետ զանազան ազգակցական կապեր ուներ և իր երևակայության նոր հայտնագործություններով շարունակ գործի էր դնում դրանք։ Այնուամենայնիվ, Սորդինին չթողեց, որ Բրունսվիկը խաբի իրեն (Բրունսվիկն ինչպե՞ս կարող էր խաբել նրան)։ Բայց հենց իրեն խաբել թույլ չտալու համար Բրունսվիկին նոր տեղեկություններ էին անհրաժեշտ, և, մինչ նա կավարտեր դրանց ուսումնասիրությունը, Բրունսվիկն արդեն նոր բան էր հնարում. նա ոտքից շատ չափուկ է, իսկ դա նրանից է, որ խելքից կալճ է։ Իսկ այժմ պատմեմ մեր կառավարման ապարատի մի առանձնահատկության մասին։ Իր ճշտապահությանը համապատասխան՝ այն ծայրաստիճան զգայուն է։ Երբ որևէ գործ շատ երկար է քննության առնվում, ապա, առանց ավարտին հասցվելու, կարող է պատահել, որ չնախատեսված մի տեղից (որ հետո նույնիսկ դժվար է գտնել) կայծակնորեն ի հայտ է գալիս վերջնական մի որոշում, ու, թեև մեծ մասամբ շատ ճիշտ, այնուամենայնիվ կամայականորեն դադարեցնում է քննությունը։ Դա թողնում է այն տպավորությունը, թե կառավարման ապարատը այլևս չի ցանկացել հանդուրժել իրենից ոչինչ չներկայացնող գործի պատճառած լարվածությունը, տարիներ տևած գրգռվածությունը, և, առանց պաշտոնյաների մասնակցության, ինքնուրույն է ընդունել որոշումը։ Իհարկե, ոչ մի հրաշք էլ տեղի չի ունեցել, պաշտոնյաներից մեկնումեկն է որոշումը գրել կամ չգրված որոշում ընդունել։ Համենայնդեպս, ո՛չ մենք, ո՛չ այստեղ և ո՛չ էլ գրասենյակում հնարավոր չի լինի պարզել, թե այս դեպքում որ պաշտոնյան է ընդունել որոշումն ու ինչից դրդված։ Միայն վերահսկող կազմակերպությունները շատ ավելի ուշ կճշտեն դա, սակայն մենք այլևս ոչինչ չենք իմանա և, իմիջիայլոց, հետո

դա հազիվ էլ մեկնումեկին հետաքրքրի։ Սակայն, ինչպես ասվեց, մեծ մասամբ հենց այդ լուծումներն են կատարյալ լինում, նրանց մեջ վատը միայն այն է, որ մարդ, ինչպես սովորաբար է լինում, շատ ուշ է իմանում ընդունված որոշումների մասին, իսկ ընթացքում շարունակում է վաղուց արդեն լուծում ստացած հարցի կրքոտ քննարկումը։ Ես չգիտեմ, արդյոք Ձեր գործին առնչվող դեպքում է՞լ է նման որոշում կայացվել (որոշ բաներ խոսում են դրա օգտին, որոշ բաներ՝ դեմ), սակայն եթե նման բան եղած լիներ, ապա հրավեր կուղարկեին Ձեզ, Դուք երկար ճանապարհ կկտրեիք-այստեղ կգայիք, շատ ժամանակ անցած կլիներ, իսկ այդ ընթացքում Սորդինին մինչև ուժասպառ լինելը կշարունակեր զբաղվել նույն գործով, Բրունսվիկը կշարունակեր իր խարդավանքները, իսկ ես կտանջվեի երկուսի ձեռքերում։ Ես միայն ենթադրում եմ, թե կարող էր նման բան լինել, սակայն հաստատ գիտեմ հետևյալը—վերահսկող կազմակերպություններից մեկը հայտնաբերել է, որ Ա բաժանմունքից շատ տարիներ առաջ ոմն հողաչափի վերաբերյալ հարցում է եկել համայնք, սակայն հարցումը մինչև այժմ մնացել է անպատասխան։ Վերջերս նորից դիմեցին ինձ և, իհարկե, ամբողջ գործի մեջ պարզություն մտցվեց։ Ա բաժանմունքը գոհ մնաց իմ պատասխանից, որ ոչ մի հողաչափ անհրաժեշտ չէ, իսկ Սորդինին պետք է ընդուներ, որ այս դեպքում ինքը իրավասու չի եղել և, իհարկե, իզուր տեղն է զբաղվել այդքան ավելորդ, նյարդեր քայքայող աշխատանքով։ Եթե, սովորականի պես, բոլոր կողմերից նոր աշխատանք չպարտադրվեր մեզ, և եթե Ձեր գործը շատ փոքր գործ չլիներ (նույնիսկ կարելի է ասել, որ ամենափոքրը՝ փոքրերի մեջ), ապա մենք հանգիստ շունչ կքաշեինք, և ես կարծում եմ, որ Սորդինին նույնպես։ Միայն Բրունսվիկն էր զայրանում, բայց դա ծիծաղելի էր։ Եվ հիմա, պարոն հողաչափ, պատկերացրեք իմ հիասթափությունը, երբ գործի հաջողակ ավարտից հետո (այն օրվանից ահագին ժամանակ է անցել) հանկարծ հայտնվում եք Դուք, և թվում է, թե գործը նորից-նոր է սկսվելու։ Հավանաբար պետք է որ հասկանաք, որ ես վճռել եմ իմ ուժերի ներածի չափով ոչ մի դեպքում նման բան թույլ չտալ։

www.a-pdf.com

— Ինչ խոսք։ Սակայն ես ավելի լավ եմ հասկանում, որ այստեղ իմ ու, թերևս, նաև օրենքի հանդեպ մի սարսափելի չարաշահում կա։ Սակայն ես կկարողանամ պաշտպանել իմ անձը։

— Ի՞նչ եք ուզում անել,— հարցրեց նախագահը։

— Չեմ կարող հայտնել Ձեզ։

— Ես չեմ էլ պարտադրում,— ասաց նախագահը։— Պարզապես իմացեք, որ հանձինս ինձ, չեմ ասի, թե լավ բարեկամ՝ քանի որ մենք միանգամայն օտար մարդիկ ենք, բայց լավ օգնական կունենանք, միայն թե ես թույլ չեմ տա, որ Դուք գործի ընդունվեք որպես հողաչափ։ Իսկ ընդհանրապես, կարող եք վստահ դիմել ինձ. իմ հնարավորությունների սահմաններում ես կօգնեմ Ձեզ, թեև իմ հնարավորություններն այնքան էլ մեծ չեն։

— Դուք շարունակ ասում եք, թե ես պետք է որպես հողաչափ ընդունվեմ, բայց ես, ախր, արդեն ընդունված եմ։ Ահա Կլամմի նամակը։

— Կլամմի նամա՞կը,— խոսեց նախագահը։— Դա արժեքավոր ու հարգանք հարուցող է միայն Կլամմի ստորագրության շնորհիվ, որ կարծես, իրոք, նրանն է, իսկ ընդհանրապես... բայց ես չեմ համարձակվում այդ մասին որևէ բան ասել։ Մի՛ցցի,— բացականչեց նա ու ավելացրեց։— Այդ ի՞նչ եք անում այդտեղ։

Երկար ժամանակ ուշադրությունից դուրս մնացած օգնականներն ու Միցցին, երևում էր, որ չէին գտել անհրաժեշտ փաստաթուղթը, ցանկացել էին թափված թղթերը նորից պահարանի մեջ խցկել, սակայն կույտի անկանոնության պատճառով դա նրանց չէր հաջողվել։ Դրանից հետո օգնականները մի միտք էին հղացել, որն այժմ ի կատար էին ածում. պահարանը պառկեցրել էին հատակին, բոլոր փաստաթղթերը խցկել մեջը, հետո Միցցիի հետ նստել էին պահարանի դռներին ու փորձում էին դանդաղ ներքև սեղմել։

— Ուրեմն փաստաթուղթը չգտնվեց,— ասաց նախագահը։— Սակայն Դուք արդեն ծանոթ եք պատմությանը և, ճիշտն ասած, փաստաթուղթն այլևս պետք չէ մեզ, թեև դեռ հաստատ այն կգտնենք։ Հավանաբար ուսուցչի մոտ է. նրա

մոտ ևս շատ փաստաթղթեր կան։ Իսկ հիմա մոմի հետ այստեղ արի, Միցցի, և այս նամակը կարդա։

Միցցին մոտեցավ։ Նրա տեսքն այժմ ավելի մռայլ ու աննշան թվաց, երբ նստեց մահճակալի եզրին և սեղմվեց ուժեղ, կյանքով առլեցուն ամուսնուն. վերջինս գրկեց նրան։ Մոմի լույսի տակ միայն նրա դեմքն էր երևում, պարզ, խիստ դիմագծերը, որ տարիքից մեղմացել էին։ Հազիվ նամակին աչք գցելով, նա հանգիստ ծալեց ձեռքերը.

— Կլամմից է։— Հաստատեց նա, հետո նրանք միասին կարդացին նամակը, կարճ ժամանակ փսփսացին իրար հետ, և հենց այն պահին, երբ օգնականները «ուռա» գոռացին՝ որովհետև վերջապես սեղմել էին պահարանի դուռն ու Միցցին երախտապարտ հայացքով նրանց էր նայել, նախագահն ասաց.

— Միցցին կատարելապես համամիտ է ինձ, և ես հավանաբար համարձակվեմ արտահայտվել։ Ձեր ձեռքի տակ եղածը պաշտոնական գրություն չէ, այլ միայն մասնավոր նամակ։ Այդ բանն արդեն պարզ երևում է «մեծարգո պարոն» բառերից։ Բացի այդ, այստեղ ոչ մի բառով չի նշվում, թե Դուք ընդունվել եք որպես հողաչափ, խոսքն ավելի շուտ ընդհանուր, տերունական ծառայությունների մասին է, և նույնիսկ այդ մասին հատակորեն չի խոսվում, այլ միայն ասվում է, որ «ինչպես գիտեք, Դուք ընդունված եք», այսինքն՝ գործի ընդունված լինելու հավաստման պատասխանատվությունը ընկած է Ձեզ վրա և, վերջապես, ծառայության համար ձեզ ուղարկել են միայն ինձ մոտ, նախօրոք ասելով, թե Ձեր անմիջական պետն եմ լինելու, որ ամեն մի մանրամասն ինձնից եք իմանալու, մի բան, որ մեծ մասամբ արդեն իմացաք։ Պաշտոնական գրությունները կարդալ կարողացող և դրա հետ կապված ոչ պաշտոնական նամակները ավելի լավ ընթերցող մարդու համար այս ամենը չափից դուրս պարզ է, իսկ որ Դուք՝ օտարականդ, դա չեք կարողանում, չի զարմացնում ինձ։ Նամակում ընդհանրապես ասվում է, որ եթե Դուք տերունական ծառայության ընդունվեք, ապա Ձեր մասին կհոգա անձամբ Կլամմը։

— Պարոն նախագահ, Դուք այնքան լավ մեկնաբանեցիք

www.a-pdf.com

նամակը, որ, ի վերջո, դատարկ թղթի վրա գրված ստորագրությունից բացի ուրիշ ոչինչ չմնաց։ Դուք չե՞ք նկատում, թե ինչպես եք դրանով արժեզրկում Կլամմի անունը, ում Ձեր ասելով, հարգում եք։

— Դուք թյուրիմացության մեջ եք,— առարկեց նախագահը։— Ես չեմ թերագնահատում նամակի նշանակությունը և իմ մեկնաբանությամբ չեմ նսեմացնում։ Ընդհակառակը։ Կլամմի մասնավոր նամակը, ինչ խոսք, ավելի մեծ արժեք ունի, քան պաշտոնական զրությունը, բայց չունի հենց այն նշանակությունը, որ վերագրում եք Դուք։

— Դուք ճանաչո՞ւմ եք Շվարցերին,— հարցրեց Կ-ն։

— Ոչ։ Իսկ դո՞ւ, Միցցի։ Նույնպես ոչ։ Ոչ, մենք չենք ճանաչում նրան։

— Տարօրինակ է,— զարմացավ Կ-ն,— նա տեսուչի տեղակալներից մեկի որդին է։

— Սիրելի պարոն հողաչափ, ես ինչպե՞ս կարող եմ ճանաչել տեսուչի բոլոր տեղակալների բոլոր որդիներին։

— Լավ, այդ դեպքում Դուք հավանարար հավատաք ինձ, որ նա տեսուչի տեղակալի որդին է։ Այդ Շվարցերի հետ ես դեռ իմ ժամանման օրը զայրացուցիչ բախում ունեցա։ Հետո նա հեռախոսով հարցրեց տեսուչի Ֆրից անունով տեղակալին, և իմացա, որ ինձ ընդունել են որպես հողաչափ։ Ինչպե՞ս եք բացատրում սա, պարոն նախագահ։

— Շատ պարզ,— ասաց նախագահը։— Դուք դեռ երբեք մեր գերատեսչությունների հետ շփման մեջ չեք մտել։ Այդ բոլոր շփումները միայն թվացյալ բնույթ ունեն, մինչդեռ Դուք, Ձեր անտեղյակության պատճառով, դրանք համարում եք իրական։ Իսկ ինչ վերաբերում է հեռախոսին, տեսեք, ինձ մոտ, երբ ես բավական շատ անելիք ունեմ գերատեսչությունների հետ, ոչ մի հեռախոս չկա։ Իջևանատներում ու նման այլ տեղերում թեկուզ բարի ծառայություն էլ մատուցեն, դրանք միայն երաժշտական ավտոմատներ են, ուրիշ ոչինչ։ Դուք այստեղ գտնվելու ժամանակ երբևէ զանգե՞լ եք, այո՞։ Ուրեմն, երևի հասկանաք ինձ։ Պարզ է, որ դղյակում հեռախոսային անթերի կապ կա և, ինչպես ինձ են պատմել, հե-

www.a-pdf.com

ռախոսներն այնտեղ զանգում են անընդմեջ, ինչը որ, բնական է, շատ է արագացնում աշխատանքը։ Այդ անվերջանալի հեռախոսազանգերը մենք այստեղ ընկալում ենք որպես երգ ու աղմուկ։ Հաստատ դուք էլ եք լսել։ Այդ աղմուկն ու երգը միակ ճիշտ ու արժանահավատ բանն է, որ այստեղի հեռախոսները հաղորդում են մեզ։ Մնացած ամեն ինչը խաբկանք է։ Դղյակի հետ չկա ոչ մի հեռախոսային կապ, չկա ոչ մի կենտրոնական հեռախոսակայան, որ մեր զանգերը հասցնի դղյակ։ Եթե այստեղից դղյակ զանգեք, ապա այնտեղ բոլոր բաժանմունքներում հեռախոսները կզնգան կամ, ավելի ճիշտ, բոլորի ապարատներն էլ կզնգային, եթե (մի բան, որ ես հաստատ գիտեմ) ապարատներն անջատված չլինեին։ Ձափից դուրս հոգնած մի պաշտոնյա, որ զգում է փոքր-ինչ ապակենտրոնանալու պահանջ, մերթընդմերթ՝ հատկապես երեկոյան կողմ և դիշերը, միացնում է հեռախոսը։ Մենք դրանից հետո ենք ստանում պատասխան, մի պատասխան, որ ոչ այլ ինչ է, քան կատակ։ Այդ բանն, իհարկե, ինքնին հասկանալի է։ Ով իրավունք ունի իր անձնական չնչին հոգսերով շատ կարևոր և արագ աշխատանքների խառը պահին զանգել ու պահանջներ առաջադրել։ Եվ ես չեմ հասկանում, թե ինչպես կարող է օտար մարդը մտածել, որ եթե ինքը զանգում է, օրինակ, Սորդինիին, ապա իրեն պատասխանողը իրոք Սորդինին է։ Ավելի շուտ, դա կարող է լինել ուրիշ բաժանմունքնում նստած մի փոքր մատենավար։ Դրան հակառակ, երջանիկ զուգադիպությամբ կարող է այնպես պատահել, որ փոքր մատենավարին զանգելիս խոսափողը վերցնի ենձամբ Սորդինին։ Այդ դեպքում, թերևս, ավելի լավ կլինի հեռու փախչել հեռախոսից, մինչև առաջին հնչյունը լսելը։

— Ես դրանց, իհարկե, այդպես չեմ նայում,— ասաց Յ-նն— Եվ չէի կարող այդ մանրամասներն իմանալ։ Ես այնքան էլ մեծ վստահություն չեմ ունեցել հեռախոսազրույցների հանդեպ և միշտ գիտակցել եմ, որ միայն դղյակի ներսում իմացած ու ձեռք բերած բանն է, որ ունի իսկական արժեք։

— Ոչ, ինչպե՞ս թե։— Կ-ի խոսքերից կառչեց նախապահը։— Հեռախոսով ստացած պատասխաններն էլ արժեք ունեն։ Ինչպես կարող է դղյակում նստած պաշտոնյայի տված

www.a-pdf.com

տեղեկությունը արժեք չունենալ։ Դա ես արդեն ասել եմ Կլամմի նամակի առիթով. այդ բոլոր դիտողությունները պաշտոնական ոչ մի արժեք չունեն, և եթե Դուք դրանց պաշտոնական արժեք եք վերագրում, ապա սխալվում եք, մինչդեռ դրանց մասնավոր նշանակությունը՝ ընկերական կամ թշնամական տեսակետից, շատ մեծ է, շատ հաճախ՝ ավելի մեծ, քան պաշտոնական նշանակությունը։

— Լավ,— ասաց Կ-ն,— ենթադրենք, թե իրականում ամեն ինչ այդպես է. այդ դեպքում ես դղյակում մի խումբ լավ ընկերներ կունենայի։ Եթե ավելի խորը նայելու լինենք, դեռ այն ժամանակ՝ մի քանի տարի առաջ, բաժանմունքներից մեկի հղացած միտքը՝ մի անգամ հողաչափ կանչելու կապակցությամբ, բարեկամության դրսևորում էր իմ հանդեպ, հետագայում մեկը մյուսին իր կողմը գրավեց, մինչև որ, ի դժբախտություն ինձ, այստեղ գայթակղեցին ինձ, իսկ հիմա սպառնում են դուրս շպրտել։

— Ձեր խոսքերի մեջ որոշ ճշմարտություն կա,— համաձայնեց նախագահը,— և Դուք իրավացի եք այն հարցում, երբ ասում եք, որ դղյակից եկած տեղեկությունները բառացի ընդունել չի կարելի։ Բայց զգուշությունը ոչ միայն այստեղ, այլև ամեն տեղ է հարկավոր. տեղեկության կարևորությունից կախված, պետք է լինել նույնքան ավելի զգույշ։ Իսկ գայթակղելու մասին ասվածը ինձ համար անհասկանալի մնաց։ Եթե իմ խոսքերին ավելի լավ հետևած լինեիք, կհասկանայիք, որ Ձեզ կանչելու հարցը շատ ավելի դժվար է և հնարավոր չէ մի զրույցի ընթացքում պատասխանել դրան վերաբերող բոլոր հարցերին։

— Այդ դեպքում մի բան է մնում. ամեն ինչ բարդ է ու դժվար լուծելի, բացի այն բանից, որ ինձ դուրս են նետելու։

— Ո՞վ կարող է համարձակվել դուրս նետել Ձեզ, պարոն հողաչափ,— ասաց նախագահը։— Հենց նախնական հայցումների անորոշությունը ամենաքաղաքավարի վերաբերմունքն է երաշխավորում, սակայն Դուք, ինչպես երևում է, չափից դուրս զգայուն եք։ Ոչ ոք Ձեզ այստեղ չի պահում, բայց դա, ախր, դեռ դուրս շպրտել չէ։

www.a-pdf.com

— Օհ, պարոն նախագահ, Ձեզ նորից ամեն ինչ չափից դուրս պարզ է թվում,— ասաց Կ-ն։— Հիմա ես կթվեմ, թե ինչն է ինձ այստեղ պահում և ինչ եմ ես զոհել տանից հեռանալիս. երկար, դժվարին ճամփորդությունը՝ կապված այստեղ գործի ընդունվելու հետ, հիմնավորված հույսերը, կատարյալ սնանկ վիճակս, տանն այլևս որևէ համապատասխան աշխատանք գտնելու անհնարինությունը և, վերջապես, ոչ պակաս կարևոր մի բան. իմ հարսնացուն, որ այստեղացի է։

— Այո, Ֆրիդան։— Առանց անակնկալի գալու, ասաց նախագահը։— Գիտեմ։ Բայց Ֆրիդան կգա Ձեր հետևից, ուր էլ որ գնաք։ Իսկ ինչ վերաբերում է մյուս հարցերին, ապա որոշ բաների մասին մտածել է պետք, և դրանց մասին ես կէլեկուցեմ դղյակին։ Եթե որևէ որոշում դա կամ նախապես անհրաժեշտ լինի մեկ անգամ ևս հարցաքննել Ձեզ, ես կկարգադրեմ կանչել Ձեզ։ Համաձա՞յն եք։

— Ոչ, բնավ ոչ։ Ես դղյակից ոչ թե ողորմություն եմ ուզում, այլ՝ իմ հասանելիքը։

— Միցցի։— Կնոջը դիմեց նախագահը։ Կինն առաջվա պես նստած էր ամուսնուն սեղմված և, երազանքների մեջ խորասուզված՝ խաղում էր Կլամմի նամակի հետ. դրանից փոքր նավակ էր սարքել։ Սարսափած Կ-ն նրանից խլեց նամակը։— Միցցի, ոտքս նորից սկսում է սարսափելի ցավել։ Երևի պետք է թրջոցը փոխենք։

— Այդ դեպքում ես գնամ ուրեմն։— Վեր կացավ Կ-ն։

— Այո,— ասաց Միցցին, որ արդեն քսուկ էր պատրաստել։— Ինչ ուժեղ քամի է։

Կ-ն շուտ եկավ. օգնականները՝ իրենց անհարկի փութաջանությամբ, Կ-ի բառերից անմիջապես հետո դռան երկու փեղկերն էլ բացել էին։ Թափանցող ուժեղ սառնամանիքից Հիվանդի սենյակը պաշտպանելու համար, Կ-ն կարող էր միայն թեթևակի խոնարհվելով հրաժեշտ տալ նախագահին։ Հետո, օգնականներին իր հետևից քարշ տալով, նա դուրս նետվեց սենյակից և արագ փակեց դուռը։

www.a-pdf.com

Իշխանատան դիմաց Կ-ին սպասում էր իշխանատերը։ Եթե Կ-ն չհարցներ, նա չէր համարձակվի խոսել, այդ պատճառով Կ-ն հետաքրքրվեց, թե ինչ է ցանկանում։

— Դու արդեն նոր բնակարա՞ն ունես,— դեռևին նայելով, հարցրեց իշխանատերը։

— Կնոջդ հանձնարարությա՞մբ ես հարցնում,— ասաց Կ-ն։— Հավանաբար շատ մեծ կախում ունես նրանից։

— Ոչ,— առարկեց իշխանատերը։— Ես նրա կարգադրությամբ չեմ հարցնում, սակայն քո պատճառով նա շատ հուզված է ու անտրամադիր։ Չի կարողանում ոչինչ անել։ Պառկել է անկողնում, գանգատվում ու տնքում է շարունակ։

— Պե՞տք է որ գնամ նրա մոտ։

— Խնդրում եմ, գնա,— ասաց իշխանատերը։— Ես ուզում էի նույնիսկ նախագահի տնից բերել քեզ, այնտեղ դռան մոտ կանգնած ականջ դրեցի, սակայն դուք զրուցում էիք, իսկ ես չուզեցի խանգարել։ Միաժամանակ անհանգստանում էի կնոջս համար. արագ հետ վազեցի, սակայն նա ինձ իր մոտ չթողեց, դրանից հետո ինձ ոչինչ չմնաց, քան քեզ այստեղ սպասելը։

— Այդ դեպքում արագ արի։ Ես շուտով կհանգստացնեմ նրան։

— Եթե միայն հաջողվի։

Նրանք անցան լուսավոր խոհանոցի միջով, ուր երեք թե չորս աղախին՝ յուրաքանչյուրը մեկը մյուսից հեռու, տվյալ պահին իրենց պատահական աշխատանքով զբաղված, իսկապես քարացան Կ-ին տեսնելով։ Արդեն խոհանոցում լսվում էր իշխանատիրուհու տնքոցը։ Նա պառկել էր խոհանոցից բարակ տախտակներով առանձնացված անպատուհան մառանում, ուր տեղը միայն մի լայն, երկտեղանի մահճակալի համար էր բավականացնում։ Մահճակալն այնպես էր տեղադրված, որ այնտեղից հնարավոր էր աչքի տակ պահել ողջ խոհանոցն ու հսկել աշխատանքը։ Դրան հակառակ, խոհանոցից մառան նայելիս ոչինչ հնարավոր չէր տեսնել։ Ներսում մութ-մութ էր, միայն մահճակալի կարմրասպիտակավուն

www.a-pdf.com

սավաններն էին թեթևակի նշմարվում։ Երբ ներս մտան ու նրանց աչքերը սովորեցին մթությանը, հնարավոր եղավ զանազանել մանրամասները։

— Վերջապես եկաք,— թույլ ձայնով ասաց իջևանատիրուհին։ Նա պառկել էր մեջքի վրա, երևում էր, որ դժվարությամբ է շնչում, վերմակը հետ էր նետված։ Անկողնում պառկած, նա շատ ավելի ջահել էր երևում, քան երբ հագնված էր; նրա գլխին դրված նուրբ ժանյակե գիշերային կապագլխարկը, թեև շատ փոքր էր ու ճոճվում էր սանրվածքի վրա, դեմքի սմքածությունը դարձնում էր կարեկցանք հարուցող։

— Ես ինչպես կարող էի գալ։ Դուք, ախր, չէիք կարգադրել կանչել ինձ,— մեղմ ասաց Կ-ն։

— Չպետք է այդքան երկար սպասեցնել տայիք ինձ։— Հիվանդի կամակորությամբ ասաց իջևանատիրուհին։— Նըստեք,— ասաց նա ու ցույց տվեց մահճակալի եզրը։— Իսկ մյուսներդ դուրս դնացեք։— Այդ ընթացքում օդնականներից բացի աղախիններն էլ էին ներս խցկվել։

— Ես էլ եմ ուզում հեռանալ, Գարդենա,— ասաց իջևանատերը։ Կ-ն առաջին անդամ լսեց իջևանատիրուհու անունը։

— Իհարկե,— դանդաղ ասաց իջևանատիրուհին ու իբր այլ մտքերով էր տարված, մտացրիվ ավելացրեց,— իսկ ինչո՞ւ պետք է հենց դու մնայիր։

Բոլորը խոհանոց քաշվեցին, այս անդամ օդնականները ևս խնդուն հնազանդվեցին. ավելի ճիշտ, նրանք ընկել էին մի աղախնի հետևից։ Գարդենան բավական զգույշ էր հասկանալու համար, որ խոհանոցից կարելի է այստեղ ասված ամեն ինչ լսել, որովհետև մառանը ոչ մի դուռ չուներ, և բոլորին հրամայեց խոհանոցն էլ ազատել։ Հրամանն իսկույն ի կատար ածվեց։

— Պարոն հոդաչափ, պահարանի մեջ՝ ուղիղ դիմացը, մի գլխաշոր է կախված։ Խնդրում եմ, ինձ տվեք այն։ Ուզում եմ դրանով ծածկվել։ Տանել չեմ կարող վերմակը։ Այնպես դժվար եմ շնչում։— Երբ Կ-ն բերեց գլխաշորը, նա ասաց։— Տեսեք, գեղեցիկ գլխաշոր է, այնպես չէ՞։— Կ-ին թվաց, թե դա սովորական, բրդյա գլխաշոր է, և միայն նրբանկատությունից դրդված շոշափեց այն, բայց ոչինչ չասաց։— Այո,

www.a-pdf.com

գեղեցիկ է,— հաստատեց Գարգենան ու պարուրվեց գլխաշորի մեջ։

Այժմ նա պառկել էր խաղաղված, կարծես բոլոր հոգս ու ցավերը վանել էր իրենից, երկար պառկելու հետևանքով խառնված մազերը թափվել էին վար։ Նա ուղղվեց, մի քանի վայրկյան գիշերային կապագլխարկի շուրջ կարգի բերեց սանրվածքը. փարթամ մազեր ուներ։

Կ-ի համբերությունը սպառվեց, ու նա ասաց.

— Տիկին, Դուք կարգադրել էիք հետաքրքրվել, արդյո՞ք ես մի ուրիշ բնակարան ունեմ։

— Ե՞ս էի կարգադրել։ Ոչ, դա թյուրիմացություն է։

— Հենց նոր Ձեր ամուսինն էր հետաքրքրվում։

— Հավատում եմ։ Նա ինձ հետ հակառակված է։ Երբ ես չէի ուզում, որ Դուք այստեղ մնաք, նա պահեց Ձեզ, այժմ, քանի որ ես երջանիկ եմ, որ Դուք այստեղ եք ապրում, նա այստեղից հեռացնում է Ձեզ։ Նման բաներ նա միշտ է անում։

— Նշանակում է Դուք այդպես փոխել եք իմ մասին ունեցած Ձեր կարծիքը. մեկ, երկու ժամ անցավ ընդամենը։

— Իմ կարծիքը չեմ փոխել։— Առաջվա նման թույլ, ասաց իջևանատիրուհին։— Տվեք ինձ Ձեր ձեռքը։ Իսկ այժմ խոստացեք ինձ միանգամայն անկեղծ լինել։ Ես էլ Ձեր հանդեպ անկեղծ կլինեմ։

— Լավ,— համաձայնեց Կ-ն։— Իսկ ո՞վ կսկսի։

— Ես,— ասաց իջևանատիրուհին։ Նրա խոսքերն այն տպավորությունը չթողեցին, թե նա ուզում է ընդառաջել Կ-ին, ավելի շուտ նա շահագրգռված էր առաջինը խոսել։

Իջևանատիրուհին բարձի տակից մի լուսանկար հանեց ու պարզեց Կ-ին։

— Նայեք այս նկարին,— խնդրագին ասաց նա։ Նկարն ավելի լավ զննելու նպատակով Կ-ն մի քայլ արեց խոհանոցի կողմը, սակայն այնտեղից էլ հեշտ չէր նկարի վրա ինչ-որ բան տեսնել, որովհետև շատ հին նկար էր, դունաթափ, բազմաթիվ ուռչերից ջարդված, ճմրթված ու ճարպաբծերով պատված։

— Նկարը բնավ լավ վիճակում չէ,— ասաց Կ-ն։

www.a-pdf.com

— Ցավոք, ցավոք,— ասաց իշևանատիրուհին։— Ուզածդ նկարը, եթե մարդ տարիներով իր մոտ պահի, նույն վիճակում կլինի։ Սակայն, եթե ուշադիր նայեք, ամեն ինչ կզանազանեք հաստատ։ Հաստատ։ Ի դեպ, ես կարող եմ օգնել Ձեզ։ Ասացեք ինձ, թե ինչ եք տեսնում։ Ես շատ եմ ուրախանում, երբ նկարի մասին են խոսում։ Ուրեմն, ի՞նչ։

— Մի երիտասարդի։

— Ճիշտ է,— հաստատեց իշևանատիրուհին։— Իսկ ի՞նչ է անում նա։

— Իմ կարծիքով պառկել է տախտակի վրա, ճմլկոտվում է ու հորանջում։

— Այդպիսի բան չկա,— ծիծաղեց իշևանատիրուհին։

— Բայց սա տախտակ է, նա էլ պառկած է այստեղ,— իր խոսքը պնդեց Կ-ն։

— Ավելի ուշադիր նայեք,— իշևանատիրուհին սկսեց գայրանալ։— Նա իրո՞ք պառկած է։

— Ոչ,— ասաց Կ-ն։— Պառկած չէ, ճախրում է։ Հիմա արդեն տեսնում եմ։ Իսկ սա տախտակ չէ, այլ, հավանաբար, թել է։ Երիտասարդը բարձրության վրայից է ցատկում։

— Վերջապես,— գոհունակությամբ ասաց իշևանատիրուհին։— Նա ցատկում է։ Այդպես բանբեր-ծառայողներն են պարապում։ Ես, ախր, գիտեի, որ Դուք կզանազանեք։ Նրա դեմքն էլ եք տեսնում։

— Դեմքի միայն շատ փոքր մասն է երևում։ Նա հավանաբար շատ է լարված. բերանը բաց է, աչքերը կկոցված են, իսկ մազերը ծածանվում են։

— Հիանալի է։— Համաձայնեց իշևանատիրուհին։— Ով անձամբ չի ճանաչել նրան, ավելին չի էլ կարող զանազանել։ Բայց նա հիանալի երիտասարդ էր։ Ես միայն մի անգամ եմ հպանցիկ տեսել նրան ու երբեք չեմ մոռանա։

— Իսկ ո՞վ էր նա,— հետաքրքրվեց Կ-ն։

— Սա այն բանբերն է, ում միջոցով ինձ առաջին անգամ իր մոտ կանչեց Կլամմը։

Կ-ն լավ չհասկացավ. ապակու զնգոցը շեղեց նրա ուշադրությունը։ Նա նույնիսկ գտավ, թե ովքեր էին պատճառը.

www.a-pdf.com

օգնականները բակ էին դուրս ելել և, ձյան մեջ կանգնած՝ մի ոտքից մյուսն էին ցատկում։ Նրանք ձևացրին, թե երջանիկ են Կ-ին նորից տեսնելու համար, ուրախությունից իրար ցույց տվեցին և միաժամանակ շարունակեցին թակել խոհանոցի պատուհանը։ Կ-ի սպառնալից շարժումը ստիպեց նրանց դադարեցնել իրենց գործը, նրանք փորձեցին մեկը մյուսին հետ քաշել, սակայն պոկ եկան իրար ձեռքերից և քիչ անց նորից պատուհանի մոտ էին։ Կ-ն շտապեց մառան մըտնել, որտեղ օգնականները նրան չէին տեսնի, նա էլ ստիպված չէր լինի նրանց տեսնել։ Սակայն լուսամուտների ապակիների մեջ, համաբյա խնդրագին զնգոցը այստեղ էլ շարունակեց հետապնդել նրան։

— Նորից այդ օգնականները,— ներողություն խնդրող ձայնով իջևանատիրուհուն ասաց Կ-ն ու դուրսը ցույց տվեց։ Սակայն իջևանատիրուհին Կ-ի խոսքերին ուշադրություն չդարձրեց. նրա ձեռքից վերցրեց լուսանկարը, նայեց, հարթեց ծալծլված տեղերը ու նորից խցկեց բարձի տակ։ Նրա շարժումներն ավելի դանդաղ էին դարձել, բայց ոչ թե հոգնածությունից, այլ հիշողությունների բեռան տակ։ Նա ցանկացել էր պատմել Կ-ին, բայց հուշերի գիրկն ընկնելով մոռացել էր նրա ներկայությունը և խաղում էր գլխաշորի ծոպերի հետ։ Միայն որոշ ժամանակ անց նա վեր նայեց, ձեռքով շփեց աչքերն ու ասաց.

— Այս գլխաշորն էլ եմ Կլամմից ստացել, այս գիշերային գլխարկն էլ։ Նկարը, գլխաշորն ու գլխարկը այն երեք հիշատակներն են, որ ունեմ նրանից։ Ես Ֆրիդայի նման ջահել չեմ, նրա պես ինքնասեր չեմ և ոչ էլ այդքան նրբազգաց. նա շատ նրբազգաց է։ Կարճ ասած, ես կարող եմ կյանքում ամեն ինչի հետ հարմարվել, բայց պետք է մի բան խոստովանեմ, որ առանց այս երեք իրերի, այսքան երկար չէի կարողանա դիմանալ այստեղ։ Այո, հավանաբար ոչ մի օր չդիմանայի այստեղ։ Այս երեք հիշատակները, հավանաբար, քիչ են թվում ձեզ, բայց նայեք, ախր, Ֆրիդան, որ այդքան երկար ժամանակ կապված է Կլամմի հետ, ոչ մի հիշատակ չունի։ Ես հարցրել եմ նրան։ Նա ֆանատիկոս է, ոչնչով չի զոհանում։ Ես, որ ընդամենը երեք անգամ եմ եղել նրա մոտ՝

ընդհակառակը։ Չգիտեմ ինչու, հետագայում նա այլևս չկարողացավ իրեն իր մոտ տանել, և, կարծես ինձ հատկացված ժամանակի կարճատևությունը նախազգալով, այս երեք հիշատակները վերցրեցի հետս։ Իհարկե, մարդ անձամբ պետք է նվերի մասին հոգ տանի. Կլամմն ինքն իր ձեռքով ոչինչ չի տալիս, սակայն ով էլ որ այնտեղ իրեն հարմար որևէ բան տեսնի, կարող է խնդրել։

Թեև դրանք իրեն չէին վերաբերում, բայց այս պատմությունները լսելով՝ Կ-ն անհարմար զգաց։

— Իսկ դա ե՞րբ է եղել,— հառաչելով ասաց նա։

— Քսան տարի առաջ։ Ավելի, քան քսան տարին։

— Այդքան ժամանակ մարդ հավատարիմ է մնում Կլամմին,— ասաց Կ-ն։— Իսկ Դուք հասկանո՞ւմ եք, տիկին, որ նման խոսակցություններով բավական հոգս եք պատճառում ինձ, երբ ես մտածում եմ իմ ապագա ամուսնության մասին։

Իջևանատիրուհուն շատ անհարմար թվաց, որ Կ-ն ուզում է իր գործերը խառնել պատմածին և, զայրացած՝ աչքի տակով նայեց նրան։

— Ինչո՞ւ եք այդքան շարացած, տիկին,— ասաց Կ-ն։— Ես, ախր, Կլամմի հասցեին ոչինչ չասացի, սակայն, դեպքերի բերումով որոշակի հարաբերության մեջ եմ մտել նրա հետ. Կլամմի ամենամեծ երկրպագուն անգամ չի կարող ժխտել դա։ Այսպես ուրեմն, դա է պատճառը, որ Կլամմի անունը լսելիս ես շարունակ ստիպված եմ իմ մասին մտածել, և հնարավոր չէ որևէ բան փոխել։ Ի դեպ, տիկին,— այստեղ Կ-ն բռնեց նրա դողացող ձեռքը,— հիշեք, թե մեր վերջին զրույցն ինչքան վատ ստացվեց, մինչդեռ այժմ մենք խաղաղությամբ կբաժանվենք իրարից։

— Դուք իրավացի եք,— ասաց իջևանատիրուհին ու խոնարհեց գլուխը։— Սակայն, խնայեք ինձ։ Ես մյուսներից զգայուն չեմ, ընդհակառակը, յուրաքանչյուր ոք խոցելի տեղ ունի, իսկ իմ թույլ տեղը այդ մեկն է։

— Ցավոք, միաժամանակ նաև իմ թույլ տեղն է,— ասաց Կ-ն։— Սակայն ես հաստատ կտիրապետեմ ինձ, միայն թե բացատրեք ինձ, տիկին, թե մեր ամուսնական կյանքում ես ինչպե՞ս պետք է դիմանամ Կլամմի հանդեպ եղած այդ սար-

սափելի հավատարմությանը, այն նախապայմանով, իհարկե, որ այս հարցում Ֆրիդան ևս Ձեզ նման կլինի։

— Սարսափելի հավատարմությո՞ւն,— զայրույթով հարցրեց իջևանատիրուհին։— Արդյոք դա հավատարմությո՞ւն է։ Ես իմ ամուսնուն եմ հավատարիմ, բայց Կլամմին... Նա մի անգամ իր սիրուհին դարձրեց ինձ. ես երբեք կարո՞ղ եմ այդ կոչումը կորցնել։ Եվ ինչպե՞ս պետք է Դուք հանդուրժեք դա՝ կապված Ֆրիդայի հետ։ Ախ, պարոն հողաչափ, ո՞վ եք Դուք, որ համարձակվում եք այդպիսի հարցեր տալ։

— Տիկին,— սաստեց Կ-ն։

— Գիտեմ,— հաշտարար տոնով ասաց իջևանատիրուհին,— սակայն իմ ամուսինն այդպիսի հարցեր չէր տալիս։ Չգիտեմ, թե ում է պետք դժբախտ անվանել. ի՞նձ՝ այն ժամանակ, թե՞ Ֆրիդային՝ այժմ, Ֆրիդայի՞ն, որ իր կամքով լքեց Կլամմին, թե՞ ինձ, ում Կլամմն այլևս չկարգադրեց կանչել։ Գուցե թե Ֆրիդան է դժբախտ, թեև թվում է, թե նա այդ բանն իր ողջ ծանրությամբ չի հասկանում։ Սակայն իմ դժբախտությունն այն ժամանակ վերջնականապես տիրել էր իմ մտքերին, որովհետև շարունակ հարցնում էի ինքս ինձ և ըստ էության այսօր էլ չեմ դադարում հարցնել. ինչո՞ւ այսպես ստացվեց, Կլամմը երեք անգամ կարգադրեց կանչել քեզ, իսկ չորրորդ անգամ՝ այլևս ոչ, չորրորդ անգամ՝ երբեք։ Ի՞նչն էր ինձ ավելի շատ զբաղեցնում այն ժամանակ։ Ուրիշ էլ ինչի՞ մասին կարող էի խոսել իմ ամուսնու հետ, ում հետ ամուսնացա դրանից կարճ ժամանակ անց։ Ցերեկները մենք ոչ մի րոպե ժամանակ չունեինք, որովհետև այս իջևանատունը խզճուկ վիճակում էր բաժին ընկել մեզ, և մենք պետք է փորձեինք ոտքի կանգնեցնել այն, մինչդեռ դիշերները... Տարիներ շարունակ մեր գիշերային զրույցները միայն Կլամմի ու նրա վերաբերմունքի փոփոխության շուրջն էին պտտվում, և երբ ամուսինս նման խոսակցությունների ժամանակ քնում էր, ես արթնացնում էի նրան, և մենք շարունակում էինք խոսել։

— Այդ դեպքում, եթե թույլ կտաք, ես մի շատ կոպիտ հարց կտամ Ձեզ,— ասաց Կ-ն։ Իջևանատիրուհին լռում էր։— Նշանակում է, չի կարելի հարցնել։ Ինձ դա էլ է բավարարում։

www.a-pdf.com

— Հնարավոր է, որ դա բավարարում է Ձեզ, հատկապես դա։ Դուք սխալ եք մեկնաբանում ամեն ինչ, նաև՝ լռությունը։ Ի դեպ, Դուք այլ կերպ չեք էլ կարող։ Ես Ձեզ թույլ եմ տալիս հարցնել։

— Եթե ես ամեն ինչ սխալ եմ մեկնաբանում, գուցե նաև հարցն եմ սխալ ներկայացնում. երևի թե այն այնքան էլ կոպիտ չլինի։ Ես միայն ուզում էի իմանալ, թե Դուք ինչպե՞ս եք ծանոթացել Ձեր ամուսնու հետ և ինչպե՞ս է այս իջևանատունը Ձեր ձեռքն անցել։

Իջևանատիրուհին կնճռոտեց ճակատը, սակայն անտարբեր տոնով պատասխանեց.

— Դա շատ հասարակ հարց է։ Հայրս դարբին էր, իսկ Հանսը՝ իմ ամուսինը, ձիապան՝ մի կալվածատիրոջ մոտ, և շատ հաճախ էր գալիս հորս արհեստանոցը։ Այն ժամանակ ես վերջին անգամ էի հանդիպել Կլամմին և շատ դժբախտ էի, թեև իրականում իրավունք չունեի դժբախտ լինելու, քանզի ամեն ինչ շիտակ էր ընթացել, և այն, որ ինձ այլևս չէր թույլատրվում Կլամմի մոտ գնալ, հենց նրա որոշումն էր, ուրեմն՝ շիտակ էր։ Միայն պատճառներն էին անհասկանալի, իսկ ես իրավունք չունեի դրանք պրպտել։ Սակայն դժբախտ լինելու իրավունք էլ չունեի։ Բայցևայնպես ես ինձ դժբախտ էի զգում, չէի կարողանում աշխատել և ամբողջ օրը նստում էի մեր փոքրիկ պարտեզում։ Այնտեղ ինձ տեսավ Հանսը. նա երբեմն նստում էր իմ կողքին, ես չէի դանգատվում նրան, բայց նա գիտեր, թե բանն ինչ է, և որովհետև նա լավ տղա էր, ստացվեց, որ սկսեց ինձ հետ լաց լինել։ Այն ժամանակվա իջևանատերը, ում կինը մահացել էր և այդ պատճառով ստիպված էր դադարեցնել զբաղմունքը (և հետո, նա արդեն շատ ծեր էր), մի անգամ անցավ մեր պարտեզի մոտով, տեսավ մեզ այնտեղ նստած ու առանց երկար մտածելու՝ առաջարկեց վարձակալել իջևանատունը։ Որովհետև վստահում էր մեզ, նախօրոք ոչ մի գրոշ փող չպահանջեց և շատ էժան վարձ նշանակեց։ Ես չէի ուզում բեռ դառնալ հորս ուսերին, ինձ համար միևնույնն էր, և այդպես՝ իջևանատան ու նոր, թերևս ինչ-որ չափով մոռացություն բերող աշխատանքի մա-

www.a-pdf.com

սին մտածելով, ես ձեռքս հանձնեցի Հանսին։ Սա է եղելությունը։

Մի պահ լռություն տիրեց, որից հետո Կ-ն ասաց.

— Իշևանատիրոջ արարքը գեղեցիկ էր, բայց անզգույշ։ Թե՞ ձեր երկուսին վստահելու համար նա ուրիշ պատճառներ ուներ։

— Նա լավ էր ճանաչում Հանսին. Հանսի քեռին էր,— պատասխանեց իշևանատիրուհին։

— Այդ դեպքում՝ թերևս։ Ինչպես երևում է, Հանսենց ընտանիքի համար շատ կարևոր է եղել Ձեզ հետ ունեցած կապը։

— Երևի։ Չգիտեմ։ Ես այդ մասին երբեք չեմ մտածել։

— Բայց պետք է որ այդպես եղած լինի, եթե ընտանիքը պատրաստ էր այդպիսի զոհողության գնալ և իշևանատունը հենց այնպես, առանց երաշխիքի Ձեր ձեռքը տալ։

— Ինչպես ավելի ուշ պարզվեց, քայլն անզգույշ չէր,— ասաց իշևանատիրուհին։— Ես ամբողջովին տարվեցի աշխատանքով. ուժեղ էի, դարբնի դուստր, ինձ ոչ աղախին էր պետք, ոչ՝ ճորտ։ Հասցնում էի ամեն տեղ լինել. ընդհանուր սրահում, խոհանոցում, ախոռում, բակում, այնպես լավ էի եփում, որ նույնիսկ հյուրանոցի հյուրերին էի այս կողմը գրավել։ Դուք ճաշի ժամին դեռ երբեք չեք եղել ընդհանուր սրահում, ճաշին եկող մեր հյուրերին չգիտեք։ Մի ժամանակ ավելի շատ էին, հիմա շատերն են հեռացել։ Աշխատանքի արդյունքն այն եղավ, որ մենք կարողացանք ոչ միայն վարձը վճարել, այլև մի քանի տարի անց այս ամբողջը գնեցինք և այսօր համարյա պարտք չունենք։ Հաջորդ հետևանքն այն եղավ, որ ես քայքայեցի ինձ, սրտային հիվանդ դարձա, այժմ էլ պառավել եմ։ Դուք, հավանաբար, կարծում եք, թե ես Հանսից շատ ավելի ծեր եմ, բայց իրականում նա երկու, թե երեք տարով է ինձնից ջահել և գուցե թե երբեք էլ չծերանա, քանի որ նրա գործը՝ ծխամորճ ծխելը, հյուրերի պատմածներին ականջ դնելը, ծխամորճը դատարկելն ու երբեմն էլ գարեջուր բերելը մարդուն չեն ծերացնում։

— Ձեր ձեռնարկումները հիացմունքի են արժանի, դրանում ոչ մի կասկած չկա, բայց մենք խոսում էինք Ձեր մինչ-

www.a-pdf.com

ամուսնական կյանքի մասին, իսկ այն ժամանակ պետք է որ տարօրինակ թվար, որ Հանսենց ընտանիքը, փողը զոհաբերելով, կամ առնվազն նման համարձակ քայլի դիմելով՝ ինչպիսին իջևանատունը տրամադրելն է, ձգտել է ամուսնության և, միաժամանակ, ուրիշ ոչ մի հույս չի ունեցել, բացի աշխատելու Ձեր ունակությունը, որ այն ժամանակ դեռ ոչ ոքի հայտնի չէր, և Հանսի ունակությունը, ինչի բացակայության մասին արդեն պետք է որ նրանց ընտանիքում տեղյակ լինեին։

— Դե, այո,— հոգնած համաձայնեց իջևանատիրուհին։— Գիտեմ, թե ուր եք նշան բռնել ու ըստ այդմ ինչքան շեղ եք ընթանում։ Այդ բոլոր գործերում Կլամմը ոչ մի անելիք չուներ։ Ինչու պետք է նա իմ մասին հոգ տաներ, կամ, ավելի ճիշտ, ինչպես կարող էր նա մտածել իմ մասին։ Ախր, նա այլևս ոչինչ չդիտեր իմ մասին։ Այն, որ նա այլևս չկարգադրեց կանչել ինձ, մոռացության մատնելու նշան էր։ Ում նա չի հրամայում կանչել, նրան մոռանում է կատարելապես։ Ես չեմ ուզում այդ մասին խոսել Ֆրիդայի մոտ։ Սակայն դա միայն մոռանալ չէ, ավելին է, քան մոռանալը։ Ախր նրա հետ՝ ում մարդ մոռանում է, կարող է նորից ծանոթանալ, իսկ Կլամմի հարցում նման բան հնարավոր չէ։ Ում նա այլևս չի կարգադրում կանչել, ոչ միայն նրա հետ կապված անցյալն է մոռանում, այլ նաև դադարում է հիշել բոլոր ժամանակներում։ Եթե ես շատ ուզենամ, կկարողանամ Ձեր տեսակետով էլ մտածել, Ձեր՝ այստեղի համար անմիտ, իսկ այն օտար վայրերում, որտեղից Դուք եք եկել, գուցե թե արժեք ներկայացնող մտածելակերպով։ Դուք խելացնորության եք հասնում, երբ մտածում եք, թե իմ Հանսին հենց Կլամմն է նշանակել ինձ ամուսին, որպեսզի ես ոչ մի դժվարության չհանդիպեմ նրա մոտ գնալուց, եթե նա հետագայում երբևէ կանչի ինձ։ Դե, իհարկե, դրանից մեծ խելացնորություն չի կարող լինել։ Ո՞ւր է այն մարդը, որ կարող է խանգարել ինձ Կլամմի մոտ վազել, եթե նա մի նշան անի ինձ։ Հիմարություն է դա, կատարյալ հիմարություն։ Մարդ մոլորության է տրվում, երբ խաղում է նման հիմար մտքերի հետ։

— Ոչ, մոլորության մեջ ընկնել չենք ուզում,— ասաց

www.a-pdf.com

Կ-ն։— Մտովի ես այդքան հեռու չէի գնացել, ինչպես ինքներդ եք ենթադրում, թեև, եթե ուզում եք ճշմարտությունն իմանալ, այդ ուղղությամբ էի մտածում։ Առայժմ, սակայն, ինձ միայն զարմացնում է, որ Հանսի բարեկամությունն այդքան մեծ հույսեր է կապել Ձեր ամուսնության հետ և որ այդ հույսերն իրականում արդարացել են՝ թեկուզև Ձեր սրտի հաշվին, Ձեր առողջության քայքայման գնով։ Կլամմի ու կատարված դեպքերի միջև եղած կապի մասին միտքը, համենայնդեպս, պարտադրվում է մարդու կամքից անկախ, բայց ո՛չ, կամ առայժմ ո՛չ այն կոպտությամբ, ինչպես ինքներդ եք՝ որովհետև դա հաճույք է պատճառում Ձեզ, պատկերացնում սոսկ ինձ վրա հարձակվելու ձգտումով։ Թող Ձեզ համար հաճելի լինի, սակայն իմ միտքն այն էր, որ առաջին հերթին Կլամմն էր ամուսնության պատճառը։ Կլամմը չլիներ, Դուք Ձեզ դժբախտ չէիք զգա, անգործ նստած չէիք լինի պարտեզում, Կլամմը չլիներ, Հանսն այնտեղ չէր տեսնի Ձեզ և առանց Ձեր թախծի առկայության երկչոտ Հանսը երբեք չէր համարձակվի խոսել Ձեզ հետ, Կլամմը չլիներ, Դուք մեկտեղ արցունքներ չէիք թափի և ծեր ու բարի քեռի իշևանատերը ձեզ երբեք միասին, մտերմաբար նստած չէր տեսնի, Կլամմը չլիներ, Դուք կյանքի հանդեպ անտարբեր չէիք լինի և, հետևաբար, Հանսի հետ չէիք ամուսնանա։ Դե, ես պարզապես մտածեցի, որ Կլամմն այս ամենի մեջ բավական դեր ունի, սակայն բանը դրանով չի ավարտվում։ Դուք չէիք փորձի ամեն ինչ մոռանալ, իհարկե, ինքներդ Ձեզ այդպես չխնայելով չէիք աշխատի և տնտեսությունն այդքան չէիք լավացնի։ Ուրեմն, այստեղ ևս առկա է Կլամմը։ Սակայն Կլամմը նաև Ձեր հիվանդության պատճառն է, որովհետև Ձեր սիրտը մինչև Ձեր ամուսնությունն էր հոգնած չբավարարված կրքերից։ Միայն մի հարց է մնում, թե Հանսի բարեկամներին ի՞նչն էր նման ուժգնությամբ գայթակղում ամուսնության հարցում։ Ինքներդ մի անգամ հիշատակեցիք, որ Կլամմի սիրուհին լինելը նշանակում է աստիճանի բարձրացում՝ ինչը ենթակա չէ կորսվելու։ Հետևաբար, հենց դա է գայթակղել նրանց։ Սակայն, այս ամենից բացի, ես կարծում եմ՝ նրանք հույս են ունեցել, թե Ձեզ Կլամմի մոտ տարած լավ աստղը (պայմա-

www.a-pdf.com

նով, որ, ինչպես Դուք եք հաստատում, այն լավ անտղ է) Ձեզ է պատկանում, ուրեմն նաև մնալու է Ձեր գլխավերևում և այդպես արագ ու հանկարծակի չի լքի Ձեզ, ինչպես նույն բանն արեց Կլամմը։

— Դուք այդ ամենը լո՞ւրջ եք ասում,— հարցրեց իշևանատիրուհին։

— Լուրջ,— շտապեց հաստատել Կ-ն։— Միայն թե ես կարծում եմ, որ Հանսի բարեկամներն իրենց հույսերով եղել են ոչ լրիվ իրավացի, ոչ էլ լրիվ անիրավացի, ինձ նաև թվում է, թե նկատում եմ նրանց թույլ տված սխալը։ Արտաքուստ ամեն ինչ հաջողված է թվում։ Հանսն ապահովված է, երևելի կին ունի, հարգանք է վայելում, տնտեսությունը պարտքեր չունի։ Բայց իրականում, ախր, ոչ ամեն ինչ է բարվոք. մի հասարակ աղջկա հետ, ում առաջին սերը կարող էր լինել Հանսը, նա իրեն հաստատ ավելի երջանիկ կզգար։ Երբ նա, ինչպես ինքներդ եք նախատում, այդպես քշված արտաքինով կանգնում է հյուրասրահում, ապա միայն այն պատճառով, որ ինքն իրեն, իրոք, քշված է զգում (իհարկե, ինչքան որ ես եմ նրան ճանաչում, նա իրեն այդ պատճառով դժբախտ չի զգում), բայց և նույնքան հաստատ է, որ այդ գեղեցկատես, խելացի տղան մի ուրիշ կնոջ հետ ավելի երջանիկ կլիներ, ուզում եմ ասել՝ ավելի ինքնուրույն, ջանասեր, առնացի։ Իսկ Դուք ինքներդ, իհարկե, երջանիկ չեք և, ինչպես ասացիք, առանց Կլամմից մնացած երեք հիշատակների այլևս չէիք ուզենա ապրել, ու դեռ մի բան էլ սրբտային հիվանդ եք։ Նշանակում է, բարեկամները իրավացի չէի՞ն, երբ Ձեզ հետ հույսեր էին կապում։ Ձեմ կարծում։ Ձեր վրա օրհնություն կար, բայց նրանք չկարողացան դրան տիրանալ։

— Իսկ նրանք ի՞նչ էին բաց թողել,— հարցրեց իշևանատիրուհին։ Այժմ նա պառկել էր մեջքի վրա և հայացքը հառել առաստաղին։

— Կլամմին չէին հարցրել։

— Այդ դեպքում մենք նորից Ձեր գործին ենք անդրադառնում,— ասաց իշևանատիրուհին։

www.a-pdf.com

— Կամ Ձեր։ Մեր գործերը սերտորեն սահմանակցում են իրար։

— Դուք ի՞նչ եք ուզում Կլամմից,— հարցրեց իջևանատիրուհին։ Նա նստել էր ուղիղ, խփել-փմփուշացրել էր բարձերը, որ նստած ժամանակ կարողանար հենվել, և նայում էր ուղիղ Կ-ի աչքերին։— Ես Ձեզ անկեղծ պատմեցի իմ պատմությունը, որից Դուք կկարողանայիք որոշ բաներ սովորել։ Այժմ նույն անկեղծությամբ ասեք ինձ, թե ի՞նչ եք ուզում հարցնել Կլամմից։ Ես դժվարությամբ եմ կարողացել համոզել Ֆրիդային, որ բարձրանա Ձեր սենյակն ու սպասի այնտեղ. վախենում էի, թե նրա ներկայությամբ բավական անկեղծ չէիք լինի։

— Ես թաքցնելու ոչինչ չունեմ,— ասաց Կ-ն։— Սակայն նախ ուզում եմ մի բանի վրա հրավիրել Ձեր ուշադրությունը։ Դուք ասացիք, թե Կլամմն իսկույն մոռանում է եղածը։ Դա ինձ նախ շատ անհավանական է թվում, հետո, ախր, դա հնարավոր չէ ապացուցել, պարզապես ոչ այլ ինչ է, քան մի լեգենդ, այն աղջիկների խելքի ծնունդ, ովքեր վայելել են Կլամմի բարեհաճությունը։ Ես զարմանում եմ, որ Դուք հավատում եք նման տափակությունների։

— Դա լեգենդ չէ,— առարկեց իջևանատիրուհին։— Ավելի շուտ դա վերցրած է ընդհանուրի փորձից։

— Ուրեմն, նաև հնարովի մի պատմության օգնությամբ կարելի է հերքել այն։ Նշանակում է՝ մի տարբերություն էլ կա Ձեր և Ֆրիդայի դեպքերի միջև։ Կլամմը բոլորովին չի դադարել Ֆրիդային կանչել. ավելի շուտ, նա կանչեց, սակայն Ֆրիդան չգնաց։ Նույնիսկ հնարավոր է, որ նա դեռ սպասում է Ֆրիդային։

Իջևանատիրուհին լռեց, միայն նրա հայացքն էր զննախույզ շարժվում Կ-ի վրայով։

— Ես ուզում եմ հանգիստ լսել Ձեր բոլոր ասելիքները,— —ասաց նա։— Ավելի լավ է պարզ խոսեք, քան խնայեք ինձ։ Ես միայն մի խնդրանք ունեմ. մի օգտագործեք Կլամմի անունը։ Նրա մասին խոսելիս ասեք «նա» կամ ինչպես ուզում եք, միայն թե ոչ անունով։

— Շատ լավ,— համաձայնեց Կ-ն։— Ես չեմ կարող ասել, թե ինչ եմ ուզում նրանից։ Ես նախ ուզում եմ մոտիկից

www.a-pdf.com

տեսնել նրան, հետո ուզում եմ լսել ձայնը, ուզում եմ նրանից իմանալ, թե ինչպիսին է մեր ամուսնության հանդեպ ունեցած վերաբերմունքը։ Իսկ թե հետո էլ ինչ եմ. նրան խնդրելու, կախված է զրույցի ընթացքից։ Որոշ բաներ կարող են շոշափվել զրույցի ժամանակ, սակայն ինձ համար ամենակարևորն այն է, որ ես կանգնեմ նրան դեմառդեմ։ Ի դեպ, ես դեռ ոչ մի իսկական պաշտոնյայի հետ անմիջական խոսակցություն չեմ ունեցել։ Դա կարծես ավելի դժվարահասանելի է, քան ես էի ենթադրում։ Այժմ, սակայն, իմ պարտքն է նրա հետ խոսել որպես մասնավոր մարդու և իմ կարծիքով այդ բանն անելն ավելի հեշտ կլինի։ Որպես պաշտոնյա՝ ես նրա հետ երևի միայն իր անմատչելի գրասենյակում կարողանամ խոսել կամ դղյակում և, որ ավելի անհավանակն է՝ հյուրանոցում։ Իսկ որպես մասնավոր անձ՝ ամենուրեքտանը, զրոում, որտեղ որ ինձ հաջողվի տեսնել նրան։ Իսկ որ մասնավոր անձից բացի իմ դիմաց նաև պաշտոնյա կանգնած կլինի, դա կարող եմ հաճույքով պատկերացնել, մինչդեռ իմ առաջին նպատակը պաշտոնյայի հետ խոսելը չէ։

— Լավ,— ասաց իջևանատիրուհին ու դեմքը հպեց բարձերին, կարծես ինչ-որ անամոթ բան էր ասելու։— Եթե իմ ծանոթների միջոցով հաջողացնեմ, որ Կլամմի հետ զրուցելու Ձեր խնդրանքը իրականանա, կխոստանա՞ք ինձ, որ մինչև պատասխան դալը Ձեր սեփական նախաձեռնությամբ ոչինչ չեք անի։

— Ինչքան էլ կամենամ կատարել Ձեր խնդրանքը կամ Ձեր կամակորությունը, ես չեմ կարող նման բան խոստանալ։ Գործը չի սպասում՝ առանձնապես նախագահի հետ ունեցած քննարկման ինձ ոչ ձեռնտու արդյունքից հետո։

— Այդ առարկությունը չի անցնում,— ասաց իջևանատիրուհին։— Նախագահը բոլորովին աննշան մարդ է։ Մի՞թե չեք նկատել։ Եթե նրա կինը չլիներ, նա մի օր էլ չէր կարողանա իր պաշտոնին մնալ։ Կինն է ամեն ինչ անողը։

— Միցցի՞ն,— հարցրեց Կ-ն, իջևանատիրուհին գլխով արեց։— Նա էլ էր խոսակցության ժամանակ ներկա։

— Նա որևէ բան խոսե՞ց,— հետաքրքրվեց իջևանատիրուհին։

www.a-pdf.com

— Ոչ, սակայն ես այն տպավորությունը չունեցա, թե նա կարող է խոսել։

— Դե իհարկե, այստեղ ամեն ինչ այդպես գլխիվայր եք պատկերացնում։ Համենայնդեպս, բոլորովին նշանակություն չունի, թե ինչ է կարգադրել նախագահը. առիթի դեպքում ես կխոսեմ նրա կնոջ հետ։ Իսկ եթե հիմա ես խոստանամ, թե Կլամմի պատասխանը կգա ամենաուշը մի շաբաթից, ապա այլևս ինձ հետ չհամաձայնելու ոչ մի հիմք չեք ունենա։

— Այդ ամենը կարևոր չէ,— ասաց Կ-ն։— Իմ որոշումը հաստատ է, և ես կփորձեմ այն, նույնիսկ եթե ոչնչ մերժող պատասխան տա։ Իսկ եթե հենց սկզբից նման մտադրություն ունեմ, ախր չեմ կարող նախօրոք դիմել, որ զրույցի համար թույլտվություն խնդրեն։ Այն, ինչ թույլտվության բացակայության դեպքում կբունաթագրվի որպես համարձակ և բարի մտադրությամբ կատարված փորձ, մերժող պատասխանի դեպքում կլինի բացահայտ անհնազանդության դրսևորում։ Իմ կարծիքով, երկրորդ բնութագրումն ավելի վատ է։

— Ավելի վա՞տ,— հարցրեց իջևանատիրուհին։— Այսպես թե այնպես, դա անհնազանդություն է։ Իսկ հիմա վարվեք, ինչպես ուզում եք։ Տվեք ինձ իմ շրջազգեստը։

Առանց Կ-ին հաշվի առնելու, նա հագավ շրջազգեստը և շտապեց խոհանոց։ Արդեն վաղուց անհանգիստ իրարանցում էր սկսվել հյուրասրահում։ Դիտանցքի փեղկը թակեցին։ Օգնականներն էին. մի անգամ նրանք բախեցին ու բղավեցին, թե սոված են։ Հետո ուրիշ մարդիկ էլ հայտնվեցին, նույնիսկ մեղմ, բայց բազմաձայն երգեցողություն լսվեց։

Հավանաբար իջևանատիրուհու հետ ունեցած զրույցը շատ էր ուշացրել ճաշը. կերակուրը դեռ պատրաստ չէր, սակայն հյուրերը արդեն հավաքվել էին։ Այնուամենայնիվ ոչ ոք չհամարձակվեց իջևանատիրուհու արգելքն անտեսելով մտնել խոհանոց։ Եվ երբ դիտանցքից խոհանոցի անցուդարձին հետևողները հայտնեցին, թե իջևանատիրուհին արդեն գալիս է, աղախիններն իսկույն խոհանոց վազեցին, իսկ երբ Կ-ն սրահ դուրս եկավ, հավաքվածների մեծաքանակ խումբը՝ քսանից ավելի մարդ՝ տղամարդիկ, կանայք, գավառական զգեստներով, բայց հագնված ոչ գյուղացիավարի, դիտանցքի մոտից՝ ուր կանգնել էին խմբված, հորդեցին դեպի սեղան-

www.a-pdf.com

ները, որ իրենց համար նստելու տեղեր ապահովեն։ Անկյուններից մեկում դրված փոքր սեղանի շուրջ մի զույգ էր նստել երեխաների հետ։ Ամուսինը՝ զզգզված մորուքով, մեղմաբարո, կապուտաչ պարոնը, կանգնել էր երեխաների կողմը կռացած և, երգին զուգընթաց, ռիթմիկ խփում էր, ասես ցանկություն ալով խլացնել այն դանակով։ Նա հավանաբար ուզում էր, որ երեխաները, երգեցողությամբ տարված, փոքրինչ մոռանային սովածության մասին։ Թեև ոչ ոք նրան չէր նախատում, սակայն իջևանատիրուհին հավաքվածներից նեղություն խնդրեց։ Նա հայացքով փնտրեց ամուսնուն, որ վիճակը հավանաբար անելանելի համարելով, վազուց էր ճոճոպրնել, հետո դանդաղ գնաց խոհանոց։ Դեպի իր սենյակը՝ Ֆրիդայի մոտ շտապող Կ-ն նրան այլևս չէր հետաքրքրում։

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Վերևում Կ-ն հանդիպեց ուսուցչին։ Ուրախալին այն էր, որ իրենց սենյակն այլևս հնարավոր չէր ճանաչել, այնքան որ ջանացել էր Ֆրիդան։ Սենյակը լավ օդափոխված էր, վառարանը ճարճատում էր, հատակը լվացված էր, մահճակալը կարգի բերված, աղախինների իրերը՝ այդ զզվելի աղբը, ներառյալ նրանց նկարները, անհետացել էին, սեղանը, որի կնդրի շերտով ծածկված մակերևույթը բառի բուն իմաստով նայում էր մարդու թիկունքից, ուր էլ որ մարդ շուռ գար, հիմա սպիտակ, գործկեն սփռոցով էր ծածկված։ Այդ սենյակում արդեն կարելի էր հյուրեր ընդունել. Կ-ի սպիտակեղենի սակավաթիվ փոխնորդը, որ Ֆրիդան, ինչպես երևում է, ավելի շուտ էր լվացել և այժմ չորացնելու նպատակով փռել վառարանի մոտ, քիչ էր խարդարում։ Ուսուցիչն ու Ֆրիդան նստել էին սեղանի մոտ, և, երբ Կ-ն ներս մտավ, նրանք նստած տեղերից բարձրացան, Ֆրիդան համբույր-ողջույն տվեց Կ-ին, ուսուցիչը թեթևակի խոնարհվեց։ Մատցրիվ ու դեռ տանտիրուհու հետ ունեցած զրույցի պատճառած անհանգստությամբ՝ Կ-ն սկսեց նեղություն խնդրել, որ մինչև այժմ չի կարողացել այցելել ուսուցչին։ Կ-ն կարծում էր, թե ուսուցիչն ինքը եկել էր իր չայցելելուց անհանգստացած։ Մինչդեռ ուսուցիչը՝ իրեն հատուկ արժանապատվությամբ

թվաց, թե միայն այժմ հիշեց, որ իր ու Կ-ի միջև մի անգամ այցելության նման մի բանի վերաբերյալ պայմանավորվածություն է եղել։

— Ուրեմն Դուք պարոն հողաչա՞փն եք,— դանդաղ ասաց նա։— Այն անծանոթը, ում հետ մի քանի օր առաջ խոսում էի եկեղեցու հրապարակում։

— Այո,— կարճ ասաց Կ-ն. ինչ նա այն ժամանակ մենակ լինելու պատճառով էր թույլ տվել, այստեղ՝ իր սենյակում չէր հանդուրժի այլևս։ Նա շրջվեց Ֆրիդայի կողմն ու սկսեց խոսել այն մասին, որ հիմա մի անհետաձգելի այցելության է գնալու և պետք է լինի հնարավորին չափ լավ հագնված։ Առանց Կ-ին հարցուփորձ անելը շարունակելու, Ֆրիդան անմիջապես կանչեց սեղանի նոր սփռոցը զննելու առարկա դարձրած օգնականներին և հրամայեց Կ-ի զգեստներն ու ճաքավոր կոշիկները, որ Կ-ն անմիջապես սկսեց հանել, տանել ներքև և բակում խնամքով սրբել, իսկ ինքը պարանի վրայից վերցրեց մի վերնաշապիկ ու արդուկելու համար իջավ խոհանոց։

Այժմ Կ-ն մենակ էր սեղանի մոտ շարունակ լուռ նստած ուսուցչի հետ։ Նա թողեց, որ ուսուցիչը մի փոքր էլ սպասի, հանեց վերնաշապիկը, լվացարանի մոտ սկսեց լվացվել և միայն այժմ՝ մեջքով դեպի նա շրջված հարցրեց գալու պատճառը։

— Ես համայնքի նախագահի հանձնարարությամբ եմ եկել,— ասաց ուսուցիչը։ Կ-ն պատրաստ էր հանձնարարությունը լսել, բայց որովհետև Կ-ի խոսքերը դժվար էին հասկացվում թափվող ջրի աղմուկի մեջ, ուսուցիչը ստիպված եղավ ավելի մոտ գալ և Կ-ի կողքին հենվել պատին։ Իր լվացվելն ու անհանդիստ լինելը Կ-ն պատճառաբանեց կատարելիք այցելության անհետաձգելի բնույթով։ Ուսուցիչն անուշադրության մատնեց նրա խոսքերն ու ասաց.

— Դուք անքաղաքավարի եք վարվել պարոն նախագահի՝ այդ ծեր, վաստակաշատ, բազմափորձ ու արժանապատիվ մարդու հետ։

— Ես չգիտեի, թե անքաղաքավարի եմ եղել,— սրբվելով, ասաց Կ-ն։— Իսկ որ ոչ թե նուրբ վարվելաձևի, այլ ուրիշ

www.a-pdf.com

բանի մասին էի մտածելու, հաստատ է, որովհետև այնտեղ խոսքն իմ գոյության մասին էր, ում սպառնում էր ձեր խայտառակ պաշտոնավարությունը։ Մանրամասները ես Ձեզ չեմ պատմի, որովհետև Դուք ինքներդ կառավարող այդ մարմնի գործուն անդամներից մեկն եք։ Համայնքի նախագահ՞ն է իմ վարքից զանգատվել Ձեզ։

— Այդ ումի՞ց պետք է գանգատվեր նա,— հարցրեց ուսուցիչը։— Կամ եթե անդամ որևէ մեկը լիներ, նա կգանգատվե՞ր երբևէ։ Ես նրա թելադրությամբ միայն մի փոքր արձանագրություն եմ կազմել Ձեզ հետ ունեցած քննարկման կապակցությամբ և դրանից բավական բան եմ իմացել պարոն նախագահի բարեհոգության ու Ձեր պատասխանների բնույթի մասին։

Փնտրելով սանրը, որ Ֆրիդան երևի ինչ-որ տեղ էր դրել, Կ-ն հարցրեց.

— Ինչպե՞ս թե արձանագրություն։ Իմ բացակայությամբ լրացուցիչ մի արձանագրություն է կազմվել մի մարդու կողմից, ով բոլորովին ներկա չի եղել քննարկմանը։ Վատ չէ։ Իսկ ինչո՞ւ արձանագրություն։ Մի՞թե մեր խոսակցությունը պաշտոնական էր։

— Ոչ։ Կիսով չափ էր պաշտոնական,— ասաց ուսուցիչը։— Արձանագրությունը ևս կիսով չափ է պաշտոնական և կազմվել է միայն, որովհետև մեզանում բոլոր հարցերում պետք է լինի խստագույն կարգուկանոն։ Այն արդեն կազմված է և Ձեզ, համենայնդեպս, պատիվ չի բերում։

Կ-ն վերջապես գտավ սանրը, որ սահել-ընկել էր մահճակալի ծալքերի մեջ, և ավելի հանգիստ պատասխանեց.

— Թող կազմված լինի։ Դուք այդ լուրը հայտնելու համա՞ր եք եկել։

— Ոչ։ Բայց ես մեքենա չեմ և պարտավոր էի իմ կարծիքն ասել Ձեզ։ Դրան հակառակ, իմ հանձնարարությունը պարոն նախագահի բարեհոգության մասին ասված իմ խոսքերի լրացուցիչ ապացույցն է։ Ես կրկնում եմ, որ չեմ հասկանում նրա բարեհոգությունը և միայն իմ պաշտոնից դըրդված ու պարոն նախագահին հարգելով է, որ կատարում եմ հանձնարարությունը։

www.a-pdf.com

Լվացված ու սանրված Կ-ն վերնաշապկին ու գրեստներին սպասելով, նստել էր սեղանի մոտ։ Նրան այնքան էլ չէր հետաքրքրում ուսուցչի ասելիքը և հետո, նրա վրա ազդել էին իջևանատիրուհու՝ նախագահի մասին ունեցած ոչ այնքան նպաստավոր կարծիքը։

— Հավանաբար կեսօրն ա՞նց է արդեն։— Անցնելիք ճանապարհի մասին մտածելով հարցրեց նա, կարգի բերեց իրեն ու ասաց.— Դուք նախագահի անունից ինչ-որ բա՞ն էիք ուզում հայտնել։

— Այո, իհարկե,— ուսերը թոթվելով այնպես խոսեց ուսուցիչը, կարծես ամեն մի պատասխանատվություն թոթափում է իրենից։— Պարոն նախագահը երկյուղ է կրում, որ Դուք կարող է, եթե Ձեր գործի հետ կապված որոշումը ուշանա, ինքնակամ ինչ-որ անմտածված բան անեք։ Ինչ վերաբերում է ինձ, ես չգիտեմ, թե նա ինչու է երկյուղ կրում։ Իմ տեսակետն այս է. ավելի լավ է վարվեք այնպես, ինչպես ուզում եք։ Մենք Ձեր պահապան հրեշտակները չենք և բոլորովին պարտավոր չենք ամեն տեղ վազել Ձեր հետևից։ Դե լավ։ Պարոն նախագահն այլ կարծիքի է, իսկ որոշում կայացնելը, որ կոմսի գերատեսչությունների գործն է, նա, իրոք, չի կարող արագացնել։ Այնուամենայնիվ, այն շրջանակներում, ուր ինքն ազդեցություն ունի, նա ուզում է ժամանակավոր, իսկական, մեծահոգի որոշում ընդունել, և Ձեզնից է կախված որոշման հետ համաձայնելը։ Նա առաջարկում է առայժմ աշխատել դպրոցում։

Սկզբում Կ-ն հազիվ թե ուշադրություն դարձրեց, թե ինչ էր առաջարկվում իրեն, բայց այն փաստը, որ իրեն ինչ-որ բան առաջարկում են, այնքան աննշան չթվաց։ Դա ցույց էր տալիս, որ՝ նախագահի կարծիքով, ինքն ի վիճակի էր սեփական անձի պաշտպանության համար այնպիսի բաներ անել, որոնք հետո համայնքին կպատճառեին լրացուցիչ ծախսեր։ Եվ ինչպիսի լրջությամբ էին նրանք մոտեցել գործին։ Այս սենյակում բավական ժամանակ Կ-ի վերադարձին սպասած, իսկ դրանից առաջ էլ արձանագրություն կազմած ուսուցչին նախագահը պետք է որ ուղղակի քշած լիներ այստեղ։ Երբ ուսուցիչը նկատեց, որ իր խոսքերը Կ-ին մտքերի մեջ գցեցին, շարունակեց.

www.a-pdf.com

— Ես իմ առարկությունները հանդես բերեցի, ասացի, որ առայսօր ոչ մի ծառա պետք չի եղել դպրոցում, եկեղեցու սպասավորի կինը ժամանակ առ ժամանակ հավաքում է դպրոցը, իսկ Ֆրոյլայն Գիզան՝ ուսուցչուհին, հսկում է։ Ես բավականաչափ շարշարվում եմ երեխաների հետ և չեմ ուզում մի բան էլ վիճել դպրոցի ծառայի հետ։ Պարոն նախագահն առարկեց, որ իբր դպրոցը շատ կեղտոտ է։ Ես պատասխանեցի, որ վիճակն այնքան էլ վատ չէ, և դա համապատասխանում է իրականությանը, նաև ավելացրի՝ արդյո՞ք ավելի լավ կլինի, եթե քեզ դպրոցում ծառա վերցնենք։ Հաստատ՝ ոչ։ Դեռ չասենք, որ դու նման գործերից ոչինչ չես հասկանում։ Դպրոցի շենքը, ախր, միայն երկու մեծ դասասենյակ ունի, կից սենյակներ չկան, իսկ ծառան իր ընտանիքի հետ պետք է դասասենյակներից մեկում ապրի, քնի, ուրեմն նաև եփի-թափի, իսկ դա, իհարկե, չի կարող ավելի մաքուր դարձնել շենքը։ Սակայն պարոն նախագահն իր կարծիքը հիմնավորեց նրանով, որ այդ տեղը Ձեր նեղ վիճակի մեջ փրկության հույս կլինի, և որ դրանից հետո Դուք ամբողջ ուժով կձգտեք անթերի կատարել Ձեր աշխատանքը։ Ավելի ուշ, նկատեց պարոն նախագահը, Ձեզ հետ միասին աշխատանքի կներգրավենք նաև Ձեր կնոջը և օգնականներին, այնպես որ ոչ միայն դպրոցը, այլ նաև դպրոցի այգին կարելի կլինի պահպանել օրինակելի մաքրությամբ։ Այդ ամենին ես հեշտությամբ առարկեցի, իսկ պարոն նախագահն այլևս չկարողացավ հօգուտ ձեզ որևէ բան ասել, ծիծաղեց միայն և ավելացրեց, որ Դուք հողաչափ եք և հետևաբար կկարողանաք առանձնահատուկ գեղեցկությամբ, ուղիղ գծով տանել պարտեզի մարգերը։ Կատակի դեմ, ինչ խոսք, չի կարող առարկություն լինել, և ես այդ հանձնարարությամբ եկա Ձեզ մոտ։

— Ավելորդ հոդսեր եք պատճառում Ձեզ, պարոն ուսուցիչ։ Ես չեմ էլ մտածում ստանձնել այդ գործը։

— Հրաշալի է, հրաշալի է։ Առանց որևէ նախապայմանի Դուք մերժում եք առաջարկը,— ասաց ուսուցիչը, վերցրեց գլխարկն ու հեռացավ։

Նրանից անմիջապես հետո եկավ Ֆրիդան։ Նրա դեմքը

www.a-pdf.com

աղավաղված էր։ Վերնաշապիկը արդուկված չէր, հարցերին չէր պատասխանում։ Նրա մտքերը ցրելու համար Կ-ն պատմեց ուսուցչի ու նրա առաջարկի մասին։ Հազիվ էր Ֆրիդան լսել Կ-ի խոսքերը, վերնաշապիկը նետեց մահճակալին ու նորից դուրս վազեց։ Շուտով նա հետ եկավ, այս անգամ արդեն ուսուցչի հետ։ Վերջինիս տեսքը դժգոհություն էր արտահայտում. նա չողջունեց բոլորովին։ Ֆրիդան նրան խնդրեց մի փոքր սպասել (հավանաբար նրան հետ բերելիս մի քանի անգամ խնդրել էր արդեն), հետո կողքի դռնով, որի գոյության մասին Կ-ն ոչ մի պատկերացում չուներ, Կ-ին տարավ ձեղնահարկն ու այնտեղ վերջապես, հուզմունքից շնչակտուր լինելով պատմեց, թե ինչ էր կատարվել։ Իջևանատիրուհին, զայրացած այն բանից, որ Կ-ի՝ Կլամմի հետ խոսելու հարցում ինքը խոստովանություններին և, որ ավելի վատ է՝ զիջողության գնալու աստիճան նվաստացել է Կ-ի մոտ և դրանով ոչնչի չի հասել, քան, ինչպես ինքն ասաց, սառն ու մի բան էլ ոչ անկեղծ մերժման, հաստատ որոշել է Կ-ին այլևս չհանդուրժել իջևանատանը. եթե Կ-ն դղյակի հետ կապեր ունի, ապա թող արագ օգտվի դրանցից, որովհետև դեռ այսօր, հենց այժմ նա պետք է լքի այս տունը և միայն անմիջական ղեկավարության հրամանով ու հարկադրանքով իջևանատիրուհին նորից կընդունի նրան, սակայն հուսով է, որ բանը դրան չի հասնի, քանի որ ինքն էլ դղյակի հետ կապեր ունի և կիմանա ինչպես անել, որ դրանք դրսևորվեն։ Ի դեպ, Կ-ն միայն իջևանատիրոջ անփութության պատճառով է այստեղ իջևանել և, իմիջիայլոց, այստեղ մնալու կարիքը չունի բոլորովին, որովհետև դեռ այսօր նա պարծենում էր, թե իր համար պատրաստ պահվող ապաստան կա։ Ֆրիդան, ինչ խոսք, կմնա, իսկ եթե նա Կ-ի հետ հեռանա, ապա ինքը՝ իջևանատիրուհին, մինչև հոգու խորքը դժբախտ կզգա իրեն, և հենց միայն այդ մտքից նա ներքևում՝ խոհանոցում, լաց լինելով կուչ է եկել օջախի մոտ. խեղճ, հիվանդ, վշտացած կինը։ Եվ ինչպե՞ս կարող է նա այլ կերպ վարվել, երբ, նրա կարծիքով, խոսքը Կլամմի հիշատակի պատվի մասին էր։ Ուրեմն, իջևանատիրուհու հետ այսպես է գործերի վիճակը։ Ֆրիդան, իհարկե, կհետևի Կ-ին, ուր էլ որ նա գնա. ձյան,

թե սառնամանիքի միջով։ Այդ մասին, անշուշտ, այլևս հարկ չկա ոչ մի բառ խոսել, բայց իրենց երկուսի վիճակն էլ շատ վատ կլինի, և այդ է պատճառը, որ ինքը մեծ ուրախությամբ ողջունում է նախագահի առաջարկը, ու թեև կարող է գործը հարմար չլինել Կ-ին, բայց աթոր (սա պետք է հատկապես նշել) դա միայն ժամանակավոր կլինի։ Ժամանակ կշահեն ու հանգիստ կորոնեն ուրիշ հնարավորություններ, եթե անգամ վերջնական որոշումը ոչ նպաստավոր լինի։

— Ծայրահեղ դեպքում, ի՞նչն է պահում մեզ գյուղում։ Կհեռանանք։— Կ-ի վզից կախվելով, բացականչեց Ֆրիդան։— Իսկ այժմ, սիրելիս, կընդունենք առաջարկը։ Այնպես չէ՞։ Ես հետ եմ բերել ուսուցչին։ Դու նրան կասես «ընդունում եմ», ուրիշ ոչինչ, և մենք կտեղափոխվենք դպրոց։

— Վատ է,— առանց որոշակի լրջության ասաց Կ-ն, որովհետև բնակարանի մասին նա շատ չէր մտահոգվում, հիմա, ձեղնահարկում, ուր պատ ու պատուհան չկար և միշտ, մինչև ոսկորները թափանցող ցուրտ քամի էր, նա՝ միայն սպիտակեղենով կանգնած, շատ էր մրսում։— Սենյակն այսքան լավ ես պատավորել ու պետք է ելնենք։ Դժկամությամբ, ողջկամությամբ եմ ընդունում ես այդ տեղը։ Այդ փոքրիկ ուսուցչի մոտ հենց միայն կարճատև նվաստացումն ինձ համար տանջալի է, մինչդեռ հիմա նա պետք է իմ պետը դառնա։ Եթե կարողանայինք թեկուզ մի փոքր այստեղ մնալ, գուցե հենց այսօր՝ հետկեսօրին իմ վիճակը փոխվեր։ Եթե գոնե դու այստեղ մնայիր, կարելի կլիներ համբերել ու ուսուցչին միայն անորոշ պատասխան տալ։ Ինձ համար ես միշտ գիշերելու տեղ կգտնեմ, եթե պետք է, իրոք, Բար...— Ֆրիդան ձեռքով փակեց նրա բերանը։

— Ոչ այդ,— երկյուղած ասաց նա։— Խնդրում եմ, այլևս մի կրկնիր, իսկ մնացյալ ամեն ինչում ես կհետևեմ քեզ։ Եթե ուզում ես, կմնամ այստեղ, մենակ, ինչքան էլ որ ինձ համար տխուր լինի։ Եթե ուզում ես, կմերժենք առաջարկը, թեև, իմ կարծիքով, այդպես ճիշտ չի լինի։ Տես, եթե դու մի այլ հնարավորություն գտնես, թեկուզ հենց այսօր՝ հետկեսօրին, այդ դեպքում ինքնին հասկանալի է, որ դպրոցում առաջարկված տեղից իսկույն կհրաժարվենք, և ոչ ոք չի կարողանա

www.a-pdf.com

խանգարել մեզ։ Իսկ ինչ վերաբերում է ուսուցչի մոտ նվաստացմանը, թույլ տուր ես հոգամ այդ մասին, և նման ոչ մի բան չի լինի։ Ես ինքս կխոսեմ նրա հետ, դու միայն լուռ ներկա կգտնվես և հետագայում էլ այլ կերպ չի լինի. եթե չուզենաս, երբեք չես խոսի նրա հետ։ Իրականում միայն ես կլինեմ նրա ենթական և երբեք էլ հպատակ չեմ լինի, քանի որ ես գիտեմ նրա թուլությունները։ Այդպես, եթե տեղն ստանձնենք, ոչինչ չենք կորցնի, իսկ եթե հրաժարվենք, շատ բան կկորցնենք։ Եթե դեռ այսօր դղյակից որևէ լուր չստանաս, ապա թեկուզև միայն քեզ համար գիշերելու ոչ մի տեղ չես գտնի գյուղում. այսինքն, գիշերելու մի այնպիսի տեղ, որի համար ես՝ քո ապագա կինը, չամաչեմ։ Իսկ երբ դու գիշերելու ոչ մի տեղ չունենաս, արդյոք կկարողանա՞ս պահանջել ինձնից, որ ես տաք սենյակում քնեմ այն ժամանակ, երբ գիտեմ, որ դու դրսում, ցուրտ գիշերով թափառում ես։

Ամբողջ ժամանակ թևերը կրծքին խաչած, մի փոքր տաքանալու համար ձեռքերով մեջքը շփող Կ-ն ասաց.

— Այդ դեպքում համաձայնելուց բացի ուրիշ բան չի մնում։ Արի։

Սենյակ մտնելով, նա իսկույն շտապեց վառարանի կողմը, ուշադրություն չդարձրեց ուսուցչին, իսկ վերջինս, որ նստել էր սեղանի մոտ, հանեց ժամացույցն ու ասաց.

— Արդեն ուշ է։

— Փոխարենը մենք հիմա նույն կարծիքի ենք, պարոն ուսուցիչ,— ասաց Ֆրիդան։— Մենք ընդունում ենք առաջարկը։

— Լավ,— ասաց ուսուցիչը։— Սակայն այդ գործը պարոն հողաչափին է առաջարկվել, նա պետք է համաձայնություն տա։

— Իրոք։— Կ-ին օգնության եկավ Ֆրիդան։— Նա համաձայն է առաջարկին, այնպես չէ՞, Կ.։— Նման ձևով Կ-ն կարող էր իր բացատրությունը մի պարզ «այո» բառով սահմանափակել, որ բոլորովին էլ ուսուցչին չէր վերաբերի, այլ՝ Ֆրիդային։

— Այդ դեպքում ինձ մնում է Ձեզ ծանոթացնել Ձեր պարտականություններին, որպեսզի այդ հարցում ես մեկընդմիշտ հասկանանք իրար։ Պարոն հողաչափ, Դուք ամեն օր պետք է մաքրեք երկու դասասենյակներն ու տաքացնեք,

www.a-pdf.com

շենքի ուսումնական և մարզագույքի համեմատաբար փոքր վերանորոգումները հետագայում ձեռնարկեք ինքներդ, պարտեզի միջի ճանապարհը մաքուր պահեք ձյունից, տանեք-բերեք իմ ու Ֆրոյլայն ուսուցչուհու գրագրությունները և տարվա տաք եղանակներին զբաղվեք պարտեզի աշխատանքով։ Փոխարենը Դուք իրավունք ունեք Ձեր ընտրությամբ բնակվել երկու դասասենյակներից մեկում՝ եթե, իհարկե, երկու դասասենյակներում էլ միաժամանակ պարապմունք չլինի։ Իսկ եթե Դուք հենց այն սենյակում լինեք, ուր պետք է դաս անցկացվի, ապա Ձեզ հարկ կլինի մյուս սենյակը տեղափոխվել։ Դպրոցի շենքում կերակուր եփելու իրավունք չունեք, փոխարենը Դուք և Ձեր մարդիկ կկերակրվեք այստեղ՝ իջևանատանը, համայնքի հաշվին։ Իսկ որ Դուք Ձեզ պետք է պահեք դպրոցի պահանջներին համապատասխան ու հատկապես երեխաներին՝ դասի ժամանակ ձեր ընտանեկան գործերին առնչվող տհաճ տեսարաններին վկա դարձնելու իրավունք չունեք երբեք, իմիջիայլոց եմ հիշեցնում, որովհետև որպես կրթված մարդ, Դուք պետք է արդեն իմանաք դա։ Այդ առթիվ ասեմ նաև, որ մենք մտադիր ենք պահանջել Ֆրոյլայն Ֆրիդայի հետ ունեցած Ձեր կապը հնարավորին չափ շուտ օրինականացնել։ Այս ամենի և մի քանի այլ մանրուքների վերաբերյալ մի պայմանագիր կկազմվի, որ Դուք պետք է ստորագրեք իսկույն, հենց որ տեղավորվեք դպրոցի շենքում։

Այդ ամենը Կ-ին անկարևոր թվաց, դրանք կարծես իրեն չէին վերաբերվում կամ էլ կապված չէին իր հետ։ Միայն ուսուցչի մեծամտությունն էր նրան զրգռում, ու նա հենց այնպես ասաց.

— Դե իհարկե, դրանք սովորական պարտականություններ են։

Այդ նկատողության տպավորությունը փոքր-ինչ մեղմացնելու համար Ֆրիդան հարցրեց աշխատավարձի մասին։

— Աշխատավարձ վճարելու մասին կխոսվի մի ամիս փորձնական ծառայությունից հետո։

— Բայց դա շատ դաժան է մեր հանդեպ,— առարկեց Ֆրիդան։— Մենք ստիպված կլինենք ամուսնանալ համարյա առանց փողի, երբ առանց այն էլ ոչնչից ենք տուն ու տեղ

www.a-pdf.com

ստեղծելու։ Արդյոք չէի՞նք կարող, պարոն ուսուցիչ, համայնքին ուղղված խնդրագրով խնդրել առձեռն, փոքր վարձ։ Դուք խորհուրդ չէի՞ք տա։

— Ոչ,— ասաց ուսուցիչը, որ իր խոսքերը շարունակ Կ-ին էր ուղղում։— Այդ խնդրագրին կընդառաջեն միայն, եթե ես միջամտեմ, իսկ ես դա չեմ անի։ Աշխատատեղ տալն արդեն ձեր հանդեպ դրսևորված բարեհաճություն է, իսկ երբ մարդ գիտակցում է իր հասարակական պարտականությունը, ապա, շարունակ բարեհաճություն խնդրելով՝ չափը չի անցնում։

Սակայն այստեղ արդեն Կ-ն՝ համարյա իր կամքին հակառակ միջամտեց։

— Իսկ ինչ բարեհաճությանն է վերաբերում, պարոն ուսուցիչ, ես կարծում եմ, որ Դուք սխալվում եք։ Այդ բարեհաճությունն ավելի շուտ իմ կողմից է դրսևորվում։

— Ոչ,— ժպտալով պատասխանեց ուսուցիչը, որովհետև վերջապես կարողացել էր խոսքի մեջ ներքաշել Կ-ին։— Այդ հարցում ես լավ եմ տեղեկացված։ Դպրոցում սպասավորը մեզ նույնքան անհրաժեշտ է, ինչքան՝ հողաչափը։ Սպասավորը, ինչպես և հողաչափը, բեռ են մեր վզին։ Ինձ հարկ կլինի շատ երկար մտածել, թե ինչպես պետք է այդ վճռումները հիմնավորեմ համայնքի առաջ։ Ավելի լավ ու ճշմարտացի կլինի, եթե պահանջները պարզապես նետվեն սեղանի վրա ու երբեք չհիմնավորվեն։

— Ես էլ այդ եմ ասում։ Դուք ստիպված եք Ձեր կամքին հակառակ ընդունել ինձ։ Թեկուզ այդ բանը ծանր մտածմունքներ պատճառի Ձեզ, Դուք պետք է ընդունեք ինձ։ Եթե մեկը ստիպված է մյուսին ընդունել, իսկ այս մյուսը թողնում է, որ ընդունեն իրեն, ապա հենց այս վերջինն է, որ բարեհաճ է։

— Տարօրինակ է,— ասաց ուսուցիչը։— Ի՞նչը պետք է ստիպեր մեզ ընդունել Ձեզ։ Պարոն նախագահի բարի, չափից դուրս բարի սիրտն է ստիպում մեզ։ Ինչպես տեսնում եմ, պարոն հողաչափ, Դուք ստիպված կլինեք Ձեր վառ երևակայությանը վերջ տալ, մինչև որ դառնաք օրինակելի սպասավոր։ Իսկ հնարավոր աշխատավարձն ստանալու համար այդօրինակ դատողությունները հազիվ թե լավ տպավորություն թողնեն։ Ես, ցավոք, ուզում եմ ասել նաև, որ Ձեր

www.a-pdf.com

վերաբերմունքն ինձ դեռ շատ անելիքների կտրամադրի։ Դուք, ախր, ամբողջ ժամանակ ինձ հետ բանակցում եք միայն վերնաշապիկ ու վարտիք հագած, իսկ ես նայում եմ շարունակ և համարյա չեմ հավատում։

— Այո,— ծիծաղելով ասաց Կ-ն ու ծափ զարկեց։— Սարսափելի օգնականներ ունեմ։ Ու՞ր մնացին նրանք։

Ֆրիդան դռան կողմն շտապեց, ուսուցիչը, նկատելով, որ այժմ այլևս չի կարող Կ-ի հետ խոսել, Ֆրիդային հարցրեց, թե ե՞րբ են տեղափոխվելու։

— Այսօր։

— Այդ դեպքում ես վաղն առավոտյան կգամ ստուգելու,— ասաց ուսուցիչը, ձեռքը թափ տալով ցտեսություն մաղթեց և ուղեց դուրս գալ դռնից, որ Ֆրիդան էր բացել, սակայն քախվեց աղախիններին, սրանք արդեն բերում էին իրենց իրերը, որ նորից տեղավորվեն սենյակում։ Ուսուցիչը փորձեց սահել նրանց արանքից. աղախինները ոչ ոքի չէին զիջի ճանապարհը։ Ֆրիդան հետևեց նրան։

— Այ թե շտապում եք,— աղախիններին դիմեց Կ-ն. այս անգամ նա շատ գոհ էր նրանցից։— Մենք դեռ այստեղ ենք, իսկ դուք արդեն ուզում եք տեղավորվել։

Աղախինները ոչինչ չպատասխանեցին, միայն մտազբաղ շուռումուռ տվեցին իրենց կապոցներն, ու Կ-ն տեսավ կախ ընկած, իրեն քաջ ծանոթ, կեղտոտ կտորները։

— Ձեր իրերը հավանաբար երբեք չեք լվացել։— Կ-ի խոսքերում չարություն չկար, որոշակի համակրանք էր զգացվում։ Նրանք հասկացան, անմիջապես բացեցին իրենց կոպիտ բերանները, ցույց տվեցին անասունին բնորոշ ամուր, գեղեցիկ ատամներն ու ծիծաղեցին անձայն։— Դե լավ, եկեք,— ասաց Կ-ն։— Սա ձեր սենյակն է, տեղավորվեք։

Բայց աղախինները դեռ հապաղում էին (նրանց թվում էր, թե սենյակը չափից դուրս շատ է փոխվել), Կ-ն բռնեց մեկի թևից, որ առաջ տանի, սակայն իսկույն էլ բաց թողեց։ Երկու աղախիններն էլ զարմացած էին, և մի կարճ պահ իրար հետ համաձայնության գալուց հետո նրանք հայացքներն այլևս չհեռացրին Կ-ից։

— Այդ ինչքան էլ երկար նայեցիք ինձ։— Անորոշ տհաճ զգացումը վանելով ասաց Կ-ն, վերցրեց զգեստներն ու ճրտ-

www.a-pdf.com

քավոր կոշիկները, որ հենց նոր էր Ֆրիդան բերել օգնականների երկչոտ ուղեկցությամբ, և հագավ։ Նրան շարունակ (հիմա նույնպես) անհասկանալի էր թվում այն համբերությունը, որով Ֆրիդան էր հանդուրժում օգնականներին. Ֆրիդան նրանց, որ պետք է բակում զգեստները սրբելիս լինեին, երկար որոնումներից հետո գտել էր սրահում հանգիստ ճաշելիս, չմաքրված շորերը գրկները դրած։ Հետո նա ինքն էր ստիպված եղել ամեն ինչ անել, բայց, ախր, նա, որ կարողանում էր լավ լեզու գտնել պանդոկի խառնամբոխի հետ, բոլորովին էլ չէր վիճում սրանց հետ, նրանց ներկայությամբ պատմեց նրանց փնթիության մասին, այնպես, ինչպես կպատմեին աննշան կատակը, ու մի բան էլ կարծես շոյելով՝ խփեց մեկի այտին։ Կ-ն մտադրվեց մի ուրիշ անգամ կշտամբել նրանց. հիմա արդեն գնալու ժամանակն էր։

— Օգնականները կմնան այստեղ, տեղափոխվելու ժամանակ կօգնեն քեզ,— ասաց Կ-ն։ Օգնականները համաձայն չէին, կուշտ և ուրախ, ինչպես նրանք էին, ավելի մեծ հաճույքով կշարժվեին մի քիչ։ Միայն երբ Ֆրիդան ասաց. «Իհարկե, դուք կմնաք», նրանք հնազանդվեցին։

— Գիտե՞ս, թե ես ուր եմ գնում,— հարցրեց Կ-ն։

— Այո։

— Եվ այլևս հետ չե՞ս պահում ինձ։

— Դու այնքան շատ արգելքների կհանդիպես, որ իմ խոսքը ոչ մի նշանակություն չի ունենա։— Հրաժեշտ տալով, նա համբուրեց Կ-ին և որովհետև նա չէր ճաշել, հաց ու երշիկի մի փոքր փաթեթ տվեց, որ ինքն էր Կ-ի համար բերել ներքևից, հիշեցրեց, որ հետո այլևս ոչ թե այստեղ, այլ անմիջապես դպրոց գնա, ապա՝ ձեռքն ուսին դրած ուղեկցեց մինչև դռնից դուրս։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Սկզբում Կ-ն դոհ էր, որ հեռացավ տաք սենյակում աղախինների ու օգնականների ստեղծած իրարանցումից։ Դրսում արդեն փոքր-ինչ ցրտել էր, ձյունը ավելի էր ամրացել, ու քայլելը հեշտացել էր։ Արդեն մթնում էր, և Կ-ն արագացրեց քայլերը։

www.a-pdf.com

Դղյակը, որի ուրվագծերը սկսվում էին մթության մեջ տարրալուծվել, կանգնած էր առաջվա պես խաղաղ։ Կ-ն այնտեղ դեռ երբեք կյանքի նշույլ չէր նկատել, գուցե բնավ էլ հնարավոր չէր այդ հեռավորությունից ինչ-որ բան տեսնել, բայց ախր աչքերն էին ուզում նկատել մի մարդ, մի շարժում և ամայությանը չէին համակերպվում։ Երբ Կ-ն նայում էր դղյակին, երբեմն թվում էր, թե հանգիստ նստած՝ ղիմացը նայող մի մարդու է զննում։ Ոչ այնպիսի մեկին, ով մտքերի մեջ խճողված անջատվել է շրջապատից, այլ այնպիսի մի մարդու, ով ազատ ու անհոգ էր պահում իրեն, այնպես, ինչպես միայնակ մարդն է իրեն պահում, երբ մտածում է, թե ինքը մենակ է, և ոչ ոք չի հետևում իրեն, միաժամանակ նկատում է, որ իր կողմն են նայում և, այնուամենայնիվ, ոչինչ չի խանգարում իր հանգիստը։ Իրոք, մարդ չգիտեր՝ դա պատճառն էր, թե հետևանքը, որ դղյակին նայողների հայացքները չէին մնում դղյակին երկար գամված, այլ սահում էին ներքև։ Վաղ մայրամուտն այսօր ավելի էր ուժեղացրել այդ տպավորությունը. նա ինչքան երկար էր նայում, այնքան ավելի քիչ բան էր տեսնում, աղջամուղջն այնքան ավելի էր կլանում ամեն ինչ։

Հյուրանոցում լույսերը դեռ չէին վառել, երբ Կ-ն տեղ հասավ։ Նույն պահին առաջին հարկում մի պատուհան բացվեց և երիտասարդ, գեր, մաքուր սափրված, մուշտակ հագած մի պարոն դուրս խոնարհվեց ու այդպես էլ մնաց։ Կ-ի ուղղությունն նա նույնիսկ գլխի աննշան շարժումով չպատասխանեց։ Ո՛չ միջանցքում, ո՛չ էլ պանդոկում Կ-ն ոչ մի մարդու չհանդիպեց, երկար մնալուց փչացած գարեջրի հոտն այժմ ավելի անտանելի էր, քան Կ-ի՝ վերջին անգամ այստեղ եղած ժամանակ. նման բան «Կամրջի մոտ» իջևանատանը հավանաբար երբեք չպատահեր։ Կ-ն անմիջապես քայլեց դեպի այն դուռը, որի դիտանցքից վերջին անգամ նայել էր Կլամմին, զգուշորեն ներքև սեղմեց բռնակը, սակայն դուռը փակ էր։ Նա փորձեց շոշափել դիտանցքի տեղը, սակայն բացվածքն այնքան լավ էին հղկել-հարմարեցրել, որ նա չկարողացավ շոշափելով գտնել, լուցկի վառեց, ու նրան վախեցրեց ինչ-որ մեկի ճիչը. դռան ու խմիչքների սեղանի անկյունում

մի ջահել աղջիկ էր կուչ եկած նստել վառարանի մոտ և դժ-
վարությամբ բացված, քնաթաթախ աչքերը լուցկու լույսի
տակ հառել էր նրան։ Նա հաստատ Ֆրիդայի փոխարինողն
էր։ Շուտով աղջիկը տիրապետեց իրեն, վառեց էլեկտրական
լույսը (նրա դեմքի արտահայտությունը դեռ ղեյրատցած էր)
և ճանաչեց Կ-ին։

— Ախ, պարոն հաղորդապ,— ժպտաց նա, մեկնեց ձեռքն
ու ներկայացավ,— իմ անունը Պեպի է։

Նա փոքրահասակ էր, կարմիր, առողջ ու գեղեցիկ դեմք
ուներ, շիկակարմրավուն փարթամ մազերը հաստ հյուսք
էր արված, ճակատի վրա խոպոպներ էին ոլորվում, հագել էր
դորշագույն, պապզուն կտորից կարված, թեկուզև քիչ սազող,
ուղիղ ներքև իջնող կդեստ, որ եզրակարված էր կարծես
մսեղկան անվարժ ձեռքով սարքված վարդակապով ավարտվող
մետաքսե ժապավենով։ Զգեստը դժվարացնում էր նրա շար-
ժումները։ Պեպին հետաքրքրվեց Ֆրիդայով. արդյոք նա շուտ
չի՞ վերադառնա։ Հարցի մեջ շարախնդրություն էր զգացվում։

— Ֆրիդայի հեռանալուց անմիջապես հետո ինձ այստեղ
կանչեցին, որովհետև պատահական մարդը չի կարող աշխա-
տել այստեղ։ Մինչև այժմ ես աղախին էի և այս նոր գործին
անցնելը իմ կողմից այնքան էլ հաջողակ փոխանակություն
չէր։ Երեկոներն ու գիշերները այստեղ շատ անելիք կա։ Շատ
եմ հոգնում, հազիվ եմ կարողանում դիմանալ և չեմ զարմա-
նում, որ Ֆրիդան հրաժարվեց պանդոկից։

— Ֆրիդան շատ գոհ էր այստեղից,— ասաց Կ-ն՝ վերջ-
նականապես ցույց տալու համար Ֆրիդայի ու Պեպիի միջև
եղած տարբերությունը, որը Պեպին էր անտեսում։

— Մի հավատացեք նրան։ Ուրիշ ոչ ոք չի կարող այնպես
հեշտ տիրապետել իրեն, ինչպես Ֆրիդան։ Մարդ չի էլ կա-
րող նկատել, թե նա ուզում է ինչ-որ բան խոստովանել։
Ես, ախր, մի քանի տարի է, ինչ այստեղ նրա հետ եմ ծառա-
յում, մենք միշտ միասին, մի անկողնում ենք քնել, բայց
ես երբեք չեմ վստահել նրան. այսօր նա իհարկե, այլևս չի
հիշում իմ մասին։ Նրա միակ ընկերուհին, թերևս, կամրջի
մոտի իջևանատան ծեր տիրուհին է, և դա շատ հատկանշա-
կան է։

www.a-pdf.com

— Ֆրիդան իմ հարսնացուն է,— ասաց Կ-ն ու հենց այնպես փնտրեց դռան վրայի դիտանցքը։

— Գիտեմ, դրա համար էլ պատմում եմ։ Հակառակ դեպքում ասածս ոչ մի նշանակություն չէր ունենա Ձեզ համար։

— Հասկանում եմ։ Ուզում եք ասել, որ կարող եմ հպարտ լինել նման մի ինքնամփոփ աղջիկ ընտրած լինելու համար։

— Այո,— ասաց Պեպին ու գոհ ծիծաղեց, ասես իրեն հաջողվել էր Ֆրիդային վերաբերող հարցերում գաղտնի համաձայնության գալ Կ-ի հետ։

Բայց նրա խոսքերը չէին, որ զբաղեցրին Կ-ին ու մի փոքր շեղեցին փնտրելուց, այլ պատճառը նրա հայտնվելն ու նրա ներկայությունն էր այստեղ։ Նա, իհարկե, ավելի երիտասարդ էր Ֆրիդայից, դեռ երեխայավարի և նրա զգեստներն էլ էին ծիծաղելի. ինչպես երևում էր, նա հագնվել էր պանդոկում աշխատող աղջկա մասին ունեցած չափազանցված պատկերացումներին համապատասխան։ Այդ պատկերացումը կազմելու հարցում էլ նա յուրովի իրավացի էր, քանի որ դեռ չէր վաստակել իրեն չհամապատասխանող այս տեղը, նշանակումն անբարենպաստ էր նրա համար, այստեղի աշխատանքը միայն ժամանակավորապես էր վիճակվել նրան, նրան չէին վստահել նույնիսկ կաշվե դրամապանակը, որ միշտ կախված էր Ֆրիդայի գոտիկից։ Պեպիի թվացյալ զգոնությունը հաստատ ցուցադրական էր և, այնուամենայնիվ, չնայած մանկապայել տհասությանը, գուցե նա ևս դրդյակի հետ կապեր ունենար։ Սիր նա, եթե չէր խաբում, ավելին էր եղել և առանց իր արժեքն իմանալու այստեղ քնով օրեր էր անցկացրել ու թեև մանրակազմ, գեր ու փոքրինչ կորամեջք մարմինը դրկելով Կ-ն ոչ մի օգուտ չէր ունենա նրանից, սակայն կհաղորդակցվեր նրան, իսկ դա նորուժ կտար նրան այս դժվարին ճանապարհին։ Գուցե Ֆրիդայի հետ էլ էր այսպես եղել։ Բայց ոչ. դա հասկանալու համար բավական էր միայն Ֆրիդայի հայացքը հիշել։ Ինքը երբեք չէր դիպչի Պեպիին, սակայն պետք էր, որ մի պահ աչքերը ծածկեր, որովհետև ագահ հայացքով էր նայում աղջկան։

— Լույսը վառելը պարտադիր չէր,— ասաց Պեպին ու անջատեց։— Ես վառեցի, որովհետև Դուք շատ վախեցրիք ինձ։ Իսկ ի՞նչ եք ուզում այստեղ։ Ֆրիդան ինչ-որ բա՞ն է մոռացել։

www.a-pdf.com

— Այո,— ասաց Կ-ն ու ցույց տվեց դուռը։— Այս սենյակում մի ծածկոց է մնացել։ Սպիտակ, ասեղնագործած ծածկոց է։

— Այո, նրա ծածկոցը։ Հիշում եմ, գեղեցիկ գործ էր։ Գործելիս ես օգնել եմ նրան, բայց հազիվ թե ծածկոցը սենյակում լինի։

— Ֆրիդան այդպես է ենթադրում։ Իսկ այնտեղ ո՞վ է ապրում։

— Ոչ ոք։ Սա պարոնների սենյակն է։ Պարոններն ուտում-խմում են այստեղ։ Այսինքն, սենյակն այդ նպատակին է հատկացված, մինչդեռ նրանց մեծ մասը վերևում՝ իրենց սենյակներում են մնում։

— Եթե ես իմանայի, որ այժմ այնտեղ ոչ ոք չկա, մեծ հաճույքով կմտնեի ու կփնտրեի սփոռոցը։ Բայց վստահ չեմ։ Օրինակ, Կլամմը սովորություն ունի այնտեղ նստել։

— Այս պահին Կլամմն հաստատ այնտեղ չէ։ Նա հենց հիմա հեռանալու է։ Սահնակն արդեն սպասում է բակում։

Առանց որևէ բացատրության Կ-ն անմիջապես թողեց պանդոկը, հյուրանոցից դուրս գալու փոխարեն շրջվեց դեպի տան խորքն ու մի քանի քայլից բակ հասավ։ Ինչ լուռ ու գեղեցիկ էր այստեղ։

Բակը քառանկյուն էր, երեք կողմից շրջապակված էր հյուրանոցի շենքով, փողոցահայաց կողմից (նեղ փողոց էր, որի գոյության մասին Կ-ն չգիտեր) այդ պահին բաց, մեծ ու ծանր դարպաս ունեցող բարձր ու սպիտակ պարիսպն էր ձգվում։ Այստեղ՝ բակի կողմից հյուրանոցի շենքն ավելի բարձր էր թվում, քան ճակատամասից, գոնե առաջին հարկը ձևափոխված էր ընդհանրապես և ավելի ճոխ տեսք ուներ, որովհետև զոտևորված էր փայտյա փակ վերնասրահով, ուր մարդաբոյ բարձրության վրա միայն մի ճեղք էր երևում։ Շենքի մեջտեղի մասում՝ որոշակի թեքության տակ, այն անկյունում, ուր շենքի թևերից մեկը միանում էր հյուրանոցին, անդուռ մի մուտք կար։ Մուտքի դիմաց մուգ գույնի, փակ, երկձի սահնակ էր կանգնած։ Կառապանից բացի, ում Կ-ն այդ հեռավորությունից չտեսավ, այլ միայն նրա գոյությունը ենթադրեց, երեկոյան աղջամուղջով ծածկված բակում ոչ ոք չկար։

www.a-pdf.com

Ձեռքերը գրպանները դրած, զգուշորեն շուրջը նայելով, պարսպի տակով Կ-ն անցավ բակի երկու կողմով, մինչև որ հասավ սահնակին։ Կառապանը՝ մեկն այն գյուղացիներից, որ լինում էին պանդոկում, մորթու մեջ պարուրված, անհաղորդ մոտեցավ Կ-ին, այնպես, ինչպես կնայեին բակով անցնող կատվին։ Նույնիսկ երբ Կ-ն մոտեցավ, ողջունեց ու ձիերն էլ անհանգստացան մթության միջից մարդու անակնկալ հայտնվելուց, նա նույն անհաղորդը մնաց։ Կ-ին դա շատ էր ձեռնտու։ Պարսպին հենված, նա բացեց ուտելիքի փաթեթը, երախտագիտությամբ հիշեց Ֆրիդային, որ այդպես ուշադիր էր իր հանդեպ ու միաժամանակ մի հայացք գցեց տան ներսը. ուղղանկյուն հատվածքի աստիճանը իջնում էր ներքև և այնտեղ հատվում էր ցածրիկ, բայց երևի խոր կառուցված միջանցքի հետ, ամեն ինչ մաքուր էր, սպիտակեցված, ուղիղ ու հստակ եզրագծերով։

Սպասելն ավելի երկար տևեց, քան Կ-ն էր ենթադրում։ Նա վաղուց արդեն վերջացրել էր ուտելը, ցուրտն զգացնել էր տալիս իրեն, աղջամուղջը կատարյալ մութի էր վերածվել, բայց Կլամմը չէր գալիս։

— Կարող է դեռ երկար տևել։— Խոպոտ ձայնը հանկարծ այնքան մոտ հնչեց, որ Կ-ն ցնցվեց։ Կառապանն էր, որ, կարծես քնից նոր արթնացած, ճմլկոտաց ու հորանջեց։

— Ի՞նչն է կարող երկար տևել,— ոչ առանց երախտագիտության զգայման հարցրեց Կ-ն, որովհետև միապաղաղությունն ու լարվածությունն արդեն անտանելի էին դառնում։

— Մինչև որ Դուք գնաք,— ասաց կառապանը։ Կ-ն չհասկացավ նրան, սակայն այլևս ոչինչ չհարցրեց, որովհետև կարծում էր, թե գոռոզամիտ կառապանին այդպես ավելի հեշտ կստիպի խոսել։ Մթության մեջ կառապանին անպատասխան թողնելը, իրոք, խոսելու դրդեց, և նա քիչ անց հարցրեց.

— Կոնյակ ուզո՞ւմ եք։

— Այո,— առանց մտածելու, պատասխանեց առաջարկից շատ հրապուրված Կ-ն, որովհետև արդեն մրսում էր։

— Այդ դեպքում բացեք սահնակի դռնակը։ Գրպանիկի մեջ

մի քանի շշեր կան։ Մեկը վերցրեք, խմեք ու հետո տվեք ինձ։ Մուշտակը դժվարացնում է իմ ներքև իջնելը։

Որպես ծառա հանդես գալու միտքը վշտացրեց Կ-ին, բայց որովհետև կառապանի հետ արդեն զրույցի էր բռնվել, հնազանդվեց, նույնիսկ անտեսելով այն վտանգը, թե Կլամմը կարող է սահնակի մոտ անակնկալի բերել իրեն։ Նա բացեց լայն դուռը և կարող էր անմիջապես դռան ներսի կողմում գտնվող գրպանից հանել շիշը, բայց որովհետև դուռն այժմ բաց էր, սահնակի ներսը այնպես հրապուրեց նրան, որ նա չկարողացավ դիմակայել թեկուզև մեն մի ակնթարթ այնտեղ նստելու ցանկությանը, և ներս սահեց։ Սահնակի ներսում անսովոր տաք էր, և այդ տաքությունը չխախտվեց էլ, թեև Կ-ն, չհամարձակվելով փակել, բաց էր թողել դուռը։ Կ-ն չէր զգում՝ արդյո՞ք ինքը սահնակի նստարանին էր նստած, այնպես էր խրվել ծածկոցների, բարձերի ու մորթիների մեջ, որ թեկուզ ուղած կողմի վրա էլ այդպես շրջվեր ու ձգվեր, միևնույն է՝ տաք ու փափուկ մորթիների մեջ էր։ Թևերը տարածած, գլուխը հենելով պատրաստակամ բարձերին, սահնակում նստած՝ նա նայեց մութ տան կողմը։ Ի՞նչն էր Կլամմի ուշանալու պատճառը։ Ձյան մեջ երկար կանգնելուց հետո ներսի տաքությունից կարծես անզգայնացած, Կ-ն ուզում էր, որ Կլամմը գար վերջապես։ Ինքնամոռացությանը խանգարելով, նրա գիտակցությանը աղոտ հասավ այն միտքը, որ Կլամմն ավելի լավ է չտեսնի իրեն այս վիճակով, սակայն նրան քաջալերում էր կառապանի վարքը. նա գիտեր, որ ինքը սահնակում է, նույնիսկ առանց կոնյակ պահանջելու թողել էր նստել այնտեղ։ Կառապանի ցուցաբերած ուշադրությունից զգացված Կ-ն որոշեց սպասարկել նրան։ Անճոռնի շարժումով՝ առանց դիրքը փոխելու, նա ձեռքը մեկնեց ոչ թե դեպի բաց դռան գրպանիկը, որ շատ հեռու էր, այլ՝ թիկունքի կողմում գտնվող փակ դուռը։ Ասենք, տարբերություն չկար, որովհետև այստեղ էլ շշեր կային։ Նա մեկը հանեց, պտտեցրեց-բացեց շիշը և հոտ քաշելով, ակամայից ժպտաց։ Հոտն այնքան քաղցր էր, այնպես շոյող, ինչպես երբ մարդ շատ սիրելի մեկից գովք, գեղեցիկ բառեր է լսում, բացարձակ տեղյակ չէ, թե բանն ինչ է, բնավ չի ուզում իմանալ ու

միայն երջանիկ է, գիտակցելով, որ, ահա, իր հետ են այդպես խոսում։

— Արդյոք սա կոնյա՞կ է,— ինքնիրեն անվստահ հարցրեց նա ու, հետաքրքրությունից դրդված, համտեսեց։ Իրոք, ինչքան էլ որ տարօրինակ էր, շշի պարունակությունը կոնյակ էր. այրեց ներսն ու տաքացրեց։ Ինչպես էր այս հեղուկը խմելու ժամանակ քաղցր բույր ունեցող անծանոթ ըմպելիքից վերածվում կառապանին վայել խմիչքի։— Մի՞թե հնարավոր է։— Կարծես ինքնիրեն նախատելով հարցրեց Կ-ն ու մի կում էլ արեց։

Նա շշից երկար կում էր անում, երբ նույն պահին շուրջը լուսավորվեց. ներսում, աստիճանների վրա, միջանցքում, նախասենյակում ու դրսում՝ մուտքի վերևում, էլեկտրական լամպեր վառվեցին։ Աստիճաններով ներքև իջնող ոտնաձայներ լսվեցին, շիշն ընկավ Կ-ի ձեռքից, կոնյակը թափվեց մորթու վրա, Կ-ն սահնակից դուրս թռավ, դեռ կարող էր դուռը վրա խփել (ինչը հավանաբար աղմուկ կառաջացներ), երբ քիչ անց մի պարոն դանդաղ դուրս եկավ շենքից։ Մխիթարականը կամ գուցե ցավալին այն էր միայն, որ եկողը Կլամմը չէր, այլ այն պարոնը, ում Կ-ն արդեն տեսել էր առաջին հարկի պատուհանում։ Չափազանց բարետես մի երիտասարդ էր նա, շատ լուրջ տեսք ուներ, սպիտակ դեմքի վրա այտերը կարմրին էին տալիս։ Կ-ն էլ նրան նայեց մռայլ հայացքով, բայց այդ հայացքը ավելի շուտ հենց իրեն էր հասցեագրված. լավ կլիներ, եթե իր օգնականներին ուղարկած լիներ, որովհետև նրանք էլ կկարողանային վարվել այնպես, ինչպես ինքն էր վարվել։ Դիմացը կանգնած պարոնը այնպիսի տեսքով էր լռում, կարծես ասելիք խոսքերի համար դեռ բավական օդ չէր կուտակել անսովոր լայն կրծքի տակ։

— Հրաշալի է,—վերջապես խոսեց նա ու գլխարկը փոքր-ինչ հետ հրեց ճակատից։ Ինչպե՞ս թե։ Այս պարոնը հավանաբար ոչինչ չգիտեր Կ-ի սահնակ նստելու մասին և ինչ-որ բան արդեն հրաշալի էր համարում։ Գուցե նա զարմանո՞ւմ էր, որ Կ-ն մինչև բակ էր հասել։

— Դուք այդ ինչպե՞ս եք հայտնվել այստեղ,— այժմ արդեն ավելի կամաց հարցրեց պարոնն ու արտաշնչեց, ըստ երե-

www.a-pdf.com

վույթին համակերպվելով այն մտքի հետ, որ անուղղելի բան է կատարվել։ Ի՞նչ հարց էր տալիս, ի՞նչ պատասխան տար։ Մի՞թե Կ-ն պետք է բացատրեր այս պարոնին, որ այդքան վառ հույսերով այստեղ գալուց հետո պարզվում է, որ իզուր էր ամեն ինչ։ Պատասխան տալու փոխարեն Կ-ն շրջվեց սահնակի կողմը, դուռը բացեց, վերցրեց ներսում մոռացված գլխարկն ու դժկամությամբ նկատեց, թե ինչպես էր կոնյակը կաթում սահնակի ոտնակից։ Հետո նա նորից շուռ եկավ պարոնի կողմը. ցույց տալ, թե ինքը եղել էր սահնակում, հիմա այլևս ոչ մի մտավախություն չէր պատճառում նրան և, հետո, դա չէր ամենասարսափելին. եթե նրան հարցնեին, ապա այդ ժամանակ արդեն չէր լռի, որ կառապանն էր իրեն դրդել սահնակի դուռը բացել։ Վատն այն էր, որ պարոնն անակնկալի էր բերել իրեն, որ բավական ժամանակ չէր ունեցել նրա աչքից թաքնվելու և հետո Կլամմին անարգել սպասելու համար, կամ բավական արիություն չէր ունեցել, որ նստեր սահնակում, փակեր դուռը և, ներսում՝ մորթիների վրա նստած, սպասեր Կլամմին, ու մինչ այս պարոնը մոտերքում էր՝ այդպես մնար։ Նա, իրոք, չէր կարող իմանալ, որ հիմա Կլամմը չէր գալու, իսկ եթե գար էլ, ավելի լավ կլիներ, եթե նրան սահնակից դուրս դիմավորեր։ Այո, մտածելու որոշ բաներ կային, բայց արդեն ոչ այժմ, որովհետև ամեն ինչ վերջացել էր։

— Եկեք ինձ հետ։— Իրականում առանց հրամանի խոսեց պարոնը, բայց հրամանը ոչ թե նրա խոսքերի մեջ արտահայտվեց, այլ ձեռքի՝ խոսքին ուղեկցող կտրուկ, դիտավորյալ անտարբեր շարժման մեջ։

— Ես այստեղ մարդու եմ սպասում,— արդեն ոչ թե հաջողության վրա հույս դնելով, այլ սոսկ հանուն սկզբունքի, ասաց Կ-ն։

— Եկեք։— Առանց շփոթվելու, կարծես հասկացնել տալով, թե ինքը երբեք չի կասկածել, որ Կ-ն որևէ մեկին սպասում է, մի անգամ ևս կրկնեց պարոնը։

— Բայց այդ դեպքում ես չեմ տեսնի այն մարդուն, ում սպասում եմ,— ուսերը ցնցելով ասաց Կ-ն։ Ջնայած կատարվածին, նրան թվում էր, թե այն, ինչի հասել էր մինչ այս պահը, արդեն յուրատեսակ ձեռքբերում էր, որ տվյալ պահին

www.a-pdf.com

բոպեն միայն արտաքուստ էր իր ձեռքերում, բայց և չպետք է պատահած առաջին մարդու հրամանին հնազանդվելով բաց թողներ։

— Անկախ այն բանից, Դուք սպասում եք, թե ոչ, չեք տեսնի նրան։— Թեև երիտասարդ պարոնը կտրուկ էր արտահայտվում, բայց երևում էր, որ նա համակերպվում է Կ-ի ցանկությանը։

— Եթե այդպես է, ավելի լավ է սպասելով չտեսնեմ նրան,— կամակորությամբ ասաց Կ-ն. նա, իհարկե, թույլ չէր տա, որ այս պարոնը հենց այնպես վոնդեր իրեն։ Դրան ի պատասխան պարոնը՝ կարծես համոզվելով, որ Կ-ն անհասկացող է և դրանից հետո սեփական տրամաբանությանը վերադառնալու ցանկությամբ, գլուխը թեթևակի հետ գցելով, դեմքի մտախոհ արտահայտությամբ փակեց աչքերը, լեզվի ծայրով շփեց բաց բերանի շուրթերն ու դիմեց կառապանին.

— Արձակիր ձիերին։

Պարոնին հնազանդ՝ կառապանն ստիպված էր Կ-ի կողմը շարացած հայացք նետելով իջնել տեղից և խիստ վարանելով, կարծես ոչ թե պարոնի՝ առաջին հրամանը հերքող նոր կարգադրության էր սպասում, այլ ենթադրում էր, թե Կ-ն կփոխի իր մտադրությունը, սկսեց ձիերին ու սահնակը հետընթացով մոտեցնել կողաշենքին, ուր՝ մեծ դարպասի հետևում, ախոռն ու կառատեղն էին գտնվում։ Կ-ն տեսավ, որ մենակ է մնում. սահնակը մի ուղղությամբ հեռացավ, մյուս ուղղությամբ՝ այն ճանապարհով, որ Կ-ն էր եկել, հեռացավ երիտասարդ պարոնը, բայց երկուսն էլ շատ դանդաղ էին շարժվում, կարծես ուզում էին հասկացնել, որ Կ-ից է կախված իրենց հետ գալը։

Գուցե նա կարող էր վերադարձնել նրանց, բայց դա չէր օգնի, որովհետև վերադարձնել սահնակը՝ կնշանակեր, որ ինքը պետք է հեռանա։ Այդպես նա մենակ մնաց իր կանգնած տեղում, բայց այդ հաղթանակը ոչ մի ուրախություն չպատճառեց նրան։ Նա փոխնիփոխ նայում էր պարոնի ու կառապանի հետևից։ Պարոնն արդեն հասել էր այն դռանը, որտեղից Կ-ն էր բակ մտել։ Նա մի անգամ էլ այս կողմը նայեց, և Կ-ին թվաց, թե նա՝ այդ աստիճան համառությունից զարմացած, թափահարեց գլուխը, հետո վճռական, կարճ ու անտարբեր շարժումով շուռ եկավ ու մտավ միջանցք, ուր

www.a-pdf.com

և անհետացավ անմիջապես։ Կառապանն ավելի երկար մնաց բակում, սահնակի հետ կապված դեռ շատ անելիք ուներ. պետք է բացեր ախոռի ծանր դարպասը, սահնակը հետընթացքով իր տեղը տաներ, արձակեր ձիերին, կապեր մսուրների մոտ։ Այդ ամենը նա լրջությամբ էր անում, ամբողջովին ինքն իր մեջ ամփոփված, առանց մոտակա համփորդության հույսի, և այս անձայն գործողությունը՝ առանց Կ-ի կողմը նետված որևէ հայացքի, վերջինիս ավելի ծանր նախատինք թվաց, քան պարոնի վարքը։ Եվ երբ ախոռում գործն ավարտելուց հետո կառապանը ճոճվող քայլքով, դանդաղ կտրեցանցավ բակը, փակեց մեծ դարպասը, հետո դանդաղ՝ ձյան վրա իր սեփական ոտնահետքերը զննելով հետ եկավ ու փակվեց ախոռում (նույն պահին էլեկտրական լույսերը հանդեցին. էլ ո՞ւմ պետք է լուսավորեին, միայն փայտյա վերնաստրահի մեջ ճեղքն էր պայծառ լուսավորված ու իր վրա կամված պահեց Կ-ի թափառող հայացքը). Կ-ին թվաց, թե բոլոր տեսակի հարաբերությունները խզել են իր հետ, որ հիմա ինքը հավանաբար ավելի ազատ է, քան երբևէ և կարող է այստեղ՝ իրեն ընդհանրապես արգելված տեղում սպասել ինչքան ինքն է ուզում, որ նվաճել է այս ազատությունը և որևէ մեկը հազիվ թե կարողանա նույն բանն անել, որ ոչ ոք իրավունք չունի ձեռք տալ իրեն, վռնդել կամ նույնիսկ խոսել հետը, սակայն (այս նոր համոզմունքը, համենայնդեպս, պակաս ուժեղ չէր, քան՝ առաջինը) միաժամանակ նրան թվում էր, թե ավելի անիմաստ ուրիշ ոչ մի բան չկար, քան այս ազատությունը, այստեղ սպասելն ու այս անձեռնմխելիությունը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կ-ն տեղից պոկվեց ու վերադարձավ հյուրանոց, բայց այս անգամ ոչ թե պարսպի երկայնքով, այլ ուղիղ ձյան միջով։ Նախասրահում նա հանդիպեց հյուրանոցի տիրոջը, որ լռելյայն ողջունեց ու ցույց տվեց պանդոկի դուռը։ Կ-ն հետևեց հրավերին, որովհետև մրնում էր, որովհետև ուզում էր մարդկանց տեսնել, բայց մեծ եղավ նրա հիասթափությունը, երբ

www.atpdf.com

այնտեղ՝ փոքր սեղանի մոտ (սեղանը, հավանաբար, հատուկ նպատակով էին դրել, որովհետև այստեղ սովորաբար տակառներով էին բավարարվում) տեսավ երիտասարդ պարոնին, իսկ նրա կողքին (այդ տեսարանը ընկճեց Կ-ին) կանգնել էր իշևանատիրուհին։ Գլուխը հպարտ հետ գցած Պեպին՝ հավերժ անփոփոխ ժպիտով, իր արժանապատվության անառարկելի գիտակցությամբ, յուրաքանչյուր շարժման հետ հյուսքը ճոճելով այս ուայնկողմ էր շտապում. գարեջուր, թանաք, գրիչ բերել էր, իսկ պարոնը թղթերը փռել էր դիմացը, համեմատում էր սեղանի մեկ այս, մեկ մյուս ծայրում ընկած թղթերի վրա գրված ամսաթվերը և պատրաստվում էր գրելու։ Շրթունքները թեթևակի ուռեցրած իշևանատիրուհին՝ կարծես հանդստանալով, վերևից այնպես էր նայում երիտասարդ պարոնին ու նրա դիմացը՝ սեղանի վրա փռված թղթերին, ասես ամեն ինչ արդեն պատմել-վերջացրել էր, ու նրա պատմածները լավ էին ընդունվել։

— Վերջապես, պարոն հողաչափ։— Կ-ի ներս մտնելու ժամանակ մի կարճ պահ վեր նայեց պարոնն ու նորից խորասուզվեց թղթերի մեջ։ Իշևանատիրուհու հայացքն էլ սահեց Կ-ի վրայով. անտարբեր, անկենդան հայացք էր, մինչև Պեպին թվաց, թե սոսկ այն ժամանակ նկատեց Կ-ին, երբ վերջինս մոտեցավ վաճառասեղանին ու մի բաժակ կոնյակ պատվիրեց։

Կ-ն հենվել էր վաճառասեղանին, ձեռքը հպել աչքերին ու ոչնչի մասին չէր մտածում։ Հետո մի ումպ արեց ու հետ հրեց բաժակը, որովհետև հնարավոր չէր խմել։

— Բոլոր պարոնները խմում են,— կարճ ասաց Պեպին, թափեց մնացած խմիչքը, բաժակը սրբեց ու դրեց դարակին։

— Պարոններն ավելի լավն էլ ունեն։

— Գուցե,— համաձայնեց Պեպին։— Բայց ես չունեմ։

Դրանով նա վերջացրեց Կ-ի սպասարկումը ու նորից պարոնի տրամադրության տակ էր, սակայն պարոնը ոչ մի բանի անհրաժեշտություն չուներ, և Պեպին, ետուառաջ քայլելով նրա թիկունքում, աղեղներ էր գծում շարունակ ու, ինքին տալով հարգալից արտահայտություն, անընդհատ ձգտում էր նայել սեղանի վրայի թղթերին։ Աղջկա կողմից դա ընդամենը դատարկ հետաքրքրասիրություն էր, մեծ-

մտությունն, և հոնքերն իրար բերած իշևանատիրուհին ևս դժկամությամբ էր նայում նրան։

Իշևանատիրուհին հանկարծ ականջները սրեց ու, լսողությունը լարած՝ հայացքը հառեց ամայությանը։ Կ-ն շուտ եկավ։ Նա ոչ մի արտասովոր բան չէր լսել, մյուսները ևս կարծես ոչինչ չէին լսել, բայց իշևանատիրուհին ոտնաթաթերի վրա, անչափ մեծ քայլեր գցելով վազեց սենյակի խորքում գտնվող միակ դռան կողմը, նայեց բանալու անցքից, աչքերը լայն բացած, կարմրատակած դեմքով շրջվեց մյուսների կողմն ու մատով մոտ կանչեց նրանց։ Նրանք հերթով նայում էին, ու թեև մեծ մասամբ իշևանատիրուհին էր նայում, բայց Պեպին էլ չէր մոռանում։ Այս իրարանցման մեջ հանկարծակի հանդիսատեսը պարոնն էր։ Պեպին ու պարոնը շուտով ետ եկան, միայն իշևանատիրուհին էր նախկին եռանդով, խոր կռացած, համարյա ծնկի եկած նայում դուրս ու թվում էր, թե նա բանալու անցքին այժմ արդեն աղաչում էր դուրս թողնել իրեն, որովհետև այլևս բան չէր տեսնում։ Վերջապես նա վեր կացավ տեղից, շփեց դեմքը, կարգի բերեց մազերը, խոր շունչ քաշեց, չնայած տհաճությամբ, բայց աչքերը պետք է վերստին սովորեին սենյակին ու այնտեղ հավաքված մարդկանց, և Կ-ն, ոչ թե իր գիտեցածի հավաստումը նրանից իմանալու, այլ հարձակումը կանխելու նպատակով (ինչից վախենում էր համարյա, այնքան որ դյուրագրգիռ էր դարձել) ասաց.

— Կլամմը մեկնե՞ց արդեն։— Իշևանատիրուհին առանց խոսելու անցավ նրա կողքով, իսկ պարոնը սեղանի մոտից պատասխանեց.

— Այո, իհարկե։ Դուք լքեցիք Ձեր պահակակետը, Կլամմը վերջապես կարողացավ մեկնել։ Ես վարմանում եմ, թե ինչ զգայուն է պարոնը։ Դուք նկատեցի՞ք, Գարդենա, թե Կլամմն ինչպիսի անհանգստությամբ էր շուրջը նայում։— Իշևանատիրուհին կարծես ոչինչ չէր նկատել, պարոնը շարունակեց։— Բայց, բարեբախտաբար, ոչ մի հետք չէր մնացել, կառապանը նույնիսկ ձյան վրա դրոշմված հետքերն էր սրբել։

— Իշևանատիրուհին ոչինչ չի նկատել,— ասաց Կ-ն, բայց խոսելիս նա ոչ թե անորոշ հույսեր էր փայփայում,

www.a-pdf.com

այլ միայն զրգռված էր պարոնի՝ վերջնական ու անվիճելի հնչողություն ունեցող հաստատումից։

— Երևի այդ պահին ես չէի նայում դիտանցքից,— սկզբում նպատակ ունենալով պարոնին պաշտպանել, ասաց իջևանատիրուհին, հետո, սակայն, ուզեց Կլամմին ևս արդարացնել ու ավելացրեց։— Համենայնդեպս, ես չեմ կարծում, թե Կլամմն այդ աստիճան դյուրազգաց լինի։ Հնարավոր է, որ մենք վախենում ենք նրա համար, փորձում ենք պաշտպանել նրան ու այս պատճառով էլ ենթադրում ենք, թե նա չափից դուրս դյուրազգաց է։ Այդպես ավելի լավ է, ու հաստատ Կլամմի սրտովն էլ է, բայց թե ինչպես է իրականում, մենք չգիտենք։ Եթե Կլամմը չուզենա մեկի հետ խոսել, ինչ խոսք, չի էլ խոսի, ինչքան էլ այդ մեկը տանջվի ու անտանելիորեն պարտադրի իր եսը, բայց, ախր, բավական է միայն այն փաստը, որ Կլամմը երբեք չի խոսի ու թույլ չի տա, որ այդ մեկը կանգնի իր դիմաց, թե չէ ինչո՞ւ չպետք է նրա տեսքը հանդուրժի։ Այս բանը հնարավոր չէ գոնե ապացուցել, որովհետև հնարավոր չէ փորձել։

Պարոնը եռանդով գլխով էր անում։

— Իհարկե, ընդհանրապես վերցրած ես էլ եմ նույն կարծիքին, բայց ես փոքր-ինչ այլ կերպ արտահայտվեցի, իսկ դրա պատճառը պարոն հոդաչափին ասելիքս հասկանալի մատուցանելու ցանկությունն էր։ Համենայնդեպս, հիմարությունն այն է, որ Կլամմը, երբ հյուրանոցից դուրս եկավ, մի անգամ իր շուրջը նայեց։

— Գուցե ինձ էր փնտրում,— ասաց Կ-ն։

— Հնարավոր է, բայց տես, ես գլխի չընկա,— ասաց պարոնը, բոլորը ծիծաղեցին, իսկ Պեպին՝ ամենաբարձրը, թեև դա հաղիվ թե որևէ բան հասկացավ այդ ամենից։

— Քանի որ մենք այսպես ուրախ ու ընկերովի նստել ենք,— ավելացրեց պարոնը,— ես Ձեզ, պարոն հոդաչափ, խնդրում եմ մի քանի տվյալներով լրացնել իմ փաստաթղթերը։

— Այստեղ շատ են գրում,— հեռվից փաստաթղթերին նայելով, ասաց Կ-ն։

— Այո, շատ վատ սովորություն է,— համաձայնեց պարոնն ու նորից ծիծաղեց։— Բայց Դուք, հավանաբար, չեք ճանաչ

www.a-pdf.com

չում ինձ։ Ես Մոմուսն եմ, Կլամմի քարտուղարը՝ գյուղին վերաբերող հարցերում։— Արտասանված բառերից հետո ողջ սենյակը լրջացավ, թեև իջևանատիրուհին ու Պեպին, իհարկե, ճանաչում էին պարոնին, բայց անունն ու պաշտոնը իմանալուց հետո կարծես նրանք էլ շփոթված լինեին։ Նույնիսկ պարոնը կարծես շատ բան էր ասել իր մասին և հիմա, ձգտելով խուսափել իր խոսքերին հաջորդած, դրանց խորքում թաքնված հանդիսավորությունից, խորասուզվեց թղթերի մեջ ու սկսեց այնպես գրել, որ գրիչի խշխշոցից բացի սենյակում ուրիշ ոչինչ չէր լսվում։

— Իսկ գյուղի քարտուղարի գործն ի՞նչ է,— քիչ անց հարցրեց Կ-ն։ Մոմուսի փոխարեն, որ ներկայանալուց հետո այլևս իրեն վայել չէր համարում անձամբ նման կարգի բացատրություններ տալ, խոսեց իջևանատիրուհին։

— Կլամմի մյուս բոլոր քարտուղարների նման մի քարտուղար է նա, սակայն նրա նստավայրը և, եթե չեմ սխալվում, նաև ազդեցության շրջանակները,— գրելու ժամանակ Մոմուսը եռանդով թափահարեց գլուխը, և իջևանատիրուհին ուղղեց իր սխալը,— այսինքն՝ ոչ թե ազդեցության ոլորտները, այլ միայն նստավայրը գյուղի տարածքով է սահմանափակվում։ Պարոն Մոմուսն զբաղված է Կլամմի՝ գյուղում անհրաժեշտ գրագրություններով և առաջինն է ընդունում գյուղացիների՝ Կլամմին ուղղված խնդրագրերը։— Երբ այդ գործերը դեռևս լավ չպատկերացնող Կ-ն անարտահայտիչ հայացքով նայեց իջևանատիրուհուն, նա փոքր-ինչ մտազբաղ ավելացրեց։— Այդպիսին է կարգը. դղյակի բոլոր պարոնները գյուղում ունեն իրենց քարտուղարները։

— Քարտուղարների մեծ մասը մի պարոնի համար է աշխատում, իսկ ես երկուսի՝ Կլամմի ու Վալլաբենեի,— լրացրեց Մոմուսը, որ Կ-ից շատ ավելի ուշադիր էր ականջ դնում իջևանատիրուհուն։

— Այո,— իր հերթին ևս մտաբերելով, ավելացրեց իջևանատիրուհին ու շրջվեց Կ-ի կողմը։— Պարոն Մոմուսը երկու պարոնի համար է աշխատում, ուստի և կրկնակի քարտուղար է։

— Նույնիսկ կրկնակի,— ասաց Կ-ն ու գլխով արեց առաջ

www.a-pdf.com

թեքված, վեր նայող Մոմուսի կողմն այնպես, ինչպես քիչ առաջ գովասանքի խոսքեր վաստակած երեխայի հասցեին են գլխով անում, իսկ եթե Կ-ի խոսքերում որոշ արհամարհանք կար, ապա այն կա՛մ անուշադրության մատնվեց, կա՛մ ընդունվեց ինչպես հարկն է։ Նույնիսկ Կ-ի մոտ, Կլամմի պատահական ուշադրությանն արժանանալու իրավունքն ունենալու համար բավականաչափ արժանիքից զուրկ մարդու մոտ, մանրամասն ներկայացվեցին Կլամմի մերձավորներից մեկի վաստակը՝ Կ-ից գովք ու խրախուսանք լսելու անթաքույց ակնկալությամբ, մինչդեռ Կ-ն լավ գլուխ չէր հանում դրանցից։ Նա, որ ուժերը ներածին չափով ձգտում էր Կլամմի մի հայացքին արժանանալ, չէր գնահատում Կլամմի հայացքի ներքո ապրելու իրավունք ունեցող ոմն Մոմուսի դիրքը, նրան անծանոթ էին հիացմունքի և նույնիսկ նախանձի զգացումները, որովհետև Կլամմի մոտիկությունը չէ, որ հրապուրում էր նրան, այլ որ ինքը, միայն ինքը և ուրիշ ոչ ոք, իր և ոչ ուրիշ որևէ մեկի ցանկություններով առաջնորդվելով մոտենար Կլամմին և մոտենար ոչ թե նրա կողքին հանգըստանալու մտադրությամբ, այլ նրա կողքից անցնելով՝ առաջ գնար դեպի դղյակը։ Կ-ն նայեց ժամացույցին ու ասաց.

— Դե, իսկ ես հիմա պետք է տուն գնամ։— Դրությունն իսկույն փոխվեց՝ հօդուտ Մոմուսի։

— Այո, դպրոցի ծառայի պարտականությունները թերևս շատ կարևոր են, սակայն ինչ ուզում է լինի, Դուք ինձ մի ակնթարթ կտրամադրեք։ Ուզում եմ միայն մի քանի կարճ հարց տալ։

— Ես դրանց պատասխանելու ոչ մի ցանկություն չունեմ,— ասաց Կ-ն և ուզեց դռան կողմը գնալ։ Մոմուսը թըղթապանակներից մեկը խփեց սեղանին ու ոտքի կանգնեց։

— Ես Կլամմի անունից եմ պահանջում պատասխանել իմ հարցերին։

— Կլամմի անունի՞ց,— զարմացավ Կ-ն,— նշանակում է, իմ գործերը հետաքրքրո՞ւմ են նրան։

— Ես այդ մասին ոչինչ չգիտեմ, իսկ Դուք ինձնից լավատեղյակ չեք, և լավ կլինի, որ երկուսս էլ նրան թողնենք այդ բաները։ Սակայն ես՝ իմ կողմից, քանի որ Կլամմն է

www.a-pdf.com

ինձ լիազորել, Ձեզնից պահանջում եմ մնալ այստեղ ու պատասխանել հարցերին։

— Պարոն հողաչափ,— միջամտեց իշխանատիրուհին։— Այսուհետև ես կզգուշանամ Ձեզ խրատներ տալուց, իմ մինչայժմյան, նույնիսկ լավագույն նպատակներ հետապնդող (որ կարող են լինել երբևէ) խորհուրդները Դուք մերժել եք միշտ շլսված ձևով, և ես (թաքցնելու ոչինչ չունեմ) այստեղ՝ պարոն քարտուղարի մոտ եմ եկել միայն, որ տեղյակ պահեմ Ձեր վարքի ու մտադրությունների մասին, մեկընդմիշտ ապահովագրեմ ինձ այն բանից, որ չլինի հանկարծ նորից իմ իշխանատունն ուղարկեն Ձեզ։ Մենք իրար հանդեպ այդպես ենք տրամադրված, դրանում այլևս ոչինչ չի փոխվի, և երբ այդքանից հետո ես դեռ իմ կարծիքն եմ արտահայտում, ապա դա անում եմ ոչ թե Ձեզ օգնելու նպատակով, այլ որ մի փոքր թեթևացնեմ պարոն քարտուղարի ծանր առաջադրանքը, որն է Ձեզ նման մարդու հետ Ձեր իսկ գործը քննարկելը։ Այնուամենայնիվ, Դուք կարող եք իմ անկեղծությունից օգուտ քաղել, եթե, իհարկե, ուզենաք, իսկ ես անկեղծ լինելուց բացի այլ կերպ չեմ կարող խոսել Ձեզ հետ և դա անում եմ՝ բռնանալով իմ կամքի վրա։ Գործի կապակցությամբ ես միայն ուզում եմ տեղյակ պահել Ձեզ, որ Կլամմի մոտ տանող միակ ճանապարհը պարոն քարտուղարի արձանագրությունների միջով է անցնում։ Ես չեմ ուզում շոփազանցել. գուցե ընդհուպ մինչև Կլամմը չհասնեք, ճանապարհը, գուցե, նրան չհասած, նրանից բավական հեռու ընդհատվի։ Այդ հարցում կարևոր է պարոն քարտուղարի հայեցողությունը։ Համենայնդեպս, դա միակ ճանապարհն է, որ կարող է Ձեզ տանել Կլամմի մոտ, իսկ Դուք ուրիշ ոչ մի առիթ չունեք, այլ կամակորության պատճառով ուզում եք հրաժարվել դրանից։

— Ախ, իշխանատիրուհի, դա ո՛չ դեպի Կլամմը տանող միակ ճանապարհն է, ո՛չ էլ մյուսներից ավելի արժեքավոր է։ Պարոն քարտուղար, Դո՞ւք եք որոշում, թե այստեղի իմ ասելիքը մինչև Կլամմին կհասնի, թե՞ ոչ։

— Իհարկե,— ասաց Մոմուսն ու, աչքերը հպարտ խոնարհած՝ աջ ու ձախ նայեց, թեև նայելու բան չկար։— Թե չէ էլ ինչո՞ւ եմ քարտուղար աշխատում։

www.a-pdf.com

— Տեսնում եք, տիկին։ Ինձ պետք է ոչ թե Կլամմի մոտ տանող ճանապարհը գտնել, այլ հարկավոր է նախ պարոն քարտուղարի մոտ ընկնել։

— Ես ուզում էի այդ ճանապարհը բացել Ձեզ համար,— ասաց իջևանատիրուհին։— Այսօր, կեսօրից առաջ, չառաջարկեցի՞ Ձեր խնդրանքը Կլամմին հասցնել։ Դա միայն պարոն քարտուղարի օգնությամբ է հնարավոր։ Դուք, սակայն, հրաժարվեցիք դրանից, մինչդեռ այդ ճանապարհից բացի ուրիշ ոչինչ չէր մնում Ձեզ։ Ձեր այսօրվա արարքից՝ Կլամմի վրա հարձակվելու փորձից հետո, հաջողության հասնելու հավանաբար ավելի քիչ հեռանկար ունենաք։ Ախր, Ձեր ունեցած միակ բանը այս վերջին, աննշան, չքացող ու իրականում բացարձակ գոյություն չունեցող հույսն է։

— Տիկին իջևանատիրուհի, այդ ինչպե՞ս եղավ, որ սկզբում փորձում էիք ինձ ետ պահել Կլամմին հասնելու մտադրությունից, իսկ հիմա այդքան լուրջ եք վերաբերվում իմ խնդրանքին ու, օրագրերիս ձախողումից հետո, ինձ ըստ երևույթին համարում կորած մարդ։ Եթե մարդ մի անգամ ինձ անկեղծ սրտով ետ է պահում Կլամմի մոտ գնալուց, այդ ինչպե՞ս է հնարավոր, որ նույն մարդը այժմ նույն, թվացյալ անկեղծությամբ ցույց է տալիս Կլամմի մոտ տանող ճանապարհը, թող որ, ինչպես ասվեց, առաջ տանող, բայց ոչ մինչև նրա մոտ հասցնող ճանապարհը։

— Ես Ձեզ առա՞ջ եմ տանում։ Արդյոք դա առաջ տանե՞լ է նշանակում, երբ ես ասում եմ, որ Ձեր փորձերը անհույս են։ Դա, իրոք, շլված հանդգնություն է, երբ Ձեր արարքների համար պատասխանատվությունը ուզում եք ինձ վրա գցել։ Գուցե պարոն քարտուղարի ներկայությո՞ւնն է այդպիսի քաջություն ծնում Ձեր մեջ։ Ոչ, պարոն հոգաշատ, ես Ձեզ բնավ ոչնչի չեմ մղում։ Միայն մի բան խնդրեմ. երբ առաջին անգամ տեսա Ձեզ, գուցե մի փոքր գերադնահատեցի, Ֆրիդայի հանդեպ Ձեր տարած արագ հաղթանակը սարսափեցրեց ինձ, և ես չգիտեի, թե դրանից բացի էլ ինչի էիք կարող ընդունակ լինել։ Ես ուզում էի մյուս դժբախտությունները կանխել և մտածում էի, որ ուրիշ ոչ մի կերպ չեմ կարող հասնել դրան, բացի խնդրելու և սպառնալու միջոցով

www.a-pdf.com

Ձեզ սասսեալուց։ Այդ ընթացքում ես սովորեցի ամեն ինչ հանգիստ կշռադատել։ Արեք, ինչ ուզում եք։ Ձեր արարքները գուցե միայն բակում՝ ձյան վրա թողնեն խոր ոտնահետքեր, ուրիշ ոչինչ։

— Ինձ թվում է, թե հակասությունը ամբողջովին չի պարզվել, բայց ես գոհ եմ, որ դրա վրա եմ հրավիրել Ձեր ուշադրությունը,— ասաց Կ-ն։— Իսկ այժմ, պարոն քարտուղար, խնդրում եմ՝ ասեք ինձ, արդյոք իջևանատիրուհին ճի՞շտ է ասում, որ իմ պատասխանների հիման վրա կազմվելիք արձանագրությունների հետևանքը կարող է լինել այն, որ ես իրավունք կունենամ կանգնել Կլամմի դիմաց։ Եթե այդպես է, ես պատրաստ եմ պատասխանել բոլոր հարցերին, եթե այդպես է, ես պատրաստ եմ ամեն ինչի։

— Ոչ։ Այդպիսի բան չկա,— ասաց Մոմուսը։— Խոսքը միայն այն մասին է, որ գյուղի գործերի գրանցման մատյանում լինի այսօրվա հետկեսօրյա դեպքերի մանրամասն հաշվետվությունը։ Հաշվետվությունն արդեն պատրաստ է, բայց հանուն կարգուկանոնի պետք է երկու-երեք բաց լրացնել։ Ուրիշ ոչ մի նպատակ չկա ու չի կարող լինել։

Կ-ն լուռ նայում էր իջևանատիրուհուն։

— Ինչո՞ւ եք նայում ինձ,— հարցրեց իջևանատիրուհին։— Մի՞թե ես ուրիշ բան եմ ասել։ Միշտ այդպես է, պարոն քարտուղար, այդպես է միշտ։ Նա տեղեկությունները շուռ է տալիս ու հետո պնդում, թե սխալ տեղեկություններ է ստացել։ Ինչքան ժամանակ է, ասել եմ նրան, որ ո՛չ այսօր, ո՛չ էլ երբևէ Կլամմի ընդունելությանն արժանանալու ոչ մի հեռանկար չկա և եթե ոչ մի հեռանկար չկա, ապա այս արձանագրության միջոցով էլ չի լինի։ Արդյոք կարելի՞ է սրանից ավելի պարզ արտահայտվել։ Ես կավելացնեի նաև. այս արձանագրությունը միակ պաշտոնական կապն է, որ կարելի է ունենալ Կլամմի հետ։ Ախր, սա ևս բավական պարզ է, և կասկածելու բան չկա։ Իսկ եթե նա ինձ չի հավատում, շարունակ հույս է տածում (չգիտեմ էլ, թե ինչն է պատճառը), թե կկարողանա ընկնել Կլամմի մոտ, ապա, եթե շարունակում է նույն ձևով մտածել, նրան կարող է օգնել Կլամմի հետ ունեցած սոսկ այս պաշտոնական կապը, այսինքն՝ այս ար-

www.a-pdf.com

ձանագրությունը։ Ես միայն այսքանն եմ ասել, իսկ ոչ ուրիշ բան է պնդում, չարամտորեն շուռ է տալիս խոսքերը։

— Եթե այդպես է, տիկին իջևանատիրուհի, ապա ես ներողություն եմ խնդրում, որովհետև սխալ եմ հասկացել,— ասաց Կ-ն։— Ես միայն, ինչպես այժմ պարզվեց, սխալմամբ կարծում էի, թե Դուք ուզում եք ասել, որ ինձ համար գոյություն ունի որևէ աննշան հույս։

— Իհարկե, դա իմ տեսակետն է։ Դուք նորից եք շուռ տալիս իմ խոսքերը, բայց այս անգամ լրիվ հակառակ ուղղությամբ։ Իմ կարծիքով, այդպիսի մի հույս կա Ձեզ համար և այն հիմնվում է այս արձանագրության վրա։ Բայց դա չի նշանակում, թե Դուք պետք է ուղղակի հարցնեք պարոն քարտուղարին. «Ես կկարողանա՞մ գնալ Կլամմի մոտ, եթե պատասխանեմ հարցերին»։ Եթե հարցնողը երևխա լիներ, կծիծաղեին նրա վրա, բայց եթե հասուն մարդն է այդպես վարվում, ապա դա վկայավորանք է իշխանության հասցեին, ինչը որ պարոն քարտուղարն իր նրբանկատ պատասխանով անուշադրության մատնեց։ Իմ ակնարկած հույսը, սակայն, հենց նրանում է կայանում, որ այդ արձանագրության շնորհիվ Դուք կունենաք յուրատեսակ կապ, յուրատեսակ կապ դոնե Կլամմի հետ։ Մի՞թե դա քիչ հույս է ներշնչում։ Եթե Ձեզ հարցնեն, թե Դուք ի՞նչ վերաբերմունք եք շնորհիվ նման մեծ նվերի արժանացել, ինչպիսին հույս փայփայելն է, կկարողանա՞ք արդյոք հիշատակել չնչին մի վաստակ։ Այդ հույսի մասին ավելի ճշգրիտ, հավանաբար, հնարավոր չէ ոչինչ ասել, և պարոն քարտուղարն էլ, լինելով պաշտոնատար անձ, չի կարողանա թեկուզ աննշան ակնարկ իսկ անել այդ մասին։ Նրա գործը, ինչպես ինքն ասաց, միայն այսօրվա հեսակեսօրյա դեպքերի նկարագրությունն է, որ արվում է հանուն կարգուկանոնի։ Եթե հենց հիմա իմ խոսքերի կապակցությամբ որևէ բան հարցնեք նրան, նա սրանից ավել ոչինչ չի ասի։

— Պարոն քարտուղար, իսկ Կլամմն այս արձանագրությունը կարդալո՞ւ է,— հետաքրքրվեց Կ-ն։

— Ոչ, ինչի՞ համար,— հարցրեց Մոմուսը։— Կլամմն, ախր, չի կարող բոլոր արձանագրությունները կարդալ։ Նա ոչ

մի արձանագրություն չի կարդում ընդհանրապես։ «Հեռու կորեք ինձնից ձեր արձանագրություններով»,— սովորաբար ասում է նա։

— Պարոն հողաչափ, Ձեր հարցերով Դուք հոգնեցնում եք ինձ,— գանգատվեց իջևանատիրուհին։— Արդյոք պե՞տք է կամ ցանկալի՞ է, որ Կլամմը կարդա այդ արձանագրությունները և մանրամասն պատկերացում կազմի Ձեր կյանքի ոչնչության մասին, արդյոք ավելի լավ չէ՞ նվաստանալով խնդրել, որ այդ արձանագրությունը հեռու պահեն Կլամմից (ի դեպ, այս խնդրանքը նույնքան անիմաստ է, որքան նախկինը, որովհետև ոչ ոք չի կարող որևէ բան թաքցնել Կլամմից), փոխարենը, սակայն, Դուք Ձեզ կներկայացնեք լավ կողմից։ Եվ արդյոք Ձեզ հույս տալու համար անհրաժե՞շտ է, որ նա կարդա արձանագրությունները։ Մի՞թե ինքներդ չասացիք, թե դոհ կլինեք, եթե Կլամմի դիմաց կանգնել-խոսելու առիթ ունենաք, նույնիսկ եթե նա չլսի ու չնայի Ձեզ։ Այս արձանագրության շնորհիվ Դուք ոչ միայն այդ, այլ հնարավոր է ավելի մեծ բանի հասնեք։

— Ավելի մե՞ծ, ինչպե՞ս։

— Եթե երեխայի պես միշտ ու ամեն ինչ մատչելի ձևով հրամցված չհամարեք,— բացականչեց իջևանատիրուհին։— Ո՞վ կկարողանա պատասխանել նման հարցերին։ Արձանագրությունն ուղարկվելու է. Կլամմի՝ գյուղի գործերի հաշվառման բաժինը. դա լսեցիք, այդ մասին ավելի որոշակի հնարավոր չէ ոչինչ ասել, իսկ արձանագրության, պարոն քարտուղարի, գյուղի հաշվառման բաժնի ողջ նշանակությունը պատկերացնում եք։ Գիտե՞ք, թե ինչ է նշանակում, երբ Ձեզ պարոն քարտուղարն է հարցաքննում։ Երևի թե, կամ հաստատ նա էլ չգիտե դա։ Նա հանգիստ նստած է այստեղ և, ինչպես ինքն ասաց, միայն հանուն օրինականության կատարում է իր պարտքը։ Հիշեք սակայն, որ Կլամմն է նշանակել նրան, որ նա Կլամմի անունից է հանդես գալիս, որ այն, ինչ նա է անում, եթե նույնիսկ Կլամմին չհասնի էլ, ապա հենց սկզբից արժանացել է Կլամմի հավանությանը։ Իսկ ինչպե՞ս կարող է որևէ բան արժանանալ Կլամմի հավանությանը, եթե չի արված նրա ոգով։ Հեռու ինձնից, եթե նման

www.a-pdf.com

անտակտ ձևով ուզենամ պարոն քարտուղարին քծնել, նա ինքն էլ կբողոքեր դրա դեմ։ Ես նրան որպես ինքնուրույն անձ չեմ դիտում, ես խոսում եմ այն մարդու մասին, ով Կլամմի հավանությունն ունի. ինչպես այժմ։ Հավանությունն ստացած մարդը մի զործիք է, ում վրա դրված է Կլամմի ձեռքը և վայ նրան, ով նրա սրտովը չլինի։

Իջևանատիրուհու սպառնալիքները Կ-ին չվախեցրին, նա հոգնել էր այն հույսերից, որոնց թվարկումով իջևանատիրուհին իր ճանկն էր ուզում գցել նրան։ Իջևանատիրուհին Կլամմին մի անգամ արծվի հետ էր համեմատել, և դա ծիծաղելի էր թվացել Կ-ին. այժմ, սակայն, այլևս ծիծաղելի չէր թվում։ Կ-ն մտածում էր Կլամմի հեռու լինելու, նրա անմատչելի բնակավայրի, անխախտելի լռակյացության մասին, որ գուցե այնպիսի ճիշերով խախտվեր, ինչպիսիք Կ-ն դեռ երբեք չէր լսել, նրա ճնշող, ծանր հայացքի մասին, որը երբեք թույլ չէր տալիս առարկել ու կասկածելու անհիմն առիթներ փնտրել, իրեն անհայտ օրենքներին համաձայն գծվող անխորտակելի հզոր շրջանների մասին, որ Կ-ն էր իր ցածր դիրքից մեկ մի ակնթարթ տեսնում։ Այս ամենը ընդհանուր էր Կլամմի ու արծվի համար։ Բայց արձանագրությունը, իհարկե, ոչինչ ընդհանուր չուներ դրա հետ, որովհետև Մոմուսը ալի ոլորաբլիթ էր կուրծքի արձանագրության թղթերի վրա, աթոռժակով ուտում էր, գարեջուր խմում և աղ ու փշուրներով էր ծածկել սեղանին թափված թղթերը։

— Բարի գիշեր։ Ես հակակրանք ունեմ բոլոր տեսակի հարցաքննությունների հանդեպ,— ասաց Կ-ն ու իսկապես քայլեց դեպի դուռը։

— Նա գնում է,— վախով իջևանատիրուհուն ասաց Մոմուսը։

— Չի համարձակվի,— առարկեց սա։ Կ-ն շարունակությունը չլսեց։ Նա արդեն նախասրահում էր։

Յուրտ, ուժեղ քամի էր փչում։ Դիմացի դռներից մեկի հետևից հայտնվեց հյուրանոցի տերը. թվաց, թե նա կանգնել էր դռան դիտանցքի մոտ ու աչքի տակ էր պահել նախասրահը։ Նույնիսկ այստեղ՝ նախասենյակում, քամին այնպես ուժեղ էր փչում, որ նա ստիպված էր պիջակը ամուր սեղմել մարմնին։

www.a-pdf.com

— Դուք արդեն գնո՞ւմ եք, պարոն հոդաշափ,— հարցրեց հյուրանոցի տերը։

— Դա զարմացնո՞ւմ է Ձեզ։

— Այո։ Իսկ Ձեզ, ինչ է, չե՞ն հարցաքննելու։

— Ոչ։ Ես թույլ չտվեցի հարցաքննել ինձ։

— Իսկ ինչո՞ւ։

— Չգիտեմ, թե ինչու պետք է թույլ տամ, որ հարցաքննեն ինձ, ինչու պետք է հանդուրժեմ նրանց կատակն ու ենթարկվեմ գրասենյակայինների կամակորությանը։ Մի ուրիշ անգամ գուցե թե կատակի համար, կամ կամակորության պատճառով թույլ տամ, բայց այսօր՝ ոչ։

— Այո, իհարկե,— համաձայնեց հյուրանոցի տերը, բայց դա միայն քաղաքավարի և ոչ համոզված համաձայնություն էր։— Հիմա պետք է ծառաներին տրամադրեմ պանդոկը, արդեն վաղուց նրանց ժամն է, միայն թե ես չէի ուզում խանգարել հարցաքննությանը։

— Դուք այդքան կարևո՞ր էիք համարում հարցաքննությունը։

— Օ, այո։

— Նշանակում է, ես չպե՞տք է հրաժարված լինեի։

— Ոչ, չպետք է այդպես վարվեիք։— Եվ որովհետև Կ-ն լռում էր, նա կարծես Կ-ին մխիթարելու կամ նրանից ավելի շուտ հեռանալու համար ավելացրեց.

— Բայց այդ պատճառով, ինչ խոսք, երկնքից ծծումբ չի թափվի մեր գլխին։

— Չէ, եղանակն այդպիսի բան չի խոստանում,— ասաց Կ-ն, ու նրանք ծիծաղելով բաժանվեցին։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կ-ն կանգնեց կատաղի քամուց ծեծվող աստիճաններին ու նայեց մթության մեջ։ Զարագույժ, անպետք եղանակ էր։ Եղանակի հետ հեռավոր կապ գտնելով, Կ-ն հիշեց, թե ինչպես էր իջևանատիրուհին ձգտում պարտադրել իրեն արձանագրությունը և ինչպես էր դիմադրում ինքը։ Իհարկե, իջևանատիրուհու ձգտումը բացահայտ չէր դրսևորվում, նա ան-

www.a-pdf.com

նկատ ձգտում էր իրեն հեռու պահել արձանագրությունից, և Կ-ն չգիտեր՝ ի վերջո դիմակայել էր, թե տեղի տվել։ Խարդավանքների մեջ վարպետացած կին էր իշևանատիրուհին, ում շարշարանքներն արտաքուստ անիմաստ էին, ինչպես քամունը. աշխատում էր հեռվից ստացվող այն հանձնարարություններով, որոնց էության մեջ երբեք հնարավոր չէր թափանցել։

Հազիվ էր նա մի քանի քայլ արել փողոցում, երբ հեռվում առկայծող երկու լույս տեսավ. կյանքի այդ նշույլը ուրախացրեց Կ-ին, և նա շտապեց լույսերի կողմը։ Իրենց հերթին դրանք էլ Կ-ին էին ընդառաջ գալիս, բայց Կ-ն չհասկացավ, ինչն էր իր հիասթափության պատճառը, երբ տեսավ, որ դրանք իր օգնականներն են։ Հավանաբար Ֆրիդան էր ուղարկել նրանց, հանդիպակաց քամու աղմուկով լի մութը փարատող լապտերներն ևս հավանաբար իր սեփականներն էին, բայց նա հիասթափված էր, նա օտար, անծանոթ մարդկանց էր ակնկալում տեսնելու և ոչ այս հին ծանոթներին, որ բեռ էին դարձել իր համար։

Օգնականները միայնակ չէին, նրանց արանքից՝ մթության միջից, երևաց Բարնաբասը։

— Բարնաբա՜ս,— բղավեց Կ-ն ու նրան պարզեց ձեռքը։— Դու ինձ մո՞տ ես գալիս։— Հանդիպման անակնկալ բնույթը անմիջապես մոռացնել տվեց այն ողջ զայրույթը, որ Կ-ին երբևէ պատճառել էր Բարնաբասը։

— Քեզ մոտ,— նախկին բարեհաճությամբ ասաց Բարնաբասը։— Կլամմից նամակ եմ բերել։

— Նամակ Կլամմի՞ց,— զլուխը հետ գցելով հարցրեց Կ-ն ու ծրարը խլեց Բարնաբասի ձեռքից։

— Լուսավորեք,— կարգադրեց նա, և օգնականները աջ ու ձախ կողմերից կիպ սեղմվեցին նրան ու բարձրացրին լապտերները։ Որպեսզի քամին թուղթը չպոկեր ձեռքերից, Կ-ն ծալեց-փոքրացրեց նամակը և կարդաց.

«Կամրջի մոտ» իշևանատուն, պարոն հողաչափին:

Առայսօր Ձեր կատարած հողաչափական աշխատանքները արժանացել են իմ գոհունակությանը: Օգնականների աշխատանքն էլ է գովելի, Դուք կարողանում

www.a-pdf.com

եմ նրանց լավ աշխատեցնել: Չընկրկեմ, շարունակեմ նույն ջանք ու եռանդով: Աշխատանքը հասցրեմ բարեհաջող ավարտի, դրանց ընդհատումն ինձ կդառնացնի: Մնացած ամեն ինչում վստահ եղեմ, վարձատրության հարցն էլ շուտով կորոշվի: Դուք միշտ իմ ուշադրության կենտրոնում եք»:

Կ-ն միայն այն ժամանակ հայացքը բարձրացրեց նամակից, երբ շատ ավելի դանդաղ ընթերցող օգնականները, ի պատիվ ստացված բարի լուրերի, երեք անգամ «ուռռա» գոռացին ու ճոճեցին լապտերները։

— Հանգիստ մնացեք,— կարգադրեց Կ-ն ու դիմեց Բարնաբասին։— Սա թյուրիմացություն է։— Բարնաբասը չհասկացավ նրան։— Սա թյուրիմացություն է,— կրկնեց Կ-ն ու նրան նորից համակեց հետկեսօրվա հոգնությունը, դպրոցի շենք տանող ճանապարհը անասելի երկար թվաց, Բարնաբասի թիկունքում հայտնվեց նրա ողջ ընտանիքը։ Օգնականները շարունակ այնպես էին սեղմվում նրան, որ ինքն ստիպված էր արմունկներով հրել նրանց. ինչպես կարող էր Ֆրիդան սրանց ուղարկել իր հետևից, երբ ինքը նրանց կարգադրել էր մնալ Ֆրիդայի մոտ։ Ինքը մենակ էլ կգտներ տուն տանող ճանապարհը և շատ ավելի հեշտ, քան այս խմբի ընկերակցությամբ։ Օգնականներից մեկը վզին դեռ վզնոց էլ էր փաթաթել, դրա ազատ ծայրերը ծածանվում էին, մի քանի անգամ խփեցին Կ-ի դեմքին, ու թեև մյուս օգնականը իր երկար, բարակ, շարժուն մատներով վզնոցի ծայրերը շարունակ հեռացնում էր Կ-ի դեմքից, սակայն դրանից օգուտ չկար։ Երկու օգնականներն էլ կարծես նույնիսկ հաճույք էին զգում իրենց վազվզոցից, և, ընդհանրապես, նրանց դուր էին գալիս քամին ու դիշերային անհանգստությունը։

— Կորեք այստեղից,— բղավեց Կ-ն։— Եթե ինձ ընդառաջ էիք գալիս, ինչո՞ւ գավազանս չվերցրիք հետներդ։ Հիմա ինչո՞վ պետք է տուն քշեմ ձեզ։

Օգնականները Բարնաբասի թիկունքում պահ մտան, բայց նրանք այդ աստիճան վախեցած չէին, որովհետև լապտերները աջ ու ձախ կողմերից դրեցին իրենց հովանավորի ուսե-

www.a-pdf.com

ցին։ Բարնաբասն, իհարկե, իսկույն թափ տվեց իրեն ու գցեց դրանք։

— Բարնաբաս,— ասաց Կ-ն, ու նրա սիրտը ճմլվեց, որ Բարնաբասն ակնհայտորեն չէր հասկանում իրեն, որ ուրիշ ժամանակ նրա ողջ արտաքինն էր փայլում, իսկ երբ դրությունը լրջանում էր՝ ոչ մի օգնություն, միայն համր դիմադրություն էր ցուցաբերվում, դիմադրություն, որի դեմ մարդ ոչինչ չէր կարող անել, որովհետև անձամբ Բարնաբասն էր անպաշտպան ու միայն նրա ժպիտն էր փայլում, բայց դա այնքան էր օգնում, ինչքան երկնքի աստղերը՝ երկրի վրա պոռթկացող փոթորկուն քամու դեմ։— Տես, թե ինչ է դրում պարոնը,— ասաց նա ու նամակը պահեց Բարնաբասի աչքերի դեմ։— Պարոնին սխալ են տեղեկացրել։ Ախր, ես ոչ մի չափազանց աշխատանք չեմ կատարում, իսկ թե իրենցից ինչ են ներկայացնում իմ օգնականները, ինքդ ես տեսնում։ Այն գործը, որ ես չեմ կատարում, ինչ խոսք, չեմ էլ կարող դադարեցնել ու բնավ չեմ կարող պարոնին դառնություն պատճառել, ինչպես որ չեմ կարող նրա զոհունակությունը հարուցել։ Եվ, ախր, չեմ էլ կարող հանդստանալ։

— Ես կհայտնեմ այդ ամենը,— ասաց Բարնաբասը, որ այդ ընթացքում հայացքը նամակին էր հառել ու հավանաբար չէր կարողացել կարդալ, որովհետև նամակը դեմքին շատ մոտ էր պահված

— Ախ, դու խոստանում ես, թե կհայտնես, բայց արդյոք կարո՞ղ եմ հավատալ քեզ,— ասաց Կ-ն։— Հիմա ինձ վստահություն ներշնչող բանբեր է հարկավոր, այժմ ավելի շատ, քան՝ երբևէ։— Կ-ն անհամբեր կծեց շուրթերը։

— Պարոն,—ասաց Բարնաբասն ու հեզաբարո թեքեց գլուխը։ Քիչ էր մնում, որ այդ շարժումը զայթակղեր Կ-ին, ու նա նորից հավատար Բարնաբասին։— Ես հաստատ կհայտնեմ։ Վերջին անգամ տրված հանձնարարությունն էլ կհայտնեմ։

— Ինչպե՞ս,— բղավեց Կ-ն։— Ուրեմն դու դեռ չե՞ս հայտնել։ Մի՞թե դու հաջորդ օրը չդնացիր դղյակ։

— Ոչ,— ասաց Բարնաբասը։— Իմ խեղճ հայրը ծեր է, դու, ախր, ինքդ տեսար նրան։ Տանը շատ անելիք կար, ես պետք է օգնեի նրան, բայց շուտով դղյակ կգնամ։

— Դու այդ ի՞նչ ես անում, տարօրինակ մարդ,— բացա-

www.a-pdf.com

կանչեց Կ-ն ու խփեց իր ճակատին։— Մի՞թե Կլամմի գործերն ամեն ինչից վեր չեն։ Դու բանբերի բարձր պաշտոն ունես ու այդպես անամոթաբա՞ր ես վարվում։ Ո՞ւմ է հետաքրքրում քո հոր գործը։ Կլամմը նորությունների է սպասում, իսկ դու, փոխանակ վազելու ժամանակ գլդիգլոր գալու, առաջնությունը տալիս ես գոմից թրիքը թափելուն։

— Հայրս կոշկակար է,— առանց շփոթվելու, ասաց Բարնաբասը։— Նա Բրունսվիկից պատվերներ ուներ, ես էլ հորս օգնականն եմ, ախր։

— Կոշկակա՛ր, պատվե՛ր, Բրունսվի՛կ,— դառնացած բղավեց Կ-ն, կարծես հավետ ոչնչացնում էր այդ բառերից ամեն մեկի կիրառությունը։— Եվ ո՞ւմ են պետք կոշիկներն այս անվերջ դատարկ փողոցներում, իմ ի՞նչ գործն է ձեր կոշկակարությունը։ Ես քեզ հանձնարարությունը վստահել եմ ոչ այն բանի համար, որ դու թողնես կոշկակարի աթոռին ու շփոթես, այլ որ անմիջապես տեղ հասցնես։— Այստեղ Կ-ն մի փոքր հանգստացավ, երբ հիշեց, որ ամբողջ ընթացքում Կլամմը հավանաբար ոչ թե ամրոցում է եղել, այլ հյուրանոցում, բայց Բարնաբասը կրկին գրգռեց նրան, երբ սկսեց անգիր ասել Կ-ի տված առաջին հանձնարարությունը, ձգտելով ապացուցել, թե ամեն ինչ լավ է մտապահել։

— Բավական է, ոչինչ չեմ ուզում իմանալ։

— Ինձ վրա մի բարկացիր, պարոն,— ասաց Բարնաբասն ու կարծես անգիտակցաբար ցանկանալով պատժել Կ-ին, նրանից հեռացրեց հայացքն ու հառեց գետնին. սակայն նրա շփոթմունքի պատճառը երևի Կ-ի բղավելն էր։

— Ես քեզ վրա չեմ բարկանում,— ասաց Կ-ն, և նրա անհանգստությունը հիմա շրջվեց իր դեմ։— Քեզ վրա չեմ բարկանում, սակայն ինձ համար շատ վատ է, որ կարևոր հանձնարարությունների դեպքում միայն մի բանբեր ունեմ։

— Տես,— ասաց Բարնաբասը, և թվաց, թե նամակատարի պատիվը պաշտպանելու համար նա ավելի շատ բան է ասում, քան իրավունք ունի։— Կլամմն, ախր, նորությունների չի սպասում, նա նույնիսկ զայրանում է, երբ գնում եմ իր մոտ։ «Էլի՞ նորություններ» մի անգամ ասաց նա, իսկ մեծ մասամբ նա ոտքի է կանգնում, երբ դեռ հեռվից տեսնում

է իմ մոտենալը, գնում է կողքի սենյակն ու չի ընդունում ինձ։ Եվ հետո, ես վստահ չեմ, թե ամեն մի նորություն պետք է իսկույն տեղ հասցնեմ։ Եթե հաստատ գիտենամ, իհարկե, իսկույն կգնամ, բայց այդ հարցում ոչ մի որոշակիություն չկա, և եթե ես ոչ մի անգամ չներկայանամ էլ, ինձ երևի չհիշեցնեն։ Իմ կամքին է թողնված լուրեր հայտնելը։

— Լավ,— ասաց Կ-ն ու, Բարնաբասին զննելով, հայացքը դիտավորյալ մի կողմ ուարավ օգնականներից, որոնք փոխնիփոխ, խորտակվող նավի նման դանդաղ դուրս էին լողում Բարնաբասի թիկունքից և քամուն նմանակող թույլ սուլոցով, կարծես Կ-ի տեսքից վախեցած՝ արագ պահ մտնում. զվարճանում էին այդպես։— Ես չգիտեմ, թե ինչպես է Կլամմի մոտ, սակայն կասկածում եմ, թե դու այնտեղի կյանքը ճիշտ հասկացած լինես և եթե անգամ ճիշտ էլ հասկացած լինես, մենք ոչինչ չենք կարողանա փոխել։ Իսկ հանձնարարությունը տեղ հասցնել դու կարող ես, և ես խնդրում եմ քեզ մի չափազանց փոքր հանձնարարություն կատարել։ Դու կարո՞ղ ես հենց վաղը՝ առավոտյան դղյակ հասցնել իմ ասելիքն ու վաղն էլ բերել պատասխան կամ գոնե տեղեկացնել, թե քեզ ինչպես ընդունեցին։ Կարո՞ղ ես, ուզո՞ւմ ես անել։ Ինձ համար դա շատ կարևոր է։ Գուցե այդ դեպքում ես քեզ համապատասխան ձևով շնորհակալություն հայտնելու առիթ ունենամ, կամ գուցե դու հենց հիմա որևէ ցանկություն ունես, որ ես կարող եմ ի կատար ածել։

— Ես, իհարկե, կկատարեմ հանձնարարությունը,— խոստացավ Բարնաբասը։

— Եվ ջանք կգործադրե՞ս, որ հնարավորին չափ լավ կատարես, անձամբ Կլամմին հայտնես, պատասխանն անձամբ Կլամից ստանաս և իսկույն, ամեն ինչ վաղը, շտապ, դեռ կեսօր չեղած վերջացնես։ Կանե՞ս։

— Ես հնարավոր ամեն ինչ կանեմ,— խոստացավ Բարնաբասը։— Բայց ես միշտ եմ այդպես անում։

— Արի այժմ այլևս այդ մասին չխոսենք։— Հանձնարարությունն այս է. հողաչափ Կ-ն պարոն պետին խնդրում է թույլ տալ իրեն անձամբ ներկայանալ ու խոսել։ Նա նախօրոք համաձայն է բոլոր պայմանների հետ, որ կարող են առաջադրվել թույլտվություն ստանալու համար։ Նա ստիպ-

www.a-pdf.com

ված է խնդրել, որովհետև մինչև այժմ բոլոր ատենադպիրները մերժել են նրան։ Իր խոսքերի համար որպես ապացույց նա ներկայացնում է այն հանգամանքը, որ մինչև այժմ բոլորովին, ոչ մի չափողական աշխատանք չի կատարել ու, ըստ համայնքի նախագահից ստացած տեղեկությունների, երբեք չի կարողանա կատարել։ Այդ պատճառով նա հուսահատ շփոթվածությամբ է կարդացել պարոն պետի վերջին նամակը և այս հարցում իրեն կարող է օգնել միայն պարոն պետի անձնական ընդունելությունը։ Հողաչափը գիտե, թե դրանով ինչքան շատ բան է պահանջում, բայց նա պատրաստ է ամեն բան անել, որ պարոն պետի համար խախտումը հնարավորին չափ աննկատ լինի։ Նա համաձայն է ժամանակի ցանկացած սահմանափակման հետ, նույնիսկ համաձայն է նախօրոք ճշտել այն բառերի քանակությունը, որ ինքը կօգտագործի առանձնաանձնակում պետի հետ խոսելիս, կարծում է, թե տաս բառը լիովին կբավականացնի դրա համար։ Խորագույն հարգանքով ու ծայրահեղ անհամբերությամբ նա թույլտվության է սպասում։— Կ-ն ինքնամոռացության մեջ էր խոսում, կարծես կանգնած էր Կլամմի դռան մոտ ու դրոնապանին էր համոզում։

— Ավելի երկար ստացվեց, քան կարծում էի,— ասաց նա։— Բայց դու պետք է բանավոր հայտնես ասվածը։ Ես չեմ ուզում նամակ գրել, այն, հաստատ, կգնա արձանագրությունների՝ վերջը չերևացող ճանապարհով։

Մինչ երկրորդ օգնականը լուսավորում էր, Կ-ն մյուսի մեջքին, Ղլթի կտորի վրա խզբզեց իր ասելիքը։ Հիմա նա կարող էր Բարնաբասի թելադրությամբ գրի առնել հանձնարարությունը. վերջինս ամեն ինչ մտապահել էր և ճիշտ պատասխանող դպրոցականի նման, առանց օգնականների սխալ հուշումների վրա ուշադրություն դարձնելու, բառ առ բառ կրկնեց ասվածը։

— Հիանալի հիշողություն ունես,— ասաց Կ-ն ու թուղթը տվեց նրան։— Միայն, խնդրում եմ, քո հիանալի հատկանիշները ուրիշ հարցում էլ դրսևորիր։ Իսկ ցանկությունն ե՞ր։ Դու ոչ մի ցանկություն չունե՞ս։ Ես անկեղծ եմ ասում։ Իմ հանձնարարության բախտի հետ կապված, ես ինձ մի քիչ

www.a-pdf.com

ավելի հանգիստ կզգայի, եթե որևէ ցանկություն հայտնած լինեիր։

Բարնաբասը սկզբում լռեց, հետո ասաց.

— Քույրերս բարևներ են ուղարկել քեզ։

— Քույրե՞րդ։ Հա, այն խոշորակազմ, ուժեղ աղջիկները։

— Երկուսն էլ բարևում են, հատկապես՝ Ամալյան։ Հենց նա էր այսօր այս նամակը բերել դղյակից։

Կ-ն միայն վերջին բառերը կարևոր համարեց ու, դրանց կառչելով, հարցրեց.

— Իսկ նա չէ՞ր կարողանա իմ հանձնարարությունը հասցնել դղյակ։ Կամ չէի՞ք կարող երկուսով դղյակ գնալ ու ամեն մեկդ ձեր բախտը փորձել։

— Ամալյան գրասենյակներ մտնելու իրավունք չունի, թե չէ մեծ հաճույքով կաներ։

— Ես երևի վաղը ձեր տուն գամ, միայն թե նախ դու վերադարձիր, պատասխանը հետդ։ Ես քեզ դպրոցում կսպասեմ։ Իմ կողմից էլ քո քույրերին բարևիր։

Այցելելու վերաբերյալ Կ-ի խոստումը, երևի, շատ ուրախացրեց Բարնաբասին։ Հրաժեշտ տալիս՝ ձեռքսեղմումից հետո, նա թեթևակի շոյեց Կ-ի ուսը։ Թվաց, թե ամեն ինչ նորից այնպես էր, ինչպես, երբ Բարնաբասը իր ողջ շուքով առաջին անգամ մտավ գյուղացիներով լցված սրահը, և Կ-ն այդ ակնթարթային հպումը ընդունեց որպես պարգևատրում։

Հեղահամբույր դառնալով, նա տունդարձի ճանապարհին օգնականներին թողեց անել այն, ինչ ուզում էին։

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Նա տուն հասավ լավ մրսած։ Շուրջբոլորը մութ էր, լապտերների մեջ մոմերը այրվել-վերջացել էին։ Օգնականների ուղեկցությամբ, որոնք արդեն կողմնորոշվում էին այստեղ, նա խարխափելով մտավ դասասենյակներից մեկը։

— Առաջին անգամ գովեստի արժանի բան արեցիք,— Կլամմի նամակը հիշելով, ասաց նա։ Անկյուններից մեկում լսվեց Կիսաքոմն Ֆրիդայի ձայնը.

www.a-pdf.com

— Կ-ին թողեք հանգիստ քնի, մի խանգարեք նրան։— Կ-ն նրա ուշադրության կենտրոնում էր, նույնիսկ, երբ նա քնելու ցանկությանը դիմակայելուն անզոր, չէր կարողացել սպասել նրա վերադարձին։ Լամպը վառեցին, սակայն հնարավոր չէր ավելի ուժեղ լուսավորել, որովհետև նավթավառի մեջ նավթ քիչ կար։ Նորաստեղծ տնտեսությունը դեռ մի քանի պակասություն ուներ։ Թեև սենյակը տաքացրել էին, բայց մեծ դասասենյակը, որ նաև օգտագործվում էր որպես մարզադահլիճ (մարզական գույքն ընկած էր այսուայնտեղ ու կախված էր առաստաղից), նորից ցրտել էր, որպես պաշար վերցված ողջ փայտը սպառել էին, ու ինչպես Կ-ին հավաստիացրին, ներսում շատ հաճելի տաք էր եղել։ Թեև փայտի մեծ պաշար կար, բայց ցախատունը փակ էր, իսկ բանալին ուսուցչի մոտ էր, փայտը նա թույլ էր տալիս վերցնել միայն դասերի ժամանակ տաքացնելու համար։ Ցուրտը տանելի կլիներ դեռ, եթե մահճակալներ ունենային ու հնարավոր լիներ կուչ գալ դրանց վրա, բայց դասասենյակում ուրիշ ոչինչ չկար, քան հարդի մեն մի պարկը, որ Ֆրիդան էր ծածկել բրդյա մաքուր կտորով, իսկ փետրաներքնակ չկար։ Երկու կոպիտ, փայտացած վերմակներ էլ ունեին, որ հազիվ թե տաքացնեին։ Օգնականները նույնիսկ այս խեղճուկրակ հարդի պարկին էին ագահությամբ նայում, սակայն, բնականաբար, հույս չէին փայփայում, թե իրավունք կունենան պառկել դրա վրա։ Ֆրիդան վախվորած նայեց Կ-ին։ Որ նա թեկուզ ամենախղճուկ սենյակին անգամ կարող է բնակարանի տեսք տալ, մի անգամ ապացուցել էր իջևանատանը, սակայն այստեղ արդեն նա ոչինչ չէր կարողացել անել, որովհետև ոչ մի միջոց չուներ։

— Մեր սենյակի միակ կահավորանքը մարզագույքն է,— արյունքները դժվարությամբ զսպելով ծիծաղեց նա, իսկ ինչ ամենամեծ պակասությանն էր վերաբերում՝ ջեռուցմանն ու քնելու պարագաներին, նա հենց վաղվա համար որոշակի ինչ-որ բան խոստացավ ու Կ-ին խնդրեց համբերել։ Ֆրիդայի բառերը, շարժուձևերն ու դիմագծերը փարատեցին Կ-ի կասկածը, թե Ֆրիդան հոգու խորքում դառնացած է իրենից, որովհետև, ախր, ինքն էր պատճառ դարձել, որ աղջիկը սկզբում

www.a-pdf.com

հեռանար հյուրանոցից, հիմա էլ՝ իշխանատնից։ Այդ պատճառով Կ-ն ձգտում էր ամեն ինչ տանելի համարել, մի բան, որ այնքան էլ դժվար չէր, որովհետև մտովի նա Բարնաբասի հետ էր ու բառ առ բառ կրկնում էր իր ուղարկած հանձնարարությունը, և կրկնում էր ոչ այնպես, ինչպես ինքն էր հանձնարարել Բարնաբասին, այլ այնպես, ինչպես իր կարծիքով այն պետք է հնչեր Կլամմի մոտ։ Դրա հետ մեկտեղ նա անկեղծ ուրախացավ սուրճի համար, որ Ֆրիդան եփեց սպիրտայրոցի վրա, և արդեն սառչող վառարանին հենված հետևում էր Ֆրիդայի ճկուն, հմուտ շարժումներին. ինչպես նա պարտադիր կերպով ամբիոնին դցեց սպիտակ ծածկոցը, սուրճի ծաղկանկար գավաթը դրեց վրան, կողքին՝ հաց, ճարպ ու նույնիսկ ձկան պահածո։ Այժմ արդեն ամեն ինչ պատրաստ էր, Ֆրիդան ևս ոչինչ չէր կերել, սպասել էր Կ-ին։ Դասասենյակում ընդամենը երկու բազկաթոռ կար, դրանց վրա՝ սեղանին մոտ, նստեցին Ֆրիդան ու Կ-ն, օգնականները տեղավորվեցին նրանց ոտքերի մոտ՝ պատվանդանին, բայց նրանք այնտեղ էլ ոչ մի րոպե հանգիստ չմնացին և խանգարում էին նույնիսկ ուտելու ժամանակ։ Թեև ամեն ինչից բավարար քանակությամբ տվել էին նրանց, ու նրանք ստացածը դեռ չէին կերել-վերջացրել, բայց երբեմն-երբեմն վեր էին կենում, որ պարզեին, թե սեղանին դեռ շա՞տ բան կա և արդյո՞ք կարող էին որոշ բաներ ստանալ նորից։ Կ-ն նրանց մասին չէր էլ մտածում, միայն Ֆրիդայի ծիծաղը նրա ուշադրությունը հրավիրեց օգնականների վրա։ Կ-ն ձեռքը դրեց սեղանին դրված Ֆրիդայի ձեռքին և շոյելով կամաց հարցրեց, թե ինչու՞ է նա նրանց արածներից շատերը անուշադրության մատնում և մեղմ վերաբերվում նույնիսկ անկարգություններին։ Այդպես նրանցից երբեք պրծնել չի լինի, մինչդեռ նրանց միանգամայն արժանի, համեմատաբար խիստ վերաբերմունքով կարելի է կա՛մ սանձել նրանց, կա՛մ, որ ավելի հնարավոր ու շատ ավելի լավ կլինի, այնքան անտանելի դարձնել նրանց աշխատանքը, որ վերջապես փախուստ տան։ Երևում է, որ դպրոցը երբեք հաճելի ապաստան չի դառնա, բայց այս կյանքը երկար չի տևի, մինչդեռ բոլոր պակասությունները հազիվ թե նկատելի լինեն, եթե օգնականները գնան, և իրենք երկուսով մնան խաղաղ տան

www.a-pdf.com

մեջ։ Արդյոք Ֆրիդան չի՞ նկատում, որ օգնականներն օրըստ-օրե ավելի լկտի են դառնում, նրանց կարծես քաջալերում է հենց Ֆրիդայի ներկայությունը և այն հույսը, թե Կ-ն Ֆրիդայի ներկայությամբ ոչ այնքան խիստ կվարվի, ինչպես երևի վարվեր սովորաբար։ Ի դեպ, նրանցից անմիջապես, առանց դժվարության ազատվելու համար շատ հեշտ միջոցներ կան, գուցե Ֆրիդան էլ գիտե դրանք, նա, ախր, լավ ծանոթ է այստեղի պայմաններին և հետո, մարդ հավանաբար լավություն արած կլինի օգնականներին, եթե ինչ-ինչ պատճառներով քշի նրանց, որովհետև այստեղ նրանց վարած կյանքը այնքան էլ նախանձելի չէ, այսօրվանից արդեն կիսով չափ նույնիսկ անդործությունը՝ որ նրանք են վայելել մինչև այժմ, կիսով չափ կվերանա, որովհետև Ֆրիդան պետք է հանգստանա վերջին օրերի պատճառած հուզմունքներից. հետո, Կ-ն զբաղված կլինի իրենց ծանր դրությունից նյութ փնտրելով, իսկ նրանք ստիպված կլինեն աշխատել։ Համենայնդեպս, եթե օգնականները հեռանան, Կ-ն իրեն շատ թեթևացած կզգա և մյուս գործերի հետ մեկտեղ կկարողանա նաև կատարել դպրոցի ծառայի աշխատանքները։

Կ-ին ուշադիր լսող Ֆրիդան դանդաղ շոյեց նրա թևը և ասաց, որ ինքը ևս նույն կարծիքին է, միայն թե Կ-ն երևի շատ է չափազանցնում օգնականների անկարողությունները, նրանք պարզապես ուրախասիրտ ու փոքր-ինչ հիմարավուն պատանիներ են, առաջին անգամ են օտար մարդու ծառայում, ազատվել են դղյակի խիստ հսկողությունից ու այդ պատճառով շարունակ փոքր-ինչ հուզված են, զարմացած, և երբեմն հիմարություններ են անում, որոնց պատճառով, իհարկե, կարելի է զայրանալ, բայց ծիծաղելն ավելի խելացի կլինի։ Ինքը երբեմն չի կարող զսպել իրեն և ծիծաղում է։ Այնուամենայնիվ, ինքը լրիվ համամիտ է Կ-ի հետ, որ ամենաճիշտը նրանց այստեղից հեռացնելն ու միայն երկուսով մնալը կլինի։ Նա ավելի մոտ ձգվեց դեպի Կ-ն, դեմքը հպեց նրա ուսին և ասաց (բառերը չէին հասկացվում, Կ-ն ստիպված էր առաջ թեքվել), որ ինքը օգնականներից ազատվելու ոչ մի միջոց չգիտե և վախենում է, որ Կ-ի բոլոր ջանքերն իզուր անցնեն։ Ինչքան ինքն է տեղյակ, Կ-ն ինքն է օգնականներ պահանջել, հիմա ստացել է ու պարտավոր է պահել։

նրանց։ Շատ ավելի լավ կլինի, եթե նրանց լուրջ չվերաբերվեն, նայեն որպես թեթևամիտ մարդկանց, որ և են իրականում. այդպես ավելի հեշտ կլինի։

Պատասխանը չգոհացրեց Կ-ին, կես կատակ-կես լուրջ նա ասաց, որ Ֆրիդան երևի նրանց հետ կապ ունի կամ էլ մեծ համակրանք է տածում։ Նրանք, իհարկե, գեղեցկադեմ տղաներ են, բայց այնպիսի մեկը չկա, ումից մարդ ցանկության դեպքում չկարողանա ազատվել, և ինքը օգնականների օրինակով կապացուցի դա։

Ֆրիդան պատասխանեց, որ երախտապարտ կլինի, եթե նրան հաջողվի։ Ինքը նրանց արարքների վրա այլևս չի ծիծաղի, ոչ մի ավելորդ բառ չի փոխանակի հետները և, հետո, իսկապես լավ չէ, որ ինքը շարունակ երկու տղամարդկանց աչքերի առաջ է, և սովորել է այդ երկուսին նայել Կ-ի աչքերով։ Ֆրիդան իրոք ցնցվեց, երբ նույն պահին օգնականները նորից բարձրացան, որ նայեին, թե ուտելու ի՞նչ է մնացել սեղանին և տեսնեին, թե այդ ի՞նչ են շարունակ փսփսում իրենց գլխավերևում։

Կ-ն օգտագործեց այդ առիթը, որ Ֆրիդայի մեջ ավելի խորացներ օգնականների հանդեպ սկսվող անբարյացակամությունը, նրան իր կողմը ձգեց, և նրանք կիսկ կողք-կողքի նստած վերջացրին ուտելը։ Հիմա արդեն քնել էր պետք, բոլորն էին հոգնած, օգնականներից մեկը ու տելու ժամանակ էր քնել, դա շատ էր ուրախացնում մյուսին, ուզում էր այնպես անել, որ Կ-ն ու Ֆրիդան նայեին քնածի հիմար դեմքին, բայց նրան չհաջողվեց, որովհետև Կ-ն ու Ֆրիդան անհաղորդ նստել էին սեղանի մոտ։ Ցուրտն անտանելի էր դառնում, նրանք վարանում էին քնելու գնալ։ Վերջապես Կ-ն հայտարարեց, որ պետք է մի փոքր տաքացնել սենյակը, թե չէ հնարավոր չի լինի քնել։ Նա կացին հարցրեց, օգնականները տեղը գիտեին՝ բերեցին, և երեքով խմբովի գնացին ցախատան կողմը։ Քիչ անց դուռը կոտրված էր, և հիացած օգնականները, որ կարծես երբեք նման գեղեցիկ բան չէին տեսել, մեկը մյուսի հետևից ընկնելով ու իրար խփելով սկսեցին փայտը կրել դասասենյակ. ներսում շուտով մի մեծ կիտուկ առաջացավ։ Վառարանը վառեցին, բոլորը նստոտեցին

www.a-pdf.com

շուրջը, վերմակներից մեկը օգնականներն ստացան, որ փաթաթվեին դրանով։ Դա լիուլի բավական էր նրանց, որովհետև արդեն պայմանավորվել էին, որ մեկը արթուն կմնար և կրակը վառ կպահեր։ Շուտով վառարանի մոտ այնպես տաք էր, որ այլևս ոչ մի ծածկոց պետք չէր։ Լամպը հանգցրին, և, ջերմության ու վերահաս լռության ուրախությունը ճաշակելով՝ Կ-ն ու Ֆրիդան մեկնվեցին քնելու։

Երբ Կ-ն գիշերվա կեսին արթնացավ անհասկանալի աղմուկից և քնատ մարդու առաջին անվստահ շարժումներով Ֆրիդայի տեղը խարխափեց, նկատեց, որ Ֆրիդայի փոխարեն կողքի հետ պառկած էր օգնականներից մեկը։ Գյուղ գալուց ի վեր ամենամեծ սարսափը նա այստեղ, այս պահին ապրեց, իսկ դա, հավանաբար, հանկարծակի արթնանալու պատճառած գրգռվածությունից էր։ Նա բղավելով կլիսանստեց և խելքը կորցրած, բռունցքով այնպես խփեց օգնականին, որ վերջինս սկսեց լաց լինել։ Սակայն շուտով ամեն ինչ պարզվեց։ Ֆրիդան արթնացել էր, որովհետև մի մեծ կենդանի՝ հավանաբար կատու էր թռել իր կրծքին ու անմիջապես փախել (համենայնդեպս, այդպես էր թվացել նրան)։ Նա վեր էր կացել ու մոմի լույսի տակ կենդանուն էր փնտրել ողջ սենյակում։ Օգնականներից մեկը օգտագործել էր այդ առիթը և ուզեցել էր կարճ ժամանակ վայելել հարդի պարկի վրա պառկելու հաճույքը, բայց հիմա դառնորեն զղջում էր դրա համար։ Ֆրիդան չէր կարողացել ոչինչ գտնել. հավանաբար, խաբկանք էր եղել։ Նա վերադարձավ Կ-ի մոտ, երևի մոռացել էր երեկոյան տված խոստումը, մխիթարելով շոյեց կուչ եկած հեծկլտացող օգնականի մազերը։ Կ-ն ոչինչ չասաց, միայն օգնականին կարգադրեց դադարեցնել վառելը, որովհետև կուտակված ողջ փայտը համարյա սպառվում էր, իսկ դասասենյակում արդեն շատ շոգ էր։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Առավոտյան նրանք միայն այն ժամանակ արթնացան, երբ առաջին դպրոցականներն արդեն եկել ու հետաքրքրությամբ շրջապատել էին նրանց քնելատեղը։ Դա շատ տհաճ

էր, որովհետև ճնշող տոթի պատճառով, որ առավոտյան դեմ, համենայնդեպս, վերածվել էր զգալի սառնության, բոլորը հանել էին շորերը և մնացել էին շապկանց, իսկ այն պահին, երբ սկսեցին հագնվել, դռների մեջ հայտնվեց Գիզան՝ շիկահեր, բարձրահասակ, գեղեցիկ, բայց փոքր-ինչ շորուցամաք ուսուցչուհին։ Ակնհայտորեն նա տեղյակ էր, որ դպրոցում նոր ծառա է լինելու, հավանաբար ուսուցիչն էլ իր հերթին էր հրահանգավորել, թե նա ինչպես պետք է վարվեր նրա հետ, որովհետև դեռ շեմի վրայից նա սկսեց.

— Ես չեմ կարող հանդուրժել սա։ Շատ լավ գործ է։ Թեև Դուք դասասենյակում քնելու թույլտվություն ունեք, բայց ես պարտավոր չեմ դասավանդել Ձեր ննջասենյակում։ Դպրոցի սպասավորի ընտանիք եմ ասել, մինչև կեսօր անկողնում են փռված։ Ֆո՜ւհ։

Ուսուցչուհուն, իհարկե, կարելի էր առարկել. հատկապես ընտանիքի ու անկողինների հարցում, և որովհետև օգնականների վրա չէր կարելի հույս դնել (հատակին պառկած, նրանք զարմացած նայում էին ուսուցչուհուն ու երեխաներին), Կ-ն Ֆրիդայի հետ շտապ առաջ քաշեց զուգափայտերն ու ձիուկը, ու դրանց վրա ծածկոց գցեց։ Այդպես մի փոքր տարածություն ստեղծվեց, ուր կարելի էր հագնվել, գոնե երեխաների հայացքներից թաքնվելով։ Այնուամենայնիվ, նրանք չկարողացան ոչ մի ակնթարթ հանգստանալ. ուսուցչուհին նախ լուտանք թափեց, որ ջրամանում թարմ ջուր չկար, Կ-ն մտադիր էր իր ու Ֆրիդայի համար ջուր բերել, բայց որպեսզի ավելի չգրգռեր ուսուցչուհուն, որոշեց, որ ավելի լավ է մի փոքր հապաղել, սակայն նրա զգուշությունը չօգնեց բնավ, որովհետև դրանից քիչ անց իսկապես խայտառակ բան տեղի ունեցավ։ Դժբախտաբար նրանք մոռացել էին ընթրիքի մնացորդները հավաքել ամբիոնի վրայից, և ուսուցչուհին այդ ամենը քանոնով մի կողմ նետեց. այնտեղ ինչ կար-չկար, հատակին թռավ, բայց որ պահածոյի ձեթն ու տորթի մնացորդը թափվեցին, սրճամանը փշուր-փշուր եղավ, բնավ ուսուցչուհու պետքը չէր. դպրոցի սպասավորն իսկույն կարդի կբերեր։ Զուգափայտին հենված կիսամերկ Կ-ն ու Ֆրիդան հետևում էին, թե ինչպես է ոչնչանում իրենց փոքր ունեցվածքը. հագնվելու մասին բոլորովին չմտածող օգնական-

www.a-pdf.com

ները՝ հուրախություն երեխաների, պառկած տեղերից ծիծաղում էին վերմակների արանքից։ Ֆրիդային ամենից շատ սրճամանի կորուստը ցավ պատճառեց, և երբ Կ-ն մխիթարեց նրան, թե ինքն իսկույն կգնա համայնքի նախագահի մոտ, փոխհատուցում կպահանջի և կստանա, միայն այդ ժամանակ կիսամերկ Ֆրիդան տիրապետեց իրեն և շապկանց դուրս վազեց իրենց թաքստոցից, որ զոնե ծածկոցը բերեր ու չթողներ, որ ավելի կեղտոտվի։ Թեև ուսուցչուհին նրան վախեցնելու մտադրությամբ, նյարդեր քայքայող շխկոցով քանոնը խփում էր սեղանին, նա կարողացավ սփոռոցը փրկել։ Երբ Կ-ն ու Ֆրիդան հագնված էին արդեն, ոչ միայն ստիպված եղան հրամայել ու հագնվել պարտադրել անսովոր տեսարանով համակված օգնականներին, այլև մասամբ նույնիսկ անձամբ հագցնել։ Հետո, երբ բոլորն արդեն ոտքի վրա էին, Կ-ն հաջորդ աշխատանքները հանձնարարեց. օգնականները պետք է փայտ բերեին ու սկզբում, սակայն, վառարանը վառեին մյուս դասասենյակում, որովհետև մեծ վատանդը այնտեղից էր սպառնում. ուսուցիչն արդեն հավանարար եկել էր։ Ֆրիդան պետք է հատակը մաքրեր, Կ-ն ջուր կբերեր ու մնացյալ հարցերը կկարգավորեր. նախաճաշի մասին մտածել առայժմ հնարավոր չէր։ Որպեսզի իմանար, թե ուսուցչուհին ինչպես է տրամադրված, Կ-ն որոշեց առաջինը դուրս ելնել, իսկ մյուսները պետք է հետևեին, երբ նա կանչեր։ Նա այդպիսի հանձնարարություն տվեց, որովհետև, մի կողմից, չէր ուզում թույլ տալ, որ օգնականների հիմարությունների պատճառով դրությունն ավելի վատանար, մյուս կողմից ուզում էր հնարավորին չափ խնայել Ֆրիդային, որովհետև Ֆրիդան փառասեր էր, ինքը՝ ոչ, նա դյուրազգաց էր, ինքը՝ ոչ, նա մտածում էր տվյալ պահի փոքր նաղկալիությունների մասին, ինքը սակայն՝ Բարնաբասի ու ապագայի։ Ֆրիդան ճշգրտորեն հետևում էր Կ-ի բոլոր կարգադրություններին ու աչքը չէր հեռացնում նրանից։

Հարմար էր Կ-ն դուրս ելել պատվարի հետևից, ուսուցչուհին աշակերտների՝ այդ պահից սկսած այլևս չդադարող ծիծաղի ներքո բացականչեց.

— Հը, քոններդ առա՞ք։— Եվ որովհետև Կ-ն ուշադրու-

www.a-pdf.com

թյուն չդարձրեց նրա խոսքերին (ախր, դա հարց չէր), այլ շտապեց լվացարանի կողմը, ուսուցչուհին հարցրեց.

— Այս ի՞նչ եք արել իմ կատվին։— Մեծ, ծեր ու մարմնեղ կատուն ծուլորեն մեկնվել էր սեղանին, իսկ ուսուցչուհին զննում էր նրա թեթևակի վնասված թաթը։ Ուրեմն Ֆրիդան իրավացի էր. այս կատուն թեև չէր ցատկել Ֆրիդայի վրա (սա, հավանաբար, այլևս չէր կարող ցատկել), այլ սոդացել էր նրա վրայով, վախեցել էր սովորաբար դատարկ տեսնում մարդկանց ներկայությունից, շտապ թաքնվել էր ու իր համար անսովոր շտապողականության պատճառով վնասել թաթը։ Կ-ն փորձեց հանդիսատ բացատրել ուսուցչուհուն, վերջինս, սակայն, միայն կատարվածի արդյունքին ուշադրություն դարձնելով՝ ասաց.

— Բա ոնց, Դուք եք վնասել նրան։ Այսպես եք սկսում Ձեր աշխատանքն այստեղ։ Նայեք հապա։— Նա Կ-ին կանչեց ամբիոնի մոտ, ցույց տվեց թաթն ու հազիվ էր Կ-ն հասցրել նայել, կատվի ճանկերով դիմ քաշեց Կ-ի ձեռքի վրա։ Թեև ճանկերը բթացած էին, սակայն ուսուցչուհին, այս անգամ արդեն կատվի վրա ուշադրություն չդարձնելով, թաթն այնպես ամուր սեղմեց Կ-ի ձեռքին, որ քերծված տեղերում արյուն երևաց։

— Իսկ հիմա գնացեք Ձեր գործին,— անհամբերությամբ ասաց նա ու նորից կռացավ կատվի վրա։ Ֆրիդան, որ պատվարի հետևում կանգնած, օգնականների հետ նայում էր կատարվածին, արյուն տեսնելով ճչաց։ Կ-ն ձեռքը ցույց տվեց երեխաներին ու ասաց.

— Տեսեք, սա շար ու խարդախ կատուն արեց։— Այս բառերը նա, իհարկե, երեխաների համար չասաց. նրանց ծիծաղն ու աղմուկն արդեն այն աստիճան ինքնարուխ էին դարձել, որ ծիծաղելու համար այլևս ոչ մի պատճառ պետք չէր, ոչ մի բառ չէր կարող լսվել նրանց աղմուկի մեջ ու որևէ ազդեցություն թողնել։ Եվ որովհետև ուսուցչուհին էլ վիրավորանքին ի պատասխան միայն աչքի պոչով նայեց ու շարունակեց կատվով զբաղվել (արյունոտ պատիժը երևի թե մեղմացրեց նրա զայրույթը), Կ-ն կանչեց Ֆրիդային ու օգնականներին, և աշխատանքն սկսվեց։

Երբ Կ-ն կեղտաջրի դույլը դուրս էր տարել, նոր ջուր բերել ու սկսել էր դասասենյակն ավլել, մոտ տասներկու տարեկան մի տղա բարձրացավ իր նստարանից, շոշափեց Կ-ի ձեռքն ու ընդհանուր աղմուկի մեջ անհասկանալի ինչ-որ բան ասաց։ Այդ պահին աղմուկը հանկարծակի դադարեց, և Կ-ն շրջվեց։

Կատարվել էր այն, ինչից Կ-ն վախենում էր ողջ ընթացքում. դռան մեջ կանգնել էր ուսուցիչը և երկու ձեռքով բռնել օգնականների օձիքներից։ Օգնականներին ուսուցիչը, հավանաբար, փայտ բերելիս էր բռնացրել, որովհետև այժմ բարձր բզավում էր ու յուրաքանչյուր բառից հետո դադար տալիս։

— Այդ ո՞վ է համարձակվել կոտրել ցախանոցի դուռը։ Ո՞վ է այդ մարդը, հիմա կտոր-կտոր կանեմ նրան։

Այդ պահին Ֆրիդան, որ ջանում էր ուսուցչուհու ոտքերի մոտ լվանալ հատակը, ուղղվեց, նայեց Կ-ի կողմը, կարծես ուզում էր ուժ հավաքել, ընդ որում նրա հայացքի ու կեցվածքի մեջ նորից ինչ-որ բան կար նախկին գերազանցությունից։

— Ես եմ կոտրել, պարոն ուսուցիչ,— ասաց նա։— Ուրիշ ելք չունեի։ Եթե դասասենյակները պետք է շուտ տաքացվեին, ուրեմն անհրաժեշտ էր ցախանոցը բացել։ Ես չհամարձակվեցի բանալին գիշերով վերցնել Զեզնից։ Փեսացուս հյուրանոցում էր ու հնարավոր էր, որ գիշերն ևս այնտեղ մնար, այնպես որ ես ստիպված էի ամեն ինչ վճռել մենակ։ Եթե անարդարացի եմ եղել, ապա ներեք իմ անտեղյակությունը։ Փեսացուս երբ տեսավ, թե ինչ է կատարվել, բավական լուտանք տեղաց իմ գլխին։ Այո, նա նույնիսկ արգելեց ինձ շուտ տաքացնել, որովհետև մտածում էր, թե ցախատունը փակ պահելով Դուք ուզեցել եք ցույց տալ, թե չեք ցանկանում, որ դասասենյակը տաքացվի մինչև Ձեր գալը։ Այն, որ վառարանը չենք վառել, նրա մեղքն է, իսկ որ ցախատան դուռը շարդված է՝ իմը։

— Ո՞վ է ջարդել,— օգնականներին հարցրեց ուսուցիչը. նրանք առաջվա պես ապարդյուն փորձում էին պոկ գալ ուսուցչի ձեռքերից։

— Պարոնը,— ասացին երկուսով ու, որպեսզի կասկած

www.a-pdf.com

չլինի, ցույց տվեցին Կ-ի կողմը։ Ֆրիդան ծիծաղեց, ու ծիծաղն ավելի մեծ ազդեցություն թողեց, քան բառերը։ Հետո նա ջնջոցը, որով հատակն էր սրբում, քամեց դույլի մեջ, և նրա շարժումներն այն տպավորությունը թողեցին, թե իր բացատրությամբ միջադեպը ավարտվել էր, իսկ օգնականների ասածը կատակ էր միայն։ Եվ երբ աշխատանքը շարունակելու մտադրությամբ ծնկի իջավ, նա ասաց.

— Մեր օգնականները երեխաներ են ու, չնայած իրենց տարիքին՝ դպրոց հաճախելու ենթակա։ Երեկոյան կողմ ես մենակ, կացինով բացեցի ցախանոցի դուռը։ Դա շատ հեշտ էր, օգնականների կարիքը չունեի. նրանք երևի խանգարեին միայն։ Հետո, երբ փեսացուս եկավ գիշերը և դուրս գնաց, որ հասցված վնասը տեսնի ու ինչքան հնարավոր է՝ նորոգի, օգնականները՝ հավանաբար վախենալով այստեղ մենակ մնալ, նրա հետևից դուրս վազեցին ու նրան տեսան ցախատան պոկված դռան վրա աշխատելիս։ Այդ պատճառով են այսպես խոսում։ Երեխաներ են, էլի։

Թեև Ֆրիդայի բացատրությունների ժամանակ օգնականները շարունակ թափահարում էին գլուխներն ու Կ-ին ցույց տալիս, ջանք էին թափում համր դիմախաղի միջոցով տարհամոզել Ֆրիդային, բայց քանի որ դա նրանց չհաջողվեց, նրանք հնազանդվեցին վերջապես, Ֆրիդայի ասածը ընդունեցին որպես հրաման ու ուսուցչի տված նոր հարցին ոչինչ չպատասխանեցին։

— Այդպես,— ասաց ուսուցիչը։— Ուրեմն դուք ստում էիք կամ էլ առնվազն թեթևամտորեն մեղադրում էիք ծառային։— Օգնականներն առաջվա պես լռում էին, բայց նրանց դողացնելն ու վախվորած հայացքները կարծես ցույց էին տալիս, որ նրանք ընդունում են իրենց հանցանքը։— Որ այդպես է, ես իսկույն կծեծեմ ձեզ,— ասաց ուսուցիչը և երեխաներից մեկին ուղարկեց մյուս սենյակից ծեծելու գավազանը բերելու։ Երբ նա գավազանը բարձրացրեց, Ֆրիդան բղավեց.

— Ախր, օգնականները ճիշտ էին ասում։— Հետո շփոթված, ջնջոցն այնպես նետեց դույլի մեջ, որ ջուրը ցայտեց, իսկ ինքը վազեց պատվարի հետևը և թաքնվեց։

— Ստախոս մարդիկ են,— ասաց ուսուցչուհին, որ ար-

դեն վերջացրել էր թաթը վիրակապելը ու կենդանուն գիրկն էր առել. կատուն, ի դեպ, շատ ավելի լայն էր նրա գրկում տեղավորվելու համար։

— Ուրեմն մնում է պարոն սպասավորը,— ասաց ուսուցիչը, հեռու հրեց օգնականներին ու շուռ եկավ Կ-ի կողմը, որ սկզբից ևեթ ավելին հենված լսում էր։— Այս պարոն սպասավորը վախից թույլ է տալիս, որ իր սրիկայությունների համար սխալմամբ ուրիշ մարդու պատժեն։

— Ճիշտն ասած, ինձ ցավ չէր պատճառի, եթե օգնականներս մի փոքր ծեծ ուտեին. տաս անգամ ծեծի արժանի լինելու դեպքում ես ինձ այել եմ նրանց, և նրանք հանգիստ կարող են մի անգամ ուրիշի մեղքերը քավել,— ասաց Կ-ն։ Նա հավանաբար նկատել էր, որ Ֆրիդայի միջամտությունը մեղմացրել էր ուսուցչի առաջին, անկասելի զայրույթը։— Բայց մյուս առումներով էլ ինձ համար շատ ցանկալի կլիներ, որ հնարավոր լիներ խուսափել իմ ու Ձեր միջև անմիջական բախումից, և կարծում եմ, որ դա Ձեր սրտովն էլ կլիներ։ Բայց քանի որ այս պահին Ֆրիդան ինձ զոհաբերեց օգնականներին, —այստեղ Կ-ն կարճ դադար տվեց, լռության մեջ, պատվարի հետևում լսվեց Ֆրիդայի հեծկլտոցը,— ապա դրանք, ինչ խոսք, պետք է լրիվ պարզել։

— Չլսված բան է,— խոսեց ուսուցչուհին։

— Ես կիսում եմ Ձեր կարծիքը, Ֆրոյլայն Գիզա,— ասաց ուսուցիչը։— Դուք, սպասավոր, ծառայության նման խայտառակ թերացման պատճառով, իհարկե, ազատված եք աշխատանքից։ Դրան հաջորդող պատիժը թող մնա ինձ վրա, իսկ այժմ ունեցած-չունեցածի հետ չքվեք այստեղից։ Դա իսկապես կթեթևացնի մեր վիճակը, և մենք վերջապես կկարողանանք սկսել դասը։ Ուրեմն, արագ, չքացեք։

— Ես այստեղից ոչ մի տեղ չեմ գնա։ Դուք եք իմ պետը, բայց Դուք չեք ինձ այս գործին նշանակել։ Համայնքի նախագահն է նշանակել, ես էլ միայն նրա լուծարքը կընդունեմ։ Իսկ նա, ինչ խոսք, ինձ այս գործին չնշանակեց, որ իմ մարդկանց հետ մրսեմ այստեղ, այլ, ինչպես ինքներդ ասացիք, որ իմ կողմից չմտածված, հուսահատ արարքների դեմն առնի։ Այդքան բանից հետո ինձ հանկարծակի ազատելը կնշանակեր նրա մտադրություններին ուղիղ հակառակ

www.a-pdf.com

գործել։ Քանի դեռ իմ խոսքերին հակասող որևէ բան անձամբ նրա շուրթերից չեմ լսել, ոչ մի բանի չեմ հավատա։ Ի դեպ, հավանաբար նաև հօգուտ Ձեզ է, որ ես չեմ ենթարկվում Ձեր թեթևամիտ լուծարքին։

— Ուրեմն չե՞ք ենթարկվում,— հարցրեց ուսուցիչը։ Կ-ն օրորեց գլուխը։— Լավ մտածեք։ Ձեր որոշումները ոչ միշտ են ճիշտ լինում։ Մտածեք, օրինակ, երեկվա մասին, երբ մերժեցիք հարցաքննվելու առաջարկը։

— Ինչո՞ւ եք հիմա հիշատակում այդ մասին։

— Որովհետև ինձ այդպես է դուր գալիս։ Իսկ հիմա վերջին անգամ եմ կրկնում՝ դուրս կորեք։

Սակայն, երբ դա էլ ոչ մի ազդեցություն չթողեց, ուսուցիչը մոտեցավ ամբիոնին և ցածրաձայն խորհրդակցեց ուսուցչուհու հետ։ Վերջինս ինչ-որ բան ասաց ոստիկանության մասին, ինչը ուսուցիչը մերժեց. վերջապես նրանք համաձայնության եկան, և ուսուցիչը երեխաներից պահանջեց անցնել մյուս դասասենյակ. այնտեղ նրանք կպարապեին մնացած աշակերտների հետ մեկտեղ։ Այդ փոփոխությունը բոլորին ուրախացրեց. ճիչ ու ծիծաղի ուղեկցությամբ դասարանն իսկույն դատարկվեց, ուսուցիչն ու ուսուցչուհին հեռացան վերջինը։ Ուսուցչուհին վերցրեց դասամատյանն ու դասամատյանի վրա՝ դեր, ամեն ինչի հանդեպ անտարբեր կատվին։ Ուսուցիչը մեծ հաճույքով կատվին այստեղ կթողներ, սակայն ուսուցչուհին վճռականորեն մերժեց նրա ակնարկը, պատճառաբանելով Կ-ի դազանային վերաբերմունքը։ Եվ այսպես, Կ-ն ի լրումն ամեն ինչի, կատվին էլ տվեց ուսուցչի շալակը։ Հավանաբար դա էր պատճառը, որ դռան մեջ կանգնած ուսուցիչը հեռանալուց առաջ ղիմեց Կ-ին։

— Ֆրոյլայնն ստիպված է աշակերտների հետ թողնել այս սենյակը, որովհետև Դուք համառորեն չեք ընդունում իմ լուծարքը և որովհետև նրանից՝ երիտասարդ աղջկանից ոչ ոք չի կարող պահանջել, որ նա դաան անցկացնի Ձեր ընտանիքի կեղտոտ անտեսության պայմաններում։ Դուք, ուրեմն, մենակ կմնաք և կարող եք, առանց պարկեշտ հանդիսատեսի ներվանքը հաշվի առնելու, Ձեր ուզած ձևով փովել այստեղ։ Սակայն դա երկար չի տևի։ Ես երաշխավորում եմ։

Եվ նա փակեց դուռը։

www.a-pdf.com

Հազիվ էին բոլորը հեռացել, Կ-ն դիմեց օգնականներին.

— Դուրս գնացեք։

Այդ անսպասելի հրամանից շփոթված, նրանք հնազանդվեցին, բայց երբ թիկունքում դուռը փակվեց, նորից ուզեցին հետ գալ, վնգստում էին դրսում ու թակում դուռը։

— Դուք ազատ եք,— բացականչեց Կ-ն։— Ձեզ այլևս ինձ մոտ ծառայության չեմ վերցնի։— Օգնականները հավանաբար չէին ուզում այդ մտքի հետ հաշտվել և ոտքերով ու ձեռքերով թակում էին դուռը։

— Մեզ ներս թող, պարոն,— այնպես էին բղավում նրանք, կարծես Կ-ն ցամաքը լիներ, իսկ իրենք ուր որ է խեղդվելու էին ջրհեղեղի մեջ։ Բայց Կ-ն բոլորովին չէր կարեկցում նրանց և անհամբեր սպասում էր, թե անտանելի աղմուկը ուսուցչին երբ կստիպեր միջամտել։ Երկար սպասելու կարիք չեղավ։

— Ներս թողեք Ձեր անիծյալ օգնականներին,— բղավեց ուսուցիչը։

— Ես ազատել եմ նրանց,— պատասխանեց Կ-ն։ Նրա այդ քայլը զուգահեռ անցանկալի ազդեցություն էլ էր թողնում. ուսուցչին ցույց էր տալիս, թե ինչպես է երևում, որ մարդը բավական ուժեղ է ոչ միայն լուծարքի ենթարկելու, այլ նաև լուծարքն իրականացնելու համար։ Ուսուցիչը փորձեց հանգստացնել օգնականներին, ասելով, թե նրանք պետք է հանգիստ պահեն իրենց, որ Կ-ն վերջիվերջո ստիպված կլինի բացել դուռը։ Հետո նա հեռացավ և այժմ երևի վերջնականապես լռություն տիրեր, եթե Կ-ն չսկսեր բղավել, թե օգնականներն ազատ են արձակված և նվազագույն իսկ հույս չեն կարող ունենալ, որ կվերականգնվեն նորից։ Դրանից հետո օգնականներն սկսեցին առաջվա պես աղմկել։ Ուսուցիչը նորից դուրս եկավ, սակայն այս անգամ նրանց հետ չբանակցեց, այլ սարսափազդու գավազանով նրանց քշեց շենքից։

Քիչ անց օգնականները հայտնվեցին մարզասենյակի պատուհանների մոտ. պատուհաններն էին թակում, բղավում, սակայն բառերն այլևս չէին հասկացվում։ Նրանք այնտեղ էլ շատ երկար չմնացին. թեև նրանց անհանգիստ վի-

www.ocpdf.com

ճակը ստիպում էր շարժվել, բայց նրանք չէին կարող իսկ ձյան մեջ անընդհատ ցատկոտել, շտապեցին դպրոցի պարտեզի ցանկապատի կողմը, ցատկեցին ճաղերի քարաշեն հիմքին ու թեև բավական հեռու էին, բայց այնտեղից լավ էին տեսնում սենյակի ներսը։ Ցանկապատի ճաղերից բռնելով, նրանք հետուառաջ էին վազում, կանգնում էին ու ծալած ձեռքերն աղաչանքով պարզում Կ-ի կողմը։ Երկար ժամանակ՝ առանց իրենց չարչարանքների անօգուտ լինելը գիտակցելու, նրանք վազվզում էին, կարծես գլուխները կորցրած լինեին և հավանաբար չդադարեցին նույնիսկ այն ժամանակ, երբ Կ-ն նրանց այլևս չտեսնելու համար իջեցրեց պատուհանների վարագույրները։

Մթնեցված սենյակում Կ-ն մոտեցավ պատվարին, որ տեսներ, թե ինչով է զբաղված Ֆրիդան։ Կ-ի հայացքի տակ Ֆրիդան ոտքի ելավ, կարգի բերեց մազերը, սրբեց դեմքն ու լուռ սկսեց սուրճ եփելու պատրաստություն տեսնել։ Թեև նա ամեն ինչ լսել էր, Կ-ն հենց այնպես տեղյակ պահեց նրան, որ օգնականներին ազատ է արձակել։ Ֆրիդան միայն գլխով արեց։ Կ-ն նստել էր աշակերտական նստարաններից մեկին ու հետևում էր նրա հոգնած շարժումներին։ Թարմությունն ու վճռականությունն էին, որ գեղեցկություն էին հաղորդել Ֆրիդայի փոքր մարմնին, այժմ, սակայն, այդ գեղեցկությունը չքացել էր. Կ-ի հետ համատեղ կյանքի մի քանի օրը բավական էր դրա համար։ Աշխատանքը պանդոկում թեև հեշտ չէր, բայց ավելի էր համապատասխանում նրան։ Կամ գուցե Կլամմից հեռու լինելն էր գեղեցկությունը կորցնելու իսկական պատճառը։ Կլամմի մերձավորությունն անհասկանալի հրապույր էր հաղորդել նրան, և, այդպես հրապուրիչ լինելով՝ նա իր կողմն էր ձգել Կ-ին, իսկ այժմ թառամել էր նրա ձեռքում։

— Ֆրիդա,— ասաց Կ-ն։ Ֆրիդան անմիջապես մի կողմ դրեց սրճաղացը և մոտեցավ Կ-ի նստարանին։

— Դու զայրացա՞ծ ես ինձ վրա,— հարցրեց նա։

— Ոչ,— ասաց Կ-ն։— Ես կարծում եմ, որ դու այլ կերպ չես կարող։ Հյուրանոցում դու գոհ էիր քո կյանքից, ես քեզ պետք է այնտեղ թողած լինեի։

www.a-pdf.com

— Այո,— ասաց Ֆրիդան ու տխուր նայեց դիմացը։— Դու ինձ պետք է այնտեղ թողած լիներիր։ Ես արժանի չեմ քեզ հետ ապրելուն։ Ինձնից ազատվելուց հետո դու երևի կարողանաս հասնել այն ամենին, ինչ ինքդ ես ուզում։ Իմ պատճառով դու գերի ես դառնում գազանաբարո ուսուցչին, այս խղճուկ աշխատանքն ես ստանձնում, շարչարվում ես, որ կարողանաս խոսել Կլամմի հետ։ Այդ ամենն ինձ համար, մինչդեռ ես վատ եմ վարձահատույց լինում քեզ։

— Ոչ,— առարկեց Կ-ն ու մխիթարելով գրկեց նրան։— Այդ ամենը մանրուքներ են, որ ինձ ցավ չեն պատճառում, իսկ Կլամմի հետ ես միայն քո պատճառով չէ, որ ուզում եմ խոսել։ Իսկ ինչե՞ր ես արել դու ինձ համար։ Մինչև քեզ ճանաչելը ես, ախր, մոլորվածի պես էի շրջում այստեղ։ Ոչ ոք չէր ընդունում ինձ և ում մոտ էլ որ ձգտում էի գնալ, արագ հրաժեշտ էր տալիս ինձ։ Եվ եթե կարող էի որևէ մեկի մոտ հանգիստ փնտրել, ապա դրանք այն մարդիկ էին, ումից էլ ես էի փախչում. օրինակ՝ Բարնաբասի ընտանիքի անդամները։

— Դու փախչո՞ւմ ես նրանցից։ Ճի՞շտ ես ասում։ Սիրելի՛ս։— Աշխույժ բացականչությամբ Ֆրիդան ընդհատեց Կ-ին ու Կ-ի անվստահ «այո» պատասխանից հետո նորից ընկղմվեց իր հոգնության մեջ։ Բայց Կ-ն էլ այլևս վճռականություն չուներ բացատրելու, թե ինչն էր Ֆրիդայի հետ ունեցած ծանոթության բերած լավ շրջադարձը։ Նա հեռացրեց ձեռքն ու լուռ նստեց մի պահ, մինչև որ Ֆրիդան՝ կարծես Կ-ի ձեռքը ջերմացնում էր նրան և ինքն այլևս չէր կարող առանց դրա դիմանալ, ասաց.

— Ես չեմ կարողանա այստեղ ապրել։ Եթե ուզում ես, որ քեզ հետ լինեմ, պետք է հեռանանք։ Միևնույն է թե ուրդեպի Ֆրանսիայի հարավը, դեպի Իսպանիա։

— Ես չեմ կարող հեռանալ,— ասաց Կ-ն։— Ես եկել եմ, որ մնամ։ Ես կմնամ։— Եվ իրեն բոլորովին նեղություն չպատճառելով բացատրել իր խոսքերում եղած հակասությունը, նա կարծես ինքնիրեն խոսելով ավելացրեց։— Թե չէ ուրիշ էլ ի՞նչ կարող էր ինձ այս ամայի երկրում գայթակղել, եթե ոչ այստեղ մնալու պահանջը։ Բայց, ախր, դու

www.a-pdf.com

էլ ես ուզում այստեղ մնալ, ախր, սա քո երկիրն է,— ավելացրեց նա։— Քեզ միայն Կլամմն է պակասում, և դա հուսահատ մտքեր է ծնում քո մեջ։

— Ուրեմն Կլա՞մմն է ինձ պակասում,— հարցրեց Ֆրիդան։— Այստեղ, ախր, ամենուր Կլամմի շունչն է, ամեն ինչ նրանով է հագեցած այստեղ և նրանից հեռանալու համար եմ ուզում գնալ այստեղից, որովհետև չեմ կարող կշտանալ քեզնից, այստեղ, ուր բոլորն ինձ իրենց կողմն են ձգում։ Ավելի լավ է իմ գեղեցկությունն անհետանա, թշվառ լինեմ, միայն թե կարողանամ հանգիստ ապրել քեզ հետ։

Նրա խոսքերից Կ-ն միայն մի բան ընկալեց.

— Կլամմը դեռ կա՞պ ունի քեզ հետ,— իսկույն հարցրեց նա։— Նա կանչո՞ւմ է քեզ։

— Կլամմի մասին ոչինչ չգիտեմ։ Այժմ ես ուրիշ բանի մասին եմ խոսում. օրինակ՝ օգնականների։

— Ախ, օգնականնե՞րը,— անակնկալի գալով, ասաց Կ-ն։— Նրանք հետապնդո՞ւմ են քեզ։

— Իսկ դու չե՞ս նկատել։

— Ոչ,— ասաց Կ-ն և իզուր փորձեց մանրամասներ հիշել։— Երևի աներես ու պատվազուրկ մարդիկ են նրանք, բայց որ համարձակված լինեին մոտենալ քեզ, ես այդ չեմ նկատել։

— Չե՞ս նկատել։ Դու չե՞ս նկատել, թե ինչպես հնարավոր չէր քշել նրանց կամրջի մոտի իջևանատան մեր սենյակից, ինչպիսի կրքով էին նրանք հետևում մեզ, ինչպես երեկ մեկը պառկեց իմ տեղը՝ հարդի պարկին, ինչպես նրանք քիչ առաջ արտահայտվեցին քո դեմ, որ քշեին քեզ, կործանեին ու մենակ մնային ինձ հետ։ Դու չե՞ս նկատել այդ ամենը։— Կ-ն նայեց Ֆրիդային ու ոչինչ չասաց։ Օգնականների դեմ նրա գանգատները հավանաբար ճիշտ էին, բայց դրանք կարող էին և ավելի անմեղ մեկնաբանություն ունենալ, եթե հաշվի առնեին այն երկուսի մանկական, ծիծաղաշարժ, իրենք իրենց չտիրապետող, փնթի բնավորությունները։ Եվ արդյոք մեղադրանքին դեմ չէ՞ր խոսում նաև այն, որ նրանք միշտ ձգտում էին Կ-ի հետ գնալ ամեն տեղ և ոչ թե մնալ Ֆրիդայի մոտ։ Կ-ն ինչ-որ նման բան ասաց։

www.a-pdf.com

— Ստորաքարշություն էր։ Չե՞ս նկատել։ Իսկ եթե դա չէր պատճառը, ապա ինչո՞ւ քշեցիր նրանց,— ասաց Ֆրիդան, մոտեցավ պատուհանին, մի փոքր բարձրացրեց վարագույրը, նայեց դուրս ու մոտ կանչեց Կ-ին։ Օգնականներն առաջվա պես կանգնած էին ճաղերի մոտ և արտաքուստ ինչքան էլ հոգնած էին երևում, ժամանակ առ ժամանակ ուժ հավաքելով, ձեռքերն աղաչանքով պարզում էին դպրոցի կողմը։ Նրանցից մեկը, որպեսզի ստիպված չլինի շարունակ ճաղերից բռնել, պիջակը թիկունքի կողմից հագցրել էր ճաղերին։

— Խեղճերը,— ասաց Ֆրիդան։— Մեղք են։

— Ինչու նրանց քշեցի՞,— բացականչեց Կ-ն։— Դո՛ւ եղար դրա անմիջական պատճառը։

— Ե՞ս,— առանց հայացքը դրսից կտրելու, հարցրեց Ֆրիդան։

— Օգնականների հանդեպ քո չափից դուրս ընկերական վարվելակերպը։ Նրանց անկարգությունները ներելը, նրանց վրա ծիծաղելը, նրանց մազերը շոյելը, նրանց հանդեպ խրոխտահարության մշտական դրսևորումը։ «Խեղճերը» նորից ասում ես դու։ Եվ, վերջապես, վերջին դեպքը, երբ օգնականներին ծեծից ազատելու համար ես այնքան էլ թանկ չէի քեզ համար, որ փրկագին դառնայի։

— Ախր հենց դա է, ախր ես այդ մասին եմ խոսում, ախր հենց դա է, որ դժբախտացնում է ինձ, որ ինձ հեռու է պահում քեզնից, այն ժամանակ, երբ ես քո կողքին լինելուց բացի ավելի մեծ երջանկություն չունեմ։ Միշտ, անընդհատ, անվերջ։ Ես մտածում եմ, որ այստեղ՝ երկրի վրա, մեր սիրո համար ոչ մի խաղաղ անկյուն չկա, ո՛չ գյուղում, ո՛չ մի այլ տեղ, և այդ պատճառով եմ ինձ համար մի նեղ ու խոր գերեզման պատկերացնում, ուր՝ ասես աքցանի ճանկերի մեջ, մենք կպառկենք իրար ամուր գրկած, իմ դեմքը հպած քեզ, քո դեմքը՝ ինձ, և ոչ ոք երբևէ չի տեսնի մեզ։ Իսկ այստեղ, տե՛ս օգնականներին. քեզ չի վերաբերում նրանց առաջ պարզած ձեռքերը, այլ՝ ինձ։

— Ես չէ, որ նայում եմ նրանց, այլ՝ դու,— պատասխանեց Կ-ն։

www.a-pdf.com

— Իհարկե ես,— փոքր-ինչ զայրացած ասաց Ֆրիդան։— Ես, ախր, շարունակ այդ մասին եմ խոսում։ Թե չէ ի՞նչն է պատճառը, որ օգնականները հետևում են ինձ. նրանք կարող են նաև Կլամմի ուղարկած մարդիկը լինել։

— Կլամմի ուղարկածնե՞րը,— ասաց Կ-ն. թեև այս արտահայտությունը նրան անմիջապես բնական թվաց, բայցևայնպես շատ անսպասելի էր։

— Իհարկե, Կլամմի ուղարկածները,— ասաց Ֆրիդան։— Թող որ Կլամմը նրանց ուղարկած լինի, բայց նրանք, ախր, հիմար են և դաստիարակելու համար նրանց դեռ ծեծել է պետք։ Ինչ զզվելի, սև տղաներ են նրանք և ինչքան զզվելի է նրանց համարյա հասունացած, ուսանողի տպավորություն թողնող դեմքերի ու երեխայավարի-անմիտ վարքի միջև եղած հակասությունը։ Կարծում ես, թե ես չե՞մ նկատում դա։ Ախր, ես ամաչում եմ նրանց փոխարեն։ Եվ բանն էլ հենց այն է, որ ոչ թե նրանք են վանում ինձ, այլ ես եմ ամաչում նրանց փոխարեն։ Ես միշտ պետք է հետևեմ նրանց։ Եթե մեկնումեկը նրանց վրա զայրանա, ես պետք է ծիծաղեմ, եթե մեկը ցանկանա ծեծել նրանց, ես պետք է նրանց մազերը շոյեմ։ Գիշերը՝ քո կողքին պառկած, չէի կարողանում քնել, նայում էի քո վրայով և տեսնում, թե ինչպես էր նրանցից մեկը ծածկոցի մեջ ամուր փաթաթված քնել, իսկ մյուսը վառարանի բաց դռնակի դիմաց ծնկի եկած վառ էր պահում վառարանը։ Ես առաջ խոնարհվեցի ու քիչ մնաց արթնացնեի քեզ։ Եվ կատուն չէր, որ վախեցրեց ինձ։ Ես, ախր, ծանոթ եմ կատուներին և դեռ պանդոկից սովոր եմ եղել անհանգիստ քնին։ Կատուն չէր, որ ինձ արթնացրեց, ինքս ինձ վախեցա։ Արթնանալու համար ինձ ոչ մի կատու էլ պետք չէր։ Ես ամենաչնչին աղմուկի դեպքում վեր եմ թռչում։ Մի անգամ ես վախեցա, թե դու կարթնանաս հիմա, ու ամեն ինչ կվերջանա, հետո վեր ցատկեցի ու վառեցի մոմը, որ դու ևս արթնանաս ու պաշտպանես ինձ։

— Ես ոչինչ չեմ իմացել այդ ամենի մասին, միայն կասկածներին ենթարկվելով եմ քշել նրանց։ Հիմա նրանք գնացին արդեն, երևի թե ամեն ինչ լավ լինի։

— Այո, նրանք գնացին վերջապես,— ասաց Ֆրիդան, սակայն նրա դեմքին ոչ թե գոհունակություն, այլ՝ տանջանք

www.a-pdf.com

կար։— Իսկ մենք չիմացանք, թե ովքեր են նրանք։ Կլամմի՞ ուղարկած մարդիկ են, ինչպես որ ես եմ նրանց մտովի հենց այնպես անվանում. բայց գուցեև, իսկապես, Կլամմն է նրանց ուղարկել։ Նրանց աչքերը, այդ պարզամիտ, բայց կրակոտ աչքերը ինձ ինչ-որ տեղ հիշեցնում են Կլամմի աչքերը։ Այո, այդ է որ կա. Կլամմի հայացքն է, որ նրանց աչքերից նայում է ինձ։ Եվ, հավանաբար, ճիշտ չէր, երբ ասացի, թե ամաչում եմ նրանց փոխարեն։ Ես միայն ուզում էի, որ դա այդպես լիներ։ Այսինքն, ես գիտեմ, որ մի այլ տեղ և ուրիշ մարդկանց մոտ նույն պահվածքը հիմար ու անվայել կհամարվեր, բայց նրանց հարցում դա այդպես չէր։ Ուշադրությամբ ու հիացմունքով էի ես հետևում նրանց հիմարություններին։ Իսկ եթե նրանք, իրոք, Կլամմի ուղարկած մարդիկն են, ապա ո՞վ կարող է մեզ ազատել նրանցից, և, ընդհանրապես, արդյոք այդ դեպքում լա՞վ կլիներ նրանցից ազատվելը։ Դու նրանց արագ ներս չէի՞ր թողնի ու մի բան էլ ուրախ չէի՞ր լինի, եթե նրանք գային։

— Ուզում ես, որ նե՞րս թողնեմ նրանց,— հարցրեց Կ-ն։

— Ո՛չ, ո՛չ։ Ես երբեք այդպիսի բան չէի ցանկանա։ Նրանց տեսքը, եթե նրանք հիմա ներս ընկնեն, ինձ նորից տեսած լինելու ուրախությունը, երեխայավարի ցատկոտելն ու ձեռքերը տղամարդուն վայել առաջ պարզելը. ես երևի չկարողանամ այդ ամենին դիմանալ։ Բայց երբ մտածում եմ, որ կշարունակես նրանց հետ կոպիտ վարվել ու դրանով անհնար կդարձնես Կլամմի մոտ մտնելը, ապա ես ուզում եմ հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել քեզ դրա հետևանքներից։ Այդ դեպքում ես ուզում եմ, որ նրանց ներս թողնես։ Այդ դեպքում, Կ., արագ ներս թող նրանց։ Ինձ վրա ուշադրություն մի դարձրու, ես այնքան էլ կարևոր չեմ։ Ես կպաշտպանվեմ ինչքան կարող եմ, իսկ եթե հարկ է, որ տուժեմ, ուրեմն կտուժեմ, սակայն դա ես կանեմ այն գիտակցությամբ, որ հանուն քեզ է եղել։

— Դու ավելի համոզիչ ես դարձնում նրանց հանդեպ ընդունած իմ որոշումը։ Իմ կամքին որ մնա, նրանք երբեք ներս չեն գա։ Այն, որ ես նրանց դուրս եմ արել, ապացուցում է, որ, նայած հանգամանքների՝ կարելի է նրանց կառավարել,

www.a-pdf.com

և, հետևաբար, նրանք էական ոչ մի կապ չունեն Կլամմի հետ։ Երեկ երեկոյան ես Կլամմից մի նամակ ստացա, որից կարելի է հասկանալ, որ Կլամմին բոլորովին սխալ տեղեկություն են տվել օգնականների մասին, որտեղից էլ նորից պետք է եզրակացնել, որ օգնականները նրա համար եղածչեղած՝ մեկ են, որովհետև, եթե այդպես չլիներ, նա, իհարկե, նրանց մասին ավելի ճշգրիտ տեղեկություններ կստանար։ Իսկ որ դու նրանց մեջ Կլամմին ես տեսնում, դեռ ոչինչ չի նշանակում, որովհետև դու, ցավոք, շարունակ իշևանատիրուհու ազդեցության տակ ես ու ամենուր տեսնում ես Կլամմին։ Դու քանի դեռ Կլամմի սիրուհին ես, իմ կինը չես լինի։ Ես երբեմն պղտորվում եմ այդ մտքից, և ինձ թվում է, թե կորցրել եմ ամեն ինչ, ես այն զգացումն եմ ունենում, թե նոր եմ գյուղ եկել, բայց ոչ առաջվա պես հույսով լի, ինչպես այն ժամանակ էր, այլ գիտակցելով, որ ինձ սպասում են միայն հիասթափություններ, և որ, հերթով ամեն ինչ փորձելով, ես կապրեմ բոլոր հիասթափությունները։ Բայց դա հազվադեպ է լինում։— Ժպտալով ավելացրեց Կ-ն, երբ նկատեց թե ինչպես Ֆրիդան, իր խոսքերը լսելով, կուչ եկավ։— Իսկ իրականում դա լավ նշանակություն ունի. այսինքն՝ այն, ինչ դու ես ինձ համար։ Եվ եթե այս պահին ինձնից պահանջում ես ընտրություն կատարել քո և օգնականների միջև, ապա այս պահից սկսած օգնականները տանուլ են տվել։ Այդ ինչ միտք է. ընտրություն կատարել քո և օգնականների միջև։ Ես ուզում եմ վերջնականապես ազատվել նրանցից, ո՛չ խոսել, ո՛չ էլ մտածել նրանց մասին։ Իսկ քեզ չի՞ թվում, որ մեզ տիրած թուլության պատճառն այն է, որ դեռ չենք նախաճաշել։

— Գուցե։— Հոգնած ժպտալով ասաց Ֆրիդան ու գործի անցավ, իսկ Կ-ն նորից ձեռքն առավ ավելը։

Քիչ անց կամաց թակոց լսվեց։

— Բարնաբասն է,— բացականչեց Կ-ն, մի կողմ նետեց ավելն ու մի քանի ցատկով հայտնվեց դռան մոտ։ Ավելի շուտ լսած անունից, քան կատարվածից այլայլված Ֆրիդան նրան նայեց։ Կ-ի դողացող ձեռքերը չկարողացան իսկույն բացել հին փականքը։

www.a-pdf.com

— Արդեն բացում եմ,— շարունակ կրկնում էր նա, փոխանակ հարցնելու, թե իրականում ով էր թակողը։ Եվ քիչ անց նա ստիպված էր տեսնել, թե ինչպես լայն բացված դռնով ոչ թե Բարնաբասը ներս մտավ, այլ այն փոքրիկ պատանին, որ մի անգամ ուզեցել էր խոսել Կ-ի հետ։ Սակայն Կ-ն նրան հիշելու ցանկություն չուներ։

— Քեզ ի՞նչ է պետք այստեղ,— հարցրեց նա։— Դասը կողքի սենյակում է։

— Ես այնտեղից եմ գալիս,— ասաց պատանին ու իր խոշոր, շագանակագույն աչքերով հանգիստ նայեց Կ-ին. նա կանգնել էր դռան մեջ, ուղիղ, ձեռքերը սեղմած մարմնին։

— Եվ ի՞նչ ես ուզում։ Շուտ ասա,— հարցրեց Կ-ն ու փոքր-ինչ խոնարհվեց, որովհետև պատանին կամաց էր խոսում։

— Ես կարո՞ղ եմ օգնել քեզ,— հարցրեց պատանին։

— Նա ուզում է օգնել մեզ,— Ֆրիդային ասաց Կ-ն, ապա նորից դարձավ պատանուն։— Իսկ ի՞նչ է քո անունը։

— Հանս Բրունսվիկ,— ասաց տղան։— Չորրորդ դասարանցի եմ, բնակվում եմ Մադելայնեգասսե փողոցում, կոշկակար Օտտո Բրունսվիկի որդին եմ։

— Տես, է, Բրունսվիկ է ազգանունը,— ասաց Կ-ն ու այժմվանից ավելի բարեհաճ տրամադրվեց նրա հանդեպ։ Պարզվեց, որ ուսուցչուհու՝ Կ-ի ձեռքին գծած արնոտ ճանկրռվածքներն այնպես էին ազդել տղայի վրա, որ նա որոշել էր օգնել Կ-ին։ Նա ինքնակամ, իրեն մեծ պատժի վտանգին ենթարկելով, դասալիքի նման դուրս էր սողոսկել կողքի դասասենյակից։ Նրա վրա առաջին հերթին պետք է որ տղայական պատկերացումներն իշխած լինեին։ Այդ պատկերացումներին էր համապատասխանում նաև այն լրջությունը, որ երևում էր նրա յուրաքանչյուր քայլում։ Սկզբում նրան խանգարում էր երկչոտությունը, սակայն նա շուտով մերվեց Կ-ին ու Ֆրիդային և, երբ քիչ անց տաք սուրճ ստացավ, ավելի աշխուժացավ, վստահող էր, իսկ նրա հարցերն ավելի համոզիչ ու եռանդուն էին. նա կարծես ուզում էր հնարավորին չափ շուտ իմանալ կարևոր բաները, որ հետո կարողանար Կ-ի ու Ֆրիդայի հարցում ինքնուրույն վճիռ ընդունել։

www.a-pdf.com

նրա կեցվածքի մեջ հրամայական ինչ-որ բան էլ կար, բայց դա այնպես էր միահյուսված նրա երեխայական անմեղության հետ, որ մարդ կես կատակ-կես լուրջ, հաճույքով էր հնազանդվում նրան։ Համենայնդեպս, նա օգտվում էր ուշադրության բոլոր դրսևորումներից. աշխատանքները դադարել էին, և նախաճաշը չափից դուրս երկարեց։ Թեև աշակերտական նստարանին նա էր նստել, Կ-ն ամբիոնի աթոռին էր նստած, իսկ Ֆրիդան՝ նրա կողքի հետ դրված բազկաթոռին, բայց այնպես էր թվում, թե Հաննան է ուսուցիչը, ստուգում ու գնահատում է պատասխանները, նրա քնքուշ բերանը օղակող ժպիտը կարծես ցույց էր տալիս, թե ինքը շատ լավ գիտե, որ այս ամենը խաղ է, բայց նույն լրջությամբ էլ նա գործով էր զբաղվում։ Երևի բոլորովին էլ ժպիտը չէր, այլ մանուկ լինելու երջանկությունը, որ խաղում էր նրա շուրթերին։ Նա շատ ավելի ուշ ավելացրեց, որ ինքը ճանաչում է Կ-ին, սկսած այն ժամանակվանից, երբ Կ-ն մի անգամ մտավ Լազեմանի տունը։ Կ-ն շատ ուրախացավ։

— Այն օրը դու կնոջ ոտքերի մո՞տ էիր խաղում։

— Այո։ Նա իմ մայրն է։— Այժմ Հաննը պետք է իր մորմանին պատմեր, բայց երկմտում էր ու սկսեց խոսել միայն, երբ նրան նորից հարցրեցին։ Թեև երբեմն, հատկապես տպագրի կանխազգացումով հագեցած հարցերի, գուցե նաև ունկնդրի անհանգիստ-լարված վիճակի պատճառով թվում էր, թե խելացի, եռանդուն, հեռատես տղամարդ է զրուցակիցը, բայց պարզվեց, որ նա ընդամենը փոքր երեխա է, որ հաստուն տղամարդու տպավորություն թողնելուց անմիջապես հետո, առանց անցումայնության, վերածվում էր դպրոցականի, հարցերի մի մասը չէր հասկանում, մյուսները սխալ էր մեկնաբանում, անկախ այն բանից, որ հաճախ էին նրա վրա լը մատնանշում, նա մանկանը վայել աննրբանկատությամբ չափից դուրս կամաց էր խոսում և կամակորության պատճառով հարցերից մի քանիսին պատասխանելու փոխարեն լռում էր ու չէր շփոթվում, մի բան, որ շափահաս մարդը երբեք չէր կարողանա։ Ընդհանրապես այն տպավորությունն էր ստեղծվում, թե նա միայն իրեն էր վերապահել հարցեր տալու իրավունքը, իսկ մյուսներն իրենց հարցերով ինչ-որ

www.a-pdf.com

հրահանգ էին խախտում կամ ժամանակի կորստի պատճառ դառնում։ Հետո՝ նա կարող էր երկար ժամանակ լուռումունջ նստել մարմինը ուղիղ պահած, գլուխը կախ, ներքևի շուրթը ուռեցրած։ Դա Ֆրիդային այնքան դուր եկավ, որ նա ավելի հաճախ էր հարցեր տալիս և հույս ուներ, որ կստիպի տղային այդ կեցվածքն ընդունել. դա նրան երբեմն հաջողվում էր, սակայն Կ-ին զայրացնում էր։ Իսկ ընդհանրապես նրանք քիչ բան իմացան. մայրը փոքր-ինչ հիվանդոտ էր, բայց թե ինչ հիվանդություն ուներ, անորոշ մնաց, տիկին Բրունսվիկի գրկի երեխան Հանսի քույրն էր, անունը Ֆրիդա էր (իրեն հարցուփորձ անող կնոջ անվան հետ զուգադիպությունը Հանսն ընդունեց անբարյացակամորեն), նրանք բոլորը ապրում էին գյուղում, բայց ոչ Լաղեմանի տանը, ուր գնացել էին լողանալու համար. Լաղեմանի տանն էր մեծ տակառը, որի մեջ լողանալն ու չփչփացնելը փոքր երեխաներին (Հանսն, իհարկե, նրանց թվին չէր պատկանում) առանձնահատուկ հաճույք էր պատճառում։ Հոր մասին Հանսը ակնածանքով կամ վախով էր խոսում, բայց միայն այն դեպքում, երբ միաժամանակ նաև չէր խուսում մոր մասին։ Մոր հետ համեմատած՝ հոր արժեքն ակնհայտորեն փոքր էր։ Ի դեպ, ընտանիքի կյանքին վերաբերող հարցերը, ինչքան էլ մարդ փորձում էր դրանք շոշափել, միշտ անպատասխան էին մնում։ Հոր արհեստի մասին իմացան միայն, որ նա շրջակայքի լավագույն կոշկակարն է, ոչ ոք չի կարող նրան հավասարվել։ Հանսը մյուս հարցերին էլ մի քանի անգամ պատասխանեց, որ հայրը ուրիշ կոշկակարների էլ է աշխատանք տրամադրում, օրինակ՝ Բարնաբասի հորը։ Այս վերջինիս Բրունսվիկը հավանաբար ինչ-որ առանձնահատուկ խղճահարությունից դրդված է գործ տրամադրում. առնվազն այդ էր նշանակում Հանսի գլխի հպարտ շարժումը, որից հիացած Ֆրիդան նրա կողմը ցատկեց ու համբուրեց նրան։ Այն հարցին, թե նա դղյակում եղե՞լ է, Հանսը, հարցը մի քանի անգամ կրկնել տալուց հետո, պատասխանեց, այն էլ՝ բացասաբար։ Մորը վերաբերող նույն հարցը նա ընդհանրապես անպատասխան թողեց։

Վերջապես Կ-ն հոգնեց, հետաքրքրվելն անիմաստ թվաց

www.a-pdf.com

նրան։ Նա արդարացնում էր պատանուն։ Հարցուփորձ անելու մեջ ինչ-որ ամոթալի բան կար. ուզում էին անմեղ երեխայի միջոցով՝ խոտոր ճանապարհով որևէ բան իմանալ նրանց ընտանիքի գաղտնիքների մասին, սակայն վիճակը կրկնակի ամոթալի էր, որ նույնիսկ երեխայից ոչինչ չիմացան։ Եվ երբ Կ-ն հարցրեց պատանուն, թե ինչպե՞ս է ուզում օգնել իրենց, այլևս չդարմացավ, լսելով, որ Հանսը միայն դպրոցի հետ առնչվող գործերում է ուզում օգնել, որպեսզի ուսուցիչն ու ուսուցչուհին այլևս չվիճեն Կ-ի հետ։ Կ-ն Հանսին բացատրեց, որ նման օգնության կարիքը չկա, վիճելը, հավանաբար, ուսուցչի բնավորության գիծն է ու երևի ամենաանթերի աշխատանքի դեպքում անգամ հնարավոր չլինի խուսափել նրա վեճերից։ Աշխատանքն այնքան էլ ծանր չէ, և միայն պատահականությունների պատճառով նա չի ավարտել գործը, և, ի դեպ, այդ վեճն այնպես չէր ազդում Կ-ի վրա, ինչպես աշակերտներից մեկնումեկի վրա կազդեր, ինքը բանի տեղ չի դնում դրանք, իր համար միևնույն է։ Միաժամանակ նա հույս ունի, որ շուտով կկարողանա ընդհանրապես հեռանալ ուսուցչի ենթակայությունից։ Եվ քանի որ խոսքը միայն ըստդեմ ուսուցչի օգնության մասին է, ապա ինքը շնորհակալ է, Հանսը կարող է հետ գնալ, և Կ-ն հուսով է, որ Հանսն առայժմ ոչ մի պատիժ չի կրի։ Թեև Կ-ն բոլորովին չհիշատակեց և միայն ակամայից հասկացրեց, որ եթե օգնությունը միայն ուսուցչի դեմ ուղղված լինի, ապա ինքը դրա կարիքը չի ունենա, ոչինչ չասաց ուրիշ հարցերով ակնկալվող օգնության մասին, Հանսը շատ պարզ հասկացավ ու հարցրեց. գուցե Կ-ն ուրի՞շ օգնության կարիք ունի, ինքը մեծ հաճույքով կօգնի և եթե անգամ ինքը ընդունակ չլինի, կխնդրի մորը, և դրանից հետո, իհարկե, ամեն ինչ կհաջողվի։ Երբ հայրն էլ է դժվարություններ ունենում, մոր օգնությունն է խնդրում։ Մայրը ևս մի անգամ Կ-ի մասին է հարցրել։ Մայրը համարյա դուրս չի գալիս տանից, այն անգամ բացառության կարգով էր Լազեմանի տուն գնացել, մինչդեռ ինքը՝ Հանսը, շատ հաճախ է գնում այնտեղ, որ Լազեմանի երեխաների հետ խաղա, և մայրը մի անգամ հարցրել է՝ արդյոք հողաշափը էլի գալի՞ս է նրանց տուն։ Մորը չի կարելի

www.a-pdf.com

իզուր տեղը անհանգստացնել, որովհետև նա չափազանց թույլ ու հոգնած է, և Հանսը պարզապես պատասխանել է, որ հողաչափին ինքը չի տեսել այնտեղ, իսկ դրանից հետո այդ թեմայով այլևս չեն խոսել։ Երբ ինքը դպրոցում գտավ Կ-ին, պարտավոր էր հետը խոսել, որ հետո կարողանար հայտնել մորը. մորն ամենից շատ դուր է գալիս, երբ մարդ առանց որոշակի հրամանի է իր ցանկությունները կատարում։ Կարճ ժամանակ մտածելուց հետո Կ-ն պատասխանեց, որ ինքն օգնության կարիք չունի, ինչ անհրաժեշտ է՝ հատկացված է իրեն, բայց Հանսի կողմից դա շատ գեղեցիկ քայլ է, որ ուզում է օգնել իրեն, և շնորհակալություն է հայտնում նրա լավ մտադրության համար։ Շատ հնարավոր է, որ երբևէ հետագայում ինչ-որ բան պետք լինի, այդ դեպքում ինքը նրա օգնությանը կդիմի. իր մոտ կա Հանսի հասցեն։ Երևի փոխարենը Կ-ն կարողանա մի փոքր օգնել։ Ինքը ցավում է, որ Հանսի մայրը հիվանդ է, և այստեղ բացահայտորեն ոչ ոք չի հասկանում նրա հիվանդությունը, իսկ անփույթ վերաբերմունքի դեպքում արտաքուստ թեթև հիվանդությունից շատ հաճախ կարող է ծանր բարդություն առաջանալ։ Կ-ն բժշկական որոշ գիտելիքներ ունի և, որ ավելի արժեքավոր է, բուժելու փորձ ևս ունի։ Որոշ հարցերում, ուր բժիշկներին ոչինչ չի հաջողվել, իր բախտը բերել է։ Բժշկական գործունեության պատճառով իրեն տանը միշտ «լեղի թուփ» են անվանել։ Ինքը հաճույքով մի անգամ կնայի Հանսի մորն ու կխոսի նրա հետ։ Գուցե կարողանա մի բարի խորհուրդ տալ նրան և, թեկուզ միայն ի սեր Հանսի, հաճույքով կանի այդ բանը։

Կ-ի առաջարկը լսելիս Հանսի աչքերը նախ կայծկլտացին ու գայթակղեցին Կ-ին, որ նա սկսեր համոզել, սակայն վերջնական արդյունքը գոհացուցիչ չէր, որովհետև Հանսը տարբեր հարցերին ի պատասխան ասաց, որ ոչ մի օտար մարդ իրավունք չունի այցելել մորը (ի դեպ, այդ ասելիս նա բոլորովին էլ տխուր տեսք չուներ), որովհետև մորը զգույշ վերաբերվել է պետք։ Թեև Կ-ն այն ժամանակ ընդամենը մի քանի բառ փոխանակեց մոր հետ, դրանից հետո մայրը մի քանի օր անկողնում անցկացրեց։ Դա սովորական է դարձել։ Հայրը, սակայն, այն ժամանակ շատ էր զայրացած Կ-ի

www.a-pdf.com

վա և այժմ, հավանաբար, այլևս թույլ չտա, որ Կ-ն գա իրենց տուն։ Այո, հայրն այն ժամանակ ուզեցել էր նույնիսկ փրնտրել Կ-ին ու պատժել, և միայն մայրն էր նրան հետ պահել այդ մտքից։ Իսկ ընդհանրապես, մայրն էլ չի ցանկանում որևէ մեկի հետ խոսել, և Կ-ին առնչվող հարցը ոչ մի բացառություն չի կազմում, այլ՝ ընդհակառակը. Կ-ի անունը հիշատակելու դեպքում մայրը կարող էր նրան տեսնելու ցանկություն հայտնել, սակայն նա այդ բանը չարեց ու շատ պարզ արտահայտեց իր կամքը. նա միայն ուզում է տեղեկանալ Կ-ի մասին, բայց նրա հետ խոսել չի ուզում։ Ի դեպ, նա բոլորովին էլ իսկական հիվանդությամբ չի տառապում, ինքը շատ լավ գիտե իր վիճակի պատճառը և երբեմն բացատրում է, որ ինքը, հավանաբար, չի կարողանում այստեղի օդը տանել, մինչդեռ երեխաների ու հոր պատճառով չի ուզում այստեղից հեռանալ, և հետո, հիմա նա ավելի լավ է զգում իրեն, քան առաջ էր։

Ահա այս էր, որ տեղեկացավ Կ-ն։ Հանսը բավականաչափ հնարամտություն դրսևորեց մորը Կ-ից պաշտպանելու հարցում, նույն Կ-ից, ում օգնել էր ուզում կարծես թե։ Կ-ին մորից հեռու պահելու ձգտումով նա մասամբ հակասում էր իր՝ օրինակ, մոր հիվանդության վերաբերյալ քիչ առաջ ասված խոսքերին։ Սակայն Կ-ն նկատեց, որ Հանսը առաջվա պես լավ է տրամադրված իր հանդեպ, միայն մոր պատճառով էր նա մնացած ամեն ինչը մոռացել. ով էլ որ մոր հետ հակադրվելու լիներ, նա ճիշտ չէր լինի, այս պահին Կ-ն էր այդ վիճակում հայտնվել, բայց հակադրվողը կարող էր լինել, օրինակ, հայրը։ Կ-ն ցանկացավ իր վերջին կարծիքն էլ փորձել և ասաց, որ հոր կողմից շատ խելացի քայլ է, երբ նա մորն այդպես պահպանում է բոլոր անախորժություններից, և եթե ինքը՝ Կ-ն, այն ժամանակ դրա մասին պատկերացում ունեցած լիներ, ինչ խոսք, չէր համարձակվի մոր հետ խոսել և հիմա, թեկուզ ուշացումով, պատվիրում է Հանսին, որ նա իր անունից ներողություն խնդրի տանը։ Փոխարենը, ինքը չի կարող հասկանալ, թե ինչո՞ւ հայրը, եթե հիվանդության պատճառը, ինչպես Հանսն ասաց, այդ աստիճան պարզ է, ինչո՞ւ է հայրը մորը պահում

www.a-pdf.com

այստեղ և թույլ չի տալիս հանգստանալ մի ուրիշ տեղում. պետք է ասել, որ հենց նա է մորն այստեղ պահողը, որովհետև մայրը միայն ամուսնու և երեխաների պատճառով չի գնում։ Երեխաներին նա կարող է իր հետ վերցնել, որովհետև երկար ժամանակով չի հեռանալու և հետո էլ շատ հեռու չի գնալու. հենց թեկուզ վերևում՝ դղյակի մոտերքը, օդը բոլորովին այլ է։ Նման ուղևորության պատճառելիք ծախսերից հայրը չպետք է վախենար, նա, ախր, այստեղի ամենամեծ կոշկակարն է և, իհարկե, նա կամ մայրը ծանոթներ ու բարեկամներ ունի դղյակում, ովքեր հաճույքով կհյուրընկալեն իրենց։ Ինչո՞ւ հայրը թույլ չի տալիս մորը գնալ։ Նա չպետք է թերագնահատի նման հիվանդությունը։ Կ-ն միայն հպանցիկ էր տեսել Հանսի մորը և հենց նրա աչքի զարնող գունատությունն ու թուլությունն էր ստիպել իրեն խոսել նրա հետ, դեռ այն ժամանակ էր Կ-ն զարմացել, որ այդ մարդը հիվանդ կնոջը թողել է լվացքի ու ընդհանուր լողասենյակի ծանր օդում ու, առանց որևէ բան հաշվի առնելու, բարձրաձայն խոսում էր դեռ։ Հավանաբար հայրը չգիտե, թե բանն ինչ է. Հանսի մոր վիճակը գուցե լավացել է վերջերս, բայց նման հիվանդությունը կամակոր է լինում, և երբ մարդ դրա դեմ չպայքարի, այն իր ողջ ուժով նորովի կդրսևորվի և այլևս ոչինչ հնարավոր չի լինի անել։ Եթե Կ-ն չի կարող մոր հետ խոսել, ապա, թերևս, լավ կլինի, որ հոր հետ խոսի ու նրա ուշադրությունը հրավիրի այս ամենի վրա։

Հանսը լարված ականջ էր դնում։ Կ-ի խոսքերի մեծ մասը նա հասկացավ, իսկ մյուսը՝ անհասկանալի մասի տակ թաքնված սպառնալիքը, շատ ծանր ընդունեց։ Այնուամենայնիվ, նա ասաց, որ Կ-ն չի կարող հոր հետ խոսել, որ հայրը հակակրանք ունի նրա հանդեպ և հավանաբար վարվի այնպես, ինչպես ուսուցիչը։ Կ-ի մասին նա ժպտալով ու վախվորած էր խոսում, իսկ երբ հոր անունը տվեց՝ տխուր էր ու դառնացած։ Հետո նա ավելացրեց, որ գուցե Կ-ն կարողանա մոր հետ խոսել, միայն թե հայրը չպետք է տեղյակ լինի։ Հետո Հանսը՝ քարացած հայացքը դեմքին, արգելված մի բան անել ցանկացող ու անպատիժ կերպով իրականացնելու հնարավորություն փնտրող կնոջ նմանվելով, մի փոքր

մտածեց և ասաց, որ վաղը չէ մյուս օրը երևի թե հնարավոր լինի. հայրը երեկոյան գնալու է հյուրանոց, նա այնտեղ ինչ-որ խորհրդակցություն ունի, և հենց հայրը տանից դուրս գա, Հանսը կգա ու Կ-ին կտանի մոր մոտ, այն նախապայմանով, համենայնդեպս, որ մայրը համաձայնի, մի բան, որ շատ անհավանական է։ Մայրը սովորաբար հոր կամքին հակառակ ոչինչ չի անում, ամեն ինչում հնազանդվում է նրան, նաև այն հարցերում, որոնց անմտությունը նույնիսկ ինքը՝ Հանսն է հասկանում։

Իրականում Հանսին պետք էր, որ Կ-ն օգներ ընդդեմ հորը, թվում էր, թե նա ինքնիրեն է խաբել, երբ մտածել է, թե ուզում է օգնել Կ-ին, մինչդեռ իրականում ուզում էր հեռաքրքրվել՝ արդյոք հանկարծակի հայտնված այս օտարականը, որ նույնիսկ մոր ուշադրությունն էր գրավել, ի վիճակի կլինե՞ր օգնել, այն ժամանակ, երբ հին ծանոթներից ոչ մեկը չէր կարողացել։ Բայց ինչ ծածկամիտ ու չգիտակցված պարփակվածություն ունեցող տղա դուրս եկավ սա։ Ո՛չ նրա տեսքը, ո՛չ էլ խոսքերը այդ մասին ոչինչ չէին ասում ու միայն պատահականության, նպատակամղված հարցերի շնորհիվ կորզված տեղեկություններից հնարավոր եղավ նկատել դա։ Եվ հիմա Կ-ի հետ երկար զրույցի ընթացքում նա մտածում էր, թե ո՞ր դժվարությունները կարելի կլիներ հաղթահարել։ Հանսի նույնիսկ լավագույն ցանկությունների դեպքում հնարավոր չէր այդ դժվարությունները հաղթահարել. մտքերի մեջ խորասուզված, բայց և օգնություն փընտրելով, նա անհանգիստ-թարթող աչքերով շարունակ նայում էր Կ-ին։ Մինչև հոր հեռանալը նա մորը ոչինչ ասելու իրավունք չուներ, թե չէ հայրը կտեղեկանար և այլևս ոչինչ հնարավոր չէր լինի։ Նշանակում է, նա միայն ավելի ուշ կարող էր խոսել մոր հետ և նույնիսկ այդ դեպքում հարկ կլինի նրբանկատություն դրսևորել, պետք չէր մորը հանկարծակիի բերել, այլ հարկավոր էր սպասել ու գտնել հարմար առիթը։ Միայն հարմար առիթի դեպքում նա կխնդրեր մոր համաձայնությունը և գուցե կարողանար Կ-ին իրենց տուն բերել։ Բայց, արդյոք, այդ ժամանակ շատ ուշ չէ՞ր լինի և իրենց չէ՞ր սպառնա հոր վերադարձը։ Ո՛չ, դա անհնար էր։

Դրան հակառակ, Կ-ն ապացուցում էր, որ անհնար չէ։ Այն,

www.a-pdf.com

որ ժամանակը կարող էր չբավականացնել, դրանից շարժեր վախենալ. կարճատև զրույցը, կարճ ժամանակով մոր հետ խոսելը բավական էր և պետք չէր, որ Հանսը գար Կ-ի հետևից։ Կ-ն տան մոտերքում ինչ-որ տեղ թաքնված կսպասեր ու Հանսի նշանով իսկույն կմոտենար։

— Ոչ,— առարկեց Հանսը։ Կ-ին չէր կարելի տան մոտերքում սպասել (նորից իրեն զգացնել տվեց մոր հանդեպ դրսևորվող նրբանկատությունը), առանց մորը տեղյակ պահելու Կ-ն իրավունք չուներ ճանապարհ ընկնել, Հանսն իրավունք չուներ մորից գաղտնի համաձայնության գալ Կ-ի հետ։ Հանսը Կ-ի հետևից կգար դպրոց, բայց ոչ ավելի շուտ, քան մինչև մորը տեղյակ պահելն ու նրանից թույլտվություն խնդրելը։

— Լավ։— Համաձայնեց Կ-ն, բայց այդ դեպքում, իրոք, վտանգավոր էր նման կերպ վարվելը և հնարավոր էր, որ հայրը Կ-ին իրենց տանը բռնացներ։ Իսկ որպեսզի ընդհանրապես նման բան չկատարվեր, ապա, դրանից վախենալով, մայրը բոլորովին թույլ չէր տա, որ Կ-ն գար, և այդպես՝ հոր պատճառով ամեն ինչ կձախողվեր։ Հանսը նորից հակաճառեց Կ-ին, և նրանց վեճը շարունակվեց։

Արդեն վաղուց Կ-ն նստարանից ամբիոնի մոտ էր կանչել Հանսին, նրան ծնկների արանքն էր առել ու երբեմն-երբեմն քնքշանքով շոյում էր մազերը։ Այդ մոտիկությունը, չնայած Հանսը թեթևակի հակառակվեց, նպաստեց փոխադարձ համաձայնության գալուն։ Նրանք, վերջապես, հետևյալ կերպ պայմանավորվեցին. սկզբում Հանսը ողջ ճշմարտությունը կասի մորը և, որպեսզի նրա համաձայնությունն ստանալը հեշտացնի, կավելացնի, որ Կ-ն ուզում է խոսել Բրունսվիկի հետ ևս, համենայնդեպս ոչ թե մոր պատճառով, այլ՝ սեփական գործերի։ Դա, իրոք, այդպես էր, որովհետև զրույցի ընթացքում Կ-ն հիշել էր, որ Բրունսվիկը, թեկուզ ինչքան էլ վտանգավոր ու չար մարդ լիներ, իրականում այլևս չէր կարող իր հակառակորդը լինել, այլ, ինչպես համայնքի նախագահն էր պատմել, մարդկանց այն խմբի ղեկավարն էր, որ՝ գուցեև քաղաքական պատճառներով, բայց պահանջել էին հողաչափ կանչել։ Ուրեմն, Կ-ի գյուղ ժամանելը պետք է որ Բրունսվիկի սրտովը լիներ։ Եթե դա այդպես էր, Կ-ն չէր

հասկանում, թե Բրունսվիկն ինչու առաջին օրը բարկացած ողջունեց և ինչն էր Հանսի ասած հակակրանքի պատճառը։ Գուցե Բրունսվիկն այն պատճառով էր վիրավորվել, որ օգնության համար Կ-ն առաջինը նրան չէր գիմել, գուցե ինչ-որ թյուրիմացություն կար, որ կարող է պարզվել մի քանի խոսք փոխանակելուց հետո։ Եթե ամեն ինչ այդպես ընթանար, ապա Կ-ն կարող էր հանձինս Բրունսվիկի՝ ընդդեմ ուսուցչի կամ նույնիսկ համայնքի նախագահի հուսալի հենարան ունենալ, և կբացահայտեր պաշտոնական ողջ խաբեբայությունը (ուրիշ էլ ինչպե՞ս կանվանես), որի օգնությամբ համայնքի նախագահն ու ուսուցիչը Կ-ին հետ էին պահում դղյակի ներկայացուցիչների հետ հանդիպելուց ու պարտադրում էին դպրոցի սպասավորի գործը։ Եթե գործը նորից հանգեր համայնքի նախագահի ու Բրունսվիկի միջև՝ Կ-ին առնչվող պայքարին, ապա Բրունսվիկը իր կողմը կգրավեր Կ-ին, Կ-ն հյուր կլիներ նրա տանը, Բրունսվիկի հնարավորությունները, ի հեճուկս նախագահի, կդրվեին Կ-ի տրամադրության տակ։ Ով գիտե, թե գործն այդպես ի՞նչ ընթացք կունենար, սակայն Կ-ն հաճախակի կլիներ Բրունսվիկի կնոջ մոտ։

Այդպես նա խաղում էր մտքերի, մտքերը՝ նրա հետ, մինչև Հանսը՝ շարունակ մոր մասին մտածելով, ուշադիր զննում էր լուռ նստած Կ-ին, այնպես, ինչպես բժշկին են նայում, երբ վերջինս, մտքերի մեջ խորասուզված, ուզում է ծանր հիվանդի վիճակը թեթևացնող միջոց գտնել։ Կ-ի այն առաջարկին, թե ինքը Բրունսվիկի հետ խոսելու է իրեն հողաշափ նշանակելու մասին, Հանսը համաձայն էր, համենայնդեպս սոսկ այն պատճառով, որ այդպես մորը կարելի էր պաշտպանել հորից, իսկ դրա կարիքը կարող է և չլիներ, որովհետև այդ բացատրությունը միայն ծայրահեղ դեպքում էր նախատեսված։ Նա միայն հարցրեց, թե Կ-ն հորը ինչպես կբացատրեր իր տարաժամ այցելության պատճառը (նա փոքր-ինչ մռայլված դեմքով էր ականջ դնում) և վերջապես բավարարվեց հետևյալ բացատրությամբ. Կ-ն ասելու էր, թե դպրոցի սպասավորի անտանելի գործն ու ուսուցչի համապատասխան վարվելաձևը հանկարծահաս հուսահատության մեջ մոռացնել են տվել ամեն մի նրբանկատություն։

www.a-pdf.com

Երբ արդեն հնարավոր ամեն ինչ նախատեսված էր ու հաջողության հասնելու հնարավորությունն այլևս չէր բացառվում, մտածմունքի բեռից թեթևացած Հանսը մի որոշ ժամանակ ավելի աշխույժ, երեխայավարի լեզվին տվեց նախ Կ-ի, հետո՝ Ֆրիդայի հետ. Ֆրիդան այդքան ժամանակ, կարծես բոլորովին այլ մտքերով տարված, մեկուսացած նստել էր ու միայն այժմ նորից սկսեց մասնակցել խոսակցությանը։ Զանազան հարցերից բացի Ֆրիդան հետաքրքրվեց, թե Հանսն ի՞նչ է ուզում դառնալ։ Տղան երկար չմտածեց ու ասաց, որ ինքն ուզում է նմանվել Կ-ին։ Երբ Ֆրիդան ուզեց իմանալ ցանկության պատճառը, Հանսը չկարողացավ պատասխանել և որոշակի վճռականությամբ հակառակվեց այն հարցին, թե արդյոք ինքն ուզո՞ւմ է դառնալ դպրոցի սպասավոր։ Միայն երբ սկսեցին հարցուփորձ անել, հասկացան, թե ինչն էր նրա ցանկության պատճառը։ Կ-ի այժմյան վիճակը բոլորովին նախանձելի չէր, ավելի շուտ տխուր էր ու արհամարհված, այդ բանը Հանսն էլ էր լավ տեսնում, և դա հասկանալու համար նրան պետք չէր ուրիշ մարդկանց էլ զննել. անձամբ ինքը ավելի լավ կաներ, եթե մորը թույլ չտար ո՛չ տեսնել Կ-ին, ո՛չ էլ խոսել նրա հետ։ Չնայած դրան, նա եկել էր Կ-ի մոտ, նրանից օգնություն էր խնդրում և հիմա շատ ուրախ էր, որ Կ-ն համաձայնել էր օգնել։ Նրան թվում էր, թե մյուսներն էլ նույն ձևով կվարվեին և հետո, ախր, հենց Հանսի մայրն էր Կ-ի անունը տվել։ Այդ հակասությունը նրա մեջ այն կարծիքն էր առաջացրել, որ թեև Կ-ն այս պահին նվաստացված ու սարսափելի էր բոլորի համար, բայց հեռավոր ապագայում, որ, իհարկե, հնարավոր չէր պատկերացնել, նա կգերազանցեր բոլորին։ Եվ հենց այս անիմաստ հեռավորությունն ու այնտեղ տանող հպարտ վերընթացն էր, որ գայթակղում էր Կ-ին, և դրա համար նա ուզում էր Կ-ին նույնիսկ այժմյան վիճակով իր կողմը գրավել։ Նրա ցանկության մեջ մանկական-խելացվորությունն այն էր, որ Հանսը Կ-ին նայում էր որպես տարիքով ավելի փոքր մի մարդու, ում ապագան ավելի ուշ էր վրա հասնելու, քան իր՝ փոքր տղայի ապագան։ Եվ նա մռայլ լրջությամբ էր, որ, շարունակ նեղվելով Ֆրիդայի տված հարցերից, խոսում էր

www.a-pdf.com

այդ բաների մասին։ Միայն Կ-ն ցրեց նրա տխրությունը, աշխուժություն հաղորդեց նրան, ասելով, թե ինքը գիտե Հանսի՝ իրեն նախանձելու պատճառը. դա սեղանին դրված գեղեցիկ գավազանն է, որի հետ Հանսը ցրված խաղում էր ողջ զրույցի ընթացքում։ Կ-ն կարող է այդպիսի գավազաններ պատրաստել և, եթե իրենց ծրագիրը հաջողվի, ինքը Հանսին ավելի գեղեցիկ գավազան կնվիրի։ Եվ հնարավոր չէր որոշակիորեն ասել, Հանսին հրապուրողն արդյո՞ք միայն գավազանը չէր իրոք։ Նա անչափ ուրախացավ Կ-ի տված խոստումից ու բարեկամարար հրաժեշտ տվեց, իհարկե, ոչ առանց նրա ձեռքն ամուր սեղմելու։

— Ուրեմն, վաղը չէ մյուս օրը,— ասաց նա։

Եվ, իսկապես, ժամանակն էր, որ Հանսը հեռանար, որովհետև նրա գնալուց քիչ անց ուսուցիչը բացեց դուռն ու, տեսնելով Ֆրիդային ու Կ-ին սեղանի մոտ հանգիստ նստած, բղավեց.

— Ներեցեք, որ խանգարում եմ, բայց, ասացեք խնդրեմ, վերջապես ե՞րբ կմաքրեք այստեղ։ Մենք դիմացի սենյակում իրար գլխի ենք լցվել, դասը տուժում է, դուք, սակայն, ընդարձակվել եք այս մեծ մարզասենյակում և ավելի շատ տեղ ունենալու համար օգնականներին էլ եք վտարել։ Գոնե հիմա վեր կացեք ու շարժվեք տեղերիցդ։ Հիմա դու ինձ համար իջևանատնից երկրորդ նախաճաշը կբերես։— Կ-ին դիմեց նա։

Ուսուցիչը զայրացած էր ու թեև կոպիտ էր խոսում, դուռով, բայց նրա բառերը հնչում էին համեմատաբար մեղմ։ Կ-ն պատրաստ էր իսկույն կատարել կարգադրությունը, սակայն ուսուցչին խոսեցնելու համար ասաց.

— Ախր, ես վտարված եմ։

— Վտարված ես թե՝ ոչ, նախաճաշս բեր,— ասաց ուսուցիչը։

— Վտարվա՞ծ եմ, թե՝ ոչ։ Ես այդ եմ ուզում իմանալ։

— Ի՞նչ ես դուրս տալիս։ Դու, ախր, չընդունեցիր լուծարքը։

— Եվ դա բավակա՞ն էր, որ այն չեղյալ հայտարարվի։

— Ինձ՝ ոչ։ Այդ հարցում կարող ես հավատալ ինձ։ Իսկ,

www.a-pdf.com

ա՛յ, համայնքի նախագահին դա բավական է։ Այժմ, սակայն, վազիր, թե չէ իսկապես դուրս կթռչես։

Կ-ն գոհ էր։ Նշանակում է, ուսուցիչն այդ ընթացքում խոսել էր համայնքի նախագահի հետ կամ ընդհանրապես չէր խոսել, բայց պատկերացրել էր, թե ինչ կարծիքի կլինի նա, իսկ նա հօգուտ Կ-ի էր տրամադրված։ Կ-ն շտապեց իջևանատնից ուսուցչի երկրորդ նախաճաշը բերել, բայց դեռ միջանցքում ուսուցիչը նրան նորից հետ կանչեց. կամ ուզում էր իր հրամանի ուժն ու Կ-ի պատրաստակամությունը ստուգել, որ դրանից հետո իմանար իր անելիքը, կամ էլ նորից հրամայելու ցանկություն ունեցավ, և նրան դուր էր գալիս, որ Կ-ի հետ վարվում էր մատուցողի պես. կարգադրում էր վազել-մի բան բերել և հետո պահանջում էր, որ հակառակ ուղղությամբ շուռ գար։ Իր հերթին էլ Կ-ն գիտեր, որ չափից դուրս շատ հնազանդվելով՝ ուսուցչի ստրուկը կամ քավության նոխազը կդառնար, սակայն նա ուզում էր մինչև որոշակի սահման հասնելը համբերել, ենթարկվել ուսուցչի կամքին, որովհետև եթե ուսուցիչը, ինչպես պարզվեց, չէր կարող օրենքով լուծարքի ենթարկել իրեն, ապա կարող էր աշխատապայմաններն անտանելի դարձնել։ Իսկ այժմ այս գործն ավելի կարևոր էր Կ-ի համար, քան առաջ։ Նա պետք է խոստովաներ, որ Հանսի հետ ունեցած զրույցը անհավանական, բացարձակ անհիմն նոր հույսեր տվեց իրեն, որոնք ինքն այլևս չէր կարող մոռանալ. դրանցով տարված, նա քիչ էր մնում նույնիսկ Բարնաբասին մոռանար։ Եթե ինքը հավատար այդ հույսերին (իսկ այլ կերպ չէր էլ կարող), ապա պետք է համախմբեր ուժերը, չմտածեր ուրիշ ոչ մի բանի մասին. ո՛չ սննդի, ո՛չ տան, ո՛չ գյուղի ղեկավարության, ո՛չ էլ նույնիսկ Ֆրիդայի, թեև իրականում խոսքը միայն Ֆրիդայի մասին էր, որովհետև մնացյալ ամեն ինչը Կ-ին հետաքրքրում էր այնքանով, ինչքանով դա կապված էր Ֆրիդայի հետ։ Նա պետք է փորձեր պահպանել Ֆրիդային որոշ վստահություն ներշնչող այս աշխատատեղը, չպետք է տրտնջար, թե ինքն ուսուցչի կողմից ավելի շատ բան պետք է հանդուրժի, քան ի վիճակի է ընդհանրապես։ Այդ ամենն այնքան էլ սարսափելի չէր, կյանքի մանրուքներից մեկն էր և ոչինչ էր Կ-ի ձգտումների հետ համեմատած, առավել ևս, որ ինքը

www.a-pdf.com

ֆիառավոր ու խաղաղ կյանք վարելու համար չէր եկել այստեղ։

Եվ Կ-ն, որ պատրաստ էր իսկույն իջևանատուն վազել, Նոր հրամանին ենթարկվելով, համաձայնեց նախ սենյակը կարգի բերել, որպեսզի ուսուցչուհին կարողանար իր դասարանի հետ այս դասասենյակը տեղափոխվել։ Հարկավոր էր շատ արագ հավաքել սենյակը, որովհետև դրանից հետո Կ-ն պետք է ուսուցչի նախաճաշը բերեր, իսկ ուսուցիչն արդեն և՛ լավ սոված էր, և՛ լավ ծարավ։ Կ-ն հավաստիացրեց, որ ամեն ինչ կլինի ըստ պահանջի, ուսուցիչը մի պահ հետևեց, թե Կ-ն ինչպես է շտապում կարգի բերել այն տեղը, ուր քնել էին. մարզագործիքներն իրենց տեղը հրեց, մի ակնթարթում ավլեց սրահը, մինչ Ֆրիդան լվանում ու քերում էր պատվանդանը։ Կ-ի եռանդը երևի գոհացրեց ուսուցչին, նա զգուշացրեց Կ-ին, որ մի կույտ վառելափայտ կա դռան մոտ (հավանաբար այլևս չէր ուզում Կ-ին մոտ թողնել ցախատանը), և գնաց երեխաների մոտ, նախապես սպառնալով, թե շուտով կգա ու կստուգի գործը։

Որոշ ժամանակ լուռ աշխատելուց հետո Ֆրիդան հարցրեց, թե ինչո՞ւ է Կ-ն հնազանդվում ուսուցչին։ Դա, հավանաբար, ցավով լի, կարեկցանքով տրված հարց էր, բայց Կ-ն, որ մտածում էր, թե ինչքան քիչ էր հաջողվում Ֆրիդային իրականացնել իր նախկին խոստումները՝ պաշտպանել իրեն ուսուցչի հրամաններից ու բռնություններից, միայն կարճ պատասխանեց. քանի որ ինքը դպրոցում սպասավոր է աշխատելու, ուրեմն պետք է փորձի կատարել այդ պարտականությունը։ Հետո նորից լռություն տիրեց, մինչև որ Կ-ն փայտը ներս բերելու ժամանակ հարցրեց, թե ինչի՞ մասին է մտածում, ու հարցնելու պահին հիշեց, որ Ֆրիդան այդքան ժամանակ հոգսաշատ մտքերի գիրկն ընկած՝ մոռացել էր ամեն ինչ. ինքը դա նկատել էր, երբ դեռ Հանսի հետ էր խոսում։

Հայացքը դանդաղ վեր բարձրացնելով, Ֆրիդան պատասխանեց, որ որոշակի ոչնչի մասին չի մտածում, իր մտքում հիմա իջևանատիրուհին է ու նրա մի քանի խոսքերի ճշմարտացիությունը, և միայն երբ Կ-ն տեղի չտվեց, բազմաթիվ մերժումներից հետո Ֆրիդան ավելի մանրամասն խոսեց, ընթացքում, սակայն, գործը չէր դադարեցնում, իսկ դա

www.a-pdf.com

անում էր ոչ թե ջանասիրության պատճառով, այլ որ ստիպ-
ված չլիներ նայել Կ-ին։ Նա պատմեց, որ սկզբում ինքը
հանդիպած ականջ է դրել Կ-ի ու Հանսի զրույցին, բայց հետո
Կ-ի մի քանի խոսքերից ցնցված, ավելի հատակ է ըմբռնել
դրանց իմաստը և այդ պահից սկսած չի դադարել դրանցում
գտնել այն նախազգուշացումների հաստատումը, որոնց հա-
մար ինքը թեև շնորհակալ է իջևանատիրուհուն, բայց երբեք
չէր ուզենա մտածել դրանց իրավացիության մասին։ Ֆրի-
դայի գործածած ընդհանուր արտահայտությունների վրա
զայրանալով, նրա արտասվախառն ու վշտացած ձայնից
ավելի շուտ զրդռված, քան՝ հուզված (դրա պատճառն այն
էր, որ իջևանատիրուհին նորից էր իր կյանք ներխուժում,
այս անգամ, սակայն, հուշերի տեսքով, որովհետև մինչև հիմա
նա անձամբ ոչ մի հաջողություն չէր ունեցել), գրկի փայտը
շպրտեց հատակին, նստեց կիտուկի վրա ու լրջորեն պահան-
ջեց, որ Ֆրիդան ավելի պարզ խոսի։

— Հենց սկզբից իջևանատիրուհին շարունակ ձգտում էր
իմ մեջ կասկած առաջացնել քո հանդեպ։ Նա չէր պնդում,
թե դու ստում ես։— Պատմեց Ֆրիդան։— Ընդհակառակը, նա
ասում էր, որ դու երեխայի անկեղծություն ունես, բայց քո
էությունն այնքան է տարբերվում մերինից, որ մենք դժվա-
րությամբ ենք հաղթահարում մեզ, որ կարողանանք հավա-
տալ քեզ, և եթե մի բարեսիրտ ընկերուհի չօգնի մեզ,
ապա միայն դառը փորձից հետո մենք կսովորենք հավա-
տալ քեզ։ Նույնիսկ նրա հետ, որ իսկույն ճանաչում է մարդ-
կանց, այլ կերպ չի եղել։ Բայց իջևանատանը քեզ հետ ունե-
ցած վերջին խոսակցությունից հետո նա կռահել էր քո խար-
դախությունները (ես նրա բառերն եմ օգտագործում), և դու
այլևս չէիր կարողանա խաբել նրան, նույնիսկ եթե ջանայիր
քողարկել քո մտադրությունները։ Բայց դու, ախր, ոչինչ չէիր
քողարկում, նա էլ շարունակ նույն բանն էր ասում և հետո
խրատ էր տալիս. ցանկացած առիթով ձգտիր իսկապես լսել
նրան, ոչ թե ձևանալ, այլ իսկապես լսել։ Նա այսքան բանն
էր ասում և ահա թե ինչ էր իմացել իմ մասին. դու մերձե-
ցար ինձ (նա այս ամոթալի բառն օգտագործեց) միայն,
որովհետև ես պատահաբար հանդիպեցի քեզ քո ճանապար-
հին, այդ պահին ես տհաճ չէի քեզ համար, որովհետև պան-

www.a-pdf.com

դոկի սպասուհու մասին դու այն սխալ կարծիքին էիր, թե նա ձեռք մեկնող ցանկացած հյուրի համար նախատեսված զոհ է։ Դրանից բացի, ինչպես իջևանատիրուհին էր հյուրանոցի տիրոջից իմացել, այն օրը դու ցանկացել ես ինչ-ինչ պատճառներով զիշերել հյուրանոցում, իսկ դա կարելի է եղել անել միայն իմ միջոցով. ուրիշ ոչ մի կերպ։ Իմ սիրեկանը դառնալու համար դա բավական հիմնավոր պատճառ է եղել, բայց որ դրանից ավելի մեծ բան ստացվեր, շատ բան էր հարկավոր, իսկ այդ շատ բանը Կլամմն էր։ Իջևանատիրուհին պնդում է, որ չգիտե, թե դու ի՞նչ ես ուզում Կլամմից, նա ասում է միայն, որ դու, նախքան ինձ ճանաչելը, ձգտել ես Կլամմին հասնել նույն կրքով, ինչպես որ հետո էիր ցանկանում։ Տարբերությունն այն է սոսկ, որ մինչև ինձ հանդիպելը դու հաջողության հասնելու հույս չես ունեցել, իսկ այժմ ենթադրում ես, թե, հանձին ինձ, Կլամմին հասնելու մի շատ վստահելի միջոց ես գտել և շատ շուտով, մեծ առավելությամբ կմտնես նրա մոտ։ Ինչպես վախեցա (բայց իմ վախը պատճառաբանված չէր, մակերեսային զգացում էր), երբ ասացիր, թե մինչև ինձ ճանաչելը դու մոլորվածի պես ես ման եկել այստեղ։ Քո և իջևանատիրուհու բառերը լիովին համապատասխանում էին. նա էլ էր ասում, որ դու ինձ հանդիպելուց հետո ես որոշակի նպատակ հետապնդել։ Իսկ դա այն պատճառով եղավ, որ դու մտածում էիր, թե հանձին ինձ ձեռք ես գցել Կլամմի սիրուհուն և հիմա այնպիսի մի պատանդ ունես, ում համար հետագայում կարող ես ստանալ ամենամեծ փրկագինը։ Քո միակ ցանկությունը Կլամմի հետ փրկագնի չափը սակարկելն է։ Քանի որ ես կարևոր չեմ քեզ համար, իսկ իմ գինը ամեն ինչ արժի, ինձ առնչվող հարցերում դու պատրաստ ես ամեն մի զիջման, մինչդեռ գնի հարցում անզիջում ես։ Այդ պատճառով էլ քեզ համար միևնույն է, որ ես կորցնում եմ հյուրանոցի իմ տեղը, նշանակություն չունի, որ իջևանատունն էլ պետք է լքեմ ու կատարեմ դպրոցի սպասավորի ծանր աշխատանքը։ Դու չգիտես, թե ինչ ասել է քնքշություն, նույնիսկ ժամանակ չունես ինձ համար, ինձ քո օգնականների հույսին ես թողնում, չգիտես, թե ինչ բան է խանդը, քեզ համար իմ միակ արժեքն այն է, որ ես Կլամ-

մի սիրուհին եմ եղել, և, չհասկանալով քո արածը, ձգտում ես, որ ես չմոռանամ Կլամմին, որպեսզի վերջում, երբ վերջնական պահը վրա հասնի, չայրից դուրս չհակառակվեմ։ Զնայած դրան, դու իշխանատիրուհու հետ էլ վիճեցիր, մտածելով, թե միայն նա կարող է ինձ խլել քեզնից։ Այդ պատճառով նրա հետ ունեցած վեճը ծայրահեղության հասցրեցիր, որ ստիպված լինեիր իշխանատունը լքել ինձ հետ մեկտեղ, իսկ որ ես, ինչքանով որ դա ինձնից էր կախված, քո սեփականն եմ, դրան այլևս չես կասկածում։ Կլամմի հետ զրուցելը քեզ դործարք է թվում, հավասար պայմաններով տարվող դործարք։ Դու բոլոր հնարավորությունները հաշվարկել ես ու պատրաստ ես ամեն ինչի, միայն թե վերցնես փրկագինը։ Եթե Կլամմն ուզի, ինձ նրան կտաս, եթե ուզի, որ իմ կողքին մնաս՝ կմնաս, իսկ եթե ցանկանա, որ վտարես ինձ՝ կվտարես։ Դու նույնիսկ խեղկատակության ես պատրաստ. եթե քեզ ձեռնտու լինի, ցույց կտաս, թե սիրում ես ինձ, Կլամմի անտարբերությունը կփորձես կոտրել նրանով, որ կընդգծես քո ողորմելիությունը, կամաչեցնես նրան, ցույց տալով, որ դու ես նրա հաջորդը, նրա հասցեին ասված սիրո իմ խոստովանությունները (ես իսկապես խոստովանել եմ) կհայտնես նրան ու կխնդրես, որ նորից վերցնի ինձ, իհարկե, փրկագինը վճարելուց հետո, իսկ եթե դա էլ չօգնի, ապա կսկսես Կ- զույգի անունից պարզապես աղերսել։ Իսկ եթե վերջում տեսնես, այսպես եզրափակեց իշխանատիրուհին, որ բոլոր հարցերում սխալվել ես՝ քո ենթադրությունները, հույսերը, Կլամմի ու նրա՝ իմ հետ ունեցած կապերի մասին ունեցած քո պատկերացումները սխալ են դուրս եկել, այդ օրվանից ինձ համար մի իսկական դժոխք կսկսվի, որովհետև այդ դեպքում ես, իրոք, քո միակ սեփականությունը կդառնամ ու միայն ես կմնամ քեզ համար, բայց այնպիսի սեփականություն, ով, պարզվում է, անարժեք է և ում ցույց կտաս դրան համապատասխան վերաբերմունք, որովհետև դու իմ հանդեպ, սեփականատիրականից բացի, ուրիշ ոչ մի զգացմունք չունես։

Կ-ն Ֆրիդային լսում էր լարված, շուրթերը սեղմած, փայտի կույտը նրա տակ իջել էր, նա համարյա հատակին էր նստած, բայց չէր նկատել։ Այժմ, սակայն, նա վեր կա-

www.a-pdf.com

ցավ, նստեց ամբիոնի պատվանդանին, վերցրեց Ֆրիդայի ձեռքը (Ֆրիդան ձեռքը հետ քաշելու թույլ փորձ արեց) և ասաց.

— Այդ խոսքերի մեջ ես չկարողացա տարբերել քո և իշխանատիրուհու ենթադրությունները։

— Ես միայն իշխանատիրուհու կարծիքն ասացի։ Ես միշտ լսել եմ նրան, որովհետև հարգում եմ, բայց իմ կյանքում սա առաջին անգամն էր, որ բացարձակ բանի տեղ չդրեցի նրա խոսքը։ Նրա ասածներն ինձ այնքան ողորմելի ու այնքան հեռու էին թվում մեր միջև եղած իսկական կապի բնութագրումից։ Ավելի շուտ, նրա ենթադրածի ճիշտ հակառակ պատկերն էր ինձ իրական թվում։ Ես հիշում էի մեր առաջին գիշերվանը հաջորդած մռայլ առավոտը, երբ դու ծնկի էիր եկել իմ կողքին և քո հայացքից կարելի էր կարծել, թե ամեն ինչ կորած է։ Եվ ինչպես եղավ, որ ես՝ ինչքան էլ ցանկանում էի օգնել քեզ, չկարողացա ու միայն խանգարեցի։ Իմ պատճառով իշխանատիրուհին քո թշնամին դարձավ, ահեղ թշնամին, իսկ դու առաջվա պես թերագնահատում ես նրան։ Իմ՝ ում համար դու այդպես հոգ էիր տանում, իմ պատճառով քեզ հարկ եղավ պայքարել քո տեղի համար, համայնքի նախագահի հետ խոսելուց հետո տուժեցիր, ստիպված եղար ենթարկվել ուսուցչին, վոնդեցիր օգնականներիդ, սակայն ամենավատթարն այն է, երևի, որ իմ պատճառով վիրավորեցիր Կլամմին, իսկ որ հիմա շարունակ ուզում ես Կլամմին տեսնել, նրա հետ հաշտվելու հուսահատ ցանկություն է։ Եվ ես ինքս ինձ խոստովանեցի, որ իշխանատիրուհին, որ այս ամենն, իհարկե, ինձնից լավ գիտեր, միայն ուզում էր ինձ հետ պահել չափազանց ծանր ինքնախարազանումից։ Նա լավ ցանկությամբ էր առաջնորդվում, բայց նրա ջանքերն ավելորդ էին։ Քո հանդեպ ունեցած իմ սերը ամեն ինչ կհաղթահարեր, ի վերջո քեզ էլ առաջ կտաներ, եթե ոչ այստեղ՝ գյուղում, ապա ցանկացած մի այլ տեղ. իր ուժի վերաբերյալ մի ապացույց այն հանդես բերել էր արդեն։ Բարնաբասենց ընտանիքից իմ սերը փրկեց քեզ։

— Ուրեմն այն ժամանակ դու իշխանատիրուհուն հակառակվող կարծիք ունեիր։ Իսկ այն օրվանից ի՞նչ է փոխվել։

— Չգիտեմ,— ասաց Ֆրիդան ու նայեց Կ-ի ձեռքին, որ իր ձեռքն էր բռնել։— Երևի ոչինչ չի փոխվել։ Երբ այդպես

www.a-pdf.com

մոտիկ նստած ու այդպես հանգիստ հարցնում ես, թվում է, թե ոչինչ չի փոխվել։ Իրականում, սակայն,— Ֆրիդան Կ-ի ափից քաշեց ձեռքը, ուղիղ նրա դիմացը նստած, առանց դեմքը ծածկելու, լաց եղավ։ Արցունքով ողողված նրա դեմքը Կ-ին էր ուղղված, կարծես լաց էր լինում ոչ թե իր համար և թաքցնելու ոչինչ չուներ, այլ Կ-ի դավաճանության, և նա պետք է տեսներ Ֆրիդայի սրտաճմլիկ տեսքը։— Իրականում, սակայն, ամեն ինչ փոխվեց այն պահից սկսած, երբ լսեցի, թե ինչպես էիր խոսում տղայի հետ։ Ինչպիսի անմեղությամբ սկսեցիր, հարցրեցիր նրանց ընտանիքի մասին, այս ու այն բաներով հետաքրքրվեցիր, և ինձ թվաց, թե դու առաջին անգամ պանդոկ մտար՝ բարեհոգի, բացսիրտ, և սկսեցիր երեխայի համառությամբ իմ հայացքը փնտրել։ Այն երեկոյի հետ համեմատած ոչ մի տարբերություն չկար, և ես ցանկանում էի միայն, որ իջևանատիրուհին այստեղ լիներ, լսեր քեզ ու փորձեր հետո իր կարծիքին մնալ։ Հանկարծ նկատեցի (չգիտեմ, թե ինչպես ստացվեց), թե ինչ նպատակով էիր տղայի հետ խոսում։ Կարեկից խոսքերի շնորհիվ դու կարողացար շահել նրա դժվար նվաճվող վստահությունը, որ հետո առանց դժվարության դեպի քո նպատակը գնայիր, իսկ քո նպատակը գնալով ավելի էր պարզ դառնում ինձ։ Բրունսվիկի կինն է քո նպատակը։ Արտաքուստ նրա մասին մտահոգված քո խոսքերից ակնհայտորեն երևում էր միայն քո գործերի հանդեպ ցուցադրվող ուշադրությունը։ Նախքան քո կողմը գրավելը դու խաբեցիր այդ կնոջը, իսկ ես քո խոսքերում տեսա ոչ միայն իմ անցյալը, այլև ապագան և ինձ թվում է, թե կողքիս հետ նստած է իջևանատիրուհին ու բացատրում է ամեն ինչ, իսկ ես փորձում եմ ամբողջ ուժով հեռու վանել նրան, սակայն պարզ նկատում եմ չարչարանքներիս անիմաստությունը, թեև իրականում ես չեմ, որ խաբվում եմ (ես մի անգամ չէ, որ խաբվել եմ արդեն), այլ օտար կինը։ Հետո ես տիրապետեցի ինձ ու հարցրեցի Հանսին, թե նա ինչ է ուզում դառնալ, իսկ նա ասաց, թե ուզում է քեզ նմանվել. նշանակում է, նա արդեն այդքան համակվել էր քեզնով, և այժմ պարզապես հետաքրքիր է, թե ինչ տարբերություն կա քիչ առաջ այստեղ քո կողմից շահարկվող տղայի և իմ միջև այն ժամանակ՝ պանդոկում։

www.a-pdf.com

— Այն ամենը,— ասաց Կ-ն, որ կարողացել էր նախատինքներին վարժվելով վերագտնել ինքնատիրապետումը,— այն ամենն, ինչ դու ես ասում, ինչ-որ տեղ ճիշտ է։ Դու չես սխալվում, պարզապես թշնամաբար ես խոսում։ Դրանք իշեվանատիրուհու մտքերն են, իմ թշնամու, և դա է մխիթարում ինձ, նույնիսկ եթե կարծում ես, թե դրանք քո խոսքերն են։ Բայց դրանք շատ ուսանելի են. իշևանատիրուհուց դեռ կարելի է որոշ բաներ սովորել։ Այդ խոսքերը նա անձամբ ինձ չի ասել, թեև սովորաբար չի խնայել ինձ։ Այդ զենքը նա քեզ է վստահել, ակնհայտորեն հուսալով, որ դու այն կօգտագործես ինձ համար առանձնապես դժվար կամ բախտորոշ մի ժամի։ Եթե ես չարաշահում եմ քեզ, ապա նա էլ է չարաշահում։ Իսկ այժմ, Ֆրիդա, մտածիր, որ եթե նույնիսկ ամեն ինչ իշևանատիրուհու ասածի պես լիներ, վիճակը վատ կլիներ միայն այն դեպքում, եթե դու ինձ չսիրեիր։ Միայն այդ դեպքում իշևանատիրուհին ճիշտ կլիներ, մտածելով, թե ես, իբր, խորամանկությամբ ու հաշվենկատությամբ եմ ձեռք գցել քեզ, որ հետո քո հաշվին կարողություն դիզեմ։ Գուցե նույնիսկ սա էր իմ ծրագրի մեջ մտնում, երբ Օլգային թևանցուկ արած մտա պանդոկ և քո կարեկցանքը հարուցելու համար կանգնեցի քո առաջ. իշևանատիրուհին երևի մոռացել է դա ևս իմ մեղքերի շարքը դասել։ Իսկ եթե իշեվանատիրուհին ճիշտ չէ, և գիշատիչ, նենգ գազանը չէր, որ այն ժամանակ նվաճեց քեզ, այլ դու ինքդ ընդառաջ եկար ինձ, ինչպես որ ես ընդառաջ եկա քեզ, և մենք ինքնամոռաց գտանք իրար, ասա, Ֆրիդա, ինչպե՞ս վարվենք այս դեպքում։ Ուրեմն, ես առաջ կտանեմ իմ գործը, ինչպես նաև քոնը և այստեղ ոչ մի տարբերություն չի լինի, իսկ տարբերություն կարող է միայն թշնամին գտնել։ Այդպես է բոլոր հարցերում, նաև՝ Հանսի։ Քո դյուրազգացությունն է պատճառը, որ Հանսի հետ ունեցած զրույցը քննարկելիս ամեն ինչ չափազանցնում ես, և եթե իմ ու նրա մտադրություններն իրար չեն համապատասխանում, ապա նաև հակասության հասցնելու աստիճան տարբերություն չկա դրանց միջև։ Դրանից բացի, եթե կարծում ես, թե մեր միջև եղած տարաձայնությունը Հանսը չնկատեց, ապա սխալվում ես ու շատ ես թերագնա-

www.a-pdf.com

հատում այդ զգուշավոր մանչուկին։ Իսկ եթե նա անգամ նկատած չլինի էլ, ապա հուսով եմ, որ այդ պատճառով ոչ ոքի ոչ մի վատ բան չի պատահի։

— Կողմնորոշվելն այնքան դժվար է, Կ.,— ասաց Ֆրիդան ու հառաչեց։— Իհարկե, ես քո հանդեպ ոչ մի կասկած չունեմ, իսկ եթե ինչ-ինչ հարցերում իջևանատիրուհու ազդեցությունը կա ինձ վրա, ապա ես մեծ ուրախությամբ կթոթափեմ և ծնկի իջած ներողություն կխնդրեմ քեզանից, մի բան, որ իրականում անում եմ այս ամբողջ ժամանակ, իհարկե, երբ այսպիսի չարամիտ բաներ եմ ասում քո հասցեին։ Սակայն ճշմարտությունն այն է, որ դու դեռ շատ բան ես թաքցնում ինձնից. գալիս-գնում ես, չգիտեմ, թե որտեղից և ուր։ Երբ Հանսը թակեց դուռը, դու «Բարնաբաս» բացականչեցիր։ Եթե գոնե մի անգամ այդպես սիրով ինձ կանչեիր, ինչպես անհասկանալի պատճառով տվեցիր այդ ատելի անունը։ Եթե դու չես վստահում, ապա իմ մեջ ինչպե՞ս անվստահություն չառաջանա։ Ես, ախր, այդ դեպքում ամբողջովին իջևանատիրուհու ազդեցության տակ եմ ընկնում, և քո վարքը շատ հարցերում արդարացնում է իջևանատիրուհուն։ Ոչ բոլոր հարցերում, ես այդ չէի ասի, չէի ասի, թե բոլոր հարցերում արդարացնում ես նրան։ Մի՞թե իմ պատճառով չէր, որ վռնդեցիր օգնականներիդ։ Ախ, եթե իմանայիր, թե ինչ ակնկալիքներով եմ քո արած ու ասած ամեն ինչի մեջ՝ անգամ եթե դրանք տհաճ էլ լինեն, ինձ համար նպաստավոր որևէ հատիկ փնտրում։

— Ամենից առաջ, Ֆրիդա, ես քեզանից նվազագույն բաննիսկ չեմ թաքցնում։ Իջևանատիրուհին ինչքա՞ն է ատում ինձ, ինչպե՞ս է փորձում խլել քեզ ինձնից, և դու ենթարկվում ես նրան։ Ինչպե՞ս ես ենթարկվում նրան, Ֆրիդա։ Ասա, թե ինչ եմ թաքցնում քեզնից։ Այն, որ ուզում եմ Կլամմի հետ խոսել, դու գիտես, և որ այդ հարցում չես կարող օժանդակել ինձ, և ես իմ սեփական ուժերով եմ դրան հասնելու, նույնպես գիտես, որ առ այսօր ինձ չի հաջողվել, նորից տեսնում ես։ Պե՞տք է, որ ինձ մի անգամ նվաստացրած անօգուտ փորձերի մասին խոսելով մի անգամ ևս նվաստանամ։ Գուցե պարծենա՞մ, թե Կլամմի սահնակի մոտ կանգնած-սառչելով իզուր սպասել եմ ողջ հետկեսօրին։ Ուրախանալով, թե այլևս

www.a-pdf.com

ստիպված չեմ լինի նման բաների մասին մտածել, շտապում եմ քեզ մոտ, իսկ դրանց մասին նորից լսելու սպառնալիքը քեզնից է հնչում։ Բարնաբասը։ Իհարկե, ես սպասում եմ նրան։ Նա Կլամմի բանբերն է, ես չեմ նրան այդ գործին նշանակել։

— Նորից Բարնաբասը,— բացականչեց Ֆրիդան։— Չեմ կարծում, թե նա լավ բանբեր է։

— Գուցե դու իրավացի ես,— ասաց Կ-ն,— սակայն ինձ մոտ ուղարկված միակ բանբերը նա է։

— Ավելի վատ։ Դու առավել ևս պետք է զգուշանաս նրանից։

— Ցավոք, նա մինչև այժմ ինձ ոչ մի առիթ չի տվել։— ժպտաց Կ-ն։— Նա հազվադեպ է գալիս, բերած լուրերն անկարևոր են և դրանց միակ արժեքն այն է, որ Կլամմն է ուղարկողը։

— Բայց տես, ախր, այլևս Կլամմը չէ քո նշանակը և գուցե դա է ինձ ամենից շատ անհանգստացնում։ Այն, որ ինձ տեսնելով շարունակ Կլամմին էիր ձգտում, վատ էր, բայց որ այժմ Կլամմից հրաժարված մարդու տպավորություն ես թողնում, շատ ավելի վատ է. նման բան նույնիսկ իշևանատիրուհին չէր կանխատեսել։ Իշևանատիրուհու կարծիքով իմ երջանկությունը, կասկածելի, բայց և շատ իրական երջանկությունը այն օրը իր վերջը կգտնի, երբ դու վերջնականապես հասկանաս, որ իզուր էին Կլամմի հետ կապված քո հույսերը։ Այժմ, սակայն, դու այլևս չես սպասում այդ օրվան, հանկարծ մի փոքր տղա է հայտնվում, և դու սկսում ես նրա հետ պայքարել հանուն նրա մոր, և այնպես, կարծես նա քեզ համար նույնքան անհրաժեշտ է, ինչքան՝ օդը։

— Հանսի հետ ունեցած իմ խոսակցությունը ճիշտ ես հասկացել։ Իրոք այդպես էր։ Մի՞թե դու այն աստիճան ես մոռացել քո նախկին կյանքը (իշևանատիրուհուն չհաշվենք, իհարկե, նրան հնարավոր չէ մոռանալ), որ այլևս չես հիշում, թե ինչպես է պետք պայքարել առաջ գնալու համար, առավել ևս, երբ մարդ ամենաներքևից է գալիս, թե ինչպես է մարդ ձգտում օգտագործել այն ամենը, ինչի հետ թեկուզ աննշան իսկ հույս է կապում։ Իսկ այդ կինը դղյակից է սե-

www.a-pdf.com

ռում, նա ինքն ասաց ինձ, երբ առաջին օրը մոլորվելով, հայտնվեցի Լազեմանի տանը։ Ինչն է ավելի հեշտ, քան նրանից խորհուրդ կամ թեկուզ օգնություն խնդրելը. եթե իջևանատիրուհին գիտե ինձ Կլամմից հեռու պահելու խոչընդոտները, ապա Հանսի մայրը, հավանաբար, գիտե նրա կողմը տանող ճանապարհը. ինքը երևի հենց այդ ճանապարհով է այստեղ հասել։

— Կլամմի մոտ տանող ճանապա՞րհը։

— Իհարկե, Կլամմի մոտ։— Հապա էլ ո՞ւմ,— ասաց Կ-ն ու ոտքի ցատկեց։— Իսկ հիմա ուսուցչի նախաճաշը բերելու ժամանակն է։

Պատճառին բոլորովին չհամապատասխանող թախանձագին խնդրանքով Ֆրիդան Կ-ից պահանջեց մնալ, կարծես միայն մնալը կհաստատեր այն ողջ մխիթարականը, ինչ Կ-ն էր ասել նրան։ Սակայն Կ-ն հիշեց ուսուցչին, ցույց տվեց դուռը, որ յուրաքանչյուր ակնթարթի կարող էր բացվել որոտալից աղմուկով, խոստացավ իսկույն վերադառնալ, ասելով, թե կարիք չկա, որ Ֆրիդան վառարանը վառի, որ ինքն անձամբ կանի այդ բանը։ Վերջապես Ֆրիդան լուռ հնազանդվեց։

Երբ Կ-ն փափուկ ձյան մեջ խրվելով գնում էր (ճանապարհը վաղուց պետք է մաքրված լիներ, տարօրինակ էր, թե աշխատանքն ինչքան դանդաղ էր առաջ գնում), տեսավ օգնականներից մեկին՝ մահու չափ հոգնած, ճաղերից բռնած։ Միայն մեկն էր այնտեղ, իսկ ո՞ւր էր երկրորդը։ Ուրեմն գոնե մեկի դիմադրությունը Կ-ն կոտրել էր։ Այստեղ կանգնած օգնականը հավանաբար դեռ բավական ուժ ուներ, և դա իսկույն զգացվեց, երբ Կ-ի տեսքից աշխուժացած՝ նա սկսեց առաջվանից ավելի ուժեղ առաջ պարզել ձեռքերն ու ոլորել աչքերը։

— Օրինակելի համառություն է ցուցաբերում։— Ինքնիրեն խոստովանեց Կ-ն և ստիպված եղավ, համենայնդեպս, ավելացնել։— Դրա շնորհիվ կարելի է և ճաղերին կպած սառչել։

Իսկ ընդհանրապես, Կ-ն օգնականին ասելիք չուներ, միայն բռունցքով սպառնաց, իսկ դա բացառում էր ամեն մի բարեհաճություն։ Օգնականը վախով ավելի հեռու քաշվեց։

www.a-pdf.com

Նույն պահին Ֆրիդան բացեց պատուհանը, որ, ինչպես Կ-ի հետ էր պայմանավորվել, վառարանը վառելուց առաջ սենյակն օդափոխեր։ Օգնականն իսկույն ձեռք քաշեց Կ-ից ու անկասելի մղումով սողաց դեպի պատուհանը։ Օգնականի հանդեպ ունեցած բարեհաճությունից ու Կ-ին ուղղված թախանձագին անօգնականությունից աղճատված դեմքով Ֆրիդան թափահարեց ձեռքը և հնարավոր չէր հասկանալ՝ մերժում էր, թե քաջալերում, սակայն այդ նշանը հետ չկանգնեցրեց օգնականին։ Ֆրիդան փութով փակեց դրսի փեղկն ու, ձեռքը բռնակին, գլուխը կողքի թեքած, աչքերը լայն բացած, քարացած ժպիտը դեմքին՝ մնաց պատուհանի մոտ կանգնած։ Նա գիտե՞ր արդյոք, որ այդպես ավելի շուտ դայթակղում էր օգնականին, քան վանում նրան։ Իսկ Կ-ն այլևս հետ չէր նայում, նա ուզում էր հնարավորին չափ շուտ գնալ ու վերադառնալ։

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Արդեն մթնում էր, իրիկնադեմին Կ-ն վերջապես մաքրեց այգու ճանապարհը, ձյունը կուտակեց ճամփի երկու կողմերում, տփեց-ամրացրեց ու դրանով վերջացրեց օրվա աշխատանքը։ Պարտեզի դարպասի մոտ նա կանգնել էր մենակ, շուրջը ոչ ոք չկար։ Մի քանի ժամ առաջ վտարեց իր օգնականին, բավական երկար տարածություն նրա հետևից ընկավ, մինչև որ նա թաքնվեց ինչ-որ տեղ՝ պարտեզի ու խրճիթների արանքում։ Նրան հնարավոր չեղավ գտնել, նա էլ այլևս չհայտնվեց։

Ֆրիդան տանն էր։ Հիմա նա կա՛մ սպիտակեղենի լվացքն էր ձեռնարկել արդեն, կա՛մ Գիզայի կատվին էր լողացնում դեռ։ Ուսուցչուհու կողմից վստահության մեծագույն դրսևորում էր, որ նա կատվին լողացնելը Ֆրիդային էր թողել. այդ աշխատանքը ո՛չ հարմար էր, ո՛չ էլ տրամադրող, և Կ-ն, իհարկե, թույլ չէր տա Ֆրիդային այդ գործն անել, եթե նպատակահարմար չլիներ, տարբեր բացթողումներից հետո, Գիզայի հետ հարաբերությունները բարելավելու համար օգտագործել բոլոր հնարավորությունները։ Գիզան գոհ նայել

www.a-pdf.com

էր, թե ինչպես է Կ-ն ձեղնահարկից իջեցնում երեխաների լողանալու տաշտը, ջուր տաքացնում ու կատվին զգուշությամբ դնում տաշտի մեջ։ Դրանից հետո նա կատվին վերջնականապես վստահել էր Ֆրիդային, որովհետև Շվարցերն էր եկել՝ այն երիտասարդը, ում Կ-ն դեռ առաջին երեկոյից էր ծանոթ։ Շվարցերը վախի (ինչը նույն երեկոյի հետ էր կապված) ու դպրոցի սպասավորին համապատասխան անսահման արհամարհանքի խառը զգացումով ողջունել էր Կ-ին և Գիզայի հետ մյուս դասասենյակն անցել։ Նրանք դեռ այնտեղ էին։ Ինչպես իջևանատանն էին Կ-ին պատմել, Շվարցերը, որ տեսուչի որդի էր, Գիզայի հանդեպ ունեցած սիրո պատճառով արդեն վաղուց էր ապրում գյուղում, իր ծանոթների միջոցով կարողացել էր դասավորել, որ համայնքը նրան նշանակեր ուսուցչի օգնական, իսկ նա այսպես էր կատարում իր գործը. Գիզայի դասերից ոչ մեկը բաց չէր թողնում. կա՛մ երեխաների հետ նստում էր աշակերտական նստարանին, կա՛մ ավելի մեծ հաճույքով՝ Գիզայի ոտքերի մոտ՝ ամբիոնի պատվանդանին։ Նրա ներկայությունն այլևս ոչ ոքի չէր խանգարում, երեխաներն արդեն վաղուց ընտելացել էին նրան, իսկ դա, հավանաբար, շատ ավելի հեշտ էր հաջողվել, որովհետև Շվարցերը երեխաներով զբաղվելու ո՛չ հակում ուներ, ո՛չ էլ բան էր հասկանում դրանից, հազվադեպ էր խոսում երեխաների հետ։ Գիզայի պարապմունքներից Շվարցերը միայն մարմնամարզության դասերն էր ստանձնել և ընդհանրապես գոհ էր, որ Գիզայի մոտերքում էր, նույն օդն էր շնչում, նրա ջերմությունը զգում։ Նրա համար ամենամեծ հաճույքը Գիզայի կողքին նստելն ու աշակերտական տետրերը ստուգելն էր։ Այսօր էլ էին դրանով զբաղված. Շվարցերը տետրերի մի մեծ կապոց էր բերել, ուսուցիչն իր աշակերտների տետրերն էլ էր նրանց տվել, և, քանի դեռ լույս էր, երևում էր, թե ինչպես էինք նրանք լուսամուտի դիմաց դրված սեղանի մոտ գլուխ-գլխի, անշարժ նստած աշխատում. այժմ այնտեղ մոմի երկու լույս էր թրթռում։ Լուրջ ու անխոս սիրով էին միավորված երկուսը։ Տոն տվողը Գիզան էր. ծանր բնավորության տեր այս աղջիկը, թեև ուրիշ ժամանակ մյուսներին երևի նման բան չէր հան-

www.apdf.com

դուրժի, բայց ինքը երբեմն վայրի մոլուցքով անցնում էր ամեն չափ ու սահման։ Խառնվածքով աշխույժ Շվարցերը ևս պետք է համակերպվեր. դանդաղ քայլեր, դանդաղ խոսեր, ավելի շատ լռեր, բայց այդ ամենի համար նրան առատորեն փոխհատուցում էր Գիզայի պարզ ու խաղաղ ներկայությունը։ Գիզան երևի չէր էլ սիրում Շվարցերին. նրա կլոր, մոխրագույն, երբեք չփայլող աչքերը, որոնց միայն բիբերն էին շարժվում կարծես, սիրո վերաբերյալ հարցերին ընդհանրապես ոչ մի պատասխան չէին տալիս։ Երևում էր, որ նա առանց հակաճառելու հանդուրժում էր Շվարցերի ներկայությունը, բայց տեսուչի որդու կողմից սիրված լինելու պատիվը չէր գնահատում և անվրդով քայլվածքով տեղաշարժում էր իր փարթամ, գեր մարմինը, անկախ այն բանից՝ Շվարցերը հայացքով հետևում է իրեն, թե՝ ոչ։ Դրան հակառակ, Շվարցերը նրան զոհ էր մատուցում մշտապես գյուղում մնալով և հոր ուղարկած բանբերներին, որ հաճախ էին նրա հետևից գալիս, այնպիսի զայրույթով էր ճանապարհ դնում, կարծես նրանց՝ դղյակի ու որդիական պարտքի վերաբերյալ կարճ հիշեցումն անգամ նրա երջանկությանը զգալի ու անուղղելի վնաս էր հասցնում։ Սակայն նա բավական ազատ ժամանակ ուներ, որովհետև Գիզան ընդհանրապես միայն դասաժամերին ու տետրերը ստուգելու ժամանակ էր նրան երևում և այդպես էր վարվում ոչ թե հաշվենկատության պատճառով, այլ որովհետև ամենից առաջ սիրում էր հարմարավետություն, ու՝ դրա հետ կապված, գերադասում էր մենակ լինել։ Գիզան, հավանաբար, երջանիկ էր զգում իրեն, երբ տանը՝ կատարյալ ազատության մեջ մեկնվում էր բազմոցին, իսկ նրա կողքին պառկում էր կատուն, որ չէր խանգարում, որովհետև հազիվ էր կարողանում շարժվել։ Շվարցերն օրվա մեծ մասն այդպես պարապ էր անցկացնում, բայց նույնիսկ դա էր նրան հաճույք պատճառում, որովհետև միշտ հնարավորություն էր ունենում գնալ Լյովենգասսե և շատ հաճախ էր օգտագործում այդ հնարավորությունը։ Գիզան այնտեղ էր ապրում։ Շվարցերը բարձրանում էր Գիզայի՝ Հեղնահարկում գտնվող բնակարանը, ականջ էր դնում շաբունակ փակ դռան մոտ և երբ համոզվում էր, որ սենյակում այս անգամ էլ, առանց բացառության, լռություն է տիրում,

www.a-pdf.com

շտապ հեռանում էր։ Նրա ապրելակերպի հետևանքները, իհարկե, ոչ երբեք Գիզայի ներկայությամբ, երբեմն իրենց զգացնել էին տալիս պաշտոնյայի դոռոռամտության վայրկենական, ծիծաղելի պոռթկումների ձևով, մի բան, որ իսկապես քիչ էր սաղում նրա այժմյան դրությունը և մեծ մասամբ անհաջող ավարտ էր ունենում. Շվարցելի հետ կապված նման բանի Կ-ն էլ էր ականատես եղել։

Զարմանալին այն էր, սակայն, որ ինչևանատանը Շվարցերի մասին որոշակի հարգանքով էին խոսում, նույնիսկ երբ խոսքը լինում էր ավելի շատ ծիծաղելի, քան թե լուրջ բաների մասին։ Նաև Գիզային էին նույնպիսի լուրջ վերաբերմունք ցույց տալիս։ Այնուամենայնիվ, ճիշտ չէր, երբ Շվարցերը մտածում էր, թե ուսուցչի օգնականը բավական վեր է կանգնած Կ-ից. նման գերազանցություն չկար, դպրոցի սպասավորը ուսուցիչների համար, առավել ևս Շվարցերի նման ուսուցչի համար, շատ կարևոր անձնավորություն էր, նրան չէր կարելի անպատիժ կերպով արհամարհել, իսկ եթե պաշտոնը թույլ չէր տալիս արհամարհական վերաբերմունքից հրաժարվել, ապա դրան համապատասխան զիջողությամբ պետք է առնվազն տանելի դարձնել վիճակը։ Հարմար առիթ ստեղծվելու դեպքում Կ-ն մտադիր էր օգտագործել այն, և հետո՝ Շվարցերը դեռ առաջին երեկոյից էր պարտք իրեն, իսկ այդ պարտքը բոլորովին էլ չէր նվազել այն պատճառով, որ հետագա օրերը ցույց էին տվել Շվարցերի վերաբերմունքի արդարացիությունը։ Կ-ն պարզապես չէր կարող մոռանալ, որ այդ ընդունելությունը ուղղություն տվեց հետագա բոլոր դեպքերին։ Շվարցերի պատճառով իշխանությունները հենց առաջին ժամերից անմիտ կերպով իրենց ուշադրությունն ամբողջովին կենտրոնացրին Կ-ի վրա, երբ նա՝ գյուղին բոլորովին օտար, ո՛չ ծանոթ-մտերիմ, ո՛չ էլ գիշերելու տեղ ունենալով, երկար քայլելուց չափից դուրս հոգնած, միանգամայն անօգնական վիճակով, ինչպես նա էր այստեղ՝ ծղոտի պարկի վրա պառկել, մատնված էր պաշտոնյաների մեքենայություններին։ Գուցե հենց մի գիշեր անց ամեն ինչ այլ՝ անաղմուկ ու աննկատ ընթացք ունենար. համենայնդեպս ոչ ոք ոչինչ չէր իմանա իր մասին, ոչինչ չէին կասկածի, գոնե չէին վարանի իրեն որպես թափառաշրջիկի մի օր իրենց

www.a-pdf.com

տանը պահել, կտեսնեին, որ ինքը պիտանի ու վստահելի մարդ է, շրջակայքում նրա մասին խոսք կգնար ու, հավանաբար շուտով, ինչ-որ տեղ որպես ծառա գործի ընդունեին ու ապաստան տային։ Իհարկե, իշխանությունների աչքից ոչինչ չէր վրիպի, բայց էական տարբերություն կար. այլ էր, երբ գիշերվա կեսին իր պատճառով զանգեցին-արթնացրին կենտրոնական գրասենյակին կամ հեռախոսի մոտ հերթապահողին, ակնհայտորեն նվաստանալով, բայցև պարտադրող անողոքությամբ վայրկենապես ընդունված որոշում պահանջեցին, իսկ զանգողն էլ Շվարցերն էր, ում, հավանաբար, առանց այդ էլ չէին սիրում վերևում, և այլ՝ երբ այս ամենի փոխարեն ինքը հաջորդ օրը ընդունելության ժամերին թակեր համայնքի նախագահի դուռը, ներկայանար որպես համայնքի անդամներից մեկի մոտ արդեն օթևան ստացած, հենց վաղը իր ճամփան շարունակելու մտադրություն ունեցող մի թափառաշրջիկ, և հնարավոր է, որ անհավանական մի բան կատարվեր, ինքն այստեղ աշխատանք գտներ. իհարկե մի քանի օրով, որովհետև ոչ մի դեպքում չէր ուզում ավելի երկար մնալ այստեղ։ Եթե Շվարցերը չլիներ, ամեն ինչ այսպիսի կամ նման մի ընթացք կունենար։ Իշխանությունները կշարունակեին իրենց գործով զբաղվել, բայց հանգիստ կաշխատեին, հերթականությամբ, և այցելուի՝ պաշտոնյաների համար անտանելի անհամբերությունը չէր խանդարի իրենց։ Կ-ն ոչ մի մեղք չուներ, որ ամեն ինչ այսպես ստացվեց։։ Մեղավորը Շվարցերն էր, բայց Շվարցերը տեսուչի որդի էր և արտաքուստ շատ քաղաքավարի էր վարվել, այնպես որ կատարվածի համար միայն Կ-ին մեղավոր կհամարեին։

Եվ ինչն էր այս ամենի ծիծաղելի պատճառը։ Երևի Գիզան այն օրը անխիղճ կերպով կամակորություն էր հանդես բերել, Շվարցերին ստիպել էր գիշերն անքուն թափառել, որ հետո Կ-ն հատուցեր նրա կրած դառնությունների համար։ Մյուս կողմից կարելի էր ասել, որ դեպքերի նման ընթացքի համար Կ-ն շատ էր պարտական Շվարցերին։ Միայն նրա շնորհիվ հնարավոր եղավ այն, ինչին Կ-ն մենակ երբեք չէր հասնի, չէր համարձակվի հասնել, և իշխանություններն իրենց

www.a-pdf.com

կողմից հազիվ թե թույլ տային, որ ինքը սկզբից ևեթ, առանց հնարքներ բանեցնելու, բացահայտ, աչք-աչքի, դեմհանդիման կանգներ ղեկավարությանը. իհարկե, ինչքանով որ դա ղեկավարության համար էր հնարավոր։ Սակայն դա նաև վատ նվեր էր ու թեև մի կողմից նպաստեց, որ Կ-ն չստեր ու գաղտնի բաներով չզբաղվեր, բայց միաժամանակ համարյա անպաշտպան վիճակի հասցրեց նրան, սպասվելիք պայքարում աննպաստ դարձրեց դիրքերը և կարող էր հուսահատության հասցնել, եթե, իհարկե, Կ-ն ինքն իրեն չխոստովաներ, որ իր ու ղեկավարության միջև ուժերի տեղաբաշխումն այն աստիճան էր անհավասար, որ ինչքան էլ ինքը կարողանար ստել ու խորամանկել, ի վիճակի չէր լինի տարբերությունը շրջել հօգուտ իրեն։ Սակայն այդ մտքերով Կ-ն միայն մխիթարում էր ինքն իրեն, Շվարցերն, այնուամենայնիվ, պարտ էր մնում իրեն, եթե այն ժամանակ վնաս էր հասցրել, հետո գուցե կարողանար օգնել. հետագայում էլ Կ-ն՝ ամենաանշան դեպքերում, ամենաառաջին նախապայմանների հետ կապված, օգնության կարիք կունենար, որովհետև հիմա, օրինակ, թվում էր, թե Բարնաբասի մոտ ոչինչ չէր ստացվում։

Ֆրիդայի պատճառով Կ-ն ամբողջ օրը վարանել էր Բարնաբասենց տուն գնալ ու հարցնել, և որպեսզի ստիպված չլիներ Բարնաբասին ընդունել Ֆրիդայի ներկայությամբ, այժմ աշխատում էր դրսում, ու թեև գործն ավարտել էր, բայց դեռ ներս չէր գնում. սպասում էր Բարնաբասին, իսկ նա չէր գալիս։ Այժմ արդեն ուրիշ ելք չէր մնում. կարճ ժամանակով քույրերի մոտ կգնար, շեմի վրայից կհարցներ Բարնաբասի մասին և շտապ հետ կվերադառնար։ Նա թին խրեց ձյան մեջ ու վազեց։ Շնչակտուր հասավ Բարնաբասի տունը, կարճ թակելուց հետո թափով բացեց դուռը և, առանց նայելու, թե ով կար ներսում, հարցրեց.

— Բարնաբասը դեռ չի՞ եկել։— Միայն այժմ նա նկատեց, որ Օլգան սենյակում չէր. երկու ծերերը թմրած նստել էին խորքում դրված սեղանի կողքին, դեռ չէին հասկանում, թե ինչ է կատարվում դռան մոտ ու միայն այժմ դեմքերը դանդաղ շրջեցին այն կողմը, իսկ վառարանի մոտի նստարանին, ծածկոցների տակ պառկած Ամալյան Կ-ի հայտնվե-

www.a-pdf.com

լու թողած առաջին սարսափի ազդեցության տակ վեր էր թռել տեղից ու հիմա իրեն տիրապետելու համար ձեռքը դրել էր ճակատին։ Եթե Օլգան լիներ, իսկույն կպատասխաներ, և Կ-ն կկարողանար անմիջապես դպրոց վերադառնալ, մինչդեռ հիմա ստիպված էր ներս մտնել, մոտենալ Ամալյային, ձեռքը մեկնել նրան (վերջինս լուռ սեղմեց) և խնդրել, որ նա չթողներ վախեցած ծնողներին որևէ բան անել։ Ամալյան մի քանի բառով հանգստացրեց ծնողներին։

Կ-ն իմացավ, որ Օլգան բակում փայտ է կոտրում, Ամալյան հոգնած էր (նա չասաց պատճառը), քիչ առաջ էր պառկել, իսկ Բարնաբասը թեև դեռ չէր եկել, բայց շատ շուտով կգար, որովհետև գիշերը նա երբեք չէր մնում դղյակում։ Կ-ն շնորհակալություն հայտնեց տեղեկության համար։ Այժմ նա կարող էր վերադառնալ, բայց Ամալյան հարցրեց, թե նա չի՞ ուզում սպասել Օլգային։ Կ-ն, ցավոք, այլևս ժամանակ չուներ։ Հետո Ամալյան հարցրեց՝ արդյոք նա արդեն խոսե՞լ է Օլգայի հետ։ Կ-ն զարմացած հերքեց ու հարցրեց, թե Օլգան որևէ կարևոր բա՞ն էր ուզում հայտնել։ Ամալյան թեթևակի ծռեց բերանը, ինչպես մարդ բարկացած ժամանակ է անում, լուռ գլխով արեց Կ-ին (նա հաստատ հրաժեշտ տվեց) և պառկեց նորից։ Տեղում պառկած նա զննում էր Կ-ին, կարծես զարմանում էր, որ նա դեռ կանգնած է այստեղ։ Նրա հայացքը սառն էր, պարզ, ինչպես միշտ՝ անշարժ, անմիջապես ուղղված չէր դիմացը կանգնածին, այլ սահում էր մի փոքր, համարյա աննկատ հեռավորությամբ և խանգարում էր դիմացինին։ Դրա պատճառը ո՛չ թուլությունն էր, ո՛չ մտքերի մեջ խորասուզված լինելը, ո՛չ էլ անազնվությունը, այլ տևական, մնացած բոլոր զգացմունքներին գերազանցող մենակ մնալու մարմաջը, որ նա երևի միայն այդպես էր պատկերացնում։ Կ-ին թվաց, թե հիշում է, որ Ամալյայի հայացքը դեռ առաջին երեկոյան գրավեց իր ուշադրությունը, որ ընտանիքի թողած զզվելի տպավորության պատճառը հենց այդ հայացքն էր, թեև նրա հայացքը առանձնապես զզվելի չէր, այլ հպարտ էր ու, իր պարփակվածության մեջ՝ ազնիվ։

— Դու միշտ տխուր ես, Ամալյա։ Քեզ ինչ-որ բա՞ն է տանջում։ Չե՞ս կարող ասել, թե ինչն է։ Քեզ պես գյուղացի

www.a-pdf.com

աղջիկ ես դեռ չեմ տեսել։ Ճիշտն ասած, միայն այսօր, հենց այս պահին զգացի։ Դու այս գյուղի՞ց ես, այստե՞ղ ես ծնվել։— Ամալյան այնպես «այո» ասաց, կարծես Կ-ն միայն վերջին հարցն էր տվել, ու ավելացրեց.

— Դու, այնուամենայնիվ, կսպասե՞ս Օլգային։

— Չգիտեմ, թե ինչո՞ւ ես շարունակ նույն բանը հարցնում։ Չեմ կարող երկար մնալ այստեղ, հարսնացուս սպասում է տանը։

Ամալյան հենվեց արմունկին. նա ոչինչ չէր լսել նրա հարսնացուի մասին։ Կ-ն ասաց անունը. Ամալյան չէր ճանաչում նրան և հարցրեց, թե Օլգան տեղյա՞կ է նշանդրեքի մասին։ Կ-ն կարծում էր, որ այո, որովհետև Օլգան իրեն տեսել էր Ֆրիդայի հետ, և, հետո, գյուղում նման կարգի լուրերը շատ արագ էին տարածվում։ Սակայն Ամալյան հավաստիացրեց, որ այդ լուրը շատ կտխրեցնի նրան, որովհետև Ամալյային թվում է, թե Օլգան սիրում է Կ-ին։ Օլգան անձամբ այդ մասին բացահայտ չէր խոսել, որովհետև զուսպ բնավորություն ուներ, բայց սերն ակամայից մատնում էր նրան։ Կ-ն համոզված էր, որ Ամալյան սխալվում է։ Ամալյան ժպտաց, և այդ ժպիտը՝ թեև տխուր էր, լուսավորեց նրա մռայլ, կուչ եկած դեմքը, խոսուն դարձրեց լռությունը, օտարությունը՝ մտերմիկ, դա ինչ-որ գաղտնիք էր բացահայտում, բացահայտումն էր մինչև այժմ գաղտնի պահված մի սեփականության, որ հետո թեև կարելի էր նորից հետ վերցնել, բայց այս անգամ այլևս ոչ ամբողջովին։ Ամալյան պնդեց, որ ինքը չի սխալվում, որ ինքը ավելին գիտե, որ Կ-ն էլ անտարբեր չէ Օլգայի նկատմամբ և որ նրա այցելությունները, թեև առիթը Բարնաբասի բերած ինչ-որ լուրերն են, իրականում միայն Օլգային են վերաբերում։ Այժմ, քանի որ Ամալյան տեղյակ է ամեն ինչի, Կ-ն այլևս չպետք է նման խստություն դրսևորի և կարող է ավելի հաճախ գալ։ Նա միայն այս էր ուզում ասել Կ-ին։ Կ-ն թափ տվեց գլուխն ու հիշեցրեց, որ ինքը նշանված է։ Ամալյային այնքան էլ չէր հետաքրքրում նշանդրեքը. դիմացը մենակ կանգնած Կ-ի թողած տպավորությունը ավելի որոշակի էր, և նա հարցրեց միայն, թե ե՞րբ է Կ-ն հասցրել ծանոթանալ այդ աղջկա հետ,

երբ ընդամենը մի քանի օր առաջ է գյուղ եկել։ Կ-ն պատմեց հյուրանոց գնալու երեկոյի մասին, իսկ Ամալյան կարճ պատասխանեց, որ ինքը դեմ էր նրան հյուրանոց թողնելուն։ Իր ասածի համար նա վկայակոչեց Օլգային, որ մի գիրկ լիքը փայտ առած ներս մտավ. նրա տեսքը թարմ էր, աշխույժ ու ուժեղ, աշխատանքի շնորհիվ՝ ի հակադրություն սենյակում սովորաբար ծանրումեծ կանգնելու բնավորությանը, լրիվ կերպարանափոխված ու սառն օդից դեմքը կարմրած։ Նա փայտը հատակին շպրտեց, սնմիջականությամբ բարևվեց Կ-ին ու իսկույն հարցրեց Ֆրիդայի մասին։ Կ-ն մի հայացք փոխանակեց Ամալյայի հետ, սակայն վերջինս կարծես բոլորովին չէր ընդունում, որ ինքը սխալվել է։ Դրանից մի փոքր գրգռված, Կ-ն ավելի մանրամասն՝ քան սովորաբար կաներ, սկսեց պատմել Ֆրիդայի մասին, նկարագրեց, թե ինչ դժվարին պայմաններում էր նա դպրոցում վարում իրենց այսպես կոչված, տնտեսությունը և պատմելու շտապողականության պատճառով (նա, ախր, իսկույն տուն դառնալ էր ուզում) այնպես ընկավ ինքնամոռացության մեջ, որ հրաժեշտ տալով քույրերին հրավիրեց երբևէ հյուր գալ իրենց։ Դրանից անմիջապես հետո նա սարսափած կտրեց ձայնը, մինչդեռ Ամալյան իսկույն, առանց նրան գեթ մի բառ արտասանելու հնարավորություն տալու հայտարարեց, որ ընդունում է հրավերը. Օլգային էլ այլ բան չէր մնում, և նա այդպես էլ վարվեց։ Իսկ Կ-ն, շարունակ շտապ հրաժեշտ տալու մասին մտածելով, Ամալյայի հայացքի տակ ինքն իրեն անհանգիստ զգալով, չվարանեց առանց այլևայլության խոստովանել, որ հրավերը միանգամայն անմտածված էր, որ իր անձնական զգացմունքներից մղված է հրավիրել, որ ինքը, ցավոք, չի կարող այն ուժի մեջ համարել, որովհետև իր համար անհասկանալի թշնամանք կա Ֆրիդայի ու Բարնաբասենց ընտանիքի միջև։

— Դա թշնամանք չէ,— ասաց Ամալյան, վեր կացավ նստարանից ու վերմակը մի կողմ գցեց։— Այդ աստիճանի չի հասել, նրա տրամադրվածությունը ընդհանուրի կարծիքի կրկնությունն է միայն։ Իսկ հիմա դնա, գնա հարսնացուիդ մոտ։ Տեսնում եմ, թե ինչպես ես շտապում։ Եվ մի վախեցիր, թե մենք կգանք. ես պարզապես կատակ արեցի, չա-

www.a-pdf.com

թությունից ասացի։ Դու կարող ես ավելի հաճախ այցելել մեզ, դրա համար թերևս ոչ մի արգելք չկա։ Ախր դու միշտ կարող ես քո այցելությունները Բարնաբասի տեղեկություններով արդարացնել, իսկ ես ավելի կհեշտացնեմ քեզ համար և կասեմ, որ Բարնաբասը, եթե անգամ քեզ համար լուր էլ բերի դղյակից, չի կարողանա քեզ տեղյակ պահելու համար այստեղից դպրոց հասնել։ Նա չի կարող այդքան վազվզել, խեղճ տղային ծառայությունը ուժասպառ է անում։ Նորություններն իմանալու համար քեզ հարկ կլինի անձամբ գալ։

Կ-ն դեռ չէր տեսել, որ Ամալյան որևէ առիթով այդքան երկար խոսեր, այն, ինչ նա ասաց, տարբերվում էր նրա սովորական խոսելաձևից։ Նրա բառերում ինչ-որ վեհություն կար, որ ոչ միայն Կ-ն էր զգում, այլ, իհարկե, նաև Օլգան, նրա խոսելաձևին սովոր քույրը, որ մի փոքր հեռու, ձեռքերը գոգը, ոտքերն իրարից հեռու դրած, իր սովորական կեցվածքով, փոքր-ինչ կռացած կանգնել էր ու աչքերը հառել Ամալյային, մինչդեռ վերջինս միայն Կ-ին էր նայում։

— Դու սխալվում ես, շատ ես սխալվում, եթե կարծում ես, թե ես, իրոք, Բարնաբասին չեմ սպասում։ Իմ գործերն իշխանությունների հետ կարգի բերելն իմ ամենագլխավոր, իրականում իմ միակ ցանկությունն է։ Իսկ այդ հարցում ինձ պետք է օգնի Բարնաբասը, իմ հույսերի մեծ մասը նրա հետ է կապված։ Թեև նա մի անգամ հիասթափեցրեց ինձ, բայց դա ավելի շատ իմ մեղքով էր, քան նրա, որովհետև ամեն ինչի մասին սխալ պատկերացում ունենալով, այն ժամանակ ինձ թվում էր, թե կկարողանամ երեկոյան կարճատև զբոսանքի ընթացքում ամեն ինչ ավարտել, իսկ երբ պարզվեց, որ անհնարին է անհնար բանն անելը, ես ամեն ինչում նրան մեղավոր համարեցի։ Դա ազդեց նույնիսկ ձեր ընտանիքի, ձեր մասին կազմած իմ պատկերացման վրա։ Եղածն անցած է, և ես կարծում եմ, որ հիմա ավելի լավ եմ հասկանում ձեզ, դուք նույնիսկ...,— Կ-ն փորձեց ճիշտ բառը գտնել, սակայն անմիջապես չկարողացավ և բավարարվեց միայն պատահական արտահայտություն օգտագործելով։— Դուք երևի ավելի բարեհաճ եք, քան գյուղի մարդկանցից որևէ այլ ոք, ինչքանով որ ես եմ մինչև այսօր ճա-

www.a-pdf.com

նաչել նրանց։ Իսկ այժմ, Ամալյա, դու նորից շփոթեցնում ես ինձ, եթե ոչ քո եղբոր ծառայությունը, ապա ինձ համար նրա ունեցած նշանակությունը նսեմացնելով։ Գուցե դու տեղյակ չես Բարնաբասի գործերին, եթե այդպես է, ապա՝ ավելի լավ, որովհետև ես գործը կթողնեմ այնպես, ինչպես կա, բայց դու լավատեղյակ ես երևի, և ինձ, ավելի շուտ, այդպես է թվում, իսկ այդ դեպքում վիճակը շատ վատ է, որովհետև քո խոսքերը նշանակում են, որ քո եղբայրը խաբում է ինձ։

— Հանգիստ եղիր, ես ոչնչից տեղյակ չեմ, ոչինչ չէր կարող ստիպել ինձ հետաքրքրվել դրանցով, նույնիսկ քո հանդեպ ունեցած վերաբերմունքը. քեզ համար երևի թե որևէ բան անեի, որովհետև, ինչպես ասացիր, մենք բարեհաճ մարդիկ ենք։ Սակայն եղբորս գործերը ինձ չեն վերաբերվում, ես նրանցից ոչինչ տեղյակ չեմ, բացի այն, ինչ իմ կամքից անկախ եմ լսել այստուայնտեղ։ Դրան հակառակ, Օլգան կարող է ամեն ինչ մանրամասն բացատրել քեզ, որովհետև Բարնաբասը վստահում է նրան։

Ամալյան հեռացավ, նախ գնաց ծնողների կողմը, շշուկով մի քանի խոսք փոխանակեց ու անցավ խոհանոց։ Նա հրաժեշտ չտվեց Կ-ին, կարծես գիտեր, որ Կ-ն դեռ երկար կմնար այստեղ ու առայժմ հրաժեշտի կարիք չկար։

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կանգնած-մնացած Կ-ի դեմքը զարմանք էր արտահայտում։ Օլգան ծիծաղեց նրա վրա և ձեռքից քաշեց վառարանի մոտ դրված նստարանի կողմը. նրա իրեն կարծես երջանիկ էր զգում, պատկերացնելով, թե հիմա կարող է առանձին նստել Կ-ի հետ, սակայն դա անխառն ուրախություն էր ու, իհարկե, կրքերի առկայությամբ պղտորված չէր։ Եվ հենց կրքերի ու դրա հետ կապված ամեն մի խստության բացակայությունն էր, որ բավականություն էր պատճառում Կ-ին, նա հաճույքով էր նայում Օլգայի կապույտ, հրապույրից զուրկ, ոչ տիրական, այլ հանգստացնող երկչոտությամբ, երկյու-

www.a-pdf.com

զով նայող աչքերին։ Նրան թվում էր, թե Ֆրիդայի ու իշխանատիրուհու նախազգուշացումներն այստեղ ամեն ինչի հանդեպ ոչ թե ավելի զգայուն, այլ ավելի ուշադիր ու հնարամիտ էին դարձրել իրեն։ Եվ Կ-ն ծիծաղեց Օլգայի հետ, երբ վերջինս զարմացավ, թե ինչու նա հենց Ամալյային բարեհաճ անվանեց. Ամալյան կարող էր ամեն ինչ լինել, միայն թե ոչ բարեհաճ։ Ի պատասխան Կ-ն բացատրեց, որ գովեստն իրականում իրեն՝ Օլգային էր վերաբերում, բայց Ամալյան այնքան իշխանատենչ է, որ ոչ միայն իրեն է վերագրում իր ներկայությամբ ասվող ամեն ինչը, այլ որ մարդ նույնիսկ կամավոր է ամեն ինչ նրան հասցեագրում։

— Դա ճիշտ է։— Լրջացավ Օլգան։— Ավելի ճիշտ, քան դու ես կարծում։ Ամալյան ինձնից փոքր է, Բարնաբասից էլ է փոքր, բայց նա է, որ ընտանիքում վճռում է, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, և մեզանից ավելի շատ, իհարկե նրան է վիճակվել թե՛ լավը, թե՛ վատը։

Կ-ն չափազանցված համարեց այդ կարծիքը։ Ախր քիչ առաջ Ամալյան ասաց, որ ինքն, օրինակ, չի հետաքրքրվում եղբոր գործերով, այն դեպքում, երբ Օլգան ամեն ինչ գիտե։

— Ինչպես բացատրեմ քեզ։ Ամալյան ո՛չ ինձնով է հետաքրքրվում, ո՛չ եղբորով, իրականում նա ծնողներից բացի ուրիշ ոչ մեկով չի զբաղվում, օր ու գիշեր խնամում է նրանց. հիմա էլ հարցրեց, թե ինչ են ուզում ու գնաց խոհանոց նրանց համար կերակուր եփելու։ Նրանք էին պատճառը, որ Ամալյան ոտքի ելավ. դեռ ճաշից նա հիվանդ էր ու պառկած էր նստարանին։ Թեև նա մեզանով չի հետաքրքրվում, բայց մենք նրանից կախում ունենք, կարծես ավագը ինքը լինի, և, եթե մեր գործերի կապակցությամբ որևէ խորհուրդ տա մեզ, մենք, իհարկե, նրա ասածի պես կանենք։ Սակայն նա ոչինչ չի խրատում, նրա համար մենք օտարներ ենք։ Օրինակ, դու մարդկանց հարցում մեծ փորձ ունես, հեռու տեղից ես գալիս, նա քեզ չափազանց խելացի չի՞ թվում։

— Նա չափազանց դժբախտ է թվում ինձ,— ասաց Կ-ն։— Եվ ինչպես հասկանամ նրա հանդեպ ունեցած ձեր հարգանքը, երբ Բարնաբասը լրաբերի գործ է անում, մինչդեռ Ամալյան ոչ միայն չի հավանում այն, այլ նույնիսկ արհամարհում է։

www.a-pdf.com

— Եթե Բարնաբասն իմանար, թե այլապես ինչ կկարողանար անել, ապա իսկույն կթողներ լրաբերի գործը, որ առանց այդ էլ չի գոհացնում նրան։

— Նա կոշկակարություն չի՞ սովորել։

— Իհարկե։ Երբեմն նա Բրունսվիկի համար է աշխատում և եթե ուզենա, օր ու գիշեր գործ կունենա և առատ վարձ։

— Եթե այդպես է, նա կկարողանա բանբերի փոխարեն ուրիշ գործ անել։

— Բանբերի փոխարե՞ն։— Զարմացավ Օլգան։— Իսկ ի՞նչ է, այդ գործը նա հանուն վարձի՞ է ստանձնել։

— Ենթադրենք։ Բայց, ախր, ինքդ ասացիր, որ այդ գործը նրան չի գոհացնում։

— Դա կարող է այլ պատճառներով էլ չգոհացնել նրան, բայց նա ղղյակին է ծառայում, ղղյակին ծառայելու ձև է համենայնդեպս, գոնե այսպես է պետք մտածել։

— Ինչպե՞ս թե։ Նույնիսկ ծառայության հարցո՞ւմ եք կասկածում։

— Ինչպես ասեմ։ Իրականում՝ ոչ,— ասաց Օլգան։— Բարնաբասը գրասենյակների հետ կապ ունի, շփվում է իր նման ծառաների հետ, հեռվից հատուկենտ պաշտոնյաների էլ է տեսնում, համեմատաբար կարևոր նամակներ է ստանում, այո, նրան նույնիսկ բանավոր տեղեկություններ են վստահում. ախր, դա բավական մեծ բան է, և մենք կարող ենք հպարտ լինել, թե ինչի է հասել նա այդքան ջահել տարիքում։— Կ-ն գլխով արեց. տուն դառնալու մասին նա չէր մտածում։

— Նա իր սեփական լիվրեն ունի՞։

— Դու նկատի ունես կիտե՞լը։ Ոչ, կիտելը Ամալյան է կարել, դեռ նախքան նրա բանբեր աշխատելը։ Բայց դու ցավոտ տեղին ես մոտենում։ Դղյակից նա արդեն վաղուց ոչ թե լիվրե՝ որ չկա ընդհանրապես, այլ կոստյում պետք է ստանար։ Նրան նույնիսկ հավաստիացրել էին, թե կստանա, սակայն դղյակում այդ տեսակետից շատ դանդաղաշարժ են, և վատն այն է, որ մարդ երբեք չգիտե, թե ինչ է նշանակում այդ դանդաղկոտությունը։ Այն կարող է նշանակել, որ գործն ընթացքի մեջ է, սակայն կարող է նշանակել նաև, որ գործը դեռ բոլորովին չի սկսվել, որ Բարնաբասին, օրինակ, դեռ

www.a-pdf.com

նոր են ուզում փորձել։ Դա, վերջապես, կարող է նշանակել նաև, որ գործն արդեն ավարտվել է, ինչ-ինչ պատճառներով հավաստիացումը չեղյալ են հայտարարել, և Բարնաբասը երբեք կոստյում չի ստանա։ Այդ մասին ավելի մանրամասն հնարավոր չէ իմանալ, կամ՝ կիմանանք, բայց միայն բավական ժամանակ անց։ Այստեղ նույնիսկ ասույթ կա։ Գուցե լսել ես. «Պաշտոնական որոշումները երկչոտ են ջահել աղջիկների պես»։

— Շատ լավ է ասված,— համաձայնեց Կ-ն, որ Օլգայից ավելի լուրջ վերաբերվեց ասվածին։— Լավ է նկատված։ Որոշումները պետք է որ աղջիկների հատկանիշների հետ ընդհանուր ուրիշ բաներ էլ ունենան։

— Գուցե,— համաձայնեց Օլգան։— Ես, իհարկե, չգիտեմ, թե դու ինչ նկատի ունես։ Գուցե զովեստով ես ասում։ Իսկ ինչ վերաբերում է համազգեստին, ապա դա Բարնաբասի հոգսերից մեկն է, և որովհետև մեր հոգսերն ընդհանուր են, ուրեմն նաև իմն է։ Մենք իզուր հարցնում ենք մեզ, թե նա ինչո՞ւ համազգեստ չի ստանում։ Բայց այդ ամենն այնքան էլ հեշտ չէ։ Պաշտոնյաներն, օրինակ, կարծեմ բոլորովին համազգեստ չունեն։ Ինչքանով որ մենք ենք այստեղ տեղյակ ու ինչպես Բարնաբասն է պատմում, պաշտոնյաների հագին առօրյա, բայց գեղեցիկ հագուստներ են։ Ասենք դու տեսել ես Կլամմին։ Դե, Բարնաբասը պաշտոնյա չէ, նույնիսկ ամենաստորին աստիճանին չի պատկանում և բանը դրան չի էլ հասնի, որ նա պաշտոնյա դառնալ ուզենա, բայց նաև բարձրաստիճան պաշտոնյաների ծառաները, որոնց այստեղ՝ գյուղում, իհարկե, ընդհանրապես հնարավոր չէ տեսնել, ըստ Բարնաբասի պատմածների, ոչ մի համազգեստ չունեն։ Դա ինչ-որ տեղ սփոփանք է, կարելի է նախապես այդ կարծիքն ունենալ, բայց այդ սփոփանքը կեղծ է, որովհետև արդյո՞ք Բարնաբասը ավելի բարձր աստիճանի սպասավոր է։ Ոչ։ Մարդ թեկուզ ինչքան էլ լավ տրամադրված լինի նրա հանդեպ, չի կարող այդ բանն ասել։ Նա բարձր կարգի ծառաներից չէ և հենց այն, որ նա գյուղ է գալիս, այստեղ է ապրում, հակառակ բանն է ապացուցում։ Բարձր դասի ծառաներն ավելի զուսպ են, քան պաշտոնյաները, և գուցե իրավացիորեն, որովհետև հնարավոր է, որ նրանք ավելի

www.a-pdf.com

բարձր են կանգնած, քան որոշ պաշտոնյաներ, և մի քանի փաստաբկներ դրա օգտին են խոսում։ Ծառաներն ավելի քիչ են աշխատում և, ինչպես Բարնաբասն է նկարագրում, պարմանալի տեսարան է, երբ խոշորակազմ, ուժեղ, ընտրովի մարդիկ դանդաղ քայլում են միջանցքով, մինչդեռ Բարնաբասը շարունակ նրանց շուրջն է պտտվում։ Կարճ ասած, ոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, թե Բարնաբասը բարձր դասի ծառա է։ Այսինքն, նա կարող էր ավելի ցածր դասի ծառաներից լինել, բայց սրանք հումազրեստներ ունեն, գոնե գյուղ գալիս հագնում են։ Իրականում դա բոլորովին էլ սպասյակի զգեստ չէ, դրա մարմնի տեսակները կան, բայց ինչ ուզում է լինի, զգեստներին նայելով մարդ անմիջապես հասկանում է, որ ծառան դղյակից է։ Հյուրանոցում դու այդպիսի մարդկանց տեսել ես ախր։ Զգեստների ամենից աչքի ընկնող առանձնահատկությունն այն է, որ դրանք մեծ մասամբ կիպ են նստում. գյուղացին կամ արհեստավորը նման զգեստ չէր հագնի։ Բարնաբասն այդպիսի զգեստ չունի, բայց դա ո՛չ ամոթ է, ո՛չ էլ արժեզրկում է նրան, դրա հետ կարելի է համակերպվել, սակայն անտրամադիր ժամերին, իսկ մենք՝ Բարնաբասն ու ես, ոչ հազվադեպ, հաճախակի ենք նման պահեր ունենում, ամեն ինչին կասկածանքով վերաբերվելու պատճառ է դառնում։ Արդյոք Բարնաբասն ընդհանրապես դղյակի՞ն է ծառայում, թե՞ ոչ, հարցնում ենք մենք։ Ասենք թե նա գրասենյակներում լինում է, բայց արդյոք գրասենյակներն ու դղյակը նույն բա՞նն են։ Եվ եթե գրասենյակները դղյակին են պատկանում, արդյոք դրանք հենց ա՞յն գրասենյակներն են, որոնք մտնելու իրավունք ունի Բարնաբասը։ Նա գրասենյակներն է մտնում, բայց դրանք, ախր, ընդհանուրի միայն մի մասն են կազմում, դրանց հաջորդում են խոշընդոտները, դրանցից հետո ուրիշ գրասենյակներ են գալիս։ Իհարկե, նրան չեն արգելում առաջ գնալ, բայց, ախր, նա չի կարող գնալ, երբ արդեն տեսել է իր պետերին. նրանք Բարնաբասի հետ վերջացնում են անելիքները և հետ ուղարկում նրան։ Այնտեղ մարդ միշտ հսկողության տակ է. հիմնականում այդպես է թվում գոնե։ Իսկ եթե նա շարունակի էլ առաջ շարժվել, ինչ

www.a-pdf.com

կշահի դրանից, երբ այնտեղ անելիք չունի ու կարող է պնդերես մարդու տպավորություն թողնել։ Այդ խոչընդոտները դու որպես հստակ գծված սահման պատկերացնելու իրավունք չունես. Բարնաբասն ինձ միշտ հիշեցնում է այդ բանը։ Խոչընդոտներ կան նաև այն գրասենյակներում, ուր ինքն է լինում. այսինքն՝ արգելքներ էլ կան, որ ինքն է հաղթահարում, իսկ դրանք բոլորովին չեն տարբերվում նրանցից, որ Բարնաբասը դեռ երբեք չի հաղթահարել, և հենց այդ պատճառով հնարավոր չէ սկզբից ևեթ կարծիք հայտնել, թե այս վերջինների հետևում ուրիշ գրասենյակներ կան և հիմնովին տարբերվում են նրանցից, ուր Բարնաբասն է լինում։ Միայն նեղսրտած ժամերին է մարդ այդպես մտածում, կասկածները խորանում են, և այլևս հնարավոր չի լինում դրանց չհավատալ։ Բարնաբասը խոսում է պաշտոնյաների հետ, հանձնարարություններ է ստանում։ Բայց ի՞նչ պաշտոնյաներ են կամ ի՞նչ հանձնարարություններ են դրանք։ Այժմ, ինչպես ինքն է ասում, ինքը Կլամմին է ենթարկվում և անձամբ նրանից է հանձնարարություններ ստանում։ Դե, ինքնին դա արդեն մեծ բան է, որովհետև նույնիսկ ավագագույն ծառաներն այդ աստիճանի չեն հասնում։ Չափից դուրս մեծ նշանակություն ունի դա և հենց դա էլ վախեցնում է։ Պատկերացնո՞ւմ ես. անմիջապես Կլամմին ենթակա լինել, նրա հետ երես առ երես խոսել։ Բայց գուցե այդպե՞ս է։ Ենթադրենք որ այդպես է, այդ դեպքում ինչո՞ւ է Բարնաբասը կասկածում, թե այնտեղ որպես Կլամմ ներկայացող պաշտոնյան իրո՞ք Կլամմն է։

— Օլգա, դու հո կատակ չե՞ս անում։ Ի՞նչ կասկած կարող է լինել Կլամմի արտաքինի հարցում։ Ախր հայտնի է, թե նա ինչ տեսք ունի։ Ես ինքս եմ տեսել նրան։

— Իհարկե ոչ, Կ.։ Իմ ասածները կատակներ չեն, այլ՝ ամենալուրջ մտահոգություններ, և ես դրանք չեմ պատմում, որ սիրտս թեթևանա, իսկ դու մոայլվես, այլ որովհետև դու Բարնաբասին էիր ուզում, Ամալյան ինձ կարգադրեց պատմել, իսկ ես կարծում եմ, որ քեզ էլ օգուտ կլինի ամեն ինչ մանրամասն իմանալ։ Եվ հետո, ես այս ամենը հանուն Բարնաբասի եմ անում, որպեսզի չափից դուրս մեծ հույսեր չկապես

www.a-pdf.com

նրա հետ, չհիասթափվես ու վերջում էլ հիասթափություն նրան տառապանք չպատճառի։ Նա շատ զգայուն է։ Օրինակ, այս գիշեր նա չքնեց, որովհետև երեկ երեկոյան դու նրանից գոհ չես եղել, ասել ես, թե իբր քեզ համար վատ է, որ միայն Բարնաբասի նման լրաբեր ունես։ Այդ խոսքերը փախցրել էին նրա քունը։ Հավանաբար ինքդ էլ չես նկատել նրա հուզմունքը. դղյակի լրաբերները պետք է լավ ինքնատիրապետում ունենան։ Սակայն քո նրան հեշտ չի հաջողվում, նույնիսկ երբ քեզ հետ է լինում, չի հաջողվում։ Դու կարծում ես, թե շատ բան չես պահանջում նրանից, որոշակի պատկերացումներ ունես բանբերի գործի մասին և ըստ այդ պատկերացումների ես ձևակերպում քո պահանջները։ Սակայն դղյակում բոլորովին այլ պատկերացումներ կան բանբերի գործի վերաբերյալ, դրանք ընդհանուր ոչինչ չունեն քո պատկերացումների հետ, թեկուզ, եթե Բարնաբասը ամբողջովին գոհ գնա իր գործին, իսկ նա, ցավոք, երբեմն պատրաստ է դրան։ Իհարկե, պետք է համակերպվել, և մարդ առարկելու բան չէր ունենա, եթե չլիներ այն հարցը, թե արդյո՞ք նրա արածը բանբերի գործ է։ Քո ներկայությամբ նա, ինչ խոսք, իրավունք չունի ոչ մի կասկած արտահայտել, հակառակ դեպքում նա ինքն իր գոյությունը կվտանգի, կխախտի այն օրենքները, որոնց ազդեցության ոլորտում, իր կարծիքով, ինքն է։ Նա նույնիսկ ինձ մոտ ազատ չի խոսում, ես փորձում եմ համբուրելով ու գգվելով փարատել նրա կասկածները, և նույնիսկ այդ պահերին նա հրաժարվում է համաձայնել, թե իր կասկածները սոսկ կասկածներ են։ Նրա մեջ ինչ-որ բան կա Ամալյայի խառնվածքից, և ամեն ինչ չէ, որ ասում է ինձ, թեև ես եմ նրա միակ վստահելի անձը։ Իսկ Կլամմի մասին խոսում ենք երբեմն։ Ես Կլամմին դեռ երբեք չեմ տեսել։ Դու գիտես, որ Ֆրիդան ինձ այնքան էլ չէր սիրում և երբեք թույլ չէր տալիս նայել, բայց Կլամմի արտաքինը գյուղում բոլորին է հայտնի։ Ոմանք տեսել են նրան, բոլորն են լսել նրա մասին և տեսածից ու լսածից, ինչպես նաև մի քանի սուտուսխալ կարծիքներից Կլամմի մի այնպիսի կերպար է ձևավորվել, որ, հավանաբար, հիմնականում համապատասխանում է։ Բայց միայն հիմնական գծերով է համապատասխանում, մնացյալ հարցերում այն փո-

www.a-pdf.com

փոխական է ու թերևս ոչ այնքան փոփոխական, ինչպես Կլամմի արտաքինն է իրականում։ Հավանաբար նա բոլորովին այլ տեսք ունի, երբ գյուղ է գալիս, և այլ տեսք՝ երբ հեռանում է գյուղից, այլ տեսք ունի մինչև գարեջուր խմելը, և այլ՝ դրանից հետո, այլ է նրա տեսքը արթուն ժամանակ, այլ՝ քնած, միայնակ մնալիս ու զրուցելիս և հասկանալի է, նրա այստեղի տեսքը համարյա հիմնովին տարբերվում է դղյակի տեսքից։ Նույնիսկ գյուղի ներսում տարածված լուրերի մեջ բավական մեծ տարբերություններ կան. կազմվածքի, կեցվածքի, գիրության, մազ-մորուքի. բարեբախտաբար, միայն հագած զգեստի հարցում են լուրերը համընկնում։ Նրա հագին շարունակ նույն զգեստն է. երկարափեշ, սև պարեգոտ։ Այդ բոլոր տարբերություններն, ինչ խոսք, ոչ մի կախարդանքի հետ կապ չունեն, դրանք ինքնին հասկանալի են ու ծնունդ են առնում ակնթարթային տրամադրվածության, հուզմունքի աստիճանի, հույսի կամ հուսահատության տարբեր վիճակների պատճառով, որի մեջ է գտնվում մեծ մասամբ ընդամենը մի պահ Կլամմին տեսնելու իրավունք ստացած դիտողը։ Այս ամենը ես այնպես եմ ներկայացնում քեզ, ինչպես Բարնաբասն է հաճախ ինձ պատմել, և եթե մարդ անձամբ չի առնչվել նրան, ընդհանուր առմամբ կարող է լսածով բավարարվել։ Մենք լսածով չենք կարող բավարարվել, Բարնաբասի համար կյանքի հարց է. արդյոք նա իսկապես Կլամմի՞ հետ է խոսում, թե՞ ոչ։

— Ինձ համար ոչ պակաս,— ասաց Կ-ն, ու նրանք իրար ավելի մոտ նստեցին վառարանի կողքի նստարանին։

Թեև Կ-ն հուզված էր Օլգայի հայտնած ոչ նպաստավոր նորություններից, սակայն հիմնականում գոհ էր, որ այնպիսի մարդկանց ծանոթացավ, ում հետ թեկուզև արտաքնապես նույն բանն էր կատարվել, ինչ՝ իր։ Ինքը կարող էր միավորվել նրանց հետ, կարող էր շատ հարցերում համաձայնության գալ, և ոչ հատուկենտ դեպքերում՝ ինչպես Ֆրիդայի հետ էր։ Թեև նա աստիճանաբար կորցնում էր Բարնաբասի ծառայության հաջողություն բերելու հույսը, բայց ինչքան Բարնաբասի վիճակը վատանում էր, նա այնքան ավելի մոտ էր դառնում այստեղ՝ ներքևում, Կ-ն երբեք չէր կարող պատ-

www.a-pdf.com

կերաշնել, թե գյուղի մարդիկ կարող են անհաջողության մատնված այնպիսի ձգտումներ ունենալ, ինչպիսիք Բարնաբասինն էին ու նրա քրոջը։ Իհարկե, ամեն ինչ բոլորովին էլ վերջնականապես պարզ չէր, կարող էր լրիվ հակառակ ուղղությամբ շուռ գալ. չէր կարելի թույլ տալ, որ Օլգայի, անկասկած, անկեղծ տեսքը անմիջապես գայթակղեր ու հավատացներ, թե Բարնաբասը ևս անկեղծ է։

— Կլամմի արտաքինին վերաբերող լուրերը շատ լավ հայտնի էին Բարնաբասին։— Շարունակեց Օլգան։— Նա շատ տեղեկություններ էր հավաքել ու համեմատել իրար հետ, գուցե չափից դուրս շատ. մի անգամ գյուղով անցնելիս կառքի պատուհանից տեսել էր Կլամմին կամ ենթադրել էր, թե տեսել է, նրան ճանաչելու համար բավական տվյալներ էր հավաքել և, ինչպե՞ս կբացատրես սա, երբ դղյակի դրասենյակներից մեկում, բազմաթիվ այլ պաշտոնյաների շարքում, ցույց էին տվել մեկին ու ասել, թե իբր այդ մարդը Կլամմն է, չէր ճանաչել նրան ու դրանից հետո երկար ժամանակ չէր կարողացել հավատալ, թե այդ մարդը կարող էր Կլամմը լինել։ Եթե հիմա Բարնաբասին հարցնես, թե ինչով էր այդ մարդը տարբերվում Կլամմի մասին ունեցած սովորական պատկերացումից, նա չի կարողանա պատասխանել, ավելի շուտ, նա կպատասխանի ու կնկարագրի դղյակի պաշտոնյային, իսկ նկարագրությունը ճիշտ և ճիշտ կհամապատասխանի Կլամմի՝ մեր գիտեցած նկարագրությանը։ «Իսկ հիմա ինչո՞ւ ես կասկածում, Բարնաբաս, ինչո՞ւ ես տանջում քեզ»։ Հարցնում եմ ես. Բարնաբասը ակնհայտ ընկճվածությամբ սկսում է թվարկել դղյակի պաշտոնյայի առանձնահատկությունները, սակայն թվում է, թե նա ավելի շուտ հնարում է, քան նկարագրում, և որ դրանք, ամեն ինչից բացի, անկարևոր բաներ են։ Օրինակ, նա նկարագրում է գլուխը կախելու յուրահատուկ ձևը կամ չկոճկված ժիլետը, այնպես որ անհնար է դրանք լուրջ ընդունել։ Ինձ ավելի կարևոր է թվում այն, թե ինչպես է Կլամմը խոսում Բարնաբասի հետ։ Բարնաբասը հաճախ է նկարագրել ինձ, նույնիսկ դծագրել է. Բարնաբասին սովորաբար մի մեծ գրասենյակ են տանում, սակայն դա Կլամմի գրասենյակը չէ և, ընդհան-

www.a-pdf.com

բապես, ստույգ որևէ մեկին չի պատկանում։ Այդ սենյակը մի պատից մյուսին հասնող մեծ, ամբիոնաձև գրասեղանով, երկարությամբ երկու մասի է բաժանվում. նեղ մասի, ուր երկու մարդ հազիվ են կարողանում կողք-կողքի անցնել. սա պաշտոնյաների հատվածն է, և լայն մասի, որ այցելուների, դիտորդների, ծառաների ու նամակատարների բաժինն է։ Գրասեղանի վրա, իրար կողք-կողքի, մեծ-մեծ գրքեր են բացված-դրված, դրանց մեծ մասի մոտ պաշտոնյաներ են կանգնած ու կարդում են։ Սակայն նրանք շարունակ նույն գրքի մոտ չեն մնում և ոչ թե գրքերն են փոխանակում, այլ՝ տեղերը։ Բարնաբասի համար ամենազարմանալին այն է, թե ինչպես են նրանք տեղերը փոխանակելիս սրահի նեղության պատճառով սեղմվում իրար կողքով անցնելիս։ Դիմացը՝ գրասեղանին մոտիկ, ցածրիկ, փոքր սեղանների մոտ նստած են գրագիրները, և երբ պաշտոնյաները ցանկանում են, նրանք գրառում են պաշտոնյաների թելադրածը։ Բարնաբասը շարունակ զարմանում է, թե ինչպես է դա կատարվում։ Պաշտոնյան որոշակի ոչինչ չի հրամայում, ոչ էլ բարձրաձայն է թելադրում, հազիվ է կարելի նկատել, թե նա թելադրում է, ավելի շուտ թվում է, թե պաշտոնյան առաջվա պես ընթերցում է, այն տարբերությամբ միայն, որ միաժամանակ նաև շշնջում է, իսկ գրագիրը ականջ է դնում։ Հաճախ պաշտոնյան այնքան ցածր է թելադրում, որ գրագիրը նստած տեղից հազիվ է կարողանում լսել. այդպիսի դեպքերում նա ստիպված է լինում շարունակ վեր ցատկել, թելադրված բառը որսալ, արագ նստել ու գրի առնել, հետո նորից ցատկել, ու այդպես շարունակ։ Ինչքան տարօրինակ է, գրեթե անհասկանալի։ Բարնաբասը, իհարկե, բավական ժամանակ ունի այդ ամենը զննելու համար, որովհետև այնտեղ՝ այցելուների սրահում, ժամեր ու նույնիսկ օրեր է կանգնում, մինչև Կլամմը նկատում է նրան։ Եթե Կլամմը նրան տեսնի էլ, իսկ Բարնաբասը զգաստ կանգնի, դա դեռ ոչինչ չի նշանակի, որովհետև Կլամմը կարող է նորից գրքի կողմը շուռ գալ ու մոռացության մատնել նրան. հաճախ է այդպես պատահում։ Ուրեմն էլ ինչ երևելի բան է նամակատարի ծառայությունը, եթե այդքան անկարևոր է։ Իմ սիրտը ճմլվում է, երբ Բարնաբասն առավոտներն ասում է, թե դրդ-

www.a-pdf.com

յակ է գնալու։ Այդ, հավանաբար, բոլորովին անօգուտ անցած ճանապարհը, այդ կորսված օրը, իզուր հույսերը, ո՞ւմ է պետք այդ ամենը։ Մինչդեռ այստեղ գործը կուտակվում է, իսկ Բրունվիկը ստիպում է վերջացնել այն։

— Դե լավ, ասենք թե Բարնաբասը երկար է սպասում, մինչև որ հանձնարարություն է ստանում։ Հասկանալի է։ Այստեղ երևի պաշտոնյաների ավելորդ քանակություն կա և ոչ ամեն մեկն է կարող ամեն օր հանձնարարություն ստանալ։ Սակայն դուք չպետք է գանգատվեք. հավանաբար բոլոր բանբերների հետ է նման բան պատահում։ Ի վերջո, Բարնաբասն էլ է հանձնարարություն ստանում. անձամբ ինձ նա արդեն երկու նամակ է բերել։

— Իհարկե, հնարավոր է, որ մենք իրավացի չենք մեր գանգատներում։ Առավել ևս ես, որ այդ գործերին միայն լսած տեղեկություններով եմ ծանոթ և, որպես աղջիկ, այնքան էլ լավ գլուխ չեմ հանում դրանցից, ինչպես Բարնաբասը, որ երբեմն որոշ բաներ թաքցնում է ինձնից։ Իսկ հիմա լսիր, թե ինչ է լինում նամակների հետ, օրինակ՝ քեզ հասցեագրված նամակների։ Դրանք նա անմիջապես Կլամմից չի ստանում, այլ՝ գրագրից։ Միևնույն է, թե որ օրը, միևնույն է, թե որ ժամին գրագիրը հանկարծ հիշում է նրան և նշան անում. դա է պատճառը, որ ծառայությունը, ինչքան էլ որ այն հեշտ է թվում, շատ հոգնեցուցիչ է, որովհետև Բարնաբասն ստիպված է լինում շատ երկար սպասել։ Թվում է, թե Կլամմը երբեք նման կարգադրություն չի արել. նա հանդիստ կարդում է իր գիրքը, երբեմն սրբում է պենսնեն։ Բայց նա հաճախ է սրբում պենսնեն. երբ Բարնաբասը գալիս է, նա միշտ պենսնեն է սրբում։ Այդ անելիս, հավանաբար, Բարնաբասին է նայում, եթե, իհարկե, առանց պենսնե տեսնում է ընդհանրապես։ Բարնաբասը դրան չի հավատում, որովհետև Կլամմի աչքերը համարյա փակ են, նա կարծես քնած է և միայն երազի մեջ է պենսնեն սրբում։ Այդ ընթացքում գրագիրը սեղանի տակ դրված բազմաթիվ թղթակցությունների ու փաստաթղթերի միջից քեզ հասցեագրված մի նամակ է հանում, որ ուրեմն, քիչ առաջ չի գրվել, այլ՝ ծրարի տեսքից դատելով, շատ հին նամակ է և արդեն երկար

www.a-pdf.com

ժամանակ է ընկած եղել այնտեղ։ Իսկ եթե հին նամակ է, ինչո՞ւ են Բարնաբասին այդքան ժամանակ սպասեցնել տալիս։ Իհարկե, նաև քեզ ու, ի վերջո, նամակն էլ են ուշացնում. այժմ այն, հավանաբար, արդեն հնացած է։ Այդպես նրանք Բարնաբասի անունն են հանում, թե վատ, դանդաղաշարժ նամակատար է։ Գրագիրը, համենայնդեպս, հեշտացնում է իր գործը, նամակը տալիս է Բարնաբասին ու ասում. «Կլամմից է, Բարնաբասի համար է»։ Դրանից հետո Բարնաբասն ազատ է։ Դրանից հետո, վերջապես ձեռք գցած նամակը վերնաշապկի տակ՝ մերկ մարմնին դրած, նա շընչակտուր տուն է շտապում, և մենք՝ ինչպես հիմա, նստում ենք այս նստարանին, ու նա պատմում է, հետո մանրամասն քննարկում ենք ամեն ինչ, գնահատում, թե ինչ է ձեռք բերել, և վերջում գտնում, որ ձեռք բերվածը շատ քիչ է, որ այդ շատ քիչն էլ հարցական է, իսկ Բարնաբասը մի կողմ է դնում նամակն ու բոլորովին տրամադրություն չի ունենում հասցեատիրոջը հասցնել այն, նույնիսկ քնելու ցանկություն չի ունենում, ձեռքն է առնում կոշկակարի գործն ու ամբողջ գիշերն անց է կացնում աթոռակին նստած։ Այդպես է, Կ., և սրանք են իմ գաղտնիքները։ Այժմ դու բնավ չես զարմանում հավանաբար, որ Ամալյան ոչինչ չի ուզում իմանալ դրանց մասին։

— Իսկ նամա՞կը,— հարցրեց Կ-ն։

— Նամակը։ Որոշ ժամանակ անց, երբ ես բավականաչափ ճնշում եմ գործադրում, ի դեպ, այդ ընթացքում կարող են օրեր ու շաբաթներ անցնել, նա վերցնում է նամակն ու գնում տեղ հասցնելու։ Նման հարցերում նա, ախր, շատ է կախված ինձնից։ Ես, օրինակ, կարող եմ նրա պատմածի թողած առաջին տպավորությունը հաղթահարելուց հետո կրկին տիրապետել ինձ, մի բան, ինչի նա ընդունակ չէ հավանաբար այն պատճառով, որ ինձնից ավելի շատ բան գիտե։ Դրանից բացի, ես միշտ կարող եմ ասել նրան. «Իսկապես, ի՞նչ է քո ուզածը, Բարնաբաս, ի՞նչ նպատակ ունես, ի՞նչ առաջընթացի մասին ես երազում։ Գուցե ուզում ես հասնել այն բանին, որ ամբողջովին լքե՞ս թե՛ մեզ, թե՛ ինձ։ Ի՞նչ է, դա՞ է քո նպատակը։ Գուցե չպե՞տք է այդպես մտածել, բայց, ախր, ընդհանրապես պարզ չէ, թե ինչո՞ւ ես

արդեն ձեռք բերածից այդ աստիճան դժգոհ։ Մի՞ շուրջդ նայիր։ Մի՞թե մեր հարևաններից մեկնումեկը քո չափ հաջողություններ ունի։ Իհարկե, նրանց դրությունն այլ է, քան մերը, նրանք իրենց տնտեսություններից դուրս ուրիշ ոչ մի բանի մասին մտածելու պատճառ չունեն, բայց, ախր, կարելի է առանց համեմատելու էլ հասկանալ, որ քեզ մոտ ամեն ինչ հիանալի է ընթանում։ Խոչընդոտներ կան, անորոշություններ, հիասթափություններ, բայց մենք, ախր, վաղօրոք իմացել ենք, որ քեզ ոչինչ նվեր չի տրվի, որ յուրաքանչյուր մանրուք ավելի շուտ դու ինքդ պետք է հաղթահարես, իսկ դա ևս մի պատճառ է ավելորդ անգամ հպարտ և ոչ թե ընկճված լինելու համար։ Եվ հետո, չէ՞ որ դու հանուն մեզ էլ ես պայքարում։ Քեզ համար դա ոչինչ չի՞ նշանակում, ոչ մի նոր լիցք չի՞ հաղորդում քեզ։ Իսկ որ ես երջանիկ եմ, համարյա գոռոզանում եմ քեզ պես եղբայր ունենալու համար, այդ բանը քեզ վստահություն չի՞ հաղորդում։ Ազնիվ խոսք, դու հիասթափեցնում ես ինձ, բայց ոչ այն հարցում, թե ինչ ձեռքբերումներ ունես դղյակում, այլ՝ թե ինչ արդյունքների եմ ես հասել քեզ համար։ Դու դղյակ մտնելու իրավունք ունես, գրասենյակների մշտական այցելուն ես, ամբողջ օրեր ես անցկացնում Կլամմի հետ նույն սենյակում, պաշտոնապես ճանաչում ստացած նամակատար ես, կարող ես հավակնել համազգեստ ստանալու, տեղ հասցնելու համար կարևոր գրություններ ես ստանում, այս ամենը դու ես, քեզ է թույլատրվում սրանք և ներքև գալուց փոխանակ ուրախությունից լաց լինելով գրկենք իրար, ինձ տեսնելիս արիությունդ կարծես լքում է քեզ, դու կասկածում ես ամեն ինչին, միայն կոշկակարի աշխատանքն է գրավում քեզ, իսկ նամակը՝ մեր ապագայի երաշխիքը, թողնում ես այստեղ ընկած»։ Ես այսպես եմ խոսում նրա հետ, և, երբ օրուգիշեր կրկնում եմ խոսքերս, նա հառաչելով վերցնում է նամակն ու գնում։ Բայց, հավանաբար, բոլորովին էլ ոչ իմ խոսքերի ազդեցությունն է նամակը տանելու պատճառը, այլ այն, որ դղյակը նորից կանչում է նրան, իսկ առանց հանձնարարությունը կատարելու նա երևի թե չհամարձակվի այնտեղ գնալ։

— Բայց դու, ախր, իրավացի ես նրան ասված ամեն ին-

www.a-pdf.com

չում։ Զարմանք հարուցելու աստիճան ճիշտ ընդհանրացումներ ես անում։ Զարմանալի պարզ մտածողություն ունես դու։

— Ոչ, դու սխալվում ես և երևի նույն ձևով էլ ես եմ նրան սխալեցնում,— ասաց Օլգան։— Ինչի՞ է հասել նա։ Նա կարող է գրասենյակ մտնել, բայց բոլորովին էլ չի թվում, թե դա գրասենյակ է. ավելի շուտ գրասենյակների նախասենյակի է նման և գուցե հենց այդ է։ Մի սենյակ, ուր մտնում են գրասենյակները մտնելու իրավունք չունեցողները։ Նա խոսում է Կլամմի հետ, բայց արդյո՞ք դա Կլամմն է, արդյո՞ք ավելի շուտ մեկը չէ, որ շատ է նման Կլամմին։ Գուցե Կլամմին նմանվող քարտուղար է, որ ջանք է թափում ավելի նմանվել նրան և հետո լուրջ տեսք է ընդունում Կլամմի քնատ, երազկոտ շարժումները նմանակելով։ Կլամմի էության այս մասը [illegible]ակելը ամենահեշտ բանն է. շատերն են փորձում անել դա, իսկ էության մնացած մասը նմանակելուց նրանք զգուշորեն ձեռնպահ են մնում։ Եվ Կլամմը, ում մարդիկ այդքան շատ են ձգտում տեսնել և ում շատ հազվադեպ են հանդիպում, նրանց պատկերացումներում տարբեր ձևերով է հանդես գալիս։ Օրինակ, Կլամմը գյուղում Մոմուս անունով մի քարտուղար ունի։ Իսկապե՞ս։ Դու ճանաչո՞ւմ ես նրան։ Նա էլ է ձգտում մարդկանցից հեռու մնալ, բայց ես արդեն մի քանի անգամ տեսել եմ նրան։ Զահել, ուժեղ պարոն է, չէ՞, և, իհարկե, բոլորովին էլ նման չէ Կլամմին։ Բայց դու կարող ես գյուղում մարդկանց հանդիպել, որոնք կերդվեն, թե Մոմուսը նույն Կլամմն է, և վերջ։ Այդպես նրանք ձգտում են իրենք իրենց մոլորեցնել։ Իսկ մի՞թե դղյակում այլ կերպ է։ Ինչ-որ մեկն ասել է Բարնաբասին, թե այն պաշտոնյան Կլամմն է, և իրոք, երկուսի միջև նմանություն կա, բայց այդ նմանությունը շարունակ հարուցում է Բարնաբասի կասկածը, իսկ բոլոր փաստարկները նրա կասկածների օգտին են խոսում։ Մի՞թե Կլամմը մատիտը ականջի հետևը դրած կկանգներ ընդհանուր սրահում հրմշտվող մյուս պաշտոնյաների մեջ։ Ախր դա չափից դուրս անհավանական է։ Բարնաբասը սովորություն ունի երբեմն երեխայավարի (իսկ դա ինձ ավելի շուտ համառություն է թվում) ասել, թե պաշտոնյան շատ է նման Կլամմին, եթե նա սեփական գրասենյակում, իր գրասեղանի մոտ նստած

www.a-pdf.com

լիներ, դռան վրա էլ իր անունը գրված լիներ, ես այլևս չէի կասկածի։ Երեխայավարի է ասված, բայց և հասկանալի է։ Իմիջիայլոց, շատ ավելի հասկանալի կլիներ, եթե Բարնաբասը դղյակում եղած ժամանակ շատ մարդկանց հարցուփորձ աներ, թե ինչն-ինչոց է. ըստ նրա պատմածների, բավական շատ մարդիկ են կանգնած լինում սենյակում։ Եթե նրանց ասածներն անգամ ավելի արժանահավատ չլինեին այն մարդու խոսքերից, ով առանց հարցնելու Բարնաբասին ցույց էր տվել Կլամմին, ապա նրանց ասածներից կարելի էր կառչելու ինչ-որ տեղ գտնել կամ կարծիքները համեմատել։ Ես չեմ մտածել դա, այլ Բարնաբասը, բայց նա չի համարձակվում իրականացնել իր ծրագիրը, վախենում է, թե կարող է իրեն ոչ լավ ծանոթ հրահանգների անցանկալի խախտման հետևանքով կորցնել իր տեղը, չի համարձակվում դիմել որևէ մեկին, այնքան անվստահ է զգում իրեն, և հենց այս, իսկապես ցավագին անվստահությունն ինձ ավելի պարզ պատկերացում է տալիս նրա վիճակի մասին, քան բոլոր նկարագրությունները միասին։ Այնտեղ նրան ինչքան կասկածելի ու սպառնալից պետք է թվա ամեն ինչ, որ նույնիսկ մի անգամ մի անմեղ հարց տալու համար նա չի համարձակվում բերանը բացել։ Երբ պատկերացնում եմ, մեղադրում եմ ինձ, որ թողել եմ նրան միայնակ գնալ այդ անծանոթ սենյակները, ուր դրությունն այնպիսին է, որ, նույնիսկ, նա, ով ավելի շուտ արիասիրտ է, քան՝ վախկոտ, այնտեղ, հավանաբար, դողում է վախից։

— Իմ կարծիքով, այստեղ դու ամենակարևոր բանին ես անդրադառնում,— ասաց Կ-ն։— Այդ է, որ կա։ Այն ամենից հետո, ինչ պատմեցիր, ինձ թվում է, թե հասկանում եմ ամեն ինչ։ Բանբեր դառնալու համար Բարնաբասը շատ ջահել է, նրա պատմածներից պարզապես ոչինչ հնարավոր չէ լուրջ ընդունել։ Քանի որ նա այնտեղ՝ վերևում, դողում է վախից, ապա չի կարող ուշադիր լինել, ու երբ մարդ այստեղ նրան ստիպում է նորություններ հայտնել, շիլաշփոթ հեքիաթներ է լսում։ Դա չի զարմացնում ինձ։ Իշխանության հանդեպ ունեցած պատկառանքը ձեզ մոտ ի ծնե է, դրանից բացի ձեր ողջ կյանքի ընթացքում ամենատարբեր ձևերով,

www.a-pdf.com

ամենատարբեր միջոցներով ներազդում են ձեզ վրա, այնպես որ վերջում ինքներդ ինչքան կարող եք օժանդակում եք։ Ըստ էության, ես առարկելու բան չունեմ։ Եթե իշխանությունը լավն է, ինչո՞ւ չպետք է նրա հանդեպ պատկառանք ունենալ։ Միայն թե չի կարելի Բարնաբասի նման անփորձ պատանուն, որ իրենց գյուղի տարածքից այն կողմ չի անցել, միանգամից դղյակ ուղարկել, հետո նրանից արժանահավատ լուրեր պահանջել, նրա ասածներից ամեն մեկը որպես անկեղծ խոսք քննարկել ու դրանց մեկնաբանության հետ կապել սեփական բախտը։ Դրանից ավելի մեծ սխալ չի կարող լինել։ Իհարկե, ես էլ եմ քեզ պես թույլ տվել, որ նա մոլորեցնի ինձ, նրա հետ հույս եմ կապել, նրա պատճառով հիասթափություն եր էրել. երկու դեպքում էլ նրա խոսքերն եմ հիմք ընդունել, այսինքն՝ իմ հույսերը բոլորովին անհիմն են եղել։— Օլգան լռում էր և Կ-ն շարունակեց.— Ինձ համար հեշտ չի լինի համոզել քեզ, որ եղբորդ հանդեպ ունեցած վստահությունը անհիմն է, որովհետև տեսնում եմ, թե ինչքան ես սիրում նրան ու ինչեր ես ակնկալում նրանից։ Սակայն պետք է այդ բանն անեմ, և բնավ ոչ քո սիրո ու ակնկալիքների պատճառով։ Ախր, տես, ես չգիտեմ, թե ինչը, բայց քեզ շարունակ ինչ-որ բան խանգարում է ամբողջապես նկատել այն, ինչին Բարնաբասը ոչ թե հասել է, այլ ինչ որպես պարգև է տրվել նրան։ Նրան թույլատրվում է գրասենյակները կամ, եթե ուզում ես, նախասենյակները մտնել։ Կարճ ասած, դրանք նախասենյակներ են, բայց այնտեղ դռներ կան, որ առաջ են տանում և խոշընդոտներ, որ կարելի է հաղթահարել, եթե մարդ ճարպկություն ունենա։ Ինձ համար, օրինակ, գոնե առայժմ այդ նախասենյակն անմատչելի է ընդհանրապես։ Չգիտեմ, թե Բարնաբասն այնտեղ ում հետ է խոսում. գուցե այնտեղ նստած գրագիրն ամենահետին ծառան է, բայց եթե նույնիսկ ամենավերջինն էլ լինի, կարող է հաջորդ՝ ավելի բարձր դիրք ունեցող ծառայի կողմը տանել, եթե չտանի էլ, ապա կարող է առնվազն նրա անունն ասել, և եթե անունը տալ էլ չկարողանա, կարող է մեկին ցույց տալ, որն էլ կասի անհրաժեշտ անունը։ Թո՛ղ ենթադրյալ Կլամմը իսկականի հետ ամենաչնչին ընդհանուր բանն իսկ չունենա, նմանությունը թո՛ղ որ միայն Բարնա-

www.a-pdf.com

բասի հուզմունքից խավարած աչքերի համար գոյություն ունենա, թո՛ղ դիմացինը պաշտոնյաների մեջ ամենավերջինը լինի, թո՛ղ որ բոլորովին պաշտոնյա չլինի, բայց նա այդ ամբիոնի մոտ ինչ-որ անելիք ունի, ինչ-որ բան կարդում է իր մեծ գրքի միջից, գրագրին ինչ-որ բան է շշնջում, ինչ-որ բան մտածում է, երբ այդ ամբողջ ժամանակ մի անգամ Բարնաբասին է գցում հայացքը և, անգամ, եթե այս ամենը ճիշտ չէ, և նա ու նրա շարժումները ոչինչ չեն նշանակում, ապա միևնույն է, մեկնումեկը նրան կանգնեցրել է այդտեղ և այդ բանն արել է ինչ-որ մտադրությամբ։ Այս ամենով ես ուզում եմ ասել, որ ինչ-որ բան կա այնտեղ, Բարնաբասին ինչ-որ բան տրամադրված է, թեկուզև ինչ-որ բան, և միայն Բարնաբասն է մեղավոր, որ կասկածից, հուսակտուրությունից ու վախից բացի ուրիշ ոչ մի բանի չի կարող հասնել։ Այսպես խոսելիս ես ամենաանպաստ վիճակն եմ հիմք ընդունում, որ նույնպես շատ անհավանական է, որովհետև ինձ մոտ են Կլամմի նամակները, որոնց ես թեև շատ չեմ վստահում, բայց Բարնաբասի ասածներից ավելի վստահելի են։ Սրանք թեկուզ հին, արժեքը կորցրած նամակներ լինեն, արժեք չներկայացնող նամակների կույտից առանց ընտրության ու առանց հասկանալու վերցված ճիշտ այնպես, ինչպես տոնավաճառների շուկաներում դեղձանիկն է ծալծլված թղթերի կույտի միջից «երջանիկ» տոմսակը քաշում ցանկացած մեկի համար։ Թեկուզ այդպես էլ լինի, միևնույն է, այս նամակները ինչ-որ առնչություն ունեն իմ աշխատանքի հետ, նրանք ինձ են հասցեագրված, եթե անգամ նրանցից ոչ մի օգուտ էլ չունենամ, և, ինչպես համայնքի նախագահն ու նրա կինն էին վկայում, գրվել են Կլամմի ձեռքով, ու թեև մասնավոր նշանակության ու պակաս հասկանալի նամակներ են, բայց սրանց արժեքը մեծ է։

— Համայնքի նախագա՞հն է դա ասել,— հարցրեց Օլգան։

— Այո, նա։

— Ես Բարնաբասին կպատմեմ, դա նրան շատ կուրախացնի,— արագ վրա բերեց Օլգան։

— Ախր նրան ուրախացնել պետք չէ։ Նրան ոգևորել, նշանակում է ասել, թե նա իրավացի է, թե պետք է շարունակի այնպես, ինչպես մինչև այժմ է եղել, բայց հենց

www.a-pdf.com

այդպես նա երբեք ոչնչի չի հասնի։ Նույն ձևով դու կարող ես ոգևորել աչքերը կապած որևէ մեկին, որ փորձի նայել կտորի միջից, բայց, ախր, նա ոչինչ չի տեսնի և կկարողանա տեսնել միայն, եթե թաշկինակը նրա դեմքից վերցնես։ Բարնաբասին օգնել է պետք և ոչ թե ոգևորել։ Պատկերացրու միայն. այնտեղ՝ վերևում, իշխանությունն է իր ծայրաստիճան խճճված ահագնությամբ (մինչև այստեղ գալս ինձ թվում էր, թե մոտավոր պատկերացումներ ունեմ նրա մասին. ինչքան երեխայավարի էի մտածում), ուրեմն, այնտեղ իշխանություններն են, իսկ Բարնաբասը նրանց հետ է շփվում, նրանցից բացի ուրիշ ոչ ոք չկա, նա այն աստիճան մենակ է, որ նրան կարելի է կարեկցել, և դա մեծ պատիվ կլինի նրա համար, եթե նա իր ողջ կյանքը չմնա գրասենյակի մի մութ անկյունում մոռացության մատնված ու կուչ եկած։

— Կ., մի կարծիր, թե մենք թերագնահատում ենք Բարնաբասի ստանձնած հանձնարարության ծանրությունը, իսկ իշխանության հանդեպ պատկառանքի զգացման պակաս մենք չունենք. ինքդ ասացիր։

— Բայց դա մոլորության մատնող պատկառանք է, պատկառանք ոչ ճիշտ տեղում։ Դա արժեզրկում է ձեր զգացմունքը։ Արդյոք կարելի՞ է պատկառանք համարել այն, որ Բարնաբասը գրասենյակ մուտք գործելու պարգևը շարաշահում է այնտեղ օրերն անգործ անցկացնելով, կա՛մ որ գյուղ է իջնում և կասկածելի ու նսեմացված ներկայացնում նրանց, ում առաջ կանգնած դողացել է քիչ առաջ, կա՛մ որ հոդնածության ու երկմտանքի պատճառով նամակներն անմիջապես տեղ չի հասցնում և իրեն վստահված տեղեկություններն անմիջապես չի ներկայացնում։ Ախր, սա այլևս պատկառանք չէ, քիչ է միայն նրան նախատելը, դրանից քեզ էլ է բաժին հասնում, Օլգա։ Ես քեզ չեմ կարող զերծ պահել նախատինքից։ Թեև դու կարծում ես, թե պատկառանք ունես իշխանությունների հանդեպ, սակայն Բարնաբասի տարիքը, թուլությունն ու անօգնականությունը անտեսելով, նրանց մոտ ես ուղարկել նրան կամ գոնե հետ չես պահել այդ քայլից։

— Այդ նույն նախատինքը ես էլ եմ, ով գիտե երբվանից,

www.a-pdf.com

տալիս ինձ։ Համենայնդեպս, ոչ Բարնաբասին դղյակ ուղարկելու համար է պետք նախատել ինձ։ Ես չեմ նրան ուղարկել, նա ինքնակամ է գնացել, բայց ես պետք է բոլոր միջոցներով՝ ուժով, խորամանկությամբ համոզելով նրան հետ պահած լինեի։ Ես պետք է նրան հետ պահած լինեի, բայց եթե այսօր այն օրը լիներ, այն բախտորոշ օրը, և ես թե՛ Բարնաբասի, թե՛ մեր ընտանիքի մյուս անդամների հոգսերը նույն հստակությամբ պատկերացնեի, ինչպես այն ժամանակ, և եթե այսօր Բարնաբասը ամբողջ պատասխանատվությունն ու վտանգը գիտակցելով, ժպտադեմ հեռանար իմ մոտից ու գնար, ես նրան այսօր էլ՝ անկախ այս միջընկա ժամանակահատվածում ձեռք բերված փորձից, հետ չէի պահի, և կարծում եմ, որ եթե դու էլ իմ տեղը լինեիր, չէիր կարողանա այլ կերպ վարվել։ Դու չգիտես մեր վիճակը, և այդ պատճառով մեր՝ ամենից առաջ Բարնաբասի հանդեպ, անիրավացի ես։ Այն ժամանակ մենք ավելի շատ էինք հույս փայփայում, քան այժմ, սակայն մեր հույսն այն օրերին էլ մեծ չէր, միայն մեզ տանջող հոգսն էր մեծ ու այդպես մեծ էլ մնաց։ Մի՞թե Ֆրիդան քեզ ոչինչ չի պատմել մեր մասին։

— Ակնարկել է, որոշակի ոչինչ չի ասել։ Միայն ձեր անունը գրգռում էր նրան։

— Իջևանատիրուհի՞ն էլ ոչինչ չի պատմել։

— Ոչ, ոչինչ։

— Ընդհանրապե՞ս ոչ ոք։

— Ոչ ոք։

— Իհարկե, ինչպե՞ս կարող էր ինչ-որ մեկը որևէ բան պատմել։ Ամեն մեկն ինչ-որ բան գիտե մեր մասին, կա՛մ ճշմարտությունը, ինչքանով որ դա մատչելի է մարդկանց, կա՛մ այստեղ-այնտեղ իմացած ու մեծ մասամբ նույնիսկ հնարած որևէ մի լուր, և ամեն ոք ավելի շատ է մտածում մեր մասին, քան անհրաժեշտ է, սակայն ուղղակի պատմելը ոչ մեկի գործը չէ. այդպիսի բաների մասին բերան բացելուց նրանք վախենում են և իրավացի են։ Նույնիսկ քո նակությամբ, Կ., դժվար է եղածը պատմել, որովհետև հնարավոր է, որ ամեն ինչ իմանալուց հետո հեռանաս ու չուզենաս այլևս որևէ բան լսել մեր մասին. թեև դժվար թե

www.a-pdf.com

այդպիսի բան անես։ Այդ դեպքում մենք կկորցնենք քեզ։ Մինչդեռ դու, խոստովանում եմ, ինձ համար այս պահին ավելին արժես, քան Բարնաբասի մինչայժմյան ծառայությունը դղյակում։ Դու պարտավոր ես իմանալ (ողջ երեկոյի ընթացքում այս հակասությունը տանջում է ինձ), թե չէ ոչ մի պատկերացում չես ունենա մեր դրության մասին և անարդարացի կլինես Բարնաբասի հանդեպ, իսկ դա անտանելի ցավ կպատճառի ինձ, կպակասի մեզ այդքան անհրաժեշտ, կատարյալ միասնությունը, դու ո՛չ կկարողանաս օգնել մեզ, ո՛չ էլ ընդունել մեր օգնությունը։ Բայց դեռ մի հարց էլ է մնում. ընդհանրապես կուզե՞ս իմանալ, թե ոչ։

— Ինչո՞ւ ես հարցնում։ Եթե անհրաժեշտ է, կուզեմ իմանալ, բայց ինչու՞ ես այդ տոնով հարցնում։

— Սնահավատության պատճառով։ Դու կներքաշվես մեր պատմության մեջ, թեև անմեղ ես, ոչ ավելի մեղավոր, քան Բարնաբասը։

— Պատմիր անմիջապես։ Ես չեմ վախենում։ Քո կանացի վախվորածությամբ դու ավելի ես վատացնում վիճակը, քան է իրականում։

ԱՄԱԼՅԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ

— Ինքդ դատիր, թեև ամեն ինչ պարզ է, բայց հնարավոր չէ անմիջապես հասկանալ, թե ինչպես կարող էր դա այդպիսի մեծ նշանակություն ունենալ,— սկսեց Օլգան։— Դղյակում Սորտինի ազգանունով մի մեծ պաշտոնյա կա։

— Նրա մասին ես լսել եմ արդեն։ Ինձ այստեղ կանչելուն նա էլ է առնչվում։

— Չեմ կարծում։ Սորտինին հազիվ է երևում հասարակության մեջ։ Արդյոք դու չե՞ս շփոթում Սորդինիի հետ. «դ»-ով գրվող էլ կա։

— Ճիշտ որ, նա Սորդինին էր։

— Այո։ Սորդինին շատ ճանաչված է, ամենաջանասեր պաշտոնյաներից մեկն է և նրա մասին շատ են խոսում։ Դրան հակառակ, Սորտինին շատ է մեկուսացած, ու մարդկանց մեծ մասը նրան չի ճանաչում։ Ավելի քան երեք տարի

առաջ ես նրան առաջին ու վերջին անգամ տեսա։ Դա հուլիսի երեքին էր, հրշեջ խմբի տոնի օրը։ Դղյակն էլ էր մասնակցում տոնին ու մի նոր հրշեջ պոմպ էր նվիրել։ Սորտինին, որ մասամբ էր հրշեջ գործերով զբաղվում (գուցե նա պարզապես պատվիրակության մեջ էր, մեծ մասամբ պաշտոնյաները մեկընդմեջ փոխարինում են իրար, այդ պատճառով դժվար է իմանալ, թե այս կամ այն պաշտոնյան որ հարցերում է իրավասու), ևս մասնակցեց պոմպի հանձնման արարողությանը։ Դղյակից շատերն էին եկել. պաշտոնյաներն իրենց ծառաների հետ, իսկ Սորտինին՝ իր բնավորության համաձայն, ընդհանրապես ձգտում էր մնալ աննկատ։ Նա փոքրակազմ, թույլ, շարունակ մտքերի մեջ թաղված մի պարոն էր, և այն, ինչ նրան նկատողների աչքին էր ընկնում առաջին հերթին, նրա ճակատի կնճիռների ձևն էր. բոլոր կնճիռները, իսկ դրանք շատ էին, թեև նա հաստատ քառասունից մեծ չէր լինի, ճակատի վրայով հովհարաձև ձգվում էին մինչև քթարմատը։ Նման բան ես երբեք չէի տեսել։

Ուրեմն, այդ տոնն էր, մենք՝ Ամալյան ու ես, արդեն մի քանի շաբաթ առաջ սկսել էինք պատրաստվել դրան, վերաձևել էինք մեր կիրակնօրյա զգեստները։ Հատկապես Ամալյայի զգեստն էր գեղեցիկ. սպիտակ վերնաշապիկը կրծքի մոտ բարձր, փքված էր նստում, ժանյակների մի շարքը իջնում էր մյուսի վրա, մայրիկը տրամադրել էր իր բոլոր ժանյակները։ Այն ժամանակ ես շատ էի նախանձում Ամալյային և տոնի նախօրյակի գիշերվա կեսը լաց լինելով անցկացրի։ Միայն երբ առավոտյան մեզ այցելեց կամրջի մոտի իջևանատան տիրուհին...

— Կամրջի մոտի իջևանատիրուհի՞ն,— հարցրեց Կ-ն։

— Այո։ Նա շատ էր մտերիմ մեզ հետ։ Ուրեմն, նա եկավ, համաձայնեց, որ Ամալյան տեսքով գերազանցում է ինձ և հանգստացնելու համար ինձ տվեց բոհեմական նոնաքարից պատրաստված իր մանյակը։ Երբ մենք արդեն դուրս էինք գալիս, Ամալյան կանգնեց իմ դիմաց, բոլորս հիացանք նրանով, իսկ հայրս ասաց. «Հիշեք իմ խոսքը։ Այսօր Ամալյայի համար մի փեսացու կհայտնվի»։ Այդ պահին ես, չգիտեմ ինչու, հանեցի մանյակը, որով հպարտանում էի

www.a-pdf.com

այդքան, ու, այլևս առանց նախանձ զգալու, զգեցի Ամալյայի վիզը։ Ես խոնարհվեցի նրա հաղթանակի առաջ, մտածեցի, որ ամեն ոք պետք է նրա առաջ խոնարհվի։ Այն օրը մեզ զուցե անակնկալի բերեց այն հանգամանքը, որ նրա տեսքն անսովոր էր։ Իրականում նա գեղեցիկ չէր, սակայն նրա շոր հայացքը, որ նա այդ ժամանակվանից սկսած ձեռք բերեց, սահում էր ինչ-որ տեղ՝ մեր գլխավերևում, և մարդիկ, իրոք, ակամայից խոնարհվում էին նրա առաջ։ Բոլորը նկատեցին դա, նաև մեզ տանելու եկած Լազեմանն ու նրա կինը։

— Լազեմա՞նը։

— Այո։ Մեզ, ախր, շատ էին հարգում և տոնն, օրինակ, առանց մեր ներկայության դժվար թե սկսվեր, որովհետև հայրս խմբի վարժությունների երրորդ ղեկավարն էր։

— Ուրեմն հայրդ այդքան առո՞ւյգ տղամարդ էր։

— Հա՞յրս,— հարցը կարծես ճիշտ չհասկանալով, կրկնեց Ելգան։— Երեք տարի առաջ նա համեմատաբար չահել էր։ Պաշտոնյաներից մեկին, օրինակ, ծանրամարմին Գալատերին, հյուրանոցի հրդեհի ժամանակ նա՝ մեջքին առած, վազքով էր հանել շենքից։ Ես ինքս եմ տեսել դա։ Իրականում հրդեհի վտանգ չկար, միայն վառարանի մոտի շոր փայտն էր սկսել ծխալ, սակայն Գալատերը վախեցել էր, պատուհանից օգնություն կանչել, հրշեջ խումբը եկել էր, ու, թեև կրակն արդեն հանգցվել էր, հայրս դուրս էր հանել նրան։ Դե, Գալատերը ծանրաշարժ է և նման դեպքերում պետք է զգույշ լինի։ Ես սա միայն հորս վերաբերյալ քո տված հարցի պատճառով պատմեցի. այն ժամանակվանից երեք տարուց շատ չի անցել, բայց տես, թե հիմա նա ինչպես է նստած այնտեղ։

Միայն այժմ Կ-ն նկատեց, որ Ամալյան նորից վերադարձել է սենյակ, բայց բավական հեռու էր կանգնած վառարանից. ծնողների մոտ էր, կերակրում էր մորը, որ չէր կարողանում շարժել ռևմատիկ ձեռքերը և միաժամանակ հորդորում էր հորը, որ նա մի քիչ համբերեր՝ նրան էլ կկերակրեր։ Սակայն դստեր զգուշացումը ոչ մի նշանակություն չունեցավ, որովհետև, ապուրին մոտենալու ագահությունից մղված՝ հայրը հաղթահարել էր մարմնական թուլությունը և հիմա փորձում էր մեկ ուտել գդալով ապուրը, մեկ ֆոթաց-

www.a-pdf.com

նել անմիջապես ափսեից, մրթմրթում էր զայրացած, երբ ոչինչ չէր հաջողվում, մինչև բերանը հասցնելը գդալն արդեն դատարկ էր, ներքև կախված մորուքը ապուրի մեջ էր ընկնում, իսկ նա ապուրը կաթկթեցնում ու ցողում էր ամեն կողմի վրա, բայց չէր կարողանում տանել բերանը։

— Երեք տարվա մեջ նա այսպիսի՞ն է դարձել,— հարցրեց Կ-ն, որ ծերունիների ու սենյակի՝ սեղանի զբաղեցրած ողջ անկյան հանդեպ ոչ թե առաջվա պես կարեկցանք, այլ զզվանք էր զգում։

— Երեք տարվա կամ, ավելի ճիշտ, տոնակատարության մի քանի ժամվա ընթացքում։— Դանդաղ խոսեց Օլգան։— Տոնն անցկացվելու էր գյուղի դիմացը՝ առվի ափի մարգագետնում։ Երբ մենք տեղ հասանք, արդեն ահագին մարդ էր հավաքվել, հարևան գյուղերից էլ էին եկել. աղմուկից մարդ կորցնում էր իրեն։ Հայրս մեզ առաջին հերթին, իհարկե, հրշեջ պոմպի կողմը տարավ. նա ծիծաղում էր ուրախությունից, երբ նայում էր սարքին։ Նոր պոմպը ուրախացնում էր նրան, նա սկսեց շոշափել պոմպն ու բացատրություններ տալ մեզ, չէր հանդուրժում, եթե մեկը ընդհատում կամ առարկում էր նրան։ Եթե պոմպի տակ նայելու ինչ-որ բան էր լինում, բոլորս պետք է կռանայինք, համարյա մտնեինք պոմպի տակ։ Բարնաբասը, որ այն ժամանակ հակառակվեց, դրա համար ծեծ կերավ։ Միայն Ամալյային չէր հետաքրքրում պոմպը. գեղեցիկ զգեստ հագած, նա կանգնել էր ուղիղ, և ոչ ոք չէր համարձակվում որևէ բան ասել նրան։ Ես երբեմն-երբեմն մոտ էի վազում, բռնում էի նրա ձեռքը, բայց նա լռում էր։ Նույնիսկ հիմա չեմ կարող բացատրել, թե ինչպես եղավ, որ այդքան ժամանակ կանգնած էինք պոմպի մոտ, մինչդեռ Սորտինիին նկատեցինք՝ միայն երբ հայրս պոկ եկավ պոմպից. ամբողջ ժամանակ Սորտինին կանգնած էր եղել պոմպի հետևում, բռնակին հենված։ Այն ժամանակ, իհարկե, անսովոր աղմուկ էր տիրում, ոչ այնպես, ինչպես սովորաբար լինում է տոների ժամանակ։ Դղյակը մի քանի շեփոր էր նվիրել հրշեջ խմբին, զարմանալի գործիքներ էին դրանք, որոնց վրա նվազագույն ուժ բանեցնելով (երեխան էլ էր կարող) ամենավայրենի հնչյուններ կարելի էր ստանալ։ Երբ շեփորները փչում էին, թվում էր, թե թուրքերն

www.a-pdf.com

են վրա տվել, հնարավոր չէր ընտելանալ. ամեն անգամ մարդ ցնցվում էր։ Եվ որովհետև շեփորները նոր էին, ամեն ոք ուզում էր փորձել, իսկ քանի որ տոնը համաժողովրդական էր, բոլորին էին թույլ տալիս։ Անմիջապես մեր շուրջը մի քանի այդպիսի փչողներ կային. երևի թե Ամալյայի տեսքն էր հրապուրել նրանց։ Մենք դժվարանում էինք ուշադրությունները կենտրոնացնել, հայրիկն էլ մյուս կողմից պահանջում էր ուշադրություն դարձնել պոմպին։ Դա մեր հնարավորությունների սահմանագիծն էր, և այդ պայմաններում էր, որ Սորտինին, ում մինչ այդ չէինք էլ ճանաչում, այդպես անսովոր կերպով դուրս մնաց մեր ուշադրությունից։

— Այնտեղի կանգնածը Սորտինին է,— վերջապես հորս շշնջաց Լազեմանը։ Ես մոտ էի կանգնած։ Հայրս խոր խոնարհվեց և մեզ էլ հուզված նշան արեց, որ խոնարհվենք։ Հայրս մինչև այդ օրը նրան չէր ճանաչել, բայց հրշեջ գործերի լավ մասնագետ համարելով, վաղուց էր հարգում նրան, նրա մասին հաճախ էր տանը խոսում, և դա էր պատճառը, որ անձամբ նրան տեսնելը մեզ համար անակնկալ էր ու նշանակալից։ Սակայն նա մեզ վրա ուշադրություն չդարձրեց (ի դեպ, միայն Սորտինին չէր այդպես, պաշտոնյաների մեծ մասը մարդկանց հանդեպ անհաղորդ էր թվում), նա հոգնած էր, սոսկ ի պաշտոնե պարտականությունն էր նրան այստեղ պահում։ Պատվիրակության կազմում գյուղում գտնվելու պարտքը ճնշող համարող պաշտոնյաները վատ մարդիկ չեն, մյուս պաշտոնյաներն ու ծառաները, քանի որ արդեն գյուղում էին, խառնվել էին ժողովրդին, սակայն Սորտինին մնացել էր պոմպի մոտ և ամեն մեկին, ով որևէ խնդրանքով կամ քծնվելով մոտենալ էր փորձում, նա վանում էր իր լռակյացությամբ։ Այնպես ստացվեց, որ նա մեզ ավելի ուշ նկատեց, քան մենք՝ նրան։ Միայն երբ մենք հարգալից խոնարհվեցինք, ու հայրս փորձեց ներողություն խնդրել, նա մեր կողմը նայեց։ Նա հերթականությամբ էր մեզ նայում, հոգնած հայացքը մեկից մյուսին էր անցնում ու կարծես ամեն անգամ հոգոց էր հանում, որ մեզնից ամեն մեկի կողքին մի ուրիշն էլ կար կանգնած, մինչև որ հայացքը Ամալյայի վրա կանգ առավ. Ամալյային նայելու համար նա

www.apdf.com

պետք է բարձրացներ գլուխը, որովհետև քույրս շատ ավելի խոշոր էր նրանից։ Նա անակնկալի եկած ցատկեց պոմպի բռնակի վրայով, որ ավելի մոտենար Ամալյային, մենք նրան սխալ հասկացանք և հորս ղեկավարությամբ ցանկացանք մոտ գնալ, բայց նա ձեռքը բարձրացնելով հետ պահեց մեզ և նշան արեց, որ գնանք։ Այդքանը միայն։ Հետո մենք շարունակ Ամալյայի հոգու հետ էինք խաղում, թե նա իսկապես փեսացու գտավ և, առանց հասկանալու, ողջ հետկեսօրն անցկացրինք շատ ուրախ, մինչդեռ Ամալյան սովորականից ավելի լռակյաց էր։ «Նա մինչև ականջները սիրահարված է Սորտինիին»,— ասաց սովորաբար փոքր-ինչ կոպիտ Բրունսվիկը, որ Ամալյայի բնավորության տեր մարդկանցից բան չէր հասկանում։ Սակայն այս անգամ նրա դիտողությունը մեզ համարյա ճիշտ թվաց։ Այդ օրը մենք գժվել էինք ընդհանրապես, և բոլորս՝ նաև Ամալյան, քաղցր գինուց կարծես անջատված լինեինք, երբ կեսգիշերից հետո վերադարձանք տուն։

— Իսկ Սորտինի՞ն։

— Սորտինի՞ն։ Տոնի ընթացքում ես մի քանի անգամ հպանցիկ տեսա նրան։ Նա նստել էր պոմպի բռնակին, ձեռքերը խաչել կրծքին ու այդպես մնաց մինչև կառքի գալը։ Նա ոչ մի անգամ չմոտեցավ ուսումնական պարապմունք անցկացնող հրշեջ խմբին, որոնց մեջ հայրս՝ հուսալով, թե Սորտինին իրենց է նայում, աչքի ընկավ իր հասակակիցների շարքում։

— Եվ այլևս ոչինչ չլսեցի՞ք նրա մասին։ Ինձ թվում է, թե դու շատ մեծ հարգանք ես տածում նրա նկատմամբ։

— Հարգա՞նք։ Այո, այո։ Դրանից բացի, մենք հաջորդ օրը ևս լսեցինք նրա մասին։ Հաջորդ առավոտյան մեզ՝ գինովցած-քնածներիս, արթնացրեց Ամալյայի ճիչը. մյուսները նորից հետ ընկան իրենց մահճակալներին, իսկ ես, սակայն, արթուն էի և վազեցի քրոջս մոտ։ Նա կանգնել էր մահճակալի մոտ, ձեռքին նամակ կար, որ քիչ առաջ մի մարդ էր պատուհանից տվել ու հիմա պատասխանին էր սպասում։ Նամակը կարճ էր, Ամալյան կարդացել էր արդեն ու դեռ պահում էր թույլ կախված ձեռքում. ինչքան էի սիրում նրան, երբ նա այդպես հոգնած էր լինում։ Ես ծնկի

www.a-pdf.com

եկա նրա կողքին և այդպես կարդացի նամակը։ Հազիվ էր վերջացրել, իմ կողմը կարճ հայացք նետելով՝ Ամալյան բարձրացրեց նամակը, սակայն չկարողացավ ստիպել իրեն վերընթերցել, պատառոտեց այն, կտորները շպրտեց դրսում կանգնած մարդու դեմքին ու փակեց պատուհանը։ Այդ առավոտը բախտորոշ եղավ։ Ես եմ բախտորոշ անվանում, սակայն նախորդ օրվա հետևեսօրի յուրաքանչյուր ակնթարթը նույն բախտորոշն էր։

— Իսկ ի՞նչ էր գրված նամակում։

— Հա, ես դեռ չեմ պատմել։ Նամակը Սորտինիից էր և հասցեագրված էր նոնաքարե մանյակով աղջկան։ Բովանդակությունը չեմ կարող վերապատմել։ Սորտինին պահանջում էր անմիջապես հյուրանոց գալ, որովհետև կես ժամից ինքը մեկնելու էր։ Նամակում այնպիսի ստոր արտահայտություններ կային, որ ես դեռ երբեք չէի լսել ու միայն մասամբ՝ կապված բովանդակության հետ, հասկացա դրանք։ Նախկինում Ամալյային չճանաչող մարդը, եթե միայն նամակը կարդացած լիներ, կարող էր պատվազրկված համարել այն աղջկան, ում էլ որ համարձակված լիներին այդ տողերը հասցեագրել, թեկուզ աղջկան նույնիսկ մատով իսկ դիպած չլիներին։ Սիրային նամակ չէր դա, այնտեղ փաղաքշանքի բառ չկար, ավելի շուտ, Սորտինին բացահայտորեն զայրացած էր, որ Ամալյայի տեսքը այդպես համակել է իրեն ու կտրել մյուս գործերից։ Հետագայում մենք այսպես բացատրեցինք կատարվածը։ Սորտինին հավանաբար հենց նույն երեկոյան էր ուզել դղյակ մեկնել, միայն Ամալյայի պատճառով էր գյուղում մնացել և առավոտյան պոռթկացող զայրույթով գրել էր նամակը, որովհետև նրան գիշերն էլ չէր հաջողվել մոռանալ Ամալյային։ Նույնիսկ ամենասառնարյուն մարդը առաջին պահին զայրույթով կլցվեր նամակի հանդեպ, իսկ հետո ոչ Ամալյայի խառնվածքի տեր մարդու զայրույթը նամակի սպառնագին տոնի ազդեցության տակ վախի կվերածվեր, իսկ ինչ Ամալյային է վերաբերում, նա զայրացավ միայն, նա չէր վախենում ո՛չ իր, ո՛չ էլ մյուսների համար։ Երբ ես նորից անկողին մտա ու մտքումս կրկնեցի կիսատ թողնված վերջին նախադասությունը. «...իսկույնևեթ դաս, թե չէ...», լուսամուտի մոտ կանգնած Ամալյան նա-

www.a-pdf.com

յում էր դուրս, կարծես նոր նամակատարի էր սպասում և պատրաստ էր ամեն մեկին նույն վերաբերմունքին արժանացնել, ինչ առաջինին։

— Ուրեմն, այդպիսին են պաշտոնյաները,— տատանվելով ասաց Կ-ն։— Նրանց մեջ այդպիսի տիպեր էլ են լինում։ Իսկ հայրդ ի՞նչ արեց։ Հուսով եմ, որ ինչպես հարկն է գանգատվեց Սորտինիից, եթե, իհարկե, չգերադասեց հյուրանոց տանող ավելի կարճ ու ավելի ճիշտ ճանապարհը։ Այս պատմության մեջ ամենազզվելին Ամալյային հասցված վիրավորանքը չէ. այն կարելի էր հանգիստ հարթել։ Ես չգիտեմ, թե ինչո՞ւ ես այդպիսի անսովոր մեծ նշանակություն վերագրում դրան, ինչո՞ւ պետք է Սորտինին այդպիսի նամակով մեկընդմիշտ վարկաբեկած լիներ Ամալյային։ Ըստ քո պատմածի կարելի է մտածել, թե այդպես է, բայց, ախր, հենց դա է անհնար։ Ամալյային հասցված վիրավորանքը հանդիստ կարելի էր մինչև վերջ հատուցել, և մի քանի օրից միջադեպը կմոռացվեր։ Սորտինին ոչ թե Ամալյային էր վարկաբեկել, այլ հենց իրեն։ Ես վախենում եմ Սորտինիից, այսինքն՝ այն հնարավորությունից, որ կարելի է իշխանությունն այդպես չարաշահել։ Այն, ինչ այս դեպքում չհաջողվեց, որովհետև մտադրությունը շատ թափանցիկ էր, ամեն ինչ բացահայտ ու պարզ էր ասված ու հանձին Ամալյայի՝ դիմացինին գերազանցող հակառակորդ հայտնվեց, հազարավոր այլ դեպքերում՝ ոչ նպաստավոր ընթացք ունեցող դեպքերում, կարող էր լրիվ հաջողվել, կարող էր նաև անանկատ մնալ բոլորի համար, նույնիսկ՝ վարկաբեկվածի։

— Լռիր,— ասաց Օլգան։— Ամալյան այս կողմն է նայում։

Ամալյան կերակրել-վերջացրել էր ծնողներին ու այժմ սկսել էր մոր շորերը հանել. նա արդեն արձակել էր մոր շրջազգեստը, ձեռքերով զրկեց նրա պարանոցը, մի փոքր բարձրացրեց, շորը հանեց ու քնքշորեն իջեցրեց։ Հայրը՝ շարունակ դժգոհ այն բանից, որ նախ մորն են ուշադրություն դարձնում (իսկ դա այն պատճառով էր, որ մայրն ավելի անօգնական էր), գուցե նաև ենթադրյալ դանդաղկոտության համար դստերը պատժելու մտադրությամբ,

www.a-pdf.com

փորձեց ինքնուրույն հանվել, ու թեև նա ոչ անհրաժեշտ ու ամենահեշտ մասից սկսեց՝ փորձեց հանել չափից դուրս լայն կոշիկները, որոնց մեջ ազատ խաղում էին ոտքերը, սակայն նրան ոչ մի կերպ չհաջողվեց. անկանոն շնչելով, նա ստիպված էր վերջ տալ չարչարանքին ու թույլ հետ ընկավ իր աթոռի թիկնակին։

— Դու ամենակարևոր բանը չես նկատում։ Թող որ այդպես մտածելով դու իրավացի լինես, բայց ամենակարևորն այն է, որ Ամալյան հյուրանոց չգնաց։ Թե նա ինչպես էր վարվել նամակատարի հետ, այդ միջադեպը դեռ կարող էր հարթվել, կարելի էր կոծկել, բայց այն, որ նա չգնաց հյուրանոց, մեր ընտանիքի գլխին անեծքի վերածվեց և դրանից հետո նամակատարին ցույց տրված վերաբերմունքն էլ աններելի դարձավ, և դեպքը հասարակության դատին ներկայացնելուց առաջին պլան մղվեց։

— Ինչպե՞ս թե,— բղավեց Կ-ն և իսկույն զսպեց իրեն, որովհետև Օլգան խնդրագին բարձրացրեց ձեռքերը։— Դու՝ նրա քույրը, մի՞թե չես ուզում ասել, թե Ամալյան պետք է ենթարկված լիներ Սորտինիին ու հյուրանոց վազեր։

— Ոչ,— ասաց Օլգան։— Թող աստված պահպանի ինձ նման կասկածից։ Ինչպե՞ս կարող ես նման բան մտածել։ Ես որևէ այլ մեկին չգիտեմ, ով Ամալյայի պես համոզված լիներ իր արածների իրավացիության մեջ։ Եթե հյուրանոց գնար, ես նորից իրավացի կհամարեի նրան, բայց որ չգնաց՝ հերոսություն էր։ Ինչ վերաբերում է ինձ, ես անկեղծ խոստովանում եմ. եթե ես նման նամակ ստացած լինեի, անպայման կգնայի։ Հետևանքների հանդեպ ունեցած վախին ես չէի դիմանա, դրան միայն Ամալյան է ի վիճակի։ Ուրիշ ելքեր կային համենայնդեպս, ուրիշ մեկն, իհարկե, կզուգվեր-զարդարվեր, որոշ ժամանակ դրա վրա կանցկացներ, հետո հյուրանոց կգնար ու կիմանար, որ Սորտինին մեկնել է արդեն, որ գուցե նամակատարին ուղարկելուց անմիջապես հետո է մեկնել, մի բան, որ շատ հավանական է, քանի որ պարոնների տրամադրությունները շատ փոփոխական են։ Սակայն Ամալյան ո՛չ այդպիսի, ո՛չ էլ նման մի բան արեց, նա խիստ վիրավորված էր և առանց ձևականության պատասխանեց։ Եթե նա միայն ձևի համար հետևած լիներ նա-

մակին, միայն հյուրանոցի շեմն անցած լիներ, բախտն ամբողջովին շուռ կգար, մենք կխուսափեինք մեղադրանքից. այստեղ շատ խելացի փաստաբաններ ունենք, որ կարող են ոչնչից ստեղծել ինչ ուզենան, բայց այս դեպքում նույնիսկ այդ ձեռնտու ոչինչը չկար։ Ընդհակառակը, միայն Սորտինիի նամակն անպատվելու փաստն էր ու նամակատարին հասցված վիրավորանքը։

— Բայց ի՞նչ մեղադրանքի մասին է խոսքը, ի՞նչ փաստաբան։ Հո չէի՞ն կարող Սորտինիի հանցավոր վարվելակերպի պատճառով Ամալյային մեղադրել կամ պատժել։

— Կարող են։ Երևի թե ոչ օրինական դատավարությամբ, բայց կարող են, և նրան անմիջապես չեն էլ պատժի, այլ ուրիշ կերպ կվարվեն թե՛ նրա, թե՛ մեր ողջ ընտանիքի հետ։ Իսկ թե ինչ ծանր է այդ պատիժը, նոր-նոր կսկսես հասկանալ։ Դա քեզ անիրավացի ու սարսափելի կթվա, բայց դու միակ մարդն ես, ով այդպես է մտածում, դա շատ նպատակահարմար կարծիք է ու պետք է որ մխիթարի մեզ և այդպես էլ կլիներ, եթե ակնհայտ սխալների հետ կապված չլիներ։ Ես դա հանգիստ կարող եմ ապացուցել քեզ և ներիր, եթե միաժամանակ Ֆրիդայի մասին էլ խոսեմ, բայց Ֆրիդայի ու Կլամմի հետ՝ անկախ ստացած ընթացքից, շատ նման մի բան է կատարվել, ինչ Ամալյայի ու Սորտինիի հետ, իսկ դու, եթե անգամ սկզբում սարսափում էիր, այժմ արդեն ճիշտ ես համարում կատարվածը։ Դրա պատճառը ընտելանալը չէ, ընտելանալուց մարդ չի կարող այդ աստիճան բթանալ։ Իսկ եթե խոսքը պարզապես գնահատելու մասին է, նշանակում է պետք է հրաժարվել սխալներից։

— Ոչ, Օլգա։ Զգիտեմ, թե ինչո՞ւ Ֆրիդային այս պատմության մեջ ներքաշեցիր, սակայն նրա հետ բոլորովին այլ կերպ է եղել, այնպես որ էությամբ իրարից տարբերվող բաները մի խառնիր ու շարունակիր քո պատմությունը։

— Մի նեղացիր, խնդրեմ, եթե համառեմ ու ճիշտ համարեմ համեմատությունս։ Դու սխալվում ես շարունակ, Ֆրիդայի հարցում՝ նույնպես, եթե կարծում ես, թե պարտավոր ես նման համեմատություններից պաշտպանել նրան։ Նրան պաշտպանել պետք չէ, միայն գովել է պետք։ Եթե ես համեմատում եմ դեպքերը, ապա չեմ ասում, թե դրանք

նույն բնույթի են. նրանք համընկնում են իրար, ինչպես սևն ու սպիտակը կհամընկնեն, և սպիտակը Ֆրիդան է։ Վատագույն դեպքում կարելի է Ֆրիդայի վրա ծիծաղել, ինչպես ես անշնորհք կերպով ծիծաղեցի պանդոկում (հետո զղջացի, իհարկե), ու թեև ով էլ որ ծիծաղի, կարող է չար ու նախանձ համարվել, այնուամենայնիվ կարելի է ծիծաղել, մինչդեռ Ամալյային, եթե նրա հետ արյունակցական կապ չկա, կարելի է միայն արհամարհել։ Թերևս այս պատճառով են սրանք, ինչպես ինքդ ես ասում, կտրականապես տարբեր դեպքեր, բայց իրար նման են այնուամենայնիվ։

— Դրանք իրար նման չեն,— առարկեց Կ-ն ու ակամայից թափ տվեց գլուխը։— Ֆրիդային մի կողմ թող, Ֆրիդան երբեք նման անմաքուր նամակ չի ստացել, ինչպես Ամալյան, և նա, իրոք, սիրել է Կլամմին։ Ով կասկածում է, կարող է հարցնել. նա այսօր էլ սիրում է Կլամմին։

— Արդյոք դրանց մեջ եղած տարբերությունները մե՞ծ են։ Կարծում ես Կլամմը չէ՞ր կարող նույն ձևով գրել Ֆրիդային։ Երբ պարոնայք վեր են կենում գրասեղաններից, նրանք այդպիսին չեն, նրանք չեն տիրապետում իրենց և կարող են ցրվածության մեջ ամենակոպիտ բաներն անգամ ասել. ոչ բոլորը, բայց՝ շատերը։ Ամալյային ուղարկված նամակը գուցե ցրված վիճակում է թելադրված եղել, և Սորտինին բոլորովին ուշադրություն չի դարձրել Ղղթին հանձնված տեքստին։ Ինչ իմանանք, թե պարոններն ի՞նչ են մտածում։ Մի՞թե ինքդ չես լսել կամ քեզ չեն պատմել, թե ինչ ձևով է Կլամմը վարվել Ֆրիդայի հետ։ Կլամմի մասին պատմում են, որ նա շատ կոպիտ մարդ է, կարող է ժամեր շարունակ չխոսել, բայց հետո այնպիսի մի բան կասի, որ մարդ կսարսռա։ Սորտինին այնպես չէ, թեև նրա մասին, ընդհանրապես, քիչ բան է հայտնի։ Նրա մասին գիտեն միայն, որ անունը Սորդինիին շատ է նման, եթե ազգանունների նմանությունը չլիներ, նրան գուցե ընդհանրապես չճանաչեին։ Նաև որպես հրշեջ գործի մասնագետ, նրան շփոթում են Սորդինիի հետ, որն իսկական մասնագետն է, և ազգանունների նմանությունը օգտագործում է որպես ներկայացուցիչ գյուղ գնալու պարտականությունը Սորտինիի վրա գցելու համար.

www.a-pdf.com

այդպես նրան ոչ ոք չի խանգարի, որ նա կարողանա հանգիստ աշխատել։ Իսկ եթե Սորտինիի նման աշխարհիկ կյանքին անտեղյակ մարդն է գյուղացի աղջկա սիրահարվում, ապա դա, ինչ խոսք, այլ ձև է ստանում, քան, ասենք ատաղձագործի օգնականը սիրահարված լիներ։ Նաև պետք է հիշել, որ պաշտոնյայի ու կոշկակարի դստեր միջև մեծ տարբերություն գոյություն ունի, ինչ-որ ձևով անհրաժեշտ է իրար միացնել այդ տարբերությունները, և Սորտինին իր նամակում այդպես է փորձել. մի ուրիշը կարող էր այլ կերպ վարվել։ Թեև ասում են, թե մենք բոլորս դղյակին ենք պատկանում, մեր միջև ոչ մի տարբերություն չկա և հավասարեցնելու ոչինչ էլ չկա, ու երևի թե սովորաբար դա այդպես է, սակայն մենք, ցավոք, առիթ ենք ունեցել տեսնելու, որ հենց բանը հավասարությանն է հասնում, պատկերը բոլորովին այլ է։ Այդ ամենից հետո Սորտինիի վարվելակերպը քեզ համար, համենայնդեպս, ավելի հասկանալի կլինի, պակաս սարսափելի, և իրականում այդպես էլ է։ Կլամմի վարվելաձևի հետ համեմատած Սորտինիի արածը շատ ավելի հասկանալի է, իսկ եթե մարդ նաև շահագրգռված է՝ ավելի տանելի։ Եթե Կլամմը քնքուշ նամակ գրի, ապա այն ավելի զզվելի կստացվի, քան Սորտինիի ամենակոպիտ նամակը։ Ինձ ճիշտ հասկացիր, ես չեմ համարձակվում Կլամմի մասին եզրակացություններ անել, ես համեմատում եմ միայն, որովհետև դու հակառակվում ես համեմատությանը։ Ախր, Կլամմը կանանց համար կարծես հրամանատար լինի, մեկ սրան, մեկ նրան է հրամայում իր մոտ գալ, ոչ մեկին երկար չի հանդուրժում և ինչպես հրամայում է գալ, այնպես էլ հրամայում է գնալ։ Ոչ, Կլամմը բոլորովին նեղություն չէր տա իրեն, որ նախ նամակ գրեր։ Մի՞թե սրա հետ համեմատելիս քեզ սարսափելի է թվում, որ ամբողջապես մենակյացի կյանք վարող Սորտինին, ում կապը կանանց հետ ընդհանրապես ոչ ոքի հայտնի չէ, մեկ էլ տեսար նստում է ու իր գեղեցիկ ձեռագրով մի զզվելի նամակ գրում։ Իսկ եթե այս տարբերությունը ոչ թե հօգուտ Կլամմի լիներ, այլ հօգուտ Սորտինիի, արդյոք Ֆրիդայի սերը կկարողանա՞ր ինչ-որ բան փոխել հօգուտ Կլամմի։ Հավատա ինձ, միշտ էլ շատ դժվար է բնորոշել կանանց՝ պաշտոնյաների հետ ունեցած կապը, կամ,

www.a-pdf.com

ավելի ճիշտ, շատ հեշտ է։ Սիրո հարցում այստեղ երբեք պակասություն չի լինում։ Պաշտոնյաների համար դժբախտ սեր չի լինում երբեք։ Այդ տեսակետից բոլորովին էլ դովք չէ, եթե մի աղջկա մասին ասում են (ես բոլորովին էլ Ֆրիդային նկատի չունեմ), թե նա այն պատճառով է պաշտոնյային տրվել, որ սիրում է նրան։ Սիրում էր ու տրվել է, դա այդպես է, սակայն այստեղ զովելու բան չկա։ Իսկ Ամալյան Սորտինիին չի սիրել, կառարկես դու։ Այո, նա չի սիրել նրան, բայց գուցեև սիրել է. ո՞վ կարող է իմանալ։ Նույնիսկ ինքը չգիտե։ Ինչպե՞ս կարող էր նա մտածել, թե չի սիրում Սորտինիին, երբ այդպես կտրուկ մերժեց նրան, ինչպես երևի թե մերժված չկար պաշտոնյաներից ոչ մեկը։ Բարնաբասն ասում է, թե նա մինչև այսօր ցնցվելով նույն շարժումն է անում, ինչպես երեք տարի առաջ պատուհանն էր փակել։ Դա ճիշտ է, նրան չի կարելի եղածի վերաբերյալ որևէ բան հարցնել։ Նա խզել է կապերը Սորտինիի հետ և ոչինչ չգիտե դրանից բացի։ Սիրո՞ւմ է նրան, թե ոչ, նա չգիտե։ Սակայն մենք գիտենք, որ կանայք պաշտոնյաներին, եթե վերջիններս ուշադրություն դարձնեն նրանց վրա, սիրելուց բացի ոչինչ չեն կարող։ Այո, ինչքան էլ նրանք հերքել ուզենան, սկզբից ևեթ սիրում են պաշտոնյաներին, իսկ Սորտինին ոչ միայն ուշադրություն էր դարձրել Ամալյայի վրա, այլ նույնիսկ ցատկել էր պոմպի բռնակի վրայով, երբ տեսել էր Ամալյային, գրասեղանի մոտ երկար աշխատելուց չորացած ոտքերով նա ցատկել էր պոմպի բռնակի վրայով։ Բայց դու կասես, թե Ամալյան բացառություն է։ Այո, նա բացառություն է, և նա ապացուցեց, երբ հրաժարվեց Սորտինիի մոտ գնալ. դա, իրոք, բացառիկ դեպք է, բայց որ նա նաև չպետք է սիրեր Սորտինիին, ապա բացառություն լինելու համար դա արդեն շատ-շատ էր, դա հնարավոր չէր հասկանալ։ Այն օրը մենք, իհարկե, կուրացել էինք, բայց, չնայած տոնի պատճառած շիլաշփոթին, կարծես նկատում էինք, որ Ամալյան մի փոքր սիրահարված է, և ցույց էր տալիս, որ ինչ-որ բան գիտակցում էինք դեռ։ Հիմա եթե այս ամենը միասին վերցնելու լինենք, ի՞նչ տարբերություն կմնա Ֆրիդայի ու Ամալյայի միջև։ Միայն մի. Ամալյան մերժեց այն, ինչ անում է Ֆրիդան։

www.a-pdf.com

— Թող այդպես լինի, սակայն ինձ համար գլխավոր տարբերությունն այն է, որ Ֆրիդան իմ հարսնացուն է, իսկ Ամալյան, ճիշտն ասած, միայն այնքանով է ինձ հետաքրքրում, որ Բարնաբասի՝ դղյակի նամակատարի քույրն է և նրա բախտը, հավանաբար, միահյուսված է Բարնաբասի ծառայության հետ։ Եթե պաշտոնյաներից մեկը այդպիսի աղաղակող անարդարություն թույլ տված լիներ նրա հանդեպ, ինչպես քո պատմության սկզբում ինձ թվաց, ապա այն ինձ կհետաքրքրեր ավելի շուտ որպես հասարակական երևույթ, քան որպես Ամալյայի անձնական վիշտ։ Քո պատմելուց հետո պատկերը, թեև ինձ համար ոչ լրիվ հասկանալի, բայց որովհետև պատմողը դու ես, բավական համոզիչ ձևով փոխվում է, և այդ պատճառով ես չեմ ուզում ընդհանրապես հետաքրքրվել եղածով. ես հրշեջ չեմ, ինձ ինչ Սորտինին։ Իսկ ահա Ֆրիդան կապ ունի ինձ հետ, և այստեղ է, որ ես տարակուսում եմ, թե ինչպե՞ս դու, ում ես վստահել եմ և հաճույքով ուզում եմ հետագայում էլ վստահել, Ամալյայի վերաբերյալ պատմություններում անուղղակի դիպչում ես Ֆրիդային և ուզում ես իմ մեջ կասկած առաջացնել։ Չեմ կարծում, թե դու դիտավորյալ կամ նույնիսկ չար մտադրությամբ ես անում, թե չէ ես վաղուց արդեն հեռացած կլինեի։ Դու միտումնավոր չես անում, հանգամանքներն են ստիպում այդպես վարվել։ Ամալյայի հանդեպ ունեցած սիրո պատճառով դու նրան ուզում ես վեր դասել բոլոր կանանցից, բայց քանի որ մեծարման արժանի ոչինչ չես գտնում, քո նպատակին հասնելու համար մյուս կանանց ես նսեմացնում։ Ամալյայի արարքը տարօրինակ է, և դու ինչքան շատ ես այդ մասին պատմում, այնքան ավելի քիչ է հնարավոր լինում որոշել. արդյոք նրա արածը մե՞ծ բան է, թե փոքր, խելացի՞, թե անմիտ, հերոսակա՞ն, թե վախկոտ, դրա շարժառիթները Ամալյան իր մեջ է պահում, և ոչ ոք չի կարողանա իմանալ դրանք։ Դրան հակառակ, Ֆրիդան արտաքուստ ոչինչ չի արել, այլ միայն սրտի թելադրանքին է հետևել, և ամեն ոք, ով ինքնակամ հետաքրքվի կատարվածով, պարզ կտեսնի, ուզածդ մարդը կարող է ստուգել իմ ասածը. լամբասանքի համար այստեղ տեղ չի մնացել։ Ես, սակայն,

www.a-pdf.com

ուզում եմ ո՛չ Ամալյային նսեմացնել, ո՛չ էլ Ֆրիդային պաշտպանել, այլ ուզում եմ միայն բացատրել, թե ինչպես եմ վերաբերվում Ֆրիդային և ինչպես Ֆրիդայի դեմ ուղղված ամեն մի հարձակում միաժամանակ ընկալում եմ նաև իմ գոյության հանդեպ ձեռնարկված հարձակում։ Ես իմ սեփական կամքով եմ եկել այստեղ և սեփական կամքով էլ խարիսխ եմ գցել, բայց այն, ինչ հետո է կատարվել՝ ամենից առաջ իմ ապագայի հեռանկարները (ինչքան էլ դրանք մռայլ լինեն, միևնույն է՝ կան), այդ ամենի համար շնորհակալ եմ Ֆրիդային, և այդ մասին չարժե խոսել։ Ես թեև որպես հողաչափ էի ընդունվել, սակայն դա միայն արտաքուստ էր այդպես։ Ինձ հետ խաղ էին անում, ինձ վռնդում էին բոլոր տներից, դեռ այսօր էլ ինձ հետ խաղ են անում, բայց ինչքան էլ դժվար լիներ, ես արդեն ինչ-որ բանի հասել եմ, արդեն դա մի բան նշանակում է, ինչքան էլ անէական լինի, բայց մեկ է, ես տուն, պաշտոն ու իսկական աշխատանք ունեմ, հարսնացու ունեմ, ով, եթե ես ուրիշ գործեր էլ ունենամ, իմ փոխարեն գործն անում է, և ես կամուսնանամ նրա հետ, համայնքի անդամ կդառնամ, իսկ Կլամմի հետ պաշտոնական կապից բացի մի ուրիշ, առայժմ չօգտագործված անձնական կապ էլ ունեմ։ Ախր, դա քիչ բան չէ։ Երբ ես ձեզ մոտ եմ գալիս, դուք ո՞ւմ եք բարևում։ Ո՞ւմ եք վստահում ձեր ընտանիքի պատմությունը։ Թեկուզ ինչքան էլ աննշան, բայց ումի՞ց եք ակնկալում, թե օգնություն, ցանկացած ձևի օգնության անհավանական հնարավորություն կլինի։ Ախր, ո՛չ ինձնից, ո՛չ հողաչափից, ում ընդամենը մի շաբաթ առաջ Լազեմանն ու Բրունսվիկը ուժի զոռով դուրս հանեցին իրենց տնից, այլ մի այնպիսի մարդուց ես ակնկալում, ով արդեն ինչ-որ ուժ ունի, իսկ այդ ուժի համար ես Ֆրիդային եմ պարտական, Ֆրիդային, ով այնքան համեստ է, որ եթե հարցնես՝ արդյոք ճի՞շտ եմ ասում այս ամենը, կասի թե ոչինչ չի լսել դրանց մասին։ Եվ այս ամենից հետո թվում է, թե Ֆրիդան իր անմեղությամբ շատ ավելի մեծ բան է արել, քան Ամալյան իր գոռոզամտությամբ, որովհետև, տես, ես այն տպավորությունն ստացա, թե դու Ամալյայի համար ես օգնություն փնտրում։ Եվ ումի՞ց։ Ախր, իրականում ոչ այլ մեկից, քան՝ Ֆրիդայից։

www.a-pdf.com

— Իսկապե՞ս այդպիսի զզվանքով խոսեցի Ֆրիդայի մասին,— հարցրեց Օլգան։— Իհարկե, ես չէի ուզում և չեմ էլ կարծում, թե այդպես եմ խոսել, բայց և հնարավոր է. մեր դրությունն այնպիսին է, որ շրջակայքում ոչ մեկի հետ կապ չունենք և հենց սկսում ենք պանգատվել, հեռու ենք քշվում, ինքներս էլ չենք հասկանում, թե ինչ ենք անում։ Դու իրավացի ես։ Այժմ մեր ու Ֆրիդայի մեջ մեծ տարբերություն կա և լավ կլինի, որ այն մի անգամ էլ շեշտվի։ Երեք տարի առաջ մենք քաղքենու դուստրեր էինք, իսկ Ֆրիդան՝ որ որբ էր, ազատ էր իր ճանապարհը։ Մենք նրա կողքով անցնելիս անգամ նրա կողմը չէինք նայում. մեր արարքն, ինչ խոսք, շատ մեծամիտ էր, բայց մենք այդպես էինք դաստիարակված։ Սակայն այն երեկոյան, որ հյուրանացում էինք, դու պետք է որ հասկանայիր այժմյան դրությունը. Ֆրիդայի ձեռքին մտրակն էր, իսկ ես՝ ճորտերի խառնամբոխի մեջ էի։ Բայց վիճակն, ախր, շատ ավելի վատ է։ Թող որ Ֆրիդան արհամարհի մեզ, դա համապատասխանում է նրա դիրքին, վիճակն է պարտադրում։ Իսկ ո՞վ չի արհամարհում մեզ։ Ով որոշում է արհամարհել մեզ, իսկույնևեթ ճանաչման է արժանանում։ Ֆրիդային փոխարինողին գիտես դու։ Պեպի է նրա անունը, ընդամենը երկու օր առաջ, երեկոյան եմ ծանոթացել նրա հետ. մինչ այդ նա աղախին էր։ Ինձ արհամարհելու հարցում նա գերազանցում է Ֆրիդային։ Նա պատուհանից տեսավ, որ գնում եմ զարեջրի, վազեց դեպի դուռն ու փակեց։ Ես ստիպված էի երկար խնդրել, իմ մազերին կապած ժապավենը խոստացա, որ նա դուռը բացեր։ Բայց երբ ժապավենը տվեցի, մի կողմ նետեց։ Ի՞նչ արած, թող արհամարհի, ես, ախր, նրա բարեհաճությունից եմ օգտվում, իսկ նա հյուրանոցի պանդոկում է աշխատում։ Նա հատատ ժամանակավոր է այնտեղ, որովհետև պանդոկում երկար մնալու համար անհրաժեշտ հատկանիշներ չունի։ Մարդ միայն լսեր, թե ինչպես էր հյուրանոցի տերը խոսում Պեպիի հետ, ու համեմատեր Ֆրիդայի հետ խոսելու ձևին։ Սակայն դա Պեպիին չի խանգարում, որ նա Ամալյային էլ արհամարհի, Ամալյային, ում մի հայացքը կբավականացներ այդ ոչնչություն Պեպիին իր հյուսքերի ու վարդակապերի

www.a-pdf.com

հետ մեկտեղ սենյակից ոտքով-գլխով այնպես արագ դուրս նետելու համար, ինչպես երբեք չէին կարողանա նրա սեփական կարճուկոլոտ ոտքերը։ Ինչ զայրացուցիչ զազրախոսություն ասես ստիպված էի նորից լսել Ամալյայի մասին, մինչև որ պանդոկի հյուրերը նորից միջամտեցին ինձ համար. անցած անգամ քո տեսածի պես։

— Ինչքան վախեցած ես դու,— ասաց Կ-ն։— Ես ուզեցի միայն Ֆրիդային իր արժանի տեղը դնել, բայց ոչ թե ձեզ նսեմացնել, ինչպես դու ես կարծում։ Ձեր ընտանիքն էլ ինձ համար ինչ-որ առանձնահատկություն չունի, չեմ կարող թաքցնել, սակայն չեմ հասկանում, թե ինչպես կարող է այդ առանձնահատկությունը արհամարհանքի առիթ տալ։

— Ախ, Կ.։ Ես վախենում եմ, որ դու էլ շուտով կհասկանաս։ Ի՞նչ է, դու չե՞ս կարող հասկանալ, որ Սորտինիի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքը արհամարհանքի առաջին պատճառն էր։

— Սակայն դա շատ տարօրինակ է, դրա համար կարելի է հիանալ Ամալյայով կամ դատապարտել նրան, բայց՝ արհամարհե՞լ։ Եվ եթե նույնիսկ ինձ համար անհասկանալի պատճառներով արհամարհեն էլ Ամալյային, ինչո՞ւ պետք է արհամարհանքը տարածվի ձեզ վրա էլ՝ անմեղ ընտանիքի վրա։ Օրինակ այն, որ Պեպին արհամարհում է քեզ, բավական մեծ անպատկառություն է, և եթե ես մի անգամ հյուրանոց գնամ, ցույց կտամ նրան։

— Կ., եթե դու ուզում ես բոլոր մեզ դավաճանողներին տարհամոզել,— ասաց Օլգան,— ապա դա շատ դժվար աշխատանք կլինի, որովհետև ամեն ինչ դղյակից է սկսվում։ Ես դեռ լավ հիշում եմ, թե ինչ տեղի ունեցավ այն առավոտվանից հետո։ Բրունսվիկը, որ այն ժամանակ հորս օգնականն էր, ամեն օրվա պես եկավ, հայրս նրան գործ տվեց ու տուն ուղարկեց։ Հետո մենք նախաճաշի նստեցինք, բոլորս՝ նաև Ամալյան ու ես, շատ ուրախ էինք, հայրս շարունակ տոնակատարության մասին էր պատմում. հրշեջ խմբի հետ կապված նա տարբեր ծրագրեր ուներ։ Դղյակում առանձին հրշեջ խումբ կար, որ տոնակատարությանը մասնակցելու համար պատվիրակություն էր ուղարկել և դրա հետ որոշ բաներ էին քննարկել։ Տոնակատարությանը ներկա գտնված դղյակի պա-

www.a-pdf.com

ռոնները մեր հրշեջ խմբի գործելակերպը տեսել էին, շատ քարեհաճ էին արտահայտվել նրա մասին և համեմատել էին դղյակի խմբի հետ։ Համեմատությունը հօգուտ մեզ էր եղել։ Հետո խոսել էին դղյակում հրշեջ նոր խմբի կազմավորման անհրաժեշտության մասին, դրա համար գյուղից հրահանգիչներ էին անհրաժեշտ, ու թեև մի քանիսին նկատի ունեցել էին, սակայն հայրս, այնուամենայնիվ, հույսը չէր կորցնում, թե ընտրությունը իր վրա կընկնի։ Նա այդ մասին էր խոսում ու, ինչպես ինքն էր սիրում սեղանի մոտ նստած ժամանակ ձեռքերը տարածել, նստել էր ու գրկել սեղանի կեսը, իսկ պատուհանից դուրս՝ երկնքին նայող դեմքը ջահել էր ու հույսով լի։ Դրանից հետո այլևս նրան այդպես չէի տեսնելու։ Նույն պահին Ամալյան՝ այնպիսի մտախոհ դեմքով, որ հնարավոր չէր նրանից սպասել, ասաց, թե պարոնների խոսքերին պետք չէ շատ հավատալ, նման դեպքերում նրանք սովորություն ունեն որևէ դուրեկան բան ասել, սակայն ասվածը կա՛մ քիչ նշանակություն ունի, կա՛մ նշանակություն չունի ընդհանրապես. հազիվ ասված, խոսքն արդեն հավիտյանս մոռացվում է, և, իհարկե, հաջորդ անգամ նույնպես մարդ խաբվում է նրանց խայծին։ Այս խոսքերի համար մայրս նախատեց Ամալյային, հայրս միայն ծաղրեց նրա խելացվորությունն ու փորձը, հետո, սակայն, վարանեց. կարծես ինչ-որ մի բան էր փնտրում, ինչի պակասը միայն այժմ էր նկատել, մինչդեռ ամեն ինչ տեղում էր։ Նա ասաց, թե Բրունսվիկն ինչ-որ բան էր պատմել նամակատարի ու պատառոտված նամակի մասին, և հարցրեց՝ արդյոք մեզ հայտնի չէ՞, թե ո՞ւմ հետ է կատարվել դա, և ընդհանրապես, ինչպե՞ս է ամեն ինչ կատարվել։ Մենք լռեցինք, Բարնաբասը, որ այն ժամանակ փոքր էր, կարծես գառնուկ լիներ, չափից դուրս հիմար կամ հանդուգն մի բան ասաց, մենք սկսեցինք ուրիշ բանի մասին խոսել ու միջադեպը մոռացության մատնվեց։

www.a-pdf.com

—Սակայն շատ ժամանակ չանցած ամեն կողմից մեզ վրա տեղացին նամակի պատմության հետ կապված հարցերը։ Գալիս էին բարեկամ ու թշնամի, ծանոթ ու անծանոթ, սակայն նրանք երկար չէին մնում. բոլորից շուտ ամենալավ բարեկամներն էին հրաժեշտ տալիս։ Լազեմանը, որ ընդհանրապես դանդաղաշարժ էր ու հպարտ կեցվածք ուներ, այնպես ներս մտավ, կարծես ուզում էր միայն սենյակի չափսերն ստուգել. մի հայացք նետեց շուրջն ու պատրաստ էր արդեն։ Այդ ամենը մանկական սարսափելի խաղի էր նման. Լազեմանը փսխավ, հայրս պոկ եկավ մյուսներից, նրա հետևից շտապեց մինչև տան շեմն ու հետ դարձավ։ Հետո եկավ Բրունսվիկն ու հրաժարվեց հորս հետ աշխատել. ուզում է ինքնուրույն աշխատել, միանգամայն անկեղծ ասաց նա։ Խելացի տղա էր, կարողացավ պահն օգտագործել։ Պատվիրատուները եկան ու սկսեցին վերանորոգելու համար թողած իրենց կոշիկները փնտրել հորս արհեստանոցում։ Հայրը սկզբում փորձեց տարհամոզել նրանց, մենք էլ էինք ուժերիս ներածի չափով օգնում, սակայն նա հոգնեց համոզելուց և լուռ օգնեց նրանց փնտրել կոշիկները. պատվերները գրքում տող-տողի հետևից ջնջվեցին, մարդկանց՝ մեզ մոտ ունեցած կաշվի պաշարները դուրս տրվեցին, պարտքերը վճարվեցին, ամեն ինչ ընթանում էր առանց վիճաբանության, և բոլորն էլ գոհ էին, որ հաջողվում էր կապերը արագ ու վերջնականապես խզել մեզ հետ, ու թեկուզ այդ պահին վնասով էլ դուրս գային, ոչինչ հաշվի չէին առնում։ Իսկ վերջում, ինչ, ի դեպ, պետք էր կանխատեսել, հայտնվեց Զեեմանը՝ հրշեջ խմբի ավագը։ Այդ տեսարանը աչքիս առաջ է դեռ. Զեեմանը՝ հաղթանդամ ու ուժեղ, փոքրինչ կռացած, թոքերից թույլ, միշտ լրջադեմ (նա բոլորովին չէր ծիծաղում), կանգնած է հորս դիմացը, հորս, ով միշտ հիացրել է իրեն, ում մտերմիկ զրույցների պահերին միշտ ակնարկում էր, թե խմբի ավագի տեղակալ նրան է նկատի ունեցել, իսկ այժմ պետք է տեղեկացներ, թե խումբը հրաժարվում է նրա ընկերակցությունից, խնդրում է հետ վե-

www.a-pdf.com

բաղարձնել դիպլոմը։ Այդ պահին մեր տանը հավաքված-ները թողեցին իրենց գործն ու խմբվեցին երկուսի շուրջը։ Ջեեմանը չէր կարողանում որևէ բան խոսել, շարունակ թփթփացնում էր հորս ուսին, կարծես ուզում էր նրանից կորզել այն բառերը, որ ինքն էր ասելու և չէր կարողանում գտնել։ Միաժամանակ նա անընդհատ ծիծաղում էր և դրանով, հավանաբար, փորձում էր իրեն ու մյուսներին հանգըստացնել, բայց որովհետև նա չէր կարողանում ծիծաղել, նրա ծիծաղը մինչ այդ ոչ ոք չէր լսել, ոչ մեկի մտքով չէր անցնում, թե դա ծիծաղ է։ Հայրս, սակայն, այդ օրն այնքան հոգնած ու հիասթափված էր, որ չէր կարողանում որևէ մեկին օգնել, այո, նա կարծես այնքան հոգնած էր, որ չէր կարողանում մտածել, թե ինչի մասին է խոսքը։ Ախր, մենք էլ էինք նույնքան շփոթված, բայց որովհետև երեխա էինք, չէինք ենթադրում, թե խորտակումը կատարյալ է, մեզ շարունակ թվում էր, թե բազմաթիվ այցելուների միջից վերջապես մեկը ոտքի կկանգնի ու կհրամայի կանգ առնել, ամեն ինչ իր սկզբնական ընթացքի մեջ կդնի։ Եվ մենք, որովհետև ոչինչ չէինք հասկանում ու կարծում էինք, թե միայն Ջեեմանն էր կարող դա անել, լարված սպասում էինք, որ նրա ծիծաղի միջից վերջապես մի հասկանալի բան կլսենք։ Միակ բանը, ինչի վրա կարելի էր ծիծաղել, մեզ հետ կատարվող հիմար անիրավությունն էր։ «Պարոն ավագ, պարոն ավագ, գոնե հիմա ամեն ինչ ասեք մարդկանց», մտածեցինք մենք ու խմբվեցինք նրա շուրջը, սակայն դա պատճառ դարձավ միայն, որ նա տարօրինակ կերպով շուռումուռ գար տեղում։ Եվ վերջապես նա սկսեց խոսել, բայց ոչ թե մեր թաքուն ցանկությունները կատարելու համար, այլ սենյակում հավաքված մարդկանց խրախուսող կամ զայրացած բացականչություններին հնազանդվելով։ Մենք, այնուամենայնիվ, հույսեր փայփայում էինք։ Նա սկսեց գովել հորս, նրան խմբի զարդ անվանեց, անհասանելի մի օրինակ աճող սերնդի համար, անփոխարինելի մարդ, ում հեռանալը երևի թե քայքայեր խումբը։ Այդ ամենը շատ գեղեցիկ էր հնչում. երանի թե դրանով էլ ավարտեր։ Սակայն նա շարունակեց խոսել։ Եթե խումբը, չնայած այդ ամենին, որոշել է խնդրել նրան առայժմ, թեկուզև ժամանակավորա-

www.a-pdf.com

պես հեռանալ, հարկավոր է ընկալել պատճառների լրջությունը, որ ստիպել են այդպես վարվել խմբին։ Եթե երեկվա տոնի ժամանակ հորս փայլուն ելույթները չլինեին, գուցե թե բանն այդքան հեռու չգնար, բայց հենց այդ հաջողությունները գրգռել են պաշտոնյաների հետաքրքրությունը, խումբն այժմ բոլորի աչքի առաջ է և նրա մաքրության մասին հիմա ավելի շատ էր պետք մտածել, քան նախկինում։ Եվ քանի որ երեկ վիրավորել էին լրաբերին, ապա խումբն այլևս ուրիշ ելք չէր գտել, իսկ որոշումը հայտնելու ծանր պարտականությունը ստանձնել էր Զեեմանը։ Թող հայրս չդժվարացնի նրա առանց այդ էլ դժվար գործը։ Զեեմանն ինչքան գոհ պետք է լիներ, որ վերջացրեց խոսքը. նրա ինքնավստահությունը պակաս նրբանկատ էր դարձրել նրան։ Նա ցույց տվեց պատից կախված դիպլոմն ու շարժեց մատը։ Հայրս գլխով արեց, գնաց դիպլոմն իջեցնելու, սակայն դողացող մատները չէին կարող կեռից հանել. ես բարձրացա բաղկաթոռին ու օգնեցի նրան։ Այդ պահից սկսած ամեն ինչ վերջացավ. հայրս նույնիսկ շրջանակից չհանեց դիպլոմը, այլ Զեեմանին հանձնեց այնպես, ինչպես կար։ Հետո նա նստեց մի անկյունում, չէր շարժվում ու ոչ մեկի հետ չէր խոսում։ Մենք, ինչքան հնարավոր էր, ինքներս պետք է մարդկանց հետ կարգավորեինք գործերը։

— Եվ ի՞նչ ես կարծում, այստեղ ո՞ւր է դղյակի ներգործությունը,— հարցրեց Կ-ն։— Նրա միջամտությունն առայժմ չի երևում։ Այն, ինչ մինչև հիմա պատմեցիր, կապված է մարդկանց անմիտ վախի, կողքինի անհաջողությամբ ուրախանալու, անկայուն ընկերության հետ, բաներ, որ կարելի է ամենուր հանդիպել, իսկ քո հայրը (ինձ այդպես է թվում) մանրախնդրություն է դրսևորել. ախր ի՞նչ էր ներկայացնում իրենից այդ դիպլոմը։ Նրա կարողությունների հավաստումն էր, բայց, ախր, ոչ ոք չէր խլում նրա կարողությունները, իսկ եթե դրանք անփոխարինելի էին դարձնում նրան, ապա՝ ավելի լավ, և ավագի գործը նա ավելի կդժվարացներ, եթե անմիջապես, երկրորդ բառն արտասանելուց հետո նրա ոտքերի տակ նետեր դիպլոմը։ Սակայն ինձ առավել հատկանշական է թվում այն, որ դու բոլորովին չես հիշատակում Ամալյայի անունը, Ամալյային, ով անշուշտ, մեղավոր

էր ամեն ինչում և հիմա հավանաբար հանգիստ կանգնել էր երկրորդ պլանում ու հետևում էր, թե ինչպես է ավերվում տունը։

— Ոչ, չի կարելի որևէ մեկին նախատել,— առարկեց Օլգան։— Ոչ ոք չէր կարող այլ կերպ վարվել, այդ ամենի թիկունքում արդեն կանգնած էր դղյակը։

— Դղյակի միջամտության պատճառով էր,— կրկնեց Ամալյան, որ աննկատ վերադարձել էր բակից. ծնողները վաղուց արդեն անկողին էին մտել։— Դղյակի պատմություններ՞ն ես անում։ Դեռ նստա՞ծ եք։ Դու, ախր, ուզում էիր շուտ հեռանալ, Կ., շուտով ժամը տասը կլինի։ Այդ պատմություններն, արդյոք, ընդհանրապես հետաքրքրո՞ւմ են քեզ։ Այստեղ մարդիկ կան, որ նման պատմություններով են սնվում. նստում են իրար կողքի, այնպես, ինչպես հիմա դուք եք նստած, ու փոխնիփոխ լուրեր են մատուցում միմյանց։ Սակայն, իմ կարծիքով, դու այդ մարդկանց թվին չես պատկանում։

— Ոչ, ես հենց նրանց թվին եմ պատկանում։ Դրան հակառակ, այն մարդիկ, որ նման պատմություններով չեն հետաքրքրվում ու դրանով զբաղվելը մյուսներին են թողնում, ինձ վրա այնքան էլ մեծ տպավորություն չեն թողնում։

— Այո։ Մարդկանց հետաքրքրությունները շատ բազմազան են. ես մի երիտասարդի մասին էի իմացել, որ օր ու գիշեր դղյակի հետ է եղել մտովի, մնացած ամեն ինչը անտեսել է, մարդիկ վախեցել են, թե նրա միտքը կխանգարվի, որովհետև նրա ողջ ուշադրությունը վերևում՝ դղյակում է եղել։ Սակայն վերջում պարզվել է, որ նա ոչ թե դղյակի, այլ գրասենյակներից մեկի հավաքարարուհու աղջկա մասին է մտածել։ Նա ամուսնացել է այդ աղջկա հետ, և դրանից հետո ամեն ինչ կարգավորվել է։

— Կարծում եմ, որ այդ երիտասարդն ինձ դուր կգար,— ասաց Կ-ն։

— Կասկածում եմ, թե այդ տղան դուր գար քեզ։ Գուցե կի՞նը։ Բայց ես այլևս չեմ խանգարի ձեզ։ Գնամ քնեմ։ Լույսը պետք է հանգցնեմ, որ ծնողներիս չխանգարի։ Նրանք թեև անմիջապես խոր քուն են մտնում, սակայն մի ժամ

Մեր ընտանիքն առայժմ ոչ մի բանի կարիք չէր զգում, բոլոր պարտապանները վճարել էին փողը, արդյունքները շատ նպաստավոր էին, մթերքներից եթե որևէ բան պակասում էր, մեր բարեկամներն էին գաղտնի օգնում, մի բան, որ դժվար չէր, որովհետև բերքահավաքի շրջանն էր, ու, թեև մենք մեր սեփական դաշտը չունեինք, մեզ ոչ մի տեղ չէին կանչում աշխատելու. կյանքում առաջին անգամ անգործության էինք դատապարտված։ Բոլորս միասին պատուհանները փակել, նստել էինք տանը, մինչդեռ հուլիս-օգոստոս ամիսների շոգն էր։ Ոչինչ չէր կատարվում, ոչ մի նորություն չկար, ոչ մի տեղեկություն չէինք ստանում, ո՛չ այցի էին գալիս մեզ, ո՛չ էլ որևէ լուր ուղարկում, ոչինչ։

— Իսկ եթե ոչինչ չէր կատարվում ու որոշակի ոչ մի պատիժ չէր սպասվում, հապա էլ ինչի՞ց էիք վախենում։ Ի՞նչ մարդիկ եք դուք։

— Ինչպե՞ս բացատրեմ։ Մենք գալիքից չէինք վախենում, այլ արդեն տառապում էինք ներկայի պայմաններում, պատիժն արդեն օղակել էր մեզ։ Գյուղի մարդիկ սպասում էին, որ մենք իրենց մոտ կգնայինք, որ հայրս նորից կբացեր իր արհեստանոցը, Ամալյան, որ շատ գեղեցիկ զգեստներ էր կարում, նորից կսկսեր պատվերներ ընդունել, իհարկե, գյուղում ամենաճանաչված մարդկանցից միայն։ Կատարվածը, ախր, բոլորին էր ցավ պատճառում։ Երբ գյուղում հարգված մի ընտանիք է ամբողջովին մեկուսացվում, դրանից ամեն մեկն էլ ինչ-որ չափով տուժում է։ Երբ նրանք հրաժարվեցին մեզնից, կարծում էին, թե իրենց պարտքն են կատարել. մենք էլ, եթե նրանց տեղը լինեինք, այլ կերպ չէինք վարվի։ Ախր, նրանք կարգին չէին էլ իմացել, թե ինչ էր կատարվել, միայն լրաբերն էր վերադարձել հյուրանոց՝ բուռը լիքը թղթի կտորտանքներ լցրած։ Ֆրիդան տեսել էր նրան, երբ նա դուրս էր գնացել, հետո ներս մտնելիս մի քանի բառ էր փոխանակել հետն ու իմանալուց հետո անմիջապես տարածել նորությունը, բայց նորից ոչ մեր հանդեպ ունեցած թշնամական տրամադրվածության պատճառով, այլ, պարզապես, իր պարտքն էր կատարել. նման դեպքում ցանկացած մարդ էլ այդպես կվարվեր։ Բայց, ինչպես դու ասացիր, մարդիկ ավելի սրտամոտ կընդունեին այս պատմության երջանիկ

www.a-pdf.com

ավարտը։ Եթե մենք մի անգամ գնայինք ու ասեինք, թե ամեն ինչ արդեն կարգին է, որ եղածն, օրինակ, այս ընթացքում մինչև վերջ պարզված թյուրիմացություն էր միայն, կամ թեկուզ զանցանք էր եղել ու արդեն ամեն ինչ ուղղվել էր, կամ (նույնիսկ այս բացատրությունը կբավարարեր մարդկանց), որ դղյակում ունեցած մեր կապերի շնորհիվ կարողացել ենք գործի ընթացքը կասեցնել, ապա հաստատ բոլորը գրկաբաց կընդունեին մեզ, գրկախառնություններով, համբույրներով ու ուրախությամբ կդիմավորեին մեզ։ Ես մի քանի անգամ տեսել եմ, որ ուրիշների հետ նման բաներ եղել են։ Եթե մենք գնայինք ու մարդկանց աչքին երևայինք, նույնիսկ անհրաժեշտ չէր լինի որևէ բան հայտնել, բավական էր, որ առանց նամակի մասին մի բան խոսելու շարունակեինք հին ծանոթությունները, և բոլորն էլ ուրախությամբ կհրաժարվեին գործը քննարկել. վախի հետ մեկտեղ այս պատմության տհաճ բնույթն էր, ախր, պատճառը, որ մարդիկ հեռացան մեզնից, պարզապես այդ ամենի մասին ոչ մի բան չլսելու, չխոսելու և չմտածելու, ոչ մի դեպքում դրա հետ չառնչվելու համար։ Երբ Ֆրիդան եղելությունը տարածեց, չարախնդալու ցանկությունը չէր նրան այդ քայլին մղում. նա ուզում էր բոլորին տեղյակ պահել, համայնքի ուշադրությունը հրավիրել, որ այստեղ մի բան էր կատարվել, որից պետք էր ամենայն զգուշությամբ հեռու մնալ։ Այստեղ ոչ թե մեր ընտանիքը ուշադրություն գրավեց, այլ պատմությունը, իսկ մեր ընտանիքը կապված էր այդ պատմության հետ։ Եթե մենք նորից դուրս գնայինք, թողնեինք, որ եղածը մոռացության մատնվեր, մեր վարքով ցույց տայինք, թե կարևոր չէ ինչպես, բայց գործը հարթել ենք, իսկ հասարակությունը հավաստիանար, որ գործը՝ ինչպիսին էլ այն ուզում է լիներ, այլևս քննարկման նյութ չէր դառնա, նույնիսկ այդ դեպքում ամեն ինչ լավ կլիներ։ Մենք ամենուր կվերագտնեինք օգնության նախկին պատրաստակամությունը և, եթե անգամ գործը լրիվ մոռացած չլինեինք, մարդիկ կհասկանային մեզ ու կօգնեին ընդհանրապես մոռանալ այն։ Դրա փոխարեն մենք նստեցինք տանը։ Չգիտեմ թե ինչի էինք սպասում. հավանաբար՝ թե ինչ որոշում կընդուներ Ամալյան։ Այն ժամանակվանից նա իր ձեռքն

առավ ընտանիքի դեկը և պահեց ամուր։ Առանց որևէ բան ձեռնարկելու, առանց հրամայելու, խնդրելու, համարյա ոչ մի բան չասելով։ Մենք՝ մյուսներս, խորհրդակցելու շատ բան ունեինք, երբեմն հայրս հանկարծահաս վախով ինձ կանչում էր իր մոտ, և ես գիշերվա կեսն անց էի կացնում նրա մահճակալի կողքին։ Բարնաբասը կամաց-կամաց հասկանում էր, թե ինչ է տեղի ունենում, նույն բանի համար շարունակ բացատրություն էր պահանջում տաքացած ու հավանաբար կռահում էր, որ իր համար այլևս գոյություն չունեին իր հասակակիցներին սպասվող անհոգ սարիները, և մենք երբեմն, ճիշտ այնպես, ինչպես հիմա ենք նստել, նստում էինք իրար կողքի ու մոռացության մեջ ընկած չէինք նկատում, որ գիշերն եկավ, անցավ ու նորից լույս է բացվում։ Ընտանիքում ամենաթույլը մայրս էր, իսկ դրա պատճառը հաստատ այն էր, որ նա ոչ միայն բոլորի վիշտն էր կիսում, այլ ամեն մեկինն առանձին-առանձին, և մենք ահուսարսափով էինք սպասում այն փոփոխություններին, ինչ, մեր կարծիքով, սպասվում էր մեր ողջ ընտանիքին։ Մորս նախասիրած տեղը բազմոցի անկյունն էր։ Վաղուց է, ինչ մենք գրկվել ենք բազմոցից, այն հիմա դրված է Բրունսվիկի մեծ սենյակում։ Մայրս նստում էր մի անկյունում, և ոչ ոք հաստատ չգիտեր՝ ինչում էր նա, թե՝ ինչպես կարելի էր եզրակացնել շարժվող շուրթերից, երկար խոսում ինքնիրեն։ Այնքան բնական էր ստացվում. երբ մենք շարունակում էինք քննարկել Նամակի պատմությունը, սկզբից, վերջից, հավատի մանրամասներով ու բոլոր անհավանական հնարավորություններով հանդերձ քննարկում էինք, իսկ որ լավ ավարտի հանգեցնող միջոցներ հնարելով գերազանցում էինք միմյանց, բնական էր ու անխուսափելի, բայց լավ չէր, որովհետև այդպես շարունակ ավելի էինք խրվում այնտեղ, որտեղից դուրս պրծնել էինք ուզում։ Իսկ ի՞նչ օգուտ կար մեր հիանալի մտահղացումներից. առանց Ամալյայի համաձայնության ոչ մեկը չէինք կարող իրականացնել, դրանք սոսկ նախապատրաստություններ էին և անիմաստ էին այն պատճառով, որ դրանց արդյունքները բոլորովին չէին հասնում Ամալյային, իսկ եթե անգամ հասնեին էլ, լռությունից բացի

մենք ուրիշ պատասխանի չէինք արժանանա։ Բարեբախտաբար, Ամալյային ես հիմա ավելի լավ եմ հասկանում, քան առաջ։ Մեր վշտից նրան ավելի շատ էր բաժին ընկնում, քան մեզ բոլորիս, և ես չեմ հասկանում, թե նա ինչպե՞ս էր դիմանում ու այս պահին դեռ ապրում է մեր կողքին։ Մայրիկին հավանաբար վիճակվել էր մեր բոլորի վիշտը, ու նա դիմանում էր իր գլխին եկածին։ Բայց երկար չդիմացավ։ Այսօր այլևս չի կարելի ասել, թե նա շարունակ կրում է վշտի ծանրությունը. նրա միտքը դեռ այն ժամանակ էր պղտորված։ Մինչդեռ Ամալյան դիմանում էր ոչ միայն վշտին, այլև կարողանում էր դրա խորքը թափանցել։ Մենք հետևանքներն էինք նկատում, նա պատճառներն էր տեսնում, մենք հույսներս որևէ փոքր միջոցի վրա էինք դրել, նա գիտեր, որ ամեն ինչ վճռված է, մենք շշուկով խոսում էինք իրար հետ, նա լռում էր շարունակ։ Իրականության հետ աչք-աչքի նա ապրում էր ու դիմանում այս կյանքին ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր։ Այդ բոլոր դժվարությունների մեջ մենք մեզ շատ ավելի լավ էինք զգում, քան նա։ Մենք, իհարկե, ստիպված էինք հեռանալ մեր տանից. Բրունսվիկն զբաղեցրեց այն, իսկ մեզ այս խրճիթը հատկացրին։ Ձեռքի սայլակն առած, մի քանի անգամ գնալ-գալով մեր ողջ ունեցվածքը տեղափոխեցինք այստեղ։ Ես ու Բարնաբասը քաշում էինք, Ամալյան ու հայրիկը օգնում էին, հետևից էին հրում, մայրիկը՝ ում ամենասկզբից էինք տեղափոխել, անընդհատ մեղմաձայն վշվշալով դիմավորում էր մեզ սնդուկին նստած։ Բայց ես հիշում եմ, որ նույնիսկ շարշարանքով լի գնալ-գալու ժամանակ (մենք շատ էինք ամաչում, որովհետև հաճախ էինք հանդիպում բերք տեղափոխող սայլերի, որոնց ուղեկիցները կանգ էին առնում մեր դիմաց ու շրջում հայացքները) Բարնաբասն ու ես անգամ այդ ճանապարհներին չէինք կարողանում դադար տալ ու մեր հոգսերի ու նախագծերի մասին չխոսել. երբեմն կանգնում-մնում էինք, ու միայն հայրիկի «հալլո» կանչն էր հիշեցնում մեր անելիքի մասին։ Սակայն նույնիսկ տեղափոխվելուց հետո քննարկումները մեր կյանքը չփոխեցին, սկսեցինք միայն աղքատություն զգալ աստիճանաբար։ Բարեկամների տված օժանդակությունը դադարեց, եղած պաշարները սպառվեցին հա-

մարյա, և հենց այդ ժամանակվանից սկիզբ առավ մեր հանդեպ եղած արհամարհանքը, որ հիմա դու ես տեսնում։ Մարդիկ նկատեցին, որ մենք նամակի հետ կապված պատմությունը հաղթահարելու ուժ չունեինք և շատ վատ արձագանքեցին դրան, նրանք չթերագնահատեցին մեր ճակատագրի դժվարությունը, թեև ոչինչ չդիտեին, բայց հավատացած էին, որ իրենք էլ փորձությանը չէին դիմանա, սակայն ավելի անհրաժեշտ համարեցին մեզանից վերջնականապես մեկուսանալը։ Եթե մենք այդ փորձությունը կարողանայինք հաղթահարել, նրանք համապատասխան ձևով լավ վերաբերմունք ցույց կտային մեզ, բայց որովհետև չհաջողվեց, ընդմիշտ վարվեցին այնպես, ինչպես առայժմ են վարվում. բոլոր շրջանակներում վերջնականապես մեկուսացրին մեզ։ Մեր մասին արդեն խոսում էին ոչ ինչպես մարդկանց մասին, մեր ազգանունն այլևս չէր տրվում, եթե հարկ էր լինում խոսել, մեզ ըստ Բարնաբասի էին անվանում. ընտանիքում ամենաանմեղը նա էր։ Նույնիսկ մեր խրճիթի շուրջ վատ լուրեր տարածվեցին և, եթե լավ հիշես, կխոստովանես, որ առաջին անգամ ներս մտնելիս դու ևս հավատացած էիր, որ այդ արհամարհանքը արդարացված է։ Ավելի ուշ, երբ մարդիկ երբեմն գալիս էին մեր տուն, բոլորովին անմեղ բաների պատճառով վեր էին ցցում քթները. օրինակ, որ ձեթի ճրագը սեղանի վերևն է կախված։ Արդյոք ուրիշ էլ որտե՞ղ պետք է կախված լիներ, եթե ոչ սեղանի վերևը։ Մինչդեռ դա նրանց անտանելի էր թվում։ Եթե հանկարծ լամպը մի ուրիշ տեղ կախեինք, նրանց վերաբերմունքը, միևնույն է, չէր փոխվի։ Մենք ու մեր ունեցած ամեն ինչը նույն արհամարհանքին արժանացանք։

ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ

— Իսկ ինչ արեցինք մենք այդ պայմաններում։ Ավելի վատ բան, քան կկարողանայինք անել, քան այն, ինչը պատճառ էր եղել կատարվածին, մի բան, ինչի համար կարելի էր լրիվ արդարացնել մեր հանդեպ եղած արհամար-

www.a-pdf.com

հանքը. այսինքն՝ մենք դավաճանեցինք Ամալյային, դադարեցինք ենթարկվել նրա անխոս հրամանին, մենք այլևս չէինք կարող այդպես ապրել, չէինք կարող ապրել առանց որևէ հույսի և սկսեցինք ամեն մեկս իր ձևով խնդրել դղյակին, որ ներեն մեզ։ Թեև գիտեինք, որ ի վիճակի չենք լինի ինչ-որ բան ուղղել, գիտեինք, որ դղյակի հետ ունեցած հույս ներշնչող միակ կապը՝ Սորտինին՝ հայրիկի հանդեպ բարեհաճ տրամադրված պաշտոնյան, դեպքերի բերումով անմատչելի էր դարձել մեզ համար, չնայած դրան, մենք գործի անցանք։ Հայրս սկսեց։ Սկսվեցին անիմաստ խընդրանքները, նախագահին, փաստաբաններին, զրագիրներին, քարտուղարներին դիմելը։ Մեծ մասամբ չէին ընդունում նրան, և երբ խորամանկության կամ դիպվածի շնորհիվ նա ընդունելության էր արժանանում (ինչպես էինք ցնծում նման լուր ստանալիս ու շփում էինք ձեռքները), ապա նրան անսովոր արագությամբ մերժում էին և այլևս չէին ընդունում։ Նրան պատասխանելը շատ հեշտ էր, դղյակին դա այնքան հեշտ էր հաջողվում։ Ի՞նչ էր ուզում հայրս, ի՞նչ էր պատահել նրան, ինչի՞ համար էր նա ուզում ներում ստանալ, ե՞րբ և ո՞վ էր դղյակում նրա դեմ թեկուզև մատ թափ տվել։ Իհարկե, նա սնանկացել էր, կորցրել էր պատվիրատուներին և այլն, բայց դրանք առօրյա կյանքի երևույթներ էին, արհեստի ու շուկայի հետ առնչվող գործեր, այդ ամենի մասի՞ն էլ էր դղյակը մտահոգվելու։ Իրականում դղյակում մտածում են ամեն ինչի մասին, բայց հո նրանք չէի՞ն կարող այդպես հեշտ ու ուրիշ ոչ մի նպատակ չհետապնդելով, քան մի առանձին մարդու շահերին ծառայելն էր, կոպտորեն միջամտել դեպքերի ընթացքին։ Մի՞թե դղյակը պարտավոր էր իր պաշտոնյաներին ուղարկել, որ սրանք հայրիկի պատվիրատուների հետևից վազեին ու ստիպողաբար վերադարձնեին։ Սակայն, առարկում էր հայրս (այս բոլորը մենք մինչև խնդրելն ու դրանից հետո մանրամասն, մի անկյունում խմբված, քննարկում էինք տանը, կարծես թաքնվում էինք Ամալյայից, որ թեև տեսնում էր ամեն ինչ, բայց թույլ էր տալիս, որ քննարկեինք), սակայն, առարկում էր հայրս, ինքը սնանկանալու պատճառով չի դանդատվում, այն ամենը, ինչ ինքը կորցրել էր, շատ հանգիստ կվերականգներ,

www.a-pdf.com

այդ ամենը երկրորդական էր, միայն թե ներեին իրեն։ «Բայց ի՞նչը պետք է ներեն» պատասխանում էին նրան, մինչև հիմա ոչ մի բողոք չի եկել, գոնե արձանագրություններում գրանցված ոչինչ չկա, այսինքն՝ փաստաբաններին մատչելի արձանագրություններում, իհարկե, հետևաբար, ինչքան որ հնարավոր էր եզրակացնել, նրա դեմ ո՛չ որևէ բան էր ձեռնարկված, ո՛չ էլ նախատեսվում էր։ Գուցե նա կարող է պաշտոնական որևէ կարգադրությո՞ւն հիշատակել, որ արձակվել է նրա դեմ։ Հայրս չէր կարող հիշատակել։ Գուցե պաշտոնական որևէ կազմակերպության միջամտությո՞ւն է եղել։ Այդ մասին հայրս ոչինչ չգիտեր։ Հիմա ի՞նչ, եթե ինքը ոչինչ չգիտե, եթե ոչինչ չի եղել, էլ ի՞նչ է ուզում նա, ի՞նչը պետք է ներեն նրան։ Ամենաշատը այն, որ նա հիմա աննպատակ զզվեցնում է պաշտոնյաներին, բայց հենց դա չէր կարելի ներել։ Հայրս տեղի չտվեց, այն ժամանակ նա դեռ ուժեղ տղամարդ էր, իսկ պարտադրված պարապությունը բավական ժամանակ էր տրամադրում նրան։ «Ես կվերականգնեմ Ամալյայի պատիվը, և դա այլևս երկար չի տևի», օրվա մեջ մի քանի անգամ և շատ կամաց, որովհետև Ամալյան չպետք է լսեր, ինձ ու Բարնաբասին ասում էր նա։ Սակայն այդ խոսքերը միայն Ամալյայի համար էին ասվում, որովհետև նա իրականում չէր մտածում պատիվը վերականգնելու մասին, այլ ներում ստանալ էր ուզում։ Սակայն ներված լինելու համար նա պետք է նախ իր մեղքը ապացուցեր, մինչդեռ գրասենյակում նրա մեղքը հերքում էին։ Նա այն մտքին հանգեց (դա ցույց էր տալիս, որ նա հոգեպես թուլացել է արդեն), նա այն մտքին հանգեց, թե՝ որովհետև ինքը չի վճարում անհրաժեշտ գումարը, իր մեղքը թաքցնում են։ Մինչ այդ նա վճարում էր միայն հաստատված վարձերը, որ գոնե մեր դրության համար բավական բարձր էին։ Սակայն այժմ նա արդեն սկսեց մտածել, թե ավելի շատ պետք է վճարի, մի բան, որ, ինչ խոսք, ճիշտ չէր, որովհետև մեր դրասենյակներում՝ հանուն պարզության, ավելորդ խոսակցությունից խուսափելու համար կաշառք թեև վերցնում էին, սակայն դրանով ինչ-որ բանի հասնելն անհնար էր։ Բայց որովհետև հայրս դրա հետ հույսեր էր կապում, չէինք ուզում խանգարել նրան։ Մեզ մոտ մնացած ամեն ինչը (դրանք

www.a-pdf.com

համարյա միայն ամենաանհրաժեշտ իրերն էին) վաճառեցինք, որ գործելու համար միջոցներ տրամադրեինք հայրիկին և երկար ժամանակ բավականություն էինք զգում, երբ առավոտները ճանապարհ ելնելիս նա կարողանում էր թեկուզև մի քանի գրոշ զրնգացնել գրպանում։ Ողջ օրը մենք սոված էինք մնում, մինչդեռ մեր փողերով ձեռք բերված միակ բանն այն էր, որ հայրս որոշակի հույսեր փայփայելու ուրախությամբ էր ապրում։ Դա հազիվ թե առավելություն լիներ։ Շուտով նա հոգնեց գնալ-գալուց և այն, ինչ առանց փողի միջամտության շատ շուտով իր բնական ավարտը կունենար, այդպես ավելի երկար տևեց։ Քանի որ լրացուցիչ վարձատրությամբ հնարավոր չէր որևէ արտակարգ բանի հասնել, գրագիրներից մեկնումեկը երբեմն-երբեմն փորձում էր գոնե արտաքուստ ինչ-որ բան անել, խոստանում էր հետաքրքրվել, ակնարկում էր, թե իբր մի հետք է գտել, որով ոչ թե պարտավոր է, այլ միայն ի սեր հորս է ընթանալու։ Կասկածելու փոխարեն հայրս շարունակ ավելի դյուրահավատ էր դառնում։ Բացահայտ անիմաստ խոստումներով նա տուն էր գալիս, և նրան թվում էր, թե վերադարձրել է տան ողջ երջանկությունը, իսկ մեզ համար դժվար էր նայել, թե ինչպես նա՝ Ամալյայի թիկունքում կանգնած, աղճատված ժպիտով ու լայն բացված աչքերով Ամալյային ակնարկելով ուզում էր հասկացնել մեզ, թե Ամալյայի փրկությունը, որ Ամալյայից բացի ուրիշ ոչ մեկին այդ աստիճան անակնկալի չէր բերի, իր կրած չարչարանքների շնորհիվ շատ մոտ է, սակայն այդ ամենը դեռ գաղտնիք է, և մենք պետք է խստորեն պահպանենք այն։ Դա, ինչ խոսք, շատ երկար կտևեր, եթե մենք, ի վերջո, անկարող չլինեինք փող տրամադրել հորս։ Թեև այդ ընթացքում Բրունսվիկը՝ բազմաթիվ խնդրանքներից հետո Բարնաբասին աշխատանքի էր ընդունել (աշխատանքի պայմանները հետևյալն էին. Բարնաբասը պատվերը վերցնում էր մթնով, գործը վերադարձնում էր մութն ընկնելուց հետո, և պետք է համաձայնել, որ մեր պատճառով Բրունսվիկը որոշակի վտանգի էր ենթարկում իրեն, բայց նա գործի համար աննշան վարձ էր տալիս Բարնաբասին, մինչդեռ նրա աշխատանքը անթերի էր), սակայն ստացած վարձը հազիվ

էր բավականացնում, որ մենք փրկվեինք կատարյալ սովամահությունից։ Մեծ զգուշությամբ հորս խնայելով ու երկարաժամանակ նախապատրաստելուց հետո, մենք տեղեկացրինք փող տրամադրելը դադարեցնելու մասին, բայց հայրս շատ հանգիստ ընդունեց փոփոխությունը։ Թեև նա այլևս անկարող էր գիտակցել իր միջամտության անհեռանկար լինելը, սակայն անընդհատ հիասթափություններից հոգնել էր արդեն։ Նա ասաց (նա առաջվա պես պարզ չէր խոսում, նախկինում նրա խոսքը շափազանց հստակ էր), թե հիմա քիչ փող հարկավոր կլիներ, վաղը կամ արդեն այսօր ինքն ամեն ինչ կիմանար, մինչդեռ հիմա պարզվում է, որ ամեն ինչ իզուր է եղել, որ ինքը միայն փողի պատճառով էր անհաջողության մատնվում և այլն, բայց նրա խոսելու տոնը ցույց էր տալիս, որ ինքն էլ իր խոսքերին չէր հավատում։ Միաժամանակ նա նոր ծրագրեր էր կազմում։ Որովհետև նրան չէր հաջողվել իր մեղքն ապացուցել, պաշտոնական ճանապարհով չէր կարողացել ոչնչի հասնել, նա պետք է վերջնականապես անցներ թախանձանքներին ու անձամբ պաշտոնյաներին դիմեր։ Նրանց մեջ, իհարկե, բարի, կարեկից սրտի տեր մարդիկ կլինեին, որ եթե գործի ժամանակ իրավունք չէինք ունեցել իրենց սրտի ձայնին լսել, ապա՝ ծառայությունից դուրս հնարավոր էր, իհարկե, եթե մարդ ճիշտ պահին հանկարծակիի բերեր նրանց։

Այստեղ Կ-ն, որ համակված ականջ էր դնում Օլգային, ընդհատեց նրան։

— Եվ դու կարծում ես, թե նա ճիշտ չի՞ եղել։— Թեև պատմության շարունակությունն էր Կ-ի հարցին պատասխան տալու, բայց Կ-ն ուզում էր ամեն ինչ անհապաղ իմանալ։

— Ոչ, կարեկցանքի և նման բաների մասին խոսք լինել անգամ չէր կարող։ Ինչքան էլ ուզում է ջահել ու անփորձ լիներինք, համոզված էինք դրանում։ Իհարկե, հայրս էլ գիտեր, բայց նա մոռացել էր, այնպես, ինչպես մոռացել էր ուրիշ շատ բաներ։ Նրա ծրագիրը հետևյալն էր. կանգնել գյուղակի մոտերքում՝ ճանապարհի վրա, որտեղով պաշտոնյաների կառքերն էին անցնում, որ եթե ինչ-որ կերպ հնարավոր լիներ, հայտներ ներման վերաբերյալ իր խնդրանքը։ Անկեղծ

www.arpdf.com

ասած, միևնույն է՝ նույնիսկ եթե անհավատալի բան էլ տեղի ունենար ու խնդրանքն իսկապես պաշտոնյաներից մեկին հասներ, նրա ծրագիրը խելքից դուրս էր։ Արդյոք մեն մի պաշտոնյան կկարողանա՞ր ներել։ Դա կարող էր առնվազն ողջ իշխանության անելիքը լինել, բայց անգամ այն հավանաբար ոչ թե ներել, այլ դատել կարող էր միայն։ Եվ արդյոք մի պաշտոնյան, եթե անգամ նա կառքից իջներ ու գործով հետաքրքրվել կամենար, այն բանից հետո, երբ հայրս՝ խեղճ, հոգնած ու ծեր մարդը, անհասկանալի խոսքերով նրան ներկայացներ իր խնդրանքը, գործի մասին պատկերացում կկազմե՞ր ընդհանրապես։ Պաշտոնյաները շատ ուսյալ են, բայց միակողմանի են զարգացած։ Իր բնագավառից մի բառ լսելիս պաշտոնյան ողջ ասելիքը կռահում է, բայց երբ խոսքը ուրիշ բաժնի գործին է առնչվում, նրան թեկուզ ժամերով էլ բացատրեին, նա քաղաքավարի գլխով կաներ, բայց մի բառ անգամ չէր հասկանա։ Եվ դա ինքնին հասկանալի է. փորձիր հապա ինքդ կողմնորոշվել պաշտոնական ինչ-ինչ մանրուքներում, քեզ առնչվող այն աննշան գործերում, որ ուզածդ պաշտոնյան կարող է ուսը մի թեթև շարժելով պարզել, փորձիր միայն խորանալ դրանց մեջ և կտեսնես, որ դրանցով կարելի է մինչև կյանքի վերջը զբաղվել ու արդյունքի չհասնել։ Հայրս թեկուզ իրավասու պաշտոնյայի էլ հանդիպեր, նա, միևնույն է, առանց փաստաթղթերի չէր կարողանա ոչինչ անել, առավել ևս՝ փողոցում։ Իհարկե, նա չէր կարողանա ներել, այլ որպես պաշտոնյա կլսեր գործն ու օգնած լինելու համար պաշտոնական ճանապարհը ցույց կտար, իսկ հորս բոլորովին չէր հաջողվել պաշտոնական ճանապարհով որևէ բանի հասնել։ Արդեն ինչքա՞ն պետք է հորս հոգուն հասած լիներ, որ իր նոր ծրագրով էր ուզում ելք գտնել։ Եթե այդ ձևով հաջողության հասնելու նվազագույն հնարավորություն լիներ, ապա այնտեղ՝ փողոցի վրա, խնդրատուները կվխտային, բայց քանի որ անհնար էր, իսկ նույնիսկ տարրական կրթություն ստացած մարդը գիտեր դա, դղյակի ճանապարհը դափ-դատարկ էր։ Հավանաբար ճանապարհի դատարկությունն էլ էր հույս տալիս հորս, և նա ամեն կերպ սնում էր իր հույսերը։ Իսկ նրա համար խիստ անհրաժեշտ էր հույս տածելը, թեև առողջ բանականությունը բոլորովին

www.a-pdf.com

չէր տրվի նման մտածմունքների և արդեն արտաքին նախանշաններից կհասկանար դրանց անհնարինությունը։ Երբ պաշտոնյաները գյուղ կամ հետ՝ դղյակ են մեկնում, ապա դրանք բոլորովին էլ հաճույքի համար չեն անում. գյուղում ու դղյակում նրանց գործն է սպասում, այդ պատճառով նրանք սլանում են արագընթաց։ Նրանց մտքով չի էլ անցնում կառքի պատուհանից դուրս նայել ու դրսում հայցվոր փնտրել, այլ փաստաթղթերով լիքը լցված կառքերի մեջ նրանք գործեր են ուսումնասիրում։

— Սակայն ես տեսել եմ պաշտոնյաներից մեկի սահնակի ներսը, իսկ այնտեղ ոչ մի փաստաթուղթ չկար։— Օլգայի պատմությունները Կ-ի համար մի մեծ ու անհավանական աշխարհ բացեցին, և նա չէր կարող հրաժարվել իր ձեռք բերած փորձով դրան հաղորդակից լինելուց, որպեսզի համոզվեր ինչպես այդ աշխարհի, այնպես էլ սեփական անձի գոյության մեջ։

— Հնարավոր է,— համաձայնեց Օլգան։— Այդ դեպքում՝ ավելի վատ։ Ուրեմն պաշտոնյան այնքան կարևոր գործեր է ունեցել, որ արձանագրությունները թանկ կամ ծավալուն է համարել, որպեսզի դրանք հետը վերցնի։ Այդպիսի պաշտոնյաները դղյակ գնալ-գալուց միշտ քառատրոփ են սլանում։ Հայրիկի համար, համենայնդեպս, ոչ մեկը չէր կամենա ժամանակ տրամադրել։ Դրանից բացի, դղյակ տանողբերող շատ ճանապարհներ կան, մի անգամ մի ճանապարհն են օգտագործում, ու մեծ մասամբ բոլորն այդպես են անցնում, մյուս անգամ՝ ուրիշը, և բոլորն այդ կողմով են գնում։ Թե ինչ օրենքներով է փոփոխությունը տեղի ունենում, դեռ պարզ չէ։ Առավոտյան ժամը ութին պաշտոնյաների կառքերը մի ճանապարհով են վարգում, տաս րոպե անց երրորդ ճանապարհն են գերադասում, կես ժամ անց՝ նորից առաջին ճանապարհը, և հետո ողջ օրվա ընթացքում այնտեղով են անցնում, սակայն ամեն հաջորդ պահին փոփոխության հնարավորությունն առկա է։ Թեև գյուղի մոտակայքում բոլոր ճանապարհները միանում են, բայց կառքերն այնտեղ սուրալով են անցնում, մինչդեռ դղյակի մատույցներում արագությունը փոքր-ինչ չափավորում են։ Եվ ինչպես անկանոն ու անկանխատեսելի է փողոցներով երթևեկելու հերթականու-

թյունը, այդպես է նաև կառքերի քանակը։ Օրեր են լինում, երբ ոչ մի կառք չի երևում, բայց հետո մեկ էլ տեսար խմբերով են անցնում։ Հիմա, այս ամենին հակադրելով, պատկերացրու մեր հայրիկի դրությունը։ Լավագույն կոստյումը հագած (շուտով միայն այդ կոստյումը մնաց), ամեն առավոտ մեր բարեմաղթությունների ուղեկցությամբ նա դուրս էր գալիս տանից, հրշեջ խմբի՝ ապօրինաբար մոտը պահած փոքր կրծքանշանը վերցնում էր հետը, որ գյուղից դուրս կպցներ կրծքին։ Գյուղի մեջ նա վախենում էր ցույց տալ այն, ու թեև նշանն այնքան փոքր էր, որ երկու քայլից հազիվ էր երևում, հորս կարծիքով, սակայն, պետք է ընդունակ լիներ սլացող կառքերի մեջ նստած պաշտոնյաների ուշադրությունն իր կողմը գրավել։ Դղյակի մուտքից ոչ շատ հեռու այգեգործական կոոպերատիվ կար, այն պատկանում էր ոմն Բարթուղի, որ բանջարեղեն էր մատակարարում դղյակին։ Այնտեղ՝ այգու ճաղաշարի նեղ հիմնաքարերի վրա հայրս մի տեղ էր գտել։ Բարթուղը հանդուրժում էր նրան, որովհետև նախկինում մտերիմներ էին եղել ու հորս ամենահավատարիմ պատվիրատուներից մեկն էր։ Իմիջիայլոց, նրա մի ոտքը թեթևակի հաշմված էր, և նա միշտ այն կարծիքին էր եղել, թե միայն հայրս էր ի վիճակի նրա համար համապատասխան կոշիկ կարել։ Հայրս ամեն օր նստում էր այնտեղ։ Մռայլ ու անձրևոտ աշուն էր, բայց եղանակը հորս համար ոչ մի նշանակություն չուներ։ Առավոտվա որոշակի ժամերին նա մի ձեռքը դնում էր դռան բռնակին ու մյուսը թափահարելով հրաժեշտ էր տալիս մեզ, երեկոները լրիվ թրջված վերադառնում էր (թվում էր, թե նա օրըստօրե ավելի էր կուչ գալիս) ու մի անկյուն նետվում։ Սկզբում նա պատմում էր իր գլխով անցած թեկուզև աննշան բաները. որ Բարթուղը կարեկցանքից ու հին ծանոթությունից դրդված, ճաղաշարի վրա ծածկոց էր գցել, կա՛մ որ կողքից սլացող կառքերից մեկի մեջ, իր կարծիքով, այս կամ այն պաշտոնյային է նկատել, կա՛մ էլ թե կառապաններից մեկը ճանաչել է իրեն ու կատակի համար մտրակով ձաղկել։ Ավելի ուշ նա դադարեց նման բաներ պատմել, բացահայտ երևում էր, որ այլևս հույս չուներ, թե ինչ-որ բանի կհասնի։ Նա այժմ արդեն իր պարտքն էր համարում, պարապ օրերի իր գործը,

այնտեղ գնալ ու օրն անցկացնել ճաղաշարի մոտ։ Նրա ուսմատիկ ցավերը այն ժամանակվանից սկսվեցին։ Ձմեռը մոտեցավ, ձյունը շուտ եկավ. մեզ մոտ ձմեռը շուտ է սկսվում, և նա մեկ նստում էր թաց քարերին, մեկ կանգնում ձյան մեջ։ Գիշերը նա տնքում էր ցավերից, առավոտները երբեմն տատանվում էր, թե արդյոք պե՞տք է գնալ, հետո հաղթահարում էր ինքնիրեն ու գնում էր։ Մայրիկը կախ էր ընկնում նրանից, չէր ուզում թողնել, իսկ նա, հավանաբար, այլևս չհնազանդվող ոտք ու ձեռքերից երկյուղելով, թույլ էր տալիս ընկերակցել իրեն. այդպես մայրս էլ ցավի տեր դարձավ։ Մենք հաճախ էինք նրանց մոտ գնում, կերակուր էինք տանում, պարզապես այցելում էինք կամ ուզում էինք համոզել, որ տուն վերադառնան։ Քանի անգամ ենք գտել նրանց կուչ եկած ու իրար հենված, փաթաթված հագիվ ծածկող բարակ վերմակի մեջ, քարին նստած, մինչդեռ շուրջը միայն ձյունն էր ու գորշ մառախուղ, շրջակայքում ոչ ոք չկար. ո՛չ մարդ, ո՛չ կառք... Սարսափելի տեսարան էր, Կ., սարսափելի տեսարան։

Մի առավոտ հայրս այլևս չկարողացավ անկողնուց հանել բռնված ոտքերը, վիճակն անհույս էր, և տենդով բռնվածի թույլ երևակայությամբ նա պատկերացնում էր, որ տեսնում է, թե ինչպես հենց այդ պահին Բարթուղի այգու մոտ մի կառք կանգ առավ, մի պաշտոնյա իջավ, հայրիկին գտնելու հույսով նայեց ճաղաշարին և զայրացած, գլուխը թափ տալով նորից կառք վերադարձավ։ Միաժամանակ հայրս այնպես էր աղաղակում, կարծես ուզում էր, որ պաշտոնյան այնտեղից նկատեր իրեն, ուզում էր բացատրել, թե ինքը մեղավոր չէ, որ բացակայում է։ Իսկ այդ բացակայությունը երկար տևեց. նա այլևս չվերադարձավ ճաղաշարի մոտ, շաբաթներով ստիպված էր անկողնում մնալ։ Ամալյան ստանձնեց նրա խնամքը, բուժում ու սպասարկում էր նրան։ Ամեն ինչ իր վրա վերցրեց և, իսկապես, որոշ ընդմիջումներով մինչև այսօր անում է։ Նա ցավերը հանգստացնող բուժիչ դեղաբույսեր է ճանաչում, համարյա չի քնում, երբեք ու ոչնչից չի վախենում, համբերատար է ու ծնողների համար ամեն ինչ անում է. մինչ ոչ մի հարցում օգնել չկարո-

www.a-pdf.com

զանալով՝ մենք անհանգիստ այսուայնկողմ էինք նետվում, նա շարունակ հանգիստ էր ու սառնարյուն։ Հետո, երբ հիվանդության ճգնաժամն անցավ ու հայրս՝ զգուշորեն աջ ու ձախ հենվելով կարողացավ ելնել մահճակալից, Ամալյան դադարեց նրան հետևել ու խնամքը նորից մեզ թողեց։

ՕԼԳԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ

— Հիմա արդեն պետք էր հայրիկի համար մի զբաղմունք գտնել, զբաղմունք, որին հայրիկը ի վիճակի էր դեռ, և որն անելով նա կկարողանար մտածել, թե ինքը ծառայում է մեղքն ընտանիքի վրայից վերցնել տալուն։ Այդպիսի գործ գտնելը դժվար չէր, ըստ էության, ցանկացած աշխատանք նպատակահարմար էր նույնքան, ինչքան Բարթուղի այգու դիմաց նստելը, բայց ես մի այնպիսի բան գտա, որ նույնիսկ ինձ էր որոշ հույսեր տալիս։ Միշտ, երբ պաշտոնյաների շրջանում մեր մեղավորության մասին խոսք էր բացվել, շարունակ հիշատակվել էր Սորտինիի բանբերին հասցված վիրավորանքը. ոչ ոք չէր համարձակվել դրանից այն կողմ անցնել։ Եթե այդպես է, ասացի ինքս ինձ, եթե հասարակական կարծիքը, թեկուզև արտաքուստ, միայն նամակատարին հասցված վիրավորանքի հետ է կապված, ապա թեկուզ հենց ձևական կողմը պահպանելու համար հնարավոր կլինի ամեն ինչ կարգավորել, եթե կարողանանք նամակատարի սիրտն առնել։ Հորս բացատրել էին, ախր, որ ոչ մի հայց չի ներկայացվել, ուրեմն գործը դեռ ոչ մի գրասենյակի ձեռք չէր անցել, հետևաբար՝ նամակատարը հանգիստ կարող էր ներել իր անձին հասցված վիրավորանքը. դրանից ավել ոչինչ պետք չէր։ Իհարկե, դա չէր կարող որևէ վճռական նշանակություն ունենալ, միայն ձևականություն էր և ուրիշ հետևանք էլ չէր ունենա, սակայն երևի ուրախացներ հորս և գուցե հնարավոր լիներ նրան տանջած բազմաթիվ խորհրդատուներին՝ ի բավականություն նրա, մի փոքր նեղը լծել։ Ինչ խոսք, նախ պետք էր նամակատարին գտնել։ Երբ հայրիկին պատմեցի ծրագրիս մասին, սկզբում նա շատ բարկացավ։ Ի դեպ, նա շատ կամակոր էր դարձել (նրա մոտ դա ի հայտ

www.a-pdf.com

եկավ հիվանդության ընթացքում, մեկ մտածում էր, թե իբր մենք ենք շարունակ խանգարել իրեն, չենք թողել վերջնական հաջողության հասնել. նախ դադարեցինք փողով օժանդակել, հիմա բոնի պահում ենք անկողնում, և հետո՝ նա այլևս անկարող էր ամբողջությամբ ընկալել ուրիշների մտքերը։ Դեռ մինչև վերջ չպատմած, իմ ծրագիրն արդեն մերժված էր։ Նա ենթադրում էր, թե պետք է շարունակեր Բարթուղի այրուն մոտ սպասել, և որովհետև այլևս չէր կարողանում այնտեղ գնալ, մենք պետք է ձեռնասայլակով տեղ հասցնեինք նրան։ Սակայն ես տեղի չտվեցի, ու նա աստիճանաբար հաշտվեց իմ ծրագրի հետ։ Նրան միայն խանգարում էր այն, որ այս դեպքում ինքը լրիվ կախում ուներ ինձնից, որովհետև նամակատարին ես էի տեսել, մինչդեռ հայրս նրան չէր ճանաչում։ Իհարկե, մի ծառան նման է մյուսին, և ես հաստատ համոզված չէի, թե կկարողանամ ճանաչել Սորտինիի ծառային, այնուամենայնիվ, մենք սկսեցինք հյուրանոց գնալ ու ծառաների մեջ փնտրել նրան։ Թեև նա Սորտինիի ծառան էր եղել ու Սորտինին այլևս գյուղ չէր գալիս, սակայն պարոնները հաճախակի էին իրենց ծառաներին փոխում և շատ հավանական էր, որ կկարողանայինք նամակաբերին մի ուրիշ պարոնի ծառաների խմբում գտնել, եթե նույնիսկ հնարավոր էլ չլիներ անձամբ նրան գտնել, թերևս կարելի էր մյուս ծառաներից որևէ տեղեկություն ստանալ նրա մասին։ Դրա համար հարկավոր էր ամեն երեկո հյուրանոցում լինել, մինչդեռ մեզ ոչ մի տեղ հաճույքով չէին ընդունում, առավել ևս՝ այնտեղ, ուր մենք չէինք կարող որպես վճարունակ հյուրեր հանդես գալ։ Սակայն պարզվեց, որ այնտեղ կարող ենք օգուտ տալ. հավանաբար գիտես, թե ծառաներն ինչ տանջանք էին Ֆրիդայի համար, թեև նրանք մեծ մասամբ հանդարտաբարո մարդիկ են, ում ոչ դժվար ծառայությունը անդյուրաշարժ է դարձրել ու երես տվել։

— Աստված տա, ծառայի կյանքով ապրես։— Այսպիսին է պաշտոնյաների օրհնանքներից մեկը, և, իրոք, ինչ բարվոք կյանքին է վերաբերում, գուցե թե ծառաներն են դղյակի իսկական տերերը. նրանք կարողանում են գնահատել դա և դղյակում, ուր նրանք այնտեղի օրենքներով են շարժվում, հանգիստ են, արժանապատիվ կեցվածքով (դա ինձ բազմիցս

www.a-pdf.com

են հավատել), նույնիսկ այստեղ կարելի է ծառաների մեջ տեսնել նրանց ապրած կյանքի մնացուկները, բայց միայն մնացուկները, որովհետև նրանք կարծես կերպարանափոխվում են այն մտքից, թե դղյակի օրենքները գյուղում իրենց վրա լրիվ չեն տարածվում, սանձարձակ վայրենիների են վերածվում, ոչ մի օրենք չեն ճանաչում ու միայն իրենց անկուշտ մղումներով են առաջնորդվում։ Նրանց անամոթությունը չափ ու սահման չի ճանաչում, գյուղի համար բախտավորություն է, որ նրանք առանց հրամանի իրավունք չունեն հյուրանոցից դուրս ելնել, մինչդեռ հյուրանոցում անհրաժեշտ է լեզու գտնել նրանց հետ։ Դա Ֆրիդային դըժվարությամբ էր հաջողվում, և նրա համար շատ հաճելի էր, որ կարողանում էր ծառաներին հանգստացնելու նպատակով օգտագործել ինձ. արդեն ավելի քան երկու տարի է, շաբաթական երկու անգամ գիշերները ծառաների հետ, ախոռում եմ անցկացնում։ Նախկինում, երբ հայրս դեռ կարող էր ինձ հետ գալ, քնում էր ինչ-որ տեղ՝ պանդոկում և սպասում էր, որ առավոտ վաղ որևէ լուր բերեի։ Հայտնելու շատ բան չունեի։ Մեր փնտրած նամակաբերին մենք մինչև այսօր դեռ չենք գտել, նա պետք է որ առայսօր էլ ծառայելիս լինի Սարտինիի մոտ, որը շատ է գնահատում իր ծառային, և եթե նա ավելի հեռու ընկած գրասենյակներն է քաշվել, վերջինս հավանաբար հետևել է իր պարոնին։ Մեծ մասամբ պարզվում էր, որ ծառաներն էլ մեզ նման վաղուց չէին տեսել նրան, և եթե մեկնումեկն ասում էր, թե վերջերս տեսել էր նրան, հաստատ թյուրիմացություն էր։ Այսպիսով, իմ ծրագիրն ամբողջովին անհաջողության մատնվեց, իսկ մենք չկարողացանք մինչև վերջ իրականացնել այն. նամակաբերին չգտա, մինչդեռ ամեն երեկո հյուրանոց գնալը, այնտեղ գիշերելը, գուցե նաև ինձ կարեկցելը՝ ինչքանով որ հայրս դեռ ի վիճակի էր կարեկցել, ցավոք, լրացրին պակասը, ու նա համարյա արդեն երկու տարի է այն վիճակում է, ինչպես դու ես տեսնում նրան։ Այդուհանդերձ, նա երևի շատ ավելի լավ է, քան մայրս. մենք ամեն օր սպասում ենք նրա վախճանին. որը միայն Ամալյայի չափից դուրս մեծ ջանքերի շնորհիվ է ուշանում։ Հյուրանոցում ես դղյակի հետ հաստատված կապ ձեռք բերեցի։ Զարհամարհես ինձ, եթե ասեմ, թե

www.a-pdf.com

չեմ զղջում արածներիս համար։ Այդ ի՞նչ մի երևելի կապ պետք է լինի, գուցե մտածես դու և իրավացի կլինես։ Մեծ ծանոթություն չէ։ Հիմա ես շատ ծառաների եմ ճանաչում, վերջին տարիներին գյուղ եկած համարյա բոլոր պարոնների ծառաներին ճանաչում եմ, ու եթե հանկարծ մի անգամ դըղյակ գնալու լինեմ, այնտեղ ինձ օտար չեմ զգա։ Իհարկե, նրանք միայն գյուղում են ծառաներ, դղյակում իրենց բոլորովին այլ կերպ են պահում, այնտեղ հավանաբար այլևս ոչ մի մարդու չեն ճանաչում, առավել ևս նրանց՝ ում հետ գործ են ունեցել գյուղում, թեկուզ ախոռում հազար անգամ էլ երդված լինեն, թե շատ ուրախ կլինեն, եթե հանկարծ հանդիպեն դղյակում։ Ի դեպ, ես արդեն հասկացել եմ, թե ինչքան արժեզրկված են ծառաների տված խոստումները։ Սակայն դա չէ ամենակարևորը։ Դղյակի հետ հաստատած իմ կապը միայն ծառաների միջոցով չէր, այլ, որ շատ հավանական է, երևի նաև որևէ մեկի, ով վերևից հետևում էր ինձ ու իմ արած գործին (մեծ ծառայախմբերին հետևելը իշխանությունների գործի անչափ կարևոր մասն է, ու, հավանաբար, մեծ հոգս է պատճառում), իսկ այդ մարդը, որ այդպես հետևում էր ինձ, հավանաբար ավելի նպաստավոր կարծիք կազմեր իմ մասին, քան մյուսները, գուցե թե հասկանար, որ թեև այդքան նվաստացուցիչ կերպով, սակայն մեր ընտանիքի համար էի պայքարում ու շարունակում էի հորս գործադրած ջանքերը։ Եթե այդպես ընդունեն, գուցե թե նեռեն, որ ես ծառաներից փող եմ վերցնում ու մեր ընտանիքի ծախսերի համար օգտագործում։ Դրանից բացի, ես ուրիշ բանի էլ եմ հասել, ինչ, ի դեպ, դու էլ ես ուզում անել. ծառաներից որոշ բաներ եմ իմացել այն մասին, թե ինչպես կողմնակի ճանապարհով, առանց դժվարին ու տարիներ տևող պաշտոնական ընդունելությունների, կարելի է ծառայության անցնել դղյակում։ Այդ ձևով մարդ, թեև օրինավոր ընդունված պաշտոնյա չի լինի, այլ միայն գաղտնի ու կիսով չափ ընդունված, ո՛չ իրավունքներ կունենա, ո՛չ պարտականություններ (ամենավատն այն է, որ ոչ մի պարտականություն չունի), սակայն մի առավելություն կա. այն, որ մոտկանգնած կլինի ամեն ինչին և կարող է գտնել ու օգտագոր-

www.a-pdf.com

ծել նպաստավոր առիթը։ Պաշտոնյա չես, բայց պատահականության բերումով կարող ես մի աշխատանք գտնել։ Ենթադրենք տվյալ պահին պաշտոնյաներից մեկը տեղում չէ, գրասենյակից կանչում են, կարող ես շտապել, և այն, ինչ քիչ առաջ չէիր, կարող ես դառնալ այժմ՝ պաշտոնյա ես։ Իսկ, համենայնդեպս, ե՞րբ նման առիթ կներկայանա։ Երբեմն իսկույն, հազիվ ներս մտած, երբ դեռ չես հասցնում շուրջդ նայել, առիթն արդեն ներկայանում է, և բնավ ոչ ամեն մեկն է, որ նորեկ լինելով՝ ոգու արիություն է ունենում անմիջապես առիթից օգտվելու։ Մի ուրիշ անգամ, սակայն, տարիներ է տևում, երևի ավելի շատ, քան անհրաժեշտ կլիներ պաշտոնական ընդունելության համար, իսկ դրանից հետո կիսով չափ ճանաչման արժանացած մարդն այլևս չի կարող օրինավոր կերպով, պաշտոնապես ընդունվել գործի։ Այստեղ մտածելու շատ բան կա, բայց ինչ են դրանք այն բանի հետ համեմատած, որ պաշտոնական ընդունելության ժամանակ թեկնածուներին մանրակրկիտ կերպով են ընտրում և ինչ-որ պատճառով վատ համբավ ձեռք բերած ընտանիքի անդամը հենց սկզբից է դուրս նետվում, այդպիսի թեկնածուն տարիներ շարունակ դողում է վերջնական արդյունքի մասին մտածելով։ Հենց առաջին օրվանից նրան զարմացած հարցնում են չորս կողմից, թե ինչպե՞ս է նա համարձակվել նման անհեռանկար քայլի դիմել, սակայն նա հույս է փայփայում, հակառակ դեպքում էլ ինչպե՞ս կկարողանար ապրել։ Շատ տարիներ անց՝ գուցե արդեն ծերունի, նա տեղեկանում է մերժման մասին, իմանում է, որ ամեն ինչ կորած է ու իր կյանքն իզուր է անցել։ Իհարկե, այստեղ էլ են բացառություններ լինում, և այդ է պատճառը, որ մարդ հեշտորեն է գայթակղվում։ Դեպքեր են լինում, երբ վատ համբավ ունեցող ընտանիքներից են մարդիկ գործի ընդունվում, պաշտոնյաներ կան, որ իսկապես իրենց կամքին հակառակ են նման որսի հոտը սիրում. ընդունելության քննությունների ժամանակ նրանք հոտոտում են օդը, ծռում են բերանները, աչքերը ոլորում, այդպիսի մարդը նրանց համար ախորժակ գրգռող է թվում, և նրանք ստիպված են լինում ավելի ամուր կառչել իրենց օրենսգրքերից, որ կարողանան դիմակայել ընդունվել ցանկացողին։ Համենայնդեպս, երբեմն դա չի օգ-

www.a-pdf.com

նում, որ մարդ շուտ ընդունվի, այլ նպաստում է գործի անվերջանալի երկար ձգձգվելուն, վերջ չի ունենում ընդհանրապես ու միայն ընդունվել ցանկացողի մահն է ընդհատում դա։ Այսպիսով, ինչպես օրինական ընդունելությունը, այնպես էլ մյուս ձևը, լի են բացահայտ ու գաղտնի շատ դժվարություններով, և նախքան որևէ բան ձեռնարկելը, լավ կլինի ամեն ինչ մանրամասն կշռադատել։ Այդ հարցում մենք՝ Բարնաբասն ու ես, բան բաց չէինք թողել։ Ամեն անգամ, երբ վերադառնում էի հյուրանոցից, նստում էինք իրար հետ, ես պատմում էի իմացածս նորությունները, օրերով քննարկում էինք դրանք, և գործը Բարնաբասի ձեռքերում հաճախ շատ ավելի երկար էր մնում; քան պետք էր։ Քո կարծիքով ես այստեղ պետք է որ սխալ եղած լինեմ։ Ես գիտեի, որ ծառաների պատմածներին այնքան էլ չի կարելի հավատալ, գիտեի, որ նրանք ինձ դղյակի մասին պատմելու ցանկություն չունեին երբեք, շարունակ ուրիշ թեմաներով էին շեղվում, ստիպում էին, որ ամեն մի բառի համար խնդրեմ, հետո իհարկե, երբ սկսում էին պատմել, դատարկ բաներ էին դուրս տալիս, մեծամտանում էին, չափազանցնելու և հնարելու մեջ գերազանցում էին մեկը մյուսին, այնպես որ մութ ախոռում արվող պատմությունները, երբ ծառաները անվերջանալի աղմուկ-աղաղակով մեկը մյուսին էին ընդհատում, լավագույն դեպքում ճշմարտության երևի թե մի քանի լղարիկ հիշատակումներ պարունակեին։ Իսկ ես Բարնաբասին ամեն ինչ պատմում էի այնպես, ինչպես որ մտապահում էի, և նա, որ դեռ ընդունակ չէր ճիշտն ու սուտը իրարից տարբերել ու մեր ընտանիքի դրության պատճառով նման պատմությունների պահանջից պապակում էր, կլանում էր ամեն ինչ ու հաջորդ պատմություններին սպասելու տենչով այրվում ու վառվում։ Իրականում հենց Բարնաբասի հետ էր կապված իմ նոր ծրագիրը։ Այլևս հնարավոր չէր ծառաներից որևէ բան իմանալ, Սորտինիի նամակատարին գտնել չէր լինում, երևի երբեք չգտնեինք, որովհետև Սորտինին ու նամակատարը կարծես ավելի հեռու էին քաշվում, ծառաները հաճախ էին նրանց անուններն ու արտաքին տեսքը մոռանում, և ես ստիպված էի լինում երկար նկարագրել, մինչդեռ իմ հիշեցումներով ոչնչի չէի հասնում։ Ծառաները շարշարվում, փորփրում էին

www.apdf.com

հիշողությունները, սակայն ոչինչ չէին կարողանում ասել նրանց մասին։ Ինչ վերաբերում է ծառաների հետ անցկացրած իմ կյանքին, ես, իհարկե, ոչ մի կերպ չէի կարող ազդել, որ այն անհրաժեշտ ձևով մեկնաբանվեր, միայն կարող էի հուսալ, թե մարդիկ ճիշտ այնպես կհասկանային ինձ, ինչպես ես էի վարվում, և որ դա մեր ընտանիքի վրայից մեղքի թեկուզ չնչին մի մաս կվերցներ, սակայն իմ հույսերի իրականացման նույնիսկ արտաքին նախանշանն իսկ չէր երևվում։ Եվ որովհետև դղյակում մեր հարցով որևէ բանի հասնելու ուրիշ ոչ մի հնարավորություն չէի տեսնում, ես շարունակում էի իմ գործը։ Բարնաբասի համար, սակայն, այդպիսի հնարավորություն կար։ Եթե ես ցանկություն ունենայի, իսկ այդ ցանկությունը շատ մեծ էր, կկարողանայի ծառաների պատմություններից եզրակացնել, որ ով դղյակում ծառայության ընդունվի, իր ընտանիքի համար շատ բան կկարողանա անել։ Թե ի՞նչն էր ծառաների պատմություններում արժանահավատը, իհարկե, հնարավոր չէր պարզել, բայց պարզ էր, որ հավատալու քիչ բան կար։ Եթե ծառաներից մեկը, ում այլևս չէի տեսնելու կամ եթե անգամ տեսնեի էլ, հազիվ թե ճանաչեի, հանդիսավոր կերպով հավաստիացնում էր, թե կօգնի իմ եղբորը դղյակում որևէ պաշտոն դտնել կամ գոնե կօժանդակի նրան, եթե նա ինչ-որ կերպ դղյակ մտնի, օրինակ, ասենք, կթարմացնի նրան, որովհետև, ինչպես ծառաներն էին պատմում, այնպես էր լինում, որ ընդունվելու թեկնածուները, չափից դուրս երկար սպասելու պատճառով, ուշաթափվում էին, ինքնատիրապետումը կորցնում և, իհարկե, կկորչեին, եթե ընկերները նրանց մասին հոգ չտանեին, երբ այսպիսի կամ նման բաներ էին պատմում ինձ, ես արդարացնում էի նրանց նախազգուշացումները, բայց խոստումներին չէի հավատում։ Խոստումները դատարկ խոսքեր էին։ Ոչ Բարնաբասի համար։ Թեև ես նրան զգուշացնում էի, որ չհավատա խոստումներին, բայց իմ պատմությունները բավական էին, որ նրան իմ ծրագրի համար գրավեին։ Իմ տեսակետը պակաս կարևոր էր նրա համար, նա ավելի շատ ծառաների պատմություններին էր հավատում։ Ես ինքս իմ հույսին էի մնացել. ծնողներիս հետ, Ամալյայից բացի, ոչ ոք չէր կարող յոլա գնալ, ես ինչքան

www.a-pdf.com

շատ էի իմ ձևով հետամուտ լինում հորս հին ծրագրերին, Ամալյան այնքան ավելի էր օտարվում ինձնից, քո և մյուսների ներկայությամբ նա խոսում է ինձ հետ, բայց երբ առանձին ենք՝ երբեք։ Հյուրանոցում իջևանող ծառաների համար ես խաղալիք էի, ու նրանք մոլուցքով ձգտում էին կոտրել այն. երկու տարվա ընթացքում ես նրանցից ոչ մեկի հետ ոչ մի անգամ անկեղծ չեմ խոսել, նրանցից միայն խարդախ, սուտ ու անիմաստ բաներ եմ լսել, ինձ միայն Բարնաբասն էր մնում, մինչդեռ նա շատ էր ջահել։ Երբ իմ պատմությունների ժամանակ տեսնում էի նրա աչքերի փայլը (նրա աչքերի փայլը այդ ժամանակվանից մնաց), սարսափում էի, սակայն չէի ընկրկում. ինձ թվում էր, թե խաղաթղթին շատ մեծ բան էր դրված։ Ես, իհարկե, հորս պես մեծ ու դատարկ ծրագրեր չէի կազմել, ինձ տրված չէր տղամարդկանց վճռականությունը, ես միայն մտածում էի, թե ինչպես հարթենք բանբերի հետ կապված վիրավորական դեպքն ու միաժամանակ ուզում էի, որ իմ համեստ ցանկությունը իմ վաստակը համարեին, իսկ այն, ինչ չէր հաջողվել ինձ, ես այժմ ուզում էի այլ կերպ ու անպայման իրականացնել Բարնաբասի միջոցով։ Մենք վիրավորել էինք նամակաբերին ու նրան քշել մոտիկ զրասենյակներից. ինչն էր ավելի հեշտ, քան հանձինս Բարնաբասի մի նոր նամակատար առաջարկելն ու թույլ տալ, որ Բարնաբասը կատարի վիրավորված նամակատարի աշխատանքը, իսկ վիրավորվածին հնարավորություն կընձեռեինք, որ ուզածի չափ՝ ինչքան որ անհրաժեշտ էր վիրավորանքը մոռանալու համար, մնար հեռվում։ Սակայն ես լավ էի հասկանում, որ չնայած այս նախագծի չափավորությանը, հանդգնություն էլ կար նրա մեջ և կարող էր այն տպավորությունն ստեղծել, որ մենք ուզում էինք իշխանություններին թելադրել, թե ինչպես էր պետք լուծել կադրերի հարցը, կամ՝ որ մենք իբր թե կասկածում էինք, որ իշխանությունները անկարող էին լավագույն ձևով հարցերը ինքնուրույն լուծել, և քանի դեռ մենք այն մտքին չէինք հանգել, թե այստեղ կարելի էր ինչ-որ բան անել, իրենք արդեն վաղուց էին ամեն ինչ կարգավորել։ Սակայն հետո ես մտածում էի, թե անհնար է, որ իշխանություններն

www.a-pdf.com

այդպես սխալ մեկնաբանեն իմ ցանկությունները, իսկ եթե նման բան անեին, ապա դա արդեն միտումնավորություն կլիներ և, հետևաբար, այն ամենը, ինչ ես էի անում, արդեն մինչև մոտիկից ծանոթանալը կկորցներ արժեքը։ Այդ պատճառով ես չէի նահանջում, իսկ Բարնաբասի պատվասիրությունն իրենն արեց։ Այդ ընթացքում, քանի դեռ նախապատրաստվում էինք, Բարնաբասն այնքան էր գոռոզացել, որ իր՝ գրասենյակի ապագա պաշտոնյայի համար կոշկակարի աշխատանքը չափազանց կեղտոտ էր համարում և նույնիսկ համարձակվում էր սկզբունքորեն առարկել Ամալյային, եթե վերջինս նրան թեկուզև հազվադեպ, որևէ բան էր ասում։ Ես թույլ էի տալիս, որ նա վայելեր այդ կարճատև ուրախությունը, որովհետև դղյակ գնալու առաջին իսկ օրվանից թե՛ ուրախությունը, թե՛ գոռոզամտությունը, ինչպես էլ պետք էր կանխատեսել, իսկույն չքացան։ Սկսվեց այն թվացյալ ծառայությունը, ինչի մասին արդեն պատմել եմ քեզ։ Զարմանալի էր, թե ինչպես Բարնաբասն առաջին անգամ առանց դժվարության մտավ դղյակ կամ, ավելի ճիշտ, այն գրասենյակը, որ նրա, այսպես ասած, աշխատասենյակը դարձավ։ Այդ հաջողությունից ես այն ժամանակ համարյա խելքս թռցրի, և երբ տուն վերադառնալուց հետո Բարնաբասը երեխայան շշուկով պատմեց ինձ գրասենյակ մտնելու մասին, ես վազեցի Ամալյայի կողմը, գրկեցի նրան, սեղմեցի անկյունում, այնպես համբուրեցի ու կծոտեցի, որ նա ցավից ու վախից լաց եղավ։ Հուզմունքից ես ոչինչ չէի կարողանում ասել, բացի այդ, երկար ժամանակ մենք իրար հետ ոչինչ չէինք խոսել, և ես զրույցը հետաձգեցի հաջորդ օրերին։ Իսկ հաջորդ օրերին, իհարկե, խոսելու ոչ մի բան չկար, որովհետև ամեն ինչ սահմանափակվեց նրանով, ինչ ձեռք էինք բերել արդեն։ Ամբողջ երկու տարի Բարնաբասն այդ միապաղաղ ու սրտաճմլիկ կյանքով ապրեց։ Ծառաները ոչ մի հարցով չօգնեցին, ես Բարնաբասի հետ գրություն ուղարկեցի նրանց, ուր խնդրում էի ուշադրություն դարձնել եղբորս ու միաժամանակ հիշեցնում նրանց խոստումների մասին։ Դղյակում Բարնաբասը հենց մի ծառա է տեսնում, նամակը հանում է ու պարզում, եթե նույնիսկ ինձ չճանաչող ծառաների է հանդիպում, ու թեկուզ առանց որևէ բառ

www.a-pdf.com

ասելու նամակը պարզելու ձևը (Բարնաբասը դղյակում չէր համարձակվել խոսել) ինձ ճանաչող ծառաներին ևս զայրացնում է, իրոք ամոթ է եղել, որ ոչ ոք չի ուզել օգնել նրան, և այդ դրությունից ելքն այն է լինում, ինչ, իհարկե, մենք ինքներս և ավելի շուտ կարող էինք անել, որ ծառաներից մեկը, ում Բարնաբասը հավանաբար արդեն մի քանի անգամ ցույց էր տվել գրությունը, վերցրել, ճմրթել ու զամբյուղի մեջ էր նետել այն։ Միաժամանակ նա իրավունք կունենար ասել (ես այդպես պատկերացրի), թե.

— Ախր, ինքներդ սովորություն ունեք այսպես վարվել նամակների հետ։

Ու ինչքան էլ այդ ժամանակը ապարդյուն լիներ, Բարնաբասի վրա նպաստավոր ազդեցություն թողեց, եթե, իհարկե, կարելի է նպաստավոր համարել այն, որ նա ժամանակից շուտ մեծացավ ու առնականացավ։ Այո, որոշ հարցերում նա ավելի լուրջ ու շրջահայաց դարձավ, իր տարիքին անհամապատասխան լուրջ։ Ես հաճախ շատ եմ տխրում, երբ տեսնում եմ նրան ու համեմատում այն պատանու հետ, որը նա էր երկու տարի առաջ։ Միաժամանակ ես նրա կողմից ո՛չ մխիթարանք, ո՛չ էլ օժանդակություն եմ տեսնում, ինչ կարելի էր սպասել հասուն տղամարդուց։ Առանց ինձ նա երբևէ հազիվ թե դղյակ մտներ, բայց այն օրվանից, ինչ այնտեղ է, արդեն կախում չունի ինձնից։ Ես եմ նրա միակ վստահելի անձը, սակայն նա իր սրտում եղածի միայն փոքր մասն է պատմում ինձ։ Նա շատ է խոսում դղյակի մասին, բայց նրա պատմություններից ու հայտնած աննշան փաստերից բացարձակ հնարավոր չէ հասկանալ, թե այդ ամենն ինչպե՞ս է կարողացել այդ աստիճան կերպարանափոխել նրան։ Հատկապես հնարավոր չէ հասկանալ, թե ինչո՞ւ ինքը հասունանալուց հետո կորցրեց այն համարձակությունը, որ մեզ հուսահատության էր հասցնում նրա պատանի հասակում։ Անիմաստ տեղը կանգնել-մնալն ու որևէ փոփոխության հեռանկարի բացակայությունը, իհարկե, օր-օրի կասկածամիտ ու զգուշավոր է դարձնում նրան, ներքուստ քանդում, նրան այն աստիճան է փոխում, որ անկարող է դառնում հուսահատված կանգնելուց բացի որևէ բան անել։ Բայց ինչո՞ւ նա դրանից առաջ էլ ոչ մի դիմադրություն ցույց

www.a-pdf.com

չտվեց, հատկապես, երբ հասկացավ, որ ես իրավացի էի, որ իր պատվախնդրությունը բավարարող ոչինչ չէր գտնի այնտեղ, սակայն գուցե մեր ընտանիքի վիճակը բարելավող մի բան գտներ։ Ախր դղյակում (եթե ծառաների կամակորությունները չհաշվենք) ամեն ինչ չափավոր ընթացք ունի, պաշտոնյաների պատվախնդրությունը աշխատանքի մեջ է իր բավարարումը փնտրում, և որովհետև աշխատանքը ամեն ինչից վեր է դասվում, ապա ոչ մի պատվախնդրություն չի մնում. այնտեղ մանկական երազների համար տեղ չկա։ Սակայն Բարնաբասը, ինչպես ինքն էր ինձ պատմում, կարծում էր, թե պարզ տեսնում է ինչ մեծ իշխանություն ունեն և ինչքան քաջատեղյակ են նույնիսկ այն թվացյալ պաշտոնյաները, ում սենյակում գտնվելու իրավունք էր ունեցել ինքը։ Ինչպես էին նրանք աչքերը կիսաբաց, ձեռքերն արագ շարժելով, արագ-արագ թելադրում դրագիրներին, ինչպես էին նրանք առանց բառ իսկ ասելու, միայն ցուցամատը շարժելով դործերը կարգավորում փնթփնթան ծառաների հետ, որ դժվարությամբ շնչելով ժպտում էին երջանիկ, կամ ինչպես էին նրանք իրենց գրքերում մի կարևոր տեղ գտնելիս ամբողջովին խորասուզվում, իսկ մյուսները, ինչքան որ նեղվածքն էր թույլ տալիս, մոտ էին վազում ու վզներն այդ կողմը ձգում։ Այդ ու նման բաները գրասենյակի մարդկանց մասին մեծ կարծիք կազմելու պատճառ էին դարձել Բարնաբասի համար, և նա այն տպավորությունն էր ստացել, որ եթե ինքը կարողանար հասնել այն բանին, որ իրեն նկատեին ու նրանց հետ ոչ որպես անծանոթ մարդ, այլ որպես գրասենյակի աշխատակից, թեկուզև ենթակա աշխատակից, մի քանի բառ խոսելու իրավունք ունենար, կարելի կլիներ մեր ընտանիքի համար անկանխատեսելի ձեռքբերումների հասնել։ Բայց բանը դեռևս դրան չի հասել, և Բարնաբասն առայժմ չի համարձակվում իր նպատակին մոտեցնող որևէ քայլ անել, թեև հաստատ գիտե, որ չնայած իր ջահել տարիքին՝ մեր ընտանիքում կատարված դժբախտությունների պատճառով իր ուսերին է վերցրել ընտանիքի հոր ծանր ու պատասխանատու գործը։ Իսկ հիմա մինչև վերջ խոստովանած լինելու համար մի բան էլ ասեմ։ Մի շաբաթ առաջ եկար դու։ Հյուրանոցում լսեցի, թե ինչպես մեկն ասաց, որ

www.a-pdf.com

հողաշափ է եկել, սակայն ուշադրություն չդարձրեցի։ Չգիտեի նույնիսկ, թե ինչ բան է դա։ Սակայն հաջորդ երեկոյան Բարնաբասը սովորականից շուտ եկավ տուն (ես սովորություն ունեի օրվա որոշակի ժամի մի փոքր ընդառաջ գնալ նրան), տեսավ, որ Ամալյան սենյակում է նստած, ինձ դուրս կանչեց, դեմքը սեղմեց ուսիս, լաց եղավ ու մի բոպե չէր հանգստանում։ Այդ պահին նա երբեմնի փոքրիկ պատանին էր։ Նրա հետ ինչ-որ բան էր կատարվել, ինչին նա դեռ պատրաստ չէր։ Նրա դիմաց կարծես հանկարծակի մի նոր աշխարհ էր բացվել, և այդ բոլոր նորությունների պատճառած հոգսերն ու ուրախությունը նա այլևս չէր կարողացել տանել։ Սակայն առանձնահատուկ ոչինչ չէր պատահել. նրան պատվիրել էին տեղ հասցնել քեզ հասցեագրված նամակը։ Բայց դա, իհարկե, առաջին նամակն էր, առաջին գործը, որ նա ստացել էր ընդհանրապես։

Օլգան ընդհատեց պատմությունը։ Այնպիսի լռություն տիրեց, որ կարելի էր լսել նրա ծնողների երբեմն խոմփոցի վերածվող շնչառությունը։

— Դուք բոլորդ ձևացնում էիք։— Կարծես Օլգայի պատմածը լրացնելու նպատակով, հենց այնպես ասաց Կ-ն։— Բարնաբասը նամակը հանձնելիս ասես հին, բազմափորձ նամակաբեր լիներ, և դու էլ Ամալյայի նման, որ այս անգամ ձեզ հետ համամիտ էր, այնպես էիր խոսում, կարծես նամակներն ու նամակագրությունը հենց այնպես, ոչ հիմնական զբաղմունք է։

— Դու պետք է տարբերես մեզ,— առարկեց Օլգան։— Չնայած իր գործունեության վերաբերյալ ունեցած կասկածներին, քեզ հասցեագրված այդ երկու նամակները նորից երջանիկ երեխա դարձրին Բարնաբասին։ Իր կասկածները նա թաքցնում է ու միայն ինձ է հայտնում, իսկ ինչ վերաբերում է քեզ, քեզ մոտ որպես իսկական նամակաբեր հանդես գալը, այսինքն այնպես, ինչպես ինքն է իսկական նամակատարներին պատկերացնում, նա իր պատվի գործն է համարում։ Նամակատարի համազգեստ ստանալու նրա հույսը հիմա մեծացել է, իսկ այն ժամանակ ինձ հարկ եղավ երկու ժամվա ընթացքում նրա շալվարն այնպես նեղացնել,

www.a-pdf.com

որ գոնե նմանվեր համազգեստի՝ մարմնին կիպ նստող շալվարի, և նա այդ շորով կանգներ քո դիմաց. նրա արտաքինին դու ավելի հեշտ կխաբվեիր։ Այսքանը Բարնաբասի մասին։

Սակայն Ամալյան, իրոք, արհամարհում է նամակատարի գործը և այժմ, երբ Բարնաբասը որպես նամակատար կարծես որոշ հաջողության հասել է, իսկ նա հանգիստ կռահում է դա իմ ու Բարնաբասի դեմքերին նայելով ու մեր առանձին նստել-փսփսալուց, հիմա ավելի շատ է արհամարհում այդ գործը։ Ամալյան միշտ ճիշտ է խոսում, կասկածներ ունենալու դեպքում անգամ կարող ես վստահ լինել։ Իսկ եթե ես երբեմն թերագնահատել եմ նամակատարի գործը, ապա դրա պատճառը, Կ., ոչ թե քեզ խաբելու դիտավորությունն է եղել, այլ՝ վախը։ Մինչև այժմ Բարնաբասի ձեռքն անցած այդ երկու նամակները մեր ընտանիքի հանդեպ բարեհաճ տրամադրվելու առաջին, թերևս բավական կասկածելի նշաններն են երևք տարուց ի վեր։ Այս շրջադարձը, եթե, իհարկե, սա շրջադարձ է ու ոչ թե թյուրիմացություն (թյուրիմացություններն ավելի հաճախ են լինում, քան շրջադարձերը), կապված է քո այստեղ ժամանելու հետ, մեր բախտը որոշելի կախման մեջ է քեզնից, գուցե այդ երկու նամակները միայն սկիզբն են, և Բարնաբասի գործունեությունը քեզ ծառայող նամակատարի աշխատանքով չի սահմանափակվի (քանի դեռ կարող ենք, հուսանք), առայժմ սակայն, ամեն ինչ քեզնով է ավարտվում։ Դղյակի հետ կապված հարցերում մենք պետք է գոհանանք այն ամենով, ինչ մեզ հասնում է, մինչդեռ այստեղ՝ ներքևում, ինքներս մեզ համար կարող ենք ինչ-որ բան անել. այսինքն՝ ամրապնդենք մեր հանդեպ եղած քո բարեհաճությունը կամ առնվազն պաշտպանենք մեզ քո հակակրանքից և, որ ամենակարևորն է, մեր փորձի ու ուժերի ներածին չափով պահպանենք քեզ, որպեսզի դղյակի հետ ունեցած քո կապը, ինչի շնորհիվ երևի կարողանանք մենք ապրել, չկորչի։ Իսկ ինչպես կարող ենք անել, որ դու այս ընթացքում ոչ մի կասկած չունենաս մեր հանդեպ, նրան մենք մոռնանք քեզ. այստեղ դու անծանոթ մարդ ես, ամեն ինչին կասկածանքով ես վերաբերվում, լի ես արդարացի կասկածներով։ Սրանից բացի, այստեղ մեզ արհա-

www.a-pdf.com

մարհում են, իսկ ընդհանուր կարծիքը՝ հատկապես հարս-
նացուին, ազդել է քեզ վրա։ Հիմա ինչպե՞ս մոտենանք քեզ,
առանց, օրինակ (եթե նույնիսկ մտադրություն էլ չունենանք),
քո հարսնացուին հակառակվելու և արդեն դրանով քեզ չվի-
րավորելու։ Նամակները, որ ես մինչև քո ստանալը ուշադիր
կարդում էի (Բարնաբասը չգիտեր դրանց բովանդակու-
թյունը, որպես նամակատար, նա չէր կարող թույլ տալ իրեն
կարդալ դրանք), առաջին պահին այնքան էլ կարևոր չէին
թվում, ուշացած էին և, քեզ համայնքի նախագահի մոտ
ուղարկելով՝ արդեն կորցնում էին իրենց արժեքը։ Նման
պայմաններում ինչպիսի՞ դիրք պետք է բռնեինք քո հանդեպ։
Եթե նամակների կարևորությունը շեշտեինք, կարող էինք
կասկած հարուցել, որովհետև անարժեք բաները կգերագնա-
հատեինք ակներևորեն և, որպես այդ լուրերը տեղ հասցնող,
քեզ կմատուցեինք մեր և ոչ թե քո նպատակները հետա-
պնդող լուրերը, այդպիսով հենց ինքներս քո աչքում կնսե-
մացնեինք դրանց արժեքը, իսկ քեզ, մեր կամքից ան-
հախ, կմոլորեցնեինք։ Բայց եթե նամակներին կարևորու-
թյուն չտայինք, նորից կասկած կհարուցեինք, թե ինչո՞ւ ենք
զբաղվում այդ անիմաստ նամակները տեղ հասցնելով, ին-
չո՞ւ են մեր խոսքերն ու գործերը հակասում իրար, ինչո՞ւ
էինք ոչ միայն քեզ՝ հասցեատիրոջը, այլ նաև հանձնարա-
րություն տվողին մոլորեցնում. նա, ինչ խոսք, նամակները
չէր տալիս, որ մեր մեկնաբանություններով հասցեատիրոջ
աչքում արժեզրկեինք դրանք։ Իսկ այդ ծայրահեղություն-
ների միջինը գտնելը, այսինքն՝ նամակները ճիշտ մեկնաբա-
նելն անհնար էր, նրանք շարունակ փոխում են իրենց ար-
ժեքը, նրանց պատճառած մտածմունքներն անվերջ են, և
միայն պատահականությունն է որոշում, թե մարդ ինչ մտքի
կհանգի, հետևաբար, նաև կարծիքն է պատահական։ Եվ եթե
այս ամենին ավելացնենք նաև քեզ համար ունեցած վախը,
ապա ամեն ինչ կխառնվի իրար. դու շատ խիստ չվերաբեր-
վես իմ ասածներին։ Եթե Բարնաբասն, օրինակ, գա ու
ասի, թե դու դժգոհ ես նրա ծառայությունից, ինչպես մի
անգամ եղել է արդեն, իսկ նա սարսափի առաջին ազդեցու-
թյան տակ և, ցավոք, ոչ առանց նամակատարի դյուրազգա-
ցության, ցանկություն հայտնի հրաժարվել այս ծառայու-

www.a-pdf.com

թյունից, ապա նրա սխալը ուղղելու համար ես ի վիճակի եմ ստել, խաբել, ամենավատ բանն անգամ անել, եթե իմանամ, թե դա կօգնի։ Բայց այդ բանը, իմ կարծիքով, կանեմ ինչքան քեզ, նույնքան էլ մեզ համար։

Դուռը թակեցին, Օլգան վազելով մոտեցավ դռանն ու բացեց։ Մլմլացող ճրագից լույսի բարակ մի երիզ ընկավ մթության մեջ։ Տարաժամ այցելուն շշնջոցով հարցեր տվեց, նրան շշնջոցով պատասխանեցին, սակայն նա չէր ուզում դրանով բավարարվել և ձգտում էր սենյակ մտնել։ Երևի Օլգան այլևս չէր կարող հետ պահել նրան, որ Ամալյային կանչեց. վստահ էր, որ ծնողների քունը չխանգարելու համար նա ամեն ինչ կաներ ու կճամփեր այցելուին։ Ամալյան, իրոք, շտապեց դռան կողմը, Օլգային կողքի հրեց, փողոց ելավ ու ծածկեց դուռը։ Մի պահ չանցած, նա հետ եկավ. ինչ Օլգան չէր կարողացել, նա մի ակնթարթում զլուխ բերեց։

Հետո Կ-ն իմացավ, որ այցելուն իրեն էր հարցրել. օգնականներից մեկն էր, Ֆրիդայի հանձնարարությամբ եկել էր իրեն փնտրելու։ Օլգան չէր ուզեցել օգնականին ասել Կ-ի տեղը. եթե իր այսօրվա այցելության մասին Կ-ն Ֆրիդային պատմել ուզենար, կարող էր ինքն անել, օգնականը չպետք է Կ-ին այստեղ տեսներ։ Կ-ն հավանություն տվեց Օլգայի արածին, սակայն մերժեց գիշերն այստեղ մնալու և Բարնաբասի վերադարձին սպասելու նրա առաջարկը։ Ճիշտն ասած, նա երևի թե համաձայներ այստեղ մնալ, քանի որ արդեն ուշ գիշեր էր, և նրան թվում էր, որ ինքը հիմա, անկախ նրանից արդյոք ուզում է, թե՝ ոչ, այնպես է կապված այս ընտանիքի հետ, որ այստեղ գիշերելը ուրիշ պատճառով գուցե թե տհաճ լիներ, բայց կապվածության զգացումը հաշվի առնելով, ամենաբնական բանը կլիներ։ Այնուամենայնիվ, նա մերժեց առաջարկը. օգնականի գալը վախեցրել էր նրան, նա չէր հասկանում, թե ինչպես էին Ֆրիդան, որ գիտեր իր կամքը, և օգնականները, որ սովորել էին վախենալ իրենից, այդպես համախմբվել, ու Ֆրիդան չէր վախեցել օգնականներից մեկին իր հետևից ուղարկել. ի դեպ, միայն մեկին, իսկ մյուսը երևի նրա մոտ էր մնացել։ Նա Օլգայից մտրակ հարցրեց, Օլգան չուներ, փոխարենը ուռենու դալար ճիպոտ կար. Կ-ն վերցրեց և հարցրեց՝ արդյոք տունն ուրիշ

www.a-pdf.com

ելք ունի՞։ Երկրորդ ելքը բակի միջով էր անցնում, բայց հարկավոր էր նախ հարևանի այգու ցանկապատի վրայով մագլցել ու մինչև փողոց հասնելն այդ այգու միջով անցնել։ Դա Կ-ի սրտովն էր։ Երբ Օլգան բակի միջով դեպի ցանկապատն էր ուղեկցում Կ-ին, Կ-ն փորձեց արագ հանգստացնել նրան, բացատրեց, որ պատմելու ժամանակ աղջկա դրսևորած մանր խորամանկություններն իրեն չեն զայրացրել, որ ինքը շատ լավ հասկանում է նրան, շնորհակալ է աղջկա՝ իր հանդեպ ցուցաբերած վստահության համար. նա ապացուցեց դա իր պատմություններով, և նրան հանձնարարեց Բարնաբասին՝ վերադառնալուց անմիջապես հետո, թեկուզ եթե գիշեր էլ լիներ, դպրոց ուղարկել։ Թեև ինքը միայն Բարնաբասի վրա հույս չի դնում (այդ դեպքում իր վիճակը շատ ծանր կլիներ), սակայն նա ոչ մի դեպքում չի ուզում դրանցից հրաժարվել, ուզում է օգտվել դրանցից, միաժամանակ ինքը, իհարկե, չի մոռանա Օլգային, որովհետև Բարնաբասի բոլոր տեղեկություններից իր համար երևի թե ավելի կարևոր էր Օլգան, նրա խիզախությունը, խելքը, շրջահայացությունը, նրա անձնազոհությունն ընտանիքի համար։ Եթե ինքը Օլգայի և Ամալյայի միջև ընտրություն կատարելու լիներ, երկար մտածելու կարիք չէր ունենա, և երբ նա արդեն հարևանի այգու ցանկապատի վրա էր կանգնած, ջերմորեն սեղմեց աղջկա ձեռքը։

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Երբ Կ-ն արդեն փողոց էր դուրս եկել, Բարնաբասի տանդիմաց՝ որքան որ մռայլ գիշերն էր թույլ տալիս, տեսավ հետուառաջ քայլող օգնականին. նա երբեմն կանգ էր առնում և փորձում էր վարագուրված պատուհանի միջով սենյակ նայել։ Կ-ն ձայն տվեց նրան, արտաքուստ առանց վախի, նա դադարեց լրտեսել տանն ու մոտեցավ Կ-ին։

— Այդ ո՞ւմ ես փնտրում,— հարցրեց Կ-ն ու ազդրի վրա փորձեց ճիպոտի ճկունությունը։

— Քեզ,— մոտենալով ասաց օգնականը։

— Իսկ ո՞վ ես դու,— անսպասելի հարցրեց Կ-ն, որով-

հետև նրան թվաց, թե դիմացինը օգնականը չէր։ Նա ավելի ծեր էր, հոգնած, կնճռոտ, լիքը դեմք ուներ և քայլվածքն էլ բոլորովին այլ էր, քան օգնականների ճկուն, զսպանակային քայլքը. նա դանդաղաշարժ էր, փոքր-ինչ կաղում էր և հիվանդ տեսք ուներ։

— Դու ինձ չե՞ս ճանաչում,— հարցրեց նա։— Երեմիասն եմ, քո հին օգնականը։

— Իսկապե՞ս,— ասաց Կ-ն ու նորից առաջ քաշեց ուռի ճիպոտը, որ թիկունքում էր պահել։— Բայց դու բոլորովին փոխվել ես։

— Որովհետև մենակ եմ,— ասաց Երեմիասը։— Իսկ եթե մենակ եմ, ուրեմն անհոգ ջահելությունն էլ է անցել։

— Իսկ ո՞ւր է Արթուրը։

— Արթուրը։ Այն սիրելի փոքրիկը։ Նա թողել է ծառայությունը։ Ախր, դու փոքր-ինչ կոպիտ էիր վարվում մեզ հետ։ Այն քնքուշ էակը չկարողացավ դիմանալ։ Նա դղյակ է վերադարձել ու բողոք է ներկայացնելու քեզ վրա։

— Իսկ դո՞ւ։

— Ես կարող եմ մնալ։ Արթուրն իմ փոխարեն էլ է բողոք ներկայացնելու։

— Իսկ ինչո՞ւ եք գանգատվելու։

— Որովհետև դու ոչ մի կատակ չես հասկանում։ Մենք ի՞նչ ենք արել քեզ։ Մի փոքր կատակեցինք, ծիծաղեցինք ու զայրացրինք քո հարսնացուին։ Իմիջիայլոց, այդ ամենը հանձնարարությամբ էինք անում։ Երբ Գալատերը մեզ քեզ մոտ ուղարկեց...

— Գալատե՞րը։

— Այո, նա։ Այն ժամանակ նա էր Կլամմին փոխարինում։ Երբ մեզ ուղարկեց քեզ մոտ, ասաց. «Դուք կներկայանաք որպես հողաչափի օգնականներ»։ Մենք նրա խոսքերով էինք շարժվում, դրա համար եմ ես ասվածը բառ առ բառ մտապահել։

— Ախր, մենք ոչինչ չենք հասկանում այդ գործից,— առարկեցինք մենք։

— Դա չէ կարևորը,— պատասխանեց նա։— Եթե պետք լինի, նա կսովորեցնի։ Իսկ կարևորն այն է, որ դուք մի

www.a-pdf.com

փոքր բարձրացնեք նրա տրամադրությունը։ Ինձ հայտնել են, որ նա ամեն ինչ շատ ծանր է տանում։ Նա հենց նոր է գյուղ ժամանել, ու արդեն դա մեծ իրադարձություն է համարում, մինչդեռ իրականում դա ոչինչ էլ չէ. պետք է նրան հասկացնեք այդ բանը։

— Եվ ի՞նչ։ Մի՞թե Գալատերն իրավացի էր, և արդյոք դուք կատարեցի՞ք առաջադրանքը։

— Չգիտեմ։ Կարճ ժամանակում դա հնարավոր էլ չէր։ Միայն գիտեմ, որ դու շատ կոպիտ էիր, և մենք դրանից ենք բողոքում։ Չեմ հասկանում, թե ինչպե՞ս դու, երբ ինքդ էլ պաշտոնյա ես, թեև բնավ ոչ դղյակի պաշտոնյա, չես կարողանում պատկերացնել, որ այդ ծառայությունը տաժանակիր աշխատանք է և շատ անարդարացի է, երբ միտումնավոր կերպով, համարյա մանկամտորեն դժվարացնում են աշխատողի անելիքը, այնպես, ինչպես ինքդ էիր անում։ Ինչպիսի անտարբերությամբ թողեցիր մեզ ճաղապատնեշի մոտ սառչել կամ ինչպես Արթուրին՝ մի մարդու, ում կոպիտ խոսքն անգամ մի քանի օր ցավ է պատճառում, քիչ էր մնում ներքնակին փռեիր, կամ ինչպես էիր ինձ ճաշից հետո այսուայնկողմ հալածում ձյունների միջով. դրանից հետո ես ստիպված էի մի ժամ էլ կանգնել, որ շունչս տեղը բերեի։ Ախր ես այլևս ջահել չեմ։

— Սիրելի Երեմիաս, այդ ամենի հարցում դու իրավացի ես, սակայն պետք է որ դրանք Գալատերին պատմեիր։ Նա ինքն է իր ցանկությամբ ձեզ ուղարկել, ես չեմ խնդրել, և որովհետև ես չէի պահանջել, կարող էի նորից հետ ուղարկել ձեզ և մեծ ուրախությամբ առանց բռնանալու կանեի, քան՝ ուժով, սակայն պարզ երևում էր, որ դուք այլ կերպ չէիք ցանկանում։ Ի դեպ, ինչո՞ւ, երբ ինձ մոտ եկաք, անմիջապես չսկսեցիր այսպես անկեղծորեն խոսել։

— Որովհետև ես ծառայության մեջ էի։ Ախր, դա ինքնին հասկանալի է։

— Իսկ հիմա այլևս ծառայության մեջ չե՞ս։

— Ոչ։ Արթուրը դղյակում արդեն հրաժարվել է ծառայելուց կամ հրաժարականը ընթացքի մեջ է, և մենք վերջնականապես կազատվենք ծառայությունից։

www.a-pdf.com

— Բայց դու այնպես ես որոնում ինձ, կարծես առաջվա պես իմ օգնականը լինես։

— Ոչ,— առարկեց Երեմիասը։— Ես փնտրում եմ քեզ, որ միայն Ֆրիդային հանգստացնեմ։ Երբ դու Բարնաբասենց աղջիկների պատճառով նրա մոտից հեռացար, նա շատ դրժբախտ էր զգում իրեն. ոչ այնքան կորստի, որքան քո դավաճանության պատճառով։ Նա, իհարկե, վաղուց էր նման բան ենթադրում ու դրանից շատ էր տառապել։ Ավելի ուշ ես մի անգամ էլ մոտեցա դպրոցի պատուհանին, որ տեսնեի, թե արդյոք դու խելքի եկե՞լ ես, սակայն դու չկայիր այնտեղ, միայն Ֆրիդան էր աշակերտական նստարանին լալիս։ Այդ ժամանակ ես մոտեցա նրան, ու մենք հաշտվեցինք։ Հիմա արդեն ամեն ինչ վերջացած է. հյուրանոցում ես միջանցքի սպասավոր եմ աշխատելու՝ այնքան ժամանակ, քանի դեռ դղյակում իմ գործը չի կարգավորվել։ Իսկ Ֆրիդան նորից պանդոկում է։ Նրա համար ոչ մի իմաստ չէր ունենա քո կինը դառնալը, իսկ դու քո հերթին չկարողացար գնահատել այն զոհաբերությունը, որ նա էր ուզում մատուցել քեզ։ Սակայն մեր բարի Ֆրիդան հիմա առաջվա պես կասկածում է, թե գուցե քո հանդեպ անարդար է վարվել և գուցե դու Բարնաբասենց տանը չես եղել։ Թեև, իհարկե, ոչ մի կասկած չէր կարող լինել այն հարցում, թե որտեղ էիր դու, ես եկա, այնուամենայնիվ, որ մեկընդմիշտ պարզեմ, որովհետև այս բոլոր հուզմունքներից հետո արժի, որ Ֆրիդան գոնե մի անգամ հանգիստ քնի, համենայնդեպս, ես ևս։ Այդպես ուրեմն, ես եկա ու ոչ միայն գտա քեզ, այլև դրա հետ մեկտեղ պարզեցի, որ աղջիկները թելից կապված պես են քեզ հետևում, և հատկապես այն սևուկն է վայրի կատվի նման քեզ համար կաշվից դուրս գալիս։ Իհարկե, դա ճաշակի հարց է, բայց ինչ ուզում է լինի, կարիք չկար, որ դու հարևանի այգով անցնող շրջանցիկ ճանապարհին դիմեիր։ Ես գիտեմ այդ ճանապարհը։

Ուրեմն, այնուամենայնիվ, տեղի էր ունեցել այն, ինչ կարելի էր կանխատեսել, ինչը, սակայն, անհնար էր կանխել. Ֆրիդան լքել էր նրան։ Երևի ոչ վերջնականապես. գործն այդքան էլ վատ վիճակում չէր, Ֆրիդային կարելի էր հետ բերել. նա հեշտությամբ էր օտար մարդկանց ազդեցության

www.a-pdf.com

տակ ընկնում, նույնիսկ այս օգնականների, որ Ֆրիդայի վիճակն իրենց վիճակի հետ էին համեմատում և այժմ, քանի որ իրենք հրաժարվել էին ծառայությունից, Ֆրիդային էլ էին նույն քայլին դրդել։ Սակայն Կ-ն պարտավոր էր նրա մոտ գնալ. կհիշեցներ իր օգտին խոսող ամեն ինչ, ու Ֆրիդան՝ զղջալով, նորից իրենը կլիներ, առավել ևս, եթե ինքը կարողանար աղջիկներին կատարած այցելությունն արդարացնել որևէ մի հաջողությամբ, ինչի համար ինքը նրանց էր պարտական։ Սակայն, չնայած այս մտորումներին, որոնց օգնությամբ նա փորձում էր հանգստացնել իրեն Ֆրիդայի մասին լսելուց հետո, նա դեռ հանգիստ չէր։ Քիչ առաջ ինքն էր Օլգայի մոտ Ֆրիդային գովում, նրան իր միակ հենարանն անվանեց, իսկ այժմ պարզվում է, որ այդ հենարանը հաստատուններից չէր և պետք չէր հզոր մեկի միջամտությունը, որ Ֆրիդան հեռանար Կ-ից, նույնիսկ այս, ոչ այնքան գրավիչ ծառան էր բավական, այս մսակտորը, որ երբեմն այն տպավորությունն էր թողնում, թե կենդանի չէ նույնիսկ։

Երեմիասն արդեն սկսել էր հեռանալ, Կ-ն նրան հետ կանչեց։

— Երեմիաս, ես միանգամայն անկեղծ եմ ուզում լինել քեզ հետ, նույնպիսի անկեղծությամբ էլ իմ մի հարցին պատասխանիր։ Մենք այլևս տիրոջ ու ծառայի պարտավորվածության մեջ չենք իրար հանդեպ, ինչի համար ոչ միայն դու, այլ նաև ես եմ ուրախ։ Նշանակում է, մենք իրար խաբելու ոչ մի պատճառ չունենք։ Հիմա քո աչքերի առաջ կտոր-կտոր կանեմ քեզ համար նախատեսված ճիպոտը, որովհետև ոչ թե քո հանդեպ ունեցած վախից էի ես այդու ճանապարհն ընտրել, այլ որ անակնկալի բերեի քեզ ու մի քանի անգամ ձաղկեի։ Դու այլևս մի նեղացիր ինձնից, այդ ամենն անցած է։ Եթե իշխանությունների կողմից ինձ պարտադրված ծառա չլիներիր, այլ պարզապես մի ծանոթ, մենք, ինչ խոսք, թեկուզ ինչքան էլ երբեմն ինձ խանդարելիս լիներիր, շատ լավ կհամակերպվեինք և կկարողանայինք լրացնել այն ամենը, ինչ այդ տեսակետից բաց ենք թողել։

— Կարծո՞ւմ ես,— հարցրեց օգնականն ու հորանջելով փակեց հոգնած աչքերը։— Ես կարող էի ամեն ինչ ավելի մանրամասն բացատրել քեզ, սակայն հիմա ժամանակ չու-

www.a-pdf.com

նեմ. Ֆրիդայի մոտ եմ շտապում։ Մանկիկն ինձ է սպասում։ Նա դեռ ծառայության չի անցել։ Գուցե մոռացության տրվելու համար նա ուզում էր իսկույն նետվել գործի մեջ, սակայն ես համոզեցի հյուրանոցի տիրոջը, և նա հանգստանալու համար կարճատև ժամկետ տվեց Ֆրիդային, իսկ մենք ուզում ենք գոնե այդ ժամանակը միասին անցկացնել։ Իսկ ինչ քո առաջարկին է վերաբերում, ապա ես, ինչ խոսք, քեզ խաբելու ոչ մի պատճառ չունեմ, սակայն նույնքան էլ քիչ պատճառ ունեմ քեզ վստահելու համար։ Այսինքն, իմ հարցում դա այլ է, քան քո։ Քանի դեռ ի պաշտոնե էինք կապված իրար հետ, դու ինձ համար շատ կարևոր անձ էիր, ոչ որովհետև արժանիքներ ունեիր, այլ որովհետև նման հանձնարարություն էի ստացել և պատրաստ էի քեզ համար ամեն ինչ անել։ Այժմ, սակայն, դու ինձ համար ոչ մի նշանակություն չունես։ Ճիպոտը կոտրելն էլ ինձ չի հուզի, միայն կհիշեցնի, թե ինչ անողոք պարոն եմ ունեցել ու չի կարողանա ինձ բարեհաճ տրամադրել քո հանդեպ։

— Ինձ հետ այնպես ես խոսում, կարծես հավատացած ես, որ այլևս ինձնից վախենալու բան չես ունենա։ Բայց իրականում այդպես չէ։ Դու, հավանաբար, դեռ չես ազատվել ինձնից. այստեղ ոչինչ արագ չի կատարվում։

— Երբեմն նույնիսկ ավելի արագ,— նեռեց Երեմիասը։

— Երբեմն։ Սակայն ոչ մի նախանշան չույց չի տալիս, որ այս ոլորտում էլ այդպես կլինի. համենայնդեպս, ո՛չ դու, ո՛չ էլ ես դրավոր ծանուցում չունենք ձեռքներումս։ Հետևաբար, գործն առայժմ ընթացքի մեջ է, ու թեև ես միջամտելու համար իմ կապերի օգնությանը չեմ դիմել դեռ, բայց անպայման կդիմեմ։ Ու եթե արդյունքը լինի ոչ հօգուտ քեզ, կպարզվի, որ դու շատ չես ջանացել, որ քո պարոնը տրամադրված լինի քո հանդեպ և, ով գիտե, գուցե ավելորդ է հիմա ուսի ճիպոտը կոտրելը։ Թեև դու ինձնից տարել ես Ֆրիդային, ու դա է պատճառը, որ փքվել ես հնդուհավի նման, սակայն քո անձի հանդեպ ունեցած իմ ողջ հարգանքով հանդերձ (նույնիսկ եթե դու ինձ այլևս չես հարգում) Ֆրիդային հասցեագրված իմ մի քանի խոսքը կբավականացնի, որ ցիրուդան լինեն այն բոլոր սաները, որոնց շնորհիվ դու ես նրան

www.a-pdf.com

ձեռք գցել։ Իսկ Ֆրիդային միայն ստերն էին կարող վանել ինձնից։

— Քո սպառնալիքներն ինձ չեն վախեցնում,— ասաց Երեմիասը։— Դու, ախր, այլևս չես ուզում ինձ որպես օգնական պահել, դու վախենում ես ինձնից, դու ընդհանրապես վախենում ես օգնականներից և միայն վախն էր պատճառը, որ ծեծեցիր խեղճ Արթուրին։

— Գուցե դա էր պատճառը, որ քիչ ցավեց։ Երևի կարողանամ այդ եղանակով ավելի հաճա՞խ ցույց տալ քո հանդեպ ունեցած իմ վախը։ Տեսնում եմ, որ օգնական լինելը քիչ հաճույք է պատճառում քեզ, սակայն անկախ ինձ համակելիք բոլոր վախերից, ես մեծագույն հաճույք կզգամ, եթե ստիպեմ քեզ նորից իմ օգնականը լինել և մի բան էլ հոգ կտանեմ, որ միայն դու լինես իմ օգնականը, առանց Արթուրի։ Այդ դեպքում ես կկարողանամ ավելի մեծ ուշադրություն դարձնել քեզ։

— Եվ կարծում ես, թե ես չնչին չափով իսկ կվախենա՞մ այդ ամենից։

— Իհարկե հավատացած եմ. դու վախենում ես մի փոքր, իսկ եթե խելացի լինես, շատ կվախենաս։ Թե չէ հիմա արդեն Ֆրիդայի մոտ կլիներիր։ Ասա ինձ, դու նրան սիրո՞ւմ ես։

— Սիրո՞ւմ։ Նա բարի, խելացի աղջիկ է, Կլամմի երբեմնի սիրուհին է եղել, նշանակում է՝ ամեն դեպքում հարգարժան է։ Եվ երբ նա ինձ շարունակ խնդրում է ազատել իրեն քեզնից, ինչո՞ւ չպետք է, ի սեր նրա, այդ բանն անեի, առավել ևս, որ դրանով ոչ մի ցավ չեմ պատճառի քեզ, քեզ, որ մխիթարվել ես Բարնաբասի անիծյալ քույրերով։

— Ես արդեն տեսնում եմ քո վախը, ահավոր մեծ վախ է, և դու փորձում ես քո ստերով բռնացնել ինձ։ Ֆրիդան միայն մի բան էր խնդրում ինձնից. ազատել իրեն կատաղած, քսու շան նմանվող օգնականներից։ Ցավոք, ես ժամանակ չունեցա մինչև վերջ կատարել նրա խնդրանքը, և հիմա իմ բաց թողածի հետևանքներն առկա են։

— Պարոն հողաչափ, պարոն հողաչափ։— Լսվեց ինչ որ մեկի ձայնը փողոցում։ Բարնաբասն էր. նա շնչակտուր մոտ եկավ, սակայն չմոռացավ խոնարհվել Կ-ին։— Ինձ հաջողվեց։

www.a-pdf.com

— Ի՞նչը հաջողվեց քեզ։ Իմ խնդրա՞նքն ես հայտնել Կլամմին։

— Ոչ, ոչ դա։ Ես շատ չարչարվեցի, բայց դա անհնար եղավ։ Ես առաջ էի խցկվում, թեև չէին պահանջել, բայց ամբողջ օրը կանգնած էի գրասեղանի մոտ, մինչև անգամ գրագիրներից մեկը, ում վրա ստվեր էի գցել, հեռու հրեց ինձ։ Երբ Կլամմը գլուխը բարձրացրեց, ես, թեև արգելված էր, ձեռքս վեր հանեցի, ցույց տվեցի, որ այստեղ եմ։ Բոլորից երկար ես մնացի գրասենյակում, արդեն մենակ էի այնտեղի ծառաների հետ, ուրախացա, երբ տեսա, որ Կլամմը մի անգամ էլ հետ եկավ, բայց նա ինձ համար չէր վերադարձել. նա ուզում էր մի բան նայել գրքում, նայեց ու արագ հեռացավ։ Իսկ որովհետև ես առաջվա պես չէի շարժվում տեղիցս, ծառաներից մեկը, ի վերջո, ինձ համարյա թե դուրս ավլեց դռնից։ Ես այս ամենը խոստովանում եմ, որ դու նորից չդժգոհես իմ վաստակներից։

— Բարնաբաս, ինձ ի՞նչ օգուտ քո եռանդից, եթե այն հաջողություն չի բերել։

— Բայց ես հաջողության հասա։ Երբ ես իմ գրասենյակից դուրս էի գալիս (ես դա իմ գրասենյակն եմ անվանում), տեսա, թե ինչպես խորքի միջանցքներից մի պարոն է մոտենում, իսկ ընդհանրապես, բոլոր միջանցքները դատարկ էին, ախր, շատ ուշ էր։ Ես որոշեցի սպասել նրան։ Այնտեղ մի փոքր երկար մնալու առիթ կար, թեկուզ ավելի լավ կլիներ ընդհանրապես մնայի, որ ստիպված չլինեի վատ նորությունը հասցնել քեզ։ Սակայն արժեր, որ ես նրան սպասեի։ Եկողը էոլանգերն էր։ Դու չես ճանաչում նրան։ Նա Կլամմի առաջին քարտուղարներից է, թուլակազմ, փոքրահասակ մարդ է, թեթևակի կաղում է։ Նա անմիջապես ճանաչեց ինձ. ընդհանրապես նա հայտնի է իր հիշողությամբ ու մարդ ճանաչելով։ Միայն իրար է բերում հոնքերը, և դա բավական է, որ մարդուն ճանաչի, հաճախ նա մարդկանց է ճանաչում, ում դեռ երբեք չի տեսել, ում մասին միայն լսել կամ կարդացել է. օրինակ ինձ նա դժվար թե մինչ այդ տեսած լիներ։ Ու թեև նա բոլոր մարդկանց իսկույն ճանաչում է, սկզբում այնպես է հարցնում, կարծես վստահ չէ։

— Դու Բարնաբասը չե՞ս։— Ինձ դիմեց նա և հարցրեց։—

www.a-pdf.com

Դու հողաչափին ճանաչում ես, չէ՞։— Հետո ավելացրեց։— Դա լավ եղավ։ Հիմա ես հյուրանոց կմեկնեմ։ Հողաչափը պետք է այնտեղ այցելի ինձ։ Ես տասնհինգ սենյակում կլինեմ։ Իսկ նա հենց հիմա պետք է գա։ Այնտեղ ես մի քանի քննարկում ունեմ և առավոտյան ժամը հինգին վերադառնալու եմ։ Ասա, որ ինձ համար շատ կարևոր է նրա հետ խոսելը։

Երեմիասը հանկարծ սկսեց վազել։ Բարնաբասը, որ հուզված լինելով, մինչ այդ ուշադրություն չէր դարձրել նրան, հարցրեց։

— Երեմիասն ի՞նչ է ուզում։

— Ինձնից առաջ մտնել էդլանգերի մոտ,— բացատրեց Կ-ն, վազեց Երեմիասի հետևից, կախ ընկավ թևից ու ասաց։— Այդ ի՞նչ է, Ֆրիդայի կարո՞տն այդպես համակեց քեզ։ Ես էլ պակաս չեմ կարոտել նրան, այնպես որ մենք միասին կգնանք։

ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հյուրանոցի մութ շենքի դիմաց տղամարդկանց մի փոքր խումբ էր հավաքվել, նրանցից երկու-երեքի ձեռքին լապտերներ կային, այնպես որ ոմանց դեմքերը կարելի էր ճանաչել։ Կ-ն միայն մի ծանոթի գտավ՝ կառապան Գերշտեկերին։ Վերջինս հարցով դիմավորեց նրան։

— Դու դեռ գյուղո՞ւմ ես։

— Այո, ես երկար ժամանակով եմ եկել։

— Դա ինձ չի հետաքրքրում,— ասաց Գերշտեկերը, ուժեղ հազաց ու շուռ եկավ մյուսների կողմը։

Պարզվեց, որ բոլորն սպասում էին էդլանգերին։ Նա արդեն տեղ էր հասել, սակայն նախքան այցելուներին ընդունելը, բանակցում էր Մոմուսի հետ։ Բոլորի խոսակցության թեման այն էր, որ մարդ իրավունք չուներ հյուրանոցի շենքում սպասել, այլ պետք է դրսում, ձյան մեջ կանգնեին։ Թեև այնքան էլ ցուրտ չէր, այնուամենայնիվ, շատ տհաճ էր այցելուներին այդ մթանը երևի թե ժամերով դրսում թողնելը։ Հավանաբար էդլանգերի մեղքով չէր, նա շատ ավելի սիրալիր էր, հազիվ թե գիտեր այդ ամենի մասին և հաս-

www.a-pdf.com

տատ շատ կզայրանար, եթե տեղեկացնեին նրան։ Հյուրանոցի տիրուհին էր մեղավոր. նրբությունների հանդեպ ունեցած հիվանդագին ձգտմանը տուրք տալով՝ նա չէր ուզում թույլատրել, որ միանգամից շատ այցելուներ մտնեին հյուրանոց։

— Եթե այդպես պետք է լինի, և նրանք ներս են գալու, ապա, ի սեր աստծո, միայն հերթով, իրար հետևից,— սովորություն ուներ ասել նա, և ինքն էր այդ կարգը մտցրել, որ այցելուները, որ սկզբում պարզապես միջանցքում, աստիճանների վրա, ավելի ուշ՝ նախասենյակում, հետո պանդոկում էին սպասել, վերջում փողոց էին հանվել։ Նույնիսկ դա չէր բավարարել նրան։ Նրա համար անտանելի էր սեփական տան մեջ, ինչպես ինքն էր ասում, «շարունակ պաշարված լինելը»։ Նա չէր հասկանում ընդհանրապես, թե ինչի համար էին այցելուներ ընդունում։

— Դռան դիմացի աստիճաններն աղտոտելու համար։— Մի անգամ, հավանաբար զայրույթի պահին, այդպես էր նրա հարցին պատասխանել մի պաշտոնյա, սակայն դա նրան շատ համոզիչ էր թվացել, և նա սովորություն էր դարձրել այդ արտահայտությունը մեջբերել։ Նա ձգտում էր հյուրանոցի դիմաց մի շենք կառուցել, ուր կարող էին սպասել այցելուները, և վերջիններիս շատ էր դուր եկել այդ ցանկությունը։ Նրա համար շատ ավելի հաճելի կլիներ, եթե նույնիսկ այցելուների ընդունելությունն ու հարցաքննությունները հյուրանոցի շենքից դուրս տեղի ունենային, սակայն պաշտոնյաները հակառակվել էին դրան, իսկ երբ պաշտոնյաները լրջորեն առարկեցին, հյուրանոցի տիրուհին, ինչ խոսք, չհասավ իր ուզածին, թեև երկրորդական բնույթի հարցերում նա իր անսպառ ու կանացի եռանդի շնորհիվ ինքնատիպ բռնակալություն էր դրսևորում։ Ինչպես երևում է, հյուրանոցի տիրուհին հետագայում էլ պետք է հանդուրժեր հարցաքննություններն ու քննարկումները, որովհետև պարոնները հրաժարվել էին գյուղում եղած ժամանակ պաշտոնական գործերի կապակցությամբ դուրս ելնել հյուրանոցից։ Այդ պաշտոնյաները միշտ շտապում էին, իրենց կամքին հակառակ էին մնում գյուղում, այստեղ անհրաժեշտ ժամանա-

www.a-pdf.com

կահատվածից երկար մնալու ցանկություն չունեին բնակ, այնպես որ հնարավոր չէր պահանջել, որ միայն հանուն հյուրանոցի անդորրի վերցնեին իրենց բոլոր փաստաթղթերը և մի քանի ժամով փողոցի մյուս կողմում գտնվող շենքը տեղափոխվելու վրա ժամանակ կորցնեին։ Պաշտոնյաներն իրենց գործերով ավելի մեծ հաճույքով զբաղվում էին պանդոկում կամ իրենց սենյակներում, եթե հնարավոր էր՝ ուտելու ժամանակ կամ քնելուց առաջ՝ անկողնում պառկած, կամ էլ, ասենք, առավոտները, երբ նրանք չափից դուրս հոգնած էին վեր կենալու համար և ուզում էին անկողնու մեջ մի փոքր էլ մեկնված պառկել։ Դրան հակառակ, սպասաշենքի կառուցման հարցը կարծես թե նպաստավոր լուծում էր ստանում, իսկ դա զգալի պատիժ էր իջևանատիրուհու համար (մարդիկ ծիծաղում էին այդ առիթով), որովհետև հենց սպասաշենքի հետ կապված հարցերը բազմաթիվ քննարկումների պատճառ հանդիսացան, և հյուրանոցի միջանցքները հազիվ էին դատարկ լինում։

Սպասողներն այս ամենի մասին կիսաձայն էին զրուցում իրար հետ, և Կ-ն նկատեց, որ թեև դժգոհությունը բավական մեծ էր, բայց ոչ ոք ոչինչ չէր ասում, որ էոլանգերը գիշերվա կեսին է այցելուներին կանչել։ Նա հարցրեց և տեղեկացավ, որ դրա համար նույնիսկ պետք է երախտապարտ լինել էոլանգերին։ Բացառապես նրա բարի կամքն ու իր պաշտոնի մասին ունեցած բարձր պատկերացումն էին նրան մղել, որ նա գյուղ գար։ Եթե նա ուզենար, իհարկե, կկարողանար իր քարտուղարներից որևէ մեկին ուղարկել և կարգադրել, որ նա արձանագրությունները կազմեր, և նրա այդ քայլը գուցե թե ավելի համապատասխաներ աշխատանքի վերաբերյալ հրահանգներին։ Մինչդեռ նա մեծ մասամբ հրաժարվում էր այդպես վարվել. եթե ուզում է անձամբ ամենինչ տեսնել ու լսել, այդ նպատակի իրականացման համար հարկավոր է իր հանգիստը զոհաբերել, որովհետև նրա աշխատաժամանակում գյուղ կատարելիք ոչ մի այցելություն չէր նախատեսված։ Կ-ն առարկեց, թե նույնիսկ Կլամմն է ցերեկները գյուղ գալիս և մի քանի օր մնում այստեղ։ Ի՞նչ է, էոլանգերը, որ քարտուղար է ընդամենը, այնտեղ՝ վերևում, անփոխարինելի՞ անձ է։ Մի քանիսը բարեհոգաբար

www.a-pdf.com

ծիծաղեցին, մյուսները մտազբաղ լռեցին. այս վերջինները գերակշռում էին, և Կ-ի հարցը անպատասխան մնաց։ Միայն մեկը անվճռական պատասխանեց, թե, ինչ խոսք, անփոխարինելին Կլամմն է, ինչպես դղյակում, այնպես էլ գյուղում։

Նույն պահին հյուրանոցի դուռը բացվեց և լապտերներ բռնած երկու ծառաների մեջտեղում հայտնվեց Մոմուսը։

— Պարոն քարտուղար էոլանգերի մոտ առաջինը մտնելու իրավունք ունեն Գերշտեկերն ու Կ-ն։ Այստե՞ղ են երկուսն էլ։

Նրանք ներկայացան, բայց նրանցից առաջ ներս պրծավ Երեմիասը, ասելով.

— Ես այստեղի միջանցքի սպասավորն եմ։— Մոմուսը ժպտաց, ուսին խփելով ողջունեց նրան ու ներս թողեց։

«Հարկավոր է ավելի ուշադիր լինել Երեմիասի հանդեպ»,— ինքնիրեն խոստովանեց Կ-ն, մնալով այն հաստատ համոզմունքին, որ Երեմիասն իրենից հավանաբար ավելի պակաս վտանգ էր ներկայացնում, քան Արթուրը, որն այժմ դղյակում իր դեմ էր հանդես գալիս։ Գուցե շատ ավելի խելացի կլիներ, եթե թույլ տար, որ նրանք օգնականներ մնալով շարունակեին տանջել իրեն, քան թողներ, որ նրանք առանց հրսկողության շրջեին և ազատ հյուսեին իրենց խարդավանքները, ինչի հանդեպ նրանք կարծես առանձնահատուկ հակում ունեին։

Երբ Կ-ն Մոմուսի կողքով անցավ, վերջինս ձևացրեց, թե միայն հիմա հիշեց, որ նա հողաչափն է։

— Ախ, պարոն հողաչափը, որ այնքան դժկամությամբ է թույլ տալիս հարցաքննել իրեն, հարցաքննության է խցկվում։ Այն ժամանակ՝ ինձ հետ շատ ավելի հեշտ կլիներ։ Այսինքն, իհարկե, դժվար է կողմնորոշվել, թե որն է իսկական հարցաքննությունը։

Այս խոսքերը լսելով, Կ-ն ուզեց կանգ առնել, բայց Մոմուսն ասաց.

— Գնացեք, գնացեք։ Ձեր պատասխաններն ինձ այն ժամանակ էին պետք, ոչ այժմ։

Մոմուսի վարվելակերպից գրգռված Կ-ն այնուամենայնիվ ասաց.

— Դուք միայն Ձեր մասին եք մտածում։ Միայն իմ պաշ-

տոնի բերումով է, որ չեմ պատասխանում. ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր։

— Իսկ էլ ո՞ւմ մասին էինք մտածելու։ Ուրիշ էլ ո՞վ կա այստեղ որ։ Գնացեք։

Նախասրահում նրանց դիմավորեց ծառաներից մեկն ու ուղարկեց Կ-ին արդեն ծանոթ՝ բակի միջով անցնող ճանապարհով, հետո նրանք անցան դարպասով ու մտան ցածրիկ, թեթևակի թեքություն ունեցող միջանցքը։ Վերևում գտնվող հարկերում, բնականաբար, բարձրաստիճան պաշտոնյաներն էին տեղավորվել, իսկ քարտուղարներն իջևանել էին այս միջանցքի սենյակներում. Էոլանդերն ևս, թեև նա քարտուղարների մեջ ավելի մեծ դիրք ունեցողներից էր։ Ծառան հանգցրեց լապտերը, որովհետև միջանցքը էլեկտրական պայծառ լույսով էր լուսավորված։ Այստեղ ամեն ինչ փոքր էր, սակայն նրբորեն էր կառուցված, զգացվում էր սրահն անմնացորդ օգտագործելու ձգտումը։ Միջանցքի բարձրությունն այնպիսին էր, որ հազիվ կարելի էր հասակով մեկ կանգնել, աջ ու ձախ կողմերում իրար կիպ տեղադրված դռների շարքն էր։ Կողային պատերը մինչև առաստաղ չէին հասնում, իսկ դրա պատճառը, հավանաբար, օդափոխման անհրաժեշտությունն էր, որովհետև այս խորն ընկած նկուղանման միջանցքում փոքր սենյակները պատուհաններ չունեին։ Մինչև վեր չբարձրացող պատերի թերությունն այն էր, որ միջանցքում, ինչպես նաև սենյակում անխուսափելի աղմուկ էր տիրում։ Շատ սենյակներ կարծես զբաղեցված էին, իջևանածները մեծ մասում դեռ արթուն էին. ձայներ էին լսվում, մուրճի հարված ու բաժակի զնգոց, սակայն այդ աղմուկը առանձնակի ուրախ տպավորություն չէր թողնում։ Ձայները զուսպ էին, երբեմն-երբեմն հազիվ էր հնարավոր լինում որևէ բան հասկանալ, և հետո, չէր էլ զգացվում, թե զրուցում էին. հավանաբար մեկնումեկը ինչ-որ բան էր թելադրում կամ բարձրաձայն կարդում, իսկ այն սենյակներից, ուր բաժակների ու ափսեների զրնգոցն էր գալիս, ոչ մի բառ չէր լսվում, և մուրճի հարվածները Կ-ին հիշեցրին, որ ինչ-որ տեղ լսել է, թե ինչպես որոշ պաշտոնյաներ մտավոր տևական լարվածությունից հանդստանալու համար ժամանակ առ ժամանակ ատաղձագործությամբ, ճշգրիտ մեխանիկայով ու

նման այլ բաներով էին զբաղվում։ Միջանցքը դատարկ էր, միայն դռներից մեկի դիմաց նստել էր մուշտակ հագած գունատ, նիհար, խոշորակազմ մի պարոն. մուշտակի տակից երևում էր սպիտակեղենը։ Օդը սենյակում հավանաբար հեղձուկ էր, և նա դուրս էր եկել միջանցք, թերթ էր կարդում, բայց ոչ ուշադիր, որովհետև հորանջելով հաճախ դադարեցնում էր ընթերցանությունը և նայում միջանցքի երկայնքով, կարծես ներս հրավիրված մի այցելուի էր սպասում, որը, սակայն, հապաղում էր գալ։ Երբ ծերունու կողքից անցել էին, պարոնին ակնարկելով, ծառան ասաց Գերշտեկերին.

— Պինցհաուերն է։

— Նա վաղուց այստեղ չէր եղել։— Գլխով արեց Գերշտեկերը։

— Շատ վաղուց,— հաստատեց ծառան։

Վերջապես նրանք հասան մի դռան, որ մյուսներից չէր տարբերվում, դրա հետևում՝ ինչպես ծառան հայտնեց, իջևանել էր էռլանգերը։ Ծառան բարձրացավ Կ-ի ուսերին ու բացվածքից նայեց ներս՝ սենյակ։

— Պառկած է,— ներքև իջնելով ասաց նա։— Շորերով է պառկել մահճակալին, բայց կարծում եմ, որ նիրհում է։ Երբեմն այստեղ՝ գյուղում, փոփոխված ապրելակերպի պայմաններում նրան հոգնություն է տիրում։ Հարկ կլինի սպասել։ Եթե արթնանա, կզանգի։ Համենայնդեպս, այնպես էլ է եղել, որ գյուղում իջևանելու ողջ ժամանակ նա քնել է և արթնանալուց անմիջապես հետո հարկավոր է եղել վերադառնալ դղյակ։ Ախր, նա ինքնակամ է այստեղ այս գործն անում։

— Ավելի լավ կլիներ, որ մինչև մեկնելը քներ,— ասաց Գերշտեկերը։— Եթե արթնանալուց հետո աշխատելու համար մի փոքր ժամանակ է ունենում, շատ է դառնանում, որ քնել է, ձգտում է ամեն ինչ արագ վերջացնել, ու մարդ հազիվ է կարողանում իր ասելիքն ավարտել։

— Դուք շինարարությանը տրամադրվող սայլերի հարցո՞վ եք եկել,— հարցրեց ծառան։ Գերշտեկերը գլխով արեց, ծառային մի կողմ տարավ ու սկսեց ցածրաձայն խոսել, բայց ծառան հազիվ թե լսում էր նրան, Գերշտեկերից ավելի քան

մի գլուխ բարձր լինելով, նրա վրայով նայում էր հեռուն ու լուրջ, դանդաղ շփում մազերը։

www.a-pdf.com

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Այդ պահին Կ-ն, որ աննպատակ շուրջն էր նայում, միջանցքի ոլորաններից մեկի մոտ, հեռվում տեսավ Ֆրիդային. վերջինս ձևացրեց, թե չի ճանաչում, անթարթ նայեց Կ-ին։ Ֆրիդայի ձեռքում մատուցարան կար, վրան՝ դատարկ սպասքեղեն։ Կ-ն ծառային ասաց, թե իսկույն կվերադառնա, և վազեց Ֆրիդայի կողմը, սակայն ծառան բոլորովին ուշադրություն չդարձրեց նրա վրա. նրա հետ ինչքան շատ էին խոսում, թվում էր, թե նա այնքան ավելի է վերանում այստեղից։ Ֆրիդային հասնելով, Կ-ն բռնեց նրա ուսերից, կարծես նրան նորից էր վերցնում իր իշխանության տակ, մի քանի անկարևոր հարցեր տվեց ու միաժամանակ զննող հայացքով նայեց նրա աչքերի մեջ։ Սակայն Ֆրիդայի սառը կեցվածքը հազիվ թե փոխվեց, ցրված, նա փորձեց սկուտեղի վրա վերադասավորել սպասքեղենը և հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում ինձնից։ Գնա քո այն... գիտես նրանց անունները։ Ախր, դու հենց նոր նրանց մոտից ես գալիս, տեսքիցդ եմ կռահում։

Կ-ն արագ փոխեց խոսակցության թեման. այդպես հանկարծակի չպետք է բացատրություններ տար ու իր համար շատ վատ, ամենաանպատեհ բաներից սկսեր։

— Ես էլ կարծում էի, թե պանդոկում կլինես։

Ֆրիդան զարմացած նայեց նրան և ազատ ձեռքը քնքուշ տարավ նրա ճակատի ու այտի վրայով. թվաց, թե նա մոռացել է Կ-ի տեսքը և հիմա ուզում էր մտաբերել, թե ով էր նա, նրա աչքերը ևս վարագուրված էին հիշելու տանջալից արտահայտությամբ։

— Ինձ նորից ընդունել են պանդոկում,— այնպես դանդաղ սկսեց Ֆրիդան, կարծես ասելիքն անկարևոր էր, բայց ասված խոսքերից բացի մի ուրիշ զրույց էր վարում Կ-ի հետ, և դա ավելի կարևոր էր։— Այս գործն ինձ համար չէ, ամեն մարդ էլ կարող է սա անել. ամեն ոք, ով կարողանա անկողին

www.a-pdf.com

պատրաստել ու բարեհաճ տեսք ընդունել, չվախենալ հյուրերի պնդերեսությունից ու մի բան էլ ինքն առիթ տալ։ Այս գծերն ունեցող ամեն մի աղջիկ կարող է աղախին լինել, սակայն պանդոկն արդեն ուրիշ բան է։ Ինձ անմիջապես պանդոկում ընդունեցին, թեև այն ժամանակ ես ոչ այնքան արժանապատվորեն թողեցի աշխատանքս։ Այս անգամ երևի որևէ մեկը հովանավորել էր ինձ։ Սակայն հյուրանոցի տերն ուրախ էր, որ ինձ հովանավորող կար և որ այդ պատճառով ավելի հեշտ էր հնարավոր ինձ նորից գործի ընդունելը։ Նույնիսկ ստացվեց, որ հարկ եղավ ստիպել ինձ ընդունել այս գործը. եթե մտաբերես, թե ինձ ինչ է հիշեցնում պանդոկը, ինքդ էլ կհասկանաս։ Ի վերջո, ես համաձայնեցի վերադառնալ պանդոկ։ Հիմա ես այստեղ օգնության կարգով եմ։ Պեպին խնդրել էր խայտառակ վիճակի մեջ չդնել իրեն ու չստիպել անմիջապես լքել պանդոկը, և որովհետև նա, իրոք, ջանասեր էր եղել, ու ինչքան իր ունակություններն էին թույլ տվել, հոգացել էր ամեն ինչի մասին, մենք նրան քսանչորս ժամվա ժամկետ տրամադրեցինք։

— Այդ ամենը շատ լավ է,— ասաց Կ-ն։— Դու մի անգամ իմ պատճառով լքեցիր պանդոկը, իսկ հիմա, երբ քիչ է մնացել մինչև մեր հարսանիքը, նորից այստեղ ես վերադառնում։

— Ոչ մի հարսանիք էլ չի լինի։

— Որովհետև ես անհավատարի՞մ էի։— Ֆրիդան գլխով արեց։— Բայց հիշիր, Ֆրիդա, այդ ենթադրյալ անհավատարմության մասին մենք շատ ենք խոսել, և վերջում դու միշտ ընդունել ես, որ քո կասկածներն անհիմն էին։ Այդ խոսակցություններից ի վեր իմ կողմից ոչ մի փոփոխություն չի եղել, ամեն ինչ այնպես անմեղ է մնացել, ինչպես եղել է, ու չի էլ կարող այլ կերպ լինել։ Նշանակում է, օտար մարդկանց փսփսոցների կամ որևէ ուրիշ բանի պատճառով քո մեջ ինչ-որ բան է փոխվել։ Ամեն դեպքում դու անիրավացի ես իմ հարցում, որովհետև լսիր, թե ինչ է եղել իմ ու այն երկու աղջիկների միջև։ Ճիշտն ասած, ես ամաչում եմ, որ ստիպված եմ ամեն մեկի համար առանձին արդարանալ, բայց դու ես այդպես ուզում։ Նրանցից մեկն, ուրեմն, սևամազը, ինձ համար ոչ պակաս տհաճ է, որքան որ՝ քեզ, և եթե

www.a-pdf.com

կարողանամ հեռու մնալ նրանից, իսկույն այդպես կվարվեմ, առավել ևս, որ նա էլ իր կողմից է հեշտացնում դա. հնարավոր չէ ավելի անմարդամոտ լինել, քան նա է։

— Իհարկե,— բացականչեց Ֆրիդան, և կարծես նրա կամքից անկախ դուրս թռան բառերը։ Կ-ն ուրախ էր նրան հավասարակշռությունից հանելու համար. այս պահին նա այն չէր, ինչպիսին ուզում էր ներկայանալ։— Դու ուզում ես նրան անմարդամոտ ներկայացնել, ամենաանամոթ աղջկան անմարդամոտ ես անվանում և, ինչքան էլ անհավատալի է, յուրջ ես ասում, ես գիտեմ, որ դու չես կեղծում։ Կամրջի իջևանի տիրուհին քո մասին ասում էր. «Ես նրան տանել չեմ կարող, բայց և չեմ կարող մենակ թողնել։ Ախր, երբ մարդ լավ քայլել չկարողացող ու մի բան էլ հեռուն գնալ համարձակվող երեխայի է տեսնում, չի կարողանում տիրապետել ինքնիրեն ու անպայման միջամտում է»։

— Այս անգամ ընդունիր նրա խրատները,— ժպտաց Կ-ն,— իսկ այն աղջկա մասին, անկախ այն բանից, անամոթ է նա, թե՝ անմարդամոտ, չեմ ուզում ոչինչ լսել։ Թողնենք նրան։

— Բայց ինչո՞ւ ես նրան անմարդամոտ անվանում,— համառեց Ֆրիդան, և Կ-ն իր համար շատ նպաստավոր համարեց նրա մասնակցությունը։— Ի՞նքդ ես փորձել նրան, թե՞ ուզում ես մյուսներին նսեմացնել դրանով։

— Ոչ մեկը, ոչ էլ մյուսը,— առարկեց Կ-ն։— Երախտապարտության զգացումն է պատճառը, որովհետև նա հնարավորություն է տալիս անուշադրության մատնել իրեն և թեկուզ ինչքան էլ ինձ դիմի, միևնույն է, ես չեմ կարողանա համաձայնել ու նորից այցելել նրանց։ Մինչդեռ նրանց չայցելելն ինձ համար մեծ վնաս կլիներ, որովհետև ինքդ էլ շատ լավ գիտես, որ ես դա անում եմ հանուն մեր երկուսի ապագայի։ Եվ դա է պատճառը, որ ես պետք է մյուս աղջկա հետ էլ խոսեմ, ում թեև նրա ջանասիրության, շրջահայացության ու անձնուրացության համար գնահատում եմ, սակայն երբեք չեմ կարող ասել, թե գայթակղիչ է։

— Ծառաներն այլ կարծիքի են։

— Ինչպես այդ, այնպես էլ ուրիշ շատ հարցերում, և

www.a-pdf.com

ծառաների քմահաճույքն է պատճառը, որ դու եզրակացնում ես, թե ես անհավատարիմ եմ։— Ֆրիդան ձայն չհանեց, թույլ տվեց, որ Կ-ն իր ձեռքից վերցնի սկուտեղը, դնի հատակին ու թևանցուկ անելով, սկսի հետուառաջ քայլել փոքր սրահում։

— Դու չգիտես, թե ինչ է հավատարմությունը։— Կ-ի մոտիկությանը թեթևակի հակառակվելով, ասաց Ֆրիդան։— Կարևոր չէ, թե դու ինչպես ես վերաբերվում այդ աղջիկներին, բայց որ ընդհանրապես այցելում ես նրանց ընտանիքին ու վերադառնալիս բերում քո շորերին կպած նրանց սենյակի հոտը, արդեն դա ինձ համար անտանելի խայտառակություն է։ Մինչդեռ դու առանց ինձ մի բառ իսկ ասելու հեռանում ես դպրոցից, մինչև գիշերվա կեսը մնում նրանց մոտ, հետո, երբ քո մասին են հարցնում, թույլ ես տալիս, որ այդ աղջիկները հերքեն քո ներկայությունը, կրքով հերքեն, հատկապես քո այդ աննման անմարդամոտը, և գաղտնի ճանապարհով ես դուրս սողում նրանց տանից, գուցե նրա համար, որ խնայես նրանց համբավը, խնայես այդ աղջիկների համբավը։ Ոչ, այդ մասին այլևս չենք խոսի։

— Այդ մասին՝ ոչ, բայց արի ուրիշ բանի մասին խոսենք, Ֆրիդա։ Այդ մասին, ախր, խոսելու բան էլ չկա. դու գիտես, թե ես ինչո՞ւ եմ այնտեղ գնում։ Ինձ համար հեշտ չէ, բայց ես ստիպում եմ ինձ, և դու չպետք է իմ վիճակը ավելի ծանրացնես, քան է արդեն։ Ես այսօր ուզեցի միայն մի բոպեով գնալ ու հետաքրքրվել, արդյոք Բարնաբասը, որ վաղուց պետք է կարևոր տեղեկություն բերած լիներ, դեռ չէ՞ր եկել։ Նա դեռ չէր վերադարձել, բայց, ինչպես ինձ հավաստիացրին և ինչպես կարելի էր ենթադրել, շուտով գալու էր։ Ես չուզեցի կարգադրել, որ նա ինձ մոտ՝ դպրոց գար ու իր ներկայությամբ նեղություն պատճառեր քեզ։ Ժամերն անցան, ցավոք, նա չեկավ, բայց փոխարենը մի այնպիսի մարդ եկավ, ում ես եմ ատում։ Ես ցանկություն չունեի, որ նա լրտեսեր ինձ, այդ պատճառով անցա հարևանի այգու միջով, բայց որովհետև չէի էլ ուզում թաքնվել նրանից, փողոց դուրս գալով հանգիստ մոտեցա նրան և ձեռքումս էլ, խոստովանում եմ, ուռի ճկուն ճիպոտ էի պահել։ Այսքան բանն է եղել, սրա մասին խոսելու բան չկա այլևս։ Բայց խոսենք

www.a-pdf.com

ուրիշ բանի մասին։ Ինչպիսի՞ն է վիճակն իմ օգնականների հարցում, որոնց մասին հիշատակելն ինձ համար նույնքան զզվելի է, ինչքան քեզ համար՝ այն ընտանիքի անունը։ Համեմատիր օգնականների հանդեպ ունեցած քո վերաբերմունքը այն վերաբերմունքի հետ, որ ես ունեմ Բարնաբասի ընտանիքի հանդեպ։ Ես հասկանում եմ քո զզվանքն առ այդ ընտանիքը և կարող եմ կիսել այն։ Միայն ի սեր իմ գործի եմ ես նրանց մոտ գնում, և ինձ երբեմն թվում է, թե անարդարացի եմ նրանց հանդեպ, օգտագործում եմ նրանց։ Իսկ դու և օգնականները՝ ընդհակառակը։ Դու երբեք չես հերքել, որ նրանք հետևում են քեզ և խոստովանել ես, որ հակում ունես նրանց հանդեպ։ Դրա համար ես չզայրացա, հասկացա, որ այստեղ ուրիշ ուժեր են գործում, ուժեր, որոնց հաղթահարելը քո հնարավորություններից վեր է, և, սակայն, երջանիկ էի զգում ինձ, որ դու գոնե հակառակվում ես, օգնում էի քեզ պաշտպանվել և որովհետև ընդամենը մի քանի ժամ թուլացրի իմ ուշադրությունը, հավատացի քո հավատարմությանը, հույս ունեի, թե տան դուռը հուսալիորեն փակ է, իսկ օգնականներս փախուստի են մատնված (ես վախենում եմ, որ թերագնահատել եմ նրանց), որովհետև ընդամենը մի քանի ժամ թուլացրի ուշադրությունս, իսկ այդ Երեմիասը, որ, եթե ուշադիր նայելու լինենք, այլևս ոչ բավական առողջ, ծերացող մարդ է, հանդգնություն ունեցավ մոտենալ պատուհանին, միայն այդ պատճառով, Ֆրիդա, ես պետք է կորցնեմ քեզ և որպես ողջույնի խոսք լսեմ քեզնից, թե՝ այլևս ոչ մի հարսանիք չի լինի։ Արդյո՞ք ես չէ, որ իրականում պետք է նախատեմ քեզ ու, սակայն, չեմ նախատում, միևնույնն է, չեմ նախատում։

Եվ նորից Կ-ին թվաց, թե լավ է, որ մի փոքր շեղում է Ֆրիդայի ուշադրությունը, նրան խնդրեց ուտելու բան բերել, որովհետև ինքը դեռ ճաշից սկսած ոչինչ չէր կերել։ Կ-ի խնդրանքից ակնհայտ թեթևություն զգալով, Ֆրիդան գլխով արեց ու վազեց որևէ բան բերելու, բայց ոչ միջանցքի երկարությամբ, ուր Կ-ն ենթադրում էր, թե խոհանոցն է գտնվում, այլ թեքվեց, ու աստիճաններով ներքև իջավ։ Քիչ հետո նա մի ափսե բերեց, վրան՝ մի շիշ գինի ու կտրատված երշիկ, բայց դրանք, հավանաբար, որևէ մեկի ընթրիքից էին մնացել.

www.a-pdf.com

Երշիկի կտորները վերադասավորված էին, որ ոչինչ չհասկացվեր, մինչդեռ ափսեի վրա երևում էին երշիկի կլեպները, իսկ գինու շիշը երեք քառորդի չափով դատարկ էր։ Կ-ն սակայն, այդ մասին ոչինչ չասաց ու սկսեց մեծ ախորժակով ուտել։

— Խոհանո՞ց գնացիր,— հարցրեց Կ-ն։

— Ոչ, իմ սենյակում էի։ Այստեղ՝ ներքևում, մի սենյակ ունեմ։

— Ինձ էլ հետդ տանեիր։ Իջնեմ ներքև, նստած ուտեմ։

— Ես քեզ հիմա աթոռ կբերեմ,— ասաց Ֆրիդան ու առաջ շարժվեց։

— Շնորհակալ եմ։ Ո՛չ ներքև կգամ, ո՛չ էլ բազկաթոռ է պետք։

Ֆրիդան համառությամբ դիմացավ Կ-ի քայլին. գլուխը կախ էր գցել ու շուրթերն էր կծում։

— Այո, նա ներքևում է,— ասաց նա։— Իսկ դու ա՞յլ բան էիր սպասում։ Նա իմ անկողնում է պառկած, դրսում մրսել էր, դողում է։ Համարյա բան չկերավ։ Ճիշտն ասած, այս ամենը քո մեղքով է. եթե չհալածեիր օգնականներին, նրանց հետևից չընկնեիր, հիմա հանդիստ նստած կլինեինք դպրոցում։ Միայն դու փշրեցիր մեր երջանկությունը։ Ի՞նչ ես կարծում, եթե Երեմիասը հիմա ծառայության մեջ լիներ, կհամարձակվե՞ր փախցնել ինձ։ Եթե այո, ապա դու բացարձակ չես ճանաչում այստեղի կարգը։ Նա ուզում էր մոտենալ ինձ, հետևում էր, սակայն այդ ամենը խաղ էր միայն, ինչպես սոված շունն է խաղում և, սակայն, չի համարձակվում սեղանին ցատկել։ Ես էլ էի նրա պես։ Ուզում էի մոտենալ նրան, նա իմ մանկության ընկերն է, մենք իրար հետ ենք խաղացել դղյակի բարձունքի դառիթափին։ Հիանալի ժամանակներ էին, դու երբեք չես հետաքրքրվել իմ անցյալով։ Բայց այդ ամենն այնքան էլ կարևոր չէր, քանի դեռ Երեմիասը ծառայության մեջ էր, իսկ ես՝ որպես քո ապագա կինը, գիտակցում էի իմ պարտականությունը։ Մինչդեռ դու քշեցիր քո օգնականներին ու մի բան էլ պարծենում էիր, կարծես դրանով մի մեծ բան էիր արել ինձ համար։ Այսինքն, ինչ-որ տեղ դա այդպես է։ Արթուրի հարցում քո մտադրությունը, թեև ժամանակավորապես, իրականացավ. նա նուրբ

www.a-pdf.com

է, Երեմիասի՝ խոշընդոտներ չճանաչող կրքոտությունը չունի, իսկ դու քիչ էր մնում սպանեիր նրան այն գիշեր, երբ բռունցքով հարվածեցիր։ Այդ հարվածն ես մեր երջանկությանն էր հասցված։ Նա փախավ դղյակ, որ բողոք ներկայացնի, բայց եթե անգամ շուտով վերադառնա էլ, միևնույն է, նա արդեն հեռացած է։ Իսկ Երեմիասը մնաց։ Երբ ծառայության մեջ է, նա իր պարոնի նույնիսկ աչքը թարթելուց է վախենում, բայց ծառայությունից դուրս վախ չունի. նա եկավ ու վերցրեց ինձ։ Քո կողմից լքված, համակված նրանով՝ հին խաղընկերոջով, ես չէի կարող դիմադրել։ Ես չբացեցի դպրոցի դուռը, նա պատուհանը կոտրեց ու ինձ դուրս հանեց։ Մենք այստեղ փախանք։ Հյուրանոցի տերը հարգում է նրան, և հետո, հյուրերի համար ավելի հաճելի բան չի կարող լինել, քան հյուրանոցում միջանցքի նման սպասավոր ունենալը։ Այդպես մեզ գործի ընդունեցին։ Նա ինձ մոտ չի ապրում, պարզապես մենք մի ընդհանուր սենյակ ունենք։

— Այնուամենայնիվ, ես չեմ ափսոսում, որ վտարել եմ ծառաներին,— ասաց Կ-ն։— Եթե վիճակն իրոք այնպիսին էր, ինչպես դու նկարագրեցիր, իսկ քո հավատարմությունը օգնականների՝ ծառայության մեջ գտնվելու հանգամանքով էր պայմանավորված, ապա լավ է, որ այդ ամենը վերջացավ։ Միայն մտրակի վախից հնազանդվող գիշատիչ երկու գազանների մեջ ամուսնական երջանկությունն այնքան էլ մեծ չէր լինի։ Այդ դեպքում ես այն ընտանիքին էլ եմ երախտապարտ, որ ակամայից իր մասնակցությունն ունեցավ մեզ բաժանելու գործում։

Նրանք լռեցին ու նորից իրար հետ հետուառաջ քայլեցին, բայց հնարավոր չէր հասկանալ, թե նրանցից ով առաջինը սկսեց։— Կ-ին մոտ կանգնած Ֆրիդան կարծես զայրանում էր, որ նա նորից չթևանցեց իրեն։

— Եվ այսպես, ամեն ինչ կարգին է,— շարունակեց Կ-ն։— Մենք կարող ենք հրաժեշտ տալ իրար։ Դու կգնաս քո պարոն Երեմիասի մոտ, որ հավանաբար դեռ դպրոցի այգում էր մրսել և ում դու, այդ հանգամանքը հաշվի առնելով, բավական ժամանակ թողել ես մենակ։ Իսկ ես կվերադառնամ դպրոց, բայց որովհետև առանց քեզ այնտեղ

www.a-pdf.com

անելիք չունեմ, մի տեղ կդնամ. ուր էլ որ ընդունեն ինձ։ Եվ եթե ես հիմա, այնուամենայնիվ, վարանում եմ հեռանալ, ապա սոսկ այն պատճառով, որ կասկածում եմ քիչ առաջ քո պատմածներին։ Երեմիասի մասին ես հակառակ տպավորությունն ունեմ։ Քանի դեռ ծառայում էր, նա հետամտում էր քեզ, և ես չեմ կարծում, թե ծառայությունը կկարողանար երկար ժամանակ նրան հետ պահել մի անգամ լրջորեն քեզ վրա հարձակվելուց։ Հիմա, երբ նա ծառայությունը վերջացած է համարում, ամեն ինչ այլ է։ Ներիր, որ այս կերպ եմ մեկնաբանում ինքս ինձ. այն օրվանից, երբ դու այլևս նրա պարոնի հարսնացուն չես, առաջվա նման հրապուրիչ չես նրա համար։ Թեկուզ նրա մանկության ընկերուհին էլ լինես, բայց իմ կարծիքով (ես նրան, ճիշտն ասած, այսօր գիշերն ունեցած զրույցից հետո ճանաչեցի) նա այնքան էլ մեծ նշանակություն չի տալիս նման զգացմունքներին։ Չեմ հասկանում ինչն է պատճառը, որ նա կրքոտ բնավորության տեր մարդ է թվում քեզ։ Նրա մտածելակերպն, իմ կարծիքով, ավելի շուտ սառն է։ Ինձ առնչվող հարցով նա Գալատերից մի հանձնարարություն է ստացել, որ երևի այնքան էլ ձեռնտու չէ ինձ, և որոշակի ջանասիրությամբ է ձգտում իրականացնել (այդ բանն այստեղ այնքան էլ հազվագյուտ չէ)։ Այդ հանձնարարության մեջ էր մտնում մեր կապի ոչնչացումը, և նա փորձում էր գուցե տարբեր ձևերով հասնել դրան։ Դրանցից մեկն այն էր, որ փորձում էր իր հեշտագին տենչանքով գայթակղել քեզ, մյուսը (այս հարցում նրան իշևանատիրուհին էր օժանդակում)՝ որ հեքիաթներ էր պատմում իմ անհավատարմության մասին, և նրա հարվածը դիպավ նպատակին, իսկ այդ հարցում նրան հավանաբար օգնեց Կլամ-մի հետ առնչվող որևէ դեպքի հիշատակում, մինչդեռ նման դեպքեր նա շատ գիտեր։ Ու թեև նա կորցրեց իր պաշտոնը, բայց երևի հենց այն պահին, երբ այլևս դրա կարիքը չէր զգում. հիմա արդեն նա վայելում է իր աշխատանքի արդյունքները։ Քեզ առևանգեց պատուհանից, ու դրանով ավարտվեց նրա անելիքը։ Ծառայելու տենչը կորցրած՝ նա արդեն հոգնել է և մեծ հաճույքով կուզեր Արթուրի տեղը լինել, որ բողոք չի ներկայացնում բնավ, այլ գովեստներ ու նոր հանձնարարություն է ստանում. բայց, ախր, մեկը պետք

www.a-pdf.com

է մնա, որ դեպքերի հետագա զարգացմանը հետևի։ Նրա համար փոքր-ինչ ձանձրալի պարտականություն է քո մասին հոգալը։ Քո հանդեպ ունեցած սիրո հետք անգամ չկա. նա ինքն է ինձ անկեղծորեն խոստովանել։ Որպես Կլամմի սիրուհի, դու, իհարկե, վայելում ես նրա հարգանքը և քո սենյակում տեղավորվելն ու իրեն մի անգամ փոքր Կլամմ զգալն, անշուշտ, շատ հաճելի է նրան, սակայն այդքանը միայն։ Դու հիմա այնքան էլ մեծ նշանակություն չունես նրա համար, իսկ որ նա այստեղ է տեղավորել քեզ, նրա առաջադրանքի լրացուցիչ մասն է սոսկ, և ինքն էլ մնացել է, որ դու չանհանգստանաս. քանի դեռ դղյակից նոր տեղեկություններ չի ստացել ու դու դեռ չես բուժել նրա մրսածությունը, նա այստեղ կմնա։

— Ինչպե՞ս ես զրպարտում նրան,— ասաց Ֆրիդան ու իրար խփեց փոքրիկ բռունցքները։

— Զրպարտե՞լ,— հարցրեց Կ-ն։— Ոչ, ես նրան չեմ զրպարտում։ Գուցե թե անարդարացի եմ նրա հանդեպ, դա հավանական է։ Նրա մասին իմ ասածներն այդքան մակերեսային դրսևորում չունեն, դրանք կարելի է նաև այլ կերպ մեկնաբանել, բայց զրպարտա՞նք։ Զրպարտանքն, ախր, կարող է մեն մի նպատակ ունենալ. պայքարել նրա հանդեպ ունեցած քո սիրո հետ։ Եթե անհրաժեշտ լիներ և եթե զրպարտանքը պայքարին նպաստող միջոց լիներ, ես չէի հապաղի զրպարտել նրան։ Այդ կապակցությամբ ոչ ոք չէր կարողանա ինձ մեղադրել. նրան հանձնարարություն տվողներն այնպիսի առավելությամբ են օժտել նրան, որ ես՝ հույսս ամբողջովին սոսկ ինձ վրա դրած, իրավունք ունեմ նաև մի փոքր զրպարտել նրան։ Դա համեմատաբար անմեղ ու, ի վերջո, ազդեցություն չունեցող միջոց կլիներ, այնպես որ բռունցքներդ հանգիստ թող։— Կ-ն Ֆրիդայի ձեռքն առավ իր ափերի մեջ, Ֆրիդան ցանկացավ հետ քաշել ձեռքը, բայց քաշելիս ժպտաց ու առանձնապես մեծ ուժ չգործադրեց։— Սակայն կարիք չկա, որ ես զրպարտեմ, որովհետև դու չես սիրում նրան։ Դա միայն թվում է քեզ, և դու ինձ երախտապարտ կլինես, եթե ես ազատեմ քեզ այդ խաբկանքից։ Հասկացիր, եթե մեկնումեկը առանց ուժ գործադրելու, հնարավորին չափ մանրակրկիտ հաշվարկի շնորհիվ քեզ ինձնից

տանել ուզենար, ապա պետք է այս երկու օդնականների միջոցով հասներ իր ուզածին։ Արտաքնապես բարեսիրտ, մանկամիտ, ուրախ, պատասխանատվությունից զուրկ, վերևից՝ դղյակից ուղարկված պատանիներ են, մանկության հուշեր էլ կան, այս ամենն, ախր, շատ սիրելի է, հատկապես այն դեպքում, երբ ես, երևի այդ ամենի հակադիր պատկերն եմ, քեզ համար ոչ հասկանալի, քեզ զայրացնող գործերի հետևից եմ վազվզում շարունակ, այդ գործերի պատճառով մարդկանց հետ եմ առնչվում, որ ատելի են քեզ և անկախ այն բանից, որ ես ինքս ոչ մի մեղք չունեմ, նրանց հանդեպ ունեցած քո ատելությունը ինձ վրա էլ է տարածվում։ Այս ամենը մեր կապերի մեջ առկա թերությունների շարամիտ, բայց խելացի շահարկում է միայն։ Յուրաքանչյուր կապ իր թերություններն ունի, նաև՝ մերը։ Մենք, ախր, տարբեր միջավայրերից էինք, հանդիպեցինք իրար, և սկսած այն պահից, երբ ճանաչում ենք իրար, մեզնից ամեն մեկի կյանքը նոր ուղիով ընթացավ, մենք դեռ անվստահ ենք զգում մեզ, այս ամենը, ախր, չափից դուրս նոր է։ Խոսքն իմ մասին չէ, այս հարցում կարևորը ես չեմ։ Ըստ էության ես նվեր ստացած անձն եմ, սկսած այն պահից, երբ դու առաջին անգամ քո հայացքն ինձ ուղղեցիր, իսկ նվեր ստացած լինելուն վարժվելը դժվար չէ։ Մինչդեռ դու, անկախ ամեն ինչից, բաժանվեցիր Կլամմից։ Ես չեմ կարող բացատրել, թե դա ինչ է նշանակում, բայց աստիճանաբար հասկացել եմ. չէիր կենտրոնանում, չէիր տիրապետում ինքդ քեզ, և եթե անգամ ես պատրաստ էլ էի ընդմիշտ տանել քեզ, ապա ոչ միշտ էի քո կողքին, երբ քո կողքին էի, քեզ իրենց ազդեցության տակ էին պահում քո հուշերը կամ էլ կենդանի մարդիկ, ինչպես, ասենք, իջևանատիրուհին։ Կարճ ասած, ժամանակներ էին լինում, երբ դու շրջվում էիր ինձնից, քեզ անորոշությունն էր ձգում, խեղճ մանկիկ, և հենց այդ պահերին է, որ քո հայացքի ուղղությամբ համապատասխան մարդիկ հայտնվեցին ու դու տարվեցիր նրանցով, տրվեցիր այն խաբկանքին, թե այն ամենն, ինչ ակնթարթային է՝ ուրվականներ, հին հուշեր, ըստ էության անցած ու շարունակ անցնող երբեմնի կյանքը, այդ ամենը քո այժմյան, իրական կյանքն է։ Այդ ամենը, Ֆրիդա, մոլորություն է և, եթե ճիշտն ասելու լինենք,

մեր վերջնական միավորումից առաջ մեր դեմ դրած նողկալի խոչընդոտ։ Ուշքի եկ, տիրապետիր քեզ։ Եթե նույնիսկ մտածում էլ ես, թե օգնականներին Կլամմն է ուղարկել (դա ճիշտ չէ բնավ, նրանք Գալատերի մարդիկն են), եթե նրանք այդ խաբեության օգնությամբ կարողացել են այն աստիճան կախարդել քեզ, որ քեզ թվում է, թե նրանց աղտի ու ապականության մեջ Կլամմի հետքերն ես տեսնում, այնպես, ինչպես կարող է մեկին թվալ, թե տեսնում է երբևէ թրիքի մեջ կորցրած մարգարիտը, այն դեպքում, երբ իրականում երբեք չէր կարողանա մարգարիտ գտնել այնտեղ, նույնիսկ եթե այն թրիքի մեջ էլ լիներ, ապա միևնույն է, դրանք ախոռի մարդկանց խառնվածքի տղեկներ են, սոսկ այն տարբերությամբ, որ սրանք նրանց առողջությունը չունեն, մաքուր օդի թույլ հոսանքից հիվանդանում են, անկողին ընկնում ու ծառային բնորոշ խորամանկությամբ կարողանում են լավ անկողին գտնել։

Ֆրիդան գլուխը դրել էր Կ-ի ուսին, իրար ձեռք բռնած, նրանք լուռ հետուառաջ էին քայլում։

— Եթե դեռ այն ժամանակ, երբ մենք այն գիշերը հեռացած լինեինք՝ միշտ միասին կլինեինք, մի ապահով տեղում, և ես ուզած ժամանակ կկարողանայի բռնել քո ձեռքը։ Ինչքա՜ն է պետք ինձ քո մոտիկությունը։ Քեզ ճանաչելու օրվանից սկսած ես առանց քո ներկայության կարծես լքված լինեմ։ Հավատա ինձ, իմ միակ երազանքը քո ներկայությունն է, ուրիշ ոչինչ։— Ֆրիդան խոսում էր հանգիստ, դանդաղ, կարծես գիտեր, որ իրեն կարճ ժամանակ է տրամադրված Կ-ի ուսին հենված հանգստանալու համար և ուզում էր մինչև վերջ օգտագործել այդ հնարավորությունը։

Նույն պահին հարևան միջանցքում բացականչություն լսվեց. Երեմիասն էր։ Նա շապկանց կանգնել էր սանդուղքի ամենաներքևի աստիճանին, թիկունքին փաթաթել էր Ֆրիդայի գլխաշորը։ Նրա մազերը գզգզված էին, բարակ բեղերը կարծես անձրևից թրջված լինեին, լայն բացված աչքերը լի էին տանջանքի, աղերսանքի ու նախատինքի արտահայտությամբ, թույլ մսի պես կախ ընկած գունատ այտերը կարմրած էին, մերկ ոտքերն այնպես էին դողում, որ գլխաշորի

www.a-pdf.com

ծոպքերը ցնցվում էին. այդպես նա նման էր հիվանդանոցից փախած հիվանդի, ում տեսնողը առաջին հերթին կմտածեր նրան անկողնում պառկեցնելու մասին։ Նույն բանն անցավ նաև Ֆրիդայի մտքով։ Նա հեռացավ Կ-ի մոտից ու իսկույն հայտնվեց Երեմիասի կողքին՝ ներքևում։ Ֆրիդայի մոտիկությունը, հոգատար վերաբերմունքը, որով նա ավելի ամուր կապեց Երեմիասի թիկունքին փաթաթված գլխաշորը, փութկոտությունը, որով ուզեց սենյակ մտցնել նրան, կարծես որոշակի ուժ հաղորդեց Երեմիասին, և թվաց, թե նա միայն այժմ ճանաչեց Կ-ին։

— Ախ, պարոն հողաչափ։— Հանգստացնելու համար Ֆրիդայի այտը շոյելով, որ այլևս չէր ուզում որևէ զրույց հանդուրժել, ասաց նա։— Ներեցեք, որ խանգարեցի։ Ես, իրոք, լավ չեմ զգում ինձ և, իմ կարծիքով, դա արդարացնում է ձեզ ընդհատելը։ Ինձ թվում է, թե ջերմություն ունեմ, ինձ թեյ է հարկավոր ու մի լավ քրտնել։ Դպրոցի պարտեզի անիծյալ ճաղաշարի մասին ես, հավանաբար, երկար ժամանակ հիշելու առիթ կունենամ, իսկ հիմա՝ մի բան էլ մրսած, գիշերով մահ եմ գալիս։ Առանց հասկանալու, մարդ իր առողջությունն այնպիսի բաների համար է զոհում, որ բոլորովին չարժեն դրան։ Բայց Դուք, պարոն հողաչափ, իմ պատճառով մի ընդհատեք Ձեր զրույցը։ Ներս եկեք մեր սենյակ. հիվանդիս կայցելեք ու, միաժամանակ, ինչի մասին որ ուզում եք, կխոսեք Ֆրիդայի հետ։ Երբ մտերմացած երկու հոգի բաժանվում են իրարից, նրանք վերջին ակնթարթին, իհարկե, այնքան շատ բան կունենան իրար ասելու, որ երրորդ մեկը, թեկուզ անկողնում պառկած, խոստացած թեյին սպասելիս էլ լինի, հազիվ թե որևէ բան հասկանա։ Դուք իսկապես ներս եկեք, ես ծպտուն չեմ հանի։

— Արդեն հերիք է, վերջ,— ասաց Ֆրիդան ու քաշեց նրա թևից։— Նա տենդի մեջ է ու չի հասկանում, թե ինչ է խոսում։ Իսկ դու, Կ., մի արի, խնդրում եմ։ Դա իմ ու Երեմիասի սենյակն է, ավելի շուտ, միայն իմ սենյակն է, և ես արգելում եմ քեզ հետներս գալ։ Դու հալածում ես ինձ, ախ, Կ., ինչո՞ւ ես հալածում ինձ։ Ես երբեք, երբեք չեմ վերադառնա քեզ մոտ, մարմինս փշաքաղվում է, երբ մտածում եմ, թե կարող է վերադառնամ։ Գնա քո աղջիկների մոտ։ Նրանք,

www.a-pdf.com

ինչպես ինձ են պատմել, վառարանի մոտի նստարանին շապկանց կնստեն քո աջ ու ձախ կողմերում, ու երբ որևէ մեկը գա, որ քեզ տանի, վրա կպրծնեն նրան։ Եթե այդ ընտանիքը այդպես ձգում է քեզ, ուրեմն այնտեղ դու քեզ զգում ես ինչպես քո տանը։ Ես քեզ միշտ հետ եմ պահել այդ տանից, թեև անհաջող, բայց հետ եմ պահել։ Հիմա՝ էլ վերջ։ Դու ազատ ես, քեզ երջանիկ կյանք է սպասում։ Նրանցից մեկի համար դու երևի մի փոքր գժտվես բատրակների հետ, իսկ ինչ վերաբերում է երկրորդին, ապա ո՛չ երկրի վրա, ո՛չ երկընքում մեկը չկա, որ նրա պատճառով անբարյացակամ վարվի քեզ հետ։ Միությունն ի վերուստ օրհնված է եղել։ Ոչինչ մի առարկիր։ Իհարկե, դու կարող ես հակաճառել, սակայն դրանով, միևնույն է, ոչինչ չի հերքվի։ Երեմիաս, պատկերացրու, նա ամեն ինչ հերքում էր։— Նրանք գլուխները շարժելով ու ժպտալով համաձայնության եկան։— Սակայն ենթադրենք, թե նա ամեն ինչ հերքեց, ինչի՞ հասավ դրանով, ի՞նձ ինչ նրա հերքելը։ Ինչ էլ որ այն քույրերի մոտ եղած լինի, միայն նրանց ու Կ-ի գործն է, ոչ իմը։ Իմ գործը քեզ խնամելն է այնքան ժամանակ, մինչև որ դու նորից առողջանաս, ինչպիսին էիր երբևէ, մինչև որ Կ-ն էր իմ պատճառով քեզ տանջում։

— Դուք ուրեմն չե՞ք գալիս իսկապես, պարոն հողաչափ,— հարցրեց Երեմիասը, սակայն Ֆրիդան, որ այլևս չշրջվեց Կ-ի կողմը, նրան վերջնականապես քարշ տվեց սենյակ։ Ներքևում մի ցածրիկ դռնակ էր երևում, շատ ավելի ցածրիկ, քան այն միջանցքի վրայի դռները, և ոչ միայն Երեմիասը, այլ նաև Ֆրիդան պետք է ներս մտնելիս կռանար։ Ներսում երևի լուսավոր էր ու տաք։ Որոշ ժամանակ դեռ փսփսոցներ լսվեցին, Երեմիասին անկողնում պառկեցնելու համար համոզող սիրառատ խոսքեր էին երևի։ Հետո դուռը փակվեց։

Միայն այժմ Կ-ն նկատեց, թե ինչ լռություն էր տիրում միջանցքում, ոչ միայն այս հատվածում, ուր ինքն էր Ֆրիդայի հետ կանգնել, և որն երևի տնտեսական մասին էր պատկանում, այլ նաև երկար միջանցքում, որի սենյակներում քիչ առաջ աշխույժ աղմկում էին։ Այդպես, ուրեմն պարոնները վերջապես քուն էին մտել։ Կ-ն էլ չափազանց հոգնած էր ու զուցե հոգնածությունն էր պատճառը, որ Երե-

www.a-pdf.com

միասի հետ այնպես չխոսեց, ինչպես պետք էր։ Հավանաբար, շատ ավելի խելացի կլիներ Երեմիասի պես վարվելը։ Սա ակներևորեն չափազանցում էր իր մրսածությունը, նրա ոլորմելի վիճակի հետ հիվանդությունը ոչ մի կապ չուներ, ի ծնե էր և ոչ մի կազդուրիչ թեյ այն չէր ամոքի։ Լավ կլիներ Երեմիասի պես վարվեր, նրա պես ցուցադրեր չափից դուրս հոգնած լինելը, այստեղ՝ միջանցքում կուչ գար, մի բան, որ երևի շատ դուրեկան լիներ, մի փոքր կեղծեր և հետո գուցե խնամեին իրեն։ Սակայն Կ-ի ձևանալը երևի ոչ այնքան նպաստավոր վերջանար, ինչպես Երեմիասինը, որ կարեկցանքի համար տարված պայքարում, անշուշտ, և, հավանաբար իրավացիորեն, հաղթող դուրս կգար, ինչպես նաև ցանկացած ուրիշ պայքարում։ Կ-ն այն աստիճան հոգնած էր, որ մտածեց, թե արդյոք չէ՞ր կարող փորձել այս սենյակներից մեկնումեկը մտնել, որոնց մի մասը դատարկ էր իհարկե, ու փափուկ անկողիններից մեկում քունն առնել։ Նրա կարծիքով դա շատ բանի համար կարող էր հատուցում լինել։ Քնելուց առաջ նա խմելու բան էլ ուներ։ Մատուցարանի վրա, որ Ֆրիդան էր հատակին թողել, փոքր գրաֆինի մեջ ռոմ կար։ Կ-ն չվախեցավ վերադարձի շարշարանքից ու դատարկեց գրաֆինը։

Հիմա նա գոնե բավական ուժ զգաց իր մեջ, որ էռլանգերի դեմ կանգներ։ Նա փնտրեց էռլանգերի սենյակի դուռը, բայց որովհետև ծառան ու Գերշտեկերը այլևս չէին երևում, իսկ բոլոր դռները միանման էին, չէր կարող գտնել։ Սակայն, իր կարծիքով, նա հիշում էր, թե միջանցքի որ մասում էր գտնվում սենյակը և որոշեց բացել այն դուռը, որի հետևում պետք է որ էռլանգերը լիներ։ Փորձը չէր կարող շատ վտանգավոր լինել. եթե սենյակը էռլանգերինն էր, ապա վերջինս հավանաբար, ընդուներ նրան, իսկ եթե մի ուրիշի սենյակ լիներ, ապա, ինչ խոսք, կարելի կլիներ ներողություն խնդրել ու գնալ։ Եթե հյուրը քնած լիներ, որ ավելի հավանական էր, Կ-ի այցելությունը բնավ չէր էլ նկատվի։ Վատն այն էր, որ եթե սենյակը դատարկ լիներ, Կ-ն հազիվ թե կարողանար անկողին մտնելու և անվերջանալի քնով քնելու գործությանը դիմակայել։ Նա մի անգամ էլ միջանցքի երկայնքով աջ ու ձախ նայեց. գուցե որևէ մեկը հայտնվեր,

www.a-pdf.com

տեղեկություն տար ու ավելորդ դարձներ ոիսկը, սակայն երկար միջանցքը դատարկ էր ու լուռ։ Կ-ն ականջ դրեց դռան մոտ. այստեղ էլ ոչ ոք չկար։ Նա այնպես կամաց թակեց, որ ներսում քնածը դրանից հազիվ թե արթնանար և երբ այժմ էլ ոչինչ չլսվեց, մեծ զգուշությամբ բացեց դուռը։ Այժմ, սակայն, մի թույլ ճիչ դիմավորեց նրան։

Սենյակը փոքր էր, լայն մահճակալը զբաղեցրել էր նրա կեսից ավելին, գիշերային սեղանի վրա վառվում էր էլեկտրական լամպը, կողքին դրված էր ճամփորդական պայուսակը։ Անկողնու մեջ, վերմակի տակ թաքնված մեկն անհանգիստ շարժվեց և վերմակի ու սավանի արանքից շշնջաց.

— Այդ ո՞վ է։— Հիմա արդեն Կ-ն չէր կարող առանց բացատրություն տալու առաջ անցնել, դժգոհ զննեց շքեղ, բայց, ցավոք, ոչ դատարկ մահճակալը, հետո հիշեց հարցն ու տվեց իր անունը։ Այն կարծես լավ ներգործություն թողեց, անկողնում պառկած մարդը վերմակը մի փոքր հեռացրեց դեմքից, բայց երկյուղած, պատրաստ էր նորից ծածկվել, եթե հանկարծ իր իմացածը չհաստատվեր։ Հետո, սակայն, նա, առանց երկմտելու, հետ շպրտեց վերմակն ու ուղիղ նստեց։ Դա հաստատ Էռլանգերը չէր։

Մի փոքրակազմ, լավ տեսք ունեցող պարոն էր դա, և նրա դեմքը նրանով էր հակասություն արտահայտում, որ այտերը երեխայավարի կլոր, աչքերը երեխայավարի ուրախ էին, բայց լայն ճակատը, սուր քիթը, փոքր բերանը, որի շուրթերը հազիվ թե ուզում էին հպված մնալ, և հստակ չգծագրվող ծնոտը բոլորովին էլ երեխայական չէին, այլ մատնում էին նրա մտավախությունը։ Հավանաբար դրա պատճառած զոհունակությունն ինքն իրենից գոհ լինելն էր, որ նրա մոտ առողջ մանկականության մի մեծ պաշար էր պահպանել։

— Դուք ճանաչո՞ւմ եք Ֆրիդրիխին,— հարցրեց նա։ Կ-ն տարուբերեց գլուխը։

— Բայց նա ճանաչում է Ձեզ։— ժպտալով շարունակեց պարոնը։ Կ-ն գլխով արեց. իրեն ճանաչող մարդիկ քիչ չէին, և դա նույնիսկ հիմնական խոչընդոտներից մեկն էր նրա ճանապարհին։

— Ես նրա քարտուղարն եմ, իմ անունը Բյուրգել է։

www.a-pdf.com

— Ներեցեք ինձ,— ասաց Կ-ն ու ձեռքը մեկնեց բռնակին։— Ցավոք, ես Ձեր դուռը մեկ ուրիշի հետ շփոթեցի։ Ինձ քարտուղար Էրլանգերի մոտ են կանչել։

— Ինչ վատ է,— ափսոսաց Բյուրգելը։— Ոչ այն պատճառով, որ Ձեզ ուրիշ տեղ են կանչել, այլ, որ Դուք շփոթեցիք դռները։ Երբ ինձ արթնացնում են, ես այլևս չեմ կարող քնել։ Սակայն դա չպետք է մտահոգի Ձեզ, դա իմ անձնական դժբախտությունն է։ Եվ ինչո՞ւ այստեղի դռները փական չունեն, չէ՞։ Դա երևի իր պատճառն ունի։ Հին որոշման համաձայն քարտուղարների դռները պետք է միշտ բաց լինեն։ Սակայն դա ևս չպետք է այդպես բառացի ընդունված լիներ։— Բյուրգելը գոհ և հարցական հայացքով նայեց Կ-ին, ի հակասություն իր գանգատի, նա լավ հանգստացած էր երևում, և ինչպես որ Կ-ն էր, Բյուրգելը երևի երբեք այդպես հոգնած չէր եղել։

— Իսկ ո՞ւր եք ուզում գնալ այժմ,— հարցրեց Բյուրգելը։— Ժամը շորսն է։ Ում մոտ էլ որ գնալու լինեք, պետք է արթնացնեք, և ոչ ամեն ոք է քունը խանգարված լինելուն ինձ նման սովոր, ոչ ամեն ոք այսպես համբերատար կվերաբերվի։ Քարտուղարները ջղային մարդիկ են։ Ուրեմն մի քիչ էլ մնացեք։ Ժամը հինգի կողմ այստեղ սկսում են վեր կենալ, և Դուք ավելի լավ կկարողանաք Ձեր ծանուցագրով ներկայանալ։ Ուրեմն հանգիստ թողեք բռնակը և նստեք մի տեղ։ Այստեղ, իհարկե, նեղվածք է, լավ կլինի եթե այստեղ, մահճակալի եզրին նստեք։ Զարմանո՞ւմ եք, ո՛չ բազկաթոռ ունեմ, ո՛չ սեղան։ Գիտեք, իմ դիմաց ընտրություն էր դրված. կա՛մ լրիվ կահավորված սենյակ վերցնել՝ հյուրանոցային նեղ մահճակալով, կա՛մ լայն մահճակալ և ուրիշ ոչինչ, բացի այս փոքր լվացարանը։ Ես լայն մահճակալն ընտրեցի. նընջասենյակի ամենակարևոր կահույքն, ախր, մահճակալն է։ Ախ, ով ճմլկոտվել ու լավ քնել է կարող, լավ քնել կարողացողի համար այս մահճակալը, իրոք, մեծարժեք կլիներ։ Բայց ես էլ, որ միշտ հոգնած եմ լինում ու չեմ կարողանում քնել, ինձ էլ է մահճակալը հաճույք պատճառում, ես այստեղ եմ անցկացնում օրվա մեծ մասը, պառկած եմ գրում բոլոր թղթակցությունները, պառկած եմ քննում հաղորդված գոր-

www.a-pdf.com

ծերի տարբեր կողմերը։ Բավական լավ է ստացվում։ Թեև ներս հրավիրվածները նստելու տեղ չունեն, բայց նրանք համակերպվում են, ի վերջո, ախր, նրանց համար էլ հաճելի է, երբ իրենք կանգնած են, իսկ հարցաքննողն իրեն լավ է զգում, քան, ասենք, եթե իրենք հարմար նստեին, բայց նրանց վրա բղավեին։ Ես կարող եմ միայն մահճակալի եզրին մի տեղ տրամադրել, բայց սա ի պաշտոնե տեղ չէ և միայն գիշերային զրույցների համար է նախատեսված։ Բայց Դուք ինչո՞ւ եք լուռ, պարոն հոդաչափ։

— Ես շատ եմ հոգնած,— ասաց Կ-ն, որ առաջարկից անմիջապես հետո կոպտորեն, անհարգալից տեղավորվել էր մահճակալի եզրին ու հենվել մահճակալի գլխին։

— Իհարկե,— ծիծաղելով ասաց Բյուրգելը։— Այստեղ բոլորն էլ հոգնած են։ Օրինակի համար երեկ ու այսօր իմ արած գործը քիչ բան չի եղել։ Թեև ընդհանրապես բացառված է, որ ես հիմա քուն մտնեմ, բայց եթե այդ ամենաանհավանական բանը կատարվի և ես քուն մտնեմ, խնդրում եմ լուռ մնաք ու դուռը չբացեք։ Բայց չվախենաք, ես չեմ քնի, իսկ եթե քնեմ էլ, ապա մի քանի րոպեով։ Ինձ մոտ, ճիշտն ասած, այսպես է. որովհետև սովոր եմ հայցվորների ելումուտ անելուն, շատ ավելի հեշտ եմ քնում, երբ ինձ մոտ մարդ կա։

— Դուք քնեք, պարոն քարտուղար, խնդրում եմ։— Նրա բացատրությունից ուրախացած ասաց Կ-ն։— Այդ դեպքում, եթե Դուք թույլ տաք, ես էլ մի փոքր կքնեմ։

— Ոչ, ոչ,— նորից ծիծաղեց Բյուրգելը։— Ես, ցավոք, չեմ կարող հենց այնպես, հրավերքին հետևելով քուն մտնել, միայն զրույցի ընթացքում կարող է առիթ ստեղծվել, ավելի շուտ, ինձ զրույցն է քնեցնում։ Այո, մեր գործի ժամանակ նյարդերը տուժում են։ Օրինակ, ես կապի գծով եմ քարտուղար։ Չգիտե՞ք, թե դա ինչ բան է։ Խոսքի օրինակ, ես ամենաուժեղ կապն եմ ստեղծում Ֆրիդրիխի ու գյուղի միջև։— Այս ասելիս նա փութով, ակամա զոհունակությամբ շփեց ձեռքերը։— Ես իրար եմ կապում դղյակի ու գյուղի նրա քարտուղարներին, մեծ մասամբ գյուղում եմ, բայց ոչ միշտ։ Ես պետք է ցանկացած պահին դղյակ մեկնելուն պատրաստ լինեմ։ Տեսնո՞ւմ եք իմ ճամփորդական պայու-

www.a-pdf.com

ռակը։ Անհանգիստ կյանք է, և ամեն ոք չի կարողանա այս-պես ապրել։ Մյուս կողմից էլ ճիշտ է, որ ես այլևս չէի կարողանա աշխատանքի այս ձևը որևէ բանով փոխարինել, ցանկացած ուրիշ աշխատանք ինձ անհրապույր է թվում։ Իսկ հողաչափությո՞ւնն ինչպես է։

— Իմ գործը դա չէ, ես հողաչափությամբ չեմ զբաղվում։— Մտովի նա այնքան էլ մոտ չէր զրույցի թեմային, նա անհամբեր սպասում էր, որ Բյուրգելը կքնի, բայց նույնիսկ դա անում էր իր իսկ հանդեպ ունեցած պարտքի որոշակի զգացումից, ներքուստ նրան թվում էր, թե գիտե, որ Բյուրգելի քնելու պահը աներևակայելիորեն հեռու է։

— Զարմանալի է։— Գլուխն աշխույժ ցնցելով ասաց Բյուրգելն ու վերմակի տակից մի նոթատետր հանեց, որ նշում անի։— Դուք հողաչափ եք, բայց հողաչափի գործ չունեք։

Կ-ն մեխանիկորեն գլխով արեց։ Նա ձախ ձեռքը պարզել էր մահճակալի գլխին ու գլուխը դրել վրան, մի քանի անգամ փորձել էր հարմար դիրք ընդունել, սակայն ամենահարմարը այս դիրքն էր, և հիմա ինքը կարող էր ավելի լավ ուշադրություն դարձնել, թե ինչ է ասում Բյուրգելը։

— Ես պատրաստ եմ հետևել այս գործին,— շարունակեց Բյուրգելը։— Մեզ մոտ, ախր, դրվածքն ամենևին էլ այնպես չէ, որ կարելի լինի չօգտագործված թողնել մասնագետ ուժին։ Ձեզ համար էլ պետք է որ վիրավորական լինի։ Դա Ձեզ ցավ չի՞ պատճառում։

— Պատճառում է,— դանդաղ խոսեց Կ-ն ու ժպտաց ինքնիրեն, որովհետև հենց տվյալ պահին ինքը ոչ մի ցավ չէր զգում, և հետո, Բյուրգելի առաջարկն էլ մեծ տպավորություն չթողեց իր վրա։ Նրա կողմից դա, իհարկե, մանկամտություն էր։ Առանց տեղյակ լինելու, թե ի՞նչ հանգամանքներում էր Կ-ն այստեղ կանչվել, թե հրավերքն ի՞նչ խոշընդոտների էր հանդիպել համայնքում ու դղյակում, թե Կ-ի այստեղ իջևանելու ընթացքում ի՞նչ բարդություններ էին առաջացել արդեն կամ զգուշացրել իրենց մասին. առանց այդ ամենի մասին որևէ բան իմանալու, նույնիսկ առանց ցույց տալու, թե այդ մասին գոնե որևէ պատկերացում ունի, մի բան, որ կարելի էր ենթադրել ուզածդ քարտու-

www.a-pdf.com

զարից, նա զարմանալի հեշտությամբ առաջարկեց իր թեկնածությունը՝ մի փոքր նոթատետրի օգնությամբ գործը վերևում կարգավորելու համար։

— Դուք երևի մի քանի հիասթափություններ եք ունեցել արդեն,— ասաց Բյուրգելն ու դրանով, այնուամենայնիվ, ապացուցեց, որ մարդկանցից որոշ բան հասկանում է։ Թեև Կ-ն ընդհանրապես, սկսած այն պահից, երբ մտել էր այս սենյակը, մերթընդմերթ հիշեցնում էր իրեն, որ չթերագնահատի Բյուրգելին, բայց նրա վիճակում շատ դժվար էր իր հոգնածությունից բացի ճշմարտացի բնորոշել որևէ ուրիշ բան։

— Ոչ։— Կարծես Կ-ի մտքերից մեկին պատասխանելով՝ ասաց Բյուրգելն ու ցանկացավ նրբանկատորեն խնայել նրան արտահայտվելու դժվարությունից։— Դուք չպետք է թույլ տաք, որ հիասթափությունները վախեցնեն Ձեզ։ Այստեղ թվում է, թե որոշ բաներ հենց վախեցնելու նպատակին են ծառայում, իսկ երբ մարդ նորեկ է, ապա խոչընդոտները նրան միանգամայն անհաղթահարելի են թվում։ Ես չեմ ուզում խորանալ, թե իրականում ինչպե՞ս է վիճակն այդ հարցում, գուցե տպավորությունն իրոք համապատասխանում է իրականությանը, իմ դիրքի պայմաններում ինձ իսկական հեռավորություն է անհրաժեշտ դա որոշելու համար, բայց, նկատի ունեցեք, երբեմն առիթներ են ստեղծվում, որ համարյա չեն համապատասխանում ընդհանուր դրությանը, հանգամանքներ, որոնց դեպքում մի բառի, մի հայացքի, վստահության մի նշանի դրսևորմամբ ավելի մեծ բանի կարելի է հասնել, քան մի ամբողջ կյանք տևող ուժասպառող շարշարանքներով։ Իհարկե այդպես է։ Եվ, ինչ խոսք, եթե հանգամանքները չեն օգտագործվում, ապա դրանք համընկնում են ընդհանուր դրության հետ։ Բայց ինչո՞ւ դրանք չեն օգտագործվում, շարունակ հարցնում եմ ես։

Կ-ն չգիտեր, թե ինչու։ Թեև նա նկատում էր, որ այն, ինչի մասին Բյուրգելն էր խոսում, հավանաբար միայն իրեն էր վերաբերում, բայց այս պահին նա մեծ հակակրանք էր զգում իրեն առնչվող ամեն ինչի հանդեպ։ Նա զլուխը մի փոքր կողքի տարավ, կարծես դրանով ճանապարհ էր բացում

Բյուրգելի հարցերի համար ու այլևս չէր կարող դրանցով հետաքրքրվել։

— Դա քարտուղարների,— շարունակեց Բյուրգելը, ձգեց ձեռքերն ու հորանջեց, մի բան, որ նրա խոսքերի լրջության հետ համեմատած շփոթեցնող հակասություն էր,— դա քարտուղարների մշտական բողոքն է, որ նրանք ստիպված են գյուղում հարցաքննությունների մեծ մասը գիշերն անցկացնել։ Բայց ինչո՞ւ են նրանք բողոքում դրանից։ Որ չափից դուրս շա՞տ է հոգնեցնում նրանց, որ նրանք գիշերն ավելի մեծ հաճույքով կուզենային քնելո՞ւն տրամադրել։ Ոչ, նրանք հաստատ այդ պատճառով չեն բողոքում։ Քարտուղարների մեջ, ինչ խոսք, ջանասերներն ու պակաս ջանասերները կան, ինչպես ամենուր, բայց նրանցից ոչ մեկը չի գանգատվում, թե չափից դուրս շատ է հոգնում, բոլորովին չեն գանգատվում։ Դա, պարզապես, բնորոշ չէ մեզ։ Այդ տեսակետից մենք ոչ մի տարբերություն չենք տեսնում սովորական ժամանակի ու աշխատաժամանակի միջև։ Նման տարբերակումներն անծանոթ են մեզ։ Ուրեմն քարտուղարներն ինչո՞ւ են գիշերային հարցաքննություններին դեմ, հայցվորներին հաշվի առնե՞լն է պատճառը։ Ո՛չ, ո՛չ. դա էլ չէ։ Քարտուղարները հայցվորների հանդեպ նրբանկատ չեն, համենայնդեպս, հայցվորների հանդեպ նրանց աննրբանկատությունը մազաչափ անգամ չի տարբերվում հենց իրենց հանդեպ ունեցած աննրբանկատությունից, այլ նույնն է իր չափով։ Ճըշմարիտն ասած, այս աննրբանկատությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ծառայության երկաթյա հետևողականություն ու իրականացում, սակայն սա մեծագույն նրբանկատությունն է, որ կարող են երազել հայցվորները։ Ըստ էության դա ընդունված է միանգամայն, իսկ զուտ մակերեսորեն նայողը, իհարկե, չի հասկանա, որ այս դեպքում, օրինակ, հենց գիշերային հարցաքննություններն են, որ ողջունելի են հայցվորների կողմից և գիշերային հարցաքննությունների դեմ ոչ մի սկզբունքային բողոք չեն ուղարկում։ Հապա ի՞նչն է քարտուղարների հակակրանքի պատճառը։

Կ-ն սրա պատասխանն էլ չգիտեր, նա այնքան քիչ բան գիտեր, նա նույնիսկ չէր հասկանում, թե Բյուրգելը

www.a-pdf.com

զրջորեն, թե հենց այնպես էր պատասխանի սպասում։ «Եթե թույլ տաս, որ քո մահճակալին պառկեմ, մտածում էր նա, ապա ես վաղը ճաշին, կամ ավելի լավ է երեկոյան, կպատասխանեմ բոլոր հարցերին»։ Բայց Բյուրգելին երևի չէր հետաքրքրում դա, նրան ավելի շատ զբաղեցնում էր այն հարցը, որ ինքն էր տվել իրեն։

— Ինչքան ես եմ հասկացել ու ինչքան իմ փորձն է ինձ սովորեցրել, քարտուղարները գիշերային հարցաքննությունների առնչությամբ մոտավորապես այս տեսակետն ունեն. հայցվորների հետ քննարկումներ անցկացնելու համար գիշերն այն պատճառով է պակաս ընդունելի, որ գիշերվա ժամերին դժվար է, կամ պարզապես անհնար է ամբողջապես պահպանել քննարկումների պաշտոնական բնույթը։ Դրա պատճառը ձևականությունները չեն, իհարկե, ձևերին էլ կարելի է գիշերը նույն խստությամբ վերաբերվել, ինչպես որ ցերեկվա ընթացքում։ Ուրեմն դա չէ պատճառը, ընդհակառակը, գիշերը պաշտոնական գնահատականը տուժում է։ Մարդ ակամայից հակված է իրերը գիշերը ավելի շուտ մասնավոր տեսակետից դիտարկել, հայցվորների խոսքերը ավելի մեծ կշիռ են ձեռք բերում, քան դրանք արժեն իրականում, գնահատման վրա միանգամայն ավելորդ կերպով ազդում են հայցվորների սովորական վիճակը, նրանց ցավերն ու հոգսերը, հայցվորների ու պաշտոնյաների միջև առկա պատնեշը, թեև արտաքուստ անթերի էլ լինի, թուլանում է, և ուր սովորաբար (ինչպես որ պետք է) հարց ու պատասխանն է միայն իշխում, երբեմն կարծես մարդկանց արտասովոր, բացարձակ չհամապատասխանող փոխանակում է տեղի ունենում։ Գոնե այսպես են ասում քարտուղարները, այսինքն՝ այնպիսի մարդիկ, որ նման բաների համար ի պաշտոնե արտասովոր նրբազգացությամբ են օժտված։ Բայց նույնիսկ նրանք գիշերային հարցաքննությունների ժամանակ հիշատակված աննպաստ ազդեցություններից քիչ բան են նկատում. մեր շրջանակներում այս մասին արդեն հաճախ են խոսել։ Ընդհակառակը, նրանք հենց սկզբից ձգտում են նպաստել դրանց և ի վերջո մտածում են, որ առանձնահատուկ վաստակների են հասել։ Բայց երբ մարդ ավելի ուշ կարդում է արձանագրությունները, զարմանում է դրանց

www.a-pdf.com

բացահայտ դրսևորվող թուլության վրա։ Եվ այս սխալներն են, այսինքն՝ հայցվորների կիսով չափ չարդարացված շահերն են, որ դոնե մեր հրահանգների համաձայն սովորական կարճ ճանապարհով այլևս հնարավոր չէ ուղղել։ Վերահսկող որևէ ծառայության կողմից դրանք երբևէ կուղղվեն իհարկե, սակայն դա միայն օրինականությանը կօգնի, բայց հայցվորներին այլևս չի կարողանա վնասել։ Արդյոք այս պայմաններում քարտուղարների բողոքները չափից դուրս արդարացի չե՞ն։

Կ-ն, որ մի կարճ ժամանակահատված կիսաքուն վիճակում էր անցկացրել, հիմա նորից արթնացավ։ Ինչի՞ համար է այս ամենը, ինչի՞ համար, ինքնիրեն հարցրեց նա և ծանրացած կոպերի տակից Բյուրգելին նայեց ոչ որպես մի պաշտոնյայի, որ իր հետ դժվարին հարցեր էր քննարկում, այլ որպես իր քունը խանգարող մի որևէ բանի, իսկ ինքը չէր կարողանում հասկանալ, թե ինչի համար է դա արվում։ Սակայն ամբողջապես իր մտքերով տարված Բյուրգելը ժըպտաց, կարծես նրան։ Հենց այս պահին հաջողվել էր մի փոքր շփոթեցնել Կ-ին, բայց և պատրաստ էր նորից ճիշտ ճանապարհին կանգնեցնել նրան։

— Եվ գիտեք ինչ,— շարունակեց նա,— այս գանգատները չի կարելի առանց այլևայլության միանգամայն արդարացի անվանել։ Թեև զիշերային հարցաքննությունների վերաբերյալ անմիջական ոչ մի հրահանգ չկա, այնուամենայնիվ, ոչ մի հրահանգի խախտում չի կատարվում, երբ փորձում են խուսափել դրանցից, բայց հանգամանքները՝ աշխատանքի մեծ քանակությունը, գյուղում պաշտոնյաների կբաղվածությունը, առանց նրանց յոլա գնալու անհնարինությունը, հրահանգը, որ հայցվորների հարցաքննությունը պետք է տարվի միայն սովորական ուսումնասիրման վերջնական ավարտից անմիջապես հետո, այս ամենը ավել թե սլակաս չափով անխուսափելի անհրաժեշտություն է դարձրել զիշերային հարցաքննությունը։ Իսկ եթե դրանք անհրաժեշտություն են դարձել, այսպես եմ մտածում ես, ապա, իհարկե, այդ անհրաժեշտությունն էլ հրահանգների գոնե միջնորդավորված արդյունքն է, և զիշերային հարցաքննություններին հակառակվելը նույնն է, ինչ (ես, իհարկե, մի փոքր

www.a-pdf.com

չափազանցում եմ և, այդ պատճառով, որպես չափազանցություն կարող եմ ասել) գիշերային հարցաքննություններին հակառակվելը նույնն է, ինչ, ասենք, հրահանգներին հակառակվելը։

Դրան հակառակ, թող քարտուղարներին թույլատրված էլ լինի, որ նրանք հրահանգների սահմաններում փորձեն ինչքան հնարավոր է ապահովագրել իրենց գիշերային հարցաքննություններից ու դրանց երևակայական թերություններից։ Նրանք հենց այդպես էլ վարվում են։ Նրանք միայն բանակցությունների այն կետերին են համաձայնում, որոնցից, ամեն դեպքում, քիչ բան կա վախենալու, քննարկումից առաջ ստուգում են իրենք իրենց ու, եթե ստուգման արդյունքներն այդպես են պահանջում, թեկուզ հենց վերջին պահին մերժում են բոլոր հարցաքննությունները, մինչև իսկապես հարցաքննելը՝ նրանք նույն հայցվորին մոտ տասն անգամ կանչելով ուժեղացնում են իրենց դիրքերը, հաճույքով են թույլ տալիս, որ իրենց փոխարեն հանդես գան այն գործընկերները, ովքեր տվյալ գործի կապակցությամբ իրավասու չեն և այդ իսկ պատճառով ավելի հեշտ են կարողանում վարել գործը, քննարկումները նշանակում են առնվազն գիշերվա սկզբին կամ առավոտյան դեմ ու խուսափում են միջին ժամերից. այսպիսի շատ ձևեր կան, նրանք թույլ չեն տալիս, որ հայցվորները հեշտությամբ մոտենան իրենց։ Քարտուղարները. նրանք համարյա նույն չափով են ընդունակ հակառակվելու, ինչքան որ հեշտ կարելի է վիրավորել նրանց։

Թեև դա իսկական քուն չէր, բայց Կ-ն քնել էր, Բյուրգելի խոսքերը նա երևի ավելի լավ էր լսում, քան երբ քիչ առաջ արթուն էր ու մահու չափ հոգնած, բառերը հերթով, հստակորեն խփվում էին նրա ականջներին, բայց անտանելիի գիտակցությունն արդեն անհետացել էր, նա իրեն ազատ էր զգում, Բյուրգելն այլևս չէր կաշկանդում իրեն, միայն ինքն էր երբեմն Բյուրգելի ուղղությամբ խարխափում, ու թեև դեռ չէր ընկղմվել քնի խորքը, բայց արդեն խորասուզվում էր։ Այլևս ոչ ոք չէր կարող փախցնել նրա քունը, և նրան թվում էր, թե դրանով մի մեծ հաղթանակ տոնել էր հաջողվել իրեն, և այդ հաղթանակը տոնելու համար մի խումբ էր հավաքվել, և ինքը կամ մի ուրիշ մեկը այդ հաղթանակի պատվին

www.a-pdf.com

քարձրացրել էր շամպայնի բաժակը, և որպեսզի բոլորն իմանային, թե ինչի մասին էր խոսքը, մի անգամ ևս կրկնեց պայքարի ու հաղթանակի պատմությունը և գուցե չվերապատմվեց, այլ պայքարը հենց հիմա տեղի ունեցավ, իսկ հաղթանակը ավելի շուտ էր տոնվել և չէր կարելի չտոնել այն, որովհետև ավարտը, բարեբախտաբար, պարզ էր։ Կ-ն պայքարում հաղթել էր մի քարտուղարի, որ մերկ էր ու շատ նման հունական աստվածներից մեկի արձանին։ Զվարճալի վիճակ էր, ու Կ-ն մեղմ ժպտում էր քնի մեջ, թե ինչպես էր քարտուղարը Կ-ի հարվածների ազդեցության տակ կորցնում իր հպարտ կեցվածքն ու ստիպված էր իր մերկությունը ծածկելու նպատակին օգտագործել մեկ առաջ պարզած, մեկ բռունցքված ձեռքը և շատ դանդաղ էր իր գործողություններում։ Պայքարը երկար չտևեց, Կ-ն քայլ առ քայլ (իսկ դրանք հսկա չափերի էին) առաջ էր շարժվում։ Արդյո՞ք սա պայքար էր ընդհանրապես։ Ոչ մի լուրջ դիմադրություն չկար, միայն երբեմն-երբեմն լսվում էր քարտուղարի ծվծվոցը։ Այս հունական աստվածը ծվծվում էր ինչպես մի աղջիկ, ում խուտուտ էին տալիս։ Ի վերջո նա կորավ, Կ-ն մենակ էր մեծ սրահում, մարտի պատրաստ՝ նա շուռ եկավ ու փնտրեց հակառակորդին, սակայն այլևս ոչ ոք չկար, հավաքված խումբն էլ էր ցրվել, ու միայն շամպայնի կոտրած բաժակն էր ընկած գետնին։ Մնացածը Կ-ն փշրեց, բայց կտորտանքները ծակծկում էին, ցնցվելով նա արթնացավ նորից և այնպես էր նեղացած, ինչպես լինում է քնից հանված փոքր երեխան։ Այնուամենայնիվ, Բյուրգելի մերկացած կուրծքը տեսնելով, քնած ժամանակ համակած միտքը անցավ նրա գլխով. «Ահա քո հունական աստվածը, քամուն տուր նրա փետուրները»։

— Չնայած նախազգուշական բոլոր միջոցառումներին,— մտախոհ դեմքը սենյակի առաստաղին դարձնելով՝ կարծես օրինակներ է փնտրում մտովի, բայց չի կարողանում որևէ մեկը գտնել, խոսեց Բյուրգելը,— չնայած նախազգուշական բոլոր միջոցառումներին, հայցվորների համար մի հնարավորություն կա. քարտուղարների այս գիշերային թուլությունը, նախապայմանով, որ սա թուլություն է իրենց նպա-

www.a-pdf.com

տակներին ծառայեցնելու համար։ Իհարկե, մի շատ հազվադեպ կամ, ավելի ճիշտ, համարյա երբեք ի հայտ չեկող հնարավորություն։ Այն է, որ հայցվորն առանց տեղյակ պահելու դա գիշերվա կեսին։ Դուք գուցե մտածում եք հավանաբար, որ այս հնարավորությունը, թեև այնքան էլ խրթին չի թվում, այդքան հազվադեպ է ներկայանում։ Ասենք, այո, Դուք մեր պայմաններին լավ ծանոթ չեք, բայց պաշտոնական կազմակերպության ամբողջականությունը պետք է որ Դուք էլ արդեն նկատած լինեք։ Սակայն այդ ամբողջականությունից ենթադրվում է, որ որևէ հայց ներկայացնող կամ ուրիշ մի պատճառով հարցաքննման ենթակա ամեն ոք իսկույն, առանց վարանման, մեծ մասամբ նույնիսկ առանց իր իսկ համար գործը կարգի բերելու, այո, նույնիսկ մինչև գործի մասին իմանալն արդեն ստանում է ծանուցումը։ Այս անգամ նա դեռ չի հարցաքննվի, մեծ մասամբ դեռ ենթակա չի լինի հարցաքննման, որովհետև գործը դեռ այդ աստիճան հասունացած չի լինում, բայց ծանուցումը կա արդեն, նա չի կարող առանց տեղյակ պահելու գալ, կարող է ամենաշատը անպատեհ ժամի գալ, բայց այդ դեպքում նրա ուշադրությունը կհրավիրեն ծանուցման ամսաթվի ու ներկայանալու ժամի վրա, և նա մյուս անգամ ճիշտ ժամին կգա, բայց, որպես կանոն, հետ կուղարկվի, դա անելն արդեն դժվար չի լինի. հայցվորի ձեռքում եղած ծանուցումն ու փաստաթղթում եղած թռչնանիշը քարտուղարների համար թեև ոչ միշտ բավականացնող, բայց պաշտպանական ուժեղ զենքեր են։ Համենայնդեպս, դա վերաբերում է միայն գործի հարցով իրավասու քարտուղարին, իսկ մյուսներին գիշերն անակնկալի բերելով մոտենալ հանգիստ կարող են բոլորը։ Սակայն հավիվ թե որևէ մեկը այդ համարյա անիմաստ բանն անի։ Այդ քայլով մարդ առաջին հերթին շատ կդառնացնի իրավասու քարտուղարին, թեև քարտուղարներս գործի հետ կապված հարցերում մեր մեջ, իհարկե, չենք խանդում իրար, մեզնից յուրաքանչյուրին վիճակված է հստակ չափումներով, իրոք ցանկացած մանրուքից զտված աշխատանքի լուծը, մինչդեռ հայցվորների հանդեպ իրավասության խախտումներ հանդուրժելու իրավունք մենք չունենք ոչ մի դեպքում։ Որոշ հայցվորներ գործը տանուլ են տալիս, որովհետև, են-

www.a-pdf.com

թաղրելով, թե իրավասու հատվածում առաջխաղացում չու-նեն, փորձում են սողանցք գտնել անիրավասու հատվածում։ Ի դեպ, նման փորձերը նաև այն պատճառով են տապալման դատապարտված, որ ոչ իրավասու քարտուղարը, նույնիսկ եթե գիշերը հանկարծակի բերված էլ լինի և օգնելու մեծագույն ցանկություն ունենա, հենց իր ոչ իրավասու լինելու պատճառով հազիվ թե կարողանա ավելի շատ միջամտել, քան ուղածդ ուրիշ փաստաբանը, ըստ էության, շատ ավելի քիչ կմիջամտի, քանի որ (օրինականության գաղտնի ճանապարհները բոլոր պարոնայք փաստաբաններից ավելի լավ գիտենալով հանդերձ՝ նույնիսկ եթե մի բան էլ կարողանա անել) նրան այնպիսի բաներ են պակասում, որոնց համար ինքը իրավասու չէ, և դրանք ոչ մի ժամանակ ու ոչ մի ակնթարթ չի կարողանա օգտագործել օգնելու նպատակով։ Իրոք, նման հեռանկարների պայմաններում ո՞վ կհամաձայնի իր գիշերներն օգտագործել գործը ոչ իրավասու քարտուղարներին հանձնելու համար, երբ հայցվորներն առանց այդ էլ խիստ զբաղված են և, իրենց սովորական անելիքներին զուգահեռ, ձգտում են հետևել իրավասու մարմինների ծանուցումներին ու արած նշաններին. «խիստ զբաղված» ասում եմ, իհարկե, հայցվորների պատկերացմամբ, որ բնավ էլ նույնը չէ, ինչ քարտուղարների պատկերացմամբ «խիստ զբաղված լինել»-ն է։

Կ-ն ժպտալով գլխով արեց, նրան թվաց, թե հիմա ամեն ինչ պարզ է հասկանում։ Ոչ այն պատճառով, որ լսածը վըշտացնում էր իրեն, այլ ինքը համոզված էր, որ հաջորդ պահին վերջնականապես քուն կմտնի, այս անգամ արդեն առանց երազ տեսնելու և առանց խանգարման։ Մի կողմում իրավասու, մյուս կողմում ոչ իրավասու քարտուղարներին ունենալով, խիստ զբաղված հայցվորներին դեմ հանդիման նա խոր քնի մեջ կընկղմվեր ու այդպես կհեռանար բոլորից։ Բյուրգելի մեղմ, ինքնագոհ, իզուր տեղը իր իսկ քուն մտնելուն նպատակաուղղված ձայնին նա այնպես էր վարժվել, որ այդ ձայնը ավելի շուտ քուն կմտցներ նրան, քան կխանգարեր։

— Ջիկչիկա, ջրաղաց, չիկչիկա,— մտածեց նա,— դու միայն ինձ համար ես չիկչիկում։

www.a-pdf.com

— Իսկ որտե՞ղ է հապա,— երկու մատով ներքևի շուրթի հետ խաղալով, աչքերը լայն բացած, վիզն առաջ ձգած, կարծես հոգնեցուցիչ շրջագայությունից հետո ուր որ է այնպիսի մի տեղի է մոտենալու, որտեղից հիանալի տեսարան է բացվում, շարունակեց Բյուրդելը,— որտե՞ղ է հապա այն հազվագյուտ, համարյա երբեք հանդես չեկող հնարավորությունը, ինչի մասին հիշատակվեց արդեն։ Գաղտնիքը իրավասության վերաբերյալ հրահանգների մեջ է թաքնված։ Իհարկե, այդպես չէ, և մի մեծ, կենդանի կազմակերպության մեջ չի կարող այնպես լինել, որ յուրաքանչյուր գործի համար մի որոշակի իրավասու քարտուղար լինի։ Իրականում այնպես է, որ հիմնական իրավասությունը միայն մեկին է պատկանում, իսկ շատ ուրիշներ որոշակի մասերում մի և ավելի փոքր իրավասություններ ունեն։ Ով կկարողանա մենակ՝ նույնիսկ եթե ամենաջանասեր աշխատողն էլ լինի, թեկուզ փոքրագույն գործի բոլոր հարցերը տեղավորել իր գրասեղանի վրա։ Արդեն միայն հիմնական իրավասության մասին խոսելով, ես չափից դուրս շատ բան ասացի։ Արդյոք հենց ամենափոքր իրավասության մեջ չէ՞ ամեն ինչ պարունակվում։ Արդյոք այս հարցում վճռականը կիրքը չէ՞, որով ձեռնամուխ են լինում գործին, և արդյոք նույն կիրքը իր ուժգնությամբ առկա չէ՞ միշտ։ Թող որ բոլոր հարցերում տարբերություններ լինեն քարտուղարների միջև, իսկ նման տարբերություններն անհամար են, բայց կրքի հարցում տարբերություն չկա, նրանցից ոչ մեկը չի կարողանա զսպել իրեն, երբ նրան հասնի այն գործով զբաղվելու հրամանը, որի հարցում ինքը միայն նվազագույն իրավասություններ պետք է ունենա։ Բանակցությունների մի ձևավորված հնարավորություն պետք է լինի դրսի հետ, այդ նպատակով հայցվորներից յուրաքանչյուրի համար մի քարտուղար է առաջին պլանում կանգնում, և հայցվորը ի պաշտոնե գործը պետք է քարտուղարի հետ ունենա։ Սակայն պարտադիր չէ, որ դա այն քարտուղարը լինի, ով ամենամեծ իրավասությունն ունի այդ գործում, իրավասության վերաբերյալ որոշիչ դերն այստեղ պատկանում է կազմակերպությանն ու նրա վայրկենական, առանձնահատուկ պահանջներին։ Այսպիսին է իրերի վիճակը։ Իսկ հիմա, պարոն հողաչափ, ուշադրություն դարձ-

www.a-pdf.com

ցեք այն հնարավորության վրա, երբ հայցվորը՝ չնայած այն խոշընդոտներին, որոնց մասին խոսել ենք արդեն և որոնք ընդհանրապես պետք է որ բավական լինեին, դիշերվա կեսին հանկարծակիի է բերում տվյալ գործի առնչությամբ որոշակի իրավասություններ ունեցող քարտուղարին։ Դուք երևի նման մի հնարավորության մասին դեռ չեք մտածել։ Սիրով հավատում եմ։ Ճիշտն ասած, չարժի էլ այդ հնարավորության մասին մտածել, որովհետև նման բան երբեք չի լինում։ Այդ ինչ տարօրինակ, որոշակի ձև ունեցող պլաստիկ ու ճստիկ հատիկ պետք է լինի այդ հայցվորը, որ կարողանա սահել նմանը չունեցող մաղի միջով։ Ենթադրում եք, թե երբեք չի՞ կարող նման բան լինել։ Իրավացի եք, երբեք չի կարող։ Սակայն մի դիշեր (ո՞վ կարող է ամեն ինչի համար երաշխավորել) այդ հնարավորությունը ստեղծվում է։ Թեև իմ ծանոթների շրջանում ես որևէ մեկի չեմ ճանաչում, ում հետ նման բան կատարված լինի, բայց դա դեռ ոչինչ չի նշանակում, որովհետև իմ ծանոթների շրջանակը այստեղ քննարկվող քանակության հետ համեմատած սահմանափակ է և, դրանից բացի, բնավ հաստատ չէ, որ այդպիսի դեպքերի հանդիպած քարտուղարը նաև կցանկանա խոստովանել եղածը, որովհետև դա խիստ անձնական, ինչ-որ տեղ նաև պաշտոնյայի հեղինակությանը լրջորեն դիպչող դեպք է։ Սակայն իմ փորձը երևի ապացուցում է, որ խոսքը խիստ հազվադեպ, իրականում միայն ասեկոսեների շնորհիվ գոյություն ունեցող, ուրիշ ոչնչով չհիմնավորված բանի մասին է, և դրանից վախենալը խիստ մեծ չափազանցություն կլինի։ Նույնիսկ եթե նման բան կատարվի էլ, մարդ կարող է եղածն անմիջապես վնասազերծել (մի բան, որ շատ հեշտ է). այս աշխարհում նման հնարավորության համար տեղ չկա։ Համենայնդեպս, վիրավորական է, երբ պաշտոնյան հայցվորից վախենալով թաքնվում է վերմակի տակ ու չի համարձակվում ծիկրակել։ Իսկ եթե հանկարծ միանգամայն անհավանական երևույթը իրականություն դառնա, արդյո՞ք ամեն ինչ տանուլ է տրված։ Ընդհակառակը։ Այն, որ ամեն ինչ տանուլ է տրված, ավելի անհավանական է, քան ամենաանհավանական բանը։ Իհարկե, շատ վատ է, երբ հայցվորն ար-

www.a-pdf.com

գլեն սենյակում է։ Մարդ կարկամում է, թե ինչքան ժամանակ կկարողանա դիմակայել, բայց նաև գիտե, որ ոչ մի դիմադրություն էլ չի լինի։ Ձեզ պետք է միայն ճիշտ պատկերացնել դրությունը։ Երբեք ի հայտ չեկած, միշտ սպասված, իսկական փափագով սպասված ու տրամաբանորեն միշտ անհասանելի համարվող հայցվորը նստած է այստեղ ու հենց միայն իր անխոս ներկայությամբ հորդորում է ներխուժել իր խղճուկ կյանքը, այնտեղ ամեն ինչ տնօրինել այնպես, ինչպես մարդ իր կալվածքում է անում և նրա սպարդյուն հորդորների տակ մեկտեղ տառապել։ Խաղաղ գիշերով այս հրավերքը հրապուրիչ է։ Մարդ հետևում է դրան ու այդ պահից այլևս դադարում է պաշտոնյա լինել։ Դա այն վիճակն է, երբ շուտով անհնար է լինում որևէ խընդրանք մերժել։ Ճիշտն ասած, մարդ հուսահատվում է, իսկ էլ ավելի ճիշտ՝ չափից դուրս երջանիկ է։ Հուսահատված, քանի որ անպաշտպան նստած է այստեղ, հայցվորի խընդրանքին է սպասում և գիտե, որ հենց խնդրանքն արտաբերվի, պետք է անել, նույնիսկ եթե (ինչքան որ կարելի է պատկերացնել) պաշտոնական կազմակերպությունը իրոք պատառոտի այն. հենց սա է ամենավատ բանը, որ կարող է պատահել գործնական կյանքում։ Ամենից առաջ՝ մյուս շատ բաներից անկախ, նաև այն պատճառով, որ դա ամեն մի ուրիշ հասկացություն գերազանցող աստիճանի բարձրացում է, և մարդ՝ ուժ գործադրելով, տվյալ պահին օգտվում է դրանից։ Ըստ մեր պատկերացումների, մենք բոլորովին լիազորված չենք կատարել այն խնդրանքները, որոնց մասին այստեղ խոսք է գնում, բայց գիշերային հայցվորի մոտիկության շնորհիվ մեզ պաշտոնական որոշակի ուժ է շնորհվում, մենք այնպիսի պարտավորություններ ենք վերցնում, որոնք մեր ոլորտից դուրս են և, այո, մենք նույնիսկ կատարում ենք դրանք։ Հայցվորը գիշերը՝ ինչպես ավազակը անտառում, ստիպում է մեզ զոհողության գնալ, մի բան, ինչի մենք բնավ ընդունակ չենք։ Դե լավ, հիմա ընդունենք, թե քանի դեռ հայցվորն այստեղ է, մեզ ուժ է տալիս, ստիպում է, աշխուժացնում է, և ամեն ինչ խելակորույս ընթացքի մեջ է։ Բայց ի՞նչ կլինի հետո, երբ ամեն ինչ վերջանա, հագեցած ու անհոգ հայցվորը հեռանա մեզնից, իսկ մենք մնանք

www.a-pdf.com

կանգնած, մենակ ու անպաշտպան պաշտոնի մեր շարաշարման հանդեպ. դա արդեն հնարավոր չէ պատկերացնել։ Եվ, չնայած դրան, մենք երջանիկ կլինենք։ Ի՞նչ ինքնասպան բնույթ կարող է ունենալ երջանկությունը։ Մենք, ախր, կարող էինք մեզ ստիպել հայցվորից գաղտնի պահել իրական վիճակը, ախր, նա ինքնուրույն ոչինչ չէր նկատի, իր կարծիքով նա հավանաբար, ուրիշ, ոչ կարևոր, պատահական առիթներով, հոգնած, հիասթափված, անուշադիր, գերհոգնած ու հիասթափությունից անտարբեր լինելուց է, որ ոչ իր ուզած, այլ ուրիշ սենյակ է մտել, անտեղյակ նստած է այնտեղ ու նրա միտքն զբաղեցնում են նրա սխալն ու հոգնածությունը, եթե, իհարկե, զբաղեցնում են։ Իսկ մի՞թե չի կարելի հայցվորին թողնել։ Չի կարելի։ Երջանիկներին բնորոշ շատախոսությամբ պետք է ամեն ինչ բացատրել նրան, առանց սեփական անձը խնայելու պետք է մանրամասն ցույց տալ նրան, թե ինչ է կատարվել ու ինչ պատճառներով է կատարվել, ինչքան հազվադեպ ու եզակի մեծության է այդ առիթը, պետք է ցույց տալ, որ թեև հայցվորը անօգնական վիճակի մեջ է (այնպիսի վիճակ, որ հայցվորից բացի ուրիշ ոչ ոքի հետ չի կարող լինել) նման առիթի հանդիպել, բայց եթե ուզենա, պարոն Հոդաշափ, կարող է ամեն ինչ իր կամքին ծառայեցնել, իսկ դրա համար ուրիշ ոչինչ հարկավոր չէ, քան իր խնդրանքը մի կերպ հայտնել, և իրականացումը՝ ինչի նա է ձգտում, արդեն պատրաստ է։ Այս ամենը ցույց տալ է պետք, դա պաշտոնյայի համար ծանր պահ է։ Իսկ եթե դա էլ արվի, պարոն Հոդաշափ, ամենակարևոր բանը կարվի ու կմնա արդեն եզածով բավարարվել ու սպասել։

Առանձնացած այն ամենից, ինչ կատարվում էր իր շուրջը, Կ-ն քնել էր։ Նրա գլուխը, որ սկզբում մահճակալի գլխակալին դրված ձախ ձեռքին էր հենված, քնած ժամանակ ներքև էր սահել և հիմա ազատ կախ էր ընկել ու ավելի էր խոնարհվում, մահճակալից բռնած ձեռքի հենարանը այլևս **չէր բավականացնում, և Կ-ն իր կամքից անկախ,** մի նոր հենարան գտավ. աջ ձեռքը սեղմեց վերմակին և պատահաբար բռնեց Բյուրգելի՝ վերմակի տակից բարձրացած ոտքը։ Բյուրգելը նայեց նրան ու, թեև տհաճ էր, ձայն չհանեց։

www.a-pdf.com

Նույն պահին մի քանի անգամ ուժեղ հարվածեցին կողքի պատին, Կ-ն ցնցվելով արթնացավ ու նայեց։

— Հողաշափը հո այդտեղ չէ՞,— հարցրին այն կողմից։

— Այո,— պատասխանեց Բյուրգելը, ոտքն ազատեց Կ-ի ձեռքից ու փոքր պատանու նման՝ հանկարծահաս վայրիությամբ ու չարաճճիությամբ ձգվեց վերմակի տակ։

— Այդ դեպքում թող վերջապես գա այստեղ։— Նորից լսվեց այն կողմից։ Զայնը բոլորովին հաշվի չառավ Բյուրգելին կամ այն, որ Կ-ն դեռ կարող է պետք էր նրան։

— Էոլանգերն է,— շշնջաց Բյուրգելը. այն հանգամանքը, որ Էոլանգերը կողքի սենյակում էր, կարծես հանկարծակիի չբերեց նրան։— Անմիջապես գնացեք ու փորձեք մեղմացնել նրան, նա արդեն զայրանում է։ Նա լավ քնած էր, մինչդեռ մենք շատ բարձր էինք զրուցում։ Երբ մարդ որոշ բաների մասին է խոսում, չի կարող տիրապետել ինքնիրեն ու իր ձայնին։ Դե գնացեք։ Դուք կարծես դեռ չեք կարողանում արթնանալ։ Գնացեք։ Ձեզ էլ ի՞նչ է հարկավոր այստեղ։ Ո՛չ, կարիք չկա ներողություն խնդրել Ձեր քնկոտության համար, ինչի՞ համար։ Մարդու օրգանիզմի ուժերը միայն մինչև որոշակի սահմանն են բավականացնում, ո՞վ և ի՞նչ կարող է անել, որ հենց այդ սահմանն էլ երբեմն խիստ կարևոր է։ Ոչ, ոչ ոք և ոչինչ չի կարող անել։ Նույն ձևով աշխարհն է իր ընթացքի մեջ ուղղում իրեն ու պահպանում հավասարակշռությունը։ Սա թեկուզ մի այլ տեսակետից անմխիթար էլ լինի, մի հիասքանչ, միշտ դժվար հասկանալի ու գերազանց կառուցվածք է։ Դե գնացեք ախր, չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք այդպես նայում ինձ։ Եթե ավելի երկար համառեք, Էոլանգերն ինձ վրա կզայրանա, իսկ ես սիրով կուզենայի խուսափել դրանից։ Գնացեք, ո՞վ գիտե, թե ինչ է սպասում Ձեզ այն կողմում, ախր այստեղ շատ են պատահականությունները։ Միայն, իհարկե, առիթներ կան, որ անսովոր մեծ են օգտագործված լինելու համար, բաներ կան, որ ուրիշ ոչ մի պատճառով, այլ իրենք իրենց են անհաջողության մատնվում։ Այո, զարմանալի է։ Ի դեպ, ես հիմա հույս ունեմ, որ կկարողանամ մի փոքր քնել։ Հավանաբար արդեն ժամը հինգն է, շուտով կսկսեն աղմկել։ Եթե գոնե Դուք գնալ ուզենայիք։

www.a-pdf.com

Խոր քնից արթնացած լինելուց շշմած, դեռ անսահման քնի կարոտ, դիրքի անհարմարության պատճառով ամեն տեղ ցավող մարմնով Կ-ն երկար ժամանակ չէր կարողանում ոտքի կանգնել և բռնեց ճակատն ու նայեց ծնկներին։ Նույնիսկ Բյուրգելի տևական հրաժեշտները չէին կարող նրան ստիպել գնալ այստեղից, միայն այս սենյակում մնալու կատարյալ անիմաստության զգացումը դրդեց նրան դուրս գնալ։ Այս սենյակը աննկարագրելի դատարկ թվաց նրան։ Արդյոք սենյակն այդպե՞ս էր դարձել, թե՞ երբվանից սկսած էր եղել այդպիսին, նա չգիտեր։ Այստեղ նրան չէր հաջողվի նույնիսկ նորից քուն մտնել։ Հենց այս համոզմունքը որոշիչ եղավ, և այդ մտքից թույլ ժպտալով, նա բարձրացավ տեղից, հենվեց՝ որտեղ միայն հենարան գտավ. մահճակալին, պատին, դռանը և առանց հրաժեշտի, կարծես վաղուց արդեն հրաժեշտ էր տվել Բյուրգելին, գնաց դուրս։

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Եթե Էռլանգերը բաց դռան մեջ կանգնած չլիներ ու նշան չաներ, Կ-ն, հավանաբար, նույն անտարբերությամբ անցներ նրա դռան մոտով։ Նա ցուցամատով միայն մի անգամ կարճ նշան արեց։ Էռլանգերն արդեն պատրաստ էր մեկնելու, նրա հագին մորթե սև մուշտակ էր՝ պարանոցը կիպ գրկող, մինչև վերջ կոճկված օձիքով։ Ծառաներից մեկն արդեն պարզել էր ձեռնոցները և պատրաստ պահել մորթե գլխարկը։

— Դուք վաղուց պետք է եկած լինեիք։— խոսեց Էռլանգերը, Կ-ն ցանկացավ բացատրել պատճառը, սակայն, աչքերը հոգնած փակելով, Էռլանգերը ցույց տվեց, որ հրաժարվում է դրանից։— Խոսքը հետևյալի մասին է,— շարունակեց նա։— Նախկինում ոմն Ֆրիդա էր ծառայում պանդոկում։ Ես միայն նրա անունը գիտեմ, անձամբ նրան չեմ ճանաչում. ինձ նա չի հետաքրքրում։ Այդ Ֆրիդան երբեմն գարեջուր է մատակարարել Կլամմին։ Հիմա պանդոկում կարծես թե մի ուրիշ աղջիկ է։ Այդ փոփոխությունը, իհարկե, անկարևոր է հավանաբար բոլորի համար, իսկ

www.a-pdf.com

Կլամմի համար՝ առավել ևս։ Ինչքան մեծ է կատարվող աշխատանքը, իսկ Կլամմի աշխատանքն, իհարկե, ամենադժվարն է, այդքան ավելի քիչ ուժ է մնում արտաքին աշխարհից պաշտպանվելու համար, և այդ է պատճառը, որ նույնիսկ անկարևոր բաների ոչ նշանակալից փոփոխությունը կարող է լրջորեն խանգարել։ Գրասեղանի վրայի ամենաչնչին փոփոխությունը, նույնիսկ ո՞վ գիտե երբվանից այնտեղ եղած կեղտաբծի սրբելը, այդ ամենը կարող է խանգարել, ինչպես կարող է խանգարել նոր մատուցողուհին։ Բայց այդ ամենն, իհարկե, եթե անգամ ցանկացած մեկին և ցանկացած ուրիշ աշխատանքի ժամանակ խանգարելու էլ լիներ, Կլամմին չէր խանգարի. այդ մասին խոսք անգամ չի կարող լինել։ Այնուամենայնիվ, մենք պարտավոր ենք այնպես հոգ տանել Կլամմի բարեկեցության համար, որ մենք ինքներս վերացնենք նրա աչքին նույնիսկ կարևորություն չունեցող խախտումները (նրա համար, հավանաբար ոչ մի խախտում չկա ընդհանրապես), եթե դրանք մեզ որպես հնարավոր խախտումներ երևան։ Ո՛չ հանուն նրա, ո՛չ նրա աշխատանքի համար ենք մենք այդ խախտումները վերացնում, այլ հանուն մեր խղճի, մեր հանգստության։ Դա է պատճառը, որ այդ Ֆրիդան պետք է իսկույն պանդոկ վերադառնա։ Եթե նա իր վերադարձով խանգարի, մենք նրան նորից հետ կուղարկենք, առայժմ, սակայն, նա պետք է վերադառնա։ Ինչպես ինձ են ասել, Դուք նրա հետ եք ապրում, ուրեմն իսկույն կարգադրեք, որ նա վերադառնա։ Անձնական զգացմունքների վրա ուշադրություն դարձնել չի կարելի, ինձ թվում է, ինքնին հասկանալի է, և դա է պատճառը, որ ես այս գործի կապակցությամբ հետագա նվազագույն բացատրություն իսկ չեմ տալիս։ Եթե Դուք այս չնչին հարցում արդարացնեք Ձեզ, ապա առիթի դեպքում սա կարող է Ձեր առաջխաղացման համար օգտակար լինել, և ես, այս բանը հիշատակելով, արդեն ավելի շատ բան եմ ասում, քան անհրաժեշտ է։ Սա է իմ ողջ ասելիքը Ձեզ։— Որպես հրաժեշտի նշան, նա գլխով արեց Կ-ին, դրեց ծառայի մեկնած գլխարկը և նրա ուղեկցությամբ, թեթևակի կաղալով, միջանցքով արագ ներքև գնաց։

Այստեղ երբեմն հրամաններ էին տրվում, որ կարելի էր

www.a-pdf.com

առանց դժվարության կատարել, սակայն հենց այդ հեշտությունը չէր ուրախացնում Կ-ին։ Ոչ այն պատճառով, որ հրամանը Ֆրիդային էր վերաբերում, ու թեև որպես հրաման էր ձևակերպված, բայց Կ-ի համար ինչպես իսկական ծաղր էր հնչում, այլ ամենից առաջ այն պատճառով, որ դրանից երևում էր Կ-ի բոլոր ջանքերի անօգուտ լինելը։ Նրա գլխի վրայով հրամաններ էին անցնում-դառնում, ձեռնտու և ոչ ձեռնտու, և նույնիսկ ձեռնտու հրամաններն իրենց խորքում ոչ ձեռնտու հատիկ էին պարունակում, դրանք բոլորը նրա գլխի վրայով էին անցնում, իսկ ինքը շատ ցածր էր կանգնած, որ միջամտեր կամ թեկուզ լռեցներ դրանք ու լսելի դարձներ իր ձայնը։ Ի՞նչ ես ուզում անել, եթե էոլանդերը նշան անելով մերժում է քեզ, և ի՞նչ կարող ես ասել, եթե չմերժի։ Թեև Կ-ն հաստատ համոզված էր, որ այսօր իր հոգնածությունն իրեն ավելի շատ խանգարեց, քան հարաբերությունների ողջ անբարյացակամությունը, բայց ինչպե՞ս եղավ, որ ինքը, որ կարծել էր, թե կարող է իր ուժերին վստահել ու առանց այդ համոզմունքի այս ճանապարհը չէր անցնի, ինչպե՞ս եղավ, որ ինքը չկարողացավ դիմանալ մի քանի վատ ու մի անքուն գիշերվա, ինչո՞ւ հենց այստեղ մահու չափ մեծ հոգնածություն զգաց, այն դեպքում, երբ ոչ ոք հոգնած չէր, կամ, ավելի ճիշտ, ամեն ոք ու միշտ հոգնած էր, բայց այդ հոգնածությունը նրանց աշխատանքին չէր խանգարում և նույնիսկ թվում էր, թե տրամադրում է աշխատելու։ Դրանից կարելի էր եզրակացնել, որ նրանց հոգնածությունն իր բնույթով բոլորովին այլ էր, քան Կ-ինը։ Այստեղի հոգնածությունը, հավանաբար, երջանիկ աշխատանքի պատճառով էր, մի բան, որ արտաքինից հոգնություն էր թվում, բայց իրականում անխախտելի անդորր ու չխաթարվող խաղաղություն էր։ Եթե մարդ ցերեկը մի փոքր հոգնած է, ապա դա օրվա երջանիկ ու բնականոն ընթացքի հետևանքն է։ Այստեղի պարոնների համար տևական կեսօր է, ինքնիրեն ասաց Կ-ն։ Եվ նրա կարծիքը համընկավ այն բանի հետ, որ այժմ, արդեն ժամը հինգին, միջանցքի երկու կողմերում աշխուժություն էր տիրում։ Սենյակներից լսվող ձայների այս աղմուկն իր մեջ անսահման զոհունակություն էր պարունակում։ Դա մեկ հնչում էր որպես էքսկուրսիայի պատրաստ-

www.a-pdf.com

վող երեխաների ցնծություն, մի ուրիշ անգամ թվում էր, թե հավանոցի դուռն են բացել և որպես ծագող նոր օրվա հետ կատարյալ համապատասխանության պատճառած ուրախություն, պարոններից մեկն ինչ-որ տեղ նույնիսկ աքաղաղի նման ծուղրուղու կանչեց։ Ու թեև միջանցքը դեռ դատարկ էր, դոներն արդեն շարժման մեջ էին, այստեղ-այնտեղ մի փոքր բացում ու անմիջապես արագ փակում էին դոները, դոների նման բացվել-փակվելուց միջանցքում աղմուկ էր տիրում, այսուայնտեղ՝ մինչև առաստաղ չհասնող պատերի վերևի բացվածքների մեջ, Կ-ն տեսնում էր քնից նոր ելած մարդկանց խռիվ մազերով գլուխները, որ մի պահ երևում ու անհետանում էին իսկույն։ Հեռվում մի ծառա երևաց, որ դանդաղ քշում էր վրան փաստաթղթերի թղթապանակներ դարսված սայլակը։ Երկրորդ ծառան քայլում էր կողքով, ձեռքին մի ցուցակ ուներ ու ըստ այդ ցուցակի, հավանաբար, համեմատում էր դոների ու թղթապանակների վրա գրված համարները։ Դոներից մեծ մասի մոտ սայլակը կանգ էր առնում, այդ պահերին, սովորաբար, բացվում էին դռները և համապատասխան թղթապանակները, երբեմն նաև միայն մի թերթիկ (այդպիսի դեպքերում կարճատև երկխոսություն էր ծավալվում սենյակի ու միջանցքի միջև, հավանաբար, նախատում էին ծառային) էին պարզում սենյակ։ Եթե դուռը չէին բացում, թղթապանակները հոգատարությամբ դարսում էին դռան շեմին։ Նման դեպքերում Կ-ին թվում էր, թե շրջակայքում դոների շարժումները չէին դադարում, այլ ավելի էին ուժեղանում, թեև այդ հատվածում թղթապանակներն արդեն բաժանված էին։ Գուցե մյուսները ագահ հայացքներով նայում էին դռան շեմին դարսված, չգիտես ինչու չվերցվող թղթապանակներին և չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր պատահել, որ մարդ, եթե միայն դուռը բացեր ու իր թղթապանակները կկլանեին իրեն, այնուամենայնիվ, չէր անում դա։ Նույնիսկ հնարավոր էր, որ դարսված-մնացած թղթապանակները հետո բաժանվեին մյուս պարոններին, որ արդեն հիմա փաստաթղթերի կողմը հաճախակի նայելով ուզում էին համոզվել, թե դրանք առաջվա պես դրվա՞ծ էին շեմին և վերցնելու հույս կա՞ր

www.a-pdf.com

գեռ։ Ի դեպ, շեմերին մնացած թղթապանակները մեծ մասամբ խոշոր կապոցներ էին, և Կ-ն ենթադրեց, թե դրանք պարծենկոտության, որոշակի չարամտության կամ արդարացի, գործընկերներին քաջալերող հպարտության պատճառով էին առայժմ այդտեղ թողնվել։ Այդ ենթադրության օգտին էր խոսում նաև այն, որ երբեմն, հենց այն պահին, երբ ինքը չէր հետևում, երկար ժամանակ ի տես մնալուց հետո կապոցը հանկարծ փութով քաշում էին սենյակ, իսկ դուռը առաջվա պես մնում էր անշարժ, հարևանությամբ գտնվող դռներն էլ էին հանգիստ թողնվում՝ հիասթափված կամ գոհ այն բանից, որ տևական զբաղվածության առարկան անհետացավ վերջապես. որոշ ժամանակ անց դրանք աստիճանաբար շարժման մեջ էին դրվում։

Այս ամենին Կ-ն ոչ միայն հետաքրքրությամբ, այլ նաև որոշակի մասնակցությամբ էր նայում։ Իրարանցման մեջ նա իրեն լավ էր զգում, այսուայնկողմ էր նայում ու թեև հեռու էր կանգնած, հետևում էր ծառաներին, որ գյուխները խոնարհած, շրթունքներն ուռեցրած, խիստ հայացքներով արդեն մի քանի անգամ իր կողմն էին նայել, հետևում էր, թե ինչպես են նրանք թղթապանակները բաժանում։ Այդ աշխատանքը գնալով ավելի անհարթ էր ընթանում, կամ գրառումն ամբողջապես չէր համապատասխանում, կամ ծառաներն այլևս լավ չէին տարբերակում փաստաթղթերը, կամ էլ պարոններն էին որոշակի պատճառներով առարկություններ հանդես բերում, այնպես էր ստացվում, որ բաժանված թղթապանակներից մի քանիսը պետք է վերադարձվեին. այդ դեպքում սայլակը հետ էին քաշում և դռան ճեղքի միջով բանակցում էին վերադարձնելու մասին։ Արդեն բանակցությունները մեծ դժվարություններ էին առաջացնում, բավական հաճախ, հենց վերադարձնելու մասին խոսք էր բացվում, այն դռները, որ ամենաաշխույժ կերպով էին բացվում-փակվում, հիմա կարծես չուզենալով որևէ բան իմանալ այդ մասին, անողոքաբար փակ էին մնում։ Հետո սկսվում էին իսկական դժվարությունները։ Այն պաշտոնյան, որ ենթադրում էր, թե փաստաթղթերի առթիվ որևէ պահանջ ունի, ծայրահեղ անհանգստություն էր դրսևորում, իր սենյակում անասելի աղմուկ էր բարձրացնում, իրար էր խփում ձեռքե-

www.a-pdf.com

ը, դոփում էր ոտքերով և դռան ճեղքից շարունակ որոշակի համար էր բղավում միջանցք։ Այդպիսի դեպքերում ծառաները հաճախ թողնում էին սայլակը։ Նրանցից մեկը փորձում էր հանգստացնել անհամբեր պաշտոնյային, մյուսը փակ դռան մոտ պայքարում էր անհրաժեշտ թղթապանակը հետ ստանալու համար։ Երկուսի վիճակն էլ ծանր էր։ Անհամբեր պաշտոնյան, հանգստացնելու փորձերից գրգռվելով, էլ ավելի անհանգիստ էր դառնում, այլևս ի վիճակի չէր լինում լսել ծառայի դատարկ խոսքերը, նա մխիթարանք չէր ուզում, նրան փաստաթղթեր էին հարկավոր. այդպիսի պարոններից մեկը վերևից ծառայի գլխին դատարկեց ջրով լի կոնքը։ Մյուս ծառան, որ իր կոչումով երևի ավելի բարձր էր, շատ ծանր վիճակի մեջ էր։ Եթե պաշտոնյան բանակցությունների մեջ էր մտնում, սկսվում էին քննարկումները, որոնց ժամանակ ծառան իր ցուցակն էր վկայակոչում, պաշտոնյան՝ իր գրառումներն ու փաստաթղթերը, որ պետք է վերադարձներ, սակայն առայժմ այնպես էր պահում իր ձեռքերում, որ ծառայի ագահ աչքերը հազիվ էին տեսնում դրանց նույնիսկ փոքր անկյունը, Դրանից բացի, նոր ապացույցներ հանդես բերելու համար ծառային պետք էր վազել սայլակի կողմը, որ միջանցքի թեք հատակի վրա մի փոքր առաջ էր գլորվել ինքնուրույն, կամ պետք է մոտենար փաստաթղթերը պահանջող պաշտոնյային և այնտեղ, փաստաթղթերի մինչայժմյան տիրոջ առարկությունները ներկայացնելով, լսեր նրա հակաճառությունները։ Նման բանակցությունները շատ երկար էին տևում։ Երբեմն համաձայնության էին գալիս, և պաշտոնյան փաստաթղթերի մի մասն էր դուրս տալիս ու որպես փոխհատուցում ուրիշ թղթեր ստանում, քանի որ միայն մի թյուրիմացություն էր տեղի ունեցել, բայց պատահում էր նաև, որ պաշտոնյաներից մեկնումեկը, առանց այլևայլության, երևի ծառայի բերած փաստարկներից նեղը լծվելով կամ երկար տևող խոսակցությունից հոգնելով՝ թղթապանակը վերադարձնում էր, բայց այն ոչ թե ծառային էր տալիս, այլ հանկարծահաս մի վճռականությամբ այնպես էր միջանցք շպրտում, որ դրանք իրար կարող թելերը կտրվում էին, թերթերը ճախրում էին միջանցքում, և նորից կարգի բերելու համար ծառաները պետք է երկար շարշարվեին։ Սակայն դա,

www.a-pdf.com

համեմատաբար, ավելի հեշտ էր, քան երբ ծառան թղթապանակները հետ ստանալու իր խնդրանքներին ընդհանրապես ոչ մի պատասխան չէր ստանում. այդ դեպքում նա կանգնում էր փակ դռան առաջ, խնդրում-աղաչում էր, մեջբերում կատարում իր ցուցակից, իր ստացած հրահանգներն էր վկայակոչում, բայց ամեն ինչ իզուր. սենյակից ոչ մի ձայն չէր լսվում, իսկ ծառան պարզապես իրավունք չուներ առանց թույլտվության սենյակ մտնել։ Երբեմն այս ջանասեր ծառան էլ էր կորցնում ինքնատիրապետումը, նա վերադառնում էր սենյակի մոտ, նստում էր թղթապանակների վրա, ճակատից սրբում էր քրտինքը և, ոտքերն անօգնական տարուբերելուց բացի, որոշ ժամանակ ոչինչ չէր անում։ Թղթապանակների փոխանակումը շրջապատում մեծ հետաքրքրություն էր առաջացրել, շուրջբոլորը քչփչոց էր լսվում, ոչ մի դուռ հանգիստ չէր, իսկ վերևից՝ ցածր եզրապատի վրայից, համարյա ամբողջովին սրբիչներով պարուրված դեմքերը հետևում էին կատարվող դեպքերին ու ոչ մի պահ իրենց տեղը հանգիստ չէին մնում։ Այդ իրարանցման մեջ Կ-ն նկատեց, որ Բյուրգելի դուռն ամբողջ ընթացքում փակ էր, ծառաները միջանցքի այդ հատվածն արդեն անցել էին, բայց Բյուրգելին ոչ մի փաստաթուղթ չէին տվել։ Գուցե նա դեռ քնած էր, եթե այո, ուրեմն այս աղմուկի մեջ նա շատ առողջ քնով էր քնած, բայց ինչո՞ւ նրան ոչ մի թղթապանակ չէին տվել։ Միայն հազվադեպ սենյակներ, որ, հավանաբար, բնակեցված չէին, ոչի՛նչ չստացան։ Էռլանգերի սենյակում արդեն նոր ու բավական անհանգիստ հյուր էր լսվում։ Ստացվում էր, որ նոր հյուրը Էռլանգերին ստիպել էր գիշերով ազատել սենյակը, ու թեև դա այնքան էլ չէր համապատասխանում Էռլանգերի սառն ու հեռատես խառնվածքին, բայց այն հանգամանքը, որ նա դռան մեջ կանգնած էր սպասել Կ-ին, կարծես հաստատում էր այդ տպավորությունը։

Շուրջբոլորը զննելուց հետո Կ-ի հայացքը միշտ ծառայի կողմն էր վերադառնում։ Այն, ինչ Կ-ն էր մինչև հիմա ընդհանուր առմամբ իմացել ծառաների մասին, նրանց անգործության, հարմարավետ կյանքի ու զոհոզության, այս ծառայի հետ իսկապես ոչ մի ընդհանուր բան չուներ։ Հավանաբար

www.a-pdf.com

նրանց մեջ էլ բացառություններ կային, կամ, որ ամենահավանականն էր, տարբեր խմբեր կային նրանց միջև, որովհետև, ինչպես Կ-ն նկատեց, այստեղ կային շատ սահմանափակումներ, որ ինքը մինչև հիմա դեռ չէր նկատել։ Նրան հատկապես դուր եկավ այս ծառայի համառությունը։ Փոքր ու համառ սենյակների հետ տարված պայքարում (Կ-ին թվում էր, թե պայքարն ավելի շուտ սենյակի հետ է տարվում, որովհետև ինքը հազիվ թե տեսնում էր կենվորներին) ծառան չէր զիջում։ Թեև նա հոգնում էր (նրա փոխարեն ո՞վ չէր հոգնի), սակայն շուտով հանգստանում էր, ներքև էր սահում սայլակից և, ատամները սեղմած, ուղիղ գնում դեպի նպատակադրված դուռը։ Լինում էր, որ նրան երկու-երեք անգամ, և պետք է ասել, որ շատ հեշտ ձևով էին հետ մղում՝ միայն անիծյալ լռության միջոցով, բայց միևնույն է, նա անձնատուր չէր լինում։ Երբ տեսնում էր, որ բացահայտ հարձակումներով ոչնչի չէր կարող հասնել, ուրիշ կերպ էր փորձում, և, ինչքան Կ-ն հասկացավ՝ խորամանկությամբ։ Նա ձևացնում էր, թե ձեռք է քաշում այդ սենյակից, թողնում էր, որ այն սպառեր իր լռակյացությունը, շուռ էր գալիս մյուս դռների կողմը, որոշ ժամանակ անց վերադառնում էր (այդ ամենը անում էր բարձրաձայն) և սկսում էր փակ դռան շեմին դարսել թղթապանակները, կարծես փոխել էր իր որոշումը, այդ պարոնից իրականում ոչինչ չպետք է վերցներ, այլ, ավելի ճիշտ, մի բան էլ պետք է նորերը տար նրան։ Հետո նա հեռանում էր, սակայն դուռը միշտ աչքի տակ էր պահում, և երբ պաշտոնյան, ինչպես սովորաբար էր լինում, դուռը զգուշորեն բացում էր, որ փաստաթղթերի կապոցները ներս քաշեր, ծառան մի քանի ցատկով հայտնվում էր, ոտքը խցկում դռան ու շրջանակի արանքը և պաշտոնյային այդպես ստիպում գոնե երես առ երես բանակցել իր հետ, ինչը որ սովորաբար կիսով չափ գոհացնող արդյունքի էր հանգեցնում։ Իսկ եթե դա չէր հաջողվում, կամ եթե թվում էր, թե այդ դռան մոտ այլ կերպ է հարկավոր վարվել, նա այլ կերպ էր փորձում։ Նա մյուս, մեքենայորեն աշխատող ծառային, որ, իրոք, արժեք չներկայացնող օգնական էր, մի կողմ էր հրում և ինքն էր սկսում պաշտոնյային համոզել, գլուխը խցկում էր սենյակ և կամացուկ, փսփսալով համոզում նրան, հավա-

www.a-pdf.com

նաբար խոստումներ էր տալիս, հավաստիացնում էր, որ մյուս անգամ փաստաթղթերը բաժանելիս մյուս պաշտոնյային համապատասխան ձևով կպատժի, ինչպես և բազմիցս ցույց էր տալիս հակառակորդի դուռն ու, ինչքան որ նրա հոգնածությունն էր թույլ տալիս, ծիծաղում էր։ Սակայն մի, թե երկու դեպք էլ եղավ, երբ նա դադարեցրեց բոլոր փորձերը, սակայն այս անգամ էլ Կ-ն մտածեց, թե դա թվացյալ դադար է կամ գոնե արդարացված պատճառներով է պայմանավորված, որովհետև ծառան հանգիստ շարունակում էր իր ճանապարհը, չէր շրջվում, դիմանում էր տուժած շահերով պաշտոնյայի բարձրացրած աղմուկին ու, ինչպես նա էր պարբերաբար ու երկար տևողությամբ փակում աչքերը, ցույց էր տալիս, թե նրան ինչքան էր տանջում աղմուկը։ Պաշտոնյան ևս աստիճանաբար հանդստանում էր և ինչպես երեխայի լացն էր դանդաղ վերածվում եղակի հեծկլտոցների, այդպիսին էին նաև նրա բղավոցները։ Եվ հետո, երբ ամեն ինչ արդեն խաղաղվում էր, երբեմն մի ճիչ էր լսվում կամ դուռն էր արագ բացվում ու փակվում։ Այնուամենայնիվ պարզվում էր, որ այս հարցում էլ ծառան կատարելապես ճիշտ էր վարվել։ Ի վերջո միայն մի պաշտոնյա մնաց, որ չէր ուզում հանդարտվել։ Նա երկար լռում էր, որ մի փոքր հանգստանար, հետո առաջվանից ոչ պակաս ուժով նորից էր սկսում։ Այնքան էլ պարզ չէր, թե նա ինչու էր այդպես բղավում ու բողոքում. պատճառը երևի բոլորովին էլ փաստաթղթերի բաժանումը չէր։

Այդ ընթացքում ծառան վերջացրել էր իր աշխատանքը ու միայն մի փաստաթուղթ, ճիշտն ասած, թղթի մի կտոր, նոթատետրի մի պատառիկ էր օգնականի մեղքով մնացել սայլակի վրա, ու նա չգիտեր հիմա, թե ո՞ւմ տային դա։

— Դա կարող է ինձ առնչվող թուղթը լինել։— Անցավ Կ-ի մտքով։ Համայնքի նախագահն, ախր, միշտ այս ամենաչնչին գործի մասին էր խոսում։ Եվ Կ-ն, ինչքան էլ ծիծաղելի ու մտացածին համարեց իր ենթադրությունը, փորձեց մոտենալ ծառային, որ մտախոհ զննում էր ձեռքի թուղթը։ Դա այնքան էլ հեշտ բան չէր, որովհետև ծառան վատ հատուցեց Կ-ի տրամադրվածությանը. նույնիսկ ամենադժվարին գործի պահին նա ժամանակ էր գտել, որ շարությամբ ու

www.a-pdf.com

անհամբերությամբ, գլուխը զայրացած ցնցելով նայեր Կ-ի կողմը։ Միայն հիմա, երբ գործերը բաժանվել էին, թվաց, թե նա մոռացել է Կ-ին, ու ինչքան էլ մեծ լիներ նրա անտարբերությունը, հոգնածությունը հաշվի առնելով կարելի էր հասկանալ նրան։ Ձեռքի թղթի կտորն էլ հոգս չպատճառեց նրան, նա երևի չկարդաց այն, միայն ձևացրեց, թե կարդում է ու թեև այս միջանցքի պարոններից յուրաքանչյուրին երևի թե ուրախություն պատճառեր, եթե այդ թուղթը տար, տվյալ դեպքում նա այլ վճիռ ընդունեց. արդեն կուշտ էր փաստաթղթեր բաժանելուց, ցուցամատը շրթունքին դնելով, իր ուղեկցին լռելու նշան արեց, թղթի կտորը մանր-մանր պատառոտեց ու խցկեց գրպանը։ Կ-ն դեռ հեռու էր նրանից։ Գրասենյակների գործավարության մեջ սա գուցե Կ-ի նկատած առաջին անօրինականությունն էր, և, իհարկե, հնարավոր էր, որ նա կատարվածը սխալ հասկացավ։ Եթե միակ անօրինականությունը սա էր, կարելի էր ներել, որովհետև այստեղ տիրող պայմանները թույլ չէին տալիս, որ ծառան անսխալ աշխատեր, կուտակված ողջ զայրույթը, ողջ անհանգստությունը պետք է դուրս հորդեր ու եթե այն դրսևորվեց միայն թղթի կոքր կտորը պատառ-պատառ անելու մեջ, ապա դա բավական անմեղ արարք էր։ Ոչ մի բանով չհանգստացող պաշտոնյայի ձայնը դեռ զնգում էր միջանցքում, իսկ մյուս գործընկերները, որ ուրիշ հարցում իրար հանդեպ բարեկամաբար էին տրամադրված, կարծես համակարծիք էին աղմուկի վերաբերյալ, այնպես էր թվում, թե այդ պաշտոնյան ստանձնել էր բոլորի փոխարեն աղմկելու առաջարկը, իսկ մյուս գործընկերները գլուխները շարժելով ու ձայն տալով քաջալերում էին շարունակել աղմկելը։ Սակայն ծառան այլևս չէր հետաքրքրվում, թե ինչ է կատարվում. արդեն վերջացրել էր իր գործը, ցույց տվեց սայլակի բռնակը, մյուս ծառային հասկացրեց, որ ձեռքն առնի, ու նրանք, ինչպես որ եկել էին, այդպես էլ հեռացան, միայն թե հիմա ավելի գոհ էին ու այնպես արագ էին գնում, որ սայլակը վեր-վեր էր թռչում։ Նրանք միայն մի անգամ ցնցվեցին ու հետ նայեցին, երբ շարունակ բղավող պաշտոնյան, ում դռան մոտ էր պտտվում հիմա Կ-ն և հաճույքով ուզում էր պարզել, թե ինչ էր ցանկանում սա, համոզվելով, որ բղավելով ոչ մի

www.a-pdf.com

արդյունքի չի հասնի, հիմա երևի էլեկտրական զանգի կոճակն էր գտել և իր գտածով հիացած, որ այս ձևով կարող է իր մեջ կուտակվածը պարպել, բղավելու փոխարեն հիմա սկսեց շարունակ զանգել։ Նույն պահից սկսած մյուս սենյակներից ընդհանուր մրթմրթոց լսվեց, ու թվաց, թե դա բոլորի գոհունակության արտահայտումն էր, կարծես այն պարոնը մի բան էր արել, ինչ մյուսները վաղուց կանեին ու միայն անհայտ պատճառներով չէին արել։ Գուցե զանգը սպասարկողների՞ն էր հասցեագրված, պաշտոնյան երևի ուզում էր իր զանգով Ֆրիդայի՞ն կանչել։ Ուրեմն, թող երկար զանգեր։ Հիմա Ֆրիդայի գործն այն էր, որ Երեմիասին էր փաթաթում խոնավ գլխաշորի մեջ, իսկ եթե Երեմիասն արդեն առողջ էր, Ֆրիդան նորից ժամանակ չէր ունենա, որովհետև հիմա պառկած կլիներ նրա գրկում։ Սակայն պաշտոնյայի զանգելն անմիջապես ազդեցություն թողեց։ Հեռվից այս կողմն էր շտապում անձամբ հյուրանոցի տերը, ևս հագնված, բոլոր կոճակներն ինչպես միշտ կոճկված։ Սակայն թվում էր, թե նա մոռացել էր իր արժանապատվությունը. ձեռքերը կիսով չափ առաջ պարզած այնպես էր վազում, կարծես որևէ դրժբախտության պատճառով էին իրեն այստեղ կանչել, իսկ ինքը շտապում էր, որ բռներ ու իր կրծքին սեղմելով խեղդեր այդ պատճառը, և զանգի յուրաքանչյուր թուլացման-ուժեղացման հետ մեկտեղ նա կարծես վեր էր ցատկում ու ավելի էր շտապում։ Հյուրանոցի տիրոջից բավական մեծ հեռավորության վրա երևաց նրա կինը. նա էլ էր ձեռքերն առաջ պարզած վազում, սակայն նրա քայլերը փոքր էին ու քնքուշ, և Կ-ն մտածեց, թե հյուրանոցի տիրուհին շատ ուշ կհասնի, ու մինչ նրա գալը հյուրանոցի տերը անհրաժեշտ ամեն ինչ կանի։ Եվ որպեսզի հյուրանոցի տիրոջը չխանգարեր վազքի ժամանակ, Կ-ն կիպ կպավ պատին։ Բայց հյուրանոցի տերը հենց Կ-ի մոտ կանգնեց-մնաց, կարծես իր վազքի նպատակը նա էր. կինն էլ վազելով մոտեցավ, և նրանք երկուսով Կ-ի գլխին նախատինքներ տեղացին, իսկ Կ-ն՝ հանկարծակիի գալով, դրանցից ոչինչ չէր հասկանում. պաշտոնյայի զանգի ձայնը խառնվում էր նախատինքների տարափին, առաջին զանգին մի բան էլ սկսեցին մյուս զանգերն ընկերակցել, բայց արդեն ոչ անհրաժեշտությունից դրդված, այլ խաղա-

www.a-pdf.com

լով, ի նշան անսահման ուրախության։ Որովհետև Կ-ի համար շատ կարևոր էր իր մեղքը հասկանալը, նա բոլորովին չհակառակվեց, երբ հյուրանոցի տերը նրա թևատակից բռնեց ու այս աղմկոտ միջանցքից դուրս տարավ։ Իսկ աղմուկը նրանց թիկունքում ավելի էր սաստկանում (Կ-ն ոչ մի անգամ շուռ չեկավ, որովհետև հյուրանոցի տերը, մյուս կողքից էլ տիրուհին՝ ավելի մեծ եռանդով, խոսքերի հեղեղ էին թափում նրա վրա), բացվեցին բոլոր դռները, միջանցքն աշխուժացավ, կարծես երթևեկություն ծավալվեց այնտեղ՝ ինչպես լինում է նեղ ու աշխույժ փողոցում, իսկ նրանց դիմացը գտնվող դռները սպասում էին, որ Կ-ն վերջապես անցներ և իրենք էլ բաց թողնեին պաշտոնյաներին. այս ամենին զուգահեռ, կարծես հաղթանակ տոնելով, շարունակ ավելի մեղմ հնչում էին զանգերը։

Նրանք արդեն խաղաղ, սպիտակ բակում էին, ուր մի քանի սահնակներ էին սպասում, և Կ-ն այնտեղ իմացավ, թե բանն ինչ էր։ Ո՛չ հյուրանոցի տերը, ո՛չ էլ տիրուհին չէին կարողանում հավատալ, որ Կ-ն կհամարձակվեր նման բան անել։

— Բայց ի՞նչ եմ արել ես։— Ինքնիրեն հարց էր տալիս Կ-ն ու երկար ժամանակ չէր կարողանում բարձրաձայն հարցնել, որովհետև նրա ուղեկիցների համար իր մեղքը չափից դուրս պարզ էր, և այդ էր պատճառը, որ երկուսն էլ չէին կարող հավատալ, թե նա լավ մտադրություն է ունեցել։ Կ-ն կամաց-կամաց հասկացավ ամեն ինչ։ Ինքն անիրավացի կերպով էր հայտնվել միջանցքում, ընդհանրապես նրան՝ դա էլ որպես ողորմածություն ու հակառակ բոլոր արգելքների, միայն պանդոկ մտնելն էր թույլատրված։ Եթե ինքը պաշտոնյաներից մեկից էր ծանուցագիր ստացել, բնական է, պետք է ծանուցագրում նշված տեղում լիներ, սակայն պետք է նաև հաստատ գիտենար (նա գոնե մարդկանց բնորոշ տրամաբանություն ուներ), որ ինքը այնպիսի տեղում էր գտնվում, որ նրան միայն մի պարոն էր կանչել, պարզապես ստիպված, որովհետև պաշտոնական գործն էր դա պահանջել ու ներելի էր դարձնում նրա ներկայությունը։ Ծանուցագիրն ստանալուց հետո նա պարտավոր էր արագ հայտնվել, հարցաքննության ենթարկվել ու հետո հնարավորին չափ

www.a-pdf.com

արագ անհետանալ։ Մի՞թե ինքը ազդված չէր միջանցքում ավելորդ լինելու զգացումից։ Իսկ եթե ազդված էր, ինչպե՞ս կարող էր մարգագետնում թափառող կենդանու նման քարշ գալ միջանցքում։ Մի՞թե նրան գիշերային հարցաքննության համար չէին կանչել, և արդյոք ինքը չգիտե՞ր, թե ինչի համար էին գիշերային հարցաքննությունները մտցված։ Գիշերային հարցաքննությունները (Կ-ն այս պահին դրանց նշանակության վերաբերյալ նոր բացատրություն ստացավ) միայն մի նպատակ էին հետապնդում. պաշտոնյաներին հնարավորություն տալ գիշերվա ժամերին, արհեստական լույսի տակ արագ հարցաքննել այն հայցվորներին, ում տեսքը անտանելի էր, իսկ պաշտոնյաները հարցաքննությունից հետո քնելու ընթացքում կմոռանային նրանց։ Կ-ի վարքը, սակայն, ծաղրուծանակի էր ենթարկել նախազգուշական բոլոր միջոցառումները։ Նույնիսկ ուրվականներն են առավոտյան դեմ տարրալուծվում, մինչդեռ Կ-ն մնացել էր այնտեղ, ձեռքերը գրպանները դրած, այնպիսի կեցվածքով էր կանգնել, կարծես սպասում էր, թե քանի որ ինքը չի գնում այստեղից, ողջ միջանցքը՝ բոլոր լենյակներով ու պաշտոնյաներով հանդերձ, սպասում են իր հեռանալուն։ Կ-ն թող վստահ լիներ, որ եթե հնարավոր լիներ, հենց այդպես կլիներ, որովհետև պարոնների նրբազգացությունն անսահման էր։ Ոչ մեկը Կ-ին չէր քշի այդտեղից, ոչ էլ, ինքնին հասկանալի է, կասեր, թե նա պետք է հեռանար։ Թեկուզ նրանք Կ-ի ներկայությամբ դողային ու իրենց ամենասիրած ժամանակը՝ առավոտը թունավորվեր, ոչ ոք նման բան չէր անի։ Կ-ի դեմ հանդես գալու փոխարեն նրանք գերադասում են տառապել, թեև միաժամանակ հույս են փայփայում, որ Կ-ն էլ աստիճանաբար կհասկանա, թե այստեղ ինչն է աչք ծակում, և ինչպես պարոններն են տառապում, նույն չափով ինքն էլ կտառապի, եթե առավոտյան, բոլորի աչքի առաջ կանգնի միջանցքում, որ իր տեղը չէ բոլորովին։ Իզուր հույս։ Նրանք կամ չգիտեն, կամ էլ բարեկամաբար տրամադրված լինելով, հանդուրժողականության պատճառով չեն պատկերացնում, որ կան նաև անզգա, կոպիտ, ոչ մի պատկառանքով չփափկացող սրտեր։ Գիշերային ուտիճն էլ նույն ձևով չի՞ օրվա բացվելուն պես մի խաղաղ

www.a-pdf.com

անկյուն փնտրում, տափակում է, անհետանալ է ուզում ու դժբախտ է, որ չի կարող։ Փոխարենը Կ-ն կանգնում է այնտեղ, ուր բոլոր կողմերից տեսնում են նրան, ու եթե կարողանար օրվա բացվելուն էլ խանգարել, այդպես էլ կվարվեր։ Նա չի կարող խոչընդոտել դրան, բայց դժվարացնել, մի փոքր երկարաձգել կարող է, ցավոք։ Մի՞թե նա չէր հետևում փաստաթղթերի բաժանման աշխատանքին։ Մի բան, որ ամենամոտ մասնակիցներից բացի ուրիշ ոչ ոք տեսնելու իրավունք չուներ, մի բան, որ ո՛չ հյուրանոցի տերը, ո՛չ էլ տիրուհին իրավունք չունեին տեսնել իրենց սեփական հյուրանոցի մեջ, ինչի մասին նրանք միայն ակնարկների ձևով պատմություններ էին լսել, ինչպես, օրինակ, այսօր լսել էին ծառաներից։ Մի՞թե նա չէր նկատում, թե ինչ դժվար պայմաններում էր ընթանում փաստաթղթերի բաժանումը, իսկ այդ դժվարություններն անհասկանալի էին, որովհետև պարոններից յուրաքանչյուրը ընդհանուր գործին էր ծառայում, երբեք չէր մտածում առանձին շահերի մասին և, հետևաբար, բոլոր ուժերը պետք է ներդներ, որ փաստաթղթերի բաժանումը, այդ կարևոր, հիմնական աշխատանքը, արագ, հեշտ ու անսխալ ընթանար։ Եվ արդյոք Կ-ի մոտ այն աղոտ տպավորությունը չառաջացա՞վ, թե այս բոլոր դժվարությունների պատճառն այն էր, որ բաժանումը տեղի էր ունենալու համարյա փակ դռների պայմաններում, առանց պարոնների միջև անմիջական շփման հնարավորության. նրանք, իհարկե, մի բոպեում կհասկանային իրար, մինչդեռ ծառաների միջնորդության պատճառով գործը ժամեր էր տևում, առանց բողոքների չէր ընթանում, տևական տանջանք էր պարոնների ու ծառաների համար ու հետագա աշխատանքի ընթացքում էլ, հավանաբար, վնասակար հետևանքներ կունենար։ Իսկ ինչո՞ւ պարոնները չէին կարողանում շփվել իրար հետ։ Մի՞թե Կ-ն դեռ չէր հասկանում։ Հյուրանոցի տիրուհու հետ նման բան դեռ չէր պատահել, հյուրանոցի տերն էլ հաստատեց, որ իր հետ նման բան չէր եղել, մինչդեռ իրենք շատ կամակոր մարդկանց հետ էին գործ ունեցել արդեն։ Այն բաները, որոնց մասին մարդ չի էլ համարձակվում բացահայտ խոսել, հարկավոր է բացահայտ ասել

www.a-pdf.com

նրան, որովհետև նա ամենահասարակ բաները չի հասկանում։ Դե, եթե հարկավոր է բացահայտ ասել, ուրեմն պարոնները նրա պատճառով, միայն նրա պատճառով չէին կարողացել իրենց սենյակներից դուրս գալ, որովհետև արթնանալուց անմիջապես հետո՝ առավոտները նրանք չափից դուրս ամաչկոտ, հեշտ վիրավորվող են, որ կարողանան ուրիշների հայացքների տակ կանգնել, նրանք, թեկուզ լրիվ հագնված էլ լինեն, իրենց իսկական մերկացած են զգում, երբ մյուսների աչքին են երևում։ Իրոք, դժվար է ասել, թե ինչն է նրանց ամաչելու պատճառը, գուցե նրանք, այդ հավերժական աշխատողները ամաչում են միայն այն պատճառով, որ քնել են։ Բայց գուցե իրենց ցույց տալուց ավելի նրանք ամաչում են օտար մարդկանց տեսնել, այն, ինչ նրանք են գիշերային հարցաքննությունների շնորհիվ բարեհաջող կերպով հաղթահարում՝ նրանց համար այդքան անտանելի հայցվորների տեսքը, չեն ուզում հիմա թույլ տալ, որ առավոտյան, հանկարծ իր ողջ բնականությամբ իրենց վրա պրծնի։ Նրանք դեռ այդ աստիճանի չեն հասել։ Այդ ի՞նչ մարդ պետք է լինի, որ հարգանքով չվերաբերվի սրան։ Այսինքն, կարող է Կ-ի նման մեկը գտնվել։ Մի մարդ, որ բութ անտարբերությամբ ու քնկոտությամբ բանի տեղ չի դնում ոչ մի բան, ո՛չ օրենքը, ո՛չ էլ մարդկային ամենասովորական նրբանկատությունը, ում համար բնավ կարևոր չէ, որ ինքը համարյա անհնար է դարձնում փաստաթղթերի բաժանումը ու վնաս է պատճառում այս տան համբավին, ով նախադեպը չունեցող այնպիսի բան է անում, որ հուսահատության հասցված պարոնները իրենք են սկսում պաշտպանվել, սովորական մարդկանց համար անհնար ինքնահաղթահարումից հետո ձեռքերը զանգին են պարզում ու օգնություն կանչում, որպեսզի ուրիշ ոչ մի կերպ չսասանվող Կ-ին քշեն այնտեղից։ Նրանք, պարոնները, օգնություն են կանչում։ Մի՞թե իրենք՝ հյուրանոցի տերը, տիրուհին, ողջ անձնակազմը ավելի շուտ չէին գա, եթե համարձակվեին առանց կանչված լինելու, առավոտյան, թեկուզ միայն օգնության հասնելու և իսկույն անհետանալու ցանկությամբ հայտնվել պարոնների աչքի առաջ։ Կ-ի վրա զայրույթից դողալով, իրենց անզորությունից անմխիթար, նրանք

սպասել էին այստեղ՝ միջանցքի սկզբում ու նրանց համար փրկություն էր եղել զանգը, ինչին նրանք երբեք չէին սպասել. համենայնդեպս, ամենասարսափելին անցել էր։ Եթե՞ կարողանային հիմա, վերջապես Կ-ի ներկայությունից ազատված պարոնների գոհ եռուզեռի մեջ մի հայացք նետել։ Կ-ի համար, իհարկե, այս պատմությունը դեռ չի ավարտվել, և նա, այն բանի համար, ինչ այստեղ արեց, իհարկե, դեռ պատասխան կտա։

Ընթացքում նրանք արդեն պանդոկ էին հասել. այնքան էլ պարզ չէր, թե ինչո՞ւ էր Հյուրանոցի տերը հակառակ իր ողջ զայրույթին այստեղ բերել Կ-ին։ Գուցե նա հասկացել էր, որ Կ-ի հոգնածությունն առայժմ չէր թողնում, որ նա հեռանար Հյուրանոցից։ Առանց նստելու վերաբերյալ առաջարկին սպասելու, Կ-ն բառացիորեն փուլ եկավ տակառներից մեկի վրա։ Այդտեղ, մթության մեջ նա լավ էր զգում իրեն։ Մեծ սրահում հիմա միայն մի էլեկտրական լամպ էր թույլ վառվում գարեջրի ծորակների վերևում։ Դեռ մութ էր, երևի բուք էր դրսում։ Եթե մարդ ներսում էր, տաք տեղում, պետք է շնորհակալ լիներ ու հոգ տաներ, որ իրեն չքշեին այստեղից։ Հյուրանոցի տերն ու տիրուհին դեռ կանգնած էին նրա դիմաց, կարծես նա որոշակի վտանգ էր ներկայացնում իրենից, նրա կատարյալ անբարեհուսությունը չէր բացառում, որ նա հանկարծ մեկից ոտքի կանգներ ու փորձեր նորից միջանցք խցկվել։ Նրանք էլ էին գիշերվա սարսափներից ու առավոտ շուտ վեր կենալուց հոգնած, հատկապես տիրուհին, ում հագին մետաքսի նման խշխշան, լայնափեշ, գորշ, անկանոն կոճկված ու կապոտված զգեստ էր (շտապելուց նա այդ որտեղի՞ց էր գտել դա), գլուխն այնպես էր հենել ամուսնու ուսին, կարծես վիզը կոտրված էր, նուրբ թաշկինակով թեթևակի սրբում էր աչքերն ու երեխայավարի զայրացած հայացքներ գցում Կ-ի վրա։ Ամուսիններին հանգստացնելու համար Կ-ն ասաց, որ այդ ամենը, ինչ նրանք հիմա պատմեցին, միանգամայն նոր բաներ էին, որ ինքը՝ չնայած իր անտեղյակությանը, միջանցքում երկար կանգնած չէր մնա, այնտեղ ինքն իրոք ոչ մի անելիք չէր ունեցել ու իսկապես չէր էլ ուզել որևէ մեկին տանջել, այդ ամենը

www.a-pdf.com

միայն չափազանց մեծ հոգնածության պատճառով էր եղել։ Ինքը երախտապարտ է նրանց, որ վերջ են տվել այդ տհաճ տեսարանին, եթե իրեն պատասխանատվության ենթարկելու լինեն, իր համար շատ հաճելի կլինի, որովհետև ինքը կկարողանա այդ կերպ խանգարել իր վարվելակերպի համընդհանուր վատ մեկնաբանությունը։ Միայն հոգնածությունն էր մեղավոր, ուրիշ ոչ մի բան։ Իսկ հոգնածության պատճառն այն էր, որ ինքը դեռ չէր վարժվել հարցաքննությունների լարվածությանը։ Ախր, ինքը նոր մարդ է այստեղ։ Եթե որոշակի փորձ կուտակի, նման բան այլևս չի կրկնվի։ Գուցե ինքը չափից դուրս լուրջ է վերաբերվում հարցաքննություններին, բայց դա թերություն չէ ախր։ Նրան մեկը մյուսի ետևից երկու հարցաքննություն էր բաժին ընկել. մեկը Բյուրգելի մոտ, մյուսը՝ էդլանգերի։ Հատկապես առաջին հարցաքննությունը նրան շատ հոգնեցրեց, երկրորդը այնքան էլ երկար չտևեց։ Էդլանգերը նրանից խնդրեց միայն, որ ինքը սիրալիր լինի մի բան անել, բայց երկուսն իրար հետ ավելին էին, քան ինքը կկարողանար դիմանալ, նման մի հարցաքննությունը երևի ուրիշ մեկին էլ շատ լիներ, ասենք՝ հյուրանոցի տիրոջը։ Ճիշտն ասած, նա երկրորդ հարցաքննությունից հետո էր ճոճվելով հեռացել։ Դա ինքնատիպ խմածություն էր համարյա. ինքն, ախր, առաջին անգամ էր տեսնում այդ երկու պարոններին, լսում նրանց, ու դեռ պարտավոր էր պատասխանել։ Ինչքան ինքը գիտե, ամեն ինչ բավական լավ էր ընթացել, սակայն հետո այս դժբախտությունն էր պատահել, բայց եթե մարդ դրան նախորդած դեպքերը հաշվի առներ, հազիվ թե իրեն մեղավոր համարեր։ Ցավոք, միայն էդլանգերն ու Բյուրգելն էին նրա վիճակը հասկացել, նրանք, իհարկե, կմտնեին նրա դրության մեջ ու հոգ կտանեին հետագա ամեն ինչի համար, սակայն էդլանգերին հարկավոր էր հարցաքննությունից անմիջապես հետո հեռանալ. երևի դղյակ էր մեկնելու։ Իսկ Բյուրգելը, հարցաքննությունից հավանաբար հոգնած (էլ ինչպես կարող էր Կ-ն առանց հոգնելու դիմանալ), քուն էր մտել ու նույնիսկ փաստաթղթերի բաժանումն էր քնով անցրել։ Եթե Կ-ն նման մի հնարավորություն ունենար, ուրախությամբ կօգտագործեր

www.a-pdf.com

ու հաճույքով կհրաժարվեր արգելված բաներին նայելուց, և դա այնքան հեշտ կաներ, որ կթվար, թե իրականում ինքը ի վիճակի չէ ոչինչ տեսնել, իսկ նրբազգաց պարոնները կկարողանային առանց վախենալու նրա դիմաց կանգնել։

Երկու հարցաքննությունների հիշատակումը, թեկուզ միայն էռլանգերի մոտ տեղի ունեցածը, և այն հարգանքը, որով Կ-ն խոսեց պարոնների մասին, հյուրանոցի տիրոջը բարեհաճ տրամադրեցին նրա հանդեպ։ Նա արդեն ուզում էր կատարել Կ-ի խնդրանքը, մի տախտակ դնել տակառների վրա և գոնե մինչև լույսը բացվելը այնտեղ քնել թույլատրել, սակայն նրա կինը բացահայտորեն դեմ էր։ Հագի շորը, որի անկարգ վիճակը նա միայն այս պահին էր նկատել, այս ու այն կողմից իզուր տեղը քաշքշելով՝ նա շարունակ օրորում էր գլուխը, հյուրանոցի մաքրությանն առնչվող հին վեճը կարծես պատրաստվում էր նորից ժայթքել։ Հոգնած Կ-ի համար ամուսինների վեճը չափից դուրս մեծ նշանակություն ուներ։ Այստեղից քշվելը նրա համար երևի թե մինչև հիմա եղած դժբախտությունը գերազանցեր։ Նույնիսկ եթե հյուրանոցի տերն ու նրա կինը միասին իր դեմ հանդես գային, դա չպետք է լիներ։ Տակառի վրա կուչ եկած, ականջ դնելով նա նայում էր երկուսին, մինչև որ կինը իր անտվոր նրբազգացությամբ (ինչը Կ-ն արդեն վաղուց էր նկատել) հանկարծ կողքի քաշվեց ու (նա ամուսնու հետ հավանաբար արդեն ուրիշ բաների մասին էր խոսում) բացականչեց.

— Տես, թե ինչպե՞ս է նայում ինձ։ Քշիր նրան այստեղից վերջապես։

Սակայն Կ-ն առիթը որսալով և հիմա վերջնականորեն, անտարբերության աստիճան համոզված լինելով, որ ինքը կմնա այստեղ, ասաց.

— Ես քեզ չեմ նայում, այլ քո շորին։

— Իսկ ինչո՞ւ իմ շորին,— հուզված հարցրեց հյուրանոցի տիրուհին։ Կ-ն ուսերը ցնցեց։

— Արի,— ամուսնուն դիմեց հյուրանոցի տիրուհին։— Նա, ախր, խմած է, այս ապուշը։ Թող քնի այստեղ ու հարբածությունն անցնի։— Եվ նա Պեպիին, որ տիրուհու

www.a-pdf.com

հրամանը լսելով հոգնած, գզգզված գլխով, ձեռքին մի ավել անփույթ բռնած հայտնվեց մթության միջից, հրամայեց մի բարձ նետել Կ-ին։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Երբ Կ-ն արթնացավ, նրան թվաց, թե ընդհանրապես չի քնել. սենյակն առաջվա պես տաք էր ու դատարկ, պատերը խավարի մեջ էին, գարեջրի ծորակների վերևում շիկացման միակ լամպն անջատված էր, լուսամուտներից այն կողմ գիշեր էր։ Բայց երբ նա ձգվեց ու բարձն ընկավ, տախտակներն ու տակառները ճռճռացին, անմիջապես հայտնվեց Պեպին, ու Կ-ն իմացավ, որ արդեն երեկո էր, իսկ ինքը տասներկու ժամից ավել քնել էր։ Հյուրանոցի տիրուհին ցերեկվա ընթացքում մի քանի անգամ նրա մասին էր հարցրել, Գերշտեկերն ևս առավոտյան, երբ Կ-ն տիրուհու հետ էր խոսում, այստեղ մթության մեջ գարեջուր խմելով սպասել էր, սակայն հետո չէր համարձակվել արթնացնել Կ-ին, դրանից հետո մի անգամ էլ էր եկել, որ Կ-ին տեսներ։ Նրանցից բացի երևի Ֆրիդան էլ էր եկել, նա դեռ մի պահ էլ կանգ առավ Կ-ի մոտ, սակայն Կ-ի պատճառով չէ, որ եկել էր, այլ, որովհետև երեկոյան նորից պետք է իր հին ծառայությանն անցներ, հարկավոր էր այստեղ որոշ բաներ նախապատրաստել։

— Երևում է, նա այլևս չի՞ սիրում քեզ, —խմորեղեն ու սուրճ բերելով, հարցրեց Պեպին։ Սակայն նա հարցն այլևս ոչ թե իր նախկին ձևով՝ ընդգծված չարությամբ տվեց, այլ տխուր էր, կարծես արդեն ծանոթացել էր աշխարհի չարությանը, ինչի հետ համեմատած իր ողջ չարությունը անիմաստ էր ու ոչինչ։ Նա Կ-ի հետ ինչպես վշտակից ընկերոջ հետ էր խոսում, և երբ Կ-ն սուրճը փորձեց, իսկ Պեպինն թվաց, թե Կ-ն սուրճը բավական քաղցր չի համարում, նա վազեց ու բերեց շաքարով լի ամանը։ Տխրությունը, սակայն, հավանաբար չէր խանգարել, որ նա այսօր ավելի զարդարված լիներ, քան վերջին անգամ. մազերի հետ հյուսված ժապավեններն ու վարդակապերը մեծ քանակություն էին

www.a-pdf.com

կազմում, ճակատի երկարությամբ ու քունքերի մոտ մազերը խնամքով գունաթափած էին, վզին մի նուրբ շղթա կար, որ վերնաշապիկի խոր կտրվածքի մեջ էր կախվել։ Երբ վերջապես գոհ այն բանից, որ քունն առել էր ու հնարավոր էր եղել մի լավ սուրճ խմել, Կ-ն ձեռքը ծածուկ մոտեցրեց վարդակապերից մեկին ու փորձեց քանդել, Պեպին հոգնած ձայնով ասաց.

— Ինձ հանգիստ թող։— Ու նրա կողքին լուռ նստեց նույն տակառին։ Կ-ին բոլորովին հարկ չեղավ հետաքրքրվել, թե ի՞նչն էր նրան վշտացրել, որովհետև նա ինքը սկսեց պատմել ու խոսելու ընթացքում քարացած հայացքը հառել էր Կ-ի սուրճի բաժակին, կարծես նույնիսկ պատմելու ընթացքում նրան ուշադրությունը շեղող որևէ բան էր հարկավոր, նույնիսկ իր ցավերով տարված լինելու պահին չէր կարող ամբողջովին տրվել դրանց, որովհետև դա նրա ուժերից վեր էր։ Կ-ն տեղեկացավ, որ իրականում ինքն է Պեպիի դժբախտության մեղավորը, սակայն Պեպին դրա համար նեղացած չէ նրանից։ Եվ որպեսզի թույլ չտար, որ Կ-ն առարկեր, պատմելու ընթացքում նա եռանդով գլխով արեց։ Կ-ն սկզբում պանդոկից տարավ Ֆրիդային ու այդպես հնարավոր դարձրեց Պեպիի վերելքը։ Թե չէ հնարավոր չէր լինի ուրիշ որևէ բան հնարել, ինչը կարողանար Ֆրիդային դրդել թողնել պանդոկը. այնտեղ նա նստած էր՝ ինչպես սարդը իր ոստայնի մեջ, ամեն տեղ իր թելերն ուներ ու միայն ինքը գիտեր դրանք, նրան իր կամքին հակառակ այնտեղից հանելը բացարձակապես անհնար կլիներ, նրան պանդոկից կարող էր միայն ավելի ցածր գտնվող մեկի հանդեպ ունեցած սերը հանել, այսինքն՝ մի բան, որ չէր համատեղվի նրա գործի հետ։ Իսկ Պեպի՞ն։ Արդյոք նա երբևէ մտածե՞լ էր այդ գործն իր համար նվաճել։ Նա աղախին էր, աննշան, շատ քիչ աչքի ընկնող տեղ ուներ, մեծ ապագայի մասին երազում էր ինչպես ամեն մի աղջիկ (երազելն արգելել չի լինի), բայց առաջընթացի մասին լրջորեն չէր մտածել ու բավարարվել էր ձեռք բերածով։ Եվ հանկարծ Ֆրիդան հեռացավ պանդոկից, իսկ դա այնպես հանկարծակի եղավ, որ հյուրանոցի տերը նույնիսկ համապատասխան փոխարինող չուներ ձեռքի տակ, փնտրեց, ու նրա հայացքն ընկավ Պեպիի

www.a-pdf.com

վրա, որ մինչ այդ, իհարկե, համապատասխան ձևով էր դրսևորել իրեն։ Այն ժամանակ Պեպին սիրեց Կ-ին, ինչպես դեռ երբեք ոչ մեկին չէր սիրել։ Նա ամիսներ շարունակ նստել էր ներքևում՝ իր փոքր ու մութ սենյակում, նախապատրաստվել էր այնտեղ տարիներ՝ վատագույն դեպքում ողջ կյանքն անցկացնել առանց նշմարվելու, և հանկարծ հայտնվել էր Կ-ն, մի հերոս, աղջիկների ազատարարը, ու մաքրել նրան վեր տանող ճանապարհը։ Թեև Կ-ն ոչինչ չէր իմացել Պեպիի մասին ու հանուն նրա չէր արել այդ բանը, բայց դա չէր խանգարում նրա երախտագիտությանը։ Իր նշանակմանը նախորդող գիշերը (նշանակումը դեռ հաստատ չէր, բայց արդեն հավանական էր) նա անցկացրեց Կ-ի հետ խոսելով ու իր շնորհակալության խոսքերը նրա ականջին շշնջալով։ Պեպիի աչքում Կ-ի արարքը նաև նրանով բարձրացավ, որ նա հենց Ֆրիդայի բեռն առավ իր ուսերին, անհասկանալի մի ինքնազոհություն կար այդ քայլի մեջ, որ նա Պեպիին առաջ տանելու համար հենց Ֆրիդայի՛ն դարձրեց իր սիրուհին, Ֆրիդային՝ կարճ կտրած նոսր մազերով այդ տգեղ, ծերացող ու նիհար աղջկան, որ այս արատներից բացի նաև ծածկամիտ էր, միշտ գաղտնիքներ ուներ, և դա, ի դեպ, որոշակի կապ ուներ նրա արտաքինի հետ, նրա դեմքին ու մարմնին նայողը անմիջապես տեսնում էր նրա ողորմելի վիճակը, այնպես որ նա պետք է ուրիշ գաղտնիքներ մտածեր, որոնք ոչ ոք չէր կարողանա ստուգել. օրինակ՝ Կլամմի հետ ունեցած ենթադրյալ կապը։ Այն ժամանակ նույնիսկ այսպիսի մտքեր առաջացան Պեպիի մոտ. մի՞թե հնարավոր էր, որ Կ-ն իսկապես Պեպիին սիրեր, դուցե սխալվում էր կամ երևի միայն Ֆրիդայի՞ն էր մոլորեցնում ու այս ամենի միակ արդյունքը գուցե միայն Պեպիին վեր բարձրացնե՞լը լիներ։ Հետո Կ-ն կնկատեր իր սխալը կամ այլևս չէր ուզենա թաքցրնել այն ու այսուհետ ոչ թե Ֆրիդային կտեսներ, այլ միայն Պեպիին, իսկ դա բոլորովին էլ Պեպիի անհիմն երևակայությունը չէր, որովհետև ոչ ոք չէր կարող հերքել, թե նա շատ լավ կարող էր Ֆրիդայի հետ մրցել, ինչպես աղջիկն՝ աղջկա հետ, որ ամենից առաջ Ֆրիդայի պաշտոնն էր եղել ու Ֆրիդայի՝ իր պաշտոնին հաղորդած փայլը, որ այդ պահին կուրացրել էր Կ-ին։ Դրանից հետո Պեպին սկսել էր պատկերացնել,

որ եթե ինքն այդ պաշտոնին լինի, Կ-ն կգա իր մոտ ու կ-
խնդրի, իսկ ինքն այդ պահին կկարողանա ընտրություն կա-
տարել. կամ կլսի Կ-ին ու կկորցնի իր գործը, կամ կմերժի
նրան ու կշարունակի ավելի վեր բարձրանալ։ Եվ ինքը որոշել
էր որ կհրաժարվի ամեն ինչից, կշրջվի Կ-ի կողմը, կսովո-
րեցնի նրան, թե ինչ է իսկական սերը, մի բան, որ նա երբեք
չի կարողանա իմանալ Ֆրիդայից, որովհետև այն աշխարհում
ոչ մի պատվավոր պաշտոնի հետ կապ չունի։ Փոխարենը, սա-
կայն, ուրիշ բան ստացվեց։ Եվ ի՞նչն էր դրա պատճառը։
Ամենից առաջ Կ-ն և, իհարկե, Ֆրիդայի խորամանկությունը։
Նախ՝ Կ-ն. ի՞նչ է ուզում նա, ի՞նչ տարօրինակ մարդ է նա։
Ինչի՞ է ձգտում նա, այդ ի՞նչ կարևոր բաներ են, որ զբաղեց-
նում են նրան, մոռացնել են տալիս ամենամերձավոր, ամե-
նալավ ու գեղեցիկ բանը։ Զոհը Պեպին է, ամեն ինչ կորած է
ու անիմաստ, և ով ուժ ունենա կրակի մատնել տերունական
հյուրանոցը, վառել հիմնովին, որ ոչ մի հետք չմնա, այրել
ինչպես թուղթը կայրվեր վառարանում, այսօր նա կլինի Պե-
պիի ընտրած միակը։ Այո, չորս օր առաջ, երբ ճաշին քիչ ժա-
մանակ էր մնացել, Պեպին պանդոկ եկավ։ Այստեղի գործը
հեշտ չէր, սպանիչ աշխատանք էր, սակայն այն, ինչ կարելի
էր նվաճել, նույնպես քիչ բան չէր։ Պեպին նախկինում էլ
ապահով կյանքով չէր ապրել, ու թեև նա երբեք չէր էլ հան-
դգնել մտածել, թե այս պաշտոնը կզբաղեցնի, համենայն-
դեպս ուշադրություն էր դարձրել, գիտեր, թե այս տեղի հետ
ինչ դժվարություններ կային, ինքն առանց նախապատրաստ-
վելու չէր անցել այս գործին։ Հնարավոր չէ այս գործին ա-
ռանց նախապատրաստվելու անցնել, որովհետև հենց առաջին
ժամերին կարելի է կորցնել այն։ Նույնիսկ եթե մարդ այս-
տեղ իրեն աղախինների պես պահել ուզենա։ Աղախնի պես
աշխատելու դեպքում մարդ ժամանակի ընթացքում ամբողջո-
վին կկորչի ու մոռացության կմատնվի, աղախնի աշխատան-
քը նման է հանքագործի աշխատանքին. գոնե քարտուղարների
հարկաբաժնում այդպես է։ Օրվա ընթացքում այնտեղ այսու-
այնկողմ շտապող միայն սակավաթիվ ցերեկային հայց-
վորներ են երևում, որ չեն համարձակվում նույնիսկ հայացք-
ները բարձրացնել, երկու-երեք աղախնից բացի ուրիշ մարդ
չի երևում, և այդ աղախիններն էլ մյուսների նման դառ-

www.a-pdf.com

նացած են։ Առավոտներն ընդհանրապես չի կարելի դուրս գալ սենյակից, այդ ժամին քարտուղարներն ուզում են իրենք իրենցով լինել, կերակուրը բատրակներն են խոհանոցից բերում. աղախինները սովորաբար անելիք չունեն դրա հետ, սնվելու ժամերին նույնպես մարդ իրավունք չունի միջանցք դուրս գալ։ Միայն այն ժամանակ է աղախիններին թույլատրվում սենյակները հավաքել, երբ պարոններն աշխատում են։ Բայց, իհարկե, նրանց թույլատրվում է ոչ թե բնակեցված, այլ տվյալ պահին դատարկ սենյակները հավաքել, իսկ գործն էլ հարկավոր է անաղմուկ կատարել, որպեսզի պարոնների աշխատանքը չխանգարվի։ Եվ ինչպես կարելի է անաղմուկ հավաքել, երբ պարոնները մի քանի օր սենյակում են մնում, նրանցից բացի նաև բատրակներն են՝ այդ կեղտոտ թափթփուկներն են այստեղ վխտում, և երբ սենյակն ի վերջո աղախնին է տրամադրվում, այնպիսի վիճակի մեջ է լինում, որ նույնիսկ համաշխարհային ջրհեղեղը չի կարողանա մաքրել այն։ Սենյակում իջևանած պարոններն, անկասկած, բարձր դիրք ունեն, բայց նրանցից հետո սենյակները մաքրել կարողանալու համար իրեն զսպել ու մեծ դժվարությամբ զզվանքը հաղթահարել է հարկավոր։ Աղախիններն, իհարկե, չափից դուրս շատ անելիք չունեն, բայց նրանց գործը ծանր է։ Ոչ մի անդամ գովեստ չես լսի, միայն նախատինքներ, հատկապես ամենատհաճ ու հաճախ պատահող դեպքերում՝ երբ սենյակները հավաքելու ժամանակ փաստաթղթեր են կորչում։ Իրականում ոչինչ չի կորչում, թղթի յուրաքանչյուր կտոր հյուրանոցի տիրոջն է հանձնվում, բայց փաստաթղթերն, այնուամենայնիվ, կորչում են, սակայն արդեն ոչ աղջիկների մեղքով։ Հետո հանձնաժողովներ են ուղարկվում, աղախիններից պահանջում են աղատել սենյակները, իսկ հանձնաժողովի անդամները քրքրում են նրանց անկողինները. աղախիններն ախր, անձնական սեփականություն չունեն, նրանց սակավաթիվ իրերը կարելի է տեղավորել գործկեն ուսապայուսակում, մինչդեռ հանձնաժողովը ժամերով քրքրում է։ Նրանք, իհարկե, ոչինչ չեն գտնում. ինչպե՞ս կարող են փաստաթղթերն այնտեղ հայտնվել, աղախինների ինչի՞ն են հարկավոր փաստաթղթերը։ Սակայն արդյունքում հյուրանոցի տիրոջ հայհոյանքներն են

www.a-pdf.com

ցավում և հիասթափված հանձնաժողովի սպառնալիքները, մինչդեռ հանիստ՝ չկա ընդհանրապես, ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը։ Մինչև գիշերվա կեսը աղմուկ է, վաղ առավոտվանից աղմուկ է։ Եթե գոնե հարկադրված չլինեին այնտեղ ապրել, բայց հարկադրված են, որովհետև ժամանակ առ ժամանակ՝ նայած պատվերների, խոհանոցից որևէ բան բերելը, հատկապես գիշերը, աղախինների գործն է։ Մեկ էլ տեսար բռունցքով հարվածում են դռանը, պատվերները թելադրում, հետո խոհանոց վազել է հարկավոր, խոհանոցի տղաներին քնած տեղերից արթնացնել, պատվիրված բաներով սկուտեղը աղախինների դռան առաջը դնել, որտեղից այն արդեն տանում են ծառաները. այս ամենը շատ ձանձրալի է։ Բայց սա դեռ ոչինչ։ Ամենավատ բանն այն է, երբ ոչ մի պատվեր չի դալիս, որ ուշ գիշերը, երբ բոլորն արդեն պետք է քնած լինեին և մեծ մասամբ քնում էին վերջապես, մեկ էլ տեսար սկսում են աղախինների սենյակի մոտ հետուառաջ գնալ-դալ։ Այդ դեպքում աղջիկներն իջնում են անկողիններից (մահճակալներն իրար վրա են հարմարեցված, այնտեղ ախր, ազատ տարածություն քիչ կա, աղախինների ողջ սենյակն իրականում ոչ այլ ինչ է, քան երեք գզրոց ունեցող մի պահարան), ականջ են դնում դռան մոտ, ծնկի են իջնում ու վախից գըրկում իրար։ Իսկ դռան մոտ շարունակ լսվում են հետուառաջ քայլողի ոտնաձայները։ Բոլորն իրենց երջանիկ կզգային, եթե վերջապես մեկնումեկը ներս գար, բայց՝ ոչ, ոչ ոք ներս չի գալիս։ Միաժամանակ պետք է խոստովանել, որ վտանգի սպառնալիքը պարտադիր չէ, հետուառաջ քայլող մարդը գուցե մտածում է՝ թե արդյոք պե՞տք է, որ մի բան պատվիրի, ու չի կարողանում որևէ վճիռ կայացնել։ Գուցե այսպես է, սակայն կարող է նաև ուրիշ բան էլ լինել։ Աղախիններն ախր, բոլորովին չեն ճանաչում պարոններին, նրանց երբեք չեն տեսել։ Այնուամենայնիվ, աղախինների ուշքը գնում է վախից, իսկ երբ միջանքում ամեն ինչ խաղաղվում է, նրանք հենվում են պատին ու այլևս ուժ չեն ունենում, որ իրենց մահճակալներին բարձրանան։ Նորից այս կյանքն է սպասում Պեպիին, դեռ այսօր երեկոյան նա աղախինների սենյակում իր տեղը կզբաղեցնի։ Իսկ ինչո՞ւ։ Կ-ի և Ֆրիդայի պատճառով։ Հիմա

www.a-pdf.com

նորից վերադառնալու է այդ կյանքին, ինչից հազիվ էր ազատվել, ինչից, թեև Կ-ի օգնությամբ, բայց նաև սեփական մեծ ջանքերի գնով հազիվ էր փախել։ Այն ծառայության մեջ՝ այնտեղ, աղջիկները, ովքեր նույնիկ հոգատար էին իրենց հանդեպ, անուշադրության են մատնում իրենց։ Ո՞ւմ համար պետք է զարդարվեն։ Այնտեղ նրանց ոչ ոք չի տեսնի, լավագույն դեպքում՝ խոհանոցի աշխատողները, և ում սիրտն ուզում է, թող զարդարվի։ Շարունակ կամ իրենց խուցերում կլինեն, կամ էլ պարոնների սենյակներում, բայց այդ սենյակները մաքուր շորերով մտնելը սոսկ անմտություն ու շռայլություն կլինի։ Միշտ արհեստական լույսի տակ, հեղձուկ օդի մեջ (այստեղ միշտ ջեռուցվում է) և իրականում միշտ հոգնած։ Շաբաթվա միայն մի ազատ հետկեսօր կարելի է լավագույն ձևով անցկացնել, այսինքն՝ խոհանոցի խորդանոցներից մեկում առանց վախենալու հանգիստ քնել։ Ուրեմն էլ ինչի՞ համար զարդարվել։ Այստեղ ախր, հազիվ թե հագնվում են կարգին։ Այս վիճակից Պեպիին հանկարծ տեղափոխեցին պանդոկ, ուր, այն նախապայմանով, որ անհրաժեշտ էր իր տեղն ամրապնդել, հենց հակառակ բաներն էին հարկավոր, և ուր աշխատողը միշտ մարդկանց աչքի առաջն էր, դեռ ավելին՝ շփացած ու շատ ուշադիր պարոնների աչքի առաջ, այնպես որ պետք էր հնարավորին չափ նուրբ ու հաճելի տեսք ունենալ։ Եվ Պեպին իրավունք ունի ասել, որ ինքը ոչ մի սխալ բան չի արել։ Թե հետո ի՞նչ կլիներ, դա չէր անհանգստացնում Պեպիին։ Այն, որ ինքը այս տեղի համար անհրաժեշտ հատկանիշներն ուներ, նա գիտեր, համոզված էր դրանում, այդ համոզմունքը նա հիմա էլ ուներ և նույնիսկ այսօր, երբ ինքը պարտվեց, ոչ ոք նրանից չի կարող խլել դա։ Թե ինչպես պետք է ամենասկզբում արդարացներ իրեն, շատ դժվար էր, որովհետև ինքը խեղճուկրակ աղախին էր եղել, առանց շորի ու զարդարանքի, իսկ պարոնները սպասելու համբերություն չունեին, թե ինչ կլիներ հետագայում, անմիջապես էին ուզում պանդոկում աշխատող աղջիկ ունենալ, աշխատող՝ ինչպես որ պետք է, թե չէ կհրաժարվեին նրանից։ Կարելի էր կարծել, թե նրանց պահանջները մեծ չէին, որովհետև Ֆրիդան կարողացել էր գոհացնել նրանց։

Սակայն դա ճիշտ չէ։ Այդ մասին Պեպին շատ է մտածել։ Դրանից բացի, հաճախ է հանդիպել Ֆրիդային, մի ժամանակ նրա հետ է քնել։ Ֆրիդայի հետքին վրա ընկնելը հեշտ բան չէ, և ով ուշադիր չլինի (իսկ այդ որ պարոնն է շատ ուշադիր), իսկույն կմոլորեցվի։ Ֆրիդայից լավ ոչ ոք չգիտե, թե ինչքան ողորմելի է իր տեսքը, եթե մարդ առաջին անգամ տեսնի, թե ինչպես է նա քանդում իր մազերը, կարեկցանքից իրար կխփի ձեռքերը, այդ աղջիկը, եթե ամեն ինչ ազնիվ ընթացք ունենար, նույնիսկ աղախին լինելու իրավունք չուներ, ախր Ֆրիդան էլ գիտեր դա, գիշերներ են եղել, երբ Ֆրիդան լաց է եղել, փաթաթվել է Պեպիին, նրա մազերը փաթաթել է իր գլխին ու լացել։ Բայց երբ նա ծառայության մեջ է, ոչ մի կասկած չի թողնում, իրեն այնպես է պահում, կարծես ամենագեղեցիկն ինքն է և ուզածդ մարդուն կարողանում է ինչպես պետք է հավատացնել։ Նա ճանաչում է մարդկանց, դա է նրա միակ արվեստը։ Մարդկանց խաբում ու ստում է արագ, որպեսզի նրանք իրեն ուշադիր զննելու ժամանակ չունենան։ Նրա կեղծիքն, իհարկե, երկար ժամանակ չի բավականացնում, մարդիկ, ախր, աչքեր ունեն, նրանք ի վերջո կնկատեն ամենինչ, բայց Ֆրիդան հենց վտանգը նկատում է, արդեն մի ուրիշ միջոց ունի պատրաստ պահած. օրինակ՝ վերջին ժամանակներս Կլամմի հետ ունեցած կապը։ Նրա՞ ունեցած կապը Կլամմի հետ։ Եթե չես հավատում, կարող ես ստուգել. գնա Կլամմի մոտ ու հարցրու նրան։ Ի՞նչ խորամանկն է, ինչ խորամանկը։ Իսկ եթե դու չհամարձակվես այդպիսի մի հարցով Կլամմի մոտ գնալ, գուցե ավելի կարևոր հարցերով անվերջանալի այցելությունները հնարավորություն չտան նրա մոտ մտնել, և Կլամմն ընդհանրապես անհասանելի լինի քեզ համար (միայն քեզ ու քո նմանների համար, որովհետև Ֆրիդան երբ ուզենա ներս կցատկի նրա մոտ), եթե նույնիսկ այդպես լինի, դու նորից կկարողանաս ստուգել ասածս. միայն սպասել է հարկավոր։ Կլամմն, ախր, չի կարողանա երկար դիմանալ նման սուտուսխալ փսփսոցներին, իհարկե, նա կատաղածի պես հետևում է, թե պանդոկում ու հյուրասենյակներում ինչ են պատմում իր մասին, այդ ամենը շատ կարևոր է նրա համար և, եթե իր լսածները սխալ են, ինքը անմիջապես կուղղի դրանք։

www.a-pdf.com

Բայց նա ոչինչ չի ուզում, նշանակում է՝ ուզելու քան չկա, և դա կատարյալ ճշմարտություն է։ Մարդկանց տեսածն այն է միայն, որ Ֆրիդան գարեջուրը Կլամմի սենյակն է տանում և վճարը վերցրած նորից դուրս է գալիս, իսկ այն, ինչ ոչ ոք չի տեսնում, պատմում է Ֆրիդան, իսկ մյուսները պետք է հավատան դրան։ Ֆրիդան ոչինչ էլ չի պատմում, նա հո չի կարող նման գաղտնիքներ տարածել, ո՛չ, նրա շուրջ գաղտնիքներն իրենք իրենց են տարածվում և որովհետև դրանք արդեն տարածվել են, համենայնդեպս ինքն էլ այլևս չի վախենում անձամբ դրանց մասին խոսել. համեստոնն, առանց որևէ բան պնդելու, նա վկայակոչում է առանց այն էլ բոլորին հայտնի բաները։ Ոչ ամեն ինչ. օրինակի համար այն, որ Կլամմը, սկսած այն ժամանակվանից, ինչ ինքը պանդոկում է աշխատում, առաջվանից քիչ է գարեջուր խմում, ոչ շատ քիչ, բայց ակներևորեն քիչ, այդ մասին նա ոչինչ չի խոսում, որովհետև դա կարող է տարբեր պատճառներ ունենալ։ Ժամանակ է լինում, երբ գարեջուրը Կլամմին դուր չի գալիս, կամ Ֆրիդայի պատճառով նա մոռանում է գարեջուր խմելը։ Եվ ինչքան էլ զարմանալի լինի, Ֆրիդան Կլամմի սիրուհին է։ Իսկ եթե մի բան Կլամմին բավարարում է, ինչու՞ չպետք է մյուսներին հիացմունք պատճառի։ Եվ այդպես Ֆրիդան, մինչև մարդ կհասցներ կողմնորոշվել, դառնում է գեղեցկուհի, այնպիսի հատկություններով օժտված աղջիկ, ինչ պանդոկին է անհրաժեշտ, այո՛, նույնիսկ ավելի գեղեցիկ, ավելի հզոր, և նրան արդեն պանդոկն էլ չի բավականացնում։ Եվ, իրոք, մարդկանց տարօրինակ է թվում, որ նա դեռ պանդոկում է։ Պանդոկի սպասուհի լինելը մեծ բան է, այդ դիրքից շատ հավանական է թվում Կլամմի հետ ունեցած կապը, բայց եթե պանդոկի սպասուհին Կլամմի սիրուհին է, ապա ինչու՞ է նա այդքան ժամանակ նրան պանդոկում թողնում։ Ինչու՞ ավելի վեր չի բարձրացնում։ Մարդկանց կարելի է հազար անգամ ասել, որ այստեղ ոչ մի հակասություն չկա, որ Կլամմն այդպես վարվելու որոշակի պատճառներ ունի, որ գուցե հենց մոտակա ժամանակներս Ֆրիդան հանկարծակի պաշտոնի բարձրացում ստանա, սակայն դա ոչ մի ազդեցություն չի թողնում, մարդիկ որոշակի պատկերացումներ ունեն և թույլ չեն տալիս ոչ մի հնարով, տևական ժամանակով խա-

www.a-pdf.com

բել իրենց։ Ախր, այլևս ոչ ոք չէր կասկածում, որ Ֆրիդան Կլամմի սիրուհին է, նույնիսկ նրանք, ովքեր շատ լավ գիտեին ամեն ինչ, արդեն շատ էին հոգնած կասկածելու համար։

— Սատանան քեզ հետ, Կլամմի սիրուհին եղիր,—մտածում էին նրանք,—բայց եթե դու Կլամմի սիրուհին ես, մենք ուզում ենք քո վերելքը տեսնել։

Սակայն նրանք ոչինչ էլ չտեսան, իսկ Ֆրիդան առաջվա նման մնաց պանդոկում և ներքուստ գոհ էր, որ այստեղ մնաց։ Մինչդեռ մարդկանց աչքում նա կորցրեց իր դիրքը, իհարկե, դա չէր կարող նրա համար աննկատ մնալ. ախր նա սովորաբար բաները նկատում է նախքան դրանց դրսևորվելը։ Իրոք գեղեցիկ, սիրարժան աղջիկը, եթե արդեն հարմարվել է պանդոկին, չպետք է ոչ մի հնար բաներեցնի, քանի որ նա գեղեցիկ է, նա պանդոկի սպասուհի կլինի, եթե իհարկե մի առանձնահատուկ դժբախտություն չպատահի։ Սակայն Ֆրիդայի նման աղջիկը պետք է շարունակ հոգ տաներ իր տեղի մասին, իհարկե հասկանալի է, որ նա իր մտահոգությունը ցույց չէր տալիս. նա ավելի շուտ սովոր էր արտանջալ ու անիծել իր տեղը։ Ծածուկ, սակայն, նա անընդհատ հետևում էր տրամադրություններին։ Եվ այսպես, նա տեսավ, թե մարդիկ ինչպես են անտարբեր դառնում, իր հայտնվելու ժամանակ նույնիսկ աչքերը չէին բարձրացնում, նույնիսկ բատրակները չէին հետաքրքրվում նրանով, նրանք, բնական է, Օլգայի ու նրա նման աղջիկների կողմնակիցն էին, նաև հյուրանոցի տիրոջ վարվելակերպից Ֆրիդան նկատեց, որ ինքը գնալով պակաս անփոխարինելի է դառնում, Կլամմի հետ կապված նոր պատմություններ հնարել հնարավոր չէր, ամեն ինչ իր սահմանն ուներ, այնպես որ, մեր բարի Ֆրիդան որոշեց նոր բան անել։ Եվ ո՞վ կկարողանար անմիջապես հասկանալ դա։ Պեպին ենթադրում էր, բայց, ցավոք, չէր հասկացել։ Ֆրիդան որոշել էր սկանդալ սարքել. նա՝ Կլամմի սիրուհին, կնեռվի առաջին պատահած մարդու գիրկը թեկուզև ամենաանարժանի։ Դա կգրգռի բոլորի ուշադրությունը, մարդիկ երկար կխոսեն այդ մասին և վերջապես, վերջապե՛ս մարդիկ կհիշեն, թե ինչ է նշանակում Կլամմի սիրուհին լինել և այդ պատիվը մի նոր

www.a-pdf.com

ափրո թմբիրի տակ դեն նետել։ Դժվարը միայն համապատասխան մարդ գտնելն էր, ում հետ կարելի էր այս խելացի խաղը խաղալ։ Այդ մարդը չպետք է Ֆրիդայի ծանոթը լիներ և ոչ էլ պետք է բատրակներից լիներ. բատրակը, հավանաբար, աչքերը չռեր Ֆրիդայի վրա ու անցներ-գնար, ամենից առաջ նա լուրջ չէր ընդունի լսածը և հետո, խոսելու ողջ կարողությամբ հանդերձ, հնարավոր չէր լինի լուր տարածել, թե բատրակը հարձակվել էր Ֆրիդայի վրա, Ֆրիդան չէր կարողացել պաշտպանվել ու անգիտակցաբար տրվել էր նրան։ Եթե այդ մարդը ամենաանարժանն էլ լիներ, ապա պետք է այնպիսի մեկը լիներ, ով կարողանար հավատացնել, թե չընայած իր ոչ նուրբ, բթամիտ վարվելակերպին՝ ոչ թե ուրիշ մեկի է տենչացել, այլ միայն Ֆրիդային և ուրիշ ոչ մի ցանկություն չի ունեցել, քան, աստված իմ, Ֆրիդայի հետ ամուսնանալը։ Ու եթե այդ մարդը թշվառական էլ լիներ, նույնիսկ ավելի ցածր, քան բատրակը, շատ ավելի ցածր, քան բատրակը, ապա պետք է գոնե այնպիսին լիներ, ում պատճառով ամեն մի աղջիկ չծաղրեր նրան, այնպիսի մեկը, ում գոնե կարծիք հայտնելու ընդունակ մի ուրիշ աղջիկ քիչ թե շատ գրավիչ համարեր։ Բայց նա որտեղի՞ց գտներ այդպիսի մի մարդու։ Եթե ուրիշ աղջիկ լիներ, գուցե թե ողջ կյանքը իզուր սպասեր։ Սակայն Ֆրիդայի բախտը հողաչափին պանդոկ բերեց, և հնարավոր է հենց այն երեկոյան, երբ նա առաջին անգամ մտածեց այս ծրագրի մասին։ Հողաչափը։ Իհարկե, իսկ ի՞նչ է կարծում Կ-ն, այդ ի՞նչ է մտցրել գլուխը, որևէ առանձնահատուկ բանի՞ է ուզում հասնել։ Լավ պաշտոնի՞, պարգևատրմա՞ն։ Այդպիսի բա՞ն կա մտքին։ Եթե այո, ապա նա պետք է հենց սկզբից ուրիշ կերպ վարվեր։ Ախր, նա իրենից ոչինչ չի ներկայացնում, ախր, ամոթ է նույնիսկ նրա վիճակին նայելը։ Նա հողաչափ է, գուցե դա ինչ-որ բան նշանակում է, այսինքն՝ նա ինչ-որ բան սովորել է, բայց երբ մարդ դրանով ոչինչ չի կարող սկսել, ուրեմն միևնույն է, ոչինչ է։ Ու դեռ մի բան էլ նա պահանջներ է ներկայացնում, առանց նվազագույն զսպվածության նա պահանջներ է ներկայացնում, ոչ ուղղակիորեն, բայց նկատվում է, որ նա որոշակի պահանջներ դնում է։ Ախր սա է զայրացնողը։ Արդյոք նա գիտե՞, որ նույնիսկ աղախինն է իր արժանապատվու-

թյունը կորցնում, երբ երկար է խոսում նրա հետ։ Եվ իր բոլոր առանձնահատուկ պահանջների հետ մեկտեղ նա հենց առաջին երեկոյան շրմփում է ամենապարզ կառուցվածքի թակարդը։ Արդյոք չի՞ ամաչում։ Ֆրիդայի ի՞նչն է գրավել նրան։ Հիմա արդեն կարող է խոստովանել։ Այդ նիհար, դեղնած տիպը իրո՞ք հաջողացրել էր դուր գալ նրան։ Չէ, ի՞նչ ես ասում, Կ-ն երևի բոլորովին էլ չի նայել նրան, Ֆրիդան միայն ասել է Կ-ին, թե ինքը Կլամմի սիրուհին է, դա նրա համար նորություն էր, ու նա այդպես կորավ։ Իսկ հիմա Ֆրիդան, իհարկե, պետք է հեռանար այստեղից, նրա համար այլևս տեղ չկար տերունական հյուրանոցում։ Առավոտյան, հեռանալուց անմիջապես առաջ, Պեպին տեսավ նրան, հյուրանոցի անձնակազմը հավաքվել էր, ախր այդ տեսարանը բոլորին էր հետաքրքրում։ Նրա ազդեցությունը դեռ այնքան մեծ էր, որ մարդիկ ափսոսում էին նրան, բոլորը, նույնիսկ նրա թշնամիները ափսոսում էին նրան. արդեն սկզբում այդքան ճիշտ դուրս եկան նրա հաշվարկները։ Այդպիսի մի մարդու վզովն ընկնելը բոլորին էր անհասկանալի թվում, ճակատագրի հարված, խոհանոցի փոքր աղջնակները, որ պանդոկի ցանկացած սպասուհիով հիանում են, անմխիթար վիճակում էին։ Նույնիսկ Պեպին էր հուզված, նա ևս չկարողացավ ընդհանուրի տրամադրվածությանը հակառակվել, թեև նրա ուշադրությունը ուրիշ բանի էր ուղղված։ Նա նկատել էր, որ Ֆրիդան իրականում այնքան էլ տխուր չէր։ Սկզբունքորեն, կատարվածը մի ահավոր դժբախտություն էր, նա էլ այնպես էր պահում իրեն, կարծես ինքը անչափ դժբախտ է, բայց դա բավական չէր, այդ խաղը չէր կարող մոլորեցնել Պեպիին։ Ի՞նչն էր նրան այդպես վստահ պահողը։ Գուցե նոր սիրո երջանկությո՞ւնը։ Այդ տեսակետը բացառվում էր։ Հապա ի՞նչն էր։ Ի՞նչն էր նրան ուժ տալիս նույնիսկ Պեպիի հանդեպ, որ այն ժամանակ արդեն նրա հետնորդուհին էր համարվում, առաջվա նման սառն-ընկերական լինել։ Այն օրը Պեպին այդ մասին մտածելու բավական ժամանակ չուներ, նոր տեղին նախապատրաստվելու համար շատ անելիք կար։ Մի քանի ժամից նա երևի իր նոր գործին անցներ, սակայն դեռ գեղեցիկ սանրվածք չուներ, ոչ նրբագեղ զգեստ, ոչ նուրբ սպիտակեղեն, ոչ էլ պիտանի կոշիկներ։ Մի քանի

www.a-pdf.com

ժամում հարկավոր էր այդ ամենը ճարել, եթե չկարողանար ինչպես հարկն է նախապատրաստվել, ավելի լավ կաներ ընդհանրապես հրաժարվեր նոր տեղից, որովհետև հակառակ դեպքում հենց առաջին իսկ կես ժամվա ընթացքում նորից կկորցներ այն։ Որոշ բաներ մասամբ հաջողվեցին։ Սանրվածքների հարցում նա առանձնահատուկ օժտվածություն ուներ, մի անգամ նույնիսկ հյուրանոցի տիրուհին էր նրան կարգադրել գալ ու իր սանրվածքը սարքել, դա երևի ձեռքի բնատուր առանձնահատուկ թեթևությունն էր, և, իհարկե, փարթամ մազերն էլ էին հեշտ ենթարկվում, կարելի էր ցանկացած սանրվածքը տալ։ Զգեստի հարցում ևս օգնեցին։ Նրա երկու գործընկերուհիները հավատարիմ մնացին իրենց, նրանց համար էլ, իհարկե, որոշակի պատիվ էր, որ հենց իրենց խմբից է պանդոկի սպասուհի ընտրվում, և հետո, ավելի ուշ, եթե նա իշխանության հասներ, կկարողանար նրանց համար որոշ առավելություններ ստեղծել։ Աղջիկներից մեկը արդեն երկար ժամանակ մի թանկարժեք կտոր ուներ պահած, դա նրա գանձն էր, հաճախ էր ցույց տալիս ու հիացնում մյուսներին, շարունակ երազում էր, թե երբևէ կկարողանա մի շքեղ զգեստ կարել, բայց որովհետև հիմա այն Պեպիին էր անհրաժեշտ (նրա կողմից դա շատ գեղեցիկ քայլ էր), զոհաբերեց։ Երկուսն էլ պատրաստակամ օգնեցին նրան կարելու ժամանակ. եթե իրենց համար կարելու լինեին, այդպես եռանդով չէին աշխատի։ Դա նույնիսկ շատ զոհացնող, երջանկաբեր աշխատանք էր։ Նրանք նստել էին յուրաքանչյուրն իր մահճակալին՝ մեկը մյուսի գլխավերևում, կարում էին, երգում և պատրաստի ու դրանց պատկանող մասերը վեր ու վար փոխանցում իրար։ Երբ Պեպին հիշում է այդ մասին, նրա սիրտն անընդհատ պղտորվում է, որ ամեն ինչ իզուր էր և հիմա դատարկ ձեռքերով էր ընկերուհիների մոտ վերադառնալու։ Ինչպիսի՜ դժբախտություն և ինչպիսի՜ թեթևամտությամբ հասցվեց. ամենից առաջ՝ Կ-ի կողմից։ Այն ժամանակ ինչպե՜ս էին բոլորն ուրախանում զգեստի համար, թվում էր, թե այն հաջողության երաշխիքն է, և երբ վերջում մի ժապավենի համար էլ տեղ գտնվեց, վերջին կասկածն էլ անհետացավ։ Ի՞նչ է, գեղեցիկ չէ՞ նրանց կարած զգեստը։

www.a-pdf.com

Այժմ այն արդեն ճմրթվել ու կեղտոտվել է մի փոքր։ Պեպին ուրիշ զգեստ չուներ, ստիպված էր եղել օր ու գիշեր սա հագնել, բայց միևնույն է, երևում է, թե ինչ գեղեցիկն է. նույնիսկ Բարնաբասի այն անիծյալ քույրը չէր կարողանա այսպես կարել։ Իսկ որ մարդ ըստ ցանկության կարող է վերևն ու վարը նեղացնել ու լայնացնել, այն, որ թեև նույն շորն է, բայց այսպես փոփոխվող, սա մի հատուկ առավելություն է և, իհարկե, իր հնարածն է։ Նրա համար, անշուշտ, դժվար չէ շոր կարելը, Պեպին չի պարծենում դրանով. ջահել, առողջ աղջիկներն ախր, ամեն ինչ կարող են։ Շատ ավելի դժվար էր սպիտակեղեն ու կոշիկներ ճարելը, և հենց այստեղից է սկսվում անհաջողությունը։ Այս հարցում էլ ընկերուհիներն ինչքան կարող էին օգնեցին, բայց նրանք շատ բան չկարողացան։ Միայն կոպիտ սպիտակեղեն կար, որն էլ Պեպին կարկատեց ու տեսքի բերեց, իսկ բարձրակրունկ կոշիկների փոխարեն ստիպված էր տնային կոշիկներով յոլա գնալ, որոնք նա ավելի հաճույքով կթաքցներ, քան ցույց կտար։ Նրանք սիրտ էին տալիս Պեպիին, ախր Ֆրիդան էլ արտակարգ չէր հագնվում, երբեմն նա այնպիսի անփույթ տեսքով էր շրջում, որ հյուրերն ավելի հաճույքով գերադասում էին սպասավոր տղաների ձեռքից վերցնել խմիչքը, քան նրա։ Իրոք այդպես էլ էր, սակայն Ֆրիդան կարող էր այդպես վարվել, նա արդեն հարգանք-պատիվ ուներ. եթե տիկինը մի անգամ կեղտոտ ու փնթի հագնված դուրս գար, ապա դա գայթակղիչ կթվար, բայց Պեպիի նման նորեկը... Դրանից բացի, Ֆրիդան չէր էլ կարող հագնվել, նա ախր բոլորովին ճաշակ չունի։ Եթե մարդու մաշկը դեղին է, նա իհարկե պետք է ծածկի այն և ոչ թե Ֆրիդայի նման կրեմի գույնի, խոր կտրվածքով վերնաշապիկ հագնի, որ նայողի աչքերը համատարած դեղինից շաղվեն։ Եթե նույնիսկ դա էլ չլիներ, Ֆրիդան ախր, անսահման ժլատ էր, որպեսզի լավ հագնվեր, իր վաստակած ողջ դրամը պահում էր, և ոչ ոք չգիտեր, թե ինչու։ Գործի մեջ նրան փող պետք չէր, խաբելով ու խորամանկությամբ նա ելք գտնում էր, սակայն այդ ձևը Պեպին չէր ուզում ու չէր կարող կրկնել, այդ պատճառով արդարացված էր նրա՝ հենց սկզբից հեղինակություն ձեռք բերելու համար այդպես զարդարվելը։ Եթե նա ավելի ազդե-

www.a-pdf.com

ցիկ միջոցներով գործել կարողանար, անկախ Ֆրիդայի խորամանկությունից ու Կ-ի տկարամտությունից, վերջում հաղթողն ինքը կլիներ։ Ախր սկիզբը շատ նպաստավոր էր։ Սակավաթիվ հնարներին ու գիտելիքներին, որ անհրաժեշտ էին այնտեղ, նա նախօրոք տեղյակ էր։ Հազիվ պանդոկ ոտք դրած, նա արդեն մերվեց այնտեղի կյանքին։ Գործի ժամանակ ոչ ոք չէր նկատում Ֆրիդայի պակասությունը, որոշ հյուրեր միայն երկրորդ օրը հետաքրքրվեցին, թե որտեղ է Ֆրիդան։ Ոչ մի սխալ չէր կատարվում, հյուրանոցի տերը գոհ էր, առաջին օրվա համար ունեցած մտավախությունը նրան շարունակ պանդոկում էր պահում, ավելի ուշ նա միայն երբեմն-երբեմն էր գալիս, իսկ վերջում, քանի որ հաշիվները իրար էին գալիս, օրվա եկամուտը մի քանի հաշիվով ավելի էր մեծացել, քան Ֆրիդայի ժամանակ, Պեպին թողեց ամեն ինչ։ Պեպին նորություններ էր մտցնում։ Ոչ աշխատասիրությունից, այլ իշխանատենչությունից, ագահությունից ու վախից դրդված, թե կարող է իր իրավունքները մեկնումեկին զիջել, Ֆրիդան թեկուզ երբեմն, նույնիսկ բատրակներին էր հետևում՝ հատկապես երբ որևէ մեկը նայում էր։ Դրան հակառակ, Պեպին գործն ամբողջովին թողեց նկուղի տղաներին, որ նույնիսկ ավելի պիտանի էին դրան։ Իր այդ քայլով նա ավելի երկար ժամանակ շահեց տերունական սենյակի համար, հյուրերին արագ էր սպասարկում ու, չնայած դրան, կարողանում էր ամեն մեկի հետ մի քանի բառ փոխանակել, ոչ Ֆրիդայի պես, որ իրեն ամբողջովին Կլամմի համար էր պահում և յուրաքանչյուր բառ, մոտենալու յուրաքանչյուր փորձ Կլամմին հասցված վիրավորանք էր համարում։ Դա, իհարկե, խելացի քայլ էր, որովհետև եթե նա մեկնումեկին թողնում էր մոտենալ իրեն, դա մի չլսված բարյացակամություն էր դիտվում։ Սակայն Պեպին ատում էր այդ հնարները, և հետո՝ սկզբում, նման բաներ պետք չէին։ Պեպին մտերիմ էր բոլորի հետ, և ամեն ոք նրան նույն մտերմությամբ էր փոխհատուցում։ Բոլորն էլ ակնհայտորեն գոհ էին փոփոխությունից. երբ աշխատանքից հոգնած պարոնները գարեջուր խմելու համար գոնե մի պահ նստելու իրավունք էին ստանում, կարելի էր մի բառով, մի հայացքով, ուսերը մի անգամ թոթվելով կերպարանափոխել նրանց։ Նրանց ձեռքերը

www.a-pdf.com

այնպիսի տենչանքով էին սահում Պեպիի խոպոպների միջով, որ նա ստիպված էր լինում օրական հավանաբար տասն անգամ իր սանրվածքը թարմացնել, նրա խոպոպների ու վարդակապերի գայթակղությանը ոչ ոք չէր կարողանում դիմակայել, նույնիսկ Կ-ն, որ սովորաբար ցրված էր։ Այդպես անցնում էին աշխատանքով լի, անհանգիստ, բայց հաջողակ օրերը։ Գոնե այդպես արագ չանցնեին, գոնե մի քիչ շատ լիներին դրանք։ Նույնիսկ եթե մարդ հոգնելու աստիճան լարեր ուժերը, չորս օրը շատ քիչ էր, գուցե արդեն հինգերորդ օրը բավական լիներ, բայց չորս օրը շատ քիչ էր։ Պեպին չորս օրվա ընթացքում հովանավորներ ու ընկերներ էր գտել, և եթե նա բոլոր հայացքներին վստահելու լիներ, երբ գարեջրի գավաթները ձեռքին անցնում էր, կլողար բարեկամության ծովում։ Բարթմայեր անունով մի գրագիր խելագարվում էր նրա համար, այս շղթան ու մեդալիոնը նա էր նվիրել, մեդալիոնի մեջ նրա նկարն է, որ, ի դեպ, հանդգնություն է նրա կողմից։ Այս ու այն բանն էր եղել, բայց, ախր, միայն չորս օր էր անցել, և եթե Պեպին իր ողջ ուժերն էլ ներդներ, Ֆրիդան կարող էր կիսով չափ, բայց ոչ ամբողջապես մոռացության մատնվել, և նա մոռացության կմատնվեր էլ, գուցե շատ ավելի շուտ, եթե նախապես հոգ տարած չլիներ իր սարքած մեծ սկանդալի շնորհիվ մարդկանց խոսակցության առարկան մնալու, դրա շնորհիվ նա մարդկանց համար որպես նորություն մնաց և միայն հետաքրքրությունն էր պատճառը, որ մարդիկ հաճույքով կուզենային նորից տեսնել նրան, այն, ինչ նրանց ձանձրացնելու աստիճան դատարկ էր թվում, սովորաբար ամեն ինչի հանդեպ անտարբեր Կ-ի վաստակների շնորհիվ նորից շարժեց նրանց հետաքրքրությունը, եղածի համար նրանք Պեպիից, քանի դեռ նա պանդոկում էր ու ազդում էր իր ներկայությամբ, իհարկե, երես չէին թեքի, բայց պանդոկի այցելուները մեծ մասամբ տարեց պարոններ էին, իրենց սովորությունների հարցում՝ ծանրաշարժ, ժամանակ էր հարկավոր մինչև պանդոկի նոր սպասուհուն վարժվելը, թեկուզ սպասուհիների փոխանակումն այդ աստիճան ձեռնտու էլ լիներ, վարժվելը մի քանի օր կտևեր, հենց պարոնների կամքին հակառակ այն մի քանի օր կտևեր, գուցե ընդամենը հինգ օր, սակայն չորս օրը բավա-

www.a-pdf.com

կան չէր, չնայած թափած բոլոր ջանքերին, Պեպին շարունակ ժամանակավոր աշխատող էր համարվում։ Եվ գուցե նաև մեծագույն դժբախտությունը. այդ չորս օրվա ընթացքում Կլամմը, թեև նա առաջին երկու օրը գյուղում էր, հյուրասենյակ չիջավ։ Եթե նա ներքև իջներ, Պեպիի համար ամենավճռական քննությունը կլիներ, մի քննություն, ի դեպ, որից նա ամենից քիչ էր վախենում և ավելի շատ ուրախանում էր դրա համար։ Կլամմի սիրուհին նա չէր դառնա (նման բաների մասին, իհարկե, ավելի լավ կլինի բոլորովին չխոսել) և երբեք էլ չէր ստի, թե ինքը նրա սիրուհին է, բայց գոնե կկարողանար Ֆրիդայի պես հաճելի՝ սեղանին դնել զարեջրի գավաթը, առանց Ֆրիդայի պես գլուխ ցավեցնելու, շատ գեղեցիկ կողջուներ ու գեղեցիկ ձևով կներկայացներ իրեն, և եթե Կլամմը աղջիկների աչքերում որևէ բան փնտրում է, իր փնտրածը՝ ամբողջովին հաղթելու աստիճան, կգտներ Պեպիի աչքերում։ Բայց նա ինչո՞ւ չեկավ։ Պատահականությո՞ւն էր։ Այն ժամանակ Պեպին էլ այդպես ենթադրեց։ Այդ երկու օրը յուրաքանչյուր պահ նրա գալուն էր սպասում, նույնիսկ՝ գիշերը։ Հիմա Կլամմը կգա, շարունակ մտածում էր նա և, սպասման անհամբերությունից ու նրա ներս մտնելը հենց առաջինը տեսնելու պահանջից բացի ուրիշ պատճառ չունենալով, շարունակ դեսուդեն էր վազվզում։ Այս տևական հիասթափությունը շատ հոգնեցրեց նրան, գուցե դա էր պատճառը, որ ի վիճակի չէր ավելին անել, քան կարող էր։ Եթե մի փոքր ժամանակ էր ունենում, վերևի միջանցքն էր սողոսկում, ուր մտնելը անձնակազմի անդամներին խստիվ արգելված էր, այնտեղ կանգնում էր մի խորշում ու սպասում նրան։ Եթե միայն Կլամմը գար, մտածում էր նա, եթե միայն նրան իր սենյակից վերցնել ու ձեռքերի վրա հյուրերի սենյակ իջեցնել կարողանար։ Նրա ծանրության տակ, թեկուզ ինչքան էլ մեծ լիներ, չէր ճկվի։ Բայց նա չէր գալիս։ Վերևի միջանցքում այնպես լուռ էր, որ ով չի եղել այնտեղ, չի կարող պատկերացնել։ Այնքան լուռ է այնտեղ, որ հնարավոր չէ երկար կանգնելուն դիմանալ։ Հենց լռությունն է քշում մարդկանց։ Բայց միևնույն է. տաս անգամ վերևում չդիմանալով, Պեպին տաս անգամ վերև բարձրացավ։ Ախր անիմաստ էլ էր։ Եթե Կլամմը գալ ուզենար, կգար, բայց եթե չուզենար գալ, Պեպին

www.a-pdf.com

չէր կարողանա սենյակից հրապուրելով դուրս հանել նրան, թեկուզ եթե խորշում կանգնած շնչահեղձ էլ լիներ։ Սպասելն անիմաստ էր, բայց եթե նա չգար, ախր ամեն ինչ անիմաստ կլիներ։ Եվ նա չեկավ։ Այսօր Պեպին գիտե արդեն, թե Կլամմն ինչո՞ւ չեկավ։ Ֆրիդան մի հիանալի զբաղմունք կունենար, եթե հանկարծ տեսներ Պեպինն՝ երկու ձեռքը սրտին դրած, խորշի մեջ կանգնած։ Կլամմը ներքև չեկավ, որովհետև Ֆրիդան թույլ չէր տալիս։ Իր խնդրանքների շնորհիվ չէր, որ կարողացել էր ազդել Կլամմի վրա, նրա խնդրանքները Կլամմին չեն հասնում։ Բայց նա՝ այդ սարդը, կապեր ուներ, որոնց մասին ոչ ոք չգիտեր։ Եթե Պեպին որևէ բան է ասում հյուրերից մեկին, բարձրաձայն է ասում, և կողքի սեղանին նստածները կարող են նույնպես լսել։ Ֆրիդան, սակայն, ասելիք չունի, նա գարեջուրը սեղանին է դնում ու դնում է շրջազգեստը խշխշացնելով. շրջազգեստը միակ բանն է, ինչի վրա նա փող է ծախսում։ Իսկ եթե նա որևէ բան է ասում, ապա ոչ բարձրաձայն, շշնջում է հյուրին, այնպես է կռանում հյուրի կողմը, որ կողքի սեղանակիցները ականջներն են սրում։ Նրա ասածները հավանաբար անկարևոր բաներ են, բայց ոչ միշտ։ Նա կապեր ունի, մի մասին օժանդակում է մյուսների օգնությամբ, և եթե կապերի մեծ մասը ձախողվի էլ (ով պետք է տևականորեն հոգ տանի Ֆրիդայի մասին), մեկնումեկը պահում է ամուր։ Եվ հենց այդ կապերն էլ նա հիմա օգտագործել սկսեց։ Կ-ն դրա հնարավորությունը տվել էր նրան. փոխանակ նրա մոտ նստեր ու հսկեր, նա հազիվ էր տանը մնում, թափառում էր, այստեղ ու այնտեղ քննարկումներ ուներ, Ֆրիդայից բացի ամեն ինչի վրա ուշադրություն էր դարձնում և, որպեսզի ի վերջո ավելի շատ ազատություն տար նրան, «Կամրջի մոտ» իջևանատնից տեղափոխվում է դատարկ դպրոցը։ Այս ամենը մեղրամիսի գեղեցիկ սկիզբն էր։ Իհարկե, Պեպին վերջին մարդն է, ով նախատելու է Կ-ին, թե ինչո՞ւ նա չդիմացավ Ֆրիդային՝ թեև հնարավոր էլ չէր դիմանալ։ Բայց ինչո՞ւ ընդհանրապես չհեռացավ նրանից, ինչո՞ւ էր միշտ նրա մոտ վերադառնում, ինչո՞ւ էր իր թափառումներով այն տպավորությունը թողնում, թե նրա համար է պայքարում։ Այնպես էր թվում, որ նա միայն Ֆրիդայի հետ շփվելուց հետո է զգացել, թե իրականում ինչպիսի ոչնչու-

թյուն է ինքը, ուզում է արժանի լինել Ֆրիդային, ուզում է մի կերպ վերև բարձրանալ, որ հետագայում իրավունք ունենա հատուցել չարչարանքների համար և որ ոչ ոք նրան չխանգարի։ Այդ ընթացքում Ֆրիդան ժամանակ չի կորցնում, նստած է դպրոցում, ուր Կ-ն էր նրան տարել, և հետևում է տերունական հյուրանոցին ու Կ-ին։ Նրա ձեռքի տակ հիանալի սուրհանդակներ կան՝ Կ-ի օգնականները (մարդ չի հասկանում, նույնիսկ ով էլ որ ճանաչում է Կ-ին, միևնույն է, ոչինչ չի հասկանա), որ Կ-ն ամբողջովին տրամադրել էր Ֆրիդային։ Ֆրիդան Կ-ի օգնականներին ուղարկում է իր հին ընկերների մոտ, հիշեցնել է տալիս իր մասին, գանգատվում է, որ Կ-ի նման մի մարդ իրեն գերու նման է պահում, Պեպիի դեմ է լարում, տեղյակ պահում իր մոտալուտ ժամանման մասին, օգնություն է խնդրում, թախանձում է ոչինչ չհայտնել Կլամմին, այնպես է վարվում, կարծես հարկավոր է խնայել նրան, և ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, որ նա պանդոկ իջնի։ Նույն բանը, ինչ նա մեկի մոտ որպես Կլամմի մասին հոգ տանել է մատուցում, հյուրանոցի տիրոջ մոտ դարձնում է իր հաջողությունը, ուշադրություն է հրավիրում, որ Կլամմը պանդոկ չի գալիս։ Իհարկե, ինչպես կարող էր նա իջնել, երբ ներքևում Պեպին էր սպասարկում։ Իմիջիայլոց, հյուրանոցի տերը ոչ մի մեղք չուներ, այս Պեպին, ինչ ուզում է լիներ, լավագույն փոխարինողն էր, որ կարելի էր գտնել, բայց նա էլ բավական չէր, նույնիսկ մի քանի օր յոլա չէր տանի։ Կ-ն ոչինչ չգիտեր Ֆրիդայի ողջ գործունեության մասին, եթե Կ-ն թափառելու տեղ էլ չուներ, ամեն ինչից անտեղյակ նստում էր նրա ոտքերի մոտ, մինչդեռ Ֆրիդան հաշվում էր պանդոկ վերադառնալու ժամերը։ Օգնականները միայն բանբերի ծառայություն չէին կատարում, նրանց նպատակը նաև Կ-ի խանդը բորբոքելն էր, նրան տաքացնելը։ Դեռ մանկության տարիներից Ֆրիդան ճանաչում էր օգնականներին, նրանք, իհարկե, իրարից այլևս դաղտնիքներ չունեին, բայց, ի պատիվ Կ-ի, նորից սկսում են իրար տենչալ, և, այսպիսով, Կ-ի համար վտանգ է ծագում, որ այդ տենչանքը մեծ սեր կդառնա։ Եվ Կ-ն ի սեր Ֆրիդայի անում է ամեն ինչ, նույնիսկ իրար հակասող բաներ. թույլ է տալիս, որ օգնականները խանդ առաջացնեն իր

www.a-pdf.com

մեջ, նաև հանդուրժում է, որ Ֆրիդան օգնականների հետ մնա, երբ ինքը թափառելու է գնում։ Այնպես է թվում, թե Կ-ն Ֆրիդայի երրորդ օգնականն է։ Եվ վերջում, իր զննումներն ավարտելուց հետո, Ֆրիդան որոշում է խոշոր հարված հասցնել. նա որոշում է հետ վերադառնալ։ Եվ իրոք, վերադառնալու ճիշտ ժամանակն է, Ֆրիդայի, այդ խարդախի պահը կռահելու և օգտագործելու կարողությունը հիացմունքի է արժանի, հետևելու և որոշում ընդունելու ուժը Ֆրիդայի անկրկնելի արվեստն է. եթե Պեպին կարողանար այդպես վարվել, ինչպե՞ս կփոխվեր նրա կյանքը։ Եթե Ֆրիդան մի կամ երկու օր ավել մնար դպրոցում, այլևս հնարավոր չէր լինի Պեպինն հանել պանդոկից։ Նա վերջնականապես պանդոկի սպասուհի կմնար, բոլորի կողմից սիրված ու ընդունված, բավական փող կվաստակեր անհրաժեշտ հանդերձավորումը փայլուն կերպով ամբողջացնելու համար, եւ մի, երկու օր, և Կլամմին հնարավոր չէր լինի ոչ մի խարդավանքով հետ պահել հյուրերի սենյակից, նա կդար, կխմեր, շատ լավ կզգար իրեն և եթե ընդհանրապես նկատեր էլ Ֆրիդայի բացակայությունը, ապա գոհ կլիներ փոփոխությունից, եւ մի, երկու օր, և Ֆրիդան իր սկանդալով ու օգնականներով, ամեն ինչով հանդերձ կմոռացվեր ամբողջովին և այլևս չէր երևա այստեղ։ Այդ դեպքում նա զուրկ ավելի սիրուց կարեր Կ-ից և, մի նախապայմանով, որ ի վիճակի էր, կկարողանար իսկապես սիրել Կ-ին։ Բայց ոչ, դա էլ չէր լինի, որովհետև Կ-ին ընդամենը մի օր էր հարկավոր, որ ձանձրանար Ֆրիդայից, հասկանար, թե ինչպիսի անամոթություն է նա խաբում իրեն, ամեն ինչ սուտ էր. նրա կարծեցյալ գեղեցկությունը, հավատարմությունը և, ամենից շատ՝ Կլամմի հանդեպ ունեցած կարծեցյալ սերը,— Կ-ին մի օր էր հարկավոր, ոչ ավել, որպեսզի նրան երկու կեղտոտ օգնականների հետ մեկտեղ քշեր տանից, նույնիսկ Կ-ին մի օրից ավել ժամանակ պետք չէր։ Եվ այդ պահին, երկու վտանգների արանքում, երբ արդեն մոտ էր Ֆրիդայի վերջը, Կ-ն իր պարզամտությամբ մի վերջին, նեղ ճանապարհ ազատ է թողնում դեռ, և Ֆրիդան ճեղքում է արանքը (հազիվ թե որևէ մեկը հավատար, դա հակաբնական էր), և հանկարծ նա է, որ դեռ

www.a-pdf.com

իրեն սիրող, իրեն հետևող Կ-ին վոնդում է, ընկերների ու օգնականների ճնշման տակ հյուրանոցի տիրոջը ներկայանում է որպես փրկարարուհի՝ իր սկանդալի շնորհիվ ավելի գայթակղիչ, քան էր առաջ, ապացուցելով, որ ինքը ցանկալի է ինչպես ստորիններին, այնպես էլ վերևիններին, ստորինին, սակայն, միայն մի պահ տրվելով, շուտով վանում է նրան ինչպես հարկն է և առաջվա նման անմատչելի է ներքևում գտնվողի համար, այն տարբերությամբ սակայն, որ մարդ այդ անմատչելիությանը առաջ իրավացի կասկածով էր վերաբերվում, մինչդեռ հիմա արդեն համոզված էր։ Նա վերադառնում է, իսկ հյուրանոցի տերը թռուցիկ հայացք գցելով Պեպիի վրա, երկմտում է. արդյոք հարկավո՞ր է ղոհաբերել նրան, ախր նա արդարացրեց իրեն։ Սակայն շուտով նրան համոզում են, շատ բաներ Ֆրիդայի օգտին են խոսում, ամենից առաջ այն, որ նա կկարողանա Կլամմին հյուրերի սենյակ վերադարձնել։ Այսպիսին է վիճակը այս երեկո։ Պեպին չի սպասի, մինչև Ֆրիդան գա ու տեղն ընդունելը իր համար ցնծության վերածի։ Դրամարկղը նա հանձնել է հյուրանոցի տիրուհուն, արդեն կարող է գնալ։ Աղախինների սենյակում անկողնահարկը նրան է սպասում, նա ներքև կգնա, ընկերուհիները լացով կդիմավորեն նրան, նա շորը կպոկի մարմնի վրայից, ժապավենները՝ մազերից, այդ ամենը մի անկյուն կխցկի, այնպիսի մի տեղ, որ աչքից հեռու լինեն ու ավելորդ տեղը չհիշեցնեն այն օրերը, որ մոռանալ է պետք։ Հետո նա կվերցնի մեծ դույլը, ավելը, ատամները կսեղմի ու իր գործին կանցնի։ Մինչ այդ, սակայն, նա պետք է այս ամենը պատմեր Կ-ին, որպեսզի նա, որ առանց կողքից հուշելու նույնիսկ հիմա ոչինչ չէր հասկանա, մի անգամ պարզ տեսներ, թե ինչ զզվելի է վարվել նա Պեպիի հետ ու ինչքան է դժբախտացրել։ Ինչ խոսք, այս ամենին զուգընթաց նրան էլ են միայն չարաշահել։

Պեպին վերջացրեց, խորը շունչ քաշելով նա աչքերից ու այտերից սրբեց արցունքի մի քանի կաթիլը և գլուխն օրորելով այնպես նայեց Կ-ին, կարծես ուզում էր ասել, թե բանն ըստ էության իր դժբախտությունը չէ, ինքը կդիմանա և դրա համար իրեն ոչ օգնություն է հարկավոր, ոչ էլ որևէ մեկի մխիթարանքը, առավել ևս՝ Կ-ինը, չնայած իր ջահելությանը,

www.a-pdf.com

ինքն արդեն ճանաչում է կյանքը, և իր դժբախտությունը միայն հաստատում է իմացածի ճշմարտացիությունը, խոսքն այստեղ Կ-ի մասին էր, նա ուզում էր, որ Կ-ն իմանար, իր բոլոր հույսերի փշրվելուց հետո էլ նա անհրաժեշտ էր համարում պատմել այս ամենը։

— Ինչ վայրի երևակայություն ունես, Պեպի։ —խոսեց Կ-ն։ —Ախր, բոլորովին ճիշտ չէ, որ դու միայն այսօր ես քո պատմածները հայտնագործել, դրանք, ախր, ոչ այլ ինչ են, քան աղախինների ձեր նեղ ու մութ սենյակում ծնված երազներ, որոնց տեղը այնտեղ՝ ներքևում է, մինչդեռ այստեղ, այս աղատ պանդոկում դրանք տարօրինակ են հնչում։ Ախր, պարզից էլ պարզ է, որ նման մտքերով դու չէիր կարողանա այստեղ ամրապնդվել։ Արդեն քո զգեստը, քո սանրվածքը, որոնցով դու պարծենում ես, ձեր սենյակի մթության ու անկողինների ծնունդ են, այնտեղ դրանք, իհարկե, շատ գեղեցիկ կհամարվեն, մինչդեռ այստեղ ամեն մարդ բացահայտ թե ծածուկ կծիծաղի դրանց վրա։ Եվ ի՞նչ ես պատմում դու։ Ուրեմն ինձ չարաշահել են և խաբե՞լ։ Ոչ, սիրելի Պեպի, ինձ նույնքան քիչ են չարաշահել ու խաբել, որքան քեզ։ Ճիշտ է, այժմյան դրությամբ Ֆրիդան լքել է ինձ, կամ ինչպես դու ձևակերպեցիր, օդնականներից մեկի հետ ճղել է արանքը։ Դու միայն ճշմարտության մի երանգն ես տեսնում, բայց իրոք շատ անհավանական է, թե նա իմ կինը էլ էին, բայց միանգամայն սուտ է, որ ես կձանձրանայի նրանից, որ հենց հաջորդ օրը կվոնդեի նրան, կամ որ նա ինձ կխաբեր այնպես, ինչպես կինն է սովորաբար խաբում տղամարդուն։ Դուք՝ աղախիններդ, սովոր եք բանալու անցքից հետևել, և այդտեղից է գալիս ձեր մտածելակերպը. ձեր տեսած մանրուքից փառավոր, բայց սուտուսխալ եզրակացություններ անել ընդհանուրի վերաբերյալ։ Դրա հետևանքն այն է, որ ես, օրինակի համար, այս դեպքի կապակցությամբ ավելի քիչ բան գիտեմ, քան դու։ Ես բոլորովին էլ չեմ կարող քեզ նման ճշգրիտ բացատրել, թե Ֆրիդան ինչու լքեց ինձ։ Ինձ համար ամենահավանական բացատրությունը դու շոշափեցիր, բայց չխորացար. որ ես ուշադրություն չէի դարձնում նրան։ Ցավոք, դա այդպես է, ես ուշադիր չէի նրա հանդեպ, բայց դա էլ իր առանձնահատուկ պատճառներն ուներ, որոնց

մասին այստեղ չի կարելի խոսել. ես երջանիկ կլինեի, եթե նա վերադառնար ինձ մոտ, բայց այդ դեպքում ես անմիջապես կսկսեի անտեսել նրան։ Ճիշտ եմ ասում։ Երբ նա ինձ մոտ էր, ես, ինչպես դու ծաղրանքով ասացիր, թափառում էի, երբ նա հեռացել է, ես անելիք չունեմ համարյա, հոգնած եմ և կատարյալ հանգստության պահանջ ունեմ։ Դու ոչ մի խորհուրդ չե՞ս կարող տալ ինձ, Պեպի։

— Կարող եմ,— հանկարծ աշխուժանալով ու Կ-ի ուսերից քռնելով, ասաց Պեպին։—Մենք երկուսս խաբվածներն ենք, արի միասին լինենք, ինձ հետ միասին աղախինների մոտ արի։

— Քանի դեռ դու խաբված լինելու մասին ես խոսում, չեմ կարող քեզ հետ համաձայնվել։ Դու միշտ ուզում ես խաբված լինել, որովհետև դա դուր է գալիս քեզ և հուզում է։ Ճշմարտությունը, սակայն, այն է, որ դու չես համապատասխանում այս գործին։ Ինչքան հստակ պետք է երևա այդ անհամապատասխանությունը, որ նույնիսկ ես, քո կարծիքով ամենատխմար մարդս, նկատեմ դա։ Դու լավ աղջիկ ես, Պեպի, բայց այնքան էլ հեշտ չէ դա նկատել։ Ես, օրինակ, սկզբում քեզ մռայլ ու գոռող կարծեցի, սակայն դու այդպիսին չես, միայն այս տեղն էր քեզ շփոթեցնում, որովհետև սա քո տեղը չէ։ Ես չեմ ուզում ասել, թե սա շատ բարձր է քեզ համար, սա ախր, ոչ մի առանձնահատուկ տեղ էլ չէ, գուցե թե, եթե ուշադիր նայենք, քո նախկին գործից մի փոքր ավելի պատվաբեր լինի, սակայն ամբողջապես վերցրած, տարբերությունն այնքան էլ մեծ չէ, ավելի շուտ, երկուսն էլ շփոթելու աստիճան նման են իրար։ Այո, նույնիսկ կարելի է պնդել, թե աղախին լինելը գերադասելի է պանդոկից, որովհետև առաջին դեպքում մարդ միշտ քարտուղարների մեջ է, մինչդեռ այստեղ, եթե նույնիսկ հյուրերի սենյակներում քարտուղարների վերադասներին սպասարկելու թույլտվությունը կա, միևնույն ժամանակ ամենացածր ամբոխի հետ է պետք գործ ունենալ, օրինակ՝ ինձ հետ։ Ախր իրավունքի տեսակետից ինձ ուրիշ ոչ մի տեղ չի թույլատրվում մտնել, բացի այստեղից՝ պանդոկից, իսկ ի՞նչ ես կարծում, ինձ հետ շփվելու հնարավորությունը շափից դուրս մե՞ծ պատիվ է։ Գիտես, քեզ միայն թվում է, և դու գուցե հիմքեր ունես դրա համար։

www.a-pdf.com

Հենց այդ պատճառով դու չես համապատասխանում այս տեղին։ Սա էլ մեկ այլ տեղի նման մի տեղ է, բայց քեզ երկնային թագավորություն է թվում, և դրա հետևանքով դու չափազանցված եռանդով ես ամեն ինչ ձեռնարկում. զարդարվում ես այնպես, ինչպես, քո կարծիքով, հրեշտակներն են զարդարված, իրականում, սակայն, նրանք այլ տեսք ունեն, դողում ես այս տեղի վրա, քեզ հալածված ես զգում, փորձում ես բոլորին, ովքեր քո կարծիքով կկարողանային օգնել, չափից դուրս բարյացակամությամբ նվաճել, դրանով, սակայն, խանգարում ես նրանց ու վանում, որովհետև նրանք հյուրանոցում անդորր են ուզում և ոչ թե իրենց հոգսերին վրադիր, նաև սպասուհու հոգսերը լսել։ Հնարավոր է, որ բոլոր հյուրերից ոչ մեկը Ֆրիդայի հեռանալուց հետո չի նկատել այդ իրադարձությունը, այսօր, սակայն, նրանք գիտեն կատարվածի մասին և իրոք երազում են Ֆրիդային, որովհետև Ֆրիդան ամեն ինչ իրոք այլ կերպ էր անում։ Ինչպիսին էլ նա լիներ առօրյայում, ինչպես էլ վերաբերվեր իր տեղին, գործի մեջ նա բազմահմուտ էր, սառն ու տիրական, ջու ախր, ինքդ ես նշում դա, առանց դրանից, համենայնդեպս, որևէ դաս քաղելու։ Դու երբևէ ուշադրություն դարձրե՞լ ես նրա հայացքին. դա այլևս պանդոկի սպասուհու հայացք չէր, ավելի շուտ տիրուհու հայացք էր դա։ Նա տեսնում էր ամեն ինչ և ամեն մեկին առանձին-առանձին, նրա թռուցիկ հայացքն անգամ բավական ուժ ուներ մարդկանց հնազանդեցնելու համար։ Ի՞նչն էր դրա պատճառը. այն, որ նա զուցե մի փոքր նիհար էր, տարիքով մի փոքր մեծ, որ մարդ ավելի լավ մազեր կարող էր ենթադրել, այս բոլորը մանրուքներ են համեմատած այն բանի հետ, ինչ նա ուներ իրականում, և նա, ում այդ թերությունները խանգարեին, դրանով ցույց կտար, որ ինքը չի կարող էական բաները հասկանալ։ Նման բաների համար Կլամմին, իհարկե, չի կարելի նախատել, ու միայն ջահել, անփորձ աղջկա սխալ տեսանկյունն է, որ թույլ չի տալիս հավատալ քեզ Ֆրիդայի հանդեպ ունեցած Կլամմի սիրուն։ Կլամմը քեզ անհասանելի է թվում. և իրականում այդպես է, ու հենց դա է պատճառը, որ դու ենթադրում ես, թե Ֆրիդան չէր կարողանա Կլամմի մոտ գնալ։ Սխալվում ես։ Եթե ես կասկած չհարուցող ապացույցներ չունենայի էլ, էլի

www.a-pdf.com

միայն Ֆրիդայի պատմածներին կհավատայի։ Ինչքան էլ քեզ անհավանական թվա, և դու աշխարհի ու պաշտոնակազմի, վեհության ու կանացի զեղեցկության ազդեցության քո պատկերացումները ի վիճակի չլինես համատեղել, ամեն ինչ եղել է, և ինչպես մենք ենք հիմա իրար կողքի նստած, և ես իմ ձեռքերի մեջ եմ առել քո ձեռքը, հավանաբար այդպես նստած են եղել Ֆրիդան ու Կլամմը, և դա աշխարհի ամենաբնական բանն է թվացել նրանց, և Կլամմը ինքնակամ է ներքև իջել, նույնիսկ շտապել է, ոչ ոք միջանցքում կանգնած, մնացած գործը անտեսելով չի հետևել նրան, Կլամմն ինքն է նեղություն պատճառել իրեն և ներքև իջել, իսկ Ֆրիդայի հագուստների թերությունները, որ սարսափ կներշնչեին քեզ, բոլորովին չեն խանգարել Կլամմին։ Դու չես ուզում հավատալ նրան, չես հասկանում, թե դրանով ինչպես ես վարկաբեկում քեզ, թե ինչպես հենց դրանով ցույց ես տալիս քո անտեղյակությունը։ Եթե մարդ բոլորովին ոչինչ էլ չգիտենար Կլամմի հետ ունեցած կապի մասին, Ֆրիդայի տեսքին նայելով կհասկանար, որ այնպիսի մի մարդ է ձևավորել այն, որ քեզնից էլ, ինձնից էլ, գյուղի ողջ բնակչությունից էլ վեր է, որ նրանց զրույցները չեն սահմանափակվել այն կատակներով, որ ընդունված են հյուրերի ու մատուցողուհիների միջև և քո կյանքի նպատակն են կարծես։ Բայց ես անիրավացի եմ քո հանդեպ։ Դու ինքդ էլ շատ լավ գիտես Ֆրիդայի առավելությունները, մարդկանց ճանաչելու կարողությունը, որոշում ընդունելու նրա վճռականությունը, մարդկանց վրա թողած ազդեցությունը, միայն թե դու ամեն ինչ սխալ ես մեկնաբանում, կարծում ես, թե նա դրանք շահադիտական նպատակներով հօգուտ իրեն և ի չարս քեզ է օգտագործում կամ նույնիսկ որպես զենք՝ ուղղված քո դեմ։ Ոչ, Պեպի, եթե նա նման զենք էլ ունենար, այսպիսի կարճ տարածության վրա չէր կարողանա արձակել դրանք։ Իսկ շահադիտությունը։ Ավելի շուտ կարելի է ասել, որ նա զոհաբերելով այն, ինչ ուներ և այն, ինչ իրավունք ուներ ակնկալել, մեզ երկուսիս հնարավորություն տվեց պայքարել ավելի բարձր դիրքի հասնելու համար, բայց մենք երկուսս էլ հիասթափեցրինք նրան և խպատես ստիպեցինք նորից իր տեղը վերադառնալ։ Չգիտեմ, արդյո՞ք դա

www.a-pdf.com

այդպես է, ես էլ չեմ հասկանում իմ մեղքը, միայն թե, երբ համեմատում եմ ինձ քեզ հետ, նման մի պատկեր էլ ինձ համար է պարզ դառնում, և թվում է, թե մենք երկուսս էլ չափազանց մեծ աղմուկով, երեխայավարի և միամիտ ձևով, լացելով, ճանկռոտելով ու քաշքշելով էինք ձգտում որևէ բանի հասնել, այնպես, ինչպես երեխան է սեղանի սփռոցից քաշում, բայց ոչինչ չի շահում, այլ ողջ սպասքն է հատակին գցում և ընդմիշտ անհասանելի դարձնում իր համար, մինչդեռ կարելի էր Ֆրիդայի հանդիստ պահվածքով ու գործնականությամբ ամեն ինչ հեշտ ու անաղմուկ անել: Ես վստահ չեմ, արդյո՞ք այս ամենն իմ ասածի պես է, բայց որ ավելի շուտ այսպես է, ու ոչ այնպես, ինչպես դու ես ներկայացնում, համոզված եմ:

— Բա իհարկե, դու սիրահարվել ես Ֆրիդային, որովհետև նա փախել է քեզնից,— ասաց Պեպին:— Դժվար չէ սիրահարվել նրան, երբ նա արդեն այստեղ չէ: Բայց թող լինի ինչպես դու ես ուզում և թող քո ասածներն էլ ճիշտ լինեն նաև այն հարցում, որ դու ծիծաղելի ես դարձնում ինձ: Ի՞նչ ես անելու սրանից հետո: Ֆրիդան լքել է քեզ, դու ոչ ըստ իմ ներկայացրածի, ոչ էլ ըստ քոնի հույս չունես, թե նա կվերադառնա, իսկ եթե նույնիսկ դա էլ, մինչև նրա վերադառնալը ժամանակը պետք է մի տեղ անցկացնես. դրսում ձմեռ է, ո՛չ աշխատանք ունես, ո՛չ քնելու տեղ: Արի մեզ մոտ, իմ ընկերուհիները դուր կգան քեզ, մենք այնպես կանենք, որ քեզ համար հաճելի լինի, դու մեզ գործի մեջ կօգնես, աղջիկների համար այդ գործն, իրոք, շատ ծանր է, մենք՝ աղջիկներս, ստիպված չենք լինի հույսներս մեզ վրա դնել և գիշերներն էլ չենք վախենա: Արի մեզ մոտ: Իմ ընկերուհիներն էլ են Ֆրիդային ճանաչում, մենք նրա մասին այնքան բան պատմենք քեզ, որ դու ձանձրանաս դրանից: Արի: Ֆրիդայից նկարներ էլ ունենք, քեզ ցույց կտանք: Այն ժամանակ Ֆրիդան ավելի հասարակ էր, քան հիմա, դու հազիվ թե ճանաչես նրան, եթե ճանաչես էլ, ապա միայն աչքերից, որ դեռ այն ժամանակ էին դեմքի վրա խաղում: Դե ի՞նչ, կգա՞ս:

— Մի՞թե կարելի է: Ախր երեկ մի մեծ սկանդալ բարձրացավ այն պատճառով, որ ինձ ձեր միջանցքում բռնացրին:

— Որովհետև ձեզ բոնացրին, իսկ եթե մեզ մոտ լինեն, քեզ ոչ ոք չի բռնի։ Մեր երեքից բացի ոչ ոք չի իմանա քո մասին։ Իրոք, շատ ուրախ կլինի։ Արդեն հիմա պատկերացնում եմ, որ երբ գաս, կյանքն ավելի տանելի կլինի, քան որոշ ժամանակ առաջ էր։ Եթե դու գաս, ես գուցե այնքան էլ շատ բան չկորցնեմ, երբ այստեղից հեռանամ։ Լսիր, երբ մենք երեքով էինք, էլի չէինք ձանձրանում. մարդ պետք է կարողանա իր դառը կյանքը քաղցրացնել, ախր մեր փոքր հասակից այն դառն է եղել, մենք՝ երեքս, միշտ մեկտեղ ենք, այնպես լավ ենք ապրում, այսինքն՝ այնտեղի հնարավորության սահմաններում։ Հատկապես Հենրիետան դուր կգա քեզ, Էմիլիան էլ։ Ես նրանց արդեն պատմել եմ քո մասին, այնտեղ այդպիսի պատմություններին անհավատալի հետաքրքրությամբ են ականջ դնում, նրանց թվում է, թե սենյակից դուրս չի կարող ոչ մի բան պատահել, այնտեղ նեղ է ու տաք, և մենք ավելի ուժեղ են հպվում իրար։ Ոչ, թեև մենք երեքով ենք այնտեղ, բայց իրարից չենք ձանձրանում, ընդհակառակը, երբ ես ընկերուհիներիս մասին եմ մտածում, իսկապես գոհ եմ, որ վերադառնում եմ։ Ինչո՞ւ պետք է ես նրանցից վեր լինեմ։ Ախր մեզ հենց այն էր միավորում, որ երեքիս բախտն էլ նույն ձևով փակված էր, մինչդեռ ես ճեղք էի բացել ու մեկուսացել նրանցից։ Իհարկե, ես չեմ մոռացել նրանց, իմ հաջորդ մտածմունքն այն էր, թե ինչպե՞ս կարող էի նրանց համար որևէ բան անել, իմ սեփական դիրքը դեռ հաստատ չէր (ես բոլորովին չգիտեի, թե ինչքան անհաստատ էր այն), բայց հյուրանոցի տիրոջ հետ արդեն խոսել էի Հենրիետայի և Էմիլիայի մասին։ Հենրիետայի հարցում հյուրանոցի տերը շատ մեծ առարկություններ չուներ, իսկ Էմիլիայի համար, որ մեզնից շատ ավելի տարիքով է (նա համարյա Ֆրիդայի տարիքին է), ոչ մի բան չխոստացավ։ Բայց պատկերացրու, նրանք չեն ուզում հեռանալ այնտեղից, գիտեն, որ այնտեղ ողորմելի կյանքով են ապրում, բայց նրանք, այդ բարի հոգիները, վարժվել են արդեն, և ես կարծում եմ, որ հրաժեշտի ժամանակ նրանց արցունքների պատճառը տխրելն էր, նրանք տխրում էին, որ ես պետք է մեր սենյակից հեռանայի, ցուրտ տեղ գնայի (այնտեղ ամեն ինչ, ինչ մեր սենյակից դուրս է, ցուրտ է

թվում) և մեծ ու անծանոթ սրահներում մեծ ու անծանոթ մարդկանց հետ պետք է շփվեի, և դա անեի ոչ ուրիշ նպատակով, քան կյանքը ձգելու համար, մի բան, որ մինչ այդ մեր ընդհանուր սենյակում էլ էր հաջողվել ինձ։ Նրանք հավանաբար բոլորովին չզարմանան, երբ ես վերադառնամ և միայն իմ վիճակը հասկանալով գուցե մի քիչ լաց լինեն ու իմ բախտից գանգատվեն։ Հետո, սակայն, երբ տեսնեն քեզ, կհասկանան, որ լավ էր, որ ես հեռացա սենյակից։ Այն, որ հիմա որպես օգնական ու ապավեն մի տղամարդ կունենանք, կուրախացնի նրանց, և նրանք կհրճվեն այն մտքից, որ այդ ամենը գաղտնիք է մնալու, իսկ մենք այդ գաղտնիքի շնորհիվ ավելի ամուր կկապվենք իրար հետ, քան էինք մինչ այժմ։ Արի, խնդրում եմ, արի մեզ մոտ։ Քեզ համար ոչ մի պարտավորվածություն չի ստեղծվի, դու մշտապես կապված չես լինի մեր սենյակին, ինչպես որ մենք ենք։ Երբ գարունը գա և դու մի ուրիշ տեղ ապաստան գտնես և մեր սենյակն այլևս դուր չգա քեզ, կարող ես գնալ, սակայն գաղտնիքը, ինչ ուզում է լինի, պետք է գաղտնիք մնա, չպետք է մատնես մեզ, որովհետև եթե մեկնումեկը իմանա, դա կլինի մեր՝ հյուրանոցում մնալու վերջին ժամը, և, ընդհանրապես, մեզ մոտ եղած ժամանակ, իհարկե, պետք է զգույշ լինես, չերևաս այն տեղերում, որ մենք անվտանգ չենք համարում և պետք է հետևես մեր խորհուրդներին։ Քեզ կաշկանդող մի բան սա կլինի և պետք է քեզ համար նույնքան կարևոր լինի, որքան մեզ համար, իսկ ընդհանրապես դու ազատ ես, քո գործը դժվար չի լինի, դրա համար չվախենաս։ Ուրեմն ի՞նչ, կգա՞ս։

— Ինչքա՞ն ժամանակ կա մինչև գարունը։

— Մինչև գարո՞ւնը։ Մեզ մոտ ձմեռը միապաղաղ է ու երկար։ Սակայն մեր միջանցքում դրանից բողոք չունենք, ձմռանից մենք ապահովված ենք։ Երբևէ գարունն էլ կգա, ամառն էլ, դա էլ, իհարկե, իր ժամանակն ունի, բայց հիմա, երբ հիշում եմ, գարունն ու ամառը այնքան կարճ են թվում, կարծես երկու օրից ավել չեն եղել և նույնիսկ այդ օրերին, նույնիսկ ամենալավ օրը մեկ-մեկ ձյուն էր գալիս։

Այդ պահին դուռը բացվեց։ Պեպին ցնցվեց. մտովի նա շատ էր հեռացել պանդոկից, բայց ներս մտնողը Ֆրիդան

www.a-pdf.com

չէր, այլ՝ հյուրանոցի տիրուհին։ Նրան չզարմացրեց այն, որ Կ-ն դեռ այստեղ է։ Կ-ն իր ներկայությունը բացատրեց նրանով, որ տիրուհուն էր սպասել, միաժամանակ շնորհակալ էր, որ իրեն թույլատրվեց այստեղ դիշերել։ Հյուրանոցի տիրուհին չհասկացավ, թե Կ-ն ինչո՞ւ է սպասել նրան։ Կ-ն ասաց, թե իրեն այնպես է թվացել, որ հյուրանոցի տիրուհին դեռ ուզում է խոսել իր հետ, սակայն եթե սխալվել է, ներողություն է խնդրում։ Ի դեպ, ինքն հիմա գնալու է, որովհետև երկար ժամանակ անտեր է թողել դպրոցը, ուր ինքը ծառա է աշխատում։ Կատարված ամեն ինչի մեղավորը երեկվա ծանուցագիրն էր, նման հարցերում նա բավական փորձ չուներ և այդպիսի բաներ, իհարկե, այլևս չեն կրկնվի, ինքը հյուրանոցի տիրուհուն երեկվա տհաճությունները չի պատճառի։ Կ-ն խոնարհվեց ու ցանկացավ հեռանալ։ Հյուրանոցի տիրուհին այնպիսի հայացքով նայեց նրան, կարծես երազի մեջ էր, և նրա հայացքն էր մեղավոր, որ Կ-ն ավելի երկար մնաց, քան ցանկանում էր։ Հիմա նա ևս թեթևակի ժպտաց և կարծես միայն Կ-ի զարմացած դեմքին նայելուց հետո արթնացավ։ Թվաց, թե նա սպասում էր, որ Կ-ն էլ կժպտա ի պատասխան, բայց որովհետև Կ-ն չժպտաց, նա արթնացավ։

— Իմ կարծիքով երեկ դու հանդգնություն ունեցար ինչ-որ բան խոսել իմ զգեստի մասին,— ասաց հյուրանոցի տիրուհին։ Կ-ն չէր հիշում, թե երեկ այդպիսի բան է ասել։

— Չե՞ս հիշում։ Իհարկե, հանդգնությանը վախկոտություն է հաջորդում։

Կ-ն դա բացատրեց երեկ հոգնած լինելով, շատ հնարավոր էր, որ ինքը երեկ ինչ-որ բան էր դուրս տվել, բայց հիմա այլևս չի կարողանում հիշել։ Ինքն ի՞նչ կարող էր ասած լինել հյուրանոցի տիկին տիրուհու զգեստների մասին։ Այն, որ դրանք շատ գեղեցիկ են, և ինքը այդպիսիք դեռ երբեք չի՞ տեսել։ Ինքը դեռ երբեք հյուրանոցի նման տիրուհու չի տեսել, ով այդպիսի շորերով աշխատեր։

— Դադարեցրու քո դիտողությունները։ Ես քեզնից ոչ մի բան չեմ ուզում լսել շորերի մասին։ Իմ շորերը քո մտածելու բանը չեն։ Ես քեզ այժմ և ընդհանրապես արգելում եմ,— արագ ասաց հյուրանոցի տիրուհին։

Կ-ն մի անգամ էլ խոնարհվեց ու գնաց դեպի դուռը։

www.a-pdf.com

— Դու այդ ի՞նչ ասացիր,— Կ-ի հետևից բացականչեց նա։ —Ինչպե՞ս թե դու հյուրանոցի ոչ մի տիրուհու չես տեսել, ով այդպիսի շորերով աշխատի։ Ի՞նչ են նշանակում այդ անիմաստ նկատողությունները։ Միանգամայն անիմաստ խոսքեր են. ի՞նչ ես ուզում ասել դրանով։

Կ-ն շրջվեց ու հյուրանոցի տիրուհուց խնդրեց չհուզվել։ Իր նկատողությունն, իհարկե, անիմաստ էր։ Ինքն, ախր, ոչինչ չի հասկանում շորերից։ Նրա այժմյան վիճակում ամեն մի մաքուր և կարկատան չունեցող շոր արժեքավոր է։ Նրան միայն զարմացրել էր այն, որ հյուրանոցի տիկին տիրուհին այդպիսի գեղեցիկ երեկոյան զգեստով երևացել էր կիսով չափ հագնված տղամարդկանց մեջ։ Ուրիշ ոչինչ։

— Տեսնո՞ւմ ես, կարծես հիմա վերջապես հիշում ես երեկվա խոսքերդ և հիմա ուրիշ հիմարություններով ես լրացնում։ Այն, որ ոչինչ չես հասկանում շորերից, ճիշտ է, և ես ուզում եմ քեզ լրջորեն խնդրած լինել, որ դու այլևս կարծիքներ չհայտնես, թե որոնք են արժեքավոր շորերը, որոնք ոչ պատեհ գիշերային զգեստներ և այլն։ Իսկ ընդհանրապես,— այս պահին թվաց, թե նրա մարմնով սառը սարսուռ անցավ,— դու չպետք է իմ շորերով զբաղվես, լսո՞ւմ ես։

Եվ երբ Կ-ն անխոս ուզեց նորից շրջվել, հյուրանոցի տիրուհին հարցրեց.

— Իսկ որտեղի՞ց է զգեստների քո իմացությունը։—Կ-ն ուսերը թոթվեց. շորերից ինքը ոչինչ չի հասկանում։—Եթե ոչինչ չես հասկանում, ապա չպետք է երևակայես։ Արի դրասենյակ, ես որոշ բաներ ցույց կտամ քեզ և հուսով եմ, որ դրանից հետո դու ընդհանրապես կդադարեցնես քո հանդգնությունները։ —Հյուրանոցի տիրուհին դռան միջով առաջ անցավ, Պեպին ցատկեց Կ-ի կողմը, պատճառ բռնելով, թե Կ-ից վճարն է վերցնելու, և նրանք արագ պայմանավորվեցին, որովհետև շատ հեշտ էր. Կ-ն գիտեր այն բակը, որի դարպասը դեպի կողքի փողոցն էր տանում, դարպասի կողքին մի ցածրիկ դռնակ կար, մի ժամից Պեպին այդ դռնակի հետևում կսպասեր և երեք թակոցից հետո կբացեր։

Դրասենյակը գտնվում էր պանդոկին դեմհանդիման, հարկավոր էր միայն միջանցքն անցնել. հյուրանոցի տիրու-

www.a-pdf.com

հին արդեն կանգնել էր լուսավորված գրասենյակի մեջ և անհամբեր սպասում էր Կ-ին։ Բայց նա մի քիչ էլ էր սպասելու. Գերշտեկերը կանգնած էր միջանցքում և ուզում էր Կ-ի հետ խոսել։ Նրանից ազատվելը հեշտ չէր, հյուրանոցի տիրուհին էլ օգնության եկավ ու պնդերեսության համար հանդիմանեց Գերշտեկերին։

— Այդ ո՞ւր, այդ ո՞ւր։—Երբ դուռն արդեն փակ էր, լսվեց Գերշտեկերի ձայնը, և նրա բառերը զգալիորեն խառնվեցին հազին ու տնքոցներին։

Գրասենյակը փոքր ու չափից դուրս շատ տաքացված սենյակ էր, նեղ պատերի մոտ դրված էին ամբիոնաձև գրասեղանը, երկաթյա դրամարկղը, լայն պատերի մոտ մի պահարան կար և օթոց։ Ամենից մեծ տարածություն պահարանն էր զբաղեցնում. ոչ միայն այն պատճառով, որ նա լայն պատերից մեկն էր անմնացորդ լցրել. լայն լինելով, նա շատ տեղ էր գրավում, այն լրիվ բացելու համար պետք էր երեք հրովի դուռ բացել։ Հյուրանոցի տիրուհին ցույց տվեց օթոցը. այնտեղ կարող էր Կ-ն տեղ զբաղեցնել, իսկ ինքը նստեց ամբիոնաձև գրասեղանի մոտ դրված պոտվող բազկաթոռին։

— Դու երբեք դերձակություն չե՞ս սովորել,—հարցրեց նա։

— Ոչ, երբեք։

— Իսկապես ո՞վ ես դու։

— Հողաչափ։

— Դա ի՞նչ բան է։—Կ-ն բացատրեց, բայատրությունը հյուրանոցի տիրուհուն ստիպեց հորանջել։ —Դու ճշմարտությունը չես պատմում, ինչո՞ւ ճշմարիտը չես խոսում։

— Դու էլ չես խոսում։

— Ե՞ս։ Դու նորից ես սկսում քո հանդգնությունը։ Ենթադրենք, թե ես ճիշտ չեմ ասում։ Ես, ինչ է, պատասխանատո՞ւ եմ քո առաջ։ Եվ ո՞ր բանն է, որ ես սուտ եմ ասում։

— Դու միայն հյուրանոցի տիրուհի չես, ինչպես դու ես ներկայանում։

— Սրան տես։ Դու լիքն ես հայտնագործություններով։ Եվ էլ ի՞նչ եմ ես։ Քո հանդգնություններն իսկապես չափն անցնում են արդեն։

— Չգիտեմ, թե էլ ինչ ես դու, միայն տեսնում եմ, որ դու

www.a-pdf.com

հյուրանոցի տիրուհին ես, բայց այնպիսի շորեր ես հագնում, որ տիրուհուն չեն համապատասխանում, և, ինչքան ես գիտեմ, այս գյուղում էլ ոչ ոք այդպես չի հագնվում։

— Հիմա արդեն գալիս ենք բուն թեմային։ Դու ախր, չես կարող թաքցնել, գուցե դու բոլորովին էլ հանդուգն չես, պարզապես ոնց որ երեխա լինես, որ մի հիմար բան է լսել և ոչ մի կերպ չի կարելի նրան լռեցնել։ Դե խոսիր, ո՞րն է այդ շորերի առանձնահատկությունը։

— Կզայրանաս եթե ասեմ։

— Ոչ, ես կծիծաղեմ դրանց վրա, դա, անշուշտ, երեխայական բան կլինի։ Ուրեմն, ինչպիսի՞ն են իմ զգեստները։

— Դու ես ուզում իմանալ։ Իհարկե, դրանք լավ կտորից են կարված, բավական թանկարժեք, բայց հնացած են, պահուճազարդ, հաճախ օգտագործված ու վերաձևված և ոչ քո տարիքին են համապատասխանում, ոչ տեսքիդ, ոչ դիրքիդ։ Հենց առաջին անգամ, երբ քեզ տեսա, նկատեցի իսկույն. դա մի շաբաթ առաջ էր, միջանցքում։

— Ուրեմն այդպես ես ասում։ Դրանք հնացած են, պահուճազարդ և էլի՞ ինչ։ Եվ որտեղի՞ց գիտես դու այդ ամենը։

— Այն, ինչ ես տեսնում եմ, դրա համար ուսում պետք չէ։

— Դա դու առանց այդ էլ տեսնում ես։ Դու կարող ես ոչ մի տեղ չհարցնել և իսկույն իմանալ, թե ինչ է պահանջում նորաձևությունը։ Եթե այդպես է, դու անփոխարինելի մարդ ես ինձ համար, որովհետև ես թուլություն ունեմ գեղեցիկ շորերի հանդեպ։ Իսկ ի՞նչ կասես, որ այս պահարանը լիքն է շորերով։

Նա դռները կողքի հրեց, և երևացին իրար կիպ կախված շորերը՝ պահարանի ողջ լայնությունը սեղմ լցրած։ Դրանք մեծ մասամբ սև, գորշ, շագանակագույն, մուգ գույնի շորեր էին, բոլորն էլ հոգատարությամբ կախված, ծալքերը բացած։

— Սրանք իմ շորերն են, բոլորն էլ հնացած, ծանրաբեռնված, ինչպես դու ես ասում։ Սակայն սրանք այն շորերն են, որոնց համար ես վերևի իմ սենյակում տեղ չունեմ, այնտեղ ես երկու լիքը պահարան ունեմ, ամեն մեկն էլ սրա չափ մեծ։ Զարմանո՞ւմ ես։

www.a-pdf.com

— Ոչ, ես սպասում էի դրան։ Ասացի ախր, դու ոչ միայն հյուրանոցի տիրուհի ես, այլ նաև ուրիշ բանի էլ ես ձգտում

— Իմ ձգտումը միայն լավ հագնվելն է, իսկ դու կամ հիմար ես, կամ երեխա, կամ էլ շատ չար ու վտանգավոր մարդ։ Գնա, հիմա արդեն գնա։

Կ-ն միջանցք դուրս եկավ, Գերշտեկերը բռնեց նրա թևքից, երբ հյուրանոցի տիրուհին ձայն տվեց նրա հետևից.

— Վաղը ես նոր զգեստ եմ վերցնելու։ Գուցե դու գնաս այն բերելու։

www.a-pdf.com

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Այս կետում, որ կարևոր, հերոսի համար բախտորոշ պարտություն է նշանակում, Ֆրանց Կաֆկայից ժառանգություն մնացած վեպը դեռ չի ավարտվում, այլ շարունակվում է բավական ժամանակ: Առաջին պարտությանը նախ մեկն էլ է ավելանում: Առաջին անգամ դղյակի քարտուղարը բարեկամաբար է խոսում Կ-ի հետ, ու, թեև պաշտոնյայի տրամադրվածությունը որոշ կասկածներ է առաջացնում, այնուամենայնիվ, սա առաջին դեպքն է, որ դղյակի ներկայացուցիչը բարի կամք է դրսևորում, նույնիսկ պատրաստակամություն է հայտնում միջամտել դեպքերի ընթացքին և օգնել Կ-ին՝ ինչի համար ինքը, իհարկե, իրավասու չէ, և հենց սա է հետաքրքիրը: Սակայն Կ-ն շատ հոգնած է ու քնատ, որ կարողանա ընդհանրապես վերլուծել այս առաջարկը: Վճռական պահին նրա մարմինը չի հնազանդվում, սրան հաջորդում են տեսարաններ, ուր Կ-ն գնալով ավելի է խճողվում-հեռանում իր նպատակից: Այս բոլոր դրվագները իրենց նախապայմաններն ունեն, կառուցված են սկզբնական ժամանակահատվածում, և, որովհետև ավարտված չէին, ես դրանք թողեցի եզրափակող հատորի համար, ինչպես վարվել եմ «Դատավարություն» վեպի անավարտ մնացած գլուխների հետ:

Վեպը եզրափակող գլուխը Կաֆկան չի գրել, սակայն մի անգամ, իմ այն հարցին, թե ինչպես է ավարտվելու գործը, նա ասաց. տվյալ հողաշափի պահանջը գոնե մասամբ բավարարվում է: Նա իր պայքարում տեղի չի տալիս, բայց, ուժասպառ լինելով՝ մեռնում է: Համայնքը հավաքվում է նրա մահճի շուրջը, և այդ պահին դղյակից որոշում է գալիս, որ թեև Կ-ի՝ գյուղում ապրելու պահանջը հիմնավորված չէ, սակայն որոշ հանգամանքներ հաշվի առնելով, նրան թույլատրում են ապրել ու աշխատել այստեղ: Այսինքն՝ գործն ավարտվելու է Գյոթեի «...ով անդադրում ինչ-որ մի բանի է ձգտում, արժի, որ մենք նրան հասնենք» տողին համահունչ (թեև բավական հեռու է ու, միաժամանակ, իրոնիայով հաստված որոշակի մինիմումի), և սա կարելի է որակել որպես Ֆրանց Կաֆկայի Ֆաուստ-ստեղծագործություն: Իհարկե, սա էլ մի Ֆաուստ է՝

միտումնավոր համեստ, նույնիսկ ադֆատիկ հանդերձներով ու այնպիսի էական կերպարանափոխությամբ, որ այս նոր Ֆաուստին առաջնորդում են ոչ թե գերագույն նպատակներն ու մարդկության բացառիկ հանճարությունը, այլ կյանքի նախապայմանի ամենատարրական կարիքները. ապաստան ու զորձ ունենալ, համայնքի անդամ համարվել: Կերպարների միջև եղած տարբերությունը առաջին հայացքից շատ մեծ է թվում, բայց երբ մարդ զգում է, թե տարրական նպատակները Կաֆկայի համար ինչպիսի նշանակություն են ձեռք բերում ու պարզապես իսկական կյանք, իրական ուղի դառնում, այդ տարբերությունը նկատելիորեն փոքրանում է:

«Դատավարություն» վեպը լույս ընծայելու ժամանակ ես դիտավորյալ խուսափել եմ իմ գրած վերջաբանում գործի բովանդակության մասին ինչ-որ մեկնաբանություն կամ այդ բնույթի որևէ բան ավելացնել: Հետո, երբ քննադատական հոդվածներում շատ հաճախ ակնհայտ սխալ բացատրություններ էին ներկայացվում, թե Կաֆկայի «Դատավարություն» վեպում իրադարձությունների ընթացքն այն մասին է, որ արդարադատության բերությունները են ձայկվում, ես զղջացի իմ դիտավորությունն, ու, սակայն, գուցե թե ավելի զղջալի, եթե որոշ մեկնաբանություններ տված լինեի ու. այդուհանդերձ, հնարավոր չլիներ խուսափել սովորական, մակերեսային ընթերցողի մոտ ձևավորված սխալ տպավորությունից:

Այլ է բանն այս դեպքում: «Դղյակ» վեպն ակնհայտորեն այնքան էլ մոտ չէ տպագրության պատրաստ վիճակին, ինչպես որ «Դատավարությունն» էր, թեև նիշտ և նիշտ «Դատավարություն» վեպի նման, անկախ արտաքին անավարտ տեսքից, ներքուստ անմնացորդ ազդում է զգացմունքների այն շրջանակին, որ արտահայտել է ուզում հեղինակը: Այս ունակությունը պատկանում է Կաֆկայի ստեղծագործական արվեստի գաղտնիքներին ու նրա բացարձակ նզակիությանը, և անավարտ մեծ վեպերի իսկական ընթերցողի համար որոշակի պահից սկսած՝ ուր տեսակետները համարյա առանց պակասությունների են տրված, արտաքին ավարտուն տեսքը կորցնում է իր կարևորությունը: Համենայնդեպս, այն վիճակով, որ «Դատավարություն» վեպն էր գտնվում, ավարտունությունը կարելի էր ավելի հեշտ անտեսել, քան այս անգամ: Եթե որևէ պատկեր մոտենում է ավարտուն տեսք ունենալուն, ապա դրա համար այլևս ոչ մի օժանդակ գիծ անհրաժեշտ չէ, իսկ եթե այն անավարտ է, ապա իրավացիորեն օգտագործվում են օժանդակ գծերն ու ձևքի տակ եղած մյուս միջոցները, գրառումները, որպեսզի հնարավոր լինի պատկերացնել նկարագրությունների հավանական ընթացքը շարունակության մեջ: Ինքնին հասկանալի է, որ գլուխգործոցնկարագրությունը մարդ երբեք չի շփոթի կամ խառնի օժանդակ գծերի, ակնարկումների և ուրիշ միջոցների հետ:

Այդպիսի օժանդակ միջոցներից մեկը, որ «Դղյակ» վեպում այնքան էլ անարժեք չէ, ինչպես «Դատավարությունում», մեզ վերադարձնում է «Դատավարություն» վեպին: Երկու գործերի միջև եղած կապը ակնհայտ է, և միայն հերոսների անունների նմանությունը չէ (Յոզեֆ Կ. «Դատավարության» մեջ և Կ.՝ «Դղյակում») այդ կապը մատնանշողը: (Այստեղ հարկ է հիշատակել, որ «Դղյակ» վեպը սկզբում թվում է, թե առաջին դեմքով է

www.a-pdf.com

շարադրվել, հետո գրողն ինքն է առաջին գլուխները այնպես ձևափոխել, որ ամենուր «ես»-ի փոխարեն «Կ» է գրվել, իսկ մնացած գլուխները անմիջապես գրվել են այդպես:) Էականն այն է, որ «Դատավարության» մեջ հերոսը իշխանության անտեսանելի ու խորհրդավոր մարմնի կողմից հալածվում է, դատարան կանչվում, իսկ «Դղյակ» վեպում նույն մակարդակի օրգանի կողմից հետ է մղվում: Յոզեֆ Կ-ն թաքնվում է, փախչում, Կ-ն հարձակվում է, առաջ մղվում, և չնայած հակադիր ուղղվածություններին՝ հիմնական զգացումները նման են: Օրինակ, ի՞նչ է իրենից ներկայացնում «Դղյակն» իր տարօրինակ բդբպպանակներով, պաշտոնյաների՝ ոչ մի բացատրության չենթարկվող գերիշխանությամբ, իրենց կամակորություններով ու խարդավանքներով, հարգանքի և ուշադրության, անվերապահ հնազանդության վերաբերյալ իրենց պահանջով, անպայման արդարացված պահանջով: Զբաղեցնելով հատուկ մեկնաբանություններ, որոնք կարող են միանգամայն ճիշտ լինել, և, սակայն, պարփակված են այս արտաքին հատկանիշներով, ինչպես չինական փորագրության մեջ է մի մարմինը փորագրվում մյուսի մեջ, այս «դղյակը»՝ դեպի ուր տանող ոչ մի ճանապարհ չի գտնում Կ-ն, և որին անհասկանալիորեն չի կարող մոտենալ ոչ մի անգամ, հենց այն է, ինչ աստվածաբաններն անվանում են «ողորմություն», մարդկային կյանքի (գյուղի) աստվածային տնօրինում, պատահականությունների, խորհրդավոր որոշումների, շնորհ անելու և վնաս պատճառելու ունակություն, չվաստակվածն ու ձեռք չբերվածը, բոլորի կյանքի վրա տարածվող «*non liquet*»: Այսպես են «Դատավարությունում» և «Դղյակում» ներկայացվում աստվածության (լիակատար կախման իմաստով) դրսևորման երկու ձևերը՝ պատիժն ու ողորմությունը:

Զգտելով արմատավորվել գյուղում՝ դղյակի ստորոտում, Կ-ն ուզում է միասնության մեջ մտնել աստվածային ողորմության հետ, նա որոշակի շրջանակներում պայքարում է աշխատանքի տեղ ստանալու համար, ուզում է մասնագիտական ընտրության և ամուսնական կապի միջոցով ամրացնել իր դիրքերը, լինելով «օտար», այսինքն՝ այնպիսի մեկը, ով տարբերվում է մյուս բոլորից, նա ձգտում է մեկուսացված վինակի մեջ գտնվելով անգամ, հասնել այն բաներին, ինչ հենց այնպես, առանց առանձնահատուկ ճիգ ու ջանքերի, տրվում է տաճկակ հաղթաթղթերի: Իմ նմանատիպ բնկալման համար կարևոր դեր ունի այն, թե Կաֆկան ինչպիսի խոր ապավորվածությամբ մի անգամ ինձ պատմեց Ֆլոբերի զարմանքը՝ իր նամակագրության հերածականում (XLII) գտեղված անեկդոտը, որ հետևյալ բովանդակությունն ունի. «Իր կյանքի վերջին տարիներին նա (Ֆլոբերը) չի՞ ափսոսացել, որ աորյա փաղոցը չի բնտրել: Ես համարյա կարող էի այսպես մտածել, երբ շնիշնի մի անգամ, երբ մենք տուն էինք վերադառնում Սենայի ափով, նրա արտասանած համակող խոսքերը. մենք վերադառնում էինք իմ մի ընկերուհու բնակարանից, ուր ընկերուհուս գտել էինք շքեղ երեխաներով շրջապատված: «Նրանք իրավացի են» ասաց նա՝ նկատի ունենալով այդ հարգված ու լավ ընտանիքը»:

Ինչպես «Դատավարությունում», Կ-ն ձգտում է իր կողմը գրավել կա-

www.a-pdf.com

ճանց, որ պետք է իրեն ցույց տային նշմարիտ ճանապարհը, ապրելու նշմարտացի հնարավորությունները, և, իհարկե, այնպես ցույց տային, որ բացառվեր ամենայն կեղծն ու կիսատը, սուտ թվացող ամեն ինչը, որովհետև հակառակ դեպքում Կ-ն հավանություն չէր տա նման ապրելակերպին, և նրա հենց այս խստությունն է, որ հանում սիրո և համայնքի անդամ դառնալուն արժանանալու պայմարը վերածում է հավատի պայմարի: Վեպի մի մասում, ուր Կ-ն գերագնահատում է իր հաջողությունները, ինքն է ներկայացնում իր նպատակը. «Ինչքան էլ դա անհնարին թվա, ես արդեն տուն ունեմ, պաշտոն և իսկական աշխատանք, ունեմ մի հարսնացու, ով, երբ ես ուրիշ գործով զբաղված լինեմ, ինքը կանի իմ աշխատանքը, և ես կամուսնանամ նրա հետ ու համայնքի անդամ կդառնամ»: Վեպի բառերով արտահայտված՝ «կանայք դղյակի հետ կապ ունեն», և հենց այդ կապերի մեջ է կա՛ռանում նրանց կարևորությունը, և հենց այստեղից էլ երկու կողմերի՝ կնոջ և տղամարդու համար առաջանում են սխալի տանող հետևանքներ, ինչպես նաև երկուսին առնչվող շատ իրական ու թվացյալ անիրավացիություններ: Ձեռագրի ջնջված հատվածներից մեկը պատմում է (այն, որ նրա ձեռագրերում ջնջված հատվածները նույնքան գեղեցիկ ու կարևոր են, ինչպես և մնացյալ բոլոր մասերը, նույնպես ապացուցում է Կաֆկա ստեղծագործողի ինքնատիպությունը, և մարգարեանալու մեծ ունակություն պետք չէ կանխագուշակելու համար, որ եկող սերունդներից մեկնումեկը նույնիսկ այդ ջնջված հատվածները կհրապարակի),— ուրեմն ջնջված հատվածում, ուր խոսքը Պեպիի մասին է, այսպիսի տողեր կան. «Նա պետք է խոստովաներ, որ ինքը, եթե Ֆրիդայի փոխարեն այստեղ հանդիպած լիներ Պեպիին ու ենթադրեր, թե նա էլ որոշակի կապեր ունի դղյակի հետ, նույնպիսի գրկախառնություններով կփորձեր իր կողմը ձգել գաղտնիքը, ինչպես որ հարկ էր եղել վարվել Ֆրիդայի հետ»:

Ողջ իրականությունը, անկախ բշնամական տրամադրվածությունից, արտահայտվում է գյուղի խուրտուղար Մոմուսի կազմած արձանագրության մի հատվածում, որ հետո ջնջվել է: Այդ հատվածը կարելի է ներկայացնել որպես ամբողջի հանդեպ եղած լավ, իհարկե նաև խիստ միակողմանի տեսակետ. «Հողաշափ Կ-ն նախ պետք է ձգտեր ամուր արմատ ձգել գյուղում: Այդ բանն անելը հեշտ չէր, որովհետև ոչ ոք նրա աշխատանքի կարիքը չէր զգում, ոչ ոք՝ բացի իջևանատան տիրոջից (ում նա անակնկալի էր բերել), չէր ուզում օթևան տալ նրան. պարոնայք պաշտոնյաներից մի քանիսի կատակները հաշվի չառած, ոչ ոք չէր մտածում նրա մասին: Այդպես նա արտաքուստ անիմաստ կերպով թափառում էր շրջակայքում և գյուղի հանգիստը խանգարելուց բացի՝ ուրիշ ոչինչ չէր անում: Մինչդեռ իրականում նա խիստ զբաղված էր, դարան մտածի պես առիթի էր սպասում և շուտով գտավ այն. Ֆրիդան՝ հյուրանոցի պանդոկի երիտասարդ սպասուհին, հավատաց նրա խոստումներին և զայթակղվեց նրանով: Հողաշափ Կ-ի մեղքն ապացուցելը հեշտ չէ: Նրա խարդավանքները կարելի է բացահայտել միայն, եթե մարդ, թեկուզ ինչքան էլ դժվար լինի, ամբողջապես շարժվի նրա մտածելակերպով: Միաժամանակ, հետքի վրա ընկնելուց հետո հարկավոր չէ շփոթվել, եթե հանկարծ այդ դեպքում ար-

տաֆինից սարսափելի թվացող, անհավատալի բան ստացվի, այլ ընդհակառակը. եթե մարդ սարսափելի բան է նկատել, ապա նա, անշուշտ, չի մոլորվել, և հենց այդ դեպքում է ամեն ինչ ընթացել ճիշտ: Վերցնենք, օրինակ, Ֆրիդայի հետ կապված դեպքը: Պարզ է, որ հողաշափը Ֆրիդային չի սիրում և սիրուց դրդված չի ուզում նրան կնության վերցնել, նա շատ լավ գիտե, որ Ֆրիդան ոչ գրավիչ, բռնացող աղջիկ է, դրանից բացի՝ վատ անցյալի տեր, և դրան համապատասխան էլ վարվում է նրա հետ ու, առանց նրա մասին հոգալու, քարշ գալիս: Սա է իրականությունը: Այն կարելի է տարբեր կերպ մեկնաբանել, Կ-ին ներկայացնել թույլ կամ հիմար, ազնիվ կամ թշվառ մարդ: Սակայն այս ամենը ճիշտ չի լինի: Ճըշմարտությանը կարելի է հասնել միայն, եթե մարդ, նրա ժամանման օրվանից սկսած, որ նկարագրել ենք այստեղ, նրա հետքերով մինչև Ֆրիդայի հետ կապի մեջ մտնելուն հասնի: Իսկ եթե վերջում մարդ մազեր փշաքաղեցնող ճշմարտությանը հասնի, իհարկե, հարկ կլինի նաև դրան հավատալուն վարժվել. դրանից բացի ուրիշ ոչինչ չի մնում:

Միայն ամենակեղտոտ բնույթի հաշվարկներից ելնելով էր, որ Կ-ն մերձեցավ Ֆրիդային, և նրանից ձեռք չի քաշի, քանի դեռ որևէ հույս ունի, թե իր հաշվարկները ճիշտ են: Ի դեպ, նա ենթադրում է, թե հանձինս Ֆրիդայի ձեռք է բերել իր պարոն վերադասի սիրուհուն և իր այդ քայլով մի պատանդ է վերցրել, ում կարող է վերադարձնել միայն առավելագույն վճարի դիմաց: Հիմա նրա ձգտումը այդ փրկագնի մասին պարոն վերադասի հետ սակարկելն է: Եվ որովհետև նրա համար Ֆրիդան արժեք չի ներկայացնում, մինչդեռ ամենակարևորը փրկագինն է, ապա նա Ֆրիդայի առնչությամբ պատրաստ է ամեն մի զիջողության, իսկ փրկագնի հարցում, իհարկե, համառ է: Ինչևէ, անկախ իր ենթադրությունների ու առաջարկների զզվելի լինելուց, առայժմ ոչ մի վտանգ չներկայացնելով, նա, եթե հասկանա, թե ինչքան է սխալվել ու մերկացրել իրեն, կարող է նաև շարությամբ լցվել, բայց, իհարկե, միայն իր շնչինության սահմաններում»:

Էջն այսպես էր ավարտվում: Թղթի եզրին մանկավայել մի գծանկար էլ կար. տղամարդը գրկել էր աղջկան, աղջկա դեմքը խոնարհված էր տղամարդու կրծքին, շատ ավելի մարմնեղ տղամարդը աղջկա ուսերի վրայով նայում էր իր ձեռքում պահված թղթին, որի վրա ինքը գոհունակությամբ որոշակի գումարներ էր գրանցել:

Եթե մարդ հիմա Կ-ի՝ դղյակի ու կանանց միջև գոյություն ունեցող, տեսած ու ենթադրած կապերը, այսինքն՝ աստվածային տնօրինությունը, հանելուկային համարի և ամենից առաջ անբացատրելի համարի Սորտինիի հետ կապված դրվագը, ուր պաշտոնյան (երկինքը) ակնհայտորեն անբարոյական ու կեղտոտ բան է պահանջում աղջկանից, ապա այդ դեպքում նրան կմատնանշվի Կիերկեգորի «Ահ ու դող» գործը, մի ստեղծագործություն, որը Կաֆկան, ի դեպ, շատ էր սիրում, հաճախ էր ընթերցում ու իր շատ նամակներում խոր մեկնաբանության ենթարկում: Սորտինիի դրվագը զուգահեռներ է անցկացնում Կիերկեգորի գրքի հետ, ուր ելակետային են այն է, որ աստված Աբրահամից նույնիսկ հանցագործություն՝ իր երեխայի

www.a-pdf.com

զոհաբերումն է պահանջում, և նրա գրքում այս առեղծվածը օգնում է հետևյալ հաղթական եզրակացությանը հանգել. բարոյականության ու հավատի չափանիշները չի կարելի անպայման իրար փոխարինող պատկերացնել: Աշխարհիկ ու կրոնական վարքի անհամաչափելիությունը. սա տանում է ուղիղ դեպի Կաֆկայի վեպի սիրտը: Միաժամանակ չի կարելի չնկատելու տալ, որ Կիերկեգորը՝ Քրիստոսը, իր ավելի ուշ գրված գործերում անհամաչափելիության այս հակամարտությունից շարունակ ավելի հստակ է անցնում այսկողմնային կյանքից հրաժարվելուն, մինչդեռ Կաֆկայի հերոսը համառորեն, մինչև ուժասպառ լինելը ձգտում է իր կյանքը «դղյակի» պատկերացումներին համապատասխան կարգավորել, թեկուզ ինչքան էլ դղյակի պաշտոնյաները կոպիտ վարվեն նրա հետ ու վիրավորական կերպով վանեն: Եվ այն, որ դա նրան մղում է ոչ հարգալից կարծիքներ արտահայտել «դղյակի» մասին, որի հանդեպ ինքը մինչև իր հոգու խորքը ակնածանք է տածում, այս հանգամանքը բավական բնական ձևով ստեղծում է այս աննման վեպի հերոսների կյանքը, նրա հեգնախառն միջավայրը: Բոլոր ոչ հարգալից կարծիքներն ու հառերը ցույց են տալիս մարդկային հասկացողության և աստվածային ողորմածության միջև եղած հնարավորությունը՝ ելնելով բավական նեղ՝ մարդուն մատչելի տեսակետից, ուր մարդը (Կ-ն նույն վինակում է, ինչ Բարնաբասի անարգված բնտանիքը), արտաքնապես միանգամայն իրավացի լինելով, շարունակ աննասկանալիորեն անիրավացի է մնում: Աստծո և մարդու միջև եղած այս ծռմռված-երկնք կապը, տարածության կամրջակապման անհնարինությունը հնարավոր չէր ռացիոնալ ճանապարհով ավելի լավ արտահայտել (և այդ պատճառով է վեպի արտաքուստ արտասովոր կառուցվածքը ավելի մոտիկից նայելիս լ թվում միակ հնարավորը), քան մոգական հումորով ներկայացված իրականության օգնությամբ, ուր մարդու կողմից դիտված երկնային թվում է կատարյալ, բոլորի սիրուն արժանի, մի բան, որ առատորեն բաժին է ընկել պարոն Կլամմին (նակատագի՞ր), մեկ էլ քննադատվում է ծաղրանքով, խելացի-քննադատաբար և հիմարավարի-քննադատաբար, իսկ երկինքը նույնիսկ միանգամայն արհամարհականի (փաստաթղթերի գրառում), ողորմելիի, անտերունչի ու կամակորի, անմիտ խեղկատակների (օգնականներ) ու փարիսեցիների հետ կապված տեսարաններում անգամ անթափանց է մնում: Երկնային նկարագրության համար Կաֆկայի ձեռքի տակ եղած նրբությունները երգեհոնային պաթոսի պես միալար չեն, այլ ողբերգականի ու ողբերգական-գավեշտականի անվերջանալի ու նրբագույն աստիճանավորվածություն ունեն: Նույնքան բովանդակալից է նրա արտահայտչականությունը երկնային տնօրինման հակառակ կողմի՝ երկրային անհաջողությունների հարցում: «Ինչպես էլ որ անում եմ, միշտ սխալ է»,— այս նախադասությունը հնարավոր չէ ավելի կյանքային, ավելի հանճարեղ կերպով բազմիմաստացնել, քան Կ-ի՝ գյուղի ու դղյակի հետ իրական կապեր հաստատելու բոլոր ապարդյուն փորձերի միջոցով: Օգնությունը շարունակ այնտեղից է գալիս, որտեղից ամենից քիչ են սպասում, մինչդեռ ազնվորեն ու լավագույն մտադրությամբ ձեռնարկված քայլերը ողորմելի ավարտ են ունենում, ինչպես,

www.a-pdf.com

օրինակ, կոնյակ խմելու դրվագը, ամենաչնչին գայթակղությանն հետևելը վախճանի է հանգեցնում (տես՝ «Գյուղական բժիշկը»), մարդն անօգնական ականջ է դնում աշխարհին, որ չարի ու բարու հետ կապված իր հավերժական հարցերին կամ ոչ մի, կամ էլ բազմաձայնակ պատասխաններ է տալիս, ու միաժամանակ հոգու խորքում անդադար հույս փայփայում միակ լավ ելքի մասին, որ ինձ համար է նախանշված, և ինչի համար նախանշված եմ ես («Օրենքի առաջ»): Գնահատականների ու կանխագուշակումների հետ կապված այս բոլոր չար կատակների համար, բոլոր բարդությունների ու խառնաշփոթությունների, դոնքիշոտությունների, դժվարությունների կամ էլ նույնիսկ մարդ լինելու անհնարինության համար, ավելի բարձր աստիճանակարգման վերաբերյալ՝ մեր անկարգությունների միջով թույլ թափանցող պատկերացման համար Կաֆկայի «Դղյակ» վեպը, իմ կարծիքով, կատարյալ դրսևորում է ներկայացրել՝ վերացական ու տրամադրությամբ որոշվող, և այս երկու հատկանիշներն էլ առանց տարբերակվելու տարրալուծվում են իրար հետ: Այն, որ առանձին հատվածներում երևի թե նախ խորթացնող մանրամասնությունները բացառապես այդ ամբողջականության էությանն են պատկանում, երևի թե միայն նա չհասկանա, ով դեռ երբեք չի փորձել պատկերացում կազմել կյանքի որևէ փաստի (օրինակ՝ Նապոլեոնի) ու նախանշված հանապարհին (անկախ այն բանից՝ մի մարդու, թե՝ մարդկության) նրա ունեցած դերի մասին: Կյանքի վերաբերյալ լրջորեն ընդունված բոլոր պատկերացումներից էականն այն է, ինչ Օլգան է ասում Բարնաբասի բերած համակների մասին. «Նրանց պատճառած խորհրդածությունները վերջ չունեն»: Կամ ինչպես ասվում է վեպի՝ հետագայում ջնջված մի հատվածում. «Եթե ուժ ունես իրերին անդադար, առանց աչքերդ փակելու նայել, շատ բան կտեսնես, բայց եթե մի անգամ տեղի տաս և աչքերդ փակես, ամեն ինչ իսկույն կծածկվի մթությունն հողով»:

Որպես մեկը, ով ուժ ու մեծ ունակություն է ունեցել աչքերն առանձնակի էներգիայով ու խորագույն սիրուց մղված (հանախ դառնությունները լի, բայցևայնպես՝ այնքան ճնշուշ սիրուց) բաց պահել, Կաֆկան՝ իր զուսպ արտահայտչաձևերով ասած, «շատ բան է տեսել», շատ բան, ինչ նրանից առաջ ոչ ոք չէր պատկերացնում:

Ժառանգություն մնացած այս ստեղծագործությունը հրատարակելիս ես նորից հարազատ եմ մնացել «Դատավարության» վերջաբանում ներկայացված սկզբունքներին՝ ինչպես հրատարակության փաստի, այնպես էլ նրա ձևի հետ կապված հարցերում: Ինքնին հասկանալի է, որ ոչինչ չի փոխվել, միայն բացահայտ վրիպակներն են ուղղվել: Հետագայում ես որոշ փոքրաթիվ տեղերում գլուխների փոփոխություն եմ մտցրել, իսկ ընդհանրապես գլուխների հերթականությունը ձեռագրում հեղինակի կողմից է կատարված. նաև Օլգայի դրվագի գլուխների վերնագրերն են Կաֆկայինը: Ողջ ձեռագիրը որևէ ընդհանրացնող վերնագիր չունի: Մեր զրույցներում Կաֆկան վեպը միշտ «Դղյակ» էր անվանում: Սկզբում ներկայացված

www.a-pdf.com

ակզբունքներից ելնելով ես բաց եմ թողել ձեռագրի վերջին էջերը, հետագայում մոտ մի էջ ծավալով տեքստ եմ հանել Կ-ի և Հանսի տեսարանից ու Գիզա-Շվարցեր դրվագից. շարունակության համար դրանք հետևանքներ չունեին և կարող էին շոշափելի նշանակություն ունենալ միայն գործողության հետագա ընթացքի համար:

1926 թ. ՄԱՔՍ ԲՐՈԴ

www.a-pdf.com

«Ապոլոն» հրատարակչություն

ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱ

ԴՂՅԱԿԸ

(վեպ)

Խմբագիր՝ Վարուժան Այվազյան
Նկարիչ՝ Ջորջիո դե Կիրիկո
Տեխ. խմբագիր՝ Արքուր Ղարագյոզյան
Սրբագրիչ՝ Էլմիրա Սոխիկյան

Հանձնված է շարվածքի 5.05.1992 թ.։
Ստորագրված է տպագրության 1.06.1992 թ.։
Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագրական՝ օֆսեթ։
Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։
Տպ. մամ. 23,5, հրատ. 13 մամ.։
Տպաքանակ՝ 40 000։ Պատվեր՝ 28։ Գինը՝ պայմանագրային։

«Գարուն» *ամսագրի* «Ապոլոն» *հրատարակչություն։*
Երևան—15, Գրիգոր Լուսավորչի 15։

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
մամուլի վարչության թիվ 6 տպարան։
Երևան—9, Թումանյան փողոց 23/1։

www.a-pdf.com

www.a-pdf.com

FRANZ KAFKA

ՀԱՅԱՍՏԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ